



ՅԱԿՈԲ ՎԱՐԴԻՎԱՌԵԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ – 4

**ԳԱՂՈՒԹՆԵՐԸ ԻՐԵՆՑ
ՀԱՅՈՒԹԵԱՄԲ**

ՆԻՒ ՃԸՐՁԻ 2009



ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ – 4

Գաղութները Իրենց Հայրենամբ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԹԷՔԷՏԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ՅԱԿՈԲ ՎԱՐԴԻՎԱՌԵԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

4

ԳԱՂՈՒԹՆԵՐԸ ԻՐԵՆՑ ՀԱՅՈՒԹԵԱՄԲ

ՆԻԻ ՃԸՐՁԻ 2009

Meetings - 4

Copyright © 2008 by Hagop Vartivarian.

All rights reserved under international and Pan-American
Copyright Conventions.

Printed in the United States of America

Library of Congress Control Number: 2009926362

Vartivarian, Hagop

Meetings - 4

ISBN: 9781931834308

Mayreni Publishing, Inc.

P.O. Box 5881

Monterey, California 93944

**«Հանդիպումներ – 4»ը
կը նուիրեմ՝**

**Թանկագին մօրս՝ Անահիտին,
որ չտեսաւ եղբօրս Զարեհին ու իմ կեանքի
ընձիւղիլը.**

**Հօրս՝ Հաշկազունին,
որ հաւատաց ժողովուրդներու բարեկամութեան:**

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ՍՓԻՌՔԻ ՀԵՏ

Երկու տասնամեակ առաջ, երբ Յակոբ Վարդիվառեան կը մեկտեղէր *Հանդիպումներու* առաջին հատորը, գրուցակիցները առաւելապէս կուսակցական իր ընկերներն էին. անոնց շարքին՝ անհատներ, որոնց հանդէպ յարգանք, ակնածանք կամ թաքուն հիացմունք կը տածէր հեղինակը: Երկրորդ եւ երրորդ հատորներով, հեղինակը ութսուն սփիւքահայ եւ հայրենի անձնաւորութիւններու նոր գրուցներով կ'ընդարձակէր իր տեսադաշտը: 1989 թուականէն ի վեր, յարաշարժ Սփիւքը նոր մարտահրաւեր կը ներկայացնէ հարցազրոյցի անխոնջ գործիչին:

Վարդիվառեանի բեղուն երեւակայութիւնը մեզի կը հրամցնէ հին ու նոր Սփիւքի տասնինն քաղաքներու համայնքներ, զանոնք ղեկավարող ծանօթ եւ անծանօթ անհատներու հետ կատարուած հարցազրոյցներով:

Ահա՛ «Հանդիպումներ — 4» հատորը:

Զրոյցներուն ընդմէջէն պիտի ճանչնանք Ապիճանի, Ուփսալայի, Ալմաթիի, Պրիքսէլի, Պոլսոյ, Ամմանի, Պուենոս Այրէսի կամ հայկական Սփիւքի տարբեր համայնքներ ներկայացնող, անոնց հոգերով տուայտող, կրթական կեանքերով տազմապող, հայկական մամուլին վրայ դողացող անձեր, որոնք հին Սփիւքի յոգնութիւնը շալկած՝ փրկութեան ցաւով կը մորմոքին եւ կամ նոր Սփիւքի կառուցներով կը հպարտանան ու կը յուսադրուին: Վարդիվառեան այս գործով մեր առջեւ կը բանայ նոր պատմիւմ մը, ուրկէ 500 էջերու մէջ կը ճանչցնէ մեզի ինչ որ մեր ուշադրութենէն վրիպեր է տասնամեակներով, կամ կը պարզէ մեզի 1991-էն ետք ծլարձակած նոր համայնքներ՝ աշխարհագրական նոր կեդրոններու մէջ:

Աշխարհ մը հայութիւն եւ անհամար մտահոգութիւններ՝ խտացուած եւ մեր դատողութեան յանձնուած. ահաւասիկ Վարդիվառեանի տասնինն քաղաքներու մէջ կատարած ութսուն հարցազրոյցներուն պարզածը:

Իրաւունք ունի ընթերցողը հարցնելու թէ ի՞նչն է այն ուժը, որ հեղինակը այս գործին կը մղէ: Ինչո՞ր հարցազրոյցներու այս երկար բայց հետաքրքրական շարքը:

Յակոբ Վարդիվառեան բնութեամբ հարցադրող մը եղած է՝ պրպտող եւ դժուար պատասխաններու հետամուտ: Առաւել եւս՝ իր դաստիարակութիւնը հասարակական կեանքին մէջ կը նպաստէ իր խառնուածքին: Սփիւքահայ պայմաններու մէջ հասակ առած այն հազուագիւտ անհատներէն է, որ գաղափարական իր դրուածքէն դուրս գիտէ դիտել շրջապատը՝ յաճախ ալ

հեռաւոր սահմաններէն անդին, արպտելու համար Սփիւռքին իմաստը եւ անոր գոյութեան արմատներուն թափանցելով՝ յայտնաբերելու նոր բացատրութիւններ:

Գաղափարական իր պատրաստութեանը պէտք է վերագրել թերեւս այն հետեւողական հարցադրումները, որոնք բարակ թելի մը պէս կ'անցնին բոլոր հարցազրոյցներուն մէջէն՝ յայտնաբերելու համար լուսաբանութիւններ կամ պատասխաններ, որոնք Սփիւռքի հիմնահարցերն են, որոնք Սփիւռք հասկացողութեան ամբողջական իմաստը պարզելու կը ծառայեն եւ որոնք յաճախ ալ անլոյծ մնացած՝ կը վնասեն հայկական հաւաքականութեան կառոյցներուն: Օրինակ, հին ու նոր Սփիւռքի կրթական կեանքին վիճակը, դժուարութիւնները, լուսաւոր երեսները՝ եթէ կան, ակնկալութիւնները եւ առաջադրանքները շատ լուրջ հարցեր են մեզի համար: Իր այցելութիւնները առիթ ստեղծած են եօթ վարժարաններու տնօրէններ խօսեցնելու, անոնց յոյսերն ու յուսախաբութիւնները կորզելու եւ թուղթին յանձնելու: Նոյն այդ տնօրէններէն կը փոխանցուին մեզի տարբեր համայնքներու մէջ հասնող, կազմաւորուող նոր սերունդին, նոր ուսանողութեան տարանջատ հետաքրքրութիւնները, ճաշակները, որոնք մտածել կու տան համայն հայութեան մտահոգիչ վաղուան մասին:

Այդ նոյն Սփիւռքին հայախօսութեան կենսունակութիւնը՝ անոր նահանջին հետ, հիմնական հարց մըն է Վարդիվառեան հարցադրողին համար: Կ'անդրադառնանք որ Ապիճանի նման մայրաքաղաքի մը մէջ նոյնիսկ հայախօսութիւնը ճիւղ է, տազնապ է բնակող տասնեակ մը հայերուն համար: Անվերսի ու Պրիքսէլի մէջ եւս Վարդիվառեան կը լսէ տակաւ նուազող հայախօսութեան մտահոգութիւնը: Իր արպտումները զինք կ'առաջնորդեն միօրեայ հայկական վարժարաններ, որոնք ծնունդ առած են եւրոպական տարբեր ուսումներու մէջ, օրինակ՝ Փրակա, Ուփսալա եւ այլուր: Ան այցելած է կէս կամ մէկ դար ապրած հաստատութիւններ, օրինակ՝ Պոլսոյ Կեդրոնականը կամ Վիեննայի Միաբանութիւնը:

Սփիւռքահայ մամուլին այսօրը կը տրուի մեզի՝ շնորհիւ զրոյցներուն, զորս հեղինակը ունեցեր է տաս թերթերու խմբագիրներուն հետ. այսօր միայն կ'անդրադառնանք որ Փարիզի «Յառաջ»ի կողքին, Սթոքհոլմի մէջ կը հրատարակուի «Նոր Հորիզոն»ը, Փրակայի մէջ՝ «Օրեր»ը. Պուենոս Այրէսի «Արմենիա»ին հետ զուգահեռ, Աթէնքի «Նոր Աշխարհ» շաբաթաթերթն ու «Ազատ Օր» օրաթերթը ունին նոյնիմաստ դժուարութիւններ: Ու կը զարմանանք Սփիւռք կոչուող երեւոյթին անբացատրելի մեկնութեան: Զրոյցներու շարքին կը գտնենք Իսթանպուլի «Մարմարա»ին, «Ժամանակ»ին եւ «Ակօս»ին խմբագիրներուն տխուր նախատեսութիւնները՝ որքան ատեն որ հայատառ մամուլը կը շնչէ տակաւին Իսթանպուլի մէջ:

Սփիւոքով մեծցած եւ անոր աւանդական հայրենասիրութեամբ սնած Վարդիվառեանին համար Հայաստանը քաղաքական միաւոր մը, սովորական ազգային հանրապետութիւն մը դառնալէ առաջ՝ է՛ր հայրենիք մը՝ փակ, զարգացած, բայց հեռո՛ւ, անմերձեցալի յաճախ, եւ որու իւրաքանչիւր խորհրդանիշը աստե՛ն մը առաջ միսթիք զգացումներու վրայ դուռ կը բանար: Այսօր, մա՛նաւանդ նոր Սփիւոքի կազմաւորումին առընթեր, երբ իւրաքանչիւր համայնքի մէջ կը գտնենք Հայաստանի Հանրապետութեան դեսպանատուն կամ հիւպատոսարան՝ Վարդիվառեանի նման հարցազրուցող մը անպայման այցի կ'երթայ եւ ի պահանջել հարկին կը զրուցէ՝ մեզ եւս առնչելով անոնց: Կշռադատուած եւ պարզ հարցազրուցին սահմանները կտրող խօսակցութիւններ են իր արձանագրածները, որոնց ընթերցումով կը զգանք հայրենի խորհրդանիշին հետ հաղորդուելու, առնչուելու մղումը: Հանրապետութեան ութ դեսպաններուն կամ հիւպատոսներուն հետ խօսակցութիւններու առանցքը տուեալ գաղութի կապին որակն է պաշտօնատունին հետ, համայնքին կեցածքը՝ պետութեան հանդէպ, մտահոգութիւնները՝ եթէ կան, սփիւոքահայ կուսակցութեան մը ժխտական կեցածքին որպէս հետեւանք: Ծարքը այս հարցազրուցներուն՝ կը մատնէ սփիւոքահայ գործիչին հայրենաբաղձութեան թաքուն մէկ երեսը:

Սփիւոքահայ զրուցող ըլլալ եւ Սփիւոքէն ներս 1956-ին ստեղծուած եկեղեցական բաժանումին, անոր հետեւանք՝ այլանդակ երկրութեան մասին չխօսիլ ու չպրպտել՝ անկարելի է: Վարդիվառեան կուսակցականին համար շա՛տ բնական է խօսեցնել պատրիարքներ՝ Երուսաղէմի Թորգոմ Արք. Մանուկեանն ու Իսթանպուլի Մեսրոպ Արք. Մութաֆեանը. նոյնքան բնական է իրեն համար հանդիպիլ վեներաբլեան արքեպիսկոպոսին մը եւ տասնմէկ թեմական առաջնորդներու կամ հովիւներու, զրուցելու անոնց հետ տուեալ համայնքին մէջ յառաջացած եկեղեցական կեանքին, անախորժութիւններուն, կուսակցականացած եկեղեցիին գործած աւերին եւ խոչընդոտներուն մասին: Կը պարզուի տխուր պատկերը անբնական Եկեղեցիի մը, որ համայնքին հոգեւորական-մշակութային ընդհանուր ճիգին նպաստելու փոխարէն, նախ կը պահպանէ իր գոյավիճակն ու կողմի մը վարկը, ապա՝ կու գան հայ դպրոցին, լեզուի պահպանութեան եւ էական այլ հարցերու եւ մտահոգութիւններու բարձումին դժուարութիւնները:

Տասնինն հայ համայնքներու մէջ Վարդիվառեան առիթներ ստեղծած է խօսեցնելու ռամկավար ազատական, Բարեգործականի, հնչակեան եւ դաշնակցական ղեկավարներ: Անկաշկանդ հարցադրումներն ու նոյնքան անկեղծ պատասխանները բազմապիսի պարզաբանումներ ի յայտ կը բերեն:

Սփիւոքի դասական եւ աւանդական կեդրոններու մէջ կատարուած կարճ կամ երկար զրուցները իրենց բովանդակութեամբ չեն զարմացներ սփիւոքա-

հայ մամուլին կանոնաւոր հետեւողը, որովհետեւ Երուսաղէմի, Պուենոս Այրէսի, Դամասկոսի, Հալէպի, Պէյրութի, Ամմանի, Աթէնքի կամ Նիկոսիոյ մէջ տեղի ունեցող համայնքային գործունէութեանց ծանօթ ենք. բայց երբ Վարդիլառեան կը գրէ Ապիճանի «հայոց դեսպանին» մասին, կամ կը գրուցէ Ալմաթիի համայնքապետին ու Հայաստանի դեսպանին հետ եւ կամ Փրակայի մէջ չորս տարբեր զրոյցներ կ'ունենայ դեսպանին, «Օրեր»ու խմբագիրին, հովիւին եւ «Փրակայի միակ հայուն» հետ, կը փորձուիս զարմանալ թէ այս ե՞րբ եւ ինչպէ՞ս կազմաւորուեր է նոր Սփիւռք մը՝ վայրերու մէջ, որոնք աշխարհագրական անուններ էին մեզի համար ժամանակ մը առաջ, եւ ո՛չ թէ Սփիւռք:

Նորութիւններ են Վիեննան, Լիոնը, Ուփսալան, Սթոքհոլմը, Սաօ Փաւլոն կամ Անվերսը՝ իրենց նոր տեսակի հայ սփիւռքներով, եւ ասոնք կը հակա-կշռուին «Պոլիսը Իր Հայութեամբ» վերնագրուած հարիր էջանոց բաժինով, իր տասներկու հարցազրոյցներով եւ զրոյցներով շարք մը անդարձ մեկնած-ներու հետ, որ կը կազմէ լաւագոյն բաժինը այս հատորին:

Իսթանպուլի հայութեան վերջալոյսի աղօտ շողերն են հոն պատկերաւոր իրականութիւնները: Չորս խմբագիրներ, երեք վարժարաններու տնօրէններ, Սուրբ Փրկիչի տնօրէնը, հրատարակիչ մը, կաթողիկէ համայնքի վիճակաւորը, Հ.Հ. ներկայացուցիչ մը եւ Պատրիարք մը կը խօսին համայնքի մը մասին, որուն ապագան գեղեցիկ բառերու եւ արտայայտութիւններու մէջ կը հիծի: Տնօրէնները անորոշ գնահատական ունին տալիք փակ այդ համայնքին մէջ հասակ առնող սերունդին ապագային ուղղութեան մասին. խմբագիրները բախտին ու հրաշքին ձգած են ծերունազարդ մամուլին եւ երիտասարդ «Ակօս»ին ապագաները: Հ.Հ. ներկայացուցիչը Սեւծովեան Համագործակցութեան ծիրէն ներս գործող մըն է, որ կապ չունի համայնքին հետ:

Տխուր, շա՛տ տխուր վիճակը Պոլսոյ՝ անմիջական մայրամուտէն հեռու է անշուշտ. բայց Վարդիլառեան իր ենթագիտակցութեան մէկ անկիւնին մէջ Պոլիսը կ'առնէ իր մեռելներուն հետ: Սիրելի եւ յաւերժակա՛ն մեռելներ: Կարծէք այսօրուան Պոլիսը կը տեսնուի մաքուր պահուած ու գուրգուրանքով խնամուած գերեզմանատուներուն մէջէն, ուր այցելելով՝ հեղինակը կը վերականգնէ յիշատակներն ու շիրիմները Պետրոս Դուրեանին, Պալեաններուն, Գաբեգին Եպս. Սրուանձտեանցին, Մաղաքիա Արք. Օրմանեանին, Խորէն Արք. Գալֆայեանին (Նար Պէյ), Ռէթէոս Պէրպէրեանին, Յովհաննէս Հինդլեանին, Յակոբ Մարթայեանին (Տիլաշար), Մատթէոս Զարիֆեանին, Կոլոտ Պատրիարքին, Հրանդ Տինքին, Բիզանդ Բէշեանին, Նարոյեան Պատրիարքին եւ տակաւին ան կրնար շարունակել սրբազան շիրիմներուն տխուր նկարները:

Պոլիսը տակաւին ապրող հայութեամբ կը շնչէ այսօր, բայց կ'արժէ

կարդալ հայ Վիեննայի կարեւորագոյն հաստատութեան ներկային մասին: Միփթարեան Միաբանութեան հինգ անդամները անցեալին կառչած են միայն. անոնք կը յուսան որ վաղուան միաբանները թերեւս Հայաստանի մէջ կազմաւորուին. անոնց համար ապագան մթագնիլ սկսած է արդէն. «Հանդէս Ամսօրեայ»ն կը խմբագրուի Երեւանի մէջ, որովհետեւ Վիեննայի մէջ աշխատակից չկայ այլեւս. ու Վանք կ'այցելեն հատ ու կենտ ուսումնասիրողներ, բանասէրներ. միաբանները կապ չունին Լիբանանի Զըմմարի վանքին հետ, կապ չունին Լա Քրետենթայի վարժարանին հետ եւ կապ իսկ չունին Լիբանանի Կաթողիկէ Հայոց Պատրիարքարանին հետ: Կը յիշուին կապի այս խզումները, որովհետեւ անոնք ենթադրաբար սերտ էին երէկ՝ անցեալին, ու քե՛ղ Վիեննայի մէջ մեկուսացած տխրութիւն մը կը ծանրանայ...:

Յակոբ Վարդիվառեանի այս լուրջ գործին տիրապետող երեւոյթներէն են այն հակասութիւնները, որոնք կը շեշտուին մէկ քաղաքէն միւսին անցումի պահուն, մէկ համայնքէն՝ միւսին միջեւ եւ երբեմն ալ՝ նոյն քաղաքին երկու հայերուն միջեւ: Փրակայի «Օրեր» թերթի հիմնադիրն ու խմբագիրը նախկին հայաստանաբնակ Յակոբ Ասատրեանն է, «Ազգ» օրաթերթի երբեմնի տիմամիք աշխատակիցը: Կապոյտ երազներու փնտրութիւն յանձնուած աշխոյժ երիտասարդ մը, որուն մէկ աչքը ետեւ՝ Երեւանով ալ կ'ապրի: Հակասութիւնը կը շեշտուի, երբ կը կարդանք «երբեմնի Չեխսլովաքիոյ միակ Հայ» Հայկ Մարտիրոսեանի մասին: 1880ական թուականներէն Փրակա հաստատուած հարուստ գերդաստանի մը շառաւիղը՝ մաքուր հայերէնով կը պատմէ անցեալէն, կոմսերու եւ դեսպաններու այցելութիւններէն, Վազգէն Վեհափառին այցելութենէն ու կը հաստատէ. «Բախտ ունեցանք որ ան մեր տունը այցելէ»... 1961-ին, ապա կը յիշէ իր միւս հիւրերը՝ Լոնտոնէն Սարգիս Քիրքճեան, Տիթորյոն Ալեք Մանուկեան, Մոսկուայէն Արամ Խաչատուրեան ու Մարիետտա Ծահինեան: «Իմին հայերէնս հօրմէս սորված եմ եւ հարկաւ կը ջանամ որ աղջիկս՝ Քրիստինան ալ շարունակէ հայերէն սորվիլ». մինչ Հայկ Մարտիրոսեանը կառչած է իր հայերէնին, անդին, Փրակայի մէջ, «եկած են մօտաւորապէս հազար հոգի Երեւանէն..., շատերը չունին հոս մնալու հրաման, այնպէս որ կարելի չէ տալ իսկական թիւ մը»: Իսկապէս որ դժուար է հայոց թիւը ունենալ, որովհետեւ Փրակայի մէջ խօսքը կ'ըլլայ 5-7,000-ի մասին. կայ նաեւ յիշատակութիւնը 2-3,000-ին: Հին ու նոր Սփիւքին տարածուած հիւանդութիւնն է հայ հաւաքականութեան թիւին անստուգութիւնը: Համրելու դժուար գործէն որքան կարելի է հեռու կը կենան, առաջին հերթին՝ եկեղեցական հաստատութիւնները, ուր թերեւս կարելի է գտնել կամաւոր կամ վճարովի պաշտօնեաներ տեղական մարդահամար ընող:

Վերադառնալով Փրակային, կը գտնենք հարստութեան մէջ ապրող հայ մը՝ Հայկ Մարտիրոսեանը, որ հպարտ է լեզուն պահած ըլլալով եւ նոյն համայնքին մէջ նորահաստատ հայեր՝ որոնք բնակութեան արտօնութիւն կը փնտռեն:

Նոր Սփիւքի երեւոյթ մը եւս:

Վարդիվառեանի փորձառու մօտեցումը հարցազրոյցներուն, լաւագոյն տեղեկութիւնը դուրս կը բերէ զրուցակիցէն եւ եւրոպական ու միջին արեւելեան հայկական Սփիւքները անմիջապէս ճանչնալու պատեհութիւնը կը շնորհէ ընթերցողին: Հանդիպումներու այս չորրորդ հատորը տեսակ մը հանրագիտակ կը դառնայ անոնց համար, որոնք կը փորձեն հասկնալ Սփիւքին էութիւնը, հակասութիւնները, խոր մտահոգութիւնները եւ անոր գոյութեան իմաստը:

Առաջին չորս հատորներէն ետք, *Հանդիպումներ – 5* յուսալը շատ դիւրին է մեզի՝ մաղթանքներ եւ ակնկալութիւններ շռայլողներու համար: Բայց հակառակ այս վերապահումին, վստահ ենք որ Վարդիվառեան պիտի շարունակէ իր տառապագին առաքելութիւնը՝ Սփիւքին տարբեր մասերը իրարու մօտ բերելու, եւ որ կեանքին հաճոյքին վերածած է ինք:

Բարեբախտաբար:

Վաչէ Սեմերճեան
Կլենտէյլ, Գալիֆորնիա



Ռոտենի արձանն ու Խորհրդարանի հրապարակը, Պուենոս Այրես:

ՊՈՒԵՆՈՍ ԱՅՐԷՍԸ ԻՐ ՀԱՅՈՒԹԵԱՄԲ

Կ'անցնիմ Պուենոս Այրեսի հայաշատ թաղէն՝ «Արմէնիա» փողոցէն: Քով-քովի ահա՛ կանգնած են մեր ազգային հաստատութիւնները՝ սփիւռքի մեր սրբավայրերը:– Նոր Մարաշ, Հ.Բ.Ը.Մ. Ալեք Մանուկեան Համալիր, Թ.Մ.Մ. Սուրէն Ֆէսճեան Կեդրոն, Հ.Բ.Ը.Մ. Մարի Մանուկեան վարժարան, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճար, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Վարժարան, Հ.Յ.Դ. Կեդրոն, ու դեռ փողոցին կից՝ Հ.Մ.Ը.Մ.ի մարզարան, Ս.Դ.Հ.Կ. Ծարժում:

Այսքա՛ն բան իրագործած են 30-ականներէն հոս հաստատուած կիլիկեցի գաղթականները: Ծաբաթավերջին, այս փողոցը կը յորդի հայորդիներով եւ տօնական օրերուն հայկական եռագոյն դրօշակներով ու պաստառներով աչքի կը զարնէ «Հայոց Թաղ»ը իր տոհմիկ հայկականութեամբ:

Օրինակելի գաղութ մը մնացած է 100,000-նոց այս հաւաքականութիւնը տարիներ ամբողջ: Օրինակելի՝ մանաւանդ եկեղեցական տագնապի օրերուն

իսկ, երբ թէև դաշնակցականներ գրաւած էին եկեղեցական իշխանութիւնը, բայց զայն պահած էջմիածնի հովանիին ներքեւ: Օրինակելի՝ իր կրթական, երիտասարդական, հայրենակցական զարթօնքով: Օրինակելի՝ իր Հ.Յ.Դ.Ի օրկան «Արմէնիա»ով ու Ռ.Ա.Կ.ի պաշտօնաթերթ «Սարտարապատ»ով: Օրինակելի՝ ընտանեկան-տոհմային ասանդութիւններու պահպանումով:

Ատոր համար ալ Միացեալ Նահանգներու մեր ազգային երեք բարերարները՝ Ալեք Մանուկեան, Սուրէն Ֆէսճեան եւ Նազար Նազարեան, հասած են Պուենոս Այրէսի կարիքներուն:

Գաղութը ինք ալ տուած է բարերարներ, որոնք մինչեւ անգամ օգտակար եղած են հայրենիքի մէջ սրբավայրերու շինութեան ու վերանորոգութեան գործին, ինչպէս՝ Արմէն Մեծատուրեան, Գէորգ Գարակէօզեան, Գրիգոր Դերձակեան, Անդրանիկ Արսլանեան, Հայկ Էմիրեան:

Բնական էր որ կողք-կողքի բարձրացած ազգային այսքան հաստատութիւններով նախկին «Ասեւեստօ» թաղը վերակոչուէր «Արմէնիա» այն օրերուն, երբ Վազգէն Ա. հովուական այցելութիւն կու տար իր հօտին եւ իր իսկ օրհնութեամբ տեղի կ'ունենար պատմական իրադարձութիւնը:

Ամէն հայ որ այցելէ այս մեծ ուստանը՝ Հարաւային Ամերիկայի ամենէն երոպականացած քաղաքը, կը վերադառնայ աւելի հայացած, աւելի խորապէս հաւատալով հայու գոյատեւումին:

Այսպէս, աւելի հայացած տուն վերադարձած են Լեւոն Տէր-Պետրոսեան, Սիլվա Կապուտիկեան, Վարդգէս Պետրոսեան, Կարլէն Դալլաքեան, Ռոմէն Կոզմոյեան, Արամ Խաչատրեան, Տիգրան Պետրոսեան, Վարդգէս Համազասպեան: Սփիւքի մտաւորականներն ալ անբաժին չեն մնացած ջերմութենէն Պուենոս Այրէսի հայութեան:

Եւ դեռ պէտք է արձանագրել ամենամեայ ուխտագնացութիւնը դէպի հայրենիք անոր հայկական երկրորդական վարժարաններու աշակերտութեան: Հայ պատանիներ, օտար աշխարհի առօրեայ հեւքին յանձնուելէ առաջ, կ'երթան Մայր Հայրենիք՝ Ս. Էջմիածնով, Արարատով ու Սեւանով վերանորոգելու իրենց ուխտը՝ շարունակելու սրբազան գործը իրենց կիլիկեցի հողի զաւակ հայրերուն:

Առիթէն օգտուելով, փոքր հարցազրոյցներ կ'ունենանք հայապահպանումի սրբազան գործը կատարող քանի մը ազգային դէմքերու հետ:

ԱՐԱ ՅԱԿՈԲԵԱՆ

Արժանթինի մօտ Հայաստանի
Հանրապետության Հաւատարմատար



Հ.- Հայաստան Համահայկական Հիմնադրամի մասին կրնայի՞ք տեղեկութիւն տալ: Պունտո Այրէսի ու ընդհանրապէս Հարաւային Ամերիկայի գաղութը ամենախանդավառ մասնակիցներէն եղաւ անոր:

Պ.- Իրաւունք ունէ՞ք: Գաղութը սքանչելի է: Երկու տարի է ինչ այստեղ գործում է դեսպանատունը եւ գաղութը իր ակտիւ մասնակցութիւնը բերեց որպէսզի հնարաւորութիւնը ունենայ գործելու: Ինչ վերաբերում է Հիմնադրամին, գործում է աշխոյժ: Դեսպանատան շուրջ հաւաքեցինք բարեկամներ, որոնք ոչ մի կուսակցութեան հետ հիմնականում կապ չունէին, եւ այս անձնաւորութիւններն իրենց հերթին օգնեցին Հիմնադրամին:

Նրանք սերտ կապի մէջ են Հիմնադրամի Հայաստանի Վարչութեան հետ եւ մեծ աշխատանք կատարեցին, բայց ես դեռ բաւարարուած չեմ զգում: Անեղիք չառ բան կայ: Մեր աչքի առաջ հաշուի պէտք է առնենք ազգային տուրքը: Այս ուղղութեամբ դեռ անելիքներ կան: Լաւատես եմ, քանի այդ ցանկութիւնը կայ՝ մնում է միայն մասսայականացնել:

Հ.- Ինչպէս գիտեք, անցնող 70 տարիներուն սփիւռքի մէջ հայապահպանման եւ Հայ Դատի հետապնդման գործը մեր երեք կուսակցութիւններն են որ կատարած են առաւելաբար: Սակայն Պրն. Լեւոն Տէր-Պետրոսեանի յայտարարութիւնները ձեռով մը կասեցուցին աշխատանքի թափը այս գաղափարի նուիրեալներուն: Կը խորհի՞ք թէ նման վերաբերմունք օգտակար պիտի ըլլայ հայապահպանման եւ հայ դատի աշխատանքներուն այսուհետեւ:

Պ.- Ես կարծում եմ որ Սովետական Հայաստանի շրջանում, սփիւռքի մէջ կուսակցութիւնները բաւական ակտիւ դեր ունեցան, ինչպէս դուք ասացիք, Հայ Դատի համար թէ հայապահպանման հարցում: Մշակոյթը պահպանելու, դպրոցների մակարդակի եւ եկեղեցական կեանքի մէջ իրօք այդ կուսակցութիւնների դերը մեծ էր: Իսկ յետագայի համար, ինձ թւում է ժամանակը ցոյց կը տայ ինչքանով նրանք կարող են կողմնորոշուել այն հանգամանքի մէջ, որ աւելի օգտակար լինեն այսօրուայ մեր Հայաստանին կռնակ կանգնելու, Հայաստանի դեմոկրատիան ամրապնդելու, տնտեսապէս զօրացնելու:

Ես չեմ կարծում որ Հայաստանից որեւէ խոչընդոտ լինի այս կազմակերպութիւններին, որոնք իրօք գործում են ի նպաստ հայրենիքի:

Հ.- Զէք խորհիր որ գալիք տարիներում աւելի զօրացած Հայաստանը իր դեսպանատուներում միջոցով պիտի փնտռէ սփիւռքի մէջ կազմակերպուած քաղաքական մտածողութիւն ունեցող ազգային կազմակերպութիւններ, որոնք ճկունութիւնը ունին արեւմտեան քաղաքականութեան, որ տարիներու փորձառութեամբ կուտակուած է:

Պ.- Անշուշտ փոթորիկները պիտի դադարեն: Ես համոզուած եմ որ խաղաղութիւն պիտի լինի եւ մեր Հայաստանը պիտի զօրանայ: Ինչ



Պունոս Այրէսի Թ.Մ.Մ.ի Ֆէսճեան Կեդրոնի բացման օրերուն՝ հանդիպում Հայաստանի Հանրապետութեան դեսպան Վահան Տէր-Ղեւոնդեանի հետ: Զախէն՝ Յակոբ Վարդիվառեան, Յակոբ Գասարճեան, Տէր-Ղեւոնդեան, Մ. Հայկենց եւ Նահապետ Նահապետեան:

վերաբերում է ճկունութեան ձեր շօշափած քաղաքականութեան մէջ, ես կարծում եմ որ Հայաստանը վարում է բաւականին խելացի եւ հաւասարակշռուած քաղաքականութիւն թէ՛ իր դրացիների եւ թէ՛ այլ պետութիւնների հետ: Ծանաչուած պետութիւն ունի նա եւ յաջողութիւն իր արտաքին քաղաքականութեան մէջ: Սկզբում ճիշդ է, կար կադրային որոշ դժուարութիւն. բայց Հայաստանի ժողովուրդը նաեւ տուեց կադրեր, որոնք հեռու էին այդ մասնագիտութիւնից, բայց ժամանակի ըն-

Թացքում կարողացան բաւականին հմուտ ղեկավարել յանձնարարուած ղեսպանատները: Օրինակ յիշեմ Լոնդոնի եւ Վաշինգտոնի ղեսպանատները:

Ուղղակի ես չէի ցանկանայ որ մենք հակադրէինք սփիւռք եւ հայրենիք, կուսակցութիւն եւ Հայաստանի կառավարութիւն: Կ'ուզենայի որ չխառնէինք երկու հասկացողութիւնները:

Համագործակցութիւնը միշտ պէտք է, անցնի հինգ տարի թէ տասը տարի, որովհետեւ մենք պէտք է միասին լինենք: Ինչքան մենք համախմբուած լինենք, այնքան հզօր կը դառնանք: Ուրիշ բան է, կոպիտ ասած, երբ դրսից խելք են սովորեցնում եւ ուզում են դրսից ղեկա-



Պունոս Այրէսի Արմէնիա Փողոցին վրայ գտնուող ցուցանակ մը բարեգալուստ կը մաղթէ Հայաստանի Հանրապետութեան նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի այն օրերուն, երբ Դաշնակցութիւնը ձեռնարկած էր սեւացրեքեան քարոզչութեան մը անոր դէմ:

Վարել Հայաստանը: Դա ուրիշ հարց է. այստեղ համագործակցութեան մասին ենք խօսում, լինի դա կազմակերպութիւնների թէ կուսակցութիւնների հետ:

Յամենայնդէպս, Արգենտինայի փորձով կարող եմ ասել որ կայ հզօր մի խումբ բարեկամների, որոնք չըջապատել են ղեսպանատունը եւ որոնց վրայ մենք հիմնուում ենք եւ որոնք որեւէ կուսակցութեան չեն պատկանում: Դա չի նշանակում որ չլինենք բարեկամներ կուսակցա-

կանների հետ: Հիանալի բարեկամներ ունենք, ինչպէս Ռ.Ա. Կուսակ-
ցութեան մէջ Նահապետ Նահապետեանը, որոնք ճիշդ ճանապարհի վրայ
են եւ ամէն ինչով պատրաստ են աջակցելու:

Հ.- Իսկ տեղական մակարդակով արժանթիւնեան կառավարութեա՞ն հետ:

Պ.- Արգենտինայի կառավարութեան հետ, ես կ'ստէի, բաւականին
բարեկամական են յարաբերութիւնները: Մենք ունենք բաւականին ան-
հրաժեշտ ստորագրուած պայմանագրեր, համաձայնագրեր, որոնք իրա-
ւական բազա են ստեղծել անհրաժեշտ համագործակցութեան համար: Ի
հարկէ, Լատին Ամերիկայում միակ ղեկավանատունը Արգենտինայում է:
Կարծեմ մեծ էր այս խնդրով հայ համայնքի դերը: Այսպէս կամուրջ
դրուեց Արգենտինայի եւ Հայաստանի միջեւ: Ասեմ նաեւ որ Արեւելեան
Եւրոպայում միակ երկիրն է Հայաստանը, որտեղ կայ Արգենտինայի
Հանրապետութեան դպրոցը, որ սկիզբն է մեր բարեկամութեան:



ԳԻՍԱԿ ԵՊՍԿ. ՄՈՒՐԱՏԵԱՆ **Առաջնորդ Հայոց Արժանթինի**

Հ.- 1956-ի եկեղեցական դէպքերէն ետք
բաժանումներ տեղի ունեցած էին գաղութ-
ներու մէջ: Հիմա նոր կացութիւն մը ստեղ-
ծուած է Դաշնակցութեան առկախումով
Հայաստանի մէջ: Նոր կաթողիկոսի ընտրու-
թեամբ կը խորհի՞ք որ եկեղեցական նոր
տագնապ մը յառաջանայ:

Պ.- Վստահ եմ թէ Եւրոպայի եւ այլ
չրջաններու մէջ նոր թեմեր կազմելու,
նոր բաժանումներ կատարելու աշխատանք ըլլայ Անթիլիասի կողմէ:
Գալով մեր պարագային, կ'ուզեմ անգամ մը եւս ընդգծել հետեւեալը:
Երբ 1968-ին դաշնակցականներն այստեղ եկեղեցւոյ վարչութեան տէր
եղան, անշուշտ թէ իրենց ալ հաշուոյն կու գար միանալ էջմիածնի: Կա-
րեւորը, իրենց համար, գաղութի կեդրոնական իշխանութեան տիրա-
նալն էր, ոչ այնքան՝ Անթիլիասը հոս բերելը: Երբ իշխանութիւնը
իրենց ձեռքն էր, Անթիլիասը բերել ու նոր հարցեր ստեղծել կը տկա-
րացնէր զիրենք եւս:

Իսկ այսօր, հիմակուան վարչութիւնը նկատի ունենալով, ես վստահ





Պուեblոս Այրէսի մէջ իւրայատուկ հաստատութիւն մըն է Հայաստան-Արժանթին կրթական հաստատութիւնը: Ծնորհիւ Սիրանուշ եւ Արմէն Մեծատուրեաններու բարերարութեան, նմանօրինակ դպրոց մը կը գործէ Հայաստանի մէջ: Եղբայրական կապերու գեղեցիկ արտայայտութիւն մը, որուն միջոցով հայեր իրենց երախտագիտութիւնը կը յայտնեն արժանթինեան ժողովուրդին:

Եմ որ որեւէ հարց պիտի չպատահի, որովհետեւ, ներողութիւն ըսեմ, կուսակցութիւնները արդէն իսկ տկարացած են, եւ այսօր կուսակցական պաշտարի մը հաւանականութիւնը չունինք մեր գաղութին մէջ: Աւելի քան տարի մըն է որ մեր եկեղեցւոյ Կեդրոնական Վարչութիւնը արդէն կազմուած է համագաղութային իմաստով, ուր կան քիչ թէ շատ բոլոր շրջանակներէն մարդիկ: Հաւանական չէ որ Դաշնակցութիւնը փորձէ նոր քայլ մը կատարել՝ դարձեալ վերագրաւելու կամ Անթիլիաս-էջմիածին հարց ծագեցնելու այստեղ:

Ես կը ճանչնամ մեր վարչութիւնը, գիտեմ անոր գործունէութիւնը եւ կամաց կամաց կը հաստատուի ու կը զօրանայ այն միտքը թէ Կեդրոնական Վարչութիւնը գաղութին կեդրոնն է: Բարեմտօրէն ձգուեցաւ անցեալին որ Դաշնակցութիւնը իշխող տարրի ձեւ առնէ. այսօր այդպէս չէ կացութիւնը:

Պիտի ստեղծենք նաեւ մարմին մը, որ պիտի զբաղի քաղաքական հարցերով, որ յաջ օտարներուն նոյնիսկ կարենայ գաղութին ճիշդ դիրքաւորումը ցոյց տալ՝ ըլլա՛յ Հայաստանի պարագային, ըլլա՛յ մեր ներքին հարցերու:

Հայ Դատ ըսելով հիմնականին մէջ մեզի համար մէկ բան գոյութիւն ունի, Հայաստանը կայ իր պետութեամբ, կառավարութիւնը կայ, կրնանք համաձայն ըլլալ կամ չըլլալ, բայց պատճառներ չկան որ կարծենք թէ Հայաստանի կառավարութիւնը պիտի մտածէ աւելի գէշ քան մենք Հայ Դատի վերաբերեալ:

Հ.- Զանազան շրջանակներէ այն արձագանգը հասաւ թէ մեր նախագահը պէտք չէ միջամտել ընդհանրական հայրապետի ընտրութեան: Ի՞նչ է ձեր մտածումը այս ուղղութեամբ:

Պ.- Նայեցէք, գալով Գարեգին Կաթողիկոսի ընտրութեան հարցին, մենք մեր գաղութին մէջ, իրականութեան մէջ նախքան նախագահին յայտարարութիւնը, որոշ կարծիք մը կազմած էինք արդէն, մանաւանդ պատուիրակներուն եւ բարեկամ մարդոց հետ, որոնք միշտ խորհրդատուի դեր ունին: Մենք եկած էինք այն եզրակացութեան, որ մեզի համար Անթիլիաս-Էջմիածին հարց չէր: Մենք մեր գաղութին մէջ չենք ունեցած եւ ձեռով մը չենք ալ վարժուած այդ կերպով մտածել: Մեզի համար կը մնար յարմարագոյն անձը գտնել:

Մեզի հասած տեղեկութիւններուն համաձայն երբ Թորգոմ Պատրիարք իր թեկնածութիւնը քաջեց, մենք որոշեցինք երկու հիմնական թեկնածուներ նկատի ունենալ: Անշուշտ ասիկա վերջնական օրէնք մը չէր որ հոս որոշելով հոն երթայինք ու գործադրէինք: Կրնար ըլլալ որ հոս մենք բան մը որոշելէ յետոյ, հոն հասնելէ ետք ուրիշ իրականութեան մը առջեւ ըլլայինք եւ տեղւոյն վրայ կարենայինք փոխել իբրեւ անհատներ կամ ամբողջ խումբ:

Բարեբախտաբար այդ տեսակ կացութեան մը առջեւ չգտնուեցանք Էջմիածնի մէջ եւ մեր հիմնական թեկնածուներն էին առաջին առիթով Գարեգին Կաթողիկոսը՝ եթէ թեկնածութիւնը դնէր, իսկ երկրորդ պարագային Պարգեւ Սրբազանը: Մենք համոզուած էինք որ ան կրնար լաւագոյնը ընել:

Հ.- Ինչպէ՞ս կը վերադառնաք Հայաստանէն ընտրութեան աւարտին. աւելի զօրացա՞ծ, ինքնավստա՞հ, միացա՞ծ, թէ՞ կասկածներով:

Պ.- Ո՛չ, անկեղծօրէն ըսեմ թէ որեւէ կասկած կամ հարց չմնաց ինծի համար: Պէտք է ընդհանուր գիծերու մէջ նկատի ունենալ այս ընտրութիւնը:

Մեր համոզումը Գարեգին Կաթողիկոսի համար այն էր որ ամենէն փորձառուն էր, նաեւ տարիքն ալ միասին հաշուելով, Թորգոմ Պատրիարքէն անկախ: Նաեւ միջազգային էքիւմէնիք առումով իր ունեցած

ծանօթութիւնը, նաեւ իր յարաբերութիւնը հոգելոյս Վազգէն Կաթողիկոսին հետ, մեզի աւելի վստահութիւն կը ներշնչէին: Պէտք է ըսել որ նախագահին յայտարարութիւնները ոչ մէկ ձեւով ճշդումի պատճառ եղան:

Մենք համոզուեցանք թէ ճիշդ ընտրութիւն կատարած էինք: Ասկէ յետոյ ալ, ես համոզուած եմ, ինչպէս որ Վեհափառը ըսաւ վերջին անգամ ընդհանուր հանդիպումի մը մէջ, միասնականութիւն ըսուածը շատ ցանկալի է, բայց մէկ օրէն միւսը ըլլալիք հարց չէ: Ասիկա ես կ'ըսեմ մասնաւորաբար Նիւ Եորքը ճանչնալէ յետոյ: Երկփեղկումի այս հարցին կեդրոնը գլխաւորաբար Նիւ Եորքն է: 30-ական թուականներէն Դուրեանի սպանութեամբ եթէ հոն հարցեր կան, նոր Վեհափառ մը, ուրկէ կ'ուզէ գայ, մէկ օրէն միւսը չի կրնար լուծել:

Հիմնականը բարի կամեցողութիւնն է: Նստիլ ժողովի եւ լրջօրէն մտածել: Գոնէ Վեհափառին կողմէ ես այս ջանքը տեսայ. այն իմաստով որ՝ երբ մէկը կ'ընդունի էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոս ըլլալ, կը նշանակէ թէ որոշ հարցերէ վեր կը գտնէ ինքզինք: Եւ համոզուեցայ որ պիտի կարենայ բան մը ընել:

Այլեւս հարցը Անթիլիաս-Էջմիածին եկեղեցական հասկացողութեան մէջ չէ, այլ ուղղակի մեր գոյութեան հարցն է: Հայաստանի մէջ աղանդաւորներու հարց կայ: Հիմա եթէ այս կաթողիկոսը կարենայ այդ հարցերուն յստակ եւ ճիշդ լուծումներ գտնել, արդէն մեծ գործ մը կատարած պիտի ըլլայ: Ի՞նչ կապ ունին Նիւ Եորքի որոշ հարցերը. կամ ի՞նչ կապ ունին Արժանթինի որոշ հարցերը: Հոն կարգ մը շրջանակներու մէջ խօսքեր եղան որ եթէ Գարեգին Կաթողիկոս ընտրուի՝ Ամերիկայի մէջ մարդիկ էջմիածնէն ալ կը հրաժարին, առանձին ամերիկեան հայ եկեղեցի կը ստեղծեն: Քիչ մը «ապսիւրթ» բան մըն է ասիկա:

Վերջ ի վերջոյ ամերիկացիներուն համար կարելի չէ ամբողջ Հայ Եկեղեցւոյ գործերը դանդաղեցնել: Տեղական հարցեր տեղական իմաստով պէտք է լուծուին:



ՆԱՀԱՊԵՏ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

Պատուոյ Ատենապետ Պուենոս Այրէսի
Թէքէեան Մշակութային Միութեան

Հ.- Դեկտեմբեր 28-ին, Հ.Հ. Նախագահին յայտարարութեամբ Դաշնակցութեան գործու-
նէութիւնը առկախուեցաւ Հայաստանի մէջ:
Այս քայլը նկատառելի անդրադարձներ
ունեցաւ սփիւռքի բոլոր գաղութներուն մէջ:
Նկատելով որ ձեր քաղաքը հարաւամերիկեան
կարեւոր կեդրոններէն է այդ կուսակցութեան,
ի՞նչ հակազդեցութիւն յառաջ եկաւ հոս:



Պ.- ՀՅ. Դաշնակցութիւնը զգուշացաւ
իր անունով բողոքի դիմումներ կատարելէ հոս: Ան դիմեց բոլոր
կուսակցութիւններուն, հաւաքաբար դատաւարտելու Լեւոն Տէր-Պետ-
րոսեանին որոշումը, ապա կազմեց Հայ Ազգային Խորհուրդ գործունեւ
մարմին մը, որուն ստորագրութիւնը կ'երեւի բողոքագրերու ներքեւ:
Առաջին օրերուն, անոնք յաջողեցան տեղական քաղաքական կազմա-
կերպութիւններէն պատասխաններ ստանալ ու զանոնք հրատարակել
իրենց թերթին մէջ՝ մատնանշելով անոնց զօրակցութիւնն իրենց եւ
դատաւարումը Տէր-Պետրոսեանի ընթացքին:

Մեր գաղութը, ինչպէս միշտ ընդգծած եմ, միասնականութիւն
փնտռող, առողջ մտածող գաղութ մըն է: Հետեւաբար, պատահածը ցաւ
պատճառելով գաղութին բոլոր բարերարներուն եւ ազգային պատաս-
խանատուներուն, անմիջապէս հարկ եղաւ գործի անցնիլ՝ առաջը
առնելու չարիքի մը: Մանաւանդ Հայ Եկեղեցւոյ Հոգաբարձութիւնը եւ
«Սարտարապատ» թերթը ունեցան նկատառելի դեր: Բոլոր կողմերուն
բացատրուեցաւ թէ Հայ Ազգային Խորհուրդին զրպարտագրերը չէին
համապատասխաներ իրականութեան, եւ անոնք հասկցան թէ Հայաս-
տանի մէջ մարդկային իրաւունքներու ոտնակոխում չի կատարուիր.
ընդհակառակը՝ կը յարգուին ազատութիւնները եւ բոլոր միւս կուսակ-
ցութիւնները կը գործեն: Ասիկա մեր գաղութին համար հպարտանալի
գործ մըն էր:

Հ.- «Սարտարապատ»ի հիմնադիրներէն էք եղած: Ի՞նչ է թերթին առա-
քելութիւնը այսօր, հիմնադրութենէն քսան տարի ետք:

Պ.- Թերթը քսան տարի առաջ լոյս տեսաւ նպատակ ունենալով
Հարաւային Ամերիկայի մէջ զարկ տալ ազատական մտայնութեան ու
յաջողեցաւ իր առաքելութեան մէջ: 1970-ականները շատ դժուար տա-
րիներ էին: Այդ զինուորական բռնատիրութեան շրջանին որեւէ աննշան

կասկածով ոեւէ անհատ հետապնդումի ենթակայ էր: Ահա այդ օրերուն «Սարտարապատ» երեւան եկաւ ու իր բռնած ազատական ռամկավարական դրական ուղղութիւնը օգտակար դարձաւ գաղութի հայութեան:

Վերջին տարիներուն, Հայաստանի անկախացումէն ետք, մեր կազմակերպութիւնը քննեց իր քաղաքականութիւնը եւ թերթը ամբողջովին տրամադրեց հայրենիքին՝ դժուար պայմաններու տակ ստեղծուած անկախութեան առաջին իսկ օրէն: Մեզի համար այլեւս վերջ գտած են անցեալի վէճերը: «Սարտարապատ» երբեք միջամուխ պիտի չըլլայ Հայաստանի ներքին վէճերուն ու զանոնք պիտի չփոխադրէ այս ափերը: Մեր միութիւնները սկսած են տկարանալ: Տրամաբանական է որ իրարու քով գանք բոլորս՝ հաւատաւոր դաշնակցական, հնչակեան թէ ռամկավար, ու ձեռք-ձեռքի օգնենք եկեղեցիին, Հայաստան Համահայկական Հիմնադրամին ու ազգային այլ հաստատութիւններու:



Ժողովածուին հեղինակը Հարաւային Ամերիկայի մեր երկու պատուական ընկերներուն՝ Նահապետ Նահապետեանի եւ Աւետիս Պարսամեանի հետ, որոնք Թէքէեաններու, Զօպանեաններու եւ Տամատեաններու ժառանգը միշտ պատուով պահած են այս հեռուոր ափերուն վրայ:

ԱԻԵՏԻՍ ՊԱՐՍԱՄԵԱՆ

Ատենապետ Ռ.Ա. Կուսակցության
Հարաւային Ամերիկայի Երջանային
Վարչութեան



Հ.- Ի՞նչ է ձեր դիրքը Հայաստանի նկատմամբ եւ ի՞նչ բնոյթի յարաբերութիւն կը մշակէք Հ.Հ. դեսպանատան հետ:

Պ.- Ինչպէս միշտ, մեր դիրքը Հայաստանը պաշտպանել ու անոր օգնել է, մեր կրցածին չափ Հայաստանի թիկունք կանգնիլ է: Դիւրին է այսօր Հայաստանի հաշուոյն քննադատութիւններ ընել. բայց զանոնք ընելու համար պարտաւոր ենք ապրիլ հայրենիքի մէջ: Քսան հազար քմ. հեռաւորութենէ, հանգիստ ու ճոխ ապրելակերպով, ճիշդ պիտի չըլլայ քննադատել, մանաւանդ երբ ժողովուրդը հոն դժուար օրեր կ'ապրի:

Միլիւնաւորապէրուս պարտականութիւնն է օգնել որ Հայաստանի մէջ մեր ժողովուրդը բարգաւաճի:

Մեր յարաբերութիւնները շատ լաւ են այստեղի դեսպանին հետ: Յաճախ կը տեսնուինք: Տեղն է ըսելու թէ հպարտ կը զգամ արժանութիւնահայութեան ընձեռած նպաստով Հայաստան Համահայկական Հիմնադրամին: Մեր այստեղի բարերարները սքանչելի գործ տեսան այդ ուղղութեամբ: Կրցանք ամէն տեսակի օգնութիւն առաքել հոն:

Ռ.Ա.Կ.ը միշտ իր բաժինը ունեցաւ տարուող աշխատանքներուն մէջ: Ան ներկայացուած է Հիմնադրամի Վարչութեան մէջ, ուր բարեբախտաբար կան զանազան ունեւոր ազգայիներ, որոնք տէր են նիւթական լայն կարելիութիւններու, որոնք կը պակսին մեր կազմակերպութիւններուն:



ՀԱՅԿ ԷՄԻՐԵԱՆ

Պատույ Նախագահ Պուենոս Այրեսի
Հ.Բ.Ը.Մ.ի



Հ.- Դուք որ այս գաղութի նահապետներէն էք, ինչպէ՞ս կը գտնէք Պուենոս Այրեսի հայութիւնն այսօր՝ անցեալի բաղդատմամբ:

Պ.- Աւելի լաւ: Հոգ չէ թէ տակաւին ունինք անհամաձայնութիւններ, բայց անցեալի բաղդատմամբ հասկացողութիւնն աւելի շատ է: Ատելութիւնը վերացած է:

Հ.- Կը խորհի՞ք թէ այս գեղեցիկ ազգային հաստատութիւնները 10-20 տարի ետք պիտի շարունակեն հայկական ոգիով ապրիլ:

Պ.- Այո՛: Մի մոռնաք որ երբ ցանէք, հոնձքի ատեն լաւին հետ վատն ալ դուրս կու գայ: Կը բաւէ որ մենք ցանենք: Եթէ չցանես՝ ո՛չ լաւը կը հնձես եւ ոչ ալ վատը: Մենք մեր պարտականութիւնը ըրինք ու դեռ կը շարունակենք ընել:

Այս չէնքերը իմաստ պիտի չունենային՝ եթէ զանոնք կառուցած չըլլայինք հայապահպանումի համար: Բացի այդ, մեզի համար կարեւոր է տեղացիներուն ցոյց տալ հայկական ուժը: Գէթ Բարեգործականը հարիւր տոկոսով հայրենիքի կողքին է: Ասիկա նորութիւն չէ. հինէն ի վեր այսպէս է:

Մենք գոյնի չենք նայած: Բարեգործականի նպատակն եղած է աշխատիլ հայապահպանման համար: Ուրիշ գաղութներու մէջ ի՞նչ կ'ընեն՝ այդ տարբեր հարց: Հայապահպանումէն ետք, մեր նպատակը կը ցածին չափ հայրենիքին օգտակար ըլլալն է:

Հ.- Հ.Բ.Ը.Մ.ի ներկայ դեկավարութիւնը ձեռով մը մոռնալ սկսած է հայապահպանման գործը սփիւռքի մէջ եւ ուշադրութիւնը կեդրոնացուցած է հայրենիքի օգնութեան վրայ: Մոռնալ սկսած է մանաւանդ կրթական աշխատանքը: Ի՞նչ է ձեր վերաբերումը նման ընթացքի մը նկատմամբ:

Պ.- Շատ սխալ է: Քիչ առաջ հոնձքի խօսքը ըրի. ատիկա պէտք չէ պակսի: Մեր գաղութը օրինակելի եղած է ուրիշ գաղութներու համար: Կը յուսանք ու կը փափաքինք որ նոյն ձեւով շարունակուին աշխատանքները:

Կը տեսնենք որ մեր դպրոցներէն ելլողներէն գոնէ տասէն մէկը հայկական չունչ ունի: Մենք ջանացած ենք բեռ չըլլալ Կեդրոնական



Պուենտա Ալյրեսի հայկական փողոցին մէջ գտնուող Թ.Մ.Մ-ի Սուրէն եւ Վերճինիա Ֆէսճեան Կեդրոնը, մայր եկեղեցւոյ, Բարեգործականի կեդրոնին ու վարժարանին, առաջնորդարանին, Դաշնակցութեան կեդրոնին եւ քանի մը հայրենակցական միութիւններու ակումբներու կողքին:

Վարչական Ժողովին վրայ ու տապկուիլ մեր իւղով: Այո՛, այսօր փոքր օգնութիւն մը կ'ու գայ, բայց մեր ծախքին քով շատ չնչին համեմատութիւն մը ունի ան: Մեր սրահները չուտով պիտի սկսին հասոյթ ապահովել եւ պիտի օգնենք համեստ ընտանիքներու զաւակներուն որ չզրկուին հայ դպրոցի դաստիարակութենէն:

Հ.- Ծնորհիւ ձեր ալ միջամտութիւններուն եւ Պրն. Սուրէն Ֆէսճեանի բարերարութեան՝ Թ.Մ.Մ-ը շուտով կը լրացնէ իր նոր կեդրոնի շինութիւնը: Ի՞նչ ըսելիք ունիք այս առթիւ:

Պ.- Թէքէեանը հոս «Սարտարապատ»ով սկսաւ յառաջանալ: Առաջին օրէն օգնած եմ, երբ Թ.Մ.Մ. դեռ իր առաջին հողամասը պիտի գնէր: Կուսակցական չեմ, բայց Ռ.Ա.Կ-ի ղեկավարներէն Տիգրան Սմասրեանի այցելութեան առթիւ խոստացած էի օգնել: Ըսեմ թէ կ'ուզեմ օգնել բոլորին:

Հոս կար Հ.Յ.Դ-ի «Արմէնիա»ն իր խոշոր շէնքով, դիմացը՝ «Սարտարապատ»ը խեղճուկ: Հոս բոլոր հաստատութիւնները ունեցեր էին

պանծալի չէնքեր: Կը մնար Թէքէեանը: Եւ Պրն. Ֆէսճեան այցելելով
գաղութս, ուզեց իր անունին վայել աւելի գեղեցիկ չէնքով մը օժտել
Թ.Մ.Մ.ը եւ կարեւոր գումար մը տրամադրեց այս նպատակին:

1972-ին Պէյրութ այցելած ու տեսած էի Թ.Մ.Մ.ի գեղեցիկ Թէքէ-
եանի կեդրոնը, որուն նմանը հոս ալ ունենալու այնքան կարիքը զգացի,
յատկապէս ճիշդ Բարեգործականի չէնքին դիմաց, հաւասարակշռելու
համար Դաշնակցութիւնը:

«Սեւան» ու «Շարժում» թերթերուն փակուելովը, «Սարտարապատ»
կը մնայ միակ թերթը «Արմէնիա»ի դէմ: Հայութեան չէզոք մասը
կ'ուզէ «Սարտարապատ» կարդալ: Այս թերթը պէտք է մտնէ ամէն տուն:



Պաշտօնական բացում Պուենոս Այրէսի Թ.Մ.Մ.ի Սուրէն եւ Վըրճինիա Կեդրոնի, 29
Մարտ 1998-ին: Բացումը կը կատարեն ձախէն՝ արժանթինահայութեան նահապետ
Հայկ Էմիրեան, Նահապետ Նահապետեան, առաջնորդ Գիսակ Արք. Մուրատեան, ընկեր
Յակոբ Գասարճեան եւ ընկեր Մ. Հայկենց, ի ներկայութեան արժանթինահայ
գաղափարակիցներու, բարերարներու եւ հոծ բազմութեան մը:

ԳԷՈՐԳ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ

Ազգային բարերար, Պատգամաւոր

Ազգային-եկեղեցական ժողովի



Հ.- Բոլորին մօտ շփոթ մը կը տիրէ կաթողիկոսական ընտրութեան օրինականութեան գծով: Դուք որ ներկայ եղաք ընտրութեան, ինչպէ՞ս կը գնահատէք օրինականութիւնը:

Պ.- Մեծ ուրախութեամբ կրնամ ըսել որ մեծ կարգապահութեամբ, օրինակելիութեամբ ու կազմակերպուածութեամբ եղան ժողովներն ու ընտրութիւնները: Հրաշալի էր:

Հ.- Պատգամաւորներուն խանդավառութիւնն ինչպէ՞ս էր:

Պ.- Ինծի համար երջանկութիւն էր տեսնել աշխարհի չորս ծագերէն բոլորին գալը: Բոլորս ձեռք ձեռքի տուած աշխատեցանք: Հրաշալի էր:

Հ.- Կը խորհի՞ք թէ Գարեգին Ա.ի ընտրութեամբ մեր եկեղեցական հարցը կամաց կամաց իր լուծումը կը գտնէ:

Պ.- Կիլիկիոյ նախկին Կաթողիկոսը, որ անձնապէս կը ճանչնամ, հրաշալի պատրաստուած անձնաւորութիւն մըն է: Թէ՛ իր փորձառութեամբ, թէ՛ իր գիտութեամբ կը կարծեմ որ կրնայ մեր եկեղեցական կեանքը կարգի դնել: Ժողովի օրերուն քանի մը առիթներով իրարու հետ այս հարցին շուրջ խօսեցանք:

Հ.- Այս ընտրութենէն դժգոհ մնացած դաշնակցականներ կը խորհի՞ք որ նոր խնդիրներ կրնան ստեղծել:

Պ.- Չեմ կարծեր, որովհետեւ կը խորհիմ որ անոնց ալ ուզածը հաշտութիւն է: Ըսեմ թէ անոնք ալ մեզի հափ կը սիրեն մեր եկեղեցին ու հայրենիքը:



ԽԱՉԻԿ ՏԷՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

Խմբագիր Հ.Յ.Գ. «Արմենիա»

Պաշտոնաթերթի



Հ.- Դաշնակցության առկախման հարցով կը խորհի՞ք շուտով լուծում մը գտնել եւ բնականոն վիճակ մը վերահաստատել Հայաստանի իշխանութեանց եւ ձեր միջեւ:

Պ.- Ես պիտի կրկնեմ Հայաստանէն արտաքսուած եւ Բիւրոյի անդամ Աբօ Պողիկեանին հոս արտասանած հրապարակային խօսքը թէ այս կացութիւնը ոչ մէկ կողմի համար նպաստաբեր է, եւ ասկից ոչ միայն Դաշնակցութիւնը, ոչ միայն ընդդիմութիւնը, այլ ամբողջ Հայ ազգն է որ կը տուժէ: Հետեւեալը, կը կարծենք որ անպայմանօրէն լուծում մը պէտք է գտնէ, պատուաբեր լուծում մը երկու կողմերուն ալ համար: Շատ շուտ պէտք է ըլլայ: Խօսքեր եղան որ Գարեգին Վեհափառի ընտրութեամբ նման նախաձեռնութիւն մը կրնայ մէջտեղ բերուիլ: Կրնանք հոս ըսել թէ մաղթենք որ այդպէս ըլլայ, որպէսզի բոլորս կարենանք ոտքի կենալ: Բայց ըսեմ թէ տակաւին ոչ մէկ նախանշան կայ որ նախազահը նման քայլ մը պիտի առնէ:

Հ.- Հայաստանի մէջ ի մօտոյ պիտի սկսին խորհրդարանական ընտրութիւնները, յառաջիկայ տարի ալ՝ նախագահական ընտրութիւնը: Մինչ այդ Դաշնակցութիւնը պատրաստութեան մէջ է այս ընտրապայքարի օրերուն:

Պ.- Ինչ որ կ'ըսեմ, Հայաստանէն եկած լուրերուն վրայ հիմնուած է: Դաշնակցութիւնը մաս կը կազմէ Ազգային Դաշինքին: Զանազան կուսակցութիւններ առաջադրած են իրենց թեկնածուները: Թէ յստակօրէն Հայաստանի մէջ Դաշնակցութեան կեցուածքը, որոշումը ի՞նչ է, լուր չենք ստացած: Բայց գիտենք որ ժողովուրդը զօրաշարժի մէջ է մասնաւորաբար օրուան հարցերուն վերաբերեալ, ըսելով թէ պէտք չէ անտարբեր ըլլալ ընտրութեան շրջանին:

Հ.- Միում կայ զանազան շրջանակներէ հայ սփիւռքի մէջ քաղաքական մեր կազմակերպութիւնները տկարացնելու, զոհելու. նախագահին յայտարարութիւններն ալ սփիւռքի կուսակցութիւններուն նկատմամբ ուժ կու տան այդ շրջանակներու յետին նպատակներուն:

Պ.- Նախ ըսեմ որ Դաշնակցութիւնը զոհ չէ գացած: Շատեր հեռացած

են Դաշնակցութենէն, բայց իրականութիւնը այն է որ Հ.Յ.Դ.ի պառակտում չկայ: Պարզապէս կան անոնք որոնք հեռացած են շարքերէն: Օրինականօրէն կը մնայ մէկ կուսակցութիւն, ինչ որ միշտ եղած է եւ պիտի շարունակէ ըլլալ: Փաստօրէն այսօր Հայաստանի մէջ ամենէն շատ թիւ ունեցող, ամենէն կազմակերպուած ընդդիմադիր ուժն է ան, հակառակ իրեն դէմ եղած հալածանքին ու արգելքին:

Ինչ կը վերաբերի սփիւռքի, կը շարունակենք մեր գործը: Անշուշտ այս անկախութիւնը եւ մասնաւորաբար Հայաստանի իշխանութիւններուն կեցուածքը մեծ չփոթ մը ստեղծած են, որովհետեւ պարզ է որ երբ մէկը կը խօսի ազգային խորհրդանիշներու եւ պետականութեան կողմէ, ատիկա զգացական մղում մը կու տայ ժողովուրդին՝ չփոթելով անոր միտքերը: Պարզապէս դատապարտելի է: Իրենք եւս կոյր կը ձեւանան ու ամբողջ ազգին վնաս կը հասցնեն:

Հարցը չի վերաբերիր Դաշնակցութիւնը միայն պառակտելու: Հարցը կը վերաբերի բոլոր քաղաքական կուսակցութիւնները պառակտելու: Հարցը կը վերաբերի սփիւռքը բաժան-բաժան ընելու, սփիւռքին լուսանցքային դեր մը տալու եւ այս դերը միայն դրամական օգնութեան վերապահելու: Ասիկա կ'ըլլայ հաւանաբար իշխանութեան տիրանալու վախէն: Ասոր իբրեւ հետեւանք, պարզապէս քաղաքականօրէն չի նպաստաւորուիր սփիւռք-Հայաստան միասնականութիւնը, որ կրնար ստեղծուիլ եւ մեծ բարիք ըլլալ Հայաստանին, Ղարաբաղին եւ ընդհանրապէս մեր ընդհանուր պահանջատիրութեան ու հայապահպանման:

Սփիւռքը անջատել՝ ըսելով թէ առանձին ինքնութիւն մըն է, միւս կողմէ պահանջել անկէ միայն դրամ, ու դեռ ստեղծել քաղաքական կազմակերպութիւններ պարզապէս հարուածելու աւանդական մեր կուսակցութիւնները, որոնք այսքա՛ն տասնամեակներու գործ ըրած են, ազգային դիմագիծով իշխանութեան մը վայել բաներ չեն:

Հ.- կը խորհի՞ք որ Գարեգին Ա.ով եկեղեցական երկփեղկումը վերջ կը գտնէ:

Պ.- Ես ամբողջական կերպով կը հաւատամ Գարեգին Կաթողիկոսին: Վստահ եմ թէ արժանաւորներու մէջ ամենէն արժանին էր Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուելու համար: Համաձայն չեմ նախագահին





Պունոս Այրեսի կեդրոնական պողոտային մէջ Մեծ Եղեռնի 80-ամեակին առիթով քայլարշաւ, որուն եւս ալ բերի իմ մասնակցութիւնը, որովհետեւ պիտի չկարենայի ներկայ գտնուիլ յաջորդ օրը Նիւ Եորքի Թայմզ հրապարակին վրայ կայանալիք նոյնանպատակ քայլարշաւին:

այդ կոպիտ միջամտութեան: Պէտք չէր որ պետութիւնը միջամուխ ըլլար եկեղեցւոյ գործերուն:

Հոգեւոյս Վազգէն Ա.ի օրերուն արդէն եկեղեցւոյ հարցը իրատեսօրէն քայլ առ քայլ սկսած էր իր ճամբան առնել: Մենք վստահ ենք թէ Գարեգին Ա.ի հետ այդ ճամբան պիտի շարունակուի, պիտի ամրանայ: Կը մնայ միայն հրաժարիլ անցեալի կեցուածքներէն: Կը մնայ միայն լաւատեսութեամբ անցեալին նայիլ: Պէտք չէ աճապարել: Մէկ օրէն միւսը կարելի չէ հարցեր լուծել:

«ԱՆԿԱՆՈՒԹԻՒՆ», 4 Մայիս 1995



Երուսաղեմի հին քաղաքամասը՝ դիտուած Զիթենեաց Լեռէն:

ԵՐՈՒՍԱՂԵՄԸ ԻՐ ՀԱՅՈՒԹԵԱՄԲ

Հայաստան աշխարհէն դուրս, կրկնակի սրբավայր մըն է Երուսաղեմը հայութեան համար: Ազգային-եկեղեցական հաստատութիւնները՝ պահպանւած իրենց իսկական վիճակով, որոշապէս ներկայութիւն մը կը պարտադրեն այս համամարդկային սրբավայրին մէջ: Սուրբ Յակոբ վանքը պզտիկ Հայաստան մըն է, ինչպէս որ է Ս. Ղազարը Վենետիկի մէջ, այն տարբերութեամբ որ Երուսաղեմի պարագային Հայոց Թաղի պարիսպէն ներս հայութիւն մը կ'ապրի իր Հ.Ե.Մ. ու Հ.Մ.Ը.Մ. ակումբներով եւ հոն կը գործեն Ռ.Ա.Կ.ն ու Հ.Յ.Դ.ն:

Հայաստանեայց Եկեղեցւոյ ծէսերուն եւ արարողութիւններուն ամենէն խստապահանջ ու աւանդապահ վայրն է Երուսաղեմ, ուր Ս. Յակոբի միաբանութիւնը իսկական գինուորեալն է մեր եկեղեցւոյ: Հայութիւնը Ս. Յակոբէն բացի, տէր է նաեւ Ս. Յարութեան տաճարին՝ յոյն ուղղափառ եւ կաթողիկէ համայնքներու կողքին: Մեր եկեղեցին յաջողած է պահել իր առանձնաշնոր-

հումը՝ յիշեալ երկու եկեղեցիներուն հետ հաւասար տիրութիւն ընելու Երուսաղէմի ու Բեթղեհէմի բոլոր քրիստոնէական սրբավայրերուն:

Դժբախտաբար, անցնող յիսնամեակին նկատառելի կերպով պակսած է հայութեան թիւը արաբեւիսրայէլեան հակամարտութիւններու պատճառով. բայց եւ այնպէս, 3000 հայեր տակաւին կը բնակին հոն: Միաբանութեան Ժառանգաւորաց վարժարանը, վանքին Ս. Թարգմանչաց դպրոցը, Կիւպենկեան գրադարանը, Մարտիկեան թանգարանը, Ս. Թորոսի ձեռագրատունը իր մատենաներով, տպարանը, դարմանատունը, հրատարակութիւնները եւ, վերջապէս, պատրիարքարանը կը կազմեն ամբողջութիւնը հայոց վանքին:

Գոհունակութեամբ նկատեցինք թէ վանքապատկան միլիոններ արժող կալուածները արդէն ամենայն բժախնդրութեամբ կ'օգտագործուին շնորհիւ Յուսիկ Եպս. Պաղտասեանի: Անոնց եկամուտներով կը ծրագրուի իրագործել նոր կառոյցներ, որոնց առաջինն էր Պարտիզաթաղը:

Առիթէն օգտուելով, հանդիպումներ ունեցանք Լուսարարապետ Դաւիթ Եպս. Սահակեանի, Ս. Թարգմանչաց վարժարանի տեսուչ Կիրել Եպս. Գաբրիէանի, Ս. Յարութիւն տաճարի տեսուչ Վաղարշ Եպս. Խաչատուրեանի եւ միաբանութեան երիցագոյն անդամ, մատենագէտ Նորայր Արք. Պողարեանի հետ, որոնք բոլորն ալ լաւատեսութիւն յայտնեցին գալիք տարիներու նկատմամբ:

Լաւատեսական այդ շունչը պարտական ենք Երուսաղէմի Հայ Պատրիարք Թորգոմ Արք. Մանուկեանի, որուն անմիջական հսկողութիւնը բոլոր գործունէութիւններուն վրայ ակնառու է: Թորգոմ Պատրիարք մեր եկեղեցւոյ անբասիր հոգեւորականն է ու պաշտպանը մեր ազգային-եկեղեցական աւանդութիւններուն: Երուսաղէմի համար ան ունի յանդուգն ծրագիրներ, որոնց իրագործումը կը մաղթենք իր պաշտօնավարութեան շրջանին:

Երուսաղէմի հայութիւնը կը սպասէ մօտալուտ թուացող խաղաղութեան, որպէսզի կարենայ ազգապահպանման նոր ծրագիրներ մշակել ու իրագործել: Սպասուած խաղաղութիւնը նոյնքա՛ն աւետաբեր պիտի ըլլայ Միջին Արեւելքի մեր բոլոր հայաշատ գաղութներուն համար, որոնք մեծապէս տուժեցին ու այդ գաղութներու հայ բնակչութեան նօսրացումով դանդաղեցաւ Հայ Դատի հետապնդման գծով կատարուող աշխատանքը:

ԱՄԵՆ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
Պատրիարք Հայ Երուսաղեմի



Հ.- Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամները ցնծութեամբ կը հետևին Երուսաղեմի մէջ ձեր կատարած աշխատանքին: Կարելի է ըսել թէ Երուսաղեմի հաշոց պատրիարքարանը զարթօնքի շրջան մը սկսած է ապրիլ: Մեր ուշադրութիւնը առաջին առթիւ կ'երթայ հոգեւորականներու նոր սերունդ մը պատրաստելու աշխատանքին: Ի՞նչ վիճակ կը պարզէ այսօր Ժառանգաւորաց վարժարանը:

Պ.- *Երուսաղեմի մէջ աշխատանքները շատ են: Եթէ չորս գլուխի բաժնենք զանոնք՝ պիտի ըսենք թէ ունինք կրթական գործ, Սուրբ Տեղեաց պարտականութիւններ, շինարարական աշխատանքներու պարտաւորութիւններ, մեր ժողովուրդի կեցութեան եւ բարեկեցութեան առնչուող հարցեր:*

Կրթական գործը կարեւոր է. մանաւանդ՝ Ժառանգաւորաց վարժարանը: Ժիշդ է, ունինք 60-ի մօտ աշակերտներ, ուսուցիչներ բերած ենք Հայաստանէն՝ հայկական նիւթերու դասաւանդութեան համար, եւ սակայն նոր մակարդակ մը նուաճելու համար բաւական աշխատանքի կարիք կայ թէ՛ մասնագէտ ուսուցիչներու ներկայութեամբ եւ թէ՛ դպրոցաշէնքի դիւրութիւններու տեսակէտէն, որ դժբախտաբար բաղձալի վիճակի մէջ չէ: Ծանր կացութիւններ կը ստեղծուին դպրոցի շրջափակին, շէնքին քայքայումին հետեւանքով: Քանի մը տարի է որ կը սպասենք ունենալ իսկական վերատեսուչ մը եւ փոխ-տեսուչ մը դպրոցին համար՝ պատրաստուած անձերէ, եւ սակայն տակաւին չենք կրցած ունենալ: Այլապէս մեր Ժառանգաւորաց վարժարանին մէջ 100-ի մօտ անձեր են որ կ'ապրին միասին. թէ՛ ուսուցիչները, թէ՛ սարկաւազները եւ թէ՛ 60-ի մօտ աշակերտները: Ասոնց ներկայութիւնը կարեւոր է մինչեւ անգամ մեր Սուրբ Տեղեաց մէջ, ուր մեր հայ արարողութիւնը, ծէսը, պատարագը պատշաճ կերպով պէտք է ներկայացուին: Այդ բոլորը բարելաւուած կը գտնեն բոլոր անոնք, որոնք հինին ու նորին բաղդատութիւնը ընելու ի վիճակի են: Յոյս ունինք որ հետզհետէ ամէն մէկ դասարան 10-12 աշակերտով պիտի կարողանանք ապահովել, որպէսզի ունենանք 100-ի մօտ աշակերտներ, որոնք իրենց կրթութիւնն ստանան առաջին վեց տարիներուն, եւ այնուհետեւ ազատօրէն որոշեն թէ կ'ուզեն տո՞ւն վերադառնալ, թէ՞ մնալով շարունակել

ու ձեռնադրուիլ սարկալազ, ապա նաեւ չորս յաւելեալ տարիներ ուսանելով դառնալ վարդապետ: Եթէ կարողանանք այս ապահովել, շատ լաւ պիտի ըլլայ: Ժամանակ պիտի առնէ անշուշտ: Ծառ տնկելու կը նմանի. որոշ տարիներ կը պահանջէ պտուղ տալը: Միայն յոյսով է որ կ'աշխատինք եւ միշտ կը մտածենք որ տնկուած ծառին հոնտը սերմանողը, խնամողը, մեծցնողը նոյն անձը ըլլալու չէ անպայման: Հետեւաբար, մեր յաջորդ սերունդներուն եւս բաւարար գործ կայ այս չորս մարգերուն մէջ, Երուսաղէմի մեր կեանքէն ներս:



Դէպի վանք առաջնորդող փողոցը, Սուրբ Քաղաքի կեդրոնը:

Հ.- Ամերիկահայ ազգայիններ այսուհետեւ լաւատեսութեամբ կը մօտենան Երուսաղէմի մեր կալուածներուն նկատմամբ, որոնք կը տնօրինուին կարգ ու կանոնով եւ բժախնդրութեամբ: Ի՞նչ վիճակ կը պարզեն վանքապատկան այդ կալուածները, որոնք հաւանաբար շահութաբեր են պատրիարքարանին համար:

Պ.- Ունինք կալուածներ, որոնք հասութաբեր են վարձակալներու շնորհիւ: Անոնցմէ եկած եկամուտը կրնայ բաւարարել մեր տարեկան բոլոր ծախսերը՝ հոգալով մեր եկեղեցիներուն, դպրոցներուն, միաբանութեան եւ ժողովուրդին կարիքները: Սակայն ունինք նաեւ կալուածներ, որոնք քայքայուած են, եւ հողեր, որոնք անմշակ են: Այս բոլորը պէտք է ապահովենք ապագայի սիրոյն: Պիտի ապահովենք նախ քայ-



Հայոց վանքին դարպասը:

քայուած չէնքերը կառուցելով, ապա հողերուն վրայ նոր հաստատութիւններ ու չէնքեր կառուցելով:

Երկու անմիջական ծրագիր կայ մեր ժողովուրդին ի նպաստ: Մէկը այն՝ որ 60 ընտանիքներու բաւարարող յարկաբաժիններ չինուին, որպէսզի մեր երիտասարդները կարենան Երուսաղէմի մէջ ամուսնանալ ու տուն ունենալ: Տուն գնելը ամենէն դժուար բանն է այս քաղաքին մէջ:

Երկրորդը՝ ուխտաւորներու պարագան: Շատ ուխտաւորներ կը փափաքին որ վանքը զիրենք հիւրասիրէ, ընդունի եւ իրենք իրենց նուէրները տան: Բայց մենք սենեակ չունինք հայ ուխտաւոր մը տեղաւորելու համար վանքէն ներս: Կայ 150 սենեակով հիւրանոց մը կառուցելու ծրագիրը, մինչեւ անգամ կառավարութեան ներկայացուած է ան. սակայն պիտի սպասենք որ ունենանք բաւարար օգնութիւն եւ գտնենք այն շինարարական ընկերութիւնը, որ յանձն առնէ իրագործել ծրագիրը եւ չէնքէն նպաստ ապահովէ վանքին:

Ուրախ ենք եւ կը զգանք որ ապահով ձեռքերու մէջ են բոլոր կալւածները: Բոլորին ստուգութիւնը կատարուած է, պայմանագիրները գրասենեակին մէջ հաւաքուած են, բայց դեռ ունինք խնդիրներ, որովհետեւ անցեալին կ'երեւի թէ ճշգրտած չեն կարգ մը չէնքերու

վարձակալներու եւ բնակիչներու կացութիւնը, յարաբերութիւնը վանքին հետ: Ասիկա մտահոգիչ է, բայց յոյսով ենք որ հետզհետէ կը ճշդուին մեր հիւսիսային ֆերմանները, հիւսիսային կալուածատիրութիւնը: Այդ բոլորը պէտք է հաւաքուին ու դասաւորուին:

Մեծ հարց մը ունինք արխիւներու պահպանութեան տեսակէտէն, որովհետեւ չկայ սենեակ մը ուր մենք կարողանանք հաւաքել հին թղթածրարները, արխիւները: Ուրեմն արխիւներու շէնքը, սրահը կառուցելու պարտաւորութեան տակ ենք: Եւ այս եւս ժամանակ պիտի առնէ: Մանաւանդ ունինք շատ թանկագին փաստաթուղթեր անցեալէն, որոնք պէտք է ուսումնասիրուին եւ դասաւորուին:



Երուսաղէմի ռամկավար պատասխանատուներուն հետ այց Թորգոմ Պատրիարքին, պատրիարքարանի դահլիճին մէջ:

Դժուարութիւններէն մէկը այն է, որ պէտք եղած անձերը չունինք ամէն մէկ գործին համար պատրաստուած. եւ ասիկա մեզի համար մեծ մտահոգութիւն է: Երբ մեր բաժանմունքները կը դասաւորենք, քսան տարբեր տեսակի գործունէութեանց գրասենեակներ անհրաժեշտ է որ պատրիարքարանն ունենայ: Հետեւաբար, քսան գրասենեակներ նախ պէտք են իբրեւ գործատեղի, զորս չունինք: Կան հազիւ եօթը սենեակներ, ուր մեր սակաւաթիւ պաշտօնեաները տեղաւորած ենք: Եւ այս գրասենեակները անշուշտ պէտք է ունենան իրենց վարիչները եւ քարտուղարները: Արդէն իսկ կը նշանակէ քառասուն պաշտօնեաներու

անհրաժեշտութիւն մը կայ: Ասոնց ամսականները մտահոգութիւն պիտի ըլլան. բայց դարձեալ յոյս ունինք որ մեր կալուածներուն վարձքերը պայմաններուն համաձայն աւելի նպաստաւոր պիտի ըլլան եւ պիտի ծածկեն ամէնօրեայ ծախքերը:

Բնական է, կը սպասենք որ մեր բախտաւոր, ունեւոր, բարեսէր հայ բարերարները մտածեն Երուսաղէմի մասին՝ օգնելու մանաւանդ բացառիկ շինարարական ծախքերուն: Վարդապետաց բնակութեան չէնքը իրականութիւն դարձաւ եւ անոր ծախքերը հոգացուցան թէ՛ նուէրներով եւ թէ՛ վանքին եկամուտով: Ունինք ժառանգաւորաց վարժարանը իր հիւն չէնքը փոխադրելու ծրագիրը, որովհետեւ ներկայ վարժարանը վանքէն դուրս է, ինչ որ անպատեհութիւններ կը ներկայացնէ կարգապահական տեսակէտէ, ուսանողներու բարոյական դաստիարակութեան տեսակէտէ:

Եղուարդ եւ Հելէն Մարտիկեան թանգարանը եւս պէտք է նոր կառուցանելի չէնք մը փոխադրել, քանի որ ան կը գտնուի ժառանգաւորաց վարժարանի սահմանափակ տարածութեամբ հին չէնքին մէջ:

Կիւլպենկեան մատենադարանը լեցուեր է 100,000 հատորով եւ սակայն թողուած է անխնամ: Արդիական պայմաններով պէտք է ապահովել դիմացկունութիւնը այդ հատորներուն: Նոյն մտահոգութիւնը ունինք ձեռագրաց մատենադարանին համար: 4000-է աւելի ձեռագիրներ Ս. Թորոսի փոքրիկ մատուռին մէջ տեղաւորուած են երկար տարիներէ ի վեր: Պայմանները անբաւարար են: Մինչեւ անգամ



Երուսաղէմի գերեզմանատան մէջ Արարայի հերոսներուն նուիրուած յուշակոթողը: Որքա՛ն ուրախալի պիտի ըլլար, եթէ նման յուշակոթող մըն ալ բարձրացած ըլլար Հայաստանի մէջ ի պատիւ հայ լեգէոնականներուն, որոնք Հայաստանի եւ Կիլիկիոյ անկախութեան երազով Ամերիկայէն գալով մտան դաշնակից տէրութիւններու քանակներուն մէջ եւ կոռեցան հերոսաբար, որպէսզի ազատագրեն մեր հողերը:

հիւրերուն չենք կրնար ցուցադրել զանոնք՝ զոհացում տալու համար անոնց արդար ակնկալութիւններուն: Մասնագէտ անձերու ալ պէտք ունինք, որպէսզի ստանձնեն տեսչութիւնը այս բոլոր մատենադարաններուն:

Հ.- Քաղաքականապէս ինչպէ՞ս կը տեսնէք այս երկրին կացութիւնը: Մեր վաճառք գտնուելով կարեւոր հանգույցի մը վրայ, արդեօք լաւատեսութեամբ կը դիտէ՞ք արաբեւիսրայէլեան գալիք յարաբերութիւնները:

Պ.- Դժուար կացութիւն է: Անոնք որոնք կը հետեւին անոր, կ'ըսեն թէ անորոշութիւններ չատ են թէ՛ Իսրայէլի եւ թէ՛ արաբ պետութեանց կողմէ: Լարուածութիւնը տակաւին կը շարունակուի: Միայն յոյս ունինք որ խաղաղութեան աշխատանքները չզաղրին, շարունակուին, որովհետեւ սպառնալիքներ չատ կան: Կարելի չէ նախատեսել թէ վերջնական լուծումը՝ բոլորին համար ընդունելի, ի՞նչ ձեւ պիտի ստանայ: Ի հարկէ մենք պիտի մտահոգուինք որ որեւէ կարգադրութիւն չվնասէ մեր կրօնական հաստատութիւններուն, դարերով վայելած մեր առանձնաշնորհումներուն, իրաւունքներուն, ազատ գործունէութեան, մեր կրօնական-մշակութային կեանքին իրագործման: Հետեւաբար, ներկայիս չեմ կրնար մտածել թէ ի՞նչ եզրակացութեան պիտի յանգին այս բոլոր խորհրդակցութիւնները, որոնք քաղաքական բնոյթ ունին:

Հ.- Սրբազան հայր, սքանչելի կերպով Կաթողիկոսական Տեղապահի պաշտօնը կատարելէ ետք, մեր ժողովուրդի եւ հայրենիքի անկիւնադարձային այս օրերուն, Մայր Աթոռը յանձնեցիք նոր գահակալին: Ինչպէ՞ս կը գնահատէք մեր եկեղեցին 21-րդ դարու սեմին եւ ինչպէ՞ս կը սպասէք Ամենայն Հայոց նոր Կաթողիկոսէն:

Պ.- Շատ ընդարձակ ցանկ մը կը պարունակէ այդ հարցումը: Ճիշդ է որ կացութիւնը Հայաստանի մէջ տակաւին բարելաւուած չէ: Ճիշդ է, նաեւ, որ Հայ Եկեղեցին ինքզինքը զօրացնելու, կազմակերպելու մեծ պարտաւորութիւններ ունի: Եւ սակայն, միշտ պէտք է լաւատեսութեամբ նայինք՝ որ այս նպատակները, մեր եկեղեցական, կրօնական եւ Հայաստանի անկախութեան հետ կապուած նպատակները չթուլնան: Ընդհակառակը, պէտք է որ աւելի կազմակերպուած ձեւով յառաջ տարուին այն գործերը, որոնք մինչեւ այժմ նախաձեռնուած են:

Դժուարութիւնները չատ են: Մարդու պակասը դարձեալ կը յայտնուի Հայաստան աշխարհի մէջ թէ՛ կրօնական տեսակէտէ եւ թէ՛ մշակութային, մինչեւ անգամ քաղաքական տեսակէտէ ալ:

Իմ 7-8 ամիսներու փորձառութիւնը էջմիածնի մէջ ինծի համար

կարեւոր էր եւ օգտակար եղաւ: Աւելի մօտէն ծանօթացայ ներքին կացութեան, որ անհրաժեշտօրէն պէտք ունի կազմակերպուածութեան, կանոնաւոր կարգապահութեան եւ պաշտօններու ճշգրտմաներու: Եւ այդ ճշգրտմաները կ'ըլլան միայն կանոնագրերով, կանոնադրութիւններով: Մեր բոլոր թեմերը պէտք ունին թեմական կանոնադրութեանց: Եւ ես բացայայտօրէն արտայայտած եմ իմ յուսախաբուցութիւնս: Միայն Գալիֆորնիոյ, Նիւ Եորքի եւ Գանատայի թեմերն են որ իսկապէս ունին թեմական կառոյց, թեմական կանոնադրութիւն, կանոնաւոր թեմական ժողովներու գումարումով, որոշումներ առնելով, բարեփոխումներ բանաձեւելով: Միւս բոլոր թեմերը տակաւին չունին կանոնադրութիւն,



Հրեաներու մեծագոյն սրբավայր Սիոնի աշտարակը հայկական թաղամասին մէջ:

որով կառավարուին թեմերը իբրեւ կրօնական միաւոր: Եւ ատիկա պիտի ըլլայ պարտականութիւնը Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Այլապէս, նպատակները, պարտաւորութիւնները, որոնք դրուած են հայ ժողովուրդին ուսին՝ իր գոյութիւնը ապահովելու, իր հայրենի աշխարհը, երկիրը պետականօրէն կազմակերպելու կողքին հաւասարապէս կազմակերպել Հայաստանեայց Եկեղեցին: Դաշտը բաց է,



Պատրիարքարանի պաշտօնաթերթին
անուանաթերթը:

կարելի չէ թիւնները
ներկայ են: Մեզի կը մնայ
ծրագրուած կերպով աշ-
խատիլ կանոնադրութեան
մը, ազգային-եկեղեցական
սահմանադրութեան մը
վրայ, ինչպէս նաեւ ամէն

մէկ թեմին յատուկ, տուեալ երկրի պայմաններուն համաձայն բարե-
փոխեալ թեմական կանոնադրութիւններու վրայ, որպէսզի իւրաքան-
չիւր գործօն իր յարաբերութիւնը յստակ տեսնէ ամբողջ կառույցին մէջ
եւ ոչ ոք համարձակի ինքնագլուխ նկատել ինքզինք եւ հետեւաբար իր
կապը, յարաբերութիւնը թէ՛ կեդրոնին եւ թէ՛ ամբողջին հետ խախտած
չպահէ:

Հ.- Վերջացնելով, Պատրիարք սրբազան հայր, ամենէն խոցելի կէտը
Հայաստանեայց Եկեղեցւոյ համար միութեան հարցն է անշուշտ: Կը խորհի՞ք
թէ Ամենայն Հայոց նոր Կաթողիկոսը պիտի ուզէ աշխատանք տանիլ այդ
ուղղութեամբ եւ ի՞նչ դիրքութիւններ պիտի ունենայ յաջողելու:

Պ.- Եկեղեցւոյ բաժանման հարցը վարչական-տնտեսական եւ
կանոնական հարց է: Այս մենք գիտենք մանաւանդ Միացեալ Նահանգ-
ներու մեր փորձառութենէն: Հեշտ ճանապարհ մը չէ իրականացնելու
համար այն կացութիւնը, ուր դարձեալ ամբողջը եւ ամբողջին մասերը
իրարու հետ իրենց ունեցած յարաբերութիւնները, պարտաւորութիւն-
ները գիտակցօրէն ընդունին, գործադրեն կամ հետեւին:

Դժուար ճանապարհ է: Կասկած չունիմ որ Ամենայն Հայոց Կաթո-
ղիկոսը կը բաժնէ այն երազը, որ երազն էր հանգուցեալ Վեհափառ
Հայրապետ Վազգէն Ա.ի՝ տեսնել այդ միութիւնը: Վազգէն Ա.
չկարողացաւ իրագործուած տեսնել, որովհետեւ բազմաթիւ ու բազմա-
զան պայմաններ կային եւ այդ պայմանները հաշտեցնելու աշխատանքը
կը պահանջէր լուրջ ուսումնասիրութիւն ու անյողգողէ կամք՝ յարա-
տեւօրէն հետապնդելու եւ թոյլ չտալու որ կացութիւնը երկարաձգուի:



ՆՈՒՊԱՐ ԱՐՍԷՆԵԱՆ

Հիմնադիր անդամ Ռ.Ա.Կ. Երուսաղեմի
Բաբազեան Ակումբի



Հ.- Անցեալ տարի մեծ շուքով տօնեցիք ձեր մասնաճիւղին հիմնադրութեան յիսնամեակը: Իբրեւ մասնաճիւղին հիմնադիր անդամներէն մին, կրնա՞ք ամփոփ տեղեկութիւն մը տալ անոր մասին:

Պ.- 1944-ի Սեպտեմբերին Գահիրէէն Երուսաղէմ եկաւ Էօթէն Բաբազեան, Պաղեստինի մէջ Ռ.Ա.Կ.ի առաջին ակումբը հիմնելու համար: Այդ օրը YMCA-ի մէջ 12 հայ երիտասարդներ իրենց երգումը տուին ծառայելու կուսակցութեան եւ ազգին: Այդ երիտասարդներէն ողջ են՝ Երուսաղէմի մէջ Նուպար Արսէնեան, Մատաթ Մանուկեան եւ Եաֆայի Ակումբէն Պետրոս Լեփեճեան, իսկ արտասահմանի մէջ Փրոֆ. Աւետիս Սանճեան, Լոս Անճելըս, եւ Թորոս ու Կարապետ Զաքմաքճեան եղբայրներ, Լոնտոն:

Անցեալ տարի 50-ամեակն էր մեր մասնաճիւղին հիմնադրութեան: Այդ ուրախ առիթով հրաւիրեցինք Ժընեւէն Էօթէն Բաբազեան կրտսերը ներկայ ըլլալու հանդիսութեանց: Ան ընդառաջեց եւ մեր հետ մնաց տաս օր:

Ըսեմ թէ մեր մասնաճիւղի առաջին ատենապետը եղած է ճարտարագէտ Յարութիւն Քացախեանը, բնիկ լիբանանցի, որ հոս հաստատուած էր. իսկ առաջին ատենադպիրը եղած եմ ես եւ իմ ձեռագրով առաջին ատենագրութիւնը բազմագրելով յօբելինական հանդէսի ընթացքին բաժնեցինք ներկաներուն:

Երուսաղէմի մէջ առաջին անգամ է որ նման յօբելեան մը տեղի կ'ունենար: Հանդիսութեան հովանաւոր Թորգոմ Պատրիարք Մանուկեան թէեւ իբրեւ Կաթողիկոսական Տեղապահ էջմիածին կը գտնուէր, սակայն փոխարինաբար ներկայ կ'ըլլար Լուսարարապետ Դաւիթ Արք. Սահակեան:

Յիսուն տարուան ընթացքին մեր գոյութիւնը պահպանած ենք: Թէեւ հասկնալի պատճառներով չենք ունեցած կուսակցական ակնառու գործունէութիւն: Մանաւանդ սկզբնական շրջանին, անգլիական հոգատարութեան ներքեւ, ոչ մէկ քաղաքական կուսակցութիւն արտօնուած էր գործելու: Նոյնիսկ հրէական քաղաքական կազմակերպութիւններ չէին արձանագրուած: Հետեւաբար, ստիպուած էինք կոչուիլ Երուսա-

դէմի Գեղարուեստասիրաց Միութիւն: Եւ արժեցնելու համար մեր գեղարուեստական միութիւն ըլլալը՝ դիմած էինք Յակոբ Օշականին ու Շահան Պէրպէրեանին, որպէսզի շաբաթը մէկական ժամ բարեհաճին տրամադրել մեզի՝ հայագիտական դասեր աւանդելու համար մեր երիտասարդութեան YMCA-ի սրահին մէջ: Մեր անդամներէն Հայկազ Միսախանը այդ հաստատութեան քարտուղարն ըլլալով, սրահէն բաժին մը սիրալոյս տրամադրած էր մեզի:

Հ.- Իսկ անգլիական հոգատարութենէ՞ն ետք:

Պ.- 1948-ին, ըստ Պատրիարքարանի արձանագրութիւններուն, Պաղեստինն ունէր 18,000 հայութիւն: Նոյն տարին, անոնցմէ տասը հազարը մեկնեցան արտասահման քաղաքական դէպքերու հետեւանքով, իսկ 1967-ին, դարձեալ քաղաքական աննպաստ զարգացումներու հետեւանքով 5,000 հայերու եւս մեկնումով ներկայիս մեր զաղուծը կը նկատուի 3,000-նոց համայնք մը:

1950-էն ետք, մնացինք յորդանանեան հոգատարութեան ներքեւ: Այդ հոգատարութիւնը, քաղաքական գետնի վրայ, շատ աւելի վատ էր քան



Պաղեստինեան Ինթիֆատայի օրերուն, Երուսաղէմի Ռ.Ա.Կ. Էօթէն Բաքազեան ակումբի ղեկավարներուն՝ Յակոբ Ծէօմէլեանի (Տայտայ), Սարգիս Միլիտոսեանի (Ութազ) եւ Յակոբ Անդրէասեանի (Զէյթունցի) հետ, կուսակցական ներքին տագնապի շրջանին ակումբը օրինական իշխանութեան կողքին պահելու համար:

ա ն գ լ ի ա կ ա ն ը :
 Յ ո Ր Ղ ա ն ա ն ե ա ն
 կառավարութիւնը չէր
 կրնար զանազանել հնչակ-
 եանն ու ռամկավարը եւ
 մեզ կը նկատէր
 համայնավար: Այդ իշխա-
 նութեան համար հայու-
 թիւնը միայն Դաշնակ-



ցութիւնն էր: Ու մեր ղեկավար ընկերները յաճախ կ'ենթարկուէին բանտարկութեան: Դժուար էր ձերբազատուիլ համայնավար պիտակէն:

Այս վիճակը տեւեց մինչեւ 1967, երբ Իսրայէլ գրաւեց Երուսաղէմը: Այն ատեն է որ բոլոր քաղաքական կուսակցութիւնները լայն շունչ առին եւ կրցան ազատօրէն իբրեւ կուսակցութիւն գործել: Պէտք է մասնաւորապէս շեշտել, որ Ռ.Ա.Կ.ի բուն գործունէութիւնը, որպէս քաղաքական կուսակցութիւն, սկսաւ 1967-1970-էն ետք միայն:

Վերջին քսանհինգ տարիներուն է միայն որ մեր գոյութիւնը սկսանք արժեցնել: Այդ շրջանէն ի վեր ամէն տարի միացեալ յանձնախումբով մը կը նշենք Մեծ Եղեռնը, տարածուն շարժումի վերած-ւած է Հայ Երիտասարդաց Միութիւն անուամբ մեր գործունէութիւնը եւ ունեցած ենք մեր եռամսեայ հրատարակութիւնը:

Հ.- Ինչպիսի՞ն էին Ռ.Ա.Կ.ի յարաբերութիւնները պատրիարքարանին եւ պատրիարքներու հետ, անցնող յիսուն տարիներուն:

Պ.- Հ.Ե.Մ.ն ու Ռ.Ա.Կ.ը սկիզբէն ի վեր մօտ եղած են պատրիարքներուն եւ պատրիարքարանին: Երուսաղէմի հայ պատրիարքներ յաճախ նախագահած են մեր ձեռնարկներուն: Խորքին մէջ, Հ.Ե.Մ.ը միակ միութիւնն է որ հովանաւորուած է Երուսաղէմի մէջ պատրիարքարանին կողմէ:

Պէտք է խոստովանիլ որ Թորգոմ Պատրիարք Մանուկեանի օրով մեր յարաբերութիւնները շատ աւելի սիրալիր են՝ քան նախորդ պատրիարքներու հետ մեր յարաբերութիւնները:



ՏԻԳՐԱՆ ՄՈՄԾԵԱՆ

Հայաստանի Հանրապետության

Դեսպանատան Յանձնախումբի անդամ



Հ.- Կրնա՞ք ձեր յանձնախումբին գործունեության մասին հակիրճ տեղեկություն տալ:

Պ.- Աշխատանքները, որ կը տանինք, կը վայելեն աջակցութիւնը քանի մը ակումբներու եւ հովանաւորութիւնը՝ պատրիարքարանին: Դժբախտաբար, Հ.Յ. Դաշնակցութիւնը եւ Հ.Մ.Ը. Միութիւնը քաշուեցան այս յանձնախումբէն, որովհետեւ նկատեցին թէ պիտի չկարենան գրաւել յանձնախումբին գլխաւոր աթոռը: Հետեւաբար, այսօր աշխատանքները մնացած են Ռ.Ա.Կ.ի, Հ.Ե.Մ.ի եւ վանքի ուսերուն: Մեր փափաքն է որ դեսպանատունը կառուցուի Երուսաղէմի մէջ, ուր հրեայ թէ արաբ բարեկամներու հաստատումով կրնանք օգտակար ըլլալ Հայաստանի: Այդ ուղղութեամբ առինք որոշ քայլեր: Դժբախտաբար պատրիարքարանը չկրցաւ յանձնախումբին խոստանալ անհրաժեշտ մեծ գումարը եւ կամ յարկաբաժին մը իր կալուածներէն մէկուն մէջ:

Ըստ նախահաշիւի, պէտք ունէինք 100,000 տոլարի: Մեր յանձնախումբին անունով խոստացանք ձեռք բերել 50,000-ը: Բայց ան բաւարար չէր գործի անցնելու համար: Ներկայիս առկախուած է ծրագիրը: Սակայն երբ Հայաստանի պետութիւնը անհրաժեշտ նկատէ դեսպանութիւն ունենալ Իսրայէլի մէջ, այն ատեն պիտի շարունակենք մեր աշխատանքները:

Հ.- Սակայն ինչո՞ւ Հայաստանի կառավարութիւնը չշարունակեց ճետապնդել այս գործը:

Պ.- Կը խորհիմ թէ Հայաստանի կառավարութիւնը տարբեր կերպ կը մօտենայ հարցին: Ան վստահաբար նկատի ունի արաբեւիսրայէլեան ներկայ տագնապը: Հետեւաբար, հասկնալիօրէն, դեսպանատան հաստատումը կը յետաձգուի: Հայաստան պիտի չուզէր որ այս հանգրուանին խզուէին իր յարաբերութիւնները արաբական աշխարհին հետ:

Ըսեմ թէ մեր կողմէ ամէն ջանք թափած եղանք բանալու դեսպանատունը: Թերեւս ալ քիչ նկատուած է հարիւր հազարի պիւտձէն: Բայց եւ այնպէս, կ'ենթադրենք թէ անով կարելի էր ձեռնարկել բացման գործողութեան:

Հ.- Կը խորհի՞ք թէ ստիպողութիւն մը կայ այս օրերուն դեսպանատուն ունենալու Իսրայէլի մէջ:

Պ.- Տնտեսական գործակցութիւն, իսրայէլեան շուկային հետ կապեր՝ փոքր նկատառումներ չեն: Մի՛ խորհիք որ իսրայէլեան շուկան պզտիկ է ու սահմանափակ: Հայաստան կրնայ շատ օգտուիլ այս շուկայէն:

Հ.- Ե՞րբ կը խորհիք թէ կրնայ գործնականացնալ դեսպանատան հիմնումը եւ ո՞վ կը խորհիք բերել իբրեւ դեսպան:

Պ.- Կը խորհիմ թէ վեց ամիսէն կ'իրականանայ: Արսէն անունով երիտասարդ մը կայ, որ Հայաստանի Արտաքին Գործոց նախարարութեան թրքական բաժնի պատասխանատուն է: Կարելի է եւ ուրիշ մը բերել: Հայաստանի մէջ այլեւս ղեւանագէտի պակաս չունին:



Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի դամբարանը: Լիբանանի քաղաքացիական պատերազմէն ետք, երբ Ամման հաստատուած էի, Ծահէ Արք. Աճէմեան գիս յաճախ Երուսաղէմ կը տանէր պատրիարքարանին դիւանագիտական համար կրող ինքնաշարժով, որպէսզի աւելի հայաքոյր միջավայրի մէջ գտնուէի: Այդ այցելութիւններու ընթացքին եղած էմ հիւրը Եղիշէ Պատրիարքին, որ միշտ համոզած է հեռու մնալ քաղաքական արկածախնդրութիւններէ, որոնց ջատագովմ էր Ծահէ Արք.: Հակառակ իր շուալ կենցաղին, սաղիմահայ ընկերներու տան մէջ Պատրիարքը վասպուրականցիի իր գեղջկական նկարագրով կը համեստանար, յատկապէս երբ խօսակցութեան նիւթ կը դառնային Վահան Թէքէեանը, որուն հմուտ մեկնաբաններէն էր, եւ ուրիշ գրողներ: Ինք ալ բանաստեղծ էր:

ՓՐՈՖ. ԱԼՊԷՐ ԱՂԱԶԱՐԵԱՆ

Պաղեստինեան շարժումի
պատասխանատուներէն



Հ.- Ծանօթ իրողութիւն է թէ այս երկրի հայերէն ամենալայն մասնակցութիւն բերողը եղած էք Պաղեստինեան Շարժման՝ հաւատալով անոր դատին: Իբրեւ հայ ձեր մասնակցութիւնը ինչպէ՞ս կը գնահատէք:

Պ.- Կ'ապրինք երկրի մը մէջ, որուն հայերը միշտ մէկ մասնիկը եղած են անոր: Մենք այս քաղաքները ինքնաթիռով չենք իջած: Հայերու ճակատագիրը առաջին օրէն իսկ մաս կը կազմէ միջինարեւելեան ժողովուրդներու ճակատագրին:

Պատմութեան ընթացքին հայեր միշտ ապրած են Արեւելքի եւ Արեւմուտքի մտածողութեան միջասահմանին վրայ: Մեր քաղաքական հասկացողութեան տեսակէտէն, հայկական ցեղասպանութիւնը եղաւ վնասակար: Զարդերէն առաջ երբ նայէինք Արեւմուտքին, կը խորհէինք թէ ամէն ինչ որ կու գար Փարիզէն, Լոնտոնէն թէ Նիւ Եորքէն լաւ էր. մինչ, դժբախտաբար, նուաստ կը գտնէինք ամէն ինչ որ գար Արեւելքի արաբէն ու իսլամէն: Պատմականօրէն վնասակար եղաւ մեր ժողովուրդին համար այս մօտեցումը:

Օրինակ, Ս. Յակոբը՝ Երուսաղէմի վանքը, շինողները մեծ մասամբ եղած են Պարսկաստանէն ու Հնդկաստանէն հայ բարերարներ: Իսկ այսօր, Ամերիկայի հայերը աչքի առջեւ եթէ բերենք, տարբեր մտածողութեան մը կը հանդիպինք ազգային արժէքներու նկատմամբ: Չեմ ըսեր լաւ են կամ վատ. պարզապէս տարբեր մտածելակերպ ունին:

Պէտք է մոռնանք որ հայ ժողովուրդը Արեւելքի ժողովուրդ է, հնդեւրոպական ժողովուրդ է, ինչպէս պատմաբաններ կ'ըսեն:

Վերադառնալով ձեր հարցումին, բնական է որ պաղեստինեան ժողովուրդի ազատագրական պայքարին հետ կապ ունենամ, որովհետեւ ես այս ժողովուրդին հետ կ'ապրիմ: Հայեր միշտ մաս կազմած են իրենց ապրած վայրերու ժողովուրդներուն՝ նպաստելով այդ երկիրներու վերելքին: Օրինակ, եթէ Պալատիւրը հայ զգար եւ Ֆրանսայի օգնէր՝ բնական երեւոյթ պիտի ըլլար, ինչպէս որ բնական երեւոյթ էր որ Հրէաստան ապրող հայեր օգնէին Հրէաստանի:

Հայու ճակատագիրը միշտ եղած է յարմարիլ շրջապատին՝ պահելով իր ազգային ոգին ու աւանդութիւնները:

Հ.- ինչպե՞ս կը գնահատեն պաղեստինցիները ձեր մասնակցությունը իրենց շարժումին: Հարազատի պէս կը մօտենա՞ն:

Պ.- Շիտակը ըսելով, ես իրենցմէ վկայագիր չեմ ուզեր, որովհետեւ երբ սկսիմ կասկածանքով մօտենալ թէ արդեօք զիս հարազատի պէս կ'ընդունին թէ ոչ, ուրիշներու նման կը յարգե՞ն կամ ոչ, կը նշանակէ թէ ես արդէն չեմ պատկանիր այդ հաւաքականութեան, այս պարագային՝ չարժուծին: Պատկանողը այդ զգացումը չ'ունենար: Եթէ օր մը պաղեստինցի մը ըսէ. «դուն մեզմէ չես», ատիկա իր խնդիրն է: Երբ Պաղեստինի մէջ քալեմ՝ կը զգամ թէ հողիս վրայ կը կոխեմ:



Երուսաղէմի Սիոն լեռան բարձունքին վրայ հայկական Սբ. Փրկիչ եկեղեցին, որ 1967-ի արաբեւիսրայէլեան պատերազմին հետեւանքով տակաւին կը մնայ անաւարտ: Իսրայէլեան պետութիւնը կը դժկամակի այդ սրբավայրին վրայ քրիստոնէական տաճարի մը կառուցումը արտօնել հայոց:

Հ.- Պաղեստինեան հարցի այս հանգրուանին կը խորհի՞ք թէ Պաղեստինի Ազատագրման Կազմակերպութեան (Պ.Ա.Կ.) նախագահ Եասէր Արաֆաթի քաղաքականութիւնը օգտակար պիտի ըլլայ Պաղեստինի ազատագրման:

Պ.- Արաֆաթ ճիշդ ու սխալ կողմեր չառ ունի: Արաֆաթի կողմէ ինծի ամէն տեսակի հրաւէր եկաւ իրեն գործակցելու, սակայն ես չ'ընդունեցի: Սակայն չենք ալ կրնար ամբողջովին քննադատել, որովհետեւ քաղաքական խաղաթուղթերը պաղեստինցիներուն ի նպաստ



Հայ վանականը Քրիստոսի գերեզմանին մօտ: Սուրբ Քաղաքի հայոց մենաշնորհէն մասնիկ մը:

Թէ, սակայն, խաղը չափէն աւելի մեծ է, եւ չեմ գիտեր թէ ուրիշ մը պիտի կարենա՞ր խաղալ այդ խաղը: Երկու տեսակ զգացում կը տիրապետէ Արաֆաթի նկատմամբ. մէկ կողմէ կը տեսնենք իր սխալները, սակայն միւս կողմէ ոչ ոք պատրաստ է ստանձնելու իր պատասխանատուութիւնը:

Հ.- Տարբեր ելք մը կը խորհի՞ք որ կարելի էր Արեւմտեան Ափի եւ Կազախի համար:

Պ.- Ըսեմ թէ պաղեստինցիները ամէն ճակատի վրայ աշխատեցան: Երբ համաձայնութեան մը ճամբուն վրայ ես հարցեր հարթելու համար

չեն դասաւորուած: Խաղը դժուար ընթացք մը ունի եւ Արաֆաթ կը փորձէ այդ շարուած խաղաթուղթերով խաղալ: Չեմ կարծեր թէ խաղալիք ուրիշ խաղաթուղթ մնացած է ներկայիս:

Մեծ գանգատս այն է, որ system developer մարդ չէ, patriarchal նկարագիր ունի, ամէն ինչ ինք կ'ուզէ ընել: Երբ անձ մը ըսէ թէ օրական 18 ժամ կ'աշխատի, չի' նշանակեր թէ ճիշդ գործ կ'ընէ: Ղեկավար մը ուրիշը աշխատեցնել պէտք է գիտնայ: Արաֆաթ իր անձին շուրջ կը դարձնէ ամէն ինչ: Ասիկա իր քաղաքականութեան մէջ սխալ մըն է: Ըսեմ

եւ երրորդ մը յանկարծ ուրիշ համաձայնութիւն մը կը բերէ սեղանի վրայ՝ կը խանգարուի սկստած աշխատանքը: Օսլոյի ճամբան բաւական խանգարեց այս առումով պաղեստինեան շարժումին բնականոն ընթացքը: Պէտք է մանաւանդ ըսել թէ Ռապինը տեսլական ունեցող մարդ չէ: Ան գործնական քաղաքագէտ մըն է: Պաղեստինեան հարցը լուծելու համար կ'ուզես անձնաւորութիւն մը որ տեսիլք (vision) ունենայ: Պէն Կուրիոնը եթէ ըլլար այս օրերուն, կամ նոյնիսկ ֆերէզը՝ այս հարցին պիտի մօտենար ոչ թէ այսօրը միայն, այլ գալիքը նաեւ նկատի ունենալով: Վստահ եմ թէ Իսրայէլի համար ասկէ լաւ պատեհութիւն մը պիտի չըլլայ՝ խաղաղութիւն ունենալու եւ վերջնականապէս կարգադրելու պաղեստինեան հարցը:



Սուրբ Յակոբ Տեառնեղօր գերեզմանը, հայոց վանքի մուտքի ձախին:

Հ.- Այս օրերուն կը խօսուի թէ մեծագոյն խոչընդոտող Երուսաղէմ քաղաքի ապագան է: Դուք ինչպէ՞ս կը դիտէք հարցը:

Պ.- Անշուշտ շատ դժուար հարց է Երուսաղէմի ապագային տնօրինումը: Դժբախտաբար երեւակայութեանց մէջ կ'ապրին մարդիկ: Օրինակ, երբ հրեաները կ'ըսեն թէ Երուսաղէմը միացեալ քաղաք է, շատ կը սխալին. ընդհակառակը, որեւէ ժամանակէ աւելի ան բաժնուած քաղաք մըն է: Ճիշդ է որ 48-ի եւ 67-ի պատերը քանդուած են, սակայն ոչ մէկ յարաբերութիւն կայ՝ բացի Իսրայէլեան «պոլիտոգրը»ներէն, երբ ամէն անգամ Արեւելեան Երուսաղէմի մէջ հրեաներու համար կայքեր ուզեն հաստատել:

Այս հանգրուանին, չեմ խորհիր թէ գործնականօրէն հրեաները ուզեն տալ Երուսաղէմը, բայց եթէ պիտի ուզեն քաղաքական կամեցողութեամբ մը լուծել հարցը՝ շատ դժուարութեամբ կրնան յանգիլ դրական լուծումի:

Հ.- Նաեւ քաղաքը միջազգայնացնելու խօսքեր կան այսօր...

Պ.- Այս բոլոր խօսակցութիւնները քաղաքական խնդիրներ են: Երուսաղէմ քաղաքին համար 57 տարբեր տեսակի լուծումներու առաջարկներ կան. չեմ ուզեր հիմա աւելցնել 58-րդ մը...: Շատ կանխազգուշական հարցեր են: Կարեւորը այն է թէ հրեաները որոշումի մը եկած են պաղեստինեան հարցին կապակցութեամբ: Դեռ յայտնի չէ:

Հ.- Եթէ յառաջիկայ տարի պահպանողական «Լիքուտ» կուսակցութիւնը գայ իշխանութեան գլուխ, անոնք պիտի կարենա՞ն լուծումի մը յանգիլ:

Պ.- Անձնապէս ես աւելի հանգիստ կը զգամ Լիքուտի հետ քան Աշխատաւորական Կուսակցութեան, որովհետեւ պահպանողականները աւելի ուղիղ են: Ժիշդ է թէ կրնան աւելի կարծր դիրք բռնել սկիզբը, բայց երբ եզրակացութեան մը դանձ կը գործադրեն: Դարձեալ ըսեմ որ անձնապէս Լիքուտին վրայ աւելի վստահութիւն ունիմ, քան՝ Աշխատաւորականներուն:

Հ.- Կը խորհի՞ք թէ Սուրիան եթէ զիջի եւ Իսրայէլի ճետ համաձայնութեան գայ՝ պաղեստինեան հարցը կրնայ աւելի արագ կերպով լուծուիլ:

Պ.- Ժիշդն ըսելով, չեմ խորհիր որ այս երկու խնդիրները իրարու կապուած են: Սուրիան կը փորձէ վերջին խօսքը ըսել: Հաֆէզ Ասատի քաղաքականութեամբ՝ Սուրիա կ'ուզէ հսկիչի դեր կատարել: Առ այժմ Կոլանի եւ Պաղեստինի հարցերը այնքան ալ մօտիկ չեն:

Հ.- Իբր հայ պաղեստինցի եւ միջազգային քաղաքականութեան ծանօթ անձ, որքանո՞վ պիտի ուզէիք ձեր գիտելիքներով օգնել Հայաստանի:

Պ.- Շիտակը խօսելով, Հայաստան կը մնայ մեր հայրենիքը: Մինչեւ հիմա կատարած քաղաքական աշխատանքներս անբաւարար կը նկատեմ եւ փնտռտուքի մէջ եմ ազգային քաղաքականութեան օգտակար ըլլալու կերպերու շուրջ: Դժբախտաբար չըջափակումի հետեւանքով այսօր Հայաստանը առաւել եւս տխուր վիճակի մէջ է եւ առաւել եւս օգտակար ըլլալու ենք անոր:

«ԱՆԿԱՆՈՒԹԻՒՆ», 15 եւ 29 Յունիս 1995



Թումայի (Թովմա) Դարպասը Դամասկոսի մէջ:

ԴԱՄԱՍԿՈՍԸ ԻՐ ՀԱՅՈՒԹԵԱՄԲ

Հինէ՛ն եկող գեղեցիկ սովորութեամբ մը, Արեւելքի գեղեցիկ քաղաք Դամասկոսը դարձած է մեր ժողովուրդին համար ա՛յն հանգրուանային քաղաքը, ուր դարեր ամբողջ հաւատացեալներ դէպի Երուսաղէմ ուխտի կամ դէպի Ծաւրագոյն Արեւելք առեւտուրի ճամբուն վրայ իջեւանած են կարճ ժամանակով եւ ապա դիմած՝ կա՛մ սրբավայր եւ կամ ալ հեռաւոր Արեւելք ու Հնդկաստան:

Ճակատագրի բերումով, Մեծ Եղեռնի օրերուն, ինչպէս շրջանի այլ քաղաքներու՝ Հալէպի եւ Պէշրուքի, այնպէս ալ Դամասկոսի մէջ կայք հաստատած են հայեր, որոնք մինչեւ օրս կ'ապրին ու կը գործեն իրենց ասպնջական նոր հայրենիքին՝ Սուրիոյ մայրաքաղաքին մէջ:

Հիւրընկալ, հիւրասէր համայնք մըն է դամասկահայութիւնը: Ատոր ապացոյցը ան տուաւ մանաւանդ Լիբանանի քաղաքացիական կռիւներու ընթացքին, երբ հարիւրաւոր հաչ ընտանիքներ խոյս տալով պատերազմէն կայք

հաստատեցին Դամասկոս, ուր տեղւոյն հայերը իրենց դուռները լայն բացին բոլոր գաղթականներուն առջեւ: Այդ օրերուն այլեւս չկային գաղափարական պատմելիքներ. կ'ընդունէին օգնութեան կարօտ ամէն հայ: Կը յիշեմ, Ռ.Ա.Կ.ի ղեկավարներէն Տէր եւ Տիկին Ասիլեաններու բնակարանը իջեւանած էր «Ազդակ» օրաթերթի երբեմնի հիմնադիր ու հակառամկավար Հայկ Պալեանը...:

Դէպի Միացեալ Նահանգներ ու Գանատա մեկնող «կարասաններ» Դամասկոսէն կ'անցնէին այդ օրերուն:

Դամասկոս հնաքոյր արեւելեան քաղաք մըն է իր շուկաներով, ճարտարապետութեամբ, ժողովուրդին նիստ ու կացով, խոհանոցով: Հայեր շուտով կ'ընտելանան անոր միջավայրին՝ պահելով իրենց տոհմիկ աւանդութիւնները, շուտով բարձրացնելով դպրոց ու ակումբ, ինչպէս նաեւ՝ Հայաստանի Հանրապետութեան անկախութեան վերահաստատումով՝ դեսպանատուն: Հոն կը գործեն երեք քաղաքական կուսակցութիւններու մշակութային թեւերը եւ Հ.Բ.Ը.Մ.ը:

Դամասկոս 1956-ին ծագած եկեղեցական տագնապի առաջին օրէն իսկ մնաց հաւատարիմ Ս. Էջմիածնի գերակայութեան գաղափարին եւ պայքարի ճակատային գիծին վրայ կը մնայ այսօր ալ՝ այդ գաղափարը պահպանելու համար, մանաւանդ Հնչակեան Կուսակցութեան ղեկավար տարրերու առաջնորդութեամբ:

Հակառակ անոր որ ան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատկանող առաջնորդական աթոռ մըն է ըստ նորապետական կարգի, գաղութը յաջողեցաւ իր բուն հայրենասիրութեամբ ծանօթ եւ Հայ Եկեղեցոյ ամենէն ազդեցիկ հոգեւորականներէն Գնէլ Արք. Ճերեմեանը բազմեցնել առաջնորդական աթոռին՝ ի հեճուկս Անթիլիասի: Երջանկայիշատակ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի միութենական ջանքերը պատճառ եղած էին որ Ոսկան Եպս. Գալիաքեան անցնէր Յունաստան: Հոգելոյս Հայրապետը խաղի էր բերուած «բարի տրամադրութիւններու» այդ մեղրալուսնային օրերուն:

Նորընտիր երկու կաթողիկոսներու գալիք գործակցութեան համար յարմարագոյն փորձաքարը Դամասկոսի թեմը պիտի ըլլայ, անկասկած: Գալիք օրերը պիտի պարզեն թէ Գարեգին Ա. եւ Արամ Ա. կաթողիկոսներ պիտի յաջողի՞ն:

Դամասկոսի եկեղեցին՝ Ս. Սարգիս, սաղիմապատկան վանք մը եղած է անցեալին. սակայն Սիսի Աթոռին Անթիլիաս փոխադրութենէն ետք, ան Երուսաղէմի Պատրիարքութեան կողմէ սիրաշօժար յանձնուած է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, որպէսզի Կիլիկիոյ հէգ Աթոռը կարողանայ ունենալ քանի մը առաջնորդական աթոռ:

Այս այցելութեամբ տեսակցութիւններ կ'ունենանք Գնէլ Արք. Շերեմեանի, Ռ.Ա.Կ.ի ատենապետ Գրիգոր Բարսեղեանի եւ Սուրիոյ մօտ Հայաստանի Հանրապետութեան հաւատարմատար Դաւիթ Յովհաննիսեանի հետ:

Սուրիան այն պետութիւնն է, որ Հայաստանի հետ ստորագրած իր դաշինքներով ցոյց տուաւ իր բարի տրամադրութիւնները մեր հայրենիքին հետ եղբայրական գործակցութեան: Սուրիահայութիւնը մինչեւ այսօր տակաւին կը յիշէ Նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի այցելութիւնը Սուրիա, ինչպէս որ Նախագահ Հաֆէզ էլ Ասատ բնաւ չի մոռնար իր Երեւան այցելութիւնն ու ջերմ ընդունելութիւնը տարիներ առաջ, խորհրդային իշխանութեան օրերուն:

ԴԱԻԻԹ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
Հայաստանի Հանրապետության
Հաւատարմատար



Հ.- Միջին Արեւելքի մէջ որպէս քաղաքական ներկայութիւն իր մասնաւոր տեղն ունի Սուրիական Հանրապետութիւնը: Երբ քաղաքականօրէն արաբեւիսրայէլեան հարցերը վերջ մը գտնեն, մենք՝ հայերս աւելի բարոք տնտեսական ու ընկերային կեանք մը կ'ապահովե՞նք Սուրիոյ եւ Լիբանանի մէջ:

Պ.- Նախ Լիբանանի մասին չեմ կարող որեւէ բան ասել: Լիբանանում մեր հաւատարմատար Երուանդ Մելքոնեանին կարող էք հարցնել:

Երկրորդ, Սիրիական Արաբ Հանրապետութիւնում հայ համայնքը ներկայումս ունի շատ լաւ վիճակ: Այդ լաւ վիճակը կարելի է մեկնաբանել որպէս հաւասարութիւն. այսինքն՝ հայ համայնքը հաւասար է միւս քրիստոնեայ համայնքների, իսկամ համայնքների հետ եւ խտրականութիւն չի դրոււմ սիրիական կառավարութեան կողմից: Իսկ ընդհանուրը, ասենք այն սոցիալական եւ տնտեսական հետեւանքները երկարատեւ պատերազմի եւ Սիրիայի որոշակի մեկուսացման, կը կրի ամբողջ սիրիացի ժողովուրդը: Համաձայն եմ ձեզ հետ որ Սիրիան բաւականին մեծ կշիռ ունի այս տարածաշրջանում, եւ թերեւս զարմանալի տեսակէտ ասեմ, որ չի բխի միայն իսրայելեւսիրիական յարաբերութիւնից եւ այն կարեւորութիւնից որ կը սպասի այսօր խաղաղութեան գործընթացին: Փաստօրէն, ամբողջ աշխարհի ուշադրութիւնը այսօր բեւեռուած է սիրիա-իսրայէլեան համաձայնութիւնների ընթացքի վրայ, քանի որ դրանով որոշոււմ է ամբողջ այս տարածաշրջանի ճակատագիրը: Այն տարածաշրջանի՝ որը վերջին քառասուն տարուայ ընթացքում պատերազմների աղբիւր եւ բեմ է դարձել:

Սիրիան իրօք այսօր ընդունուած է ասել որ խաղաղութեան բանալին է. նրա դերը շատ կարեւոր է այս հարցում. բայց նրա դերը կարեւոր է նաեւ ուղղակի տարածաշրջանային յարաբերութիւնների մէջ:

Պառլամենտի ստորագրումից յետոյ, Սիրիայի տնտեսական համակարգը, քաղաքական համակարգը, որը արդէն սկսուել է փոփոխուել, աւելի լայն թափով կը փոխուի: Կապիտալների համար դուք գիտէք որ աշխարհում դրամը շատ է, իսկ ներդրումի տեղերը քիչ. բայց չուկան կայ: Այդ չուկան այսօր արդէն բաց է, ներքին օրէնքների պատճառով:

Թէեւ ներդրումների շատ մեծ հոսք չկայ, բայց այն արդէն բաւականին զգալի է դարձել: Ես վստահ եմ որ խաղաղութեան համաձայնագրի ստորագրումից յետոյ դա կը տասնապատկուի: Սա մի շուկայ է, որտեղ հերթական կերպով կենտրոնանալու են տարբեր երկրների շահերը՝ Միացեալ Նահանգներից մինչեւ Եւրոպա եւ Չինաստան ու Ճապոնիա, բայց առաջին հերթին Ռուսաստան, որոնք ունեն իրենց աւանդական կապերը եւ չեն ցանկանայ զիջել իրենց տեղերը:

Կարելի է բնութագրել երեք ծրագրեր, որոնք այսօր գոյութիւն ունեն: Մէկը Կազապլանկայի տնտեսական ժողովն էր, որը կարելի է նկատել ամերիկեան ծրագիր: Այն ընդհանուր մի նախագիծ է առաջարկում Միջին Արեւելքի եւ Հիւսիսային Ափրիկէի երկրների զարգացման համար. եւ այդ զարգացումը հիմնուած է հետեւեալ նկատումների վրայ.՝ ամերիկեւիստայէլեան ներդրումներ, Ծոցի երկրների ներդրումներ եւ տարածաշրջանի այլ հարցեր:

Դրա կողքին կայ Միջերկրականի աւազանի երկրների զարգացման ծրագիրը, որը արեւմտաեւրոպական է եւ որի հիմնական դրդապատճառը «իմիգրացիայի» գործընթացն է: Լաւ գիտէք որ Արեւմտեան Եւրոպայի երկրների համար կարեւոր խնդիր է օտարների հսկայական ներգաղթը՝ հիմնականում այս տարածաշրջանից: Բնական է որ տնտեսական զարգացման մոդելների մէջ որոնուի լուծումը այդ հարցի՝ բարձրացնելով երկրների կենսամակարդակը, որպէսզի մարդիկ ստիպուած չլինեն իրենց հացի կտորը գտնելու համար արտագաղթել դէպի զարգացած երկրներ:

Այս երկրորդ ծրագիրը բաւականին արագ թափով ընթանում է եւ Բարսելոնան ցոյց կը տայ թէ ո՞ւր է հասել այն: Շատ կարեւոր է այս տեսակէտից Միւրիայի արագորձնախարար Շարայի այցելութիւնը իսպանիա:

Երրորդ ծրագիրը առաջ է քաշուել Ալեքսանդրիայի գերագոյն խորհրդաժողովի հիմամբ: Միւրիական նախաձեռնութեամբ Մուբարակը, Սէուտական Արաբիայի թագաւորը եւ Հաֆէզ էլ Ասադը հանդիպեցին եւ որոշակի գաղափարներ ձեւաւորուեցին, ձեւակերպուեցին արաբական աշխարհի զարգացման վերաբերեալ: Առաջին հերթին, անուղղակիօրէն, գալիս է արաբական ազգայնականութեան գաղափարը, որ «մեր խնդիրները մենք ինքներս պէտք է լուծենք»: Դժուար հարց է սա անշուշտ, եւ թէ ի՞նչ յաջողութեամբ կը կարողանան նախ իրար հետ լեզու գտնել, համապատասխանեցնել իրար շահերը, այդ բոլոր արաբական երկրների շահերը, եւ յետոյ դրանց հիման վրայ ստեղծել համագործակցութեան մի ծրագիր՝ ապագան ցոյց կը տայ: Բայց զուտ

օբյեկտիւ նախադրեալները, որ գոյութիւն ունեն՝ թոյլ են տալիս գոնէ աշխատել այդ ուղղութեամբ: Պարզ է, հազար ու մի այլ գործօններ կան որոնք խոչընդոտ են այդ ծրագրի իրականացման: Այդ պատճառով էլ ասում եմ դա դեռ սաղմ է եւ ոչ թէ ծրագիր:

Այս բոլոր ծրագրերի մէջ Սիրիան ունի իր կատարելիք կարեւորագոյն դերը, որովհետեւ նախ ազդեցիկ երկիր է, ապա՝ վերջին երկու տարիների փորձը ցոյց տուեց որ սիրիական միջնորդութիւնը բաւականին մեծ յաջողութիւն է ունենում, ինչ որ վկայում է նախ նախագահի անձնական հեղինակութեան եւ ազդեցութեան մասին, ապա նաեւ՝ ձեռք բերած դերի:

Այս տեսակէտից, անշուշտ, Հայաստանի Հանրապետութեան համար կարեւոր են բոլոր գործընթացները, որոնք տեղի են ունենում Սիրիայում: Մենք ուշադիր հետեւում ենք, որպէսզի տեղեակ լինենք թէ ի՞նչ է կատարւում եւ պատրաստ լինենք զարգացումներին, որոնց ճիշդ գնահատականից մեկնելով կարելի է ծրագրաւորել այս հանրապետութիւնների զարգացումները: Այս տեսակէտից, պէտք է ասել որ մեր յարաբերութիւնները, որոնք սկսուեցին Պրն. Շարայի այցելութեամբ 92 թուականի ձմրանը, եւ որոնց հիմքը դրուեց երկու նախագահների հանդիպման ժամանակ (գիտէք որ Լեւոն Տէր-Պետրոսեանը իր առաջին այցելութիւնը տուեց իր ծննդավայրին Սիրիայում, 1992 թուին), հսկայական դեր խաղացին ամբողջ յետագայ յարաբերութիւնների զարգացման համար. եւ սա պէտք է գնահատել ուղղակի որպէս կոմբիմեն-դային արտայայտութիւն...:

93 թուականի Ապրիլից Դամասկոսում գործում է Հ.Հ. դեսպանատունը: Այս ընթացքում մենք ստորագրել ենք 15-ից աւել պայմանագրեր, բազմաթիւ հանդիպումների արձանագրութիւններ, կոնտրակտային փաստաթղթեր, եւլն.: Կարելի է ասել, յատկապէս վարչապետ Բազրատեանի այցից յետոյ 95-ի Ապրիլին, որ ստեղծուել է պայմանագրային այն հիմքը, որը հնարաւորութիւն է տալիս հանգիստ իրաւական հիմքերի վրայ զարգացնել արդէն գործնական յարաբերութիւններ:

Անշուշտ, մեզ համար այս հարցում շատ կարեւոր էր Թուրքիայի ցամաքային ճանապարհի բացուելը: Գիտէք որ Տիկին Չիլլէրը յայտարարել է, որ Թուրքիան բաց է արել իր օդային ճանապարհները Հայաստանի համար: Պրն. Բազրատեանը առաջինն էր որը եկաւ Թուրքիայի օդային տարածքով: Պրն. Բազրատեանի այդ այցի ժամանակ ստորագրուեցին 5 շատ կարեւոր պայմանագրեր եւ մի արձանագրութիւն երկու վարչապետների բանակցութիւնների առթիւ, որը ցոյց է տալիս որ մօտակայ 2-3 տարում ի՞նչ ճանապարհով պէտք է զարգա-

նան հայ-սիրիական առեւտրական, տնտեսական, գիտական, մշակութային յարաբերութիւնները:

Ենթադրում եմ որ երկու երկրների յարաբերութիւնների մակարդակը այսօր բաւականին բարձր է եւ վստահ եմ որ դրանց խորութիւնը հիմք է տալիս խօսել լիարժէք բարեկամութեան մասին:

Հ.- Ձեր յարաբերութիւններուն մէջ նկատի կ'ունենա՞ք Ռուսաստանի դիրքորոշումը շրջանին նկատմամբ: Յարաբերութիւն ունի՞ք այստեղի Ռուսական դեսպանատան հետ:

Պ.- Մեր յարաբերութիւնները Ռուսաստանի դեսպանատան հետ շատ լաւ են: Կարող եմ որպէս օրինակ բերել Մայիս 9-ի Յաղթանակի Օրուայ կազմակերպումը այստեղ: Մենք ուղղակի Ռուսաստանի Դաշնութեան դեսպան Պրն. Վիկտոր Կոկիժիցէի հետ պայմանաւորուեցինք որ սա պէտք է միասին անենք, որովհետեւ սա մեր միասնութեան տօնն է, սա մեր հայրերի սիրանքի վկայութիւնն է, եւ յատկապէս 5 տարի միասին պատերազմելուց յետոյ մեր տօնն է:

Ուստի Մայիսի 8-ին մեր դեսպանատանը միասնական մամուլի ասուլիս տուեցինք սիրիական եւ օտար լրագրողների համար: Մենք ներկայացրեցինք մեր երկրների մասնակցութիւնը պատերազմում: Ես



Հայաստանի Հանրապետութեան դեսպանատունը Դամասկոսի մէջ:

խօսեցի մասնավորապէս հայ ժողովրդի մասնակցութեան մասին: Մանրամասն անուններով նշեցի որ ամբողջ աշխարհում հայ ժողովուրդը մասնակցել է Ֆաշիզմի դէմ պայքարին: Ֆրանսիայի դեսպանին հետ իմ զրոյցի ընթացքում, լրացուցիչ ինֆորմացիա ստացայ այդ պատերազմին հայ զինուորների մասնակցութեան մասին, որը մինչեւ հիմա չունէինք: Ռուսաստանի դեսպանը խօսեց ընդհանուր պատերազմի հետեւանքների մասին, յաղթանակի կարեւորագոյն նշանակութեան մասին...: Իսկ ամսի 9-ին Կոկիծիցէն եւ ես միասին հիւրեր ընդունեցինք արդէն Ռուսական Դաշնութեան դեսպանատանը: Սա ուղղակի վկայութիւն է...

Հ.- Թուրքիոյ Գերքին փափուկ հարցերուն կը ճետեւիք անշուշտ: Կարծիք կայ որ երբ արաբեւիստայէլեան հարցը վերջանայ՝ Սուրիա իր անմիջական պահանջը պիտի Գերկայացնէ Իսկէստերունի (Ալեքսանտրէթ) վերաբերեալ:

Պ.- Կարծում եմ որ ժամանակակից աշխարհում այդ հարցերը շատ հանգիստ են լուծուում: Այսօր Սիրիայի եւ Թուրքիայի միջեւ կարեւորագոյն խնդիրը ջրերի խնդիրն է եւ ոչ թէ Իսկէստերունին: Ջրերի խնդրի շուրջ արդէն մօտավորապէս 40 տարի է որ խօսակցութիւններ են գնում, ընդհատուում են, տարբեր մակարդակի են ձեւակերպուում, բայց ընթանում են եւ դեռեւս որեւէ շօշափելի արդիւնքի չեն յանգել: Սիրիան զարգանում է եւ տնտեսութիւնը զնալով աւելի մեծ ծաւալների է հասնում: Այդ տնտեսութեան համար պէտք է ելեկտրականութիւն եւ ջուր: Այսինքն՝ երկրի ջրային պահանջը զնալով աճելու է: Բնական է որ Սիրիայի կառավարութիւնը այսօր վտանգուած է այդ հարցով:

Ժամանակակից պայմանավորութիւններ ձեռք են բերուում. բայց միշտ կայ Դամոկլեան սրի պէս կախուած մի վտանգ՝ որ երբ որ ջրամբարի շինութիւնն աւարտուի, ցանկացած ժամանակ Թուրքիայի կառավարութիւնը կարող է ընդհատել Սիրիայի ջրի մատակարարումը: Սա շատ ծանր կացութեան մէջ է դնում ներկայումս էլ Սիրիայի կառավարութիւնը եւ պարզ է որ նրանք պէտք է բանակցեն: Բայց առաջնայնութիւնը, ուզում եմ ասել պրիորիտէն՝ ի հարկէ այս հարցում է:

Երկրորդը անվտանգութեան խնդիրն է, որը մտահոգում է տարածաշրջանի բոլոր երկրներին, բայց առաւել եւս Թուրքիային, Իրանին, Իրաքին եւ Սիրիային: Գիտէք, մշտական հիմքի վրայ բանակցութիւններ են գնում Թուրքիայի, Սիրիայի եւ Իրանի ներքին եւ արտաքին գործերի նախարարների միջեւ, որովհետեւ պարզ է որ անվտանգութեան խնդիրը հեռու է իր լուծումից: Խօսել Իսկէստերունի պրոբլեմի մասին, ես նախ որպէս օտար դիւանագէտ Սիրիայում

*իրաւունք չունեմ. երկրորդ, ուղղակի տրամաբանական չեմ գտնում
այսօր:*

Հ.- Ինչպէս այլ գաղութներու մէջ, այնպէս ալ Դամասկոս Դեկտ. 28-ին Նախագահ Տէր-Պետրոսեանի վճիռով Դաշնակցութեան ժամանակաւոր ատկախումը Հայաստանի մէջ շփոթութիւն ստեղծեց: Սուրիոյ մէջ ինչպէ՞ս կը դիտուի այս պարագան Հայաստանի տրուող օգնութիւններու գծով:

Պ.- Սիրիայում հարցը շատ աւելի հեշտ էր, որովհետեւ Դաշնակցութեան կողմից Հայաստան գնացող օգնութիւն վաղուց ի վեր չկար: Դեսպանատան սկզբնական շրջանում Համազգայինը բաւականին լուրջ օգնութիւն ցոյց տուեց. բայց յետոյ Բիւրոյի հրահանգով դադարեցուեց



Դամասկոսի Սբ. Սարգիս պատմական եկեղեցին, որ Սուլ Աթոռին Անթիլիաս փոխադրութենէն ետք Երուսաղէմի հայոց պատրիարքութեան կողմէ սիրով դրուեցաւ Կիլիկիոյ Աթոռի տրամադրութեան տակ, որպէսզի ան ունենար քանի մը թեմ: Որպէս վանք, Սբ. Սարգիսն ունի պատմական արժէք: Հակառակ Դամասկոսի Կիլիկեան Թեմ ըլլալուն, 1956-ի եկեղեցական պայքարէն ետք դամասկահայութիւնը հաւատարիմ մնաց Մայր Աթոռին շնորհիւ Ա.Դ.Հ.Կ.ի, Ռ.Ա.Կ.ի եւ Բարեգործականի անդամներու էջմիածնասիրութեան:

եւ գնալով յարաբերութիւնները խզուեցին դեսպանատան եւ միութեան միջեւ: Խզուեցին՝ Համազգայինի միակողմանի որոշմամբ: Ինձ թւում է որ այդ որոշումը իրականացնող մարդիկ ամաչում են դրանից, որովհետեւ խելացի եւ լաւ մարդիկ են: Իրենք չատ անյարմար վիճակի մէջ են դրուել իրենց ղեկավարների կողմից, բայց ստիպուած են ենթարկուել: Ես ըմբռնում եմ այդ մօտեցումը:

Հ.- Մամուլի նիւթ դարձաւ վերջին կաթողիկոսական ընտրութիւնը, երբ 40 տարի Էջմիածնի դէմ պայքարած Գարեգին Կաթողիկոս ընտրուեցաւ Ամենայն Հայոց Կաթողիկոս: Ինչպէ՞ս կը գնահատէք այս պարագան եւ կը խորհի՞ք որ ան օգտակար ըլլայ եկեղեցական միութեան հարցին:

Պ.- Նախ ասեմ որ սա անձերի հարց չէ: Գարեգին Ա.ի ընտրութիւնը անձի հարց չէ: Ես չատ բարձր եմ գնահատում իր անձնաւորութիւնը: Պատիւ եմ ունեցել բազմիցս հանդիպելու եւ երկարատեւ զրոյցներ ունենալու իր հետ: Բոլոր մարդիկ որ հանդիպել են, չատ բարձր են գնահատում նրա պատրաստութիւնը եւ նրա ճկուն միտքը, դիւանագիտական հմտութիւնը: Սա հսկայական մի խնդրի լուծման առաջին քայլն է, հայոց եկեղեցւոյ միութեան հարցն է: Եթէ յիշենք նախագահի խօսքը թէ մեր սերունդն է որ պիտի միացնի ու իրականացնի եկեղեցու միութիւնը, ամէն ինչ պարզ կը լինի: Ճիշդն ասած, ես չատ ուրախ եմ որ այս գործն եղաւ: Այլեւս խօսել դրա շուրջ իմաստ չունի: Ծրագրենք մեր միւս քայլերը:

Հ.- Արտերկրի հայերու համար հերոսական Արցախի յաջողութիւնները մշտական հետաքրքրութեան առարկայ են: Որքա՞ն լաւատես էք այդ գծով յառաջ տարուող բանակցութիւններով:

Պ.- Ես սկզբից, 88 թուից ի վեր լաւատես եմ: Վստահ եմ որ ինչ որ պէտք է լինի պէտք է լինի: Արցախի հարցը ներկայ իրադրութեամբ լուծուելու է բանակցութիւններով: Բայց դա միայն Արցախի հարց չէ: Կովկասն ու Անդրկովկասը դարձել են շատ վտանգաւոր, տարբեր տեսակի խնդիրներով լի տարածաշրջան: Երեք տարուան պատերազմից յետոյ ժողովուրդը յոգնել է: Այս պատերազմից ծնուել են լաւ գործող եւ պատրաստ բանակներ: Ժողովուրդը կարող է յոգնել, բայց բանակը՝ ո՛չ:

Փաստօրէն երկընտրանք է: Կա՛մ խաղաղ բանակցութեամբ լուծում, կա՛մ պատերազմ: Պատերազմը անտրամաբանական է: Նորանկախ պետութիւնները իրենց ուժերը պէտք է լարեն իրենց տնտեսութիւնը կարգի բերելու, ժողովրդի կենսամակարդակը բարձրացնելու, արտաքին յարաբերութիւնները զարգացնելու,՝ փորձով եմ վկայում, դա շատ

ծախսալից գործ է,- եւ այս ամէնի համար հարկաւոր են հսկայական գումարներ, մարդուժ, ժամանակ: Ինձ թւում է տարածաշրջանում ստեղծուել է պատերազմի անբնականութեան ըմբռնումը: Աչքի առաջ ունենք արաբեւիսրայէլեան բանակցութիւնների երկար պատմութիւնը: Յոյս ունենք որ մեր պարագային հարցերը աւելի արագ կ'ընթանան: Բացի այդ, արաբական խայտաբղէտութիւնը՝ կրօնական, ազգայնական իմաստով, չատ է խոչընդոտում բանակցութիւնները. նոյնպէս՝ Իսրայէլի դիրքորոշումները, հաշիւները: Մեզ մօտ աւելի թեթեւ մոդել է:


Մեզ մօտ բանակցութիւնները լաւ թափ առան: Ամենակարեւոր արդիւնքն այն է, որ այսօր մէկ տարուց աւել է որ պատերազմ չկայ: Յարաբերական անդորր է սահմաններում: Թէ՛ Հայաստանը եւ թէ՛ Ատրպէյճանն ու Արցախը հնարաւորութիւն են ստացել իրենց գործերով զբաղուելու: Այն, որ այս երկրները մի տարում տնտեսական, ընկերային առաջընթաց են ապրել, ցոյց է տալիս խաղաղութեան բեղմնաւորումը: Ուստի, լաւատես եմ: Լաւատես եմ՝ նախ եւ առաջ հիմնուելով մեր ժողովրդի որակի վրայ: Գիտէք, երեւի 100 տարի յետոյ երգեր են երգուելու այս ժողովրդի մասին, որ այս պայմաններում առանց ըզվզումի ու բողոքի դիմադրեց, դիմացաւ եւ յաղթեց:

Հ.- Անձնական հարցում մը: Անցեալ մեր հանդիպման նշած էիք որ գիտաշխատող եղած էք նախապէս: Արդեօք ժամանակ պիտի գտնէ՞ք բանասիրական աշխատանքի:

Պ.- Հայաստան-Սիրիա յարաբերութիւնները զարգանում են, հետեւաբար գործն էլ չատ է: Ինչքան աւելի չատ է գործը, այնքան աւելի քիչ է հնարաւորութիւնը ո՛չ միայն աշխատելու, այլեւ մտածելու: Իրօք դա վատ բան է. կարող եմ աստիճանաբար կորցնել իմ մասնագիտութիւնը:



ԳՆԷԼ ԱՐՔ. ԾԵՐԵԾԵԱՆ Առաջնորդական Տեղապահ



Հ.- Դամասկոսի հայ գաղութը հիմնելն հաստատուած է հոս: Դամասկոսը եղած է կայքերէն մին հայ գաղթականութեան: Ինչպէ՞ս կը գնահատէք դամասկահայութեան ազգային կեանքը, որուն ծանօթ էք եղած չորս տարիէ ի վեր ձեր պաշտօնի կոշուէլէն շատ առաջ:

Պ.- *Շատ զգոյշ շարժած եմ մինչեւ հիմա. իմ բոլոր գործունէութիւններս լռելեայն տարած եմ եւ ուզած որ իմ գործս ինքզինք յայտնէ եւ կերպով մը հանդիսանայ նաեւ իմ թարգմանա: Ստիպուած ենք ճկուն քաղաքականութիւն վարել: Կրնամ միայն մէկ բան ըսել՝ ես Դամասկոսի թեմի ո՛չ առաջնորդական տեղապահ, ո՛չ առաջնորդ եւ ոչ ալ ուրիշ ոեւէ մէկ բան եմ: Ես արդէն ունիմ իմ եկեղեցիս. 1943-էն ի վեր Նոր Հաճըն (Պէյրութ) կը գտնուիմ: Նոր Հաճըն Անթիլիասի շատ մօտ է. սակայն հակառակ ատոր եւ հակառակ Անթիլիասի մնայուն փորձերուն՝ մօտենալու Նոր Հաճնոյ եկեղեցիին, մենք դիմադրեցինք ու կը պահենք մինչեւ օրս մեր անկախ գոյութիւնը, վարչականօրէն կապուած ըլլալով հանդերձ Լիբանանի թեմին:*

Ինծի դիմում կատարուեցաւ դամասկահայ երեք կազմակերպութիւններու անունով՝ թէ Ոսկան Սրբազանի մեկնումով թափուր մնացած է աթոռը եւ ոչ ոք կարելի կ'ըլլայ գտնել անոր առաջնորդ կարգելու համար, մանաւանդ որ Վազգէն Կաթողիկոս կը հակառակէր նոր անձի մը նշանակումին էջմիածնէն թէ էջմիածնապատկան թեմերէն: Կ'արժէ նշել թէ աթոռին ճակատագրով մտահոգ պատուիրակութիւնը երբ էջմիածնայ մէջ Վազգէն Ա.ի յայտարարած է թէ հարկադրանքին տակ են Գնէլ Սրբազանը Դամասկոս հրաւիրելու, Վեհափառը պատասխաներ է. «Տարէք, բայց ես լուր չունենամ»:

Հետեւեալը, Դամասկոսի հայութիւնը առանձին չձգելու համար իր եկեղեցական, դպրոցական, մշակութային, ազգային եւ դեռ զանազան այլ ասպարէզներու մէջ, ինծի ներկայացուած առաջարկը, մանաւանդ պնդումներու վրայ, ընդունեցայ պարզապէս առաջնորդական տեղապահ տիտղոսին տակ: Առաջնորդական ընտրութիւն բացարձակապէս մերժեցի, տրուած ըլլալով որ կը հաւատայի թէ Ոսկան Սրբազան Դամասկոսէն օրհնաստան անցած է թերեւս նեղուած ըլլալով ու կրնայ վերա-

դառնալ: Վերադարձի մը հաւանականութեան առջեւ քար գլտորած չըլլալու համար՝ դէմ կանգնեցայ առաջնորդական ընտրութեան: Երկրորդ մտածումս այն էր, որ եթէ երբեք Ոսկան Սրբազան վերջնականապէս մեկնած է, այն ատեն առաջնորդական ընտրութեան մը պարագային ոչ ոք պիտի համարձակի ինծի հետ մրցակցութեան ելլելու, իսկ ես հոս մնացողը չէի: Ինծի համար այս տարիքիս՝ ութսունիս, դժուար է մաքրքի պէս Պէյրութ-Դամասկոս երթեւեկ կատարել. սակայն եկեղեցիին ու ազգին սիրոյն համար յանձն առի ամէն դժուարութիւն՝ երբ զգացի թէ անհրաժեշտ էր իմ ներկայութիւնս: Այսօր ուրախ եմ որ թեմը սկսած է կազմակերպուիլ:

Սակայն, ափսոս, Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը չհասկցաւ զիս եւ իմ ղրկած պատուիրակութիւնս: Կաթողիկոսը անոնց ըսած էր թէ ինք ստորագրութիւն տուած է եւ չի լզեր իր ստորագրութիւնը: Հոս կ'ամօքնամ ըսելու որ նոյն Կաթողիկոսը, որ այսօր Ամենայն Հայոց Կաթողիկոս եղած է, դաշնակցականի մը ու հնչակեանի մը ներկայութեան (անուններ պիտի չտամ) ըսած է. «Գնէլ Արքեպիսկոպոսը իմ ստորագրութիւնս լզել տալ մը տուաւ որ մինչեւ գերեզման պիտի չմոռնամ»: Տակաւին մինչեւ երէկ իրենց նոյն սաղրանքները կը շարունակէին անոնք:

Փակագիծի մէջ ըսեմ որ Գարեգին Ա-ի Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրութեան առիթով Էջմիածնայ մէջ բարեկամացայ Թրթռեան Արքեպիսկոպոսին, Կոմիտաս Եպիսկոպոսին եւ Հալէպի Առաջնորդ Գաթարոյեան Սրբազանին հետ: Էջմիածին միացման կապը եղաւ իրարմէ քառասուն տարի անջատուած եղբայրներու միջեւ:

Երբ Թրթռեան Արք. տեղապահ ընտրուեցաւ, անմիջապէս ուրախութեան գիր մը ուղարկեցի իրեն, մաղթելով որ Յունիս 28-ին ալ ընտրուի Գարեգին Բ-ի յաջորդը եւ երկու կաթողիկոսական աթոռներու գահակալները Վազգէն Ա. Կաթողիկոսով սկսած հաշտութեան բանակցութիւնները շարունակեն ու յաջողութեամբ պսակեն:

Զարմանալիօրէն, սակայն, նամակիս որպէս պատասխան, անուղղակիօրէն, Դամասկոսի թեմին հրաւէր կը տրուի Սեպուհ Ծ. Վրդ. Սարգիսեանի անունով: Ան Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ Դամասկոսի թեմի կաթողիկոսական փոխանորդ նշանակուած էր ի հակադրութիւն ինծի եւ սակայն սուրիական կառավարութիւնը ջնջած էր զայն ու ճանչցած իմ պաշտօնս:

Սեպուհ Ծ. Վրդ-ի ուղղուած նամակին մէջ կը թելադրուի Գաւառական Ժողովին հետ հանդիպում ունենալ, երկու աշխարհականներ ընտրել որպէս պատգամաւոր, որպէսզի Յունիս 28-ի կաթողիկոսական ընտրութիւններուն մասնակցին: Գաւառական Ժողովի վերջին լիագու-

մար նիստին որոշում առնուած է որ Դամասկոսի թեմը կաթողիկոսական ընտրութեան կը մասնակցի Անթիլիասի մէջ միմիայն իր առաջնորդական տեղապահ Գնէլ Արք.ի առաջնորդութեամբ եւ չի ճանչնար Սեպուհ Ծ. Վրդ.ի կաթողիկոսական փոխանորդութիւնը:

Գալով առաջնորդարանին, ան հին շէնք մըն է, սկսած է փլիւ-փլփլիւ: Կարելի չէ հոն բնակիլ: Բարերար գտած եմ զայն վերականգնելու համար եւ դիմում կատարած Կիլիկիոյ Կաթողիկոսութեան. բայց մինչեւ օրս դիմումիս պատասխան չեմ ստացած: Սակայն առաջնորդարանը անխուսափելիօրէն պիտի փլի եւ նորը կառուցուի՝ սուրբական արդարադատ կառավարութեան դատական արդար վճիռով:

Հ.- Սրբազան հայր, երբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութենէն անմիջապէս առաջ Գարեգին Բ. Կաթողիկոսի անուան արծարծումը շանթահարեց «Հայրենասէր Ճակատ» կոչումը, մեր առաջին մտածումը գնաց 1956-ի տագնապի օրերուն օրինապահ մնացած կիլիկեան միաբաններուն, որոնք հեռացուած էին Անթիլիասի վանքէն, եւ որոնց մէջ էիք նաեւ դուք: Վստահ եմ թէ զգացական պահեր ապրեցաք այդ առիթով: Կրնա՞ք մեզի փոխանցել այդ զգացումները:

Պ.- Անակնկալի գալը շատ պարզ բացատրութիւն մըն է...: Եթէ երբեք սրտով տոկուն մէկը չըլլայի, կրնայի կաթուածահար ըլլալ: Քառասուն տարի պայքարեր ենք մէկս միւսին դէմ եւ այսօր, նոյն այդ անձը հրաւիրուի՝ որպէս իր բոլոր գործերուն վարձատրութիւն պատուուելու Ամենայն Հայոց Կաթողիկոս տիտղոսով...: Չեմ մտածեր անոնց մասին, որոնք ինծի հետ դուրս մնացին Կիլիկիոյ միաբանութենէն պայքարի սկզբնական օրերուն, որովհետեւ բոլորն ալ իրենց հանգիստը գտած են: Ես եմ որ կրակին քով մնացած եմ եւ կ'այրիմ, ու ո'չ ոք այդ մասին կը մտածէ: Երբեք չեմ դժգոհիր, սակայն, որ կրակին մօտ եմ. կ'այրիմ ու այրելով կ'ուզեմ շուրջս տաքցնել: Սակայն կատարուած իրողութեան մը առջեւ ալ, վերջին պահուն, հարկադրաբար գացած ներկայացած եմ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա.ին ու ըսած. «Դուք քառասուն տարի այս աթոռին դէմ պայքարեցաք, ես քառասուն տարի այս աթոռը պաշտպանելու համար պայքարեցայ. հիմա երկուքս հոս ենք, ի՞նչ պիտի ընենք»: Պատասխանը տրուեցաւ մեկին ու յստակ կերպով. «Պիտի գործակցինք: Իմ ուսերուն դրուած է ծա՛նր պարտականութիւն մը. այդ պարտականութիւնը կարենալ իրագործելու համար բոլորիդ աջակցութեան պէտք ունիմ»:

Ես այդ աջակցութիւնը սիրայօժար իր տրամադրութեան տակ դրի եւ զինք կ'ընդունիմ այլեւս ո'չ թէ երէկի Գարեգին Բ. Կաթողիկոս

*Մեծի Տանն Կիլիկիոյ,
այլ՝ իմ ամենէն սիրելի
աշակերտներէս մէկը,
որ դարձեր է Ամենայն
Հայոց Կաթողիկոս:*

Հ.- Ծուտով կը կա-
յանան Կիլիկիոյ կաթողի-
կոսական ընտրութիւն-
ները: Կը խորհի՞ք թէ
նորընտիր կաթողիկոսը
պիտի կարենայ գործակ-
ցիլ Գարեգին Ա.ի հետ,
մանաւանդ եկեղեցւոյ
միութեան եւ թեմերու մէջ
օրինականութեան հաս-
տատման հարցերով:



Դամասկոսի առաջնորդ Գնէլ Արք. Ծերենեանին հետ, որ իմ սերունդին եւ
Լիբանանի էջմիածնական ճակատին համար դարձած էր առաջնորդը Մայր
Աթոռի գերգահտութեան պահպանման եւ Անթիլիասի մէջ դաշնակցական
մենաստիրութեան դէմ պայքարին:

1956-էն մինչեւ իր վերջին շունչը ան մնաց հաւատարիմ իր սկզբունքներուն:
Մայրավանքէն լիբանանեան ոստիկաններու միջոցով իրեն նման դուրս դուրս
օրինապահ միաբաններէն Գէորգ Ծ. Վրդ. Կարպիսեանի հետ ան շարունակեց
մնալ Լիբանան, դառնալով Մայր Աթոռի անպաշտօն «առաջնորդը»
փինիկեան ափին:

Վերջին տարիներուն, որպէս առաջնորդ ան պաշտօնավարեց Դամասկոսի մէջ:
Ուրիշ օրինապահ հոգեւորականներ ցրուեցան աշխարհով մէկ:
Գնէլ Սրբազան Հայաստանեայց Եկեղեցւոյ պատմութիւնը դասաւանդեց
Բարեգործականի Հիւսիսեան Հայագիտական Հիմնարկին մէջ:
Պատանի հասակիս, Հաճըն թաղի Սբ. Գէորգ եկեղեցւոյ ծառայեցի: Կ'ըլլայի
եկեղեցի ներկայացող առաջիններէն եւ անկէ մեկնող վերջիններէն մին: Մէջս
հոգեւորական դառնալու եւ էջմիածնայ մէջ ուսանելու կոշտը կը զգայի: Մօրս
կանխահաս մահը արգելք եղաւ այդ երազիս, սակայն մնացի մնայուն բարեկամը
հայ հոգեւորականին:

Գնէլ Սրբազանի էջմիածնասիրական ազդեցութիւնը մեծ է եղած:
Պայքարի մարդն էր ան:

Պ.- Այդ հարցին պատասխան, բնական է, ունիմ: Կարեւորը այն է, որ ընտրուի մէկը, որ Գարեգին Ա.ի գործակիցը, աջակիցը, գաղափարակիցը ըլլայ: Ո՛չ այնպիսի անձ մը, որ Գարեգին Ա.ի կաթողիկոսացումէն շաբաթ մը ետք շրջաբերականով մը Ամենայն Հայոց Կաթողիկոսին անունը կիլիկեպատկան եկեղեցիներու մէջ յիշատակել արգելեց:

Ես գիտեմ իրենց միջեւ գոյութիւն ունեցող մրցակցութիւնը, անհասկացողութիւնները: սակայն տա՛ Աստուած որ Ս. Հոգին երկու կողմն ալ առաջնորդէ, երկու աթոռներու գլխաւորները իրարու քով քան, եկեղեցին միասնանայ, ազգին պառակտումին վերջ տրուի եւ բոլորն ալ մէկտեղուին նոյն եկեղեցիին, նոյն հայրենիքին եւ նոյն ազգութեան գաղափարին շուրջ:



ԳՐԻԳՈՐ ԲԱՐՍԵՂԵԱՆ

Ատենապետ Ռ.Ա.Կ. Կիլիկիա Ակումբի

Հ.- ինչպէ՞ս կը ներկայացնէք ձեր ակումբը:

Պ.- Մօտ յիսուն տարուան ակումբ է Ռ.Ա. Կոնսակցութեան «Կիլիկիա»ն: Կրնամ ըսել թէ իր մասնաւոր տեղը ունի դամասկահայ ազգային կեանքին մէջ: Ունինք մեր սեփական հաւաքատեղին եւ կը գործենք Թէքէեան Մշակութային Միութիւն անուան տակ:



Հ.- Վերջերս կորսնցուցիք ձեր ակումբի կարենոր առաջնորդներէն մին՝ Գրիգոր Ասիլեանը: Կը գգա՞ք անոր կորուստը:

Պ.- Ասիլեանին մահով կորսնցուցած եղանք ո՛չ միայն դամասկահայ դէմք մը, այլեւ սփիւռքահայ առաջնորդ մը: Ան տարիներ ամբողջ գուրգուրած էր Դամասկոսի մեր շրջանակին գերագոյն ազգային շահերուն վրայ: Ան կը վայելէր յարգանքը նաեւ Հ.Բ.Մ.ի ընտանիքի անդամներուն:

Հ.- Դամասկոսի թեմը կիլիկեան աթոռ է, սակայն կը գործէ ինքնագլուխ: Ի՞նչ կը խորհիք թէ պիտի ըլլայ ձեր թեմին գոյավիճակը Գարեգին Ա.ի ընտրութեամբ:



Դամասկոսի Ռ.Ա.Կ.ի պատասխանատու ընկերները:

Պ.- Գարեգին Ա.ի Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուելը անակնկալ մըն էր մեզի համար: Կը խորհիմ թէ ան պարտադրուեցաւ մեզի: Ըսեմ թէ 1956-էն ի վեր առողջ մտածող կազմակերպութիւնները՝ Ռ.Ա.Կ., Հ.Բ.Ը.Մ. եւ Ս.Դ.Հ.Կ. ձեռք ձեռքի տուած կը պայքարին Հ.Յ.Դ.ի մենատիրութեան դէմ: Մենք՝ ռամկավարներս, ժողովրդավարութեան կը հաւատանք եւ այս գաղութին մէջ մենք ըլլալով մեծամասնութիւնը՝ չենք ընդունիր Հ.Յ.Դ.ի կամքը:

Հ.- Հոգեւոյս Վազգէն Ա.ի օրով խօսք կար որ Յունաստանի թեմը վերադարձուի Ա. Էջմիածնին, իսկ Դամասկոսինը՝ Անթիլիասի: Այս ուղղութեամբ ըսելիք ունի՞ք:

Պ.- Այդ խօսակցութիւնները ամէն աչքի ալիւր փչելու պէս բաներ եղան: Մենք նման խօսքերու չենք հաւատար: Կը հաւատանք իրականութիւններու: Միասնականութիւնը գործով կ'ըլլայ եւ ո'չ թէ խօսքով: Գարեգին Ա. խոստացաւ ընթանալ Վազգէն Ա.ի շինարար ճամբով: Կը սպասենք որ նորընտիր Կաթողիկոսը ցոյց տայ այդ բանն իր գործով: Ըլլա՛յ անկողմնակալ եւ հայր ընդհանրական՝ գուրգուրալով իր ժողովուրդին:

Հ.- Ինչո՞ւ Ոսկան Սրբազանը թողուց Դամասկոսն ու հեռացաւ:

Պ.- Մեր Առաջնորդ հօր ըրածը ի՛րապէս գոհողութիւն մըն էր. 18

տարի ան մնաց պաշտօնի վրայ: Մեր մօտ ո՛չ մէկ առաջնորդ կրցած է դիմանալ այդքան տարի: Իր արդար իրաւունքն էր բարկանալ, երթալ Յունաստան ու անկէ անցնիլ էջմիածին եւ ստանձնել կարեւոր պաշտօն մը՝ միջ-եկեղեցական էքիւմենիկ շարժումէն ներս ներկայացնելու Հայց. Եկեղեցին:

Հ.- Ինչպիսի՞ դեր վերապահուած է այսօր Դամասկոսի մէջ Գնէլ Արք. Երեմեանին, որ մեզի ծանօթ է որպէս իրա՛ւ հայրենասէր:

Պ.- Հակառակ իր 80-ամեայ յառաջացեալ տարիքին, ի յարգանս իրեն, պէտք է ըսել ընդունեց առաջնորդական տեղապահ դառնալ: Ան բժախնդրօրէն կ'առաջնորդէ մեր գաղութը՝ Գարեգին Ա.ի կողմէ խոստացուած համերաշխութեան մը ոգիին ներքեւ:

Հ.- Տնտեսական լաւ պայմաններ ստեղծուած են Սուրիոյ մէջ ու այս իսկ պատճառով արտագաղթը կանգ առած է ընդհանրապէս: Արդեօք դամասկահայ գաղութը կը վերանորոգէ՞ ինքզինք:

Պ.- Ո՛չ միայն արտագաղթ չկայ, ընդհակառակը, ունինք ներգաղթ՝ Լիբանանէն թէ՛ այլ երկիրներէ եկող հայութեամբ մը: Մենք հոս միշտ ունեցած ենք 7-8000 հաշուող ազգաբնակչութիւն մը:

Հ.- Հայաստանի Հանրապետութեան Սուրիոյ դեսպանատունը քաղաքականօրէն կը նկատուի կարեւոր: Ինչպէ՞ս կը գնահատէք դեսպան Դաւիթ Յովհաննիսեանի անցնող տարիներու գործունէութիւնը:

Պ.- Դամասկոսի մեր դեսպանատունը իսկապէս պատուաբեր իրադրութեամբ մը եղաւ մանաւանդ Պրն. Յովհաննիսեանի կատարած աշխատանքին շնորհիւ: Կրնանք ըսել թէ գլուխ-գործոց աշխատանք կը տանի ան: Յաջողեցաւ լեզու գտնել բոլոր կողմերուն հետ, հակառակ անոր որ Դաշնակցութիւնը պոյքոթի կ'ենթարկէ դեսպանատան գործունէութիւնը: Բոլոր միւս կազմակերպութիւններն ու համայնքները ձեռք ձեռքի տուած նեցուկ կը կանգնին դեսպանատան: Ան արժեցուցած է իր կարողութիւններն ու արդարացուցած իր ներկայութիւնը մեր մէջ:

Հ.- Ինչպէ՞ս կը գնահատէք Սուրիական Արաբական Հանրապետութեան բարի վերաբերումը եւ կամեցողութիւնը հայ ժողովուրդին նկատմամբ:

Պ.- Հայ ժողովուրդը շատ բան կը պարտի Սուրիոյ արաբ ժողովուրդին ասպնջականութեան: Ժողովուրդին ու կառավարութեան միատեղ: Մանաւանդ աւելի ցցուն եղաւ այս բանը նախագահ Հաֆէզ էլ

*Ասատի իշխանութեան շրջանին: Իրեն շնորհիւ հայերս այս երկրին մէջ
կը վայելենք յարգանք եւ գուրգուրանք: Մենք անսահման կերպով
երախտապարտ ենք իրեն մասնաւորաբար եւ արաբ ժողովուրդին
ընդհանրապէս:*

«ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆ», 27 Յուլիս եւ 10 ու 24 Օգոստոս 1995



Հալեպը դիտումս իր պատմական բերդէն:

ՀԱԼԷՊԸ ԻՐ ՀԱՅՈՒԹԵԱՄԲ

Մայր Գաղութ:

Արժանի է ան մայրութեան, քանի որ ծնունդ տուալ բազմաթիւ փոքր-փոքր համայնքներու եւ սատարեց անոնց հայակերտումին, զարկ տուալ մեր բոլոր ազգային սրբութիւններուն՝ Հայ Դատ, Հայ Դպրութիւն, Հայ Մշակոյթ, Հայրենադարձութիւն, միշտ հայրենասիրական ոգիով մը, որմով շաղախուեցաւ հոն կերտուած հայ քաղաքական միտքը:

Հնաբոյր է Հալէպ քաղաքը: Ու երբ անցնիս առաջնորդարան կամ Թէքէ-եան Տուն տանող նեղլիկ ճամբաներէն, անմիջապէս հարազատ կը զգաս ինքզինքդ միջավայրին, մանաւանդ եթէ ծնած ես Միջին Արեւելք: Տաքուկ շունչ մը ունին այդ փողոցները, ուրկէ դարուս սկիզբը քալեցին մեր կառաւանները...:

Անցան հոնկէ մեր ազատագրական պայքարի հերոսները: Եւ այդ ճամբաներու անկիւններուն է որ ծնունդ տուին մտաւորականները հայոց նոր արշալոյսին: Օշականի շունչով հասակ առին Ծառուկեաններ, Վահէ-

Վահեաններ, Սարգիսեաններ, Մելքոնեաններ ու Սիմոնեաններ, որոնք դաստիարակութիւն ջամբեցին մեզի:

Հալէպը մեր աւանդութիւններու միջնաբերդն է տակաւին: Հո՛ն է որ պիտի հանդիպիս իրա՛ւ սասունցի հայուն, այնթապցիին, մարաշցիին, ամանոսցիին...: Անոնց հայկական բոյներուն մէջ դեռ կը տիրապետեն Երկրէն ու Կիլիկիայէն բերուած հայկական բարքերը անխաթար կերպով:

Հալէպը աղբիւրն է յոյսի, լոյսի: Իր վարժարաններով ան դեռ կը կանգնի ճակատաբաց, ըսելու համար թէ նոր սերունդը պիտի շարունակէ հայապահպանման վսեմ գործը: Հալէպի Լազար Նաճարեան-Գալուստ Կիւլպենկեան թէ Քարէն Եփփէ երկրորդական վարժարանները իբրեւ դարբնոցներ դեռ մեծ դեր ունին կատարելիք գալիք տասնամեակներուն:

Եւ աշխարհագրականօրէն ալ իրենց ապրած երկրին՝ Սուրիոյ սահմանները հիսիսէն կը քերեն Թուրքիան: Հայկական Եփրատի ջուրերը կտրելու սպառնալիքը Թուրքիա միշտ կը պահէ Սուրիոյ գլխուն վերէ: Հակառակ քաղաքական լուրջ հարցերու առաջ գտնուելուն, Սուրիոյ հայութիւնը ունի Հայ Դատի հետապնդման առումով իրեն վերապահուած կարելոր դեր մը: Նաեւ ունի կարելոր դեր Հայաստանի Հանրապետութեան Սուրիոյ հետ մշակած բարի յարաբերութիւններուն մէջ, որոնցմէ մեծապէս կ'օգտուի սուրիահայութիւնը:

Գեղեցիկ է Հալէպը: Թէեւ շատ բան փոխել սկսած է իր հին դիմագիծէն ու բոյրէն, սակայն շպարն է որ միայն փոխուած է. հո՛ն են խորքն ու աւանդութիւնները՝ յամենալու համար դեռ երկար ժամանակ:

Հալէպը տակաւին չձգած, հօրս հին ընկերը՝ բժ. Թորոս Թորանեան ըսաւ. «Ունինք վերջին պարտականութիւն մը կատարելու. երթալ գերեզմանատուն եւ ծունկ մը աղօթք ընել Յակոբ Օշականի գերեզմանին»:

Երկիւղածութեամբ գացինք: Վառեցինք մէկական մոմ ու բարձրաձայն աղօթեցինք «Հայր Մեր»:

Օշականին անձամբ ծանօթ չեղող աշակերտը Նիւ Եորքէն եկած էր աղօթելու մեծ ուսուցիչին շիրմաքարին առջեւ: Օշականը իր դասագիրքերով ուսուցիչ եղած էր մեր սերունդին:

Հալէպը սրբացած էր այդ կէսօրէ ետք Օշականի գերեզմանով:

Շնորհակալութի՛ւն, Թորոս:

ՍՈՒՐԷՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ
Առաջնորդ Հայոց Բերիոյ Թեմի



Հ.- Տասնութ տարիներէ ի վեր կը հովուէք Հալէպի պատուական գաղութը: Հայաստան-եայց Եկեղեցւոյ պատմութեան մէջ ձեր անունը պիտի արձանագրուի իբրեւ շինարար առաջնորդ: Կրնա՞ք յիշատակել ձեր իրագործումներէն մի քանին:

Պ.- Անցեալ տասնութ տարիներու ընթացքին յատկապէս, ինչպէս յիշեցիք, շինարարական ծրագիրները մեծ տեղ գրաւեցին մեր կեանքին եւ աշխատանքին մէջ: Առաջին հերթին, այդ աշխատանքները պէտք է երկուքի բաժնել՝

ա.- Հաստիքաբեր կալուածներ, որոնք գուգորդուած են անմիջա-կանօրէն մեր ժողովուրդի պահանջքին եւ կարիքին, ըսել կ'ուզեմ՝ ժողովրդային բնակարաններ, որոնք թէ՛ հասոյթ կ'ապահովեն առաջնորդարանին եւ թէ՛ յատկապէս նոր սերունդին օգտակար կը դառնան, երբ անոնք կը փորձեն տուն-տեղ կազմել, ամուսնանալ: Ազգային առաջնորդարանը այս երիտասարդներուն մեծ հնարաւորութիւն ընձեռեց, որ բնակարան ունենան, անոր գումարը տարիներու վրայ փոխանցուի եւ ան բնականաբար յատկացուի մեր դպրոցներուն, մեր մշակոյթի տարածման, հայ կեանքի ամրապնդման, ամրակայման:

բ.- Զուտ ազգային դրոշմ կրող կառույցներ. յատկապէս յիշել կ'ուզեմ Տէր-Զօրի յուշահամալիրը մեր մէկուկէս միլիոն նահատակներու անթաղ ու անշիրիմ գոհերու աճիւններուն վրայ: Ան պարտք մըն էր դրուած հալեպահայութեան վրայ եւ այդ պարտքը կը մտածեմ թէ յուշահամալիրին կառուցումով պատիւի վերածուցաւ աշխարհացրիւ հայութեան համար: Երկրորդ կառույցը եղաւ «Արամ Մանուկեան Հայ Կեդրոն»ը, որ իր զանազան ենթաբաժիններով մեր գաղութի զանազան կարիքներուն գոհացում կու տայ: Մշակութային սրահ կայ հոն, կան նաեւ ճաշկերոյթներու սրահներ եւ ժողովատեղիներ: Յատկանշական է որ երբ այս շէնքին առաջին յարկին բացումը պիտի ընէինք, տեղի ունեցաւ Հայաստանի երկրաշարժը եւ Սպիտակ քաղաքին յիշատակին՝ երիտասարդական սրահը կոչեցինք «Սպիտակ», յատկապէս ի յիշատակ այն բոլոր նահատակներուն, որոնք առ յաւէտ հեռացան այս աշխարհէն բնութեան տարերքէն եկող աղէտի մը հետեւանքով:

Այս կառույցներու շարքին անպայման պէտք է յիշատակել դպրո-

ցական շինարարական աշխատանքները: Այսօր արդեն իսկ կառուցման մէջ է ազգային Կիւլպենկեան վարժարանը գեղեցիկ ու եռայարկ, ինչպէս նաեւ Սահակեան վարժարանի մանկապարտէզը՝ Լուսաւորիչ եկեղեցւոյ եւ ներկայի Սահակեան վարժարանին միջեւ գտնուող շրջափակին մէջ: Ասոնց կողքին, բարեգարդեցինք Հայկազեանի աղջկանց բաժնի ներքնայարկը գտնուող սրահը, որ վերածուեցաւ 400 հոգինոց թատերասրահի մը՝ դարձող բեմով օժտուած:

Փառք եւ պատիւ Հալէպի հայութեան, որուն ամէն անգամ որ դիմեցինք՝ սատար հանդիսացաւ, օգնեց մեր ծրագիրներուն եւ երազը դարձաւ իրականութիւն:

Հ.- Հալէպը կը մնայ մայր գաղութ հեռաւոր ամերիկացիներէն մինչեւ Հայաստան: Մենք գիտենք Հալէպի հայութեան ոգին, աւանդութեանց պահպանումը, տոհմային դաստիարակութիւնը եւ գաղութին բծախնդիր հայկականութիւնը: Ձեր պաշտօնավարութեան առաջին տարւան հետ ձեր այսօրը քաղդաստելով, ի՞նչ զարգացում կը տեսնէք:

Պ.- Հալէպը մի՛շտ կը մնայ նոյն զօրեղ, վաւերական պատուանդանին վրայ. մայր գաղութ: Այս հանգամանքը Հալէպ քաղաքը ստացաւ այն օրէն, երբ պատմական մեր հայրենիքի բեկորացեալ ժողովուրդի մնացորդացը հայրենագուրկ եկաւ կայք հաստատեց այս քաղաքին մէջ: Հալէպէն յետոյ շառաւիղուեցանք, ցրուեցանք դէպի Լիբանան, Եւրոպա, Հարաւային Ամերիկա ու Միացեալ Նահանգներ: Այսուամենայնիւ, Հալէպը իր երեք ճեմարաններով (Քարէն Եփփէ, Հ.Բ.Ը.Մ.ի Լազար Նաճարեան եւ Կիլիկեան), դաստիարակած սերունդներով, արդարօրէն ո՛չ միայն հալեպահայութեան սատար հանդիսացող սերունդ է, այլեւ Հալէպէն դուրս եղաւ ջահակիրը հայ մշակոյթին, հայ լեզուին ու հայ հաւատքին: Երբ մենք ցիրուցան մեր գաղութներուն այցելութեան կ'երթանք, հոն անպայման կը տեսնենք մեր ճեմարաններէն շրջանաւարտներ, որոնք կա՛մ հրապարակագիր են, կա՛մ իմբագիր, ուսուցիչ եւ կամ եկեղեցական ու կրթական գործերու վարչական: Անոնք ողջմիտ կեցուածքով ու նուիրումով կ'առաջնորդեն հայ կեանքը:

Ինչ որ էր անցեալին Հալէպը, ես առանց վերապահութեան կը հաստատեմ այսօր որ նոյնքա՛ն եւ աւելի զօրաւոր գաղութ ենք:

Հիմնական կէտը հետեւեալն է. որքան ալ Հալէպը փորձած է օգտակար ըլլալ գաղթաշխարհի հայերուն, իր աւագանը չէ ցամաքած. իսկ Հալէպի աւագանին ակունքը, աղբիւրը մեր կենսունակ ժողովուրդի սիրտն է, հայօրէն բաբախող սիրտն է, Հայց. եկեղեցիով թրծուած, միւռնոսօրհնուած հոգին է:

Հ.- Կիլիկեան Աթոռի կարեւորագոյն թեմերէն է ձեր առաջնորդած թեմը: Ինչպէ՞ս կը գնահատե՞ք ձեր թեմին մէջ գործող ոչ-դաշնակցական կազմա-կերպութիւններուն վերաբերումը Հայաստանեայց Եկեղեցւոյ նկատմամբ:

Պ.- Այս հարցումը քիչ մը կը զարմացնէ զիս, որովհետեւ ժողովուրդ եւ կուսակցութիւն իրարմէ որոշ չափով անջատեցիք: Ինձ համար աւանդական մեր երեք կուսակցութիւններն ալ, որոնք հայ ժողովուրդի ծոցէն ծնած են, հայ ժողովուրդի կարիքներուն գոհացում տալու համար ճամբայ ելած են եւ հայ ժողովուրդի պահանջատիրութեան զգացումներուն դրօշակիրները դարձած, կարելի չէ անջատել հայ ժողովուրդի վերջին հարիւր տարիներու պատմութենէն:

Ինչ կը վերաբերի Կիլիկեան Աթոռի շրջագծին մէջ եկեղեցա-կաններու եւ կամ ոչ-կուսակցական ազգայիններու կեցուածքին, ես պիտի չուզէի բաժանմունքի ենթարկել, որովհետեւ Կիլիկիոյ Աթոռը վերջին քառասուն տարիներու ընթացքին ծնունդ առած աթոռ մը չէ, այլ՝ հինգ հարիւր տարիներու վաստակով բեռնաւորուած Աթոռ մը, որ օգտակար դարձած է հայութեան: Կ'ուզեմ նշել թէ անցեալի մեր ժողովուրդին իմաստութիւնը եղած է այն, որ պէտք է պահել Կիլիկիոյ Աթոռը. բայց ո՛չ թէ զայն հակադրելով էջմիածնի, այլ՝ զայն պահելով էջմիածնի համար:

Ի վերջոյ այսօր պարագաները, պայմանները փոխուած են: Էջմիածին օրաւոր ինքզինք պիտի վերակազմէ, պիտի վերարժեւորէ. եւ էջմիածնի առջեւ կայ ծառայութեան հսկայ դաշտ մը, եթէ նկատի ունենանք նախկին Խորհրդային Միութեան այն երկիրները, ուր ունինք հսկայ գաղութներ լքուած, աւետարանական հասկացողութեամբ՝ «հօտ որ հովիւն չունի»: Ահաւասիկ այս աշխատանքին դիմաց էջմիածինը իր արժանընտիր նորընտիր գահակալով՝ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսով անպայման սատար պիտի հանդիսանայ. բայց սփիւռքը ի՞նչ պիտի ըլլայ:

Սփիւռքի մէջ Անթիլիասը պիտի ծառայէ, բայց այդ ծառայութիւնը բացարձակ կերպով հակադրուած պէտք չէ տեսնել էջմիածնի, այլ անոր բեռը թեթեւցնելու, շալկելու հասկացողութեամբ մօտենանք Անթիլի-ասի առաքելութեան:

Հ.- Ձեր այս դրական մօտեցումը վստահաբար պիտի գնահատէր ոեւէ ողջմիտ հայ. սակայն մտածողներ կան թէ նոր գահակալի ընտրութեամբ լուծում պիտի բերուէր 1956-էն ետք յափշտակեալ թեմերու հարցին, Հայց. Եկեղեցւոյ կեանքի ներկայ հանգրուանին:

Պ.- Որեւէ անկիւնադարձային դէպք անպայման ունի իր զրգուիչ

պատճառը: 1956-ին տազնապ մը ստեղծուեցաւ Հայց- Եկեղեցւոյ ծոցին մէջ: Ատիկա արհեստական տազնապ մըն էր: Ոմանք կ'ըսեն թէ Անթիլիաս ուզեց գրաւել էջմիածնական թեմեր: Պահ մը այսպէս մտածենք. էջմիածին 30 տարիներ հովիւ չէր կրցած ղրկել Պարսկաստան եւ Շահը արգելած էր էջմիածնէն ունէ եկեղեցականի մուտքը: Ի վերջոյ քաղաքական հոսանքներ կային, դիրքորոշում մը կար համայնավարութեան դէմ: Միացեալ Նահանգներու մէջ Դուրեան Սրբազանին սպանութենէն ետք շատ տխուր կացութիւն մը ստեղծուած էր: Կացութիւն մը, ես կը հաւատամ, զոր ունէ մէկ հայ պիտի չբաժնէր: Բայց երբեմն կան դէպքեր, որոնք մարդկային զգացումէն ու տրամաբանութենէն դուրս կը մնան: Երբ եկեղեցին բաժնուեցաւ, ասկէ ետք հսկայ աշխատանքներ կատարուեցան եւ ես հետեւած եմ աշխատանքներուն այն ատեն Միացեալ Նահանգներու Առաջնորդ Գարեգին Ա. Յովսէփեանցի, որուն շատ սիրելի բարեկամն էր Սիմոն Վրացեան (1918-ի Հայաստանի վարչապետ). ան որքան ճիշդ սպառեց Ամերիկայի մէջ եկեղեցիներու հաշտութիւնը իրագործելու համար, բայց չեղաւ:

Հիմա եթէ մէկ կողմի համար կ'ըսուի թէ արարքի մը մէջ գտնուեցաւ, միւս կողմն ալ ուզեց այդ արարքը օգտագործել՝ ձեռով մը թաղելու համար կազմակերպութիւն մը: Ես հայօրէն մտածելով, կ'ընդունիմ թէ որեւէ կազմակերպութիւն կամ ունէ անձ չի կրնար ուրիշ կազմակերպութիւն մը թաղել: Կազմակերպութիւն մը միայն ինքզինք կրնայ թաղել՝ եթէ ինք իսկապէս պատմութեան մէջ հայ ժողովուրդի զգացումներուն հարազատ թարգմանը չդառնայ: Բայց երբ կազմակերպութիւն մը զանազան հաշիւներով կը հարուածուի՝ աւելի կը զօրանայ: Ես ասիկա առանց վերապահութեան կ'ուզեմ ըսել:

Թեմերու խնդիրը անպայման օր մը պիտի լուծուի. հոգեբանական երեւոյթ է ան: Եւ քայլ մը յառաջ երթալով ըսենք՝ երբ էջմիածին-Անթիլիաս կամուրջը ըլլայ ա'յնքան սերտ, ըլլայ ա'յնքան անկեղծ ու հարազատ, մարդիկ պիտի չմտածեն այլեւս թէ ինչո՞ւ այս եկեղեցին Անթիլիասի կը պատկանի կամ էջմիածնի կը պատկանի, երբ էջմիածին ու Անթիլիաս իրենք մէկ են: Ժողովուրդին հոգեբանութենէն կարելի է տարանջատել այս մտածումը, որ յաճախ մարդոց կողմէ չարաչահութեամբ օգտագործուած է:

Հ.- Անցնող տարիներուն Կիլիկեան Աթոռը որակաւոր հոգեւորականներ հասցուց Հայաստանեայց Եկեղեցւոյ: Կը խորհի՞ր թէ Լիբանանի տխուր քաղաքացիական պատերազմէն ետք եւս ան պիտի կարենայ շարունակել իր առաքելութիւնը նոյն գծով:

Պ.- Իմ համոզումով, եթէ Անթիլիասս պիտի չկարենայ արդի պահանջներուն համար հոգեւորականներ պատրաստել՝ թող ան ինքզինք ջնջէ: Անթիլիասի հիմնական առաքելութիւնը եղած է անցեալին, եւ այսօր ալ է՝ սերունդ պատրաստել ներկայ հասկացողութեամբ, որովհետեւ հարիւր տարի առաջ հայը տարբեր կը մօտենար իր եկեղեցւոյ, այդ մօտեցումը միայն ու միայն հոգեկան զգացումներու աղերսն էր կապուած եկեղեցւոյ՝ հաւատքի ճամբով: Բայց այսօր մենք զարգացած սերունդ մը ունինք ու այդ սերունդը մեր զարգացած եկեղեցականն է, որ կը քարոզէ, կը մեկնաբանէ աւետարանը, կամ ազգային եկեղեցական ծառայութեան մէջ իր աշխատանքը կը բերէ ու մենք այդ սերունդը ամբողջ կը կապենք եկեղեցւոյ:



Հալէպի պատմական Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցին:

Իմաստուն կարգադրութիւն էր Սահակ Կաթողիկոսին կողմէ Անթիլիասի դպրեմանքը հաստատել եւ Շահէ Արք. հրաւիրել Միացեալ Նահանգներէն որպէսզի վերատեսուէ ղառնայ: Եւ երեսուն թուականէն մինչեւ այսօր 65 տարի անցած է եւ Անթիլիաս տուած է պատրաստուած սերունդ մը՝ Արմաշը յիշեցնող:

Դժբախտաբար 56-էն ետք տազնապը ստեղծեց այնպիսի կացութիւն մը, որ ըլլա՛յ եկեղեցական, ըլլա՛յ աշխարհական ղեկավարութեան սեւեռաբիւր նայուածքը ամբողջ գրաւուեցաւ այդ տազնապով, իսկ Հայց. եկեղեցւոյ իսկական տազնապը մոռացութեան ենթարկուեցաւ: Այս հիմնական տազնապը, որ այսօր կայ, բարենորոգութեան տազնապն է: Յատկապէս կը հաւատամ որ Գարեգին Ա.ի եւ նորընտիր Կիլիկիոյ Կաթողիկոսի կամըջումով եւ երկու Պատրիարքներու յաճախակի

հանդիպումներով եկեղեցւոյ բարենորոգման շարժման ծնունդ պիտի տրուի՝ անպայմանօրէն բան մը փոխելով գրաւիչ դարձնելու համար եկեղեցականութիւնը ներկայ շուայլ պայմաններով մեծցող պատանիներու համար:

Հ.- Կան մարդիկ որ կ'ըսեն թէ Անթիլիասի Կաթողիկոսութիւնը ազդեցութեանը տակ է քաղաքական կազմակերպութեան մը: Դուք որ 30 տարիներէ ի վեր կը ծառայէք, արդեօք այդ ազդեցութիւնը նշմարա՞ծ էք ձեր վրայ:

Պ.- Հետեւեալը կրնամ ես ըսել ձեզի մեր եկեղեցւոյ դիմագիծին մասին: Կ'ըսենք ազգային եկեղեցի է ան: Ազգին կողմէ կը կառավարուի եւ ո՛չ թէ եկեղեցականութեան: Կղերապետութիւն չենք: Երբ որեւէ եկեղեցի ազգին կողմէ կը ղեկավարուի՝ բնականօրէն եկեղեցւոյ ղեկավարութեան մէջ պիտի ըլլան կուսակցական մարդիկ, որովհետեւ այդ կուսակցականները թերեւս աւելի լաւ հայեր են: Ըսել պիտի ուզեմ՝ տազնապող հայեր են: Սրտցա՛ւ հայեր: Ինչո՞ւ համար մենք կուսակցականի մը վրայ դնենք այնպիսի կնիք մը, որ կարծես անիկա դաւաճան ըլլար հայութեան...:

Ո՛չ. ես պիտի ըսեմ (սխալ չհասկնաք, երեք կուսակցութիւններու կ'աինարկեմ միշտ) կուսակցականը աւելի կը տազնապի եկեղեցիով, հայութեամբ, դպրոցով ու Հայ Դատով քան ուրիշներ: Եւ յատկապէս Անթիլիասի պարագային, կ'ըսուի թէ Դաշնակցութիւնը գրաւած է Անթիլիասը: Իսկ ռամկավարներ գրաւած են էջմիածինը: Ես ձեզի Բարունակ Թովմասեանի գիրքը կու տամ, կարդացէք թէ ինչպէս Վազգէն Վեհափառի քով կը վազէր միշտ ուղղութիւն տալու Անոր: Բայց մարդիկ այս մասին չեն արտայայտուիր: Ռամկավարները իրաւունք ունին (յարգելի կուսակցութիւն մըն է հայ ժողովուրդի ծոցէն ծնած) եկեղեցիով զբաղելու, Դաշնակցութիւնը իրաւունք չունի՞ զբաղելու: Ես կը մտածեմ թէ այս կազմակերպութիւնները հայ ժողովուրդի ծոցէն ծնած են եւ կը տազնապին: Բնականաբար ունին իրենց ուրոյն աշխարհահայեացքը, բայց ինչ ալ ըլլայ այդ՝ դէպի Հայաստան կ'ուղղուին:

Հ.- Դամասկոսը փորձաքար մը պիտի ըլլայ Հայց. Եկեղեցւոյ միութեան վերականգնումի գծով յառաջիկայ աշխատանքներու համար: Ինչպէ՞ս կը նախատեսէք Դամասկոսի թեմին կացութիւնը գալիք հնգամեակին:

Պ.- Երջանկայիշատակ Վազգէն Ա. Վեհափառը այն օրէն երբ Սովետական Միութիւնը քայքայուեցաւ, յստակացուց իր կեցուածքը: Ըսաւ թէ ինք Դամասկոսով չի հետաքրքրուիր: Գնէլ Սրբազանին հետ

էինք էջմիածին, ընտրութեան: Գնէլ Արք. դիմեց Գարեգին Ա. Կաթողիկոսին թէ ի՞նչ պիտի ըլլայ իր թեմին վիճակը: Գարեգին Կաթողիկոս ըսաւ թէ ինք իրեն հետ կապ չունի եւ Անթիլիասի Կաթողիկոսին պէտք է դիմէ: «Քու կապդ Անթիլիասի հետ է», ըսաւ ան:

Որպէս նոր երեւոյթ, Անթիլիասէն հրաւէր գնաց իրենց, որ ընտրութեան հրամմեն: Եթէ իրենք վերապահ դիրք կը բռնեն, ատիկա իրենց գիտնալիքն է: Ես որքան որ գիտեմ, վերջերս հայր Սեպուհը, որպէս Դամասկոսի Կաթողիկոսական Տեղապահ, հրաւէրը պաշտօնապէս տարաւ եւ յանձնեց ազգային իշխանութեան:

Հ.- Երկու տեսակ մտածողութիւն կը թուի թէ կայ ձեր միաբանութեան անդամներուն մօտ: Ունենալ կաթողիկոս մը, որ շուտով գործակցի Գարեգին Ա.ի հետ, եւ կամ ունենալ կաթողիկոս մը, որ շարունակէ ինչ պառակտումի քաղաքականութիւնը: Ինչպէ՞ս կը գնահատէք ձեր նոր ընտրութիւնները:

Պ.- Ասիկա ժողովուրդին մտայնութիւնն է: Կու գաք Մ. Նահանգներէն եւ ձեր հայութեան հիմնական խօսակցութիւնը այս օրերուն Գարեգին Ա.ի Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուելէն ետք այլեւս միութեան հարցը իրագործուած տեսնելուն մէջ է. ուրեմն եկեղեցին միացաւ:

Բայց Կիլիկիոյ Աթոռը Գարեգին Կաթողիկոսով չէր սկսած:

Կիլիկիոյ Աթոռը 1441-ի ժամանակակից պայմաններու բերումով ծնունդ առած է: Գարեգին Ա. իր արժանիքներով, իր եկեղեցականի հմտութեամբ արժանաւորագոյնը նկատուեցաւ եւ ընտրուեցաւ Ամենայն Հայոց Կաթողիկոս: Շուտով մենք ալ մեր կաթողիկոսը պիտի ընտրենք: Կիլիկիոյ միաբանութիւնը մէկ տեսակէտ ունի.- պահել Անթիլիասը էջմիածնի համար: Երկու տեսակէտ գոյութիւն չունի Կիլիկիոյ միաբանութեան ներկայ աշխարհահայեացքին ու մտածողութեան մէջ:

Հ.- Վստահ եմ թէ գրական աշխատանքներու նկատմամբ հետաքրքրութիւն ցոյց կու տաք: Ունի՞ք ժամանակ գրականութեամբ զբաղելու:

Պ.- Այո: Թէեւ հրատարակուած գործ չունիմ, բայց իմ քարոզներս կան ու ներկայիս ուսումնասիրութեան մը վրայ կ'աշխատիմ: Որպէս ժողովուրդի ծառայութեան լծուած անհատ, որ յաճախ պարտաւորուած է դէմ յանդիման գտնուիլ իր ժողովուրդին՝ խօսքի ճամբով, որպէսզի ինքզինքս չկրկնեմ միշտ, պէտք է ընթերցասիրութեամբ մտքի հորիզոնս ու պաշարս ճոխացնեմ, որպէսզի որպէս առաջնորդ չցամքիմ: Ասիկա փորձաքար մըն է:

Հ.- Հայաստանի անկախացումը եւ հալեպահայութեան աշխարհագրականօրէն այդքան մօտիկ ըլլալը մայր հայրենիքի որքանո՞վ արդեօք պիտի կամրջեն սփիւռքի այս ամենահին գաղութին եւ Հայաստանի յարաբերութիւնները:

Պ.- Հալեպահայ գաղութը միշտ ապրած է հայրենիքի տեսիլքով: Մեր ղեկավարութիւնը Հալէպի մէջ յատկապէս կրցած է ներդաշնակել սուրիական իր պատկանելութիւնը եւ հայկականութիւնը: Սուրիահպատակ ենք, բայց «արապի-սուրի» ըլլալով հանդերձ, մեր երակներուն մէջ հոսող արիւնը զուտ հայու արիւն է: Հալէպցին չի կրնար դաւաճանել իր հայրենիքին: Ըսել կ'ուզեմ՝ երկու հայրենիքներուն. նա'խ սուրիականին եւ ապա Հայաստանի:

Կ'ապրինք ազատ աշխարհի մէջ. զանազան տարբեր մտածումներ կրնան ըլլալ, ինչպէս որ անցեալին եղած են, մեր քաղաքական կազմակերպութիւններուն միջեւ: Ներկայիս ալ կրնան տարակարծութիւններ ըլլալ. բայց ես կը կարծեմ թէ հայրենիքը եւ հայրենիքի գլխաւոր դրամագլուխ ժողովուրդը գերիվեր են օրուան իշխանութիւններէն:

ԾԱՆՕԹ.- Բերիոյ թեմի Առաջնորդ Սուրէն Արք. Գաթարոյեանի հետ հարցազրոյցը կատարուած էր Մեծի Տանն Կիլիկիոյ նոր գահակալի ընտրութենէն անմիջապէս առաջ:



ՄԵԼՔՈՆ ՇԱՄՄԱՄԵԱՆ

Ատենապետ Հ.Բ.Ը.Մ.ի Երջանակային
Յանձնաժողովի

Հ.- Երկար տարիներու ծառայութիւն ունիք Հ.Բ.Ը.Մ.ի եւ Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան մէջ: Բաղդատելով անցեալն ու ներկան, ի՞նչ գնահատական կու տաք նոր սերունդին մասնակցութեան միութեանկան աշխատանքներու մէջ:

Պ.- Ընդհանրապէս կրնամ խօսիլ Սուրիոյ մասին: 1954-ին, աւելի քան քառասուն տարիներ առաջ, երբ հիմը դրինք Հալէպի Հ.Բ.Ը.Մ.ի Լազար Նաճարեան-Գալուստ Կիւլպենկեան վարժարանին, անկէ ետք միայն Բարեգործականն սկսանք կազմակերպել որպէս անդամակցական միութեան:



թիւն: Նախապէս Հալէպի այլ դպրոցներէ անդամներ կու գային Հ.Բ.Ը. եւ անոնցմէ ոմանք կ'անցնէին Հ.Բ.Ը.Մ.: Այդ օրերուն մեր յարաբերութիւնները Թէքէեան Մշակութային Միութեան հետ աւելի սերտ էին, տարակարծութիւններ չկային եւ գրեթէ մէկ ակումբի նման կ'աշխատէինք: Ես կը յիշեմ այս:

Դպրոցը երբ սկսաւ տալ իր շրջանաւարտները, Հ.Բ.Ը.ն ու Թէքէեանը երկուստեք օգտուեցան՝ իրենց անդամակցութիւնը ապահովելով դպրոցականներէն: Այս երկու կազմակերպութիւնները իրենց կարելին կ'ընեն նոր սերունդին մօտ ազգապահպանումը երկարաձգելու: Ինչպէս գիտէք, Սուրիոյ մէջ քաղաքական գործունէութեան իրաւունք չունինք մենք. պէտք ալ չունինք: Կը յարգենք երկրին օրէնքները:

Հ.Բ.Ը.Մ.ը որպէս բարեսիրական կազմակերպութիւն աւելի կարելիութիւն պէտք է ունենայ Սուրիոյ մէջ բարեսիրութիւն կատարելու: Ներգաղթէն ետք, հագուստահաւաքի, կարօտեալներու դարմանատնային խնամք ապահովելու, կաթ բաշխելու բարեսիրական գործերը հետզհետէ կանգ առին: Անոնց փոխարէն գաղութը ուրախ է որ ունի ձինիչեան Հաստատութիւնը, որ կը կատարէ այդ դերը: Կը կարծեմ որ Բարեգործականը վերադառնալու է իր սկզբնական առաքելութեան՝ հասնելու մեր գաղութին բարօրութեան: Կեանքի սղութիւնն այնքան աճած է, որ շատ ընտանիքներ ի վիճակի չեն հասնելու ամէն կարիքի:

Հ.- Վերջին տարիներուն Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչական Ժողովը իր ուշադրութիւնը առաւելաբար կեդրոնացուցած է Հայաստանի վրայ: Ինչպէ՞ս կարելի պիտի ըլլայ հասնիլ նաեւ արտասահմանի բարեսիրական կարիքներուն:

Պ.- Երկրաշարժը, Ղարաբաղի ազատագրման հարցը, շրջափակումը ստիպեցին որ Հ.Բ.Ը.Մ.ը հասնի Հայաստանի կարիքներուն: Պայման էր որ Միութիւնը հասնէր հայրենիքին: Մինչ այդ, անշուշտ, գաղութները տուժեցին: Բայց այս ալ պատճառ եղաւ որ շրջանակները ջանան ինքնաբաւ դառնալ: Ուրախ եմ որ կամաց կամաց գաղութներու ինքնաբաւ դառնալով Բարեգործականի Կեդրոնին հետ մնացած է բարոյական կապուածութիւն մը: Յատկացումները երթալով կը նուազին: Ասիկա կը նմանի պարտք ունեցող անձերու պարագային. աւելի՛ կ'աշխատին՝ պարտքը չուտով փակելու համար...:

Հ.- Իսկ եթէ Միութեան մօտ եղած կտակները մասնաւոր նպատակներու համար չգործադրուին, այն ատեն ինչպէ՞ս կը բացատրէք այս պարագան:

Պ.- Ատիկա Կեդրոնին գործը կը նկատեմ. մանրամասնութիւններու

տեղեակ չեմ: Հոս մենք ունինք քանի մը կտակներ մշակութային նպատակներու կամ դպրոցականներու մրցանքներու համար, եւ մենք աւելիով կը գործադրենք զանոնք:

Հ.- Եթէ ձեր աշխատանքներուն համար դուրսէն եկող նոր ներդրումներ ըլլան՝ կը խորհի՞ք թէ օգտակար պիտի ըլլան ձեր ազգապահպան ճիգերուն:

Պ.- Կը խորհիմ թէ այլեւս դուրսէն գալիք դրամական ակնկալութիւններու պէտք չէ վստահիլ: Դուրսէն եկածին շնորհակալ կ'ըլլանք միայն: Եթէ անդամակցութեան թիւին համեմատ Բարեգործականի յատկացումները կատարուին՝ Սուրիոյ տրուածը այժմու չնչինէն շատ աւելի պիտի ըլլար: Անցեալները երբ կը կարգայի Հ.Բ.Ը.Մ.ի վարժարաններուն կատարուող յատկացումներու մասին, նկատեցի թէ Հալէպի մեր դպրոցը ամենաշատ աշակերտութիւնն ունեցողն ըլլալով հանդերձ, ամենաքիչ յատկացումը կը ստանայ Կեդրոնէն: Երեւակայացէք որ մեր ուսուցիչներուն միջին ամսականը 100 տոլար է միայն...:

Հայ ուսուցիչը լաւ վարձատրելը մեր բոլորին փափաքն է, բայց պէտք է նկատի ունենալ որ Հալէպի մէջ ունինք 10-15 հայկական վարժարան. եթէ մենք մէկ դպրոցի համար բարձր աշխատավարձ տանք, գաղութային հարց կրնայ ծագիլ: Վերջին հաշուով, ապրած գաղութիդ պայմաններուն պիտի համակերպիս:

Հ.- Հայ Երիտասարդաց Ընկերակցութիւնը անցնող աւելի քան կէս դարու ընթացքին նեցուկ կանգնեցաւ Հ.Բ.Ը.Մ.ի՝ խտացնելով անոր շարքերը եւ առողջ երիտասարդութիւն մը մէջտեղ բերելով: Ինչպէ՞ս կը գնահատէք անոր գործունէութիւնն այսօր:

Պ.- Հայ Երիտասարդաց Ընկերակցութիւնն անցեալին երկու պետական արտօնութիւն ունեցած է՝ մարզական եւ մշակութային: Պետական հրամանագրով մարզական միութիւնները միացուեցան: Անոնք բաժնուեցան երկուքի՝ յառաջդիմականներ (Հ.Մ.Մ., Վասպուրական եւ Հ.Ե.Ը.) «Արուպէ» անուան տակ, եւ Հ.Մ.Ը.Մ.: «Արուպէ»ի մէջ Հ.Ե.Ը.ը կը գործէ որպէս բաժնետէր: Մշակութային մարզին մէջ Հ.Ե.Ը.ը քաղաքիս լաւագոյն միութիւններէն է: «Ազամեան» թատերախումբը տարեկան քանի մը որակեալ ելոյթներ կ'ունենայ: Ունինք երգչախումբ, ուսանողական եւ սկսողտական շարժումներ, գրական հաւաքներ:

Հ.- Հալէպը մայր գաղութ եղած է սփիւռքին տալով մեր լաւագոյն մտաւորականները: Կը խորհի՞ք թէ գալիք տասնամեակներուն ան պիտի շարունակէ խաղալ նոյն դերը:

Պ.- Հալէպը որպէս ինքզինքը պահող գաղութ պիտի շարունակէ իր դերը: Հալէպէն այլ գաղութներ հաստատողներ օգտակար կ'ըլլան տեղական նոր համայնքներու ազգային կեանքին: Ինչպէս որ Ամերիկան չնորհիւ սուրիահայերու, լիբանանահայերու եւ իրանահայերու վերականգնում մը ունեցաւ: Մինչ այդ, սակայն, մեր գաղութը տակաւ կը յառաջդիմէ իր նոր կալուածներով, կեդրոններով, դպրոցներով:

Մեր գլխաւոր հարցը կը մնայ մեր 1300 աշակերտներուն համար նոր դպրոցի ապահովումը: Նոր դպրոցաշինութեան ծրագիրը 10 միլիոն տոլարնոց ծրագիր է, ինչ որ մեր ուժերէն շատ վեր է:

Հ.- Ինչպէ՞ս կը մշակէք Հայաստանի հետ յարաբերութիւնները:

Պ.- Անցեալին կոմիտէ մը կար այդ յարաբերութիւնները կեդրոնացուած կերպով մշակելու համար: Հիմա որ Հայաստան իր հիւպատոսութիւնն ունի Հալէպի մէջ, կը խորհիմ թէ այսուհետեւ մեր յարաբերութիւնները հիւպատոսարանին միջոցով իրագործուելու են:



ՏՔԹ. ԳՐԻԳՈՐ ԱՏԱՆԱԼԵԱՆ

Ատենապետ Ռ.Ա.Կ. Սուրիոյ եւ

Յորդանանի Շրջանային Վարչութեան

Հ.- Հալէպը Հայաստանի Հանրապետութեան աշխարհագրականօրէն մօտիկ է եւ հալէպահայութիւնը՝ ծայր աստիճան հայրենասէր: Ինչպիսի՞ յարաբերութիւններ կը մշակուին մեր հանրապետութեան հետ:

Պ.- Այստեղ պէտք է մատնանշել որ սուրիահայ գաղութին յարաբերութիւնները Հայաստանի հետ նոյնիսկ խորհրդային ժամանակաշրջանին եղած են ամուր եւ օգտաշատ: Խորհրդային Հայաստանի վերջին տարիներուն, յատկապէս 1983-84 թուականներէն սկսեալ, մշակութային յարաբերութիւնները Մշակութային Կապի Կոմիտէին եւ սուրիահայ գաղութին միջեւ առաւել եւս զարգացում ունենալով՝ 90-ական թուականներու սկիզբը հասած են աննախընթաց մակարդակի: Հայաստանի անկախացումէն յետոյ, ընդհանրապէս Սուրիոյ եւ մասնաւորապէս Հալէպի յարաբերութիւնները Հայաստանի անկախ պետականութեան հետ ազգային գետնի վրայ շարունակուած են



նոյն ուժգնութեամբ, նո՛յն յաճախականութեամբ: Շրջան մը այնպէս պատահած էր որ Երեւանէն դէպի Հալէպ ամէնօրեայ թռիչք գոյութիւն ունէր՝ մինչեւ Թուրքիոյ կողմէ Հայաստանի շրջափակումը: Բացի ատկէ, ինքնաշարժներով, օթոպիւսներով հայրենաբնակներու մեծաթիւ ներկայութիւնը զգալի էր Սուրիոյ եւ յատկապէս Հալէպի մէջ:

Այս վերջին շրջանին եւս մշակութային յարաբերութիւնները նոր զարգացում ապրեցան: Համարեա չգտնուեցաւ Հայաստանի մէջ գործող յայտնի խումբ մը (Թատերական, պարի թէ երգի) կամ արուեստագէտ մը, որ չայցելէ Հալէպ ու չունենայ ելոյթներ:

Այսօր, երբ Հայաստանի Հանրապետութիւնն արդէն իր դիւանագիտական ներկայացուցչութիւններն ունի Դամասկոսի (դեսպանատուն) եւ Հալէպի (գլխաւոր հիւպատոսարան) մէջ, նոր զարգացման շրջան մը կը սպասուի մեր գաղութին եւ Հայաստանի ժողովուրդին միջեւ, այս անգամ նա՛եւ օժանդակութեամբը Հայաստանի ներկայացուցչական տուներուն:

Հ.- Հալէպի մէջ ի՞նչ ազդեցութիւն գործեց Հայաստանի Հանրապետութեան Նախագահին այն յայտարարութիւնը՝ թէ սփիւռքի մէջ կուսակցութիւններն այլեւս ընելիք չունին:

Պ.- Ի հարկէ իւրաքանչիւր սփիւռքահայ չէր կրնար համաձայն ըլլալ այդ միտքին: Իմ կարծիքով սփիւռքի մէջ կուսակցութիւնները ո՛չ միայն ընելիք ունին, այլեւ՝ աւելի՛ ընելիք ունին: Հայաստանի մէջ բազմակուսակցական դրութիւն մը ստեղծուեցաւ եւ մեր հայրենիքը պիտի ամրանայ դեմոկրատական, լիպերալ ճանապարհով՝ իբրեւ հիմնական գրաւական ունենալով բազմակուսակցականութիւնը: Իսկ սփիւռքի մէջ, Մեծ Եղեռնէն յետոյ եւ անկէ առաջ մեր ազգային ազատագրական պայքարն սկսած էր հայ ազգային կուսակցութիւններու կազմաւորումով: Մեր կուսակցութիւններու արմատները կ'երթան հոն, ուր ազատագրական շարժումը կը սկսի: Սփիւռքի կազմաւորման աշխատանքներուն մէջ հիմնական մղիչ ուժը եղան մեր կուսակցութիւնները: Եւ եթէ այսօր իւրաքանչիւր գաղութի մէջ բարգաւաճ կեանք կայ ու զարթոնք՝ դարձեալ հիմնական պատճառը ազգային կուսակցութիւններն են:

Հետեւաբար, տակաւին կը կարծենք որ շատ շուտ է ու ճիշդ քաղաքականութիւն մը չէ ազգային կուսակցութիւններու վրայ դամբանական կարգալ: Ընդհակառակը, Հայաստանի քաղաքականութիւնը ճիշդ կ'ըլլայ՝ եթէ զարկ տայ կուսակցութիւններու վերարժեւորման: Ի հարկէ վերաքննութեան պէտք է ենթարկել կուսակցութիւններու ծրագ-



Հալեպի Ռ.Ա.Կ.ի ղեկավարներուն հետ, հատորիս հեղինակին ի պատիւ սարքուած ընդունելութեան ընթացքին:

րերը եւ ազգային-քաղաքական փլաթֆորմները՝ նո՛ր թափով եւ ազատ ու անկախ Հայաստանի գոյութեան պայմաններուն մէջ համերաշխ ու զիրար լրացնող աշխատանքով, համագործակցաբար հայակերտման նոր զարթոնքի մը զարկ տալու համար:

Հ.- Անցնող տարիներուն Հալեպէն մեծ թիով հայեր մեկնեցան Լիբանան եւ անկէ ալ ովկիանոս կտրելով անցան Արեւմուտք: Հիմա որ քաղաքականապէս եւ տնտեսապէս Սուրիա խաղաղ ու բարգաւաճ վիճակ ունի, արդեօք կը շարունակուի՞ արտագաղթը:

Պ.- Պէտք է ըսել որ վերջին 4-5 տարիներուն համարեա արտագաղթ գոյութիւն չունի: Կրնան առանձին դէպքեր պատահիլ՝ ընտանիքներու միաւորման նպատակով: Սուրիա ներկայիս կ'ապրի տնտեսական զարգացման եւ քաղաքական ապահովութեան ու կայունութեան նոր շրջան մը: Հետեւաբար, ո՛չ միայն արտագաղթը կը կասի, այլեւ շատ արտագաղթողներ կը վերադառնան իրենց սուրիական ծննդավայրերը:

Հ.- Ինչպէ՞ս է յարաբերութիւնը ձեր պատկանած կազմակերպութեան եւ Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան միջեւ:

Պ.- Աւելի քան հիանալի: Նախ մեր կազմակերպութիւնն առաջինն էր որ միջոցներու դիմեց, տակաւին ներկայացուցիչի մը Սուրիա գալէն իսկ առաջ, գալիք ներկայացուցիչը ապահովելու բնակարանով եւ շէնքով մը, որ օգտագործուի իբրեւ դեսպանատուն կամ հիւպատոսարան: Ի պատիւ մեր կազմակերպութեան, պէտք է ըսեմ որ Սուրիոյ մէջ ան իր լրիւ, անվերապահ նեցուկը կ'ընծայէ դեսպանատան, իր անդամներու նիւթական ու բարոյական մասնակցութեամբ: Մենք կը շարունակենք նեցուկ կանգնիլ դեսպանատան, որովհետեւ հաւատացած ենք որ այդպիսով նեցուկ կ'ըլլանք Հայաստանի նորանկախ պետութեան:

Հոս պէտք է ըսել թէ Հայաստանի եւ Սուրիոյ յարաբերութիւնները եւս հիանալի են: Տեղի կ'ունենան զանազան մակարդակներով բազմակողմանի այցելութիւններ: Անոնց առաջինն ու կարեւորագոյնը Վսեմաշուք Նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանին եւ իր շքախումբին այցելութիւնն էր Սուրիոյ Նախագահ Հաֆէզ էլ Ասատին հրաւերով: Այդ առթիւ կնքուեցան շատ կարեւոր համաձայնութիւններ երկու երկիրներուն միջեւ, եւ ատոր իբրեւ արդիւնք՝ Հայաստանէն անընդհատ բարձր մակարդակի պատուիրակութիւններու այց տեղի կ'ունենայ Սուրիա:

Հ.- Ի՞նչ անմիջական ծրագիրներ ունիք Թէքէեան Մշակութային Միութեան գծով:

Պ.- Թէքէեան Մշակութային Միութիւնը Սուրիոյ մէջ ունի երկար տարիներու վրայ տարածուող ազգային ծաւալուն գործունէութիւն: Յառաջիկայ տարուան համար մեր նախատեսած աշխատանքները կարելի է բաժնել քանի մը խումբերու: Առաջին՝ տեղական ուժերով կազմակերպել պարախումբ, երգչախումբ, նուագախումբ եւ գրական-գեղարուեստական դասախօսութիւններ:

Երկրորդ՝ մշակոյթի սպասարկուներ հրաւիրել սփիւռքի այլ գաղութներէ եւ մասնաւորաբար Լիբանանէն ու միջինարեւելեան երկիրներէ:

Երրորդ՝ արուեստագէտներ հրաւիրել Հայաստանէն: Կը մտածենք առաջին առիթով հրաւիրել երաժշտական դասախօսներ, քանդակագործներ, նկարիչներ, պարախումբ եւ պարուսոյցներ, որպէսզի մեր պատանիներու աշխատանքային կազմակերպումը աւելի արդիւնաւորուի: Կ'ուզենք որ ուսուցիչ-կատարողներ զան եւ վարժողութեամբ խումբեր ստեղծեն: Հպարտութեամբ պէտք է նշել որ 1984-1990 տարիներուն բազմաթիւ խումբեր հրաւիրած ենք: Այդ ժամանակ պայմանները տարբեր էին, ճանապարհածախսերը աւելի մատչելի էին, կեցութիւնը պանդոկներու մէջ աւելի աժան էր, վճարումները

սուրիական դրամանիշով կը կատարուէին: 1992-էն ի վեր ծախսերը ուռճացած են եւ վճարումները կը կատարուին օտար դրամանիշով, ինչ որ կը դժուարացնէ ամէն բան: Բայց եւ այնպէս, ճանապարհներ գտած ենք ծախսերը նուազագոյնի իջեցնելու:

Հ.- Յառաջիկայ տարի 75-ամեակն է Ռ.Ա.Կ.ի: Կազմակերպութիւններ, բնականաբար, կ'անցընեն անկիւնադարձային օրեր: Դուք ինչպէ՞ս կը ծրագրէք դիմաւորել 75-ամեակը:

Պ.- Ճիշդ է. այժմ մեր ժողովուրդի պատմութեան մէջ չըջադարձային պահ մը կ'ապրինք: Այդ չի վերաբերիր միայն Հայաստանի եւ մեր Հայրենաբնակ ժողովուրդին. ան իր անխուսափելի անդրադարձը կ'ունենայ եւ պէտք է ունենայ նաեւ սփիւռքահայ կեանքի եւ զայն ներկայացնող կազմակերպութիւններու վրայ:

Վստահ եմ որ Ռ.Ա.Կ.-ը, որ իր գոյութեան ամբողջ տեւողութեան ծառայած է մեր ժողովուրդին եւ եղած միութեան ախոյեանը՝ երբ 1921-ին կազմուած է միաւորումը տարբեր կազմակերպութիւններու, վերատեսութեան պիտի ենթարկէ իր ազգային-քաղաքական գործունէութիւնը եւ նոր շունչով, նոր ազգային ծրագրով պիտի դիմաւորէ այսուհետեւ մեր նորանկախ պետականութեան գործընթացը ու անպայման մասնակից դառնայ անոր:

Սփիւռքի մէջ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը չի կրնար գոյատեւել առանց Հայրենիքին, առանց Հայրենի ժողովուրդին օգտակար ըլլալու աշխատանքներուն գործօն մասնակցութիւն բերելու: Ինչպէս որ ան իր ամբողջ կեանքի ընթացքին օգտակար եղած է Հայրենի ժողովուրդի բարօրութեան, այնպէս ալ այսուհետեւ պիտի շարունակէ օժանդակել Հայաստանի եւ անոր բնակիչներուն:

Այս նոյն վճռականութեամբ պիտի վերատեսութեան ենթարկենք մեր ազգային քաղաքականութիւնը, որպէսզի նոր պայմաններու լոյսին տակ կարենանք օգտակար ըլլալ մեր ժողովուրդին:



ԿԱՐՊԻՍ ԼԵՓԵՃԵԱՆ

Ատենապետ Նոր Սերունդ Մշակութային Միութեան



Հ.- Հալէպը որպէս մայր գաղութ, ինչպէս անցեալին, այսօր եւս կը տեսնենք մշակութային, եկեղեցական, կրթական ու ազգային-քաղաքական կեանքով բեղուն: Ինչպէ՞ս կը գնահատէք դուք ձեր կազմակերպութեան գործունէութիւնը ընդհանուր պատկերին մէջ:

Պ.- Բոլոր միութիւններն ալ Հալէպի մէջ իրենց գործունէութեամբ զիրար կը լրացնեն, իւրաքանչիւրը իր դերը ունենալով: Հոս մշակութային կեանք ըսելով կը հասկնանք նաեւ հասարակականը:

Մեր գործունէութեան մասին միայն մենք կրնանք խօսիլ: Մերը հիմնականին մէջ մշակութային ծիրէն ներս աշխատանք մըն է, որ գաղութին կեանքը երկարաձգելու, գաղութը աւելի հայկական դիմագիծով պահպանելու մտահոգութեամբ առաջնորդուած է: Այս մտահոգութեամբ ալ այսօր ունինք «Անդրանիկ» թատերախումբը (հիմնուած 1920-ին), «Ազատ Ղարիպեան» պարախումբը (հիմնուած 10 տարիներ առաջ), որուն շրջապտոյտները արդէն պերճախօս վկայութիւն մը կու տան անոր գործունէութեան մասին: Այցելած ենք Հայաստան 1988-ին, նաեւ՝ Կիպրոս ու Յունաստան: մասնակցած ենք Հալէպի բերդի ելոյթներուն, «Պոստա Շամ»ի փառատօնին: Գտնուած ենք նաեւ Ճարաշ (Յորդանան), ուր Թէքէեանն ու Բարեգործականը հիւրընկալած են մեզ: Օգոստոս 24-ին մասնակցութիւն կը բերենք Եգիպտոսի Իսմայէլի քաղաքի 6-րդ միջազգային փառատօնին:

Հ.- Նկատեցի՞ք թէ կարեւոր գործ կը տեսնէք մշակութային կեանքի մէջ: Նոր Սերունդ Մշակ. Միութիւնը կը հովանաւորուի Ս.Գ. Հնչակեան Կուսակցութեան կողմէ: Նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի յայտարարութեամբ՝ կուսակցութիւնները այլեւս ընելիք չունին արտասահմանի մէջ: Ասիկա ի՞նչ մտածումներու կ'առաջնորդէ ձեզ:

Պ.- Նախագահը ազատ է արտայայտուելու այդպէս, որովհետեւ ինքը ելակէտ ունի Հայաստանի պայմանները: Ես կը կարծեմ թէ Պրն. Նախագահը աւելի խորը եթէ թափանցէր գաղութահայ կեանքին, այդպիսի արտայայտութիւն պիտի չունենար:

Մենք կը հաւատանք որ սփիւռք հասկացողութիւնը պէտք է գոյատեւէ: Մեզի համար այս է ելակէտը: Ասիկա ո՛չ թէ մենք այսօր կ'ըսենք, այլ 1920-ական թուականներուն ըսած է Սապահ-Գիւլեանը, երբ ամերիկեան Worker Party-ին մէջ ուզած են առնել Հնչակեան Կուսակցութիւնը: «Բառերու եւ ճշգրտութեան հասկացողութիւն» գրքոյկին մէջ ան ճիշդ այս հարցին մատնանշելով ըսած է թէ սփիւռքը պիտի գոյատեւէ, ինքզինք կազմակերպէ, որովհետեւ ունի իր խնդիրը՝ Արեւմտահայաստանի հարցը: Հայաստանն այսօր իր սահամաններով ճանչցուած պետութիւն մըն է, մինչ Արեւմտահայաստանը կորսուած հող մըն է, որուն տէրը աշխարհով մէկ սփռուած տարագիր հայութիւնն է:

Մենք պահանջը ունինք, պահանջատէր ենք: Մենք պիտի ըլլանք դատը հետապնդողը: Եւ քաղաքական կազմակերպութիւններ պիտի առաջնորդեն մեր ժողովուրդը՝ հետապնդելով դատը:

Վստահ եմ որ պիտի գայ օրը միասնակամ պայքար մղելու եւ այն ատեն բռնկեցի վերածուած պիտի պայքարինք:

Հ.- Մեր երեք կուսակցութիւններու ծրագիրները գծուած են անցեալին: Հիմա որ մեր հայրենիքը նոր անկախութեան շրջան մը կը բոլորէ, կը խորհի՞ր որ ձեր կուսակցութիւնը բարեփոխէ իր ծրագրին մէկ մասը:

Պ.- Ընդհանրապէս ծրագիրներ ու կանոնագրեր միշտ փոփոխութեան ենթակայ են: Ժամանակի հետ կ'ապրին ու կը մահանան, ժամանակի հետ ալ նոր շունչ կ'առնեն՝ նայած տուեալ կազմակերպութեան առողջութեան: Եթէ հիւանդ չէ, ինքզինք կը վերագտնէ նոր պայմաններու թելադրանքով, կը ստանայ իր նոր հոնը: Բայց ասիկա չի՛ նշանակեր թէ հիմնական սկզբունքէն կը չեղի: Որովհետեւ հիմնական սկզբունքներ գոյութիւն ունին համաշխարհային առումով, հասարակական, ընկերային մակարդակի վրայ, որոնք փոփոխութիւն չեն կրեր: Այսինքն՝ կան աղքատն ու հարուստը: Հետեւաբար, սկզբունքայնութիւնը կը մնայ որոշ հարցերու մէջ. բայց նաեւ կը մնայ ճկունութիւնը՝ նոր աշխարհի նոր կարգերուն մէջ աշխատելու ունակութիւն ձեռք բերելու համար ինքզինք վերակերտելով:



ԾՈՐԾ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Ներկայացուցիչ Ս.Գ. Հնչակեան
Կուսակցության



Հ.- Կնճոռոտ հարց է Դամասկոսի թեմի հարցը: Գիտեմ թե Հնչակեան Կուսակցությունը 1955-էն ի վեր ամբօրէն կառչած է Էջմիածնի գերակայության: Նոր կաթողիկոսի ընտրութեամբ նոր գոյավիճակ մը ստեղծուեցաւ: Ինչպէ՞ս կը տեսնէք Դամասկոսի թեմին կացութիւնը գալիք տարիներուն:

Պ.- Մենք տակաւին սպասողական վիճակի մէջ ենք, տեսնելու թէ նոր ընտրութենէն ետք ի՞նչ վիճակ պիտի ստանայ բռնազրաւուած թեմերու գոյութիւնը:

Երբ որոշ արդիւնք մը տալ սկսի բռնազրաւուած թեմերու հարցին լուծումը, այն ատեն միայն մենք կրնանք դիրքաւորուիլ: Առ այժմ կը պահենք մեր նոյն վիճակն ու կը շարունակենք մեր գործը:

Հ.- Մեծ թիով հայեր թողուցին Միջին Արեւելքը եւ մեկնեցան հեռաւոր ափեր: Արդեօք այս արտագաղթը ձեր կուսակցութեան մէջ լուրջ անդամական տագնապ յառաջացո՞ւց: Ինչպէ՞ս կը նորոգէք ձեր շարքերը:

Պ.- Ի հարկէ գաղութին բոլոր կազմակերպութիւններուն ալ ազդեց այս արտագաղթը: Բայց եւ այնպէս ծանր չկշռեց բոլորին վրայ: Նո՛յն եռանդն ու հետեւողականութիւնը կայ բոլոր միութիւններէն ներս: Ան չէ ազդած այնքան ծանր կերպով, որ մտածենք թէ գաղութը կը նստրանայ կամ կը կազմալուծուի օր մը: Այդ մտահոգութիւնները չունինք առ այժմ:

Հ.- Ինչպէ՞ս են ձեր յարաբերութիւնները հայրենասէր ճակատի միւս կազմակերպութիւններուն հետ:

Պ.- Շատ լաւ: Մենք լաւապէս կ'օգտագործենք իւրաքանչիւր առիթ ազգային-քաղաքական մեր գործունէութեան մէջ ու կը դրսեւորենք համերաշխ գործակցութիւն: Ի հարկէ կան փոքր տարակարծութիւններ, որոնք ընդհանուր յայտարարի տակ կը չեզոքացնենք եւ միշտ հանրութեան կը ներկայանանք միասնական ճակատով՝ յանուն հայրենիքի, ժողովուրդի շահերուն:

Հ.- Բերիոյ թեմը կիլիկեան թեմ է, որ ձեռով մը ազդեցութեանը տակ է

Հ.Յ. Դաշնակցութեան: Արդեօք որեւէ վերապահութիւն ունի՞ք առաջնորդարանի աշխատանքներուն նկատմամբ:

Պ.- Մի՛շտ ալ ունեցած ենք եւ ունինք՝ այդ ազդեցութեան բերումով: Մենք կը սպասենք նոր վիճակի մը կաթողիկոսական վերջին ընտրութենէն ետք: Կ'ակնկալենք որ երջանկայիշատակ Վազգէն Ա.ի օրով սկսած կանոնադրական փոփոխութիւնը անպայման իրականանայ եւ եկեղեցւոյ միութիւնը յաջողի ու մենք Կիլիկեան Աթոռի տիրապետութենէն դուրս գանք:

Հ.- Ինչպէ՞ս կը գնահատէք նոր սերունդին հետաքրքրութիւնը մեր լեզուին ու մշակոյթին նկատմամբ:

Պ.- Ելլելով մեր երկրին պայմաններէն, մեզի պարտադրուած է երկրին տեղական լեզուն: Այս պարտադրանքը ձեռով մը 70 տոկոսով կ'ազդէ մեր ընդհանուր ուսանողութեան հայերէն լեզուի զարգացման, հետեւաբար քիչ մը տեղատուութիւն կայ մայրենիին նկատմամբ: Բայց այդ տեղատուութեան բացած ճեղքը կը փակեն մեր մշակութային միութիւնները: Հայ ակումբը կը դառնայ երկրորդ դպրոց մը եւ հայ երիտասարդներ հոն կը լրացնեն իրենց պակասը: Անոնք թատրոն գալով հայերէն կը սորվին: Թատրոնն ինքնին դպրոց մըն է արդէն:

Հ.- Հայաստանի Հանրապետութեան Նախագահը լայն կապեր կը հաստատէ Սուրիոյ հետ: Վստահ եմ թէ դուք որպէս սուրիահայեր մեծապէս գնահատեցիք Նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի այցն ու երկու նախագահներուն հանդիպումը: Կ'ուզէ՞ք արտայայտուիլ այդ յարաբերութեանց մասին:

Պ.- Մենք դարձեալ միասնական ճակատով եւ մեծ ուրախութեամբ ընդունեցինք մեր յարգարժան նախագահը, որ Հալէպէն վերադարձաւ լաւ տպաւորութիւններով: Մենք շատ գոհ ենք որ մեր հայրենիքը սերտ կապի մէջ է Սուրիական Հանրապետութեան հետ եւ այդ կապը կ'ազդէ նաեւ մեր գաղութի ազգային գործունէութեան, որ յառաջիկային աւելի զարգանայ, մեր հոգեկան աշխարհը աւելի ամրապնդուած ըլլայ Մայր Հայրենիքով:

«ԱՆԿԱՒՈՒԹԻՒՆ», 7 եւ 21 Սեպտեմբեր 1995



Ամմանը դիտումա՞ծ Հերակլէսի տաճարէն:

ԱՄՄԱՆԸ ԻՐ ՀԱՅՈՒԹԵԱՄԲ

Ամմանը անծանօթ չէ իր հայութեամբ:

Լիբանանի քաղաքացիական պատերազմի տխուր օրերուն դէպի Միացեալ Նահանգներ մեկնող «կարաւան»ներու խումբին ես ալ մաս կը կազմէի եւ շրջան մը, մօտ ութ ամիսներ, չափած եմ Ամմանի փողոցները, անցնելով Յակոբ Միսնեանի դեղարանէն մինչեւ Բիւզանդ Զօրպանեանի ժամացոյցի խանութը, եւ այդ օրերու հովիւ Զղշանեան Վարդապետի տունէն Հիւսէյն թագաւորի մայր թագուհիին անձնական վարսաշարդար Հանսի բնակարանը: Եւ այդ օրերուն մասնակցած ալ եմ տեղւոյն ազգային-քաղաքական կեանքին:

Յիշատակելի օրեր էին Եղիշէ Պատրիարքին, Ծառէ Սրբազանին ու Փրոֆ. Բարունակ Թովմասեանին հետ մեր անցուցած երկա՛ր գիշերները, կամ Սարգիս Լեփեճեանի տան մէջ մեր ունեցած հաւաքոյթները Տքթ. Կարօ Զա-քարեանի հետ:

Բայց մէկ բան միայն այդ բոլորէն ետք կարելի պիտի չըլլայ մոռնալ՝

ամմանահայ գաղութին սքանչելի հիւրընկալութիւնը: Հարիւրաւոր գաղթականներու առաջ անոնք բացին իրենց դռներն ու սիրտով, հոգով ընդունեցին արեւակից հարազատները:

Ռ.Ա.Կ. Սերոբ Անթիքաճեան Ակումբի վերակազմակերպումի աշխատանքներուն համար ընկեր Բիզանդ Զօրպաճեանի եւ Տքթ. Կարօ Զաքարեանի գործակցութեամբ արդիւնաւէտ աշխատանք մը կրցայ կատարել ութ ամիսներու ընթացքին: Այդ շրջանին Ամման հրաւիրեցի Կեդրոնական Վարչութեան ատենապետ ընկեր Փրոֆ. Բարունակ Թովմասեանը եւ Ճեպէլ Ամմանի տանս մէջ ուխտը առինք նորագիր տասնեակ մը ընկերներու: Աւելի ուշ, ընկերներ Երուանդ Պապայեանի եւ Երուանդ Կրպոյեանի այցելութեամբ կազմակերպեցի դաստիարակչական հանդիպումներ:

Ամմանը ունասիս մըն է դէպի արաբական անապատ գացող ճամբորդին համար: Հոն բոյն հաստատած է փոքրաթիւ գաղութ մը՝ հայատրոփ իր եկեղեցիով, դպրոցով եւ ակումբներով: Հաշիմական աղուոր թագաւորութենէն ներս Ամմանը Երուսաղէմի հայոց պատրիարքութեան մէկ իշխանապետութիւնն է: Թագաւորը իր ընտանիքին անձնական ծառայութեան համար վստահած է հայ բժիշկին, խոհարարին, դերձակին, լուսանկարիչին, սափրիչին...:

Յորդանանցի պետութիւնները եւ իր բնակչութեան մեծամասնութիւնը կազմող պաղեստինցի ժողովուրդը կը գոյակցին համերաշխօրէն: Արաբեւիսրայէլեան համաձայնութիւնը խաղաղութեան նոր դուռ մը բացած է՝ իբրեւ նախօրինակը ուրիշ դռներու, մանաւանդ Սուրիոյ հետ:

Միջին Արեւելքի հայկական գաղութները ամէն երաշխիք ունին գալիք տասնամեակներուն ապահովելու տնտեսական աւելի բարձր մակարդակ եւ, հետեւաբար, իրենց ազգապահպանական կարիքներուն համար կենսական միջոցներ:

ՎԱՀԱՆ ԵՊՍ. ԹՕՓԱԼԵԱՆ
Հովի յորդանանահայ գաղութի



Հ.- Ամմանի հայ գաղութը 1975-80 թուականներում օգտակար եղաւ Լիբանանի պատերազմէն դուրս եկած հայերուն, որոնք ժամանակաորապէս կայք հաստատեցին ձեր գաղութին մէջ: Մեզի ծանօթ են ձեր պատուական գաղութին հիւրամեծարութիւնը, ազգասիրութիւնն ու հայրենասիրութիւնը: Տասնութ տարիներէ ի վեր հովի էք. ինչպէ՞ս կը գնահատէք ամմանահայութեան մասնակցութիւնն այսօր ազգային կեանքին:

Պ.- Ամմանահայութիւնը, ինչպէս որեւէ գաղութ, մէկ մասնիկն է Հայ ժողովուրդին: Գաղութին մէջ խոր գիտակցութիւնը կայ ոեւէ Հայու օգտակար ըլլալու: Ասիկա հաւանաբար ժառանգած ենք տեղացի արաբ բնիկ ժողովուրդէն: Երբ մենք Յորդանան եկանք, գիտէք, ոտաբոսիկ, պատռած վրայ-գլուխով, արաբ ժողովուրդը մեզի նոյն հիւրասիրութիւնը ցոյց տուաւ. ո՛ր մնաց մենք նոյնը չընենք մեր արեւակիցին, հայրենակիցին: Մեզի համար շատ բնական երեւոյթ մըն է՝ առանց պարտաւորութեան տակ ձգելու կարիքաւոր անձը: Կը կարծեմ որ այդ ոգին ուժգին է ոչ միայն ամմանահայ անհատներու, այլեւ իրենց երկու կազմակերպութիւններուն մէջ: Ատոր մեծագոյն փաստը այս գաղութը տուաւ երկրաշարժին առիթով: Հարիւրաւոր երիտասարդներ գիշերուան մինչեւ 2-3ը դպրոցի բակին մէջ հաւաքուած ծրարներ կը կապէին տուներէ եւ խանութներէ իրենց հաւաքածներով ու մուրալով շատ անգամ: Հայաստանի մեր եղբայրները աղէտի մը առջեւ գտնուած էին եւ մեր պարտականութիւնն էր օգնել: Հոն կը գտնէիր Հ.Բ.Մ.ականը, դաշնակցականը, ռամկավարը, հնչակեանամիտը, չէզոքը՝ առանց բացառութեան: Կարծէք բոլորը մէկ մարմին եղած էին անխտիր:

Հ.- Միջին Արեւելքի այլ գաղութներէ անցնող տասնամեակներուն մեծ թափով հայեր մեկնեցան Արեւմուտք: Արտագաղթը ի՞նչ երեւոյթ կը պարզէ ձեր համայնքէն ներս:

Պ.- Այսօր կրնանք յայտարարել որ գոնէ վերջին հնգամեակին արտագաղթ գոյութիւն չունի մեր գաղութէն ներս: Պատահական գաղթողներ կան. անոնց ծնողքը կամ հարազատները նախօրօք գաղթած

են եւ այդ ընտանեկան միութիւնն ստեղծելու համար կը ձգտին միանալ իրենց հարազատներուն: Արտագաղթ չունինք:

Հ.- Իսկ այն հարիւրի չափ երիտասարդները, որ Հայաստան ուսանեցան Խորհրդային Հայաստանի լաւ օրերուն, այսօր ազգային կեանքի մէջ դեր մը կը վերցնեն:

Պ.- Հայաստանի մեղքը չէ եթէ չեն մասնակցիր: Գոնէ անձամբ համոզումս է որ երիտասարդները դէպի ազգային կեանք մղող գլխաւոր ուժը ընտանեկան դաստիարակութիւնն է: Անոնք որ ի տղայ տիոց այդ դաստիարակութիւնը ունին եւ ժառանգած են իրենց ծնողներէն՝ դժոխք ալ զրկես՝ պիտի աշխատին: Անոնք «ուզես կամ չուզես» ի ձեւով մը իրենք զիրենք կը պարտադրեն իրենց աշխատանքով:

Անշուշտ անոնց կողքին ունիս նաեւ անտարբերներու տարր մը: Անոնք որ ազգային գործի մէջ են, իրենց լաւագոյնը կու տան:

Հ.- Անցնող տասը տարիներուն տնտեսական վերելք մը ապրեցաւ Յորդանանը, մանաւանդ երբ Ծոցի պատերազմէն ետք մեծ ներդրումներ եղան: Արդեօք այդ նիւթական բարեկեցութեանն օգուտ մը քաղեցի՞նք հայերը:

Պ.- Ձեր ըսածը երկու երես ունի: Տարիներէ ի վեր հաստատուած գաղութի՞ մասին է խօսքը, թէ՞ Ծոցի պատերազմէն ետք ներգաղթող հայ անհատներու եւ ընտանիքներու:

Հ.- Երբ երկիրը տնտեսական վերելք կ'ունենայ Ծոցէն եկողներու շնորհիւ, երկրին բնակչութիւնը կ'օգտուի:

Պ.- Ատիկա սխալ է: Ընդհակառակը, Ծոցի պատերազմը մեզ քայքայեց: Երկիրը նիւթական-տնտեսական նեղութիւններ ունեցաւ: Նոյնիսկ տնտեսապէս մեզ ապահովող Ամերիկան տարիներով իր նիւթական օժանդակութիւնը դադարեցուց այս երկրին:

Բայց ատոր կողքին, Իրաքէն ու Ծոցի երկիրներէն հազարաւոր հայերու միակ ելքի ճանապարհը Յորդանանն ըլլալով՝ եկան ամիսներով հոս հաստատուեցան, կազմուեցան Ecumenical Relief Service անուան տակ բարեսիրական հաստատութիւններ, որոնց պատասխանատուներէն մէկը ես էի, եւ եկուորները օգտուեցան՝ քանի ես կամ ուրիշ հայ մը այդ կազմակերպութեան մէջ կայինք: Չանոնք մենք արդէն գաղթական չենք նկատեր, այլ՝ տեղացիներ: Օժանդակութիւնները դադրած են այլեւս: «Մեղը բռնողը մատը պիտի լիզէ» առածը ճիշդ է: Ձեւով մը մեր գաղութը օգտուեցաւ: Հոն ուր կարիքը կար բժշկական միջամտութեան մը կամ հիւանդանոցի մը ծախսերը հոգալու, հոն ուր

չքաւոր ընտանիք մը կար՝ կրցանք կանոնաւոր կերպով հասնիլ: Բայց անկէ դուրս զանգուածային կերպով բան չկրցանք ընել:

Ուրեմն գաղութը օգտուեցաւ միջազգային բարեսիրական կազմա-կերպութիւններէն: Պետական առումով՝ երկրին տնտեսութիւնը տուժեց:

Հ.- Միշտ ալ յորդանանցիւն մեր ժողովուրդին նկատմամբ եղբայրական վստահութիւն ունեցած է: Նոր սերունդին հետ կը շարունակուի՞ թագաւորութեան ծնունդէն եկող գեղեցիկ ատանդութիւնը:

Պ.- Աւելիով: Ոչ թէ արաբ գահակալներու կամ վեհապետներու քաղաքականութիւնն էր ատիկա, այլ՝ մեր ժողովուրդը ուր որ ալ գտնուած է, որդեգրած է քաղաքականութիւն մը, որ կը կայանայ իւրաքանչիւր պետութիւն որպէս պատ ընդունելու եւ անոր թիկունք կանգնելու մէջ: Այնքան ատեն որ Հաշիմական Տունը կայ, չենք կարծեր որ որեւէ դժուարութեան առջեւ կրնանք գտնուիլ:

Հ.- Ամմանէն դուրս, Յորդանանի զանազան անկիւնները ցրած փոքր համայնքներ կան: Ինչպէ՞ս է կապը անոնց հետ: Գո՞հ էք անոնց ազգա-պահպան աշխատանքներէն:

Պ.- Ամենամօտ չըջանը, օրինակ, Ռուսէյֆան է, ուր ժամանակին ունեցած ենք ծաղկոց մը: Կրցանք անոնց օթոպիւս մը յատկացնել, որպէսզի այդտեղի երախաները որպէս հայ մեծնան ու հայ մնան:

Աւելի հեռուները, օրինակ, Իրպիտ ունինք 25-30 երախայ: Փորձեցինք ուրբաթօրեայ հայերէն դասընթացք. նաեւ՝ Կիրակի կէսօրէ ետքե-րը: Ծրագիրը ձախողեցաւ ծնողներու անտարբերութեան հետեւանքով, հակառակ անոր որ շատ լաւ ուսուցչուհի մը ունէին Երուսաղէմի Թարգմանչացէն:

Հ.- Քանի ազգապահպանման մասին կը խօսինք, խառն ամուսնու-թիւնները ի՞նչ համեմատութեան հասած են հոս:

Պ.- Խառն ամուսնութիւններ, անտարակոյս, պիտի ըլլան. բայց ամէն եկեղեցական եթէ ինծի նման «չոր գլուխ» ըլլայ՝ կը նուազի անոնց թիւը: Ես պաշտօնական չըջաբերականով ասկէ տասնամեակ մը առաջ ըսած եմ. «Այն որ օտար պիտի առնէ, մեր եկեղեցին չ'ամուսնացներ զիրենք»: Բաւական յախուռն քայլ մըն էր, բայց կ'ենթադրեմ թէ իր բարերար ազդեցութիւնն ունեցաւ: Թէեւ միշտ բացառութիւններ կը պատահին ուզենք կամ չուզենք:

Խառն ամուսնութիւններու զաւակները յետագային կը դառնան մեր եկեղեցիին, մենք կը մկրտենք ու մեր դպրոցը կը յաճախեն:

Հ.- Զեր գաղութը անմիջականօրէն Երուսաղէմի պատրիարքութեան մաս կը կազմէ: Պատրիարքէն ի՞նչ ակնկալութիւններ ունիք:

Պ.- Ակնկալութիւններ չառ կան, բայց արդարացուցիչ պատճառներ կան որ Պատրիարքը առ այժմ Երուսաղէմը ձգած չկարենայ Ամմանով զբաղիլ: Ո՛չ միայն իր, այլեւ բոլոր հայերուն նախապատուութիւնը կ'երթայ Երուսաղէմի, որ այս օրերուն փափուկ չըջանէ մը կ'անցնի: Բոլորիս պարտականութիւնն է նախ Երուսաղէմը զօրացնել, յետոյ՝ Երուսաղէմի թեւին տակ գտնուող չըջանները:

Հ.- Դուք էջմիածնական համայնք էք եւ որպէս բարձրաստիճան եկեղեցական կը խորհի՞ք թէ նոր կաթողիկոսին ընտրութեամբ եկեղեցւոյ միութեան հարցը շուտով կարելի ըլլայ յաջողցնել:

Պ.- Շուտով բառը առաձգական է: Եթէ մենք հասանք այն չըջանին, որ էր Գարեգին Ա. Յովսէփեանցի եւ Գէորգ Զ. կաթողիկոսներու չըջանը, եւ յաջողեցանք սփիւռքահայութեան միտքէն հեռացնել Անթիլիասը որպէս հակաթոռ էջմիածնի ու վերադառնալ 50-ական չըջանին, արդէն շատ բան փոխուած կ'ըլլայ մեր իրականութեան մէջ: Իսկ Գարեգին Վեհափառը, Աստուած երկար կեանք տայ իրեն, այդքան ալ երիտասարդ չէ, որ բաղձացուածը կարենայ արագութեամբ իրագործել:

Հ.- Կը խորհի՞ք թէ այլեւս պաղ պատերազմի աւարտումով մեր եկեղեցին ձերբազատուի քաղաքական ազդեցութենէ եւ կրկին ներկայացնայ որպէս ազգային եկեղեցի:

Պ.- Այնքան ատեն որ մենք սփիւռքի մէջ կ'ապրինք եւ սփիւռքի մէջ բոլոր քաղաքական կազմակերպութիւնները իրենց խօսքը ունին ըսելիք, անկասկած որ այդ խօսքը պիտի ազդէ նաեւ եկեղեցւոյ վրայ: Կրնայ ըլլալ որ ազդեցութիւնը նուազ ըլլայ, բայց ի վերջոյ ազգային եկեղեցւոյ դիմագիծ մը ունինք եւ քաղաքական կազմակերպութիւններն ալ ազգային են: Միայն թէ պէտք է գիտնանք թէ եկեղեցւոյ եւ քաղաքական կազմակերպութիւններու սահմանները մինչեւ ո՞ր կը հասնին: Եկեղեցւոյ բեմը պէտք չէ քաղաքական հաշիւներու թատր ըլլայ:

Հ.- Պարապոյ ժամերուն բնաւ գրական գործերով կը զբաղի՞ք: Ի՞նչ է ձեր հետաքրքրութիւնը:

Պ.- Էր երբեմն: Ներկայիս՝ ո՛չ: Անցեալին ընդհանրապէս յօդուածներ կը գրէի: Յատկապէս Ֆրանսա գտնուած օրերուս աւելի ազատ ժամեր ունէի. հիմա չունիմ:

ՆԵՐՍԷՍ ՆԵՐՍԷՍԵԱՆ

Ատենապետ Ա.Մ. Միություն



Հ.- Ատենապետն էք Ազգային Մարգական Միություն: Ձեր կազմակերպության մասին կրնա՞ք տեղեկություններ տալ:

Պ.- Որպէս միութիւն մեր դերն է առաջին հերթին ազգապահպանում եւ ապա բարձր մակարդակով յարաբերութիւններ հայրենիքի հետ: Այդ դերը մեր նախորդները սկսած ու յաջողապէս յառաջ տարած են 40 տարիներ առաջ եւ մենք որպէս ազգային պարտականութիւն կը շարունակենք զայն:

Հ.- Դուք եւս ձեր քոյր միութեան՝ Թէքէեան Մշակութային Միութեան նման Խորհրդային Հայաստանի շրջանին Մշակութային Կապի Կոմիտէին միջոցով հայրենիքի հետ ունեցաք դրական յարաբերութիւն: Արդեօք այդ յարաբերութիւնները ի՞նչ վիճակ կը պարզեն Հայաստանի անկախացումէն ետք:

Պ.- Ուրախալի անցեալ մըն էր որ ունեցած էինք 1965էն սկսեալ: Ցաւալի է որ այդ յարաբերութիւնները կասած են: Ասիկա ցանկալի երեւոյթ մը չէ որեւէ կողմի համար:

Հ.- Այս գաղութէն կարեւոր թիով ուսանողներ Հայաստանի մէջ իրենց բարձրագոյն կրթութիւնն ստացած են: Այսօր Ամմանի երիտասարդները կ'երթա՞ն Հայաստան՝ շարունակելու իրենց ուսումը:

Պ.- Ուրախալի իրականութիւն է որ շուրջ 150 երիտասարդներ շրջանաւարտ եղած են հայրենիքէն ու իրենց հոն ստացած ուսումով կերտած իրենց ապագան: Դժբախտաբար, այս պարագային եւս, Հայաստանի անկախացումէն ետք այդ առիթը դադրած է եւ համարեա կտրուած ենք ամէն տեսակի յարաբերութենէ:

Հ.- Յորդանանի հայ գաղութին կողմէ պատգամաւոր էիք Ազգային-Եկեղեցական Ժողովին, որ ընտրեց Ամենայն Հայոց նոր Կաթողիկոսը: Ի՞նչ տպաւորութիւններով վերադարձաք:

Պ.- Ընդհանրապէս ընտրութիւնը մշուշոտ վիճակ մը ունէր: Մշուշոտ միջոցաւ մը կար ամբողջ ժողովի ընթացքին: Արդիւնքը ըստ իս բարեյաջող եղաւ՝ երբ բազմաթիւ ընկերացիներ: Միւս

Թեկնածուները թերի նկատած էի ընտրութիւններու ժամանակ եւ հարկադրաբար ներկայ Ամենայն Հայոց Կաթողիկոսը առաջին թեկնածու նկատելով անոր տուած եմ քուէս:

Հ.- Ա.Մ.Մ.ը նոր հաւաքավայր մը կառուցելու ծրագիր ունի: Ի՞նչ է այդ ծրագրին կարելոյութիւնը:

Պ.- Տասներկու տարիներ առաջ 10,000 քառ. մետր մակերեսով հողակտոր մը գնած էինք՝ նպատակ ունենալով ապագային ակումբ մը կառուցել անոր վրայ: Այսօր մեծ թափով ձեռնարկած ենք ակումբի մը շինութեան, որպէս հաւաքավայր մեր անդամակցութեան:



Ամմանաքնակ ոսմկավար ընկերներու հետ Ա.Մ.Մ.ի ակումբին մէջ: Ռ.Ա.Կ.ի ներկուսակցական պաշարի օրերուն, օրինականութիւնը վերահաստատելու նպատակով Ռ.Ա.Կ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ յաճախակի այցելութիւններ կու տայի Միջին Արեւելքի, Ամերիկաներու եւ Եւրոպայի մեր շրջանակներուն:

Հ.- Գաղութը կ'իյնայ Երուսաղէմի հայոց պատրիարքութեան հոգեւոր առաջնորդութեան ծիրին մէջ: Ինչպէ՞ս են ձեր յարաբերութիւնները Թորգոմ Պատրիարքին հետ:

Պ.- Որպէս միութիւն մեր յարաբերութիւնները Պատրիարքին հետ ջանացած ենք որ ըլլան հարազատ միջնորդութիւն մէջ: Բայց մինչեւ օրս չենք կրցած յաջողիլ, որովհետեւ ներկայ Պատրիարք հայրը շատ բծախնդիր է, կ'ուզէ շատ ծրագրաւորուած աշխատանք տանիլ եւ կրնայ

ըլլալ որ մենք վարժուած չենք նման աշխատանքի մը: Բայց որպէս միութիւն եւ վարչական կազմ որոշած ենք գոհացում տալ Պատրիարք Տօր եւ կը յուսանք շուտով վայելել անմիջական օգուտներն այդ ճիգին:



ԺԻՐԱՅՐ ԶԲՐԹԾԵԱՆ

Տնօրէն Իզպաշեան Վարժարանի

Հ.- Այս գաղութին միակ հայկական վարժարանին կը ծառայէք մօտ 35 տարիներէ ի վեր: Ի՞նչ գնահատական կու տաք Ամմանի մէջ կատարուող ազգապահպան գործին:


Պ.- Կը խորհիմ թէ հին հայերը շատ աւելի կապուած էին իրենց լեզուին, ազգին ու աւանդութիւններուն՝ քան նոր սերունդը: Հինը շատ աւելի սիրով կը սորվէր իր մայրենի լեզուն, պատմութիւնն ու կրօնքը, քան՝ ներկայ սերունդը:

Սփիւռքի համար ես որոշ չափով յոռետես եմ ազգապահպանութեան տեսակէտէ՝ եթէ երեւոյթը չփոխուի յանկարծ եւ նոր ուժեր չգան այդ աղէտէն փրկելու մեր նոր սերունդը:

Անշուշտ այս երեւոյթին պատճառները կան: Կեանքի ըմբռնումները որոշ չափով փոխուած են: Այս դարը գիտութեան դար է, առեւտուրի դար է: Մեզմէ շատեր կը կարծեն թէ հայերէն լեզուն եւ անոր ուսուցումը աւելորդ են. այդ իսկ պատճառով կը նախընտրեն իրենց զաւակները դրկել օտար վարժարաններ: Հետեւաբար, կը զրկեն հայեցի դաստիարակութենէ: Այդ պատճառով, տղան կապուած չ'զգար իր ժողովուրդին, հայրենիքին ու լեզուին:

Հին սերունդը այդպէս չէր: Ան ունէր իր արժէքները, իր մտաւորականները, որոնք դրականօրէն մեծապէս կ'ազդէին սերունդներու դաստիարակութեան վրայ: Նկատի ունիմ մեր ուսուցիչները: Հիմա դաստիարակներու այդ ուժը գոյութիւն չունի այլեւս: Կը կարծես թէ անոնք ալ յուսահատ վիճակ մը կը ներկայացնեն ու դժգոհ են իրենց ասպարէզէն, քանի որ պէտք եղած արդիւնքը չեն ստանար իրենց մարզին մէջ:

Պիտի ուզէի որ մեր վարժարանները աւելի լաւ կազմակերպուէին, աւելի լաւ դասագիրքեր ունենայինք՝ արդիական պահանջներու գոհա-



ցում տուող: Գէթ այդպիսով նոր սերունդը զգար թէ հայեցի դաստիարակութիւնը անհրաժեշտ է հայապահպանման համար:

Հ.- Ձեր դպրոցը օրինականօրէն կապուած է Երուսաղէմի հայոց պատրիարքութեան, բայց նաեւ Հ.Բ.Ը.Մ.ը անցեալին օգտակար եղած է: Կը խորհի՞ք թէ նիթական տրուած միջոցները բաւարար են դպրոցին մատակարարման համար:

Պ.- Անկեղծ խօսելով, Երուսաղէմի պատրիարքութեան նիւթական օժանդակութիւնը բաւարար չէ: Կրնամ ըսել թէ ան միայն բարոյական է: Բարեգործականէն աւելի գոհ ենք: Հ.Բ.Ը.Մ.ը իր պարտականութիւնը լիովին կը կատարէ, հակառակ անոր որ նպաստը նուազեցուց որոշ չափով: Անցեալին որպէս նպաստը նկալ վարժարան կը ստանայինք 10,000 տոլար. այսօր՝ 5,000: Այս նուազումը եղաւ այն պատճառաբանութեամբ թէ գաղութը հարուստ է եւ պէտք է հոգայ դպրոցին ծախսերը: Ըստ իս, ճիշդ է. Բարեգործականը ճիշդ ըրաւ:

Հ.- Սակայն գաղութը կը մասնակցի՞ դպրոցին տնտեսական հոգերուն:

Պ.- Գաղութէն միայն որոշ անձեր են որ կը բերեն իրենց մասնակցութիւնը՝ օգտակար ըլլալու դպրոցին: Մատի վրայ կը համրուին անոնք: Մինչդեռ այս գաղութին մէջ կան այնպիսի հարուստ անձեր, որոնք կրնան առանձինն դպրոց մը ֆինանսաւորել: Բայց անտարբեր են:

Հ.- Բայց ինչո՞ւ է այս անտարբերութիւնը:

Պ.- Ճիշդն ըսելով, պատճառը չեմ կրնար ըսել:

Հ.- Ի՞նչ է աշակերտութեան թիւն այսօր եւ ի՞նչ եղած է թիւը անցեալին:

Պ.- Այսօր 160 աշակերտ ունինք: Անցեալին ունեցած ենք մինչեւ 185 աշակերտ: Այս նուազման պատճառներէն մին կարելի է նկատել արտագաղթը:

Հ.- Դուք Մելգոնեանի շրջանաւարտ էք եւ հետեւած էք հայագիտական դասընթացքներու: Կը շարունակէ՞ք գրականութեան նկատմամբ ձեր հետաքրքրութիւնը:

Պ.- Գրական գործեր չեմ արտադրեր թէեւ, բայց մօլի ընթերցող մըն եմ գրականութեան: Սիրող ու քաջալերող եմ հայ գրականութեան: Ունիմ գրադարան, բայց գրելու փորձեր չեմ ըրած:

Հ.- Ամմանի մէջ ի՞նչ գրական շրջանակներ կան՝ հայ մշակոյթի տարածման սատարող:

Պ.- *Գրեթէ չկա՛ն: Երկու միութիւններ այդ գործը կ'ընեն, բայց բաւարար չէ իրենց ըրածը: Դժբախտաբար համապատասխան ուժերը չկան եւ աւելի ընկերային քան մշակութային գործով կը զբաղին:*

Հ.- Կը խորհի՞ք թէ արտասահմանէն կամ Հայաստանէն զանազան անհատներ կամ մշակութային խումբեր եթէ այցելեն՝ գաղութը տարբեր ոգեշնչում մը ունենայ:

Պ.- *Ո՛չ: պարզապէս համոզումի հարց է: Մարդիկ պէտք է իրենց մտայնութիւնը փոխեն, համոզուին որ հայերէն լեզուն անհրաժեշտ է: Ան չի խանգարեր կեանքի մէջ յաջողակ դառնալուն: Եթէ կ'ուզես յետազային բժիշկ կամ երկրաչափ ըլլալ՝ հայերէն լեզուն չի խանգարեր: Օրինակներ չատ ունինք. մեր դպրոցէն շրջանաւարտ յաջողած բժիշկներ ունինք բարձր դիրքերու հասած:*

Հ.- Տուներու մէջ ի՞նչ է տիրական լեզուն այսօր:

Պ.- *Նոր սերունդը այսօր կը խօսի աղաւաղուած հայերէն մը, արաբերէնով խառն լեզու մը: Կարծես սրբագրելու ալ փորձ մը չեն ըներ: Չեն հետաքրքրուիր...: Կը գործածեն արաբերէն բառեր ու չեն ըսեր թէ անոնց հայերէնը ունինք:*

Ամենէն ցաւալին այն է, որ Հայաստանի բարձրագոյն ուսումնական հաստատութիւնները աւարտած մարդիկ, որոնք նուաճած են որոշ մակարդակ մը, արաբերէն կը խօսին իրարու հետ: Բոլորը չեն, բայց արդարութեան համար պէտք է նշել այս իրողութիւնը:

«ԱՆԿԱՒՈՒԹԻՒՆ», 5 Հոկտեմբեր 1995



Համայնապատկեր Փարիզ քաղաքի:

ՓԱՐԻԶԸ ԻՐ ՀԱՅՈՒԹԵԱՄԲ

Նախորդ դարու կեսերին արդեն մեր մտաւորականութեան համար Փարիզը եղած է Լոյսի Քաղաք ու հրապտրիչ ուստանը Եւրոպայի:

Մեծ Եղեռնէն ետք մեծաթիւ հայութիւն մը հաստատուած է Ֆրանսայի զանազան շրջանները, Փարիզէն Մարսէյ, Վալանսէն Լիոն ու Կըրնուպլ: Թէեւ երիտասարդութեան մօտ նահանջ արձանագրած է մեր լեզուն, սակայն քաղաքական պահանջատիրութիւնը զարմանալիօրէն միշտ արթուն մնացած է նորահաս սերունդին մօտ, հաւանաբար շնորհիւ անոր որ Ֆրանսան գիտէ քաղաքական դաստիարակութիւն ջամբել իր նոր սերունդներուն: Բան մը, որմէ մեծապէս օգտուած ենք հայերս, ի տարբերութիւն, օրինակ, Միացեալ Նահանգներու:

Ցեղասպանութենէն ետք, մեր մտաւորական տիտաններէն Փարիզ մնացած էին քանի մը մեծ անուններ՝ Զօպանեանի նման: Պոլսոյ պարպումէն անմիջապէս ետք, Ծահնուրներ, Ծուշանեաններ, Որբունիներ, Նարդունիներ,

Պեշիկթաշլեաններ եւ Զարոյեաններ բոլորուեցան Արտակ Դարբինեանի ու Շաւարշ Միսաքեանի շուրջ՝ կազմելով մտաւորական նոր ուժ մը:

Այդ օրերուն ազգային կեդրոն էր Փարիզը: Հո՛ն էին Ազգային Պատուիրակութեան, Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութեան, Հ.Բ.Ը.Մ.ի եւ այլ կարեւոր ազգային կազմակերպութիւններու կեդրոնատեղիները, որոնց շնորհիւ փարիզահայութիւնը մինչեւ Բ. Աշխարհամարտ կ'ապրէր բացառիկ եռուզեռ:

Այսօր ալ կը տեսնենք նման զարթօնք մը՝ երբ մեր քաղաքական կազմակերպութիւնները արթուն են. եկեղեցիներու շուրջ հաւաքուած է երիտասարդութիւն մը. «Յառաջ» կը շարունակէ հանապազօրեայ իր առաքելութիւնը. «Այբ FM» ռատիոկայանը ամէն առաւօտ ժամը 7-էն մինչեւ յետմիջօրէի ժամը 2-ը կը մտնէ հայ տուներէն ու գործատեղիներէն ներս. Գառզուներով եւ Ժանսէմներով կը հարստանայ հայ մշակոյթը. ջանք կը թափուի պահելու հայկական վարժարանները:

Եւ դեռ կայ Ծարլ Ազնաւուրը, որ մինակը կը կատարէ կազմակերպութեան մը գործը՝ հասնելու համար Հայաստանի կարիքներուն, մինչ հայկական հանրապետութեան դեսպանատան համար Ֆրանսան կ'ընձեռէ մեծ կարելիութիւններ՝ շրջանային խաղաղութեան նպաստելով:

Վերջապէս, Փէռ Լա Շէզի մէջ է տակաւին Զօրավար Անդրանիկի անիւնը: Հոնկէ՛ ան կը յիշեցնէ մեզի մեր Մեծ Երազը: Ան տուն, Ծապին Գարահիսար պիտի դառնայ այն օրը միայն, երբ մեր բանակները կտրեն Արաքսի ջուրերը:

ՎԱՀԱՆ ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ
Հայաստանի Հանրապետության
Հաւատարմատար



Հ.- Ֆրանսան քաղաքականօրէն մեծ նշանակութիւն ունի Հայաստանի համար: Ան առաջին պահէն նպաստաւոր դիրք մը բռնած է Հայաստանի եւ մեր ժողովուրդին հանդէպ՝ անկախութեան վերականգնումէն ետք: Ինչպէ՞ս կը գնահատէք այսօր Ֆրանսայի յարաբերութիւնը հայկական հանրապետութեան հետ:

Պ.- *Ճիշդ էք որ Ֆրանսան Հայաստանի մօտ կանգնած եւ բարեկամ երկիրներէն մէկն է, եւ ո՛չ միայն անկախութենէն ի վեր: Կրնանք ըսել թէ մինչեւ պաշտօնական անկախութիւնը եւս Ֆրանսան Հայաստանի շատ մօտ կեցած երկիր մըն էր, որ իր բարոյական, նիւթական եւ մանաւանդ քաղաքական աջակցութեամբ օգնած է Հայաստանին այս բոլոր տարիներու ընթացքին ու հիմա ձեւաւորուած է գործակցութիւն մը, որ անշուշտ նախկին շատոնց գոյութիւն ունեցած աւանդական-պատմական կապերը բարձրացուցած է պետական մակարդակի: Ասոր ամենանշանակալի արտայայտութիւնը եղաւ 1993-ի Մարտին երկու նախագահներու ստորագրած բարեկամութեան եւ համագործակցութեան համաձայնագիրը, որ կ'ընդգրկէ բոլոր բնագաւառները՝ տնտեսական, մշակութային, քաղաքական, ռազմական, լեզուական: Այսօր կ'ապրինք չրջան մը, երբ քաղաքական յարաբերութիւններուն կու գան աւելնալ նաեւ առեւտրա-տնտեսական կարեւոր կապեր: Ըսենք նաեւ թէ առաջին շրջանին, 92-94 թուականներուն, երբ դարաբաղեան խնդիրը իր թէժ չրջանին մէջ էր ու պատերազմական գործողութիւնները իրենց լուրջ շրջանը կ'ապրէին, Ֆրանսան շատ մեծ դեր ունեցաւ քաղաքական ու դիւանագիտական գետնի վրայ՝ ո՛չ միայն Միսսքի Խումբին մէջ իր մասնակցութեամբ խնդրին խաղաղ լուծման համար, այլեւ՝ ՄԱԿ-ի մէջ իր դերակատարութեամբ, ուր, ինչպէս գիտէք, չորս բանաձեւեր ընդունուեցան կապուած դարաբաղեան խնդրին, ուր Ֆրանսայի դերը կրնանք ըսել թէ բաւական դրական էր եւ ի նպաստ խաղաղութեան. ինչու չէ՞ նաեւ ի նպաստ Հայաստանի:*

Հ.- Հայաստան ստորագրեց Ռուսիոյ հետ 25 տարիներու խաղաղութեան դաշինք մը, ինչպէս նաեւ Հայաստանի սահմանները պաշտպանելու համա-

ձայնագիր մը: Ի՞նչ եղաւ Ֆրանսայի վերաբերումը այդ կապակցութեամբ:

Պ.- Ճիշդ այս հարցին կապակցութեամբ մասնաւոր պաշտօնական դիրքորոշում մը չէ եղած Ֆրանսայի կողմէ, բայց պէտք է ըսել որ Ֆրանսան Եւրոպայի ա՛յն երկիրն է, որ երկու խնդրի շուրջ բաւական կարծի կեցուածք ունի այսօր Ռուսիոյ հանդէպ: Միջազգային հարց դարձած այդ երկու խնդիրներն են Պոսնիան եւ Զեչնիան:

Անշուշտ այս երկուքը որոշ ընդհանուր միջոցներով կը ստեղծեն ուրիշ հարցերու պարագային, բայց չեմ կրնար ըսել թէ մասնաւոր դիրքորոշում մը եղած է Ֆրանսացիներու կողմէ մեր հարցին շուրջ:

Հ.- Միացեալ Նահանգներու մէջ լսեցինք թէ ամերիկացիներէն առաջ ֆրանսացիները կ'ուզեն Պաքոյի նախահորերէն օգտուիլ: Ատիկա անշուշտ կրնայ արգելք ըլլալ Ֆրանսայի հետ մեր ունեցած բարեկամական յարաբերութիւններուն զարգացման: Դուք ի՞նչ շահագրգռութիւն կը նկատէք Ֆրանսայի կողմէ ատրպէյճանական նախահորերուն հանդէպ:

Պ.- Ընդհանրապէս կը կարծեմ թէ Ֆրանսայի կամ որեւէ այլ երկրի յարաբերութիւնները Հայաստանի հետ պէտք չէ պայմանաւորել Ատրպէյճանի, Թուրքիոյ կամ այլ երկրի հետ Ֆրանսայի ունեցած կապերով: Օրինակ, գիտէք որ Ֆրանսան շատ լաւ յարաբերութիւն ունի Թուրքիոյ հետ, ուր մեծ ներդրումներ կատարած է. սակայն այս հանգամանքը չի խանգարեր որ Ֆրանսա շատ սերտ բարեկամական յարաբերութիւն մշակէ նաեւ Հայաստանի հետ: Նոյնը կը վերաբերի Ատրպէյճանի: Այս վերջին առումով թէական եւ անորոշ կէտեր շատ կան. ինչպէս՝ նաւթամուղին չինարարութեան հետ կապուած ծրագիրներն ու պայմանները: Կը կարծեմ որ Ֆրանսան այդ կապակցութեամբ յստակ կեցուածք չունի եւ դժուար է ատոր վրայ հիմնել որոշ քաղաքականութիւն մը Ատրպէյճանի հանդէպ:

Հ.- Նոր Սահմանադրութիւնը կ'ըստի թէ նախագծուեցաւ առաւելաբար Նախագահ Լեոն Տէր Պետրոսեանի ազդեցութեամբ: Արդեօք ֆրանսական սահմանադրութենէ՞ն գերշնչուած է հայկականը:

Պ.- Ամբողջովին չէ, բայց կան կարեւոր նմանութիւններ Ֆրանսականին հետ: Աշխարհի քանի մը յայտնի սահմանադրութիւններէն է Ֆրանսայինը՝ ամերիկեանի կողքին: Կան այսպիսի քանի մը սահմանադրութիւններ, որոնք օրինակ ծառայած են այլ երկիրներու: Նախագահ-խորհրդարան յարաբերութիւնները, նախագահ-կառավարութիւն յարաբերութիւնները նման են Ֆրանսականին: Կրնամ ըսել թէ մեր ունեցածը որեւէ այլ սահմանադրութեան պատճէնը կամ նմանակը չէ: Ֆրանսա-

կանը կարեւոր դեր խաղացած է եւ պէտք է ըսել որ Ֆրանսացի մասնագէտներ ժամանակին իրենց մասնակցութիւնը բերած են որոշ չափով հայկական սահմանադրութեան ձեւաւորման շրջանին ու խաղացած իրենց դրական դերը:

Հ.- Ներդրումներու խօսքը ըրիք քիչ առաջ: Ի՞նչ գործնական ներդրումներ կատարած է Ֆրանսա Հայաստանի մէջ:

Պ.- Պէտք է ըսեմ որ այսօր աւելի շուտ հող պատրաստուած է Ֆրանսական ներդրումներու համար, քան՝ ներդրումներ կատարուած: Ծանօթ է թէ Ֆրանսա նոր անկախացած երկիրներու շուկաներուն մէջ աւելի ուշադրութիւն կը դարձնէ Ֆրանսական մշակոյթի եւ լեզուի տարածման: Ֆրանսացիները տնտեսական ներդրումներէ աւելի մշակութային մարզի մէջ առաջ դացած են: Նկատի ունիմ այն՝ որ Ֆրանսա բաւական աշխատանք կը տանի Գիւմրիի, Վանաձորի եւ այլ քաղաքներու մէջ Ֆրանսական դպրոցներու շինարարութեան եւ անոնց աջակցելու ուղիւթեամբ: Անշուշտ կան նաեւ համատեղ ձեռնարկութիւններ: Վերջիններէն է, օրինակ, Արֆրակազի համատեղ ընկերութիւնը, որ շատ մեծ ապագայ ունի: Բայց ուղղակի լուրջ ներդրումներ կրնանք ըսել որ այսօրուան դրութեամբ տակաւին չեն կատարուած: Այդ ալ իր բացատրութիւնն ունի անշուշտ:

Հ.- Քաղաքականօրէն համարատու էք, անշուշտ, Հ.Հ. Արտաքին Գործոց Նախարար Վահան Փափագեանին: Ինչպէ՞ս կը գնահատէք անոր դերը Հայաստան-Ֆրանսա յարաբերութիւններու առումով:

Պ.- Վահան Փափագեանին դերը շատ մեծ է այս յարաբերութիւններուն մէջ, որովհետեւ նախ ինք եղած է Ֆրանսայի մէջ Հայաստանի առաջին հաւատարմատարը, հինգ ամսուան շրջանի մը համար, եւ փաստօրէն առաջին հիմքերը ինք դրած է: Այնուհետեւ, ան շատ հանգիստութեան ունեցած է Ֆրանսայի կարեւոր քաղաքագէտներու հետ, ինչպէս՝ Պրն. Ալէն Ժիւֆէի, ո՛չ միայն Ֆրանսայի մէջ, այլեւ՝ տարբեր առիթներով միջազգային միջոցառումներու ժամանակ: Պէտք է ըսել որ իր դերը բաւական մեծ եղած է այս կապերու ամրապնդման մէջ:

Հ.- Ֆրանսա-Հայաստան յարաբերութիւններուն մէջ կարեւոր դեր վերցուցած է սփիւռքահայութեան սիրելի Ծարլ Ազնաւուրը, մանաւանդ երկրաշարժէն ետք մարդասիրական հսկայ ծառայութիւններով: Կը փափաքինք ձեր գնահատականը լսել այս մասին:

Պ.- Ազնաւուր ունէր շրջուն դեսպանի պաշտօն եւ իր կազմակերպու-

Թիւնը՝ *Aznavour pour l'Armenie*, շատ յարգուած է ո՛չ միայն հայերու, այլեւ Ֆրանսացիներու մօտ: Անշուշտ նկատառելի դեր ունի Ազնաւուրի անունն ու համբաւը: Այս տարի անոր վստահուեցաւ նոր պաշտօն մըն ալ՝ UNESCO-ի մէջ Հայաստանի ներկայացուցիչի պաշտօնը: Ան շատ յաջող կերպով կը վարէ այդ դերը եւ կը կարծեմ թէ UNESCO-ի հետ Հայաստանի կապերուն օգտակար պիտի ըլլայ ինք:

Հ.- Անշուշտ կապեր ունիք տեղական հայկական համայնքին հետ: Ինչպէ՞ս ընդունեց ձեզ ֆրանսաֆայութիւնը եւ ինչպիսի՞ կապեր հաստատած էք ազգային կազմակերպութիւններու հետ:

Պ.- Գաղութը առաջին օրէն ջերմօրէն ընդունած է դեսպանատունն ու անոր անձնակազմը: Անշուշտ եղած է սպասումի պահ մը: Նաեւ, առաջին օրէն եղած են մարդիկ, որ իրենց սահմանին մէջ աջակցած են դեսպանատան, մանաւանդ երբ կարիքը մեծ էր:

Յետագային բարեկամներու շրջանակը աւելի ընդարձակուած է մեր աշխատանքին շնորհիւ, որ վստահութիւն ներշնչած է ազգայիններու:

Նոյնը կը վերաբերի միութիւններու եւ կազմակերպութիւններու: Մենք փորձած ենք հաւասարապէս մօտենալ համայնքին, առանց աջ ու ձախ փնտռելու: Յարաբերութիւնները միշտ ալ լաւ եղած են եւ նոյնիսկ նուրբ պարագաներու մէջ մեր կապը համայնքին հետ եղած է հեզասահ:

Հ.- Կ'իմանամ թէ այս գեղեցիկ դեսպանատունը նուէրն է ֆրանսաֆայ գաղութին: Ինչպէ՞ս պատահեցաւ որ ունեցաք այս շէնքը:

Պ.- Բախտաւոր ենք նման շէնք մը ունենալով: Կարծեմ Հայաստանի դեսպանատուններէն քիչեր այսպիսի կառոյց ունին: Մանաւանդ Փարիզի նման քաղաքի մը մէջ Հայաստանի վայել էր ունենալ այսպիսի դեսպանատուն մը: Յարդ ունինք 25 դեսպանատուներ, որոնք իրաւակա-նօրէն հաւասար են իրարու, բայց կան քաղաքներ, որոնց ազդեցութիւնը աւելի կարեւոր է: Փարիզ այդ քաղաքներէն է:

Դեռ 1945 թուականին Ֆրանսահայ համայնքը գնած է շէնք մը, որ շրջան մը իբրեւ համայնքային կեդրոն գործածուած է *Maison Nationale Arménienne* անուան տակ: Պայմաններու բերումով, այդ շէնքը ծախուած է եւ անոր գումարը ի պահ դրուած առաջնորդարանին մօտ: Անկախութենէն ետք, համայնքին կողմէ նախաձեռնութիւն մը եղաւ եւ ի վերջոյ ընտրուեցաւ այս շէնքը, որ դրուեցաւ մեր տրամադրութեան տակ: Մենք երախտապարտ ենք Ֆրանսահայ ո՛չ միայն այսօրուան գաղութին, այլեւ 40-ական թուականներու այն սերունդին, որ դժուարին պայման-ներու տակ, Աշխարհամարտէն անմիջապէս ետք, գնած էր այդ շէնքը:

Հ.- Ինչպէս խորհրդային շրջանին, վստահաբար այս օրերուն ալ ֆրանսահայ գաղութը պահանջն ունի հայապահպանման աշխատանքներուն: Այդ կ'ապահովուէր Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէին խողովակով: Արդեօք ինչո՞վ մեր ներկայ պետութիւնը պիտի կարենայ օգտակար ըլլալ Ֆրանսայի եւ այլ երկիրներու հայ գաղութներու հոգեմտաւոր պահանջներուն:

Պ.- Այս շատ լուրջ խնդիր մըն է: Քանի մը տարի Հայաստանը պէտք պիտի ունենայ սփիւռքահայութեան տարբեր բնոյթի՝ մասնագիտական եւ նիւթական օգնութիւններուն: Սակայն հայապահպանումը բնագաւառ մըն է որ երբեք ուշացում չի թոյլատրեր: ամէն տարուան ուշացումը վնաս մըն է ազգապահպանման ձեւը գործին: Հայաստանն այսօր քիչ բան կրնայ ընել իր սուղ միջոցներով, բայց վաղը աւելի լայն միջոցներով վստահաբար պիտի օգնէ ձեզի:

Մեր ղեկավարութեան մօտ այսօր կայ այդ մտահոգութիւնը, թէեւ նախկին իմաստով Սփիւռքահայ Կոմիտէ մը գոյութիւն չունի: Բայց ստեղծուած է սփիւռքի հարցերով զբաղող վարչութիւն մը արտաքին գործոց նախարարութեան մէջ: Այլ նախարարութիւններու մէջ եւս կը գործեն սփիւռքով զբաղող բաժիններ: Բայց ճիշդ է որ այս կառոյցները տակաւին չեն խաղար իրենցմէ ակնկալուած դերը:

Կը կարծեմ որ նաեւ մեր ղեսպանատուները այսօր մեծ դեր ունին կատարելիք: Մասնաւորապէս մեր ղեսպանատուներ, օրինակ, փորձած է իր կարողութեան սահմաններուն մէջ գէթ բարոյապէս, նաեւ քիչ մըն ալ քաղաքականապէս, աջակցիլ հայկական դպրոցներու հիմնումին կամ եղածներու ընդլայնումին ու զարգացման: Կարծեմ որոշ դրական դեր ունեցած ենք այս գործին, ինչպէս նաեւ պաքալորէայի մէջ հայերէն քննութեան ներմուծման մէջ: Այս վերջինը կը կազմէր մէկ կէտը հայ-



Փարիզի դեսպանատան մէջ հանդիպում Հայաստանի Հանրապետութեան դեսպան Վահան Տէր-Ղեւոնդեանի հետ ի ներկայութեան ընկերներ Նազարէթ Թօփալեանի, նախկին երկարամեայ օգնական խմբագիր Պէյրութի «Զարթօնք» օրաթերթի, եւ գեղանկարիչ Գրիգոր Նորիկեանի, երկուքն ալ փարիզաբնակ:

Ֆրանսական պայմանագրութեան, ուր կ'ըսուէր թէ երկու երկիրները փոխադարձաբար իրարու լեզուները տարածելու պիտի նպաստեն:

Անշուշտ դեռ կատարելիք կայ եւ հոն է որ Հայաստանը իր դերը պիտի խաղայ, որպէսզի արտասահմանի հայութիւնը զգայ իր հայրենիքին օգնութիւնը իբրեւ պետականութիւն:

Հ.- Երկու տարի առաջ Նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեան յայտարարեց թէ սփիւռքի մէջ քաղաքական կազմակերպութիւններու դերը աւելորդ է՝ թերագնահատելով աւանդական կուսակցութիւններու գործունէութիւնը: Երկուքուկէս տարի է որ արտասահման էք որպէս հայահոծ գաղութով երկրի մը Հայաստանի դեսպանը: Ինչպէ՞ս կը գնահատէք Նախագահին յայտարարութիւնը: Արդեօք փոքր նրբերանգով մը անհիմն կը գտնէ՞ք զայն, թէ կը բաժնէք նոյն տեսակէտը:

Պ.- Այդ յայտարարութիւնը յսպէս կը գնահատեմ: Այս կազմակերպութիւնները (եթէ արմենականութիւնն ալ հաշուենք ռամկավարներու պարագային) ժառանգորդն են 19-րդ դարու վերջի կազմակերպութիւններուն: Անշուշտ կարգ մը ծրագրային բարեփոխումներու կարիքը կայ: Երբ այդ կուսակցութիւններուն մէջ պատրաստակամութիւն չ'երեւիր ձեւով մը փոխելու ծրագիրներն ու մեթոտները՝ հարց է...: Հայ պետական կեանքին մէջ հսկայ փոփոխութիւն մը տեղի ունեցած է: Առաջ գոյութիւն չունէր անկախ Հայաստան մը. այսօր ունինք զայն: Կը նշանակէ թէ քաղաքականութեամբ զբաղող բոլոր մարդիկ ու կազմակերպութիւնները, որոնք Հայաստանի հետ կապ ունին, պիտի վերանային իրենց ծրագիրներուն եւ համապատասխան բարեփոխումներ մտցնեն անոնց մէջ: Եթէ այս չ'ընեն՝ կը նշանակէ թէ անոնք ժամանակավրէյ են: Ատիկա լա՞ն է թէ վատ՝ թո՛ղ պատմութիւնը որոշէ:

Հ.- Պրն. դեսպան, Նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի Դեկտ. 28-ի յայտարարութեամբ Հայաստանի մէջ Դաշնակցութեան գործունէութեան առկախման հետեւանքով կրնաք դժուարութիւններու հանդիպած ըլլալ Ֆրանսայի մէջ: Ինչպէս այլուր, վստահ եմ հոս ալ Դաշնակցութիւնը արգելք եղաւ Հայաստան Հիմնադրամի զարգացման եւ Հայաստան-սփիւռք տնտեսական յարաբերութիւններու թէ այլ բնագաւառներու մէջ՝ լծուելով այսօրուան իշխանութեան դէմ քարոզչական արշաւի: Ի՞նչ համեմատութիւններու հասաւ Ֆրանսայի մէջ այդ հակա-բորբակաւոր:

Պ.- Պէտք է ըսեմ որ ասիկա նախորդ հարցին շարունակութիւնն է եւ նոյն պատասխանը շարունակելով, ըսեմ թէ երբ կ'ականարկէի ծրագիրներու, մեթոտներու եւ մօտեցումներու մէջ սրբազրութիւններու եւ

բարեփոխումներու՝ առաջին հերթին այդ կը վերաբերէր Դաշնակցութեան: Պարզ իրողութիւն է թէ կուսակցութիւն մը ուրիշ կուսակցութեան մը հետ կրնայ ունենալ գաղափարական վէճ: Աշխարհի մէջ ընդունուած բնական երեւոյթ մըն է այս: Այդ վէճը իր լուծումը պէտք է գտնէ խորհրդարանական պայքարի մէջ, օրինական (լեկալ) պայքարի մէջ կամ ընտրութիւններու միջոցով: Կուսակցութիւն մը երբ պետութեան դէմ կը գործէ, մանաւանդ երբ այդ պետութեան օրէնքներուն համապատասխան կարգավիճակ (սթաթիւս) մըն ալ չունի, ոչ մէկ պետութեան համար ընդունելի է:

Ուրիշ պետութիւններու պարագային յաճախ կը պատահի որ կարգ մը քաղաքական հարցեր ընդունինք որպէս բնականոն վիճակ. սակայն չենք ընդունիր որ այդ նոյնը վերաբերի նաեւ մեր երկրին ու մեր ժողովուրդին...:

Ինչ կը վերաբերի բացասական անդրադարձներուն, հիմնականը քարոզչութիւնն էր անշուշտ: Դաշնակցութիւնը բաւական ճիւղաւորուած հաստատութիւններ ունի գաղութին մէջ, ինչպէս սփիւռքի տարածքին, աւանդականօրէն իրեն հասած մամուլով, ձայնասփիւռով եւ կապերով: Ան այս բոլորը ի գործ կը դնէ կուսակցական շահերու համար. բայց իր հակա-բորբականտը վերջին հաշուով օգտակար չէ իր իսկ շահերուն, որովհետեւ շատ անդամներ ի վերջոյ պիտի դադրին անդամակցելէ Հ.Յ.Դ.ի: Կուսակցութեան շարքերուն մէջ կան հայրենասէր մարդիկ, որոնք նպատակը երբեք չէ յաւերժ պայքարիլ հայրենիքի դէմ:

Հ.- Կ'ըսեն թէ Հայաստանի ներկայ իշխանութիւնները Հայոց Համազգային Ծարժումին (Հ.Հ.Ծ.) տիրապետութեան տակ են: Դուք իբրեւ դեսպան կը զգա՞ք նման տիրապետութիւն մը կամ ճնշում մը:

Պ.- Ո՛չ: Քիչ առաջ կը նշէի թէ լայն մօտեցում մը ունինք համայնքին նկատմամբ, անկախաբար անոնցմէ որոնք կոչու ու բացասական դիրք ունին հայրենիքի հանդէպ եւ որոնք առտուընէ իրիկուն կը հայհոյեն -եւ ոչ թէ կը քննադատեն- իշխանութիւններուն: Նոյնիսկ այդ մարդոց նկատմամբ դեսպանատունը ունի հանդուրժող ու լայնախոհ մօտեցում: Այդ մօտեցումը Հայաստանէն թելադրուած է: Եթէ նեղ կուսակցական ճնշում մը ըլլար դեսպանատուններու վրայ՝ տարբեր կրնար ըլլալ պարագան: Բայց այդ բանը չի կրնար ըլլալ, որովհետեւ դեսպանատունները երկիրը կը ներկայացնեն:

Հ.- Ի՞նչ անձնակազմ ունի ձեր դեսպանատունը:

Պ.- Այսօրուան դրութեամբ վեց հոգիներէ բաղկացած է ան: Հայաս-

տանէն եկած երկուքս՝ ես եւ Պրն. Համլէտ Գասպարեանը, դիւանագէտ ենք. միւս չորսը Ֆրանսաբնակ են:

Հ.- Հարցադրողներ առաջին հարցումը ընդհանրապէս կ'ընեն հարցադրողին անձին ու գործին մասին: Ուզեցի վերջաւորութեան թողուլ այդ հարցումը: Ինչո՞վ զբաղած էք արդեօք նախքան անկախութեան հռչակումը:

Պ.- Անկախութենէն առաջ աշխատած եմ գիտական բնագաւառի մէջ: Համալսարանն աւարտելէ ետք, գործած եմ Գիտութիւններու Ակադեմիայի Պատմութեան Ինստիտուտին մէջ: Մասնագիտութեամբ պատմաբան եմ ու բանասէր միջին դարերու եւ Միջին Արեւելքի հետ Կիլիկիոյ թագաւորութեան յարաբերութիւններուն գծով: Ծնած եմ Երեւան: Հայրս Եգիպտոսէն ներգաղթած է. իսկ մայրս՝ Պէյրութէն:*

Զբաղած եմ միջնադարի դիւանագիտական յարաբերութիւններով: Այնուհետեւ թէզ պաշտպանած եմ, հեղինակած եմ գիրք, հրատարակած եմ յօդուածներ: Ապա, Ղարաբաղեան Շարժումի ընթացքին, սկիզբէն ի վեր մասնակցած եմ անոր իբրեւ հետեւորդ եւ ոչ թէ առաջնորդ:

1991-ի վերջերուն հրաւիրուած եմ նախագահական աշխատակազմ՝ իբրեւ օգնական Նախագահին, մօտ մէկուկէս տարի: Հոն կը զբաղէի սփիւռքի հետ յարաբերութիւններու հարցերով եւ նամակագրութեամբ: 1993-ի Մարտին նշանակուած եմ Փարիզի հաւատարմատար:

Հ.- Ժամանակ կը գտնէ՞ք ձեր անձնական մասնագիտութեան վերաբերեալ աշխատանք կատարելու. գէթ կարդալու...:

Պ.- Շատ, շատ քիչ ժամանակ: Կրնաք երեւակայել թէ ի՞նչ կը նշանակէ Փարիզի մէջ երկու դիւանագէտով դեսպանատուն պահել:

Հ.- Առաջարկ մը ունիմ, քանի Կիլիկեան շրջանի մասնագէտ էք: Հայոց վերջին թագաւորը՝ Լեւոն Զ., Ֆրանսա թաղուած է: Ինչո՞ւ մեր Նախագահին Ֆրանսա այցելութեան առիթով ուխտագնացութիւն մը չկազմակերպէք անոր շիրմին: Այդպիսով կամուրջ նետած կ'ըլլանք Լեւոն Զ. թագաւորին եւ Լեւոն Ա. նախագահին միջեւ...:

Պ.- Ինչո՞ւ չէ (ծիծաղ): Թէեւ գիտնալու էք որ Ֆրանսական յեղափոխութեան ժամանակ երբ այդ գերեզմանաքարերը տեղաշարժած են, մնացած է միայն քարը. ածիւնը չկայ...:

* Դեսպանին մօրենական հայրը եղած է Հրանդ Տէվէճեան ծանօթ խմբագիրը, որ 1946-ին Պէյրութէն ներգաղթած է Հայաստան, որպէս զոհերէն մէկը պաղ պատերազմին:

ԳԻՒՏ ԱՐՔ. ՆԱԳԳԱՇԵԱՆ

Առաջնորդ Փարիզի եւ Հայրապետական
Պատուիրակ Արեւմտեան Եւրոպայի



Հ.- Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի անդամ էք եւ կը լսենք թէ կը պատրաստուիք սօցնելու քրիստոնէութեան Հայաստան մուտքի 1700-ամեակը: Նոր վերադարձած ըլլալով այդ կապակցութեամբ գումարուած ժողովներէն, կրնա՞ք տալ վերջին լուրերը:

Պ.- Նա՛խ, ողջո՛յն, Յակոբ, ուրախ եմ քեզ վերագտնելու, քանի մանկութեան հարազատներ ենք՝ բարեկամ ըլլալէ աւելի: Ուրախ եմ որ առիթը կը ներկայանայ այսպէս խօսակցութիւն մը փոխանակելու, մանաւանդ «Անկախութիւն» երկշաբաթաթերթին համար ունենալու հարցազրոյց:

Ճիշդ է, արդարեւ, կը վերադառնամ էջմիածնէն: Գարեգին Ա. ընդառաջելով Ազգային-Եկեղեցական Ժողովի փափաքին, վերակազմեց Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը՝ 5 նոր անդամներ աւելցնելով հիներուն վրայ: Մինչ այդ, կը պատրաստուի Հայց. Եկեղեցւոյ նոր սահմանադրութիւնը: Այդ նպատակով է որ Վեհափառ Հայրապետը իր իմաստուն խոհականութեամբ յարմար դատեց պահպանել անցեալ շրջանի մարմինը Գերագոյն Խորհուրդի, առանց փոփոխութեան, անոնց վրայ աւելցնելով հինգ անձեր, որոնցմէ մէկն ալ ես: Ուրեմն գացած էի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի ժողովներուն մասնակցելու:

Պէտք է ըսել որ իրապէս մտահոգ, լուրջ, աշխատանքային ծրագրումով կազմակերպուած ժողովական նիստեր էին: Կրնամ ըսել որ ցայդօր պատեհութիւն չէի ունեցած պատասխանելու նման գերագոյն մարմնի անդամակցութեան: Շատ սրտբաց, յստակ ժողով էր ղեկավարութեան տակ Ամենայն Հայոց Հայրապետին: Անշուշտ յաջորդական նիստերու ատենապետներն էին երկու պատրիարքները - Երուսաղէմի եւ Կոստանդնուպոլսոյ: Բայց Վեհափառն էր որ Հայրապետութեան հետ առնչուած ծրագիրներու ներկայացումը կը կատարէր եւ կը թողուր որ ժողովականները արտայայտուին առանց վերապահութեան, կաշկանդումի:

Անոր կողքին, եկեղեցւոյ վերականգնումի մտահոգութեամբ, Մայր Աթոռի արժանապատուութեան բարձրացումին եւ անոր տարածումին համար նախատեսուած օրակարգեր կային, որոնք քննարկումի առարկայ եղան:

Ասոնց մէջ էր նաեւ 1700-ամեակի հանդիսութիւնը, որուն համար Վեհափառ Հայրապետը Գերագոյն Հոգեւոր Խորհուրդին ներկայացնելով հարցը, յատուկ յանձնախումբ մը ստեղծեց, որ մամուլէն ծանօթ է ձեզի արդէն: Կիւիկեան Աթոռը, երկու պատրիարքութիւնները եւ պետութիւնը կը մասնակցին: Յանձնախումբին գործն է հիմակուընէ ծրագրել, կազմակերպել, հետապնդել աշխատանքները՝ վեր բերելով Հայ Եկեղեցւոյ երկու հազարամեակներու վրայ տարածուող աշխատանքը: Մեր նիստերէն ետք, յանձնախումբի անդամները ժողով ունեցան ու հաղորդագրութիւն մը ղրկուեցաւ ժողովուրդին:

Հ.- Կը պահէ՞ք տակաւին Հայրապետական Պատուիրակի ձեր հանգամանքը, եւ, քանի այս նիստին մասին կը խօսինք, ինչո՞ւ կը կոչուիք Փարիզի Առաջնորդ եւ ո՛չ՝ Ֆրանսայի:

Պ.- Բնականաբար Գերագոյն Խորհուրդի անդամ ըլլալով ես «չեմաթիք» պատկերացումը ըրի: Կը պահեմ Հայրապետական Պատուիրակի հանգամանքս:

19-րդ դարուն ծնունդ առած է Ֆրանսահայ գաղութը եւ այդ ատեն հայրապետական պատուիրակութիւնը կը գտնուէր Մանչեսթրը, Անգլիա: Այդ շրջանի վերջին Պատուիրակն էր Գէորգ Արք. Իւթիւճեանը:

1902-ին Փարիզի մէջ կառուցուեցաւ Մանթաշեանցի ամբողջական նուիրատուութեամբ այս մայր տաճարը, որ արտասահմանի վայել ու գեղակերտ եւ պատուաբեր ամենէն գեղեցիկ տաճարն է: Անունն ալ ուշադրութեան առարկայ է: Մեր ժողովուրդի զանգուածը կազմուեցաւ Եղեռնի հետեւանքով այս կողմերը ապաստան գտնող հայերու խմբակցութիւններով: Անկէ առաջ կար գաղութ, բայց փոքրաթիւ էր:

Փարիզի առաջին հովիւը եղած էր այն ատեն դեռ քահանայ Վռամ-չապուհ Արք. Քիպարեանը, որ Խրիմեան Հայրիկէն կոնդակ ունէր ստեղծելու կազմակերպուած հոգեւոր միութիւն մը:

Գրիգորիս Պալաքեան Սրբազանը, որ երիտասարդ վախճանեցաւ, նշանակուեցաւ Հայրապետական Պատուիրակ Հարաւային Ֆրանսայի: Մտահոգութիւնը այն էր, որ հարաւային Ֆրանսայի զանազան խմբակցութիւնները կազմակերպէ եկեղեցիներու շուրջ եւ ձեւով մը թեմ ստեղծուի: Զյաջողեցաւ:

Անկէ ետք, Գարեգին Յովսէփեանց Ամերիկայէն Նուիրակ ղրկուեցաւ, իսկ Թորգոմ Պատրիարք Գուշակեանն ալ՝ Երուսաղէմէն: Եկան Ֆրանսա եւ ջանացին Մարսէյի մէջ ստեղծել համակարգ գոյութեամբ կազմակերպութիւն: Մտայնութիւններու եւ այլ պատճառներ արգելք եղան:

Արտաւազդ Արք. Սիւրմէեան նոյն նպատակով Հայրապետական

Պատուիրակ նշանակուեցաւ: Գիտէք անոր վախճանը եւ անոր տուն տուող պատճառները: Չեմ ուզեր այդ տխուր էջերուն անգամ մը եւս անդրադառնալ:

Իմ երջանկայիշատակ նախորդը՝ Սերովբէ Արք. Մանուկեան, բացառիկ անձնաւորութիւն մը, նոյնպէս նշանակուեցաւ Հայրապետական Պատուիրակ: Միշտ բոլորին ալ առաքելութիւնն էր՝ Խորէն Ա., Գէորգ Ե., Գէորգ Զ. եւ Վազգէն Ա. կաթողիկոսներու օրերէն, Ֆրանսան մէկ թեմով կազմակերպ կառոյցի վերածել:

Դժբախտաբար, բոլորն ալ ձախողեցան: Սերովբէ Սրբազանն ալ ճամբորդեց ամէն տեղ, ջանաց համոզել, բայց չյաջողեցաւ: Պատճառները քաղաքակա՞ն էին, անձնասիրակա՞ն էին: Փակագիծի մէջ ըսեմ թէ կազմուած էին Ազգային Միութիւններ (Union National), որոնց մէջ ամէն դաւանանքի պատկանող մարդիկ կային: Այս կազմակերպութիւնները իրենց իրաւասութիւններէն չզիջեցան: Սերովբէ Սրբազան յաջողեցաւ Փարիզի շրջանի բոլոր եկեղեցիները կազմակերպել Ֆրանսական օրէնքներու համապատասխան կրօնական ընկերակցութեամբ՝ մէկ կրօնական վարչութեամբ: Կրօնական Վարչութիւն անունը թերեւս խորթ թուի, բայց ան իր բովանդակութեամբ եւ նպատակով յար եւ նման է Հայ Եկեղեցւոյ աւանդական կարգին: Նպատակ կար որ Փարիզի այս կրօնական ընկերակցութիւնը տարածուի բովանդակ Ֆրանսայի վրայ: Վալանսի մէջ կարելի եղաւ կազմակերպել կրօնական ընկերակցութիւն մը, որ ձեռբազատուեցաւ Ազգային Միութենէն: Տեսինի մէջ եւս: Բոլորն ալ մաս կազմեցին փարիզեան ընկերակցութեան:

Այս օրինակին հետեւելով, հարաւային Ֆրանսայի մէջ կարգ մը թաղամասեր կրօնական վարչութիւններ ստեղծեցին: Երեւակայեցէք, մինչ այդ կարգ մը եկեղեցիներ անհատներու անունով արձանագրուած էին քաղաքապետական տոմարներու մէջ:

Պարզ յիշեցումի համար է որ կ'ըսեմ այս. չեմ ուզեր անցեալի տխուր դէպքերը քրքրել: Միշտ խառնակ եղած է կացութիւնը: Կարծէք միջերկրականեան երկիրներու իւրայատուկ վիճակն է...: Գիտէք 1963-ին ինչ պատահեցաւ: Վազգէն Ա. եւ Խորէն Ա. կաթողիկոսները ողջագորուեցան Երուսաղէմի մէջ: Անկէ ետք, ըսուեցաւ թէ իրենց իրերհասկացողութեան փորձաքարը Մարսէյլը պիտի ըլլայ: Խորէն Կաթողիկոս Մարսէյլէն ետ քաշեց Արտաւազդ Սրբազանը (Թրթռեան):

1984-ին, երբ Սերովբէ Սրբազան վախճանեցաւ ու Փարիզի Կրօնական Վարչութիւնը զիս Առաջնորդ ընտրեց (Սերովբէ Սրբազանը Առաջնորդ ալ ընտրուած էր իր օրին, քանի որ կանոնագրութիւնը այդպէս կը պահանջէր իր տրամադրութեամբ), Վազգէն Ա. Կաթողիկոս անմիջապէս

զիս Առժամեայ Կաթողիկոսական Պատուիրակի Տեղակալ նշանակեց, որպէսզի Ֆրանսան մէկ թեմի մտահոգութեամբ երեք շրջաններով բաժնուած առաջնորդական թեմի կանոնադրի նախագիծ մը պատրաստուի բոլորին համագործակցութեամբ:

Սերովբէ Սրբազան փոխանորդներ նշանակած էր յանձինս Նորվան Սրբազանի (Լիոնի շրջանին համար) եւ Յակոբ Սրբազանի (հարաւային Ֆրանսայի համար): Մինչ այդ, Տարօն հայր սուրբը (Ճերեճեան) Նիսը առանձին շրջան կ'ուզէր ընել...:

Սերովբէ Սրբազան այդ նշանակումները ըրած էր, որպէսզի իր անմիջական հովանաւորութեամբ անոնք հետապնդէին մէկ առաջնորդական թեմի կազմութիւնը ամբողջ Ֆրանսայի համար: Սա ալ ըսեմ որ մինչեւ 1984 տակաւին Լիոնը Ազգային Միութեան կ'ենթարկուէր:

Ի վերջոյ Վեհափառ Հայրապետը ըսաւ թէ կ'ուզէ երեք շրջաններով մէկ թեմ տեսնել: Կաթողիկոսական Պատուիրակութիւնը զբաղեցաւ Եւրոպայի այլ շրջաններով եւս՝ Պելճիքա, Հոլանտա, Զուիցերիա: Այս ընթացքը իրագործելու նպատակով կազմուեցաւ օրէնսդէտներէ բաղկացած մարմին մը, որ նախագիծը պատրաստեց թեմական մէկ մարմնի կազմութեան, 1985-ին: Նախագիծը զրկուեցաւ Վեհափառ Հայրապետին, որ զայն գտաւ համապատասխան իր ակնկալութիւններուն եւ հրահանգեց աւելի ընդլայնելով հասցնել լրումի:

Մինչ այդ, 1986-ին, յանձնախումբի բոլոր անդամները համաձայնագիր մը հրապարակեցին, ըսելով թէ մինչեւ թեմական կազմակերպութեան իրականացումը իւրաքանչիւր եկեղեցի պարտի իր կրօնական ընկերակցութեան օրէնքը նոյնական ընել, որպէսզի մէկ ոգիով իրականանայ թեմականի գաղափարը, որովհետեւ անորոշութիւններ կային. տեղ մը եկեղեցին Ազգային Միութեան էր, ուրիշ տեղ՝ կրօնական ընկերակցութեան:

Համաձայնագիրը դրուեցաւ գործադրութեան: Կարգ մը եկեղեցիներ իրենց կրօնական ընկերակցութեան օրէնքը կազմեցին, մինչ ուրիշներ մինչեւ օրս այս ուղղութեամբ ծրագիրներ կը մշակեն...:

1987-ի վերջաւորութեան Լիոնի մէջ քանի մը նիւթով քննարկումը եղաւ նոր նախագիծի մը, որ յանձնուեցաւ Մայր Աթոռին:

1988-ի Մայիսին Ամենայն հայոց Հայրապետը զիս կարգեց Հայրապետական Պատուիրակ Արեւմտեան Եւրոպայի ու նշանակեց փոխանորդներ՝ Նորվան Սրբազանը Լիոնի համար եւ Տարօն Սրբազանը՝ հարաւային Ֆրանսայի:

Ասկէ չորս տարիներ առաջ, Յակոբ Սրբազանի (Վարդանեան) հրաժարումէն ետք, ինծի համար անբացատրելի պատճառներով կարգ մը

անհատներ յայտարարեցին թէ հարաւային Ֆրանսան առանձին թեմ է, եւ թէ Խորէն Ա. Մուրադեկեան զայն վաւերացուցած է, հետեւաբար Փարիզի ենթակայութեան հարց չկայ: Ու այսպէս, խուլերու խօսակցութիւն մը ծայր տուաւ: Քանիցս գացի բացատրելու, բացատրուելու, նոյնիսկ անարգական խօսքեր հանդուրժելով մտիկ ընելու: Իրենք կանոնադիր մը պատրաստեցին ու ղրկեցին Վեհափառին: Բացատրեցի որ եկեղեցական կարգապահութիւնը կը պահանջէ որ նուիրապետական կարգով ընթանան նման կանոնադրային փոփոխութիւններ ու թղթակցութիւններ: Վեհափառ Հայրապետը այդ կանոնադիրը ինծի փոխանցեց՝ դա՛րձեալ երեք շրջաններով մէկ թեմի գաղափարը նշելով:

Տարօն հայր սուրբը (այժմ Սրբազան), որ Նիսը անջատել կ'ուզէր, հիմա մոռցած է այդ առաջարկութիւնները...:

Խումբ մը եկեղեցիներ կը մնան հաւատարիմ Վեհափառ Հայրապետին յայտարարութեան: Պէտք է ըսեմ ի պատիւ այն եկեղեցիներուն, որ ժամանակին խնդրոյ առարկայ էին, թէ հաւատարիմ կը մնան հայրապետական ցուցմունքներուն՝ առանց իրենց քաղաքական նախասիրութիւններուն հետեւանք տալու:



Փարիզի Աբ. Յովհաննէս Մկրտիչ մայր տաճարը, կառուցուած Մանթաշեանի կողմէ: Հայկական ճարտարապետութեան գոհար մը Լոյսի Քաղաքին Ժան Կուժոն պողոտային վրայ, ոչ-հեռու Ծան գ'Էլիզէէն, որ Մարիային հետ պատկուցայ խիստ մտերմիկ շրջանակի մը մէջ, առաջնորդ Գիտ Արք. Նազգաշեանի նախագահութեամբ:

Հ.- Փարիզի շրջանին մէջ քանի՞ եկեղեցիներ կը գործեն եւ որքա՞ն է բնակչութեան թիւը:

Պ.- Ունինք հինգ եկեղեցիներ եւ 125,000 հայ բնակչութիւն Փարիզի եւ շրջակայքի մէջ: Իւրաքանչիւր եկեղեցի ունի իր հովիւը եւ

վարչական մարմինը: Ունինք Գաւառական (Թեմական Պատգամաւորական) Ժողով: Ունինք Եկեղեցական Վարչութիւն (Քաղաքական Խորհուրդ): Այդ ժողովին մաս կը կազմէ Ռ.Ա.Կ.ի այսօրուան ատենապետ Յակոբ Գասարճեանը: Հիմա որ բնակութեան երկիրը փոխած է, օրէնքով պիտի դադրի:

Հ.- Իսկ հարաւային Ֆրանսայի եւ Լիոնի մէջ:

Պ.- Կը գործեն 12 եկեղեցիներ: Փոքր ծուխեր են, փոքր մատուռներով: Նիսը առանձին համայնք մըն է, իսկ Վալանսը առանձինն ունի 7000 հայ բնակիչ: Կրնան առանձին շրջան ըլլալ, բայց կ'ենթարկուին հայրապետական ուղեցոյցին:

Լիոնի մէջ միայն մէկ եկեղեցի կայ. իսկ շրջանները՝ Սէն Թէթիէն, Սէն Շամոն, Տեսին հոգեւորականներու կարիք կայ:

Հ.- Կը խորհի՞ք որ նորընտիր Հայրապետը գալիք հնգամեակին Ֆրանսայի շրջանը կարենայ վերածել բնականոն վիճակի:

Պ.- Ձեզի պատասխանը շատ ուղիղ կրնամ տալ: Այս մարդիկը արդէն ղրկած են իրենց կանոնագիրը, կարծէք նոր Կաթողիկոսը ուրիշ ընելիք չունի: Ժամանակ կ'ուզէ որ ան սերտէ եւ ուսումնասիրէ Ֆրանսայի կացութիւնը, քննարկէ զայն ընդհանրապէս ու մշակէ: Ու դեռ չունինք Հայ Եկեղեցւոյ սահմանադրութիւն մը, որպէսզի կարենանք առաջնորդուիլ թեմի մը կազմութեան հարցով: Վեհափառ Հայրապետը մտահոգ է Ֆրանսայով ու իր խօսքը պիտի ըսէ ի մօտոյ: Ինքը չ'ուզեր Վազգէն Վեհափառի տնօրինութիւնները հերքել. ասիկա մեծութիւն է իրեն համար: Կը փորձեն զինք մղել այդ ճանապարհին, ինչպէս Ժընեւի պարագային, ինչպէս Մարսէյլի պարագային:

Հ.- Փարիզը քաղաքական կարեւոր նշանակութիւն ունեցող մայրաքաղաք մըն է ու եկեղեցին հոս չի կրնար անջատուիլ հայրենիքի այսօրուան իրականութենէն: Ինչպէ՞ս եմ ձեր յարաբերութիւնները դեսպանատան հետ, նաեւ՝ Հայաստանի Հանրապետութեան եւ անոր իշխանութիւններուն հետ:

Պ.- Պատասխանը գործնականապէս կրնաք տեսնել: Առաջին իսկ օրէն, երբ հայրենիքի նոր իրականութիւնը ծնունդ առաւ երիտասարդներու Ղարաբաղեան Շարժումով, Փարիզի գաղութը եղաւ հրապարակաւ արտայայտուող ու ձայնակցող առաջին արտասահմանեան գաղութը: Հրապարակ իջանք քաջալերելու եւ նեցուկ կանգնելու:

Ու ասիկա լոկ պարագայական խանդավառութիւն չեղաւ. անոնք մնացին հետեւողական:

Առաջին օրէն մենք հպարտ եւ ուրախ ենք: Մեր վարչութեան բոլոր անդամները անհատաբար անբաժան կը գտնեն հայրենիքը Հայ Եկեղեցիէն: Ուրախ եմ ըսելու որ ինչ կը սպասէինք՝ առանց արիւնհեղու-թեան եղաւ: Մեր ամէն մէկ խօսքին, քարոզին ու գործունէութեան մէջ Հայաստանի ակնարկը անպակաս է ամէն կիրակի: Դեսպանատունը խօսուն պատասխանն է, որ եկեղեցին իր միջոցներով օգնեց: Գեղա-տեսիլ չէնք մը, վայելուչ ու արժանավայել: Դեսպանը յաճախ կը հանդիպի առաջնորդարան: Մնայուն կերպով յարաբերութեան մէջ ենք: Կ'աշխատինք հայրենակիցներու միջոցով դեսպանատունը հաստատուն հիմերու վրայ դնել:

Հ.- ինչպէ՞ս կը գնահատէք գործակցութիւնը ազգային-քաղաքական կազմակերպութիւններուն եւ եկեղեցիին, երբ առաջին իսկ օրէն ձեր թեմը էջմիածնական է:

Պ.- Ես պիտի ուզէի որ էջմիածնական թեմ ըլլալը մէկդի դնենք, այն իմաստով որ առհասարակ բոլոր թեմերն ալ (բացի կիլիկեան թեմերէն) Հայ Եկեղեցւոյ գերագոյն նուիրապետութեան ենթակայ են:

Ի պատիւ Փարիզի մեր ժողովուրդին ողջմտութեան եւ մանաւանդ իմ նախորդին հեռատես հետապնդումին եւ ուշադրութեան՝ մենք խնդիր չունինք: Առաւել կերպով կը ջանանք դուրսի քաղաքական կազ-մակերպութիւններու եւ այլ միութիւններու խնդիրները հեռու պահել եկեղեցւոյ կեանքի միջավայրէն: Մեր յարաբերութիւնները այնպէս են, ինչպէս որեւէ բարեսիրական կամ ընկերային հաստատութիւն Ֆրան-սահայ գաղութին մէջ, գոնէ մինչեւ այսօր: Ի պատիւ իրենց ըսեմ որ իրենք ալ ուրիշ նպատակ հետապնդելու մղած չեն զիս:

Հ.- Մօտ 35-40 տարիներէ ի վեր այս գաղութին կը ծառայէք. ինչպէ՞ս կը տեսնէք Փարիզը եւ առ հասարակ ֆրանսախաչութիւնը ազգապահպան-ման տեսանկիւնէն դիտուած:

Պ.- 1960-ին եկայ Փարիզ, հրաւերովը Սերովբէ Սրբազանին: Այդ շրջանէն գիծը հետեւեալ կերպով կը ներկայանայ: Առաջին շրջանին կար մեր երէց սերունդը, որ լեցուն էր հայկականութեամբ: Զգալի չէր կամաց-կամաց նուազումը երիտասարդներուն մօտ հայերէն լեզուին ու ոգիին:

Հին սերունդը տիրական էր: Ժամանակի ընթացքին յառաջ եկաւ երիտասարդութիւն մը, որ իր ժառանգութեան տէր ըլլալու աշխա-տանքներու մէջ է: Բայց մեծ մասամբ անոնք հեռու կը մնան հայկական միջավայրէն:

Զանազան ազդակներ երբեմն-երբեմն նոր թափ կամ հետաքրքրութիւն կը ստեղծեն: Հայաստանի մէջ, օրինակ, Ծիծեռնակաբերդի Եղեռնի յուշակոթողի կառուցումը երիտասարդութեան մօտ կը վերածուէր հպարտութեան գարթօնքի եւ զայն կը մղէր պահանջատիրութեան: Յետոյ եկաւ երիտասարդութիւն մը, որ հետապնդեց դպրոցներու աճը: Մինչեւ այսօր հայերէնի դասընթացքներ գոյութիւն ունին բոլոր եկեղեցիներուն շուրջ եւ ամէն տեղ, ըլլա՛յ Հ.Բ.Ը.Մ.ի կամ Ֆրանսահայ Կապոյտ Խաչին կողմէ:

Հայաստանի վերանկախութիւնը իրապէս նոր շունչ մը տուաւ: Կար դասակարգ մը, որ ինքզինք մօտ կը ձեւացնէր գաղութին, բայց գործնապէս բացակայ էր: Այսօր, ընդհակառակը, անոնք գործի լծուած են: Միջին ու երիտասարդ սերունդ կը տեսնենք եկեղեցիներուն շուրջ:

Հ.- Անթիլիասի վանքի օրերէն կը ճանչնաք Գարեգին Ա. Կաթողիկոսը: Եկեղեցական տխուր դէպքերու բերումով ձեզ ալ, այդ օրերուն արեղայ, հեռացուցած են վանքէն: Այսօր ի՞նչ տեսակի գործակցութիւն մը կը տեսնէք ձեր նախկին միաբան եղբօր հետ:

Պ.- Արդարեւ, ես Կիլիկեան Աթոռի դպրեմանքի սան եղած եմ եւ հոն ալ ձեռնադրուած եմ 1955-ի Նոյեմբեր 20-ին: Ծանօթ ենք 1956-ի դէպքերուն, ուր տարակարծիք էինք նաեւ Գարեգին Վարդապետին հետ: Տարակարծիք ըլլալը ընկերութեան մը մէջ բնական է: Մարդիկ անպայման նոյն նիւթին շուրջ նոյն կերպ չեն մտածեր: Բայց ոչ մէկ ատեն Գարեգին Կաթողիկոսին հետ անձնապէս գօտուութիւն, քինախնդրութիւն կամ արհամարհանք ունեցած եմ: Կը ճանչնամ իր մէջ շնորհի եւ իմաստութեան ներկայութիւնը:

Չեմ կարծեր որ օգուտ մը կ'ունենայ այսօր ըսել թէ ինչո՞ւ համախոհ չէի իրեն այդ օրերուն: Չմոռնանք որ պատմութիւնը կը գրուի ժամանակի ընթացքին: Ժամանակը անցած է. ես այն ատեն երիտասարդ էի, երիտասարդական խանդն է որ միշտ կ'առաջնորդէ միտքի դատաստանը...: Ժամանակի ընթացքին մտածած եւ տեսած եմ որ ես ալ սխալներ ըրած եմ: Թէ ո՞վ առաջնորդած է սխալներ ընելու՝ այդ կարեւոր չէ:

Մեծ ուրախութիւն ունիմ որ մեր ժողովուրդը իրապէս լայնախոհութեամբ եւ ողջմտութեամբ անանձնական կերպով տեսաւ արժանաւորը հայրապետական գահին: Եթէ կ'ուզէք, կրնաք ըսել թէ աստուածային նախախնամութիւն մըն է որ բացաւ աչքերը բոլորիս՝ ընտրելու այն, որ իրապէս արժանին է եւ օգտակարը, մտահոգը եւ սրտցաւը Հայ Եկեղեցւոյ յառաջդիմութեան, պատուին եւ բարձրացումին: Ծառա-

յական մարդ է. իր օրինակը պիտի պարտադրէ հոգեւորականներուն աշխատանքի մղուելու:

Հ.- Կը խորհի՞ք որ Կիլիկիոյ նոր գահակալ Արամ Ա.ով եկեղեցական տազնապին կարգ մը հարցերը լուծում կը գտնեն:

Պ.- Ես ոչ միայն լաւատես եմ, այլեւ համոզուած՝ որ Գարեգին Ա. Կաթողիկոսը իր իմաստութեամբ, իր խոհականութեամբ արդէն իսկ Արամ Կաթողիկոսին ընտրութեան ներկայ ըլլալով, ցոյց տուաւ իր ապրումը՝ որ է եկեղեցիին ամբողջական ըլլալը: Արամ Կաթողիկոսը, վստահ եմ, այդ գիտակցութեամբ ալ իր յետ օծման անդրանիկ քարոզին, որուն ներկայ էի անպաշտօն կերպով, ցոյց տուաւ թէ նոյն կերպով կը խորհի: Իր քայլերը կը տանին եկեղեցւոյ ամբողջութեան: Իր իսկ հաւատամքը այն է, ինչ որ Գարեգին Ա. Կաթողիկոսինն է հայրենիքի նկատմամբ:

Հ.- Դուք այժմ Երուսաղէմի միաբան էք: Ինչպէ՞ս կը դիտէք արաբելիս-րայէլեան խաղաղութենէն ետք Երուսաղէմի վանքին կարեւորութիւնը:

Պ.- Երուսաղէմի պատրիարքութիւնը մեր նուիրապետական կարեւոր մէկ թեւն է, ինչպէս Կ. Պոլսոյ Աթոռը: Գիտէք, ժամանակին Եգիպտոսն ալ պատրիարքութիւն ունեցած է:

Երուսաղէմի պատրիարքները, անցեալէն մինչեւ այսօր՝ Թորգոմ Պատրիարք, իմաստուն եւ արթուն պահակներն են դարաւոր սուրբ տեղեաց: Մեր իրաւունքները հոն քաղաքական մրցակցութիւններէ հեռու պահուած են: Կարեւոր է որ նեցուկ կանգնինք, պայմաններ ստեղծենք ամրացնելու համար միաբանութիւնը:

Ըսեմ նաեւ որ Պոլսոյ պատրիարքութիւնն ալ նոյնքան կարեւոր է իր առաքելութեամբ: Թէեւ դժուար պայմաններու մէջ, բայց հոն ալ իմաստութիւնն է որ կ'առաջնորդէ մեր պատրիարքը, որպէսզի մեր համայնքին կեանքը, նոյնիսկ եթէ չբարւոքի, գէթ ներդաշնակ ու խաղաղ պահպանուի անխռով:

Հ.- Ժամանակ կը գտնէ՞ք գրական ստեղծագործութեան պահ մը յատկացնելու ձեր կեանքէն, մանաւանդ որ ունիք անմոռանալի յուշեր: Ինչո՞ւ չմտածէք ձեր կեանքի անցած հանգրուանը հատորի մը յանձնել:

Պ.- Ըսեմ թէ իրատես եմ: Վարչական գործերը մարդս կը կլանեն ամբողջութեամբ:

Յուշերու ակնարկեցիք: Յուշագրութիւն ունի՞մ եւ կը պահեմ: Կը կարծեմ թէ պէտք է հրատարակել: Յուշագրութիւնս անձերու եւ իմ

պաշտօնավարութեան շրջանի հանդիպումներու, վիճակներու կը վերաբերի: Ծառայական ոգիով մօտեցած եմ պաշտօնիս եւ ոչ թէ տիտղոսի սիրոյն: Կոչում մըն է: Բացի Ֆրանսայէն, զբաղած եմ Հոլանտայի, Պելճիքայի եւ Իտալիոյ գաղութներով: Անոնք ունին իրենց իւրայատուկ նկարագիրը:

Նաեւ կը պատրաստեմ ամէն տարի մեր ժամացոյցը: Պատրաստած ունիմ նաեւ Հայ Եկեղեցւոյ արմանաքը:

Հ.- Քառասուն տարուան հոգեւորական էք. ո՞ր եկեղեցականը արդեօք ունեցած է կարեւոր ազդեցութիւն ձեր ազգային-հոգեւորական կեանքին վրայ, եւ դուք ամենէն շատ մօտիկ զգացած էք անոր:

Պ.- Երջանկայիչատակ Վազգէն Վեհափառի նկատմամբ ապրումս մեծ է եղած: Ան ինծի համար հրամանատար մըն էր: Միայն կը սպասէի լսել իր ձայնը: Առանց նոյնիսկ առարկելու կը կատարէի իր խնդրանքը:

Մտերմութեան տեսակէտով, բոլոր կղերականներուն հետ ալ քիչ թէ շատ բարեկամութիւն ստեղծած եմ: Բայց իրապէս հօր եւ որդիի օրինակը ապրած եմ, եւ մինչեւ այսօր ինծի համար սուգ է ու կորուստ իմ նախորդիս, երջանկայիչատակ Սերովբէ Սրբազանի մահը: Հոգեւոր հայրս էր. ինք զիս չէր ձեռնադրած թէեւ: Բացառիկ անձնաւորութիւն մըն էր ինծի համար:

Կը յիշեմ, օր մը Վազգէն Վեհափառի սեղանն էինք, էջմիածին: Այն ատեն դիւանապետը Հայկ Առաքելեանն էր: Վազգէն Վեհափառ խօսք առնելով ըսաւ թէ մեր եկեղեցւոյ պատմութեան համար եզակի երեւոյթ է առաջնորդ եւ փոխ-առաջնորդի այս ձեւը կապը: Գրեթէ նոյն անձն են Սերովբէ եւ Գիւտ Սրբազանները: Այս ինծի մխիթարութիւն մըն է:

Կը կրկնեմ որ միւսներուն հետ ալ մտերմութիւն ունիմ. սակայն ըսենք անձնական՝ այդ Սերովբէ Սրբազանն էր:



ԱՐՓԻԿ ՄԻՍԱՔԵԱՆ

Արտոնատեր «Յառաջ» Օրաթերթի

Հ.- Ինչպե՞ս անցնող երեսուն եւ ասելի տարիներում կրցաք թերթը անկախ պահել, հակառակ հասկնալի դժուարություններու:

Պ.- Գիտէ՞ք, միայն երեսուն տարի չէ որ թերթը անկախ է գոնէ նիւթական գետնի վրայ, որովհետեւ ոմանց կողմէ սխալ տեղեկութիւն կայ թէ «Յառաջ» կուսակցական օրկան է եղած:

Դաշնակցականի մը թերթը եղած է, բայց դաշնակցական օրկան չէ եղած. անպաշտօն բանբեր եղած է: Նիւթական գետնի վրայ, 1925-էն ի վեր «Յառաջ» միշտ անկախ եղած է եւ վերջին երեսուն տարիներուն ալ միշտ նոյն ձեւով կը շարունակուի: Ի հարկէ դժուարութիւնները տարուէ տարի որեւէ հայ թերթի համար կը շատնան, տրուած ըլլալով որ եկամուտները կը պակսին եւ ելքերը կը բազմանան, մանաւանդ երբ թերթը կը հրատարակուի արեւմտեան երկրի մը մէջ, ուր հատավաճառութիւն չկայ եւ միայն բաժանորդագրութեան վրայ կը հիմնուի ան: Առաքումի ընկերութիւններու, թղթատարի, թուղթի գիներու զգալի յաւելումներ ունինք մանաւանդ այս տարի եւ դժուար է իւրին մէջ տապկուիլ. բայց եւ այնպէս, կը խորհիմ որ թերթի մը համար կարեւորը նիւթական անկախութիւնն է: Անոր գի՛նը կը վճարեմ:



Հ.- Քանի Դաշնակցութեան մասին ակնարկութիւն ըրիք, թերթին ձեր հօրմէն ձեզի փոխանցման շրջանին դժուարություններու հանդիպեցա՞ք Ֆրանսայի Կեդրոնական Կոմիտէին կողմէ:

Պ.- Ո՛չ. որեւէ բան չկար...: Թերթը հօրս կը պատկանէր եւ հօրս մահուան ատեն ինքնաբերաբար իմս էր՝ եթէ նիւթական ժառանգութեան մասին խօսինք, թէեւ հարստութիւն ալ չէր «Յառաջ»ը. ընդհակառակը, բարոյական ո՛ւժ մըն էր միայն ու որեւէ դժուարութիւն չեմ ունեցած:

Հ.- Ինչպե՞ս կը գնահատէք Հայաստանի անկախացումով Հայաստանի իշխանություններու դիրքորոշումը սփիւռքի կարգ մը քաղաքական կազմակերպություններուն նկատմամբ:

Պ.- Կարգ մը կազմակերպութիւններէն զատ, ընդհանուր կերպով ես

միշտ ցաւով կը նկատեմ որ, հակառակ վարչակարգերու փոփոխութեան, Հայաստանի իշխանութիւններու անցեալի եւ դժբախտաբար ներկայի ալ մօտեցումը բացասական է: Որոշ արհամարհանք մը կայ: Կը խորհիմ որ պէտք եղածին չափ կարեւորութիւն չի տրուիր սփիւռքին:

Եթէ հիմա կարեւորութիւն կը տրուի քիչ մը, ըսելիքս թերեւս վրդովեցուցիչ ըլլայ, սփիւռքի տնտեսական վիճակին հանդէպ շահագրգռութեան հետեւանք է: Ինչ որ դրական կողմ մը չէ ըստ իս: Կը ցաւիմ: Կը խորհիմ որ Հայաստանի իշխանութիւնները, մանաւանդ անկախութենէն ետք, պէտք է աւելի գնահատեն ու նկատի առնեն սփիւռքը:

Պատիկ օրինակ մը տամ: Եթէ այսօր Հայաստանի մամուլը տեսնեմ, որեւէ արտատպում չկայ սփիւռքի մամուլէն: Սփիւռքը գոյութիւն չունի հայաստանեան մամուլին մէջ: Եթէ անցեալին ասոր դրդապատճառը կը նկատէին վարչակարգը, հիմա այդ արդարացումն ալ չկայ: Ասոր մէջ կը խորհիմ որ սփիւռքի կուսակցութիւններն ալ յանցաւոր են, քանի որ իրենք սկսան սփիւռքը նկատի չառնել եւ ամբողջ ուժերը կեդրոնացնել Հայաստան, հակառակ անոր որ երեքուկէսէն չորս միլիոն հայութիւն ալ արտասահման կ'ապրի: Թերթերը Հայաստան փոխադրուեցան: Ես շատ ցաւով կ'ընդունիմ, օրինակի համար, «Պայքար» շաբաթաթերթին փակուիլը, որովհետեւ ամենէն լաւ թերթն էր Ռամկավար Կուսակցութեան: Նոյնիսկ հո՛ն տանելով թերթերը, իրենք ալ չարտատպեցին սփիւռքի մամուլը: այլ ճի՛շդ հակառակը, իրենց սփիւռքի մամուլը իրենց հայաստանեան յօդուածները արտատպեց:

Ես շատ «սփիւռքապաշտ» եմ թերեւս, ու ասիկա կարեւոր կը նկատեմ, որովհետեւ գլխաւորաբար արեւմտահայ ընտանիքի կը պատկանիմ, ընտանիք բառին լա՛յն իմաստով, ո՛չ միայն հօրս կամ մօրս պատճառով: Արեւմտահայ մշակոյթը, դասական ուղղագրութիւնը, արեւմտահայերէնը առաւելաբար ձգուած են սփիւռքի պաշտպանութեան: Անոր համար կը խորհիմ որ սփիւռքը պէտք է աւելի կարեւոր դեր ունենայ:

Հ.- Ֆրանսայի մէջ ինչպէ՞ս կը գնահատէք հայ մամուլի հանդէպ վարմունքը ժողովուրդին ու հայ կազմակերպութիւններուն:

Պ.- Կազմակերպութիւններու եւ ժողովուրդին մօտ աճող անտարբերութիւն մը կայ մամուլին հանդէպ: Եթէ թերթի մը տպաքանակը առնենք եւ ընթերցողներու թիւը, արդէն կը տեսնենք պատկերը: Չեմ կարծեր որ ուրիշ ազգի մը մէջ գոյութիւն ունենան ընտանիքներ, որոնք իրենց առած ֆրանսերէն կամ անգլերէն թերթերը ութը տասը ընտանիքի փոխանցեն, ինչ որ մեր մէջ կը պատահի: Ես այսօր կրնամ

ԵՐԵՎԱՆԻ
ԵՐԵՎԱՆԻ 6

MARDI
6 FEVRIER
2007

MERO: 1,20€

ՀԱՐԱՇ

Օ Ր Ա Ք Ե Ր Ք

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱԽԱՐՇ ՄԻՍԱԿԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE

DIRECTRICE : ARPIC MISSAKIAN

83, RUE d'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 — FAX : 01 48 00 00 00
COURRIEL (E-MAIL) : jharatch@aol.com

ԲԱՃԱՆՈՐԴԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ
Յրահատ : Տար. 250 երթ — Վեցամսեայ
Արտասանում : Տար. 300 երթ (Ամենօրեայ)
270 երթ (Շաբաթական ամսագիր) — Հասցե
C.C.P. PARIS 15069-82 E

ԱՐԻ - ՔԻԻ 21-636

Fondateur **SCHAVARCH MISSAKIAN**

82^e ANNÉE

2500 տպագրանակ ունենալ, քիչ մը աւելի կամ պակաս բաժանորդ, եւ սակայն ունենալ 10,000 ընթերցող, որովհետեւ թերթը իրարու կ'անցընեն: Յաւով կը նկատեմ նաեւ, եւ հաւանաբար նորէն կուսակցութիւնները պատասխանատուութեան բաժին ունին, որ ընդհանուր անտարբերութիւն մը կայ մամուլին եւ մշակութային ձեռնարկներու նկատմամբ:

Հ.- Կը ծրագրէ՞ք «Յառաջ»ը տարածել հայրենիքի մէջ՝ իբրեւ սփիւռքի միակ անկախ օրաթերթ:

Պ.- Տարածե՞լ հայրենիքի մէջ: Եթէ 1000 օրինակ աւելի պիտի տպեմ եւ Հայաստան երթալով պիտի չվաճառուին այդ թերթերը՝ ստիպուած եմ նիւթականն ալ նկատի ունենալ: Իսկ եթէ հոն տպագրելու եւ տարածելու մասին է ձեր խօսքը, ատիկա բաւական ծանր բեռ մըն է. մենք հազիւ մեր Փարիզի գրասենեակին մէջէն կ'ելլենք...:

Հ.- Հաւանաբար կարենաք հոն գտնել կազմակերպութիւններ, որոնք համատեղ գործակցութեան (joint venture) ձեւով այդ աշխատանքը տանիլ ուզեն:

Պ.- Հիմակուհիմա այդպիսի բանի մասին չեմ կրնար մտածել:

Հ.- Ատենին բաւական աղմուկ ելած էր Զօր. Անդրանիկի աճիւնին Հայաստան փոխադրութեան հարցով: Արդեօք տակաւին ծրագիրը կը մնա՞յ ի գորտ:

Պ.- Կարծեմ թէ փակուած է հարցը: Անկեղծօրէն ըսելու համար, չիրմապաշտ մը չեմ: Ինծի չի խանգարեր որ Անդրանիկը Փէռ Լա Շէզ հանգչի: Արձանը շատ տգեղ է, բայց հոն թող մնայ: Հայրս ալ հոն է. ո՛չ իսկ կը մտածեմ իր աճիւնը փոխադրել: Ես կը կարծեմ որ նման դէմքեր՝ Թէքէեան եղբր է, Անդրանիկ, Շաւարշ Միսաքեան թէ Շահնուր, իրենց գործով է որ պիտի ապրին՝ աճիւնները ինչ հողի վրայ որ ըլլան: Մեր ամենամեծ մարդոց աճիւններուն ո՛ւր ըլլալն իսկ չենք գիտեր այսօր- Սիամանթօներու, Վարուժաններու, Զօհրապներու:

Հ.- Զեր թերթին կլոր տարեդարձն ըլլալով, հաճեցէք յիշատակել ձեր խմբագրական կեանքին ամենէն տխուր եւ ամենէն ուրախ պահերը:

Պ.- Ամենէն տխուրը «Յառաջ»ի կեանքին մէջ Շաւարշին յանկարծական մահը եղած է: Աւելի տխուրը չեմ կրնար ըսել: Ամենէն ուրախալին ալ կրնամ ըսել որ, հակառակ քիչ մը առաջուան նշուած անտարբերութեան եւ այլ բաներուն, եօթանասունամեակին առիթով հարիւրաւոր շնորհաւորական ինքնաբերիկ նամակներու ստացումն է, որոնք ինծի ալ անակնկալ էին: Նոյնիսկ ոչ-բաժանորդներ կը շնորհաւորեն, ինչ որ բաւական հետաքրքրական երեւոյթ է: Թերթ չեն կարդար բայց կը գնահատեն:

Հ.- Իսկ ձեր անձնակազմին մասին կրնա՞ք տեղեկութիւն տալ:

Պ.- Անձնակազմն չորս է. Օրդ. Արփի Թոթոյեանը եւ ես ենք խմբագրական եւ վարչական ամբողջ աշխատանքին համար: Տպարանին մէջ ալ երեք գործաւորներ ունինք: Կը շարունակենք աւանդական ձեւով *lynotype*-ով լոյս ընծայել թերթը: Որչափ ատեն որ կրնամ՝ պիտի շարունակեմ, քանի որ «Յառաջ»ը դժուարութիւններով է որ իր տպարանը ունեցած է. միջոց ուրիշներու տպարանը տպած ենք թերթը. հիմա որ մեր տպարանը ունինք՝ կը խորհիմ որ այնքան ատեն որ այս մեթոտը շարունակուի՝ մասնաւոր անհրաժեշտութիւն մը չկայ արդիական տպարանի անցնելու:



ՅԱԿՈԲ ՊԱԼԵԱՆ Տնօրէն «ԱՅԲ FM» Հայկական Ռատիոկայանի

Հ.- Փարիզի հայութեան այն սրտցաւ ազգայիններէն էք, որոնք կը հաւատան մեր լեզուին եւ մշակոյթին պահպանման ու տարածման: Եւ ասոր որպէս արդիւնք կը շարունակէք այս ռատիոկայանին գործունէութիւնը: Կրնա՞ք ամփոփ կերպով ռատիոժամին պատմականն ընել:

Պ.- Նախ անմիջապէս ըսեմ որ ռատիո-
ժամ չէ, այլ՝ ռատիօ: Կը ձայնասփռենք առտուան ժամը 6-էն 2-ը: Այս հայկական ձայնասփռիւնը Փարիզի մէջ գոյութիւն ունի շուրջ 12 տարի-



ներէ ի վեր: Առաջ «Ազգ» եւ ապա «Ռատիօ Ազգ» անունով ընկերութիւն մը կը ձայնասփռէր: Ան դադարելէ ետք պետութիւնը արտօնագիր տուաւ մեր միութեան, որ կը կոչուի Association Franco-Arménien de Communication: Միութիւնն ունի իր վարչութիւնը: Ես կը վարեմ տնօրէնի պարտականութիւնն ու կը կատարեմ ուրիշ գործեր ալ: Հետեւեալ, անձնական գործ մը չէ այս, այլ՝ միութեանկան:



Ամենայն Հայոց Հեղուսին՝ Անդրանիկի դամբարանը Փէո Լա Շէզի գերեզմանատան մէջ:

Ձայնասփռումը թէ՛ հաճելի գործ է եւ թէ՛ քիչ մըն ալ ապերախտ: Ինչ որ կ'ըսէք եւ կ'ընէք՝ օգին մէջ կ'ելլէ ու կ'երթայ...: Սակայն առաւելութիւնը նաեւ այն է, որ թերթ կամ գիրք կարդալու նման յաւելեալ ճիգ ընելու պէտք չի մնար: Գաղտնիք չէ որ այսօր աշխարհի մէջ ընթերցողներու թիւը ընդհանուր առմամբ նուազած է: Ձե՛նք խօսիր հայերէն ընթերցողներու թիւի նուազման մասին, որ մեր սեփական կեանքի տրամաբան մէկն է եւ այդ տրամին հակազդելու համար մենք տակաւին չե՛նք գտած հիմնական միջոցը: Հաւանօրէն կան միջոցներ, բայց մեզմէ իւրաքանչիւրը ի՛ր կողմէ կ'աշխատի, ո՛չ մէկ համադրուած ճիգ կայ այդ ուղղութեամբ գաղութներու մէջ: Կազմակերպութիւններու թիւը անհաշիւ է. օր նոր՝ միութիւն նոր. իւրաքանչիւրը կ'աշխատի բան մը ընել, եւ սակայն այդ ճիգերը «բան մը»ի սահմանին վրայ կը մնան...:

Հ.- Հայկական ձայնասփիւռ պահելը, որքան գիտեմ, նիւթական բաւական զոհողութիւն կը պահանջէ, այդ ալ փարիզեան պայմաններու մէջ: Հետեւաբար, գերագոյն զոհողութեան մը արդիւնք պէտք է ըլլայ: Ինչպէ՞ս կը խաւարակշռէք ձեր պիտոնէն:

Պ.- Նախ մենք ամերիկեան ռատիոներէն հիմնական տարբերութիւն մը ունինք. վարձք չենք վճարեր ուրիշին: Արտօնագիրը մե՛րն է, հինգ

տարին անգամ մը վերանորոգելու պայմանով: Ան, հետեւաբար, կրնայ մեր միութեան տրուիլ կամ չտրուիլ: Երբ հինգ տարին լրանայ, բոլոր միութիւնները հաւասար իրաւունք կ'ունենան ռատիոն ձեռք անցընելու: Բոլոր դիմումները հաւասարապէս կը քննուին: Ի հարկէ վարձք կը վճարենք այն ընկերութեան, որ մեզ կը ձայնասփռէ: Կան յարակից ծախսեր ալ՝ հեռաձայն, պաշտօնէութիւն, եւլն:

Թերեւս Միացեալ Նահանգներու ընթերցողները նուազ հետաքրքրէ, բայց ըսեմ հետեւեալը: Հայկական կեանքի մէջ երբ միութեանական ըսուի՝ անմիջապէս կը մտածենք «ամաթէօրիզմ»ի մասին, սիրողական աշխատանքի մասին: Իմ բարեկամներս ալ այդպէս մտածեցին. կարծեցին թէ սիրայօժար աշխատանքով այս գործը կ'ըլլայ: Անհար էր ատիկա՝ նկատի ունենալով հեռաւորութիւնները: Պզտիկ քաղաքներու մէջ թերեւս կարելի ըլլայ, որովհետեւ մարդիկ կէս ժամուան հաղորդումի համար կրնան ռատիոկայան հանդիպիլ: Մանաւանդ երբ մեզի տրուած ժամերը նկատի ունենանք, կարելի չէ սիրողաբար այս քաղաքին մէջ ընել այդ բանը: Բարեբախտաբար, սակայն, կան սիրայօժար օգնողներ:

Որո՞նք կ'օգնեն կամ ինչպէ՞ս կը հաւասարակշռենք պիւտճէն՝ մեծ հարցական է: Ունկնդիրներէն ոմանք կ'ընեն նիւթական օժանդակութիւն, կարգ մը հաստատութիւններ ծանուցում կու տան, հայկական միութիւններու մէկ մասը տարեկան յատկացումի ձեւով կը մասնակցի պիւտճէին: Ի տարբերութիւն Ամերիկայի, մարդիկ հոս advertising-ի այնքան վարժուած չեն: Կ'ըսեն. «Գործերը հիմա լաւ չեն. երբ լաւանան՝ ծանուցում կու տանք»: Մինչդեռ առեւտրական հիմունքներով հակառակն է ճիշդ. երբ գործերը լաւ չեն՝ ծանուցում պէտք է ընել: Ամէն առտու ռատիոկայանի վարչականներուն եւ ինծի համար մտահոգութիւն է թէ տուեալ օրը «իքս» գումարը պիտի հասնի՞: Որովհետեւ այդ «իքս» գումարը պէտք է բազմապատկել 365-ով: Գիտէք թէ Ֆրանսայի մէջ աշխատավարձերը ինչպիսին են, մանաւանդ՝ տուրքերը:

Հ.- ինչպէ՞ս ամէնօրեայ յայտագիր ի վիճակի կ'ըլլաք հրամցնել:

Պ.- Առաւօտեան 6-ին կը սկսինք երաժշտութեամբ: 6:30-ին յայտագրին վերնագիրները կու տանք: Լուրերը երկու տեսակ են՝ հայկական եւ միջազգային, ինչպէս նաեւ ֆրանսական-տեղական: Օտար լուրերուն համար կ'օգտուինք ֆրանսական մամուլէն. իսկ հայկականները կ'առնենք Internet-էն, հետեւաբար թարմ կ'ըլլան: Կը ստանանք հայաստանեան մամուլին մէկ մասը: Առաջ աւելի շատ կը ստանայինք, հիմա թէեւ նուազ կը ստանանք, բայց կարծէք շտկուելու վրայ է դրուիլնը:

Մ փ ի ւ ռ ք ա հ ա յ
թ ե ր թ ե ր ու
դ ի մ ա ծ ե ն ք ո ր
ս տ ա ն ա ն ք
ի ր ե ն ց օ Ր ի ն ա կ-
ն ե ր ը: Ք ի չ ե ր
ա ր ձ ա գ ա ն գ ա ծ
ե ն մ ե զ ի: Եւ



մարդիկ կը զարմանան թէ ինչո՞ւ այս կամ այն թերթը կը յիշատակենք, մինչ ուրիշներ՝ ո՛չ:

Օրինակ, Պէյրուսէն «Ազդակ» կը ստանանք, բայց «Զարթօնք»՝ ոչ: Պարզ է, ուրկէ որ առնեմ լուրը՝ ա՛յդ աղբիւրը կը յիշատակեմ: Ասիկա լրատուութեան մասին:

Ամէն օր ունինք քրոնիկ մը, բացի Կիրակիէն, օրուան կամ ընդհանուր հարցերու մասին, հայերէն կամ ֆրանսերէն լեզուներով: Հինգ քրոնիկ ես կը կարդամ, վեցերորդը՝ մեր երիտասարդ թղթակիցներէն մին: Կան նաեւ շաբթուան օրերուն վրայ տարածուած յայտագիրներ: Երկուշաբթին յատկացուած է թատրոնի եւ երաժշտութեան, Երեքշաբթին՝ գրական հաղորդումի, Զորեքշաբթին՝ Ալֆորվիլի Մշակութային Տան հաղորդումներուն (մշակոյթի ծանօթացում հայերէնով եւ ֆրանսերէնով): Հինգշաբթի՝ ֆրանսական օրէնքներու մասին հաղորդում: Նոյն օրը, նաեւ կու տանք պատմութենէն էջեր: Ուրբաթ՝ պատմա-քաղաքական հաղորդում: Շաբաթ՝ տեսակցութիւն հիւրի մը հետ: Այդ տեսակցութեան առաջին մասը հաղորդավարներուս հետ կ'ըլլայ, իսկ երկրորդ մասը՝ ունկնդիրներուն, առանց գրաքննութեան: Խելացի թէ անխելք, բոլոր հարցումներուն պատրաստ ենք պատասխանելու մենք եւ հիւրը: Գիտէք թէ հայերը ինչ ձեւի հարցումներ կը հարցնեն: Չեն գիտեր նիւթի սահմանին մէջ մնալ...: Կիրակի օրերը ունինք կրօնական հաղորդումներ:

Հ.- Նկատելով որ ժողովուրդին հետ մնայուն կապի մէջ էք, ինչպէ՞ս կը գնահատէք փարիզահայութեան հայախօսութիւնը եւ ընդհանրապէս հայութեան նկատմամբ համայնքին հետաքրքրութիւնը՝ քսան տարիներու ձեր փորձառութենէն մեկնելով:

Պ.- Փարիզի մէջ բնակող հայութեան թիւը անորոշ է: Բարեկամներուս կ'ըսեմ թէ թիւը կը գնահատեմ 200,000. ուրիշներ կ'ըսեն 60,000, ոմանք ալ՝ 100,000: Իմ համոզումով 200,000-ի շուրջ է, որովհետեւ վերջին 21 տարիներու ընթացքին, քիչ մըն ալ անկէ առաջ, Հայաստանէն,

Պէշրուծէն եւ Թուրքիոյ գաւառներէն եկան բազմաթիւ ընտանիքներ: Մանաւանդ Լիբանանի քաղաքացիական պատերազմին հետեւանքով մեծ թիւով հայութիւն հաստատուեցաւ հոս: Գաղութին դիմագիծը փոխուած է ներկայիս:

Սակայն, ճիշդ ամերիկեան ձեւով, այստեղի զօրաւոր մշակոյթը ձուլելու ունակութիւնն ունի: Կը հալեցնէ: Երբ մարդիկ հայերէնը չնորհքով չեն գիտեր եւ անոր կը խառնեն Ֆրանսերէն ալ, կարծես «էսփերանթօ»ի նման լեզու մը կը գործածեն:

Այսօր կրնամ ըսել թէ կայ հայախօսութեան ճիգ մը, որուն պէտք է օժանդակել մշակութային ձեռնարկներով: Այդ պատճառով ալ կը փորձենք հաղորդումներն ընդհանրապէս հայերէնով ընել: Ոմանք կը դժգոհին, բայց մենք կը զգանք որ ընդհանուր առմամբ կը հասկնան հայերէնը: Վկայութիւն ունիմ որ հայ մայր մը իր զաւակին հետ սկսած է հայերէն խօսիլ ռատիոյին չնորհիւ:

Այս է կացութիւնը: Մեր դպրոցները բաց պահելու դժուարութիւնն ունինք: Հայկական ամէնօրեայ վարժարաններու մէջ աշակերտութեան 800-ի հասնող ընդհանուր թիւը ոչինչ է Ֆրանսայի համար: Կան միժամեայ դասընթացքներ, որոնք չես գիտեր ինչո՞ւ դպրոց կը կոչուին: Ու երբ ըսենք թէ անոնք դպրոց չեն, յանկարծ կը վշտանան, կը վիրաւորուին, բայց դպրոց ըլլալէ չեն դադրիր:

Հ.- Հայաստանի անկախացումը արդեօք հայրենասիրական նոր զարթօնք մը յառաջացո՞ւց Փարիզի հայ կեանքին մէջ: Եթէ յառաջացուց՝ ինչպէ՞ս կը շարունակուի այդ զարթօնքն այսօր:

Պ.- Հայաստանի անկախացումէն առաջ մեծ ցնցումը երկրաշարժն էր: Երբ Ղարաբաղեան Շարժումն սկսաւ, Ղարաբաղեան ազատագրումի ալիքին վրայ եկաւ նաեւ Հայաստանի հարցը, ինչպէս իրենք՝ հայաստանցիները կ'ըսեն: Անկախութիւնը, ի հարկէ, սկիզբը շատերու կողմէ վերապահութեամբ դիտուեցաւ, որովհետեւ ոմանք աւանդական կարգով կ'ըսէին թէ «նասիրոնալիսթ» պէտք չէ ըլլալ, անկախութիւնը մեզի համար չէ, մենք չենք կրնար զրկուիլ խորհրդային ամպհովանիէն, եւայլն: Ես ալ յաճախ կ'ըսէի անոնց թէ կրնա՞ն իրենց զաւակներուն բացատրել թէ ինչպէ՞ս կրնան իրենք իրենց մերժել անկախութիւնը եւ հաւասար ըլլալ ուրիշ ժողովուրդներու:

Այս գաղութը պատմութեան ծանօթ չէ իր զանգուածով: Ճիշդ է, քաղաքական հասկացողութիւն ունեցողներ կան, բայց հայ ազգային-քաղաքական գգացողութիւնն ու ըմբռնումը նուազ է: Այս գաղութը զգացական հայրենասիրութեամբ մօտեցած է Հայաստանի եւ այսօր ալ

La Lettre de l'ADL

Arménien-Démocrate-Libéral

Nov-Déc. 2005, n° 40 — 3 €

այդպէս կը մօտենայ: Անտեղի է ոեւէ մէկուն հարցնել թէ ինք Հայաստանը կը սիրէ՞, թէ՞ ոչ: Թէեւ այս հարցով ալ անցեալին վէճեր կ'ըլլային «Հայաստանասէրներու» եւ «ոչ-Հայաստանասէրներու» միջեւ: Հարցն այն է, որ Հայաստանը անկախ պէտք է ըլլայ, ժողովրդավար պէտք է ըլլայ, հոն ազատութիւններ պէտք է ըլլան, եւ պէտք է հոն այնպիսի ազգային կառավարութիւն մը ըլլայ՝ որ ընդհանուր հայութեան կառավարութիւնը նկատուի: Այս է այսօր հիմնական հարցը գիտակից զանգուածներու մօտ: Քաղաքական գիտակցութիւն ունեցողներու համար Հայաստանը համազգային կառավարութիւն չունի: Գիտակից հայկական սփիւռքը չի կրնար հաշտուիլ որ Թուրքիոյ հետ միակողմանի հաշտութեան փորձեր ըլլան՝ առանց փոխադարձութեան սկզբունքի: Անոնք տեղի տալու վրայ են: Հայ ժողովուրդը, վերջին հաշուով, հայ դատին շնորհիւ իր ինքնութիւնը պահած է ու երբ այսօր Հայաստանի կառավարութիւնը կը հրաժարի Հայ Դատէն, սփիւռքի ինքնութիւն կերտելու հնարաւորութիւնները ջարդ ու փշուր կ'ընէ: Ասիկա հիմնական խնդիր մըն է, որ հրապարակային քննարկումի նիւթ չեղաւ տակաւին:

Հ.- Ի՞նչ կը սպասէք նորանկախ պետութենէ մը, որ չէ ժառանգած որեւէ ռաւմավարական հիմք, չէ ունեցած ազատական ռաւմավարական ասանդորթին: Նման կառավարութենէ մը կը սպասենք որ մէկ օրէն միւսը Ֆրանսայի, Պեւիքայի կամ Ամերիկայի նման քաղաքական հասունութիւն ունենայ. ասիկա ճիշդ ակնկալութիւն մը չէ:

Պ.- Անգլիացի մեծ քաղաքական դէմք մը կ'ըսէր որ ժողովրդավարութիւնը լաւագոյն վարչաձեւը չէ, նուազագոյն լաւն է: Իսկ ժողովրդավարութիւնը հետեւեալն է. կա'մ համոզուած էք որ ժողովրդավար պիտի ըլլաք, կա'մ համոզուած չէք: Միջին ճամբայ չկայ: Ժողովրդավարութիւնը ա'յս ձեւով կ'ըմբռնուի:

Մեր ժողովուրդը պէտք է պատրաստուած ըլլար ատոր. դժբախտաբար, մեր հրապարակագիրները, լրագրողները իրենց դերը չեն կատարած: Մենք մոռցանք, նկատի չառինք որ երբ երեք սերունդ անազատ վիճակի մէջ կը դաստիարակուին, հակաժողովրդավար վիճակի մէջ կը դաստիարակուին՝ մէկ օրէն միւսը չեն կրնար ըմբռնել ժողո-

վրդավարութիւնը: Այսօր Հայաստանի մեր ղեկավարութիւնը եւ բոլոր՝ կուսակցութիւնները, անխտիր, ժողովրդավարութեան խոր եւ իրենց բջիջներուն մէջ անցած ըմբռնումը չունին: Ինչպէս որ Ֆրանսական թերթ մը անցեալները բաց կերպով գրած էր, Հայաստանի մէջ գրեթէ բռնատէր կառավարութիւն մը կայ, բռնատէր նախագահով: Ասիկա մեզի ցաւ կը պատճառէ: Հայաստանի համար թերեւս լաւագոյն ճամբան էր ազգային միութեան դահլիճի մը կազմութիւնը, մինչեւ որ մենք այս ղեկար հանգրուաններէն անցնինք: Թոյլ տուէք նաեւ որ պզտիկ փակագիծ մը բանամ:

Այսօր Հայաստանի իշխանութիւնները մեծագոյն չարիքը ընելու վրայ են հայ ժողովուրդին՝ ստեղծելով այն բարբարոս բառը թէ մենք «օտարերկրացի» ենք: Օտարերկրացի՝ առանց հայ ըսելու: Օտարերկրացի կը նշանակէ զանգիպարցի, զիմպապուեցի. անոնք եւ ես հաւասար ենք...:

Առանց այս նրբերանգները ճշդելու՝ սփիւռքի հիմերը կը քանդուին:

Հ.- Երբ նման արտայայտութիւն կ'ունենաք ինծի որպէս պատասխանատու հայկական ձայնասփիւռի մը, արդեօք նոյն ձեւով կ'արտայայտուիք նաեւ ձեր ունկնդիրներուն:

Պ.- Ո՛չ. այս «թոն»ով չէ որ կը հասնինք մեր ունկնդիրներուն, որովհետեւ մենք պարտաւոր ենք բոլորին հասնիլ: Բոլորին հաճելի ըլլալ չէ մեր քաղաքականութիւնը, բայց չենք ալ ուզեր բախումներու գծով կատարել մեր ձայնասփռումները: Բայց այս բոլոր հարցերը զանազան ձեւերով կ'արծարծուին:

«Օտարերկրացի»ի պարագային, կրնաք վստահ ըլլալ որ առանց ձեռնոցի խօսած ենք եւ պիտի չարունակենք խօսիլ:

Հ.- Ի՞նչ կը սպասէիք ընել՝ երբ քիչ առաջ կ'ըսէիք թէ ազգային միութեան դահլիճի մը կազմութիւնը կարելոր է: Հաւանաբար նկատի ունիք Դաշնակցութիւնը...:

Պ.- Եւ ռամկավարները:

Հ.- Թերեւս Ռ.Ա.Կ.ը այս հանգրուանին այդ բաղձանքը չունի:

Պ.- Իրենք կրնան չունենալ, բայց ասիկա սկզբունքային հարց է...:

Հ.- Այո՛, բայց ի՞նչ կը մտածէք, երբ ազգայինները շատ լաւ գիտեն թէ անցնող 70-80 տարիներուն Դաշնակցութեան միա՛կ նպատակը եղած է իշխանութեան տիրացումը իրագործել: Կը խորհի՞ք թէ եթէ Դաշնակցութիւնը

գար իշխանութեան գլուխ՝ նման ազգային միութեան դահլիճ մը պիտի կազմուէր:

Պ.- Որեւէ կուսակցութիւն որ ինքզինք կուսակցութիւն կը նկատէ՝ չի կրնար միտքէն հանել որ ինք իշխանութեան տիրացման ձգտումը ունի: Հետեւաբար, կարելի չէ կուսակցութեան մը ճակտին որպէս մուր քսել իշխանութեան տիրանալու իր ձգտումը: Այլապէս կուսակցութիւնը կը վերածուի հայրենակցական միութեան:

Ես կ'ողգեմ հաւատալ որ տակաւին ո'չ ռամկավարները, ո'չ հնչակեանները եւ ո'չ ալ դաշնակցականները հայրենակցական միութիւն են: Թէեւ կան մարդիկ որ կը փափաքին այդպէս ըլլալը:

Երբ ազգային միութեան դահլիճ կ'ըսեմ, մտածումս միայն կուսակցութիւններուն չ'երթար: Այդ դահլիճը ստեղծել մարդոցմով, որոնք «քարիզմ» ունին եւ որոնց ժողովուրդը կը վստահի: Կամ ունին այնքան մասնագիտական կարողութիւն, որ կրնան ժողովուրդը զօրաշարժի ենթարկել նեղ օրերուն:

Ֆրանսան երբ պատերազմի ելաւ, Զօր. Տը Կոլը աջակողմեան էր. բայց նաեւ ամբողջ Ֆրանսայի գիտակցութիւնը ունէր. իր հետ իշխանութեան բերաւ նաեւ համայնավարները: Ինչո՞ւ այս մօտեցումը պիտի չունենար մեր հայրենի կառավարութիւնը:



Թէեւ Փարիզէն հեռու, Մարսիլիա ուխտագնացութիւն կատարեր էի 1989-ի Օգոստոս ամսուն: Տեղւոյն հովիւ Գարեգին Վրդ. Պեքճեան (այժմ առաջնորդ սրբազան հայրը Գերմանիոյ հայոց) զիս առաջնորդեց

Արմենական Կուսակցութեան երեք Մկրտիչներէն Փորթուգալեանի շիրիմը, ուր աղօթք բարձրացուցինք եւ վերանորոգեցի ազգիս, հայրենիքիս ու կուսակցութեանս ծառայելու ուխտս: Նոյնը պիտի կատարէի տարիներ ետք մի'ւս Մկրտիչին՝ Խրիմեան Հայրիկի շիրիմին առաջ, Էջմիածին, քանի մը ընկերներով: Մկրտիչ Աւետիսեանի շիրիմին առաջ, Սբ. Բարթողիմէոսի վանքին մօտ, նոյնը կատարելու երազս տակաւին կը մնայ անկատար, բայց վստահ եմ թէ օր մը անպայման պիտի կատարուի: Մկրտիչ

Աւետիսեան կը մնայ մեր բոլոր ժամանակներու ազգային հերոսը՝ Անդրանիկի կողքին: Փորթուգալեանի շիրիմին տուած այցս ինձի համար ունեցաւ պատմական նշանակութիւն: Իր հարազատներուն կողմէ ինձի փոխանցուեցան մասունքներ, զորս աչքի լոյսի նման կը պահեմ:

Հ.- Դուք գէթ գո՞րծ եք մեր երեք քաղաքական կազմակերպություններու կատարած քաղաքական գործունեություններին:

Պ.- Ֆրանսայի համար դժբախտաբար կացութիւնը հետեւեալն է: Կազմակերպութիւն պահելը ինքնին դժուար երեւոյթ է ընդհանրապէս. իսկ հայկական կազմակերպութիւն պահելը տակաւին ուրիշ աւելի լուրջ խնդիր մըն է, որովհետեւ չկան դպրոցներ, ուր հասակ առած սերունդներ դան ազգային քաղաքական գործի: Յաւով պիտի նշեմ որ կան կազմակերպութիւններու մէջ գործող երիտասարդներ (խօսքս ֆրանսածիններու մասին է), որոնց ամբողջ ազգային-պատմական հասկացողութիւնը մէկ-երկու գիրքերէ քաղուած է:

Չեն ուզեր ըմբռնել թէ բառերը, հայերէն խօսքը իրենց հետ կը բերեն նաեւ քաղաքական ժառանգութիւն: Ֆրանսացի իմաստասէր մը կը շեշտէ բառերու ժառանգութիւնը: Երբ մենք կտրուինք մեր լեզուէն ու մշակոյթէն՝ տարուած քաղաքական աշխատանքը կրնայ մասնագէտի աշխատանք ըլլալ, բայց ո՛չ՝ ազգային: Այս հիմնական դժուարութեան առջեւ այսօր կը գտնուի Ֆրանսայի հայ նոր սերունդը: Վստահ եմ որ Ամերիկայի մէջ ալ այդպէս պէտք է եղած ըլլար՝ եթէ Միջին Արեւելքէն զանգուածային արտագաղթը չըլլար:

«ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆ», 9 եւ 23 Նոյեմբեր 1995

«ՄԱՐՄԱՐԱ», 30 Յունուար 1996



Երկու տեսարան. մին Ապիճանի քաղաքակերպունէն, միւսը՝ ծովափէն:

ԱՊԻՃԱՆԸ ԻՐ ՀԱՅՈՒԹԵԱՄԲ

Ապիճա՞ն. իր հայութեա՛մբ: Այո՛:

Ափրիկէի այս ամենէն եւրոպականացած քաղաքին մէջ կ'ապրին ափ մը հայեր, թէեւ ո՛չ այնքան մօտիկ իրարու, սակայն զարմանալիօրէն ամէն անգամ որ առիթը ստեղծուած է՝ այդ ափ մը աղջիկներն ու տղաքը, կարծէք նո՛յն ընտանիքի անդամներ, ջե՛րմ սրտով եկած են քով քովի եւ ջերմացուցած իրենց հոգիները իրարմով ինչպէս եւ հայկականութեան հետ աղերս ունեցող ամէն կերպով՝ հայերէն լեզու, հայկական խոհանոց, հայերէն երգ, ազգային այժմէական խօսակցութիւն, Ղարաբաղ ու Եռագոյն:

Այցելութիւնս պատճառ կ'ըլլայ որ այդ սրտակից տղաքը անգամ մըն ալ մէկտեղուին, այս անգամ Վիգէնին տունը:

Արսլանեանները՝ ծանօթ ադամանդի վաճառականներ Անվերսէն, Ափրիկէի մէջ ունին առեւտրական մեծ ցանց մը: Վիգէն Տէր Սարգիսեանը անոնց Ապիճանի գրասենեակի տնօրէնն է: Ծառ փափուկ ու կարեւոր պաշտօն մը՝ անկասկած:

Փղոսկրեայ Ափի (Այվըրի Քոսթ/Քոթ տ'Իվուար) ամբողջ տարածքին յայտնի է անունը Ռեյմոն Եզեկիէլեանին: Զայն տասնամեակ մը առաջ «Զարթօնք»ի ու «Պաշար»ի մէջ մկրտած էի Արեւմտեան Ափրիկէի «Հայոց Դեսպան» անունով:

Ապիճան հաստատուած են հայեր Պէյրութէն, Արժանթինէն, Ամմանէն, Պոլսէն ու Ֆրանսայէն: Լիբանանի քաղաքացիական պատերազմին հետեւանքով տասնեակ մը հայեր հաստատուած են հոս: Ապիճանի ասագանիի տիկիններուն համար «Կարօ» վարսաւիրանոցը ժամադրավայր մըն է արդէն:

Սոնան (Խաչատուրեան), շատո՞նց եկած է հոս ու հիմնած իր փոխադրական ընկերութիւնը, ժամանակ մը փոխադրակառքեր բանեցնելով Ապիճանի նաւահանգիստէն դէպի ներսի երկիրները...:

Վիգէնի տան մէջ կ'ունենամ հաճոյքը հանդիպելու սրտակից զոյգի մը՝ Պերճ եւ Լիզա Սվանեաններու, առաջինը շրջանաւարտ Պէյրութի Յովակիմեան-Մանուկեան վարժարանէն եւ երկրորդը՝ Դարուհի Յակոբեանէն, երկուքն ալ ատանացիի զաւակ: Հրաշալի զուգորդութիւն: Նորապսակ ամուսինք, որ իր մեղրալուսինը անցուցած էր Հայաստան: Պերճը կը յիշէր թէ եղած էր իմ սկաւտը Պէյրութի լա՛ւ օրերուն, երբ Հ.Ե. Ընկերակցութիւնը սերունդներ կը հաւաքէր խտացնելու Հ.Բ.Ը.Մ.ի շարքերը, իրա՛ւ անդամակցութիւնը:

Եւ այսպէս, տասնեակ մը ուրիշներ իրենց հայու կեանքը կապած են Ապիճանի առօրեային:

ՌԷՅՄՈՆ ԵԶԵԿԻԷԼԵԱՆ
Ապիճանի հայոց «դեսպան»



Հ.- Ութը-տասը տարի առաջ երբ հանդիպեցանք, ձեր մասին գրեցի ձեզ հայոց «դեսպան» կոչելով: Հիմա որ Հայաստանի Հանրապետությունը դեսպանատուներու շարք մը ունի զանազան երկիրներու մէջ, չէ՞ք խորհիր որ Սեւ Ափրիկէն ալ ունենալու է հատ մը անոնցմէ:

Պ.- Այո՛, տնտեսական յարաբերութիւններու մեծ կարելիութիւններ կան փոքրիկեան երկիրներու եւ Հայաստանի միջեւ: Կարելի է մեծ գործեր ընել Հայաստանի համար այս երկիրներէն: Ֆրանսա գտնուած միջոցիս կէս-կատակ, կէս-չիտակ ինծի ըսին թէ այս մասին մտածեմ: Պէտք է հետապնդել: Շուտով Ուաշինկթըն պիտի մեկնիմ հանդիպելու Պրն. Լեւոն Տէր-Պետրոսեանին հետ: Իմ ամբողջ օժանդակութիւնս պիտի դնեմ իր տրամադրութեան ներքեւ՝ հոս դեսպանատուն մը բանալու խնդրով: Ապիճանը այս շրջանի երկիրներուն մէջ ամենէն յառաջացած քաղաքն է եւ ունի նաեւ դիւրութիւններ կառավարական շրջաններու մօտ:

Հ.- Ինչպէ՞ս. կրնա՞ք օրինակ տալ:

Պ.- Այո՛, օրինակ նախագահական պալատի «չէֆ տը փրոթոքտը»՝ Պրն. Ճորճ Ուէնիէն (George Ouegnin) կէս-հայ է: Քոթ տ'իվուարի երկու տարի առաջ մահացած առաջին նախագահին՝ Ֆելիքս Հուֆուէ-Պուանիէյի մօտիկ բարեկամն էր ան: Այսօր ալ նոր նախագահին՝ Հանրի Քոնան Պետիէի օրով կը վարէ նոյն պաշտօնը: Շատ յարգուած անձնաւորութիւն մըն է: Աւելցնեմ թէ ան ձեր Ամերիկայի հայ հարուստներուն չափ միլիոնատէր մըն ալ է:

Ճորճին հայրը Բ. Պատերազմի օրերուն Ֆրանսական բանակին կողմէ զրկուած է Լիբանան, ուր ամուսնացած է Աւետիքեան անունով հայ օրիորդի մը հետ ու ապա հաստատուած Ապիճան: Լիբանանցիները Ճորճը լիբանանցի նկատելով մօտիկ յարաբերութիւններ մշակած են հետը եւ բաւական օգտուած: Նկատելով որ մայրը հայ է, ան Հայաստանի շատ օգտակար կրնայ ըլլալ:

Հ.- Բացի Ապիճանէն, ո՞ր ազդեցիկ հայեր կան:

Պ.- Լոմէի (Թոկօ) Պազալեանները շատ մօտ են նախագահ Այատի-

մային: Անոնք ծանօթ են հացահատիկի գործով եւ տէր են ջաղացքներու: Աքքրայի (Կանա) մէջ Գասարճեանները շինարարական մեծ գործ ունին: Անոնք ալ մօտ են նախագահ Ճերի Ռոլինկզին: Լա՛ւ ազգայիններ են եւ Պէյրութի մէջ դպրոց մըն ալ հաստատած են:

Ափրիկէի մեծ քաղաքներուն մէջ կը գտնուին նաեւ Արսլանեանները, որոնք աղամանդի հսկայ գործառնութիւններ կ'ընեն եւ լաւ կապեր ունին տեղական իշխանութիւններու հետ:

Լիպերիոյ մէջ կան հայ ոսկերիչներ: Ասդին-անդին եւս ցրուած հայու բեկորներու կարելի է հանդիպիլ:

Դեսպանատունը օգտակար կրնայ ըլլալ թէ՛ տեղւոյն հայերուն եւ թէ՛ մանաւանդ Հայաստանի՝ տնտեսական կապերու գծով:

Ըսեմ թէ խորհրդային իշխանութեան օրով Ափրիկէէն շատ երիտասարդներ համալսարանական կրթութիւն ստացած են խորհրդային երկիրներու մէջ եւ այսօր կը գտնուին պատասխանատու պաշտօններու վրայ: Անոնք բոլորն ալ գիտեն հայերուն ո՛վ ըլլալը: Հիմա առիթն է օգտուելու այս պատեհութենէն:



Արեւելեան Ափրիկէի այս գոհար երկրին մէջ կայք հաստատած հայերու հետ: Պրն. Եգեկիւեան կը մնայ ամենատարեցը...

Հ.- Ե՞րբ հաստատուած էք Ապիճան եւ ի՞նչ գործով կը զբաղիք:

Պ.- Եկած եմ Փարիզէն իբրեւ էտիրնեցի հօր զաւակ: Երեսուն տարիներէ ի վեր գրասենեակ ունիմ հոս: J&B ուխաքի եւ այլ ըմպելիներ ներածած եմ: Revelon-ն ալ իմս է: Ունիմ նաեւ կահաւորուած շտեմարաններ եւ գրասենեակներ, զորս վարձու կու տամ:

Հիմա հոս ներկայացուցիչ դրած եմ՝ Փարիզ ալ գործ ունենալով: Ամէն ամիս Փարիզէն Ապիճան երթ ու դարձ կը կատարեմ:

Հ.- Իսկ ձեր ընտանեկան պարագանե՞րը:

Պ.- Ունիմ երկու աղջիկ զաւակներ, մին 18 եւ միւսը 19 տարեկան:

Առաջինը՝ Վարդուհին, ճաբոնցի կնոջմէս. երկրորդը՝ Անուշը, մաւրիտանացի կնոջմէս: Երկուքն ալ հայերէն կը խօսին: Հայաստան այցելած են եւ իմ հայերէնս կը սրբագրեն:

Հայ մնալը կարեւոր է ու հայ կրնանք մնալ մեր լեզուն սորվելով միայն:

Հպարտ եմ որ երկու աղջիկներս ալ հայերէն կը խօսին ու հայ կը զգան: Դիւրին չէր այս ընել, բայց ըրի՛:

Ապիման, Քոթ տ'իվուար

«ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆ», 19 Հոկտեմբեր 1995

«ԶԱՐԹՕՆՔ», 15 Նոյեմբեր 1995

«ՄԱՐՄԱՐԱ», 9 Յունուար 1996

«ՏԻ ԱՐՄԻՆԻԸՆ ՌԻՓՈՐԹԸՐ», 9 Յունուար 1999



Պէյրութի Միջերկրականը քերող ծովափնեայ ճամբան:

ՊԵՅՐՈՒԹԸ ԻՐ ՀԱՅՈՒԹԵԱՄԲ

Դարձեալ կը վերականգնի լիբանանահայ մեր աննման գաղութը՝ ինչպէս Լիբանանը ի՛նք կրկին կը բարձրանայ քար քարի վրայ:

Արտագաղթած կամ այս աշխարհէն ընդմիշտ մեկնած սերունդներու փոխարէն հասած է նոր սերունդ մը, որ թէեւ քիչ մը անծանօթ՝ երկար տարիներէ ի վեր հեռացածներուս, կը դրսեւորէ հայրենասիրական ասանդական գերազանց ոգի մը՝ բաղդատմամբ այլ գաղութներու ազգային գիտակցութեան:

Պէյրութի եւ մերձակայքի մէջ կը շարունակեն գործել Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնն ու Հայ Կաթողիկէ Պատրիարքութիւնը: Գոհունակութեամբ պետք է արձանագրել թէ Ռ.Ա.Կ.ի Կեդրոնական Վարչութեան Պէյրութ վերադարձով՝ հայ քաղաքական ասանդական երեք կուսակցութիւններու կեդրոնները հաստատուած կ'ըլլան նոյն քաղաքը:

Տնտեսական դժուարութիւններ, անշուշտ, կան ու պիտի ըլլան, մա՛նա-

ւանդ 16 տարիներու երկա՛ր պատերազմէ ետք. սակայն նշմարելի է մեր նոր սերունդին մօտ լիբանանցիէն ժառանգուած փինիկեան նկարագիրը՝ մոխիր-ներէն վերածնելու յատկութիւնը:

Երբ ամերիկեան ափերը նոր հաստատուած էի, ծանօթ մտաւորական բարեկամս ըսած էր թէ հո՛ւն ուր հայկական երկրորդական վարժարան կայ՝ հայ գաղութը երկա՛ր ժամանակ կը դիմանայ ու կը պահէ իր ազգային դիմագիծը: Ծիշդ էր այդ ազնիւ հայը, որուն հետ մինչեւ օրս կը պահեմ անկեղծ սերտակցութիւնս: Լիբանանի մէջ գործող տասէ աւելի հայկական բարձրագոյն վարժարանները մէկական վառարաններ են տակաւին ազգա-պահպանման. աւելի՛ն՝ պահանջատիրութեան:

Երբ քալենք Հանընի, Խալիլ Պետեիի կամ Պուրճ Համուտի հայաբնակ թաղերուն մէջ՝ համարեա ոչինչ փոխուած կը գտնենք երբեմնի Պէյրութի հայկական կեանքէն ու առօրեայէն:

Հոն կարճատեւ կեցութեանս շրջանին կը լսեմ բարի լուրերը արաբական աշխարհէն թէ հեռաւոր Գալիֆոռնիայէն բազմաթիւ ընտանիքներու վերա-դարձին իրենց ծննդավայրը:

Լիբանանահայութիւնը շուտով պիտի վերստանձնէ իր նախկին ամբող-ջական դերը՝ առաջնորդելու սփիւռքահայ ազգային կեանքն ու յատկապէս հայութեան անժամանցելի դատի հետապնդման աշխատանքները, որպէս արժանաւոր տէրը մեր բռնագրաւեալ հողերուն:

Օգտուելով կեցութեանս առիթէն, հարցազրոյցներ կ'ունենամ լիբանանա-հայ գաղութին մէջ գործող դէմքերու հետ: Հարցազրոյցներ, որ հերթաբար կը ներկայացնեմ «Անկախութիւն»ի ընթերցողներուն:

ԵՐՈՒԱՆԳԻ ՄԵԼՔՈՆԵԱՆ
Հայաստանի Հանրապետության
Հաւատարմատար



Հ.- Լիբանանի մէջ է մեր ամենէն հալածարար գաղութը: Ինչպիսի՞ր ընդունելութեան արժանացաք Պէյրութի մէջ իբրեւ առաջին հալոց դեսպան:

Պ.- Նախ, եթէ թոյլ տրուի ինձ, մի ուղղում պիտի մտցնեմ: Ես Հայաստանի Հանրապետութեան Հաւատարմատար եմ Լիբանանի մէջ եւ ո՛չ դեսպան: Դեսպան՝ թերեւս գործով, որովհետեւ դեսպան նշանակում է պատուիրակ, մի առաքելութիւն տեղ հասցնելու իմաստով:

Լիբանանահայութիւնն ինձ ընդունեց շատ ջերմ: Որոշ նախապատրաստութիւններ կատարուել էին արդէն դեսպանատան բացման առընչութեամբ: Կազմուել էր ներկայացուցչական բնոյթի մի յանձնաժողով կուսակցութիւնների, բարեսիրական կազմակերպութիւնների եւ համայնքների ներկայացուցիչներով, որոնց հետ ես առաջին իսկ օրուանից ժողովի նստեցի եւ հետեւանքը եղաւ այն, որ շատ կարճ ժամանակի մէջ, տակաւին ժամանումիցս մի ամիս չանցած, ունեցանք այս դեսպանատունը որպէս վարձու շէնք եւ աշխատավայր:

Առաջին շրջանին, կարելի է ասել, գործակցութիւնը գրեթէ բացարձակ էր: Բայց այդ օրուանից զգալի էր մի բան. իւրաքանչիւր կազմակերպութիւն փորձում էր իր ազդեցութեան ոլորտի տակ կամ մէջ առնել դեսպանատունը: Նոյնիսկ առաջարկներ էին լինում որ պետական գրասենեակների հետ շփումները լինեն հայկական երեսփոխանական պլոքի միջոցով, պատճառաբանելով որ նրանք երկրին եւ մարդկանց ծանօթ են: Առաջին իսկ պահից յստակ ասուեց բոլորին որ Հայաստան-Լիբանան պետական յարաբերութիւնները կազմակերպուելու եւ յառաջ են տարուելու միայն Հայաստան-Լիբանան պետական կառոյցների միջոցով եւ ո՛չ թէ Լիբանանի պետութեան խորհրդարանի անդամի հետ ես ներկայանամ լիբանանեան պետական որեւէ կառոյցի եւ ներկայացնեմ Հայաստանի խնդիրները:

Առաջին իսկ օրուանից յստակ էր որ Հ.Հ. դեսպանութիւնը գալիս է այստեղ հիմնական նպատակ ունենալով միջ-պետական յարաբերութիւնները:

Հո՞ծ գաղութի ներկայութիւնը, լաւագոյն պարագային, պէտք է

դառնայ օժանդակ միջոց՝ աւելի սերտացնելու այդ յարաբերութիւնները, աւելի հեշտացնելու շփումները. բան՝ որ սկզբնական շրջանում թւում է թէ տեղի ունեցաւ. բայց ղժբախտաբար դէպքերի զարգացման հետեւանքով, բոլորին ծանօթ պատճառներով, որոշ խմբակցութեան կողմից վերածուեց նոյնիսկ արգելակի: Այսօր մենք աշխատում ենք մօտաւորապէս արգելքների յաղթահարման իրադրութեան մէջ:

Հ.- Այս գաղութը անշուշտ կ'ուզէ կապ մը ստեղծել նորահաստատ հանրապետութեան հետ: Ժամանակին այդ կապը Մշակութային Կապի Կոմիտէին միջոցով կ'իրագործուէր: Արդեօք դեսպանատունը ձեռով մը այդ դերն ալ ստանձնելու պարտաւորութիւն կը զգա՞:

Պ.- Եթէ Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէի առաքելութիւնը մշակութային կապեր սերտացնելն էր, ինչպէս անունը ինքն է ասում, շատ բնական է որ իւրաքանչիւր դիւանագիտական առաքելութիւն, Հայաստանի ներկայացուցչութիւն պիտի իր վրայ վերցնի այն բոլոր հնարաւոր կապերի տարողութիւնը, որ պէտք է սփիւռքի եւ Հայաստանի միջեւ: Եւ դա մենք անում ենք փաստական ձեւով՝ մշակութային խմբերի փոխադարձ այցելութիւններ, համայնքային շփումներ, կուսակցական շփումներ, եւլն: Բոլորը տեղի են ունենում դեսպանատան միջոցով: Մշակութային Կապի Կոմիտէի գոյութեան գլխաւոր պատճառներից մէկն էլ այն էր, որ Խորհրդային Միութեան նկատմամբ դրսում գոյութիւն ունեցող անհանդուրժողութեան պատճառով, այդ հաստատութիւնը օգտագործւում էր հասարակական միջոցներով պետական նպատակների ծառայեցնելու համար: Որտեղ պետութիւնը ուղղակի չէր կարող թափանցել, թափանցում էր Մշակութային Կապի Կոմիտէի միջոցով:

Մեր պարագային, այդ խնդիրը չունենք: Այսօր Հայաստանը անկախ պետութիւն է, ինքը ամբողջապէս որոշում է իր յարաբերութիւնները ուզած երկրի հետ, ուզած մակարդակով: Կարիք չունենք այսպէս կոչուած ոչ-բացայայտ երեւալու: Որտեղ որ խնդիր ունենք, կարող ենք յստակօրէն երեւան գալ:

Ուրիշ հարց է թէ տուեալ համայնքի, գաղութի կեանքում մենք որքանո՞վ պիտի ներկայ լինենք: Իմ ներկայութիւնը թերեւս կարելի լինի բանաձեւել այսպէս: Եթէ ես հրաւիրւում եմ որեւէ ձեռնարկի՝ կազմակերպուած որեւէ միութեան կողմից, ներկայ եմ լինում՝ իմ ներկայութեամբ բերելով հայրենիքի ներկայութիւնը. ո՛չ աւելի: Ո՛չ մէկ միջամտութիւն այդ ձեռնարկը կազմակերպելու մանրամասնութիւններին եւ նպատակներին:



Հայրենի բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկեանի Պէշտօթ այցելութեան շրջանին, Թէքէեան Մշակութային Միութեան Հիմնադիրներու Մարմնի ատենապետ ընկեր Կարապետ Պապահէքեանի կողմէ հիւրին ի պատիւ տրուած ընդունելութեան ես եւս ներկայ գտնուեցայ կնոջս՝ Արփիին հետ: Անմոռանալի օր մը անցեալէն:

Հ.- Հայաստան Համահայկական Հիմնադրամը այսօր կ'ուզէ լայն չափով հասնիլ երկրի կարիքներուն: Ինչպէ՞ս կ'ընթանան դրամահաւաքի աշխատանքները Լիբանանի մէջ:

Պ.- Ինչպէս բոլոր գաղութների մէջ, Հայաստան Համահայկական Հիմնադրամի յանձնաժողով կազմուած էր նաեւ Լիբանանում՝ ներկայացուցչական եղանակով: Այն գործում էր առաջնորդարանի հովանաւորութեան տակ: Մեզ յայտնի դէպքերի, յայտնի որոշումների պատճառով, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ներկայացուցիչները, որպէս ուղղակի կուսակցութեան եւ պլոքի ներկայացուցչութիւն, քաշուեցին գործունէութիւնից: Ուրեմն, պարզ է, ատենապետը, որ ներկայացուցիչն էր Հայ Առաքելական Եկեղեցու, նոյնպէս մեզ համար հասկանալի պատճառներով սառեցրեց իր աշխատանքները եւ մօտաւորապէս տասը ամիս, փաստօրէն, Հայաստան Համահայկական Հիմնադրամը գոյութիւն չունէր իբրեւ գործունէութիւն:

Վերջերս Հայաստանից վերադարձայ բաւական վճռական տրամա-

դրույթեամբ: Ինչպէս գիտէք, Ամերիկայում նախկին կառոյցն ու ձեւը փոխուեցին. նոյնը լինելու է Լիբանանում: Գործին պիտի մասնակցեն կամաւոր մարդիկ՝ անկախ իրենց կուսակցական պատկանելութիւնից, որպէսզի վաղը եւս մէկ կամ միւս կուսակցութեան կամ համայնքի տրամադրութիւնները չազդեն կազմակերպութեան գործունէութեան վրայ: Ես իբրեւ հաւատարմատար ունեմ նաեւ մի ուրիշ գիտակցութիւն՝ Հայաստան Համահայկական Հիմնադրամը պետական կառոյց է. ուրեմն՝ Հայաստանի դեսպանատները պէտք է մշտական ներկայութիւն ունենան այդ գործունէութեան մէջ: Գալուցս անմիջապէս յետոյ ես հաւաքել եմ այդ յանձնաժողովը: Առաջնորդարանի նախանձախնդրութիւնը անմիջապէս բարձրացաւ, նրանք անմիջապէս հաւաքուեցին եւ ես գնացի ժողովի: Այնտեղ գծուեցին բոլոր տեսակի գործունէութիւնները եւ առնուեցին որոշումները դրամահաւաքի, քանի որ Մարտին սպասում էինք ՏԿն. Մանուշակ Պետրոսեանի այցելութեանը Լիբանան: Նրանց տուի առիթը միայն մասնակցելու նրան դիմաւորելու:

Նոր կառոյցով՝ Հիմնադրամը Լիբանանում կը սկսի շատ լաւ աշխատել, որովհետեւ կան Հայաստանի այսօրուան վիճակով մտահոգ մարդիկ, պատրաստակամ են օգնել:

Այս հարցի մասին իմ փիլիսոփայութիւնը հետեւեալն է՝ Հիմնադրամը իւրաքանչիւր սփիւռքահայի իր հայրենիքի նկատմամբ զգացած պատասխանատուութեան չափանիշն է: Ինչքան պատասխանատու ես զգում Հիմնադրամի նկատմամբ, եւ ինչքանով մասնակցում ես, այդքան է քո պատասխանատուութեան չափը Հայաստանի հանդէպ:

Հ.- Որքանո՞վ օգտակար պիտի ըլլայ Նախագահին այցելութիւնը Միջին Արեւելք, մանաւանդ Լիբանան: Պրն. Լեւոն Տէր-Պետրոսեանի այցելութիւնը Մ. Նահանգներ հայրենասիրական հսկայ շարժում մը մէջտեղ բերաւ:

Պ.- Զի կարելի որեւէ պետութեան նախագահի այցելութիւնը հիմնաւորել որեւէ համայնքի այցելելու նպատակով: Առաջին հերթին, նախագահի այցելութիւնը իբրեւ ենթահող պիտի ունենայ միջ-պետական յարաբերութիւնների մակարդակի եւս բարձրացում: Այսինքն՝ նախագահը պէտք է պատրաստի նոր պայմանագրեր, այցելուելիք պետութիւնը պէտք է պատրաստակամ լինի յարաբերութիւնների խորացման եւ զարգացման: Միայն համայնքին այցելելու համար պիտի չուզէի որ մեր նախագահը գար Լիբանան:

Հ.- Սակայն Լիբանանի գաղութը տարբեր է ուրիշներէ. ան մեր քաղաքական կազմակերպութիւններու կեդրոնն է եւ ունի կաթողիկոսական աթոռ:



Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թանգարանը, Անթիլիաս:

Պ.- Նոյնն է. Նախագահի հանգամանքը վե՛ր է բոլոր տեսակի այսպիսի գաղութների այցելելու անհրաժեշտութիւնից: Ինչքան շուտ հասկանանք պետականութեան այս ըմբռնումը, այնքան լաւ: Շատ լաւ կը լինի եթէ մենք ունենանք միջ-պետական յարաբերութիւնների հող, այն ժամանակ անշուշտ Նախագահի այցելութիւնը մեծապէս կ'օգնի ազգային տրամադրութիւնների բարձրացման: Մանաւանդ որ, եթէ զուտ մարդկային տեսակէտից խօսենք, վստահ եմ որ Նախագահի մտապատկերի նկատմամբ վերապահութիւն ունեցող մարդիկ իր խօսքը լսելուց յետոյ տեղի կը տան:

Հ.- Քաղաքացիութեան հարցը փոթորիկ ստեղծեց մանաւանդ միջին ու տարեց սերունդներուն մօտ: Արդեօք աւելի ճկուն ձեւով կարելի չէ՞ր այդ հարցը Ազգային Ժողովէն անցընել:

Պ.- Եթէ խնդիրը դնում էք կարելիութեան մակարդակով, միշտ ամէն ինչ կարելի է: Բայց մենք պէտք է մտածենք երկու հիմնական խնդիրների մասին: Ենթադրենք մենք սփիւռքահային տուինք Հայաստանի մէջ քաղաքացիութեան իրաւունք: Իւրաքանչիւր քաղաքացիութիւն ենթադրում է պարտականութիւններ եւ իրաւունքներ: Տուեցինք

իրաւունքը՝ որտե՞ղ է պատասխանատուութեան չափանիշը: Խնդիրը անպայման պիտի բարձրանայ միջ-պետական յարաբերութիւնների մակարդակի վրայ: Բացի այդ, քանի՞ հոգի պիտի ուզենայ ունենալ: Արդե՞ծ ք յարուցուած աղմուկը համաչափ է այդ քաղաքացիութիւնը ունենալու մարդկանց պատրաստակամութեանը: Կարծում եմ որ խնդրի հիմնական դժուարութիւնը կապուած է ներքին սփիւռք կոչուածի հետ: Այսօր բազմահազար հայութիւն ունենք նախկին Խորհրդային Միութեան տարբեր երկրներում: Եթէ հայաստանցուն իրաւունք տայինք երկրորդ քաղաքացիութեան՝ բնակչութեան կէսից աւելին կարող էր դառնալ Ռուսաստանի քաղաքացի:

Յարաբերութիւնների ներկայ ինտենսիվութեամբ՝ ոչինչ չէինք կարողանայ պարտադրել մեր քաղաքացուն: Ո՛չ մի սփիւռքահայ եղբայր զրկուած չի քաղաքացի լինելու իրաւունքից: Նա կարող է որեւէ ժամանակ դառնալ Հայաստանի քաղաքացի, մի քիչ էլ ինքը տանել մութի բեռը իր վրայ..., եւ ինչո՞ւ չէ, պարտականութիւնները կատարել այս անգամ սփիւռքից եկած իր նոր եղբայրների հետ:

Հ.- Հաւանաբար կ'ընդունիք որ այս երկիրը սուրիական զօրաւոր ազդեցութեան տակ է: Այդ բանը զգալի՞ է ձեր աշխատանքներում մէջ:

Պ.- Իւրաքանչիւր երկիր, որտեղ դու հաւատարմագրուում ես իբրեւ պետութիւն եւ ներկայութիւն, ընդունում ես այդ երկրի քաղաքականութիւնը իբրեւ առկայ փաստ եւ ըստ այնմ մշակում ես քո յարաբերութիւնները ելնելով առկայ իրադրութիւնից: Այսօր եթէ կայ բացարձակ համագործակցութիւն խաղաղութեան գործընթացում Լիբանանի եւ Սիրիայի միջեւ, ես վերջերս իմ մի հարցազրոյցում դա համարեցի խելացի քաղաքականութիւն: Այսօր Լիբանանը որեւէ զինակից չունի իր վիճակով այնքա՛ն մտահոգ եւ քաղաքականապէս նաեւ հարաւը ազատագրելու այնքա՛ն պատրաստակամ ու կարող՝ ինչքան Սիրիան: Հետեւաբար, այս երկու պետութիւնների յարաբերութիւնները մենք պիտի ընդունենք իբրեւ առկայ փաստ եւ այնուհետեւ մշակենք մեր յարաբերութիւնները երկուսի հետ, բնաւ չմոռանալով նրանց յարաբերութիւնների բնոյթը:

Մեր խնդիրն է լաւագոյն յարաբերութիւններ ստեղծել Լիբանանի հետ՝ փոխադարձ համագործակցութեան եւ օգնութեան համար:

Հ.- Հիմէն ի վեր յստակ է Լիբանանի քաղաքական կառոյցը, որ ստեղծուած է յարանուանական հիմքի վրայ: Որքանո՞վ կրցաք թափանցել այս երկրին ինքնաշարժ քաղաքականութեան:



Պէշրուքի մէջ հրատարակուող բազմաթիւ թերթերէն ու պարբերաթերթերէն
նմոյշներ:

Պ.- Քիչ առաջ ըսի որ իւրաքանչիւր երկրի քաղաքական, տնտեսական, հասարակական կառոյցը պէտք է ընդունեն իբրեւ առկայ փաստ: Լիբանանը համայնքային երկիր է, որտեղ հաւանաբար երկար ժամանակ համայնքի անդամները չեն մոռանայ իրենց համայնքային պատկանելութիւնը: Հայաստանի պետութեան խնդիրը թափանցել չէ համայնքների ներքին յարաբերութիւնների մէջ, կամ՝ հակակշռել կամ մերձեցնել դրանք: Մենք պարզապէս հետեւում ենք այդ յարաբերութիւններին եւ աշխատում այդ յարաբերութիւնների միջեւ հնարաւոր համագործակցութիւնից օգուտ հանել մեր պետութեան համար: Մենք չենք աշխատի նրանց հակասութիւնների վրայ: Մենք իրաւասու չենք միջամտելու երկրի ներքին գործերին:

Հ.- Գալիք տարիները տնտեսապէս յուսադրիչ են Լիբանանի համար: Անկրնայ վերադառնալ միջինարեւելեան իր նախկին փառքի օրերուն: Ինչպէ՞ս կրնաք այդ տնտեսական բարգաւաճումէն օգուտ քաղել Լիբանան-Հայաստան յարաբերութիւններուն համար:

Պ.- Տնտեսական փոխադարձ յարաբերութիւնների հնարաւորութիւնը եւ կարիքը կայ նաեւ այսօր: Օրինակ, Լիբանանը ունի սնունդի եւ թեթեւ արդիւնաբերութեան գերարտադրութիւն: Բաւական արաբ լիբանանցիներ արդէն սկսել են առիթը օգտագործել Հայաստանում այդ գործերը վարելու եւ կարեւոր եկամուտներ են ունենում: Նոյնիսկ այն աստիճան, որ իրենց ուշադրութեան կենտրոնը տեղափոխում են Հայաստան, քանի որ այնտեղից նոր հորիզոններ կը բացուեն իրենց առաջ:

Ենթադրենք խաղաղութեան գործընթացը տեղի ունեցաւ, Լիբանանի հարաւը ազատագրուեց եւ Լիբանանի իշխանութիւնը կարողացաւ ամբողջապէս լծուել տնտեսական վերափոխումների: Այս երկիրը իբրեւ տնտեսական կառոյց ակնառու է իր դրամատոնային համակարգով եւ զբօսաշրջութեամբ: Այս երկու բաժիններում մենք կարող ենք մեծապէս օգտակար դառնալ իրար: Մեր ֆինանսական կենսափորձը մեծ չէ Հայաստանում եւ շատ բան ունենք սովորելու Լիբանանից:

Բայց Հայաստանը նոյնքան եւ թերեւս աւելի զբօսաշրջային հնարաւորութիւններ ունեցող երկիր է: Կարող է արդիւնաւէտ գործակցութիւն լինել Լիբանանի եւ Հայաստանի միջեւ այս գծով, որովհետեւ Հայաստանը բազմամշակոյթ ներկայութիւն ունի նախաքրիստոնէական շրջանից մինչեւ նոր շրջան: Լիբանանի առաւելութիւնն էլ այն է, որ ունի արաբական եւ իսլամական մշակոյթի հիմնակէտեր: Փոխադարձ զբօսաշրջային գործակցութեան տեսակէտից շատ մեծ անելիքներ կը լինեն վաղը: Ես Լիբանանի ապագան տեսնում եմ այս երկու հնարա-

ԼԻԲՐԱՐՆԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՄԻԱԿԱՄ ՄԵՐԺՈՒՄԸ

ՊԱՏՄԱԿԵՐՏ ԳԱՐՈՒԹՅՈՒՆ «ՌՉ»

Հիմնականում թարգմանիկ լուսանկարչական էրը պատկերասրահներում այս միջոցով հրատարակվողները պատկերում են իրենցից հենց անկողնային լուսանկարչական փորձը և հայտնի էր լուսանկարչական ժանրի զարգացման ամենաակտիվ ժամանակներին:

Հիմնականում լուսանկարչական էրը պատկերասրահներում այս միջոցով հրատարակվողները պատկերում են իրենցից հենց անկողնային լուսանկարչական փորձը և հայտնի էր լուսանկարչական ժանրի զարգացման ամենաակտիվ ժամանակներին:

Հիմնականում լուսանկարչական էրը պատկերասրահներում այս միջոցով հրատարակվողները պատկերում են իրենցից հենց անկողնային լուսանկարչական փորձը և հայտնի էր լուսանկարչական ժանրի զարգացման ամենաակտիվ ժամանակներին:

Հիմնականում լուսանկարչական էրը պատկերասրահներում այս միջոցով հրատարակվողները պատկերում են իրենցից հենց անկողնային լուսանկարչական փորձը և հայտնի էր լուսանկարչական ժանրի զարգացման ամենաակտիվ ժամանակներին:

Հիմնականում լուսանկարչական էրը պատկերասրահներում այս միջոցով հրատարակվողները պատկերում են իրենցից հենց անկողնային լուսանկարչական փորձը և հայտնի էր լուսանկարչական ժանրի զարգացման ամենաակտիվ ժամանակներին:

ՕՐԱՆՏ ԳԵՐԹՆԵՐԻՄԸ
(Շաբաթ 12 4)

ՀԱՄԱՐԱԿԱՐԴՈՒԹՅՈՒՆ

Մեր քա. 1701 թվականից Լիբրանտում առաջին անգամ հրատարակվել էր լուսանկարչական ժանրի զարգացման ամենաակտիվ ժամանակներին:

Հիմնականում լուսանկարչական էրը պատկերասրահներում այս միջոցով հրատարակվողները պատկերում են իրենցից հենց անկողնային լուսանկարչական փորձը և հայտնի էր լուսանկարչական ժանրի զարգացման ամենաակտիվ ժամանակներին:

Հիմնականում լուսանկարչական էրը պատկերասրահներում այս միջոցով հրատարակվողները պատկերում են իրենցից հենց անկողնային լուսանկարչական փորձը և հայտնի էր լուսանկարչական ժանրի զարգացման ամենաակտիվ ժամանակներին:

Հիմնականում լուսանկարչական էրը պատկերասրահներում այս միջոցով հրատարակվողները պատկերում են իրենցից հենց անկողնային լուսանկարչական փորձը և հայտնի էր լուսանկարչական ժանրի զարգացման ամենաակտիվ ժամանակներին:

ՕՐԱՆՏ ԳԵՐԹՆԵՐԻՄԸ
(Շաբաթ 12 4)

ԿԸ ՄԵՐԺԵՆԵՐ

Հիմնականում լուսանկարչական էրը պատկերասրահներում այս միջոցով հրատարակվողները պատկերում են իրենցից հենց անկողնային լուսանկարչական փորձը և հայտնի էր լուսանկարչական ժանրի զարգացման ամենաակտիվ ժամանակներին:

ՀԱՅ ԵՐԱՊԱՏՈՒՄ ԼԻԲՐԱՐՆԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՄԻԱԿԱՄ ՄԵՐԺՈՒՄԸ

Հիմնականում լուսանկարչական էրը պատկերասրահներում այս միջոցով հրատարակվողները պատկերում են իրենցից հենց անկողնային լուսանկարչական փորձը և հայտնի էր լուսանկարչական ժանրի զարգացման ամենաակտիվ ժամանակներին:

Հիմնականում լուսանկարչական էրը պատկերասրահներում այս միջոցով հրատարակվողները պատկերում են իրենցից հենց անկողնային լուսանկարչական փորձը և հայտնի էր լուսանկարչական ժանրի զարգացման ամենաակտիվ ժամանակներին:

(Շաբաթ 12 4)

ԳԵՐԹՆԵՐ ՄԵՐԺՈՒՄԸ ՄԱՅԻՆԱԿԱՐԴՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՒԹԵԱՆ ՄԻԱԿԱՄ ՄԵՐԺՈՒՄԸ

ԳԵՐԹՆԵՐԻՄԸ

Հիմնականում լուսանկարչական էրը պատկերասրահներում այս միջոցով հրատարակվողները պատկերում են իրենցից հենց անկողնային լուսանկարչական փորձը և հայտնի էր լուսանկարչական ժանրի զարգացման ամենաակտիվ ժամանակներին:

Հիմնականում լուսանկարչական էրը պատկերասրահներում այս միջոցով հրատարակվողները պատկերում են իրենցից հենց անկողնային լուսանկարչական փորձը և հայտնի էր լուսանկարչական ժանրի զարգացման ամենաակտիվ ժամանակներին:

Հիմնականում լուսանկարչական էրը պատկերասրահներում այս միջոցով հրատարակվողները պատկերում են իրենցից հենց անկողնային լուսանկարչական փորձը և հայտնի էր լուսանկարչական ժանրի զարգացման ամենաակտիվ ժամանակներին:

Հիմնականում լուսանկարչական էրը պատկերասրահներում այս միջոցով հրատարակվողները պատկերում են իրենցից հենց անկողնային լուսանկարչական փորձը և հայտնի էր լուսանկարչական ժանրի զարգացման ամենաակտիվ ժամանակներին:

ՕՐԱՆՏ ԳԵՐԹՆԵՐԻՄԸ
(Շաբաթ 12 4)

Միրիկի հայտնիությունը

Թուրքիայի վարչապետ Դեհմետ Թալիսի Էրդուդանի Լիբանան ուղևորության ժամանակ, մասնակցելով լիբանանահայտնական հասարակական մերժումը արդարապես ժողովրդային ցույցին:

Բոլորս համախմբելով Նոր Հանքերի միջև Դուրս Համուր երկարուղի մայրուղիի վրա՝ Չորեքշաբթի, 3 Յունուար 2007ին՝ կեսօրից երեք ժամը 1:00ին:

Համագործակցություն Հայ Դատին վերաբերող խնդիրներով:

ւորութիւններ ժէջ: Լիբանանը պիտի անի ամէն ինչ՝ վերագտնելու Մերձաւոր Արեւելքի մշակութային ուղեգծի իր հին դիրքը եւ վերստին դառնայ ֆինանսատնտեսական կենտրոն:

Հ.- Երբ Հայաստանի շրջափակումը վերանայ, կը խորհի՞ք որ լիբանանահայ գործարարներ պիտի սկսին ներդրումներ ընել Հայաստանի մէջ:

Պ.- Երեւոյթները իրատեսութեամբ գնահատենք: Լիբանանում չկայ քիչ թէ շատ հնարաւորութիւններ ունեցող հայ գործարար, որ քաղաքական կողմնորոշում կամ պատկանելութիւն չունենայ: Այդ կողմնորոշումից ելնելով, մի պարագային այն կարող է խրախուսիչ լինել՝ եթէ իր կողմը լաւ է տրամադրուած Հայաստանի նկատմամբ, եւ հակառակը: Կարծում եմ որ հիմնական խնդիրը Հայաստանն է: Պիտի անենք ամէն ինչ, որ Հայաստանի ներքին կայունութիւնը որեւէ ձեւով չվտանգուի. այլապէս, ոեւէ մէկը իր դրամները չի տանի եւ վտանգի չի ենթարկի: Կարեւոր է նաեւ այն, որ սփիւռքահայերը զգացական հայրենասիրութեան մակարդակից անցնեն գործնական յարաբերութիւնների մակարդակին: Սիրել կարելի է հայրենիքը, բայց նաեւ կարելի է դրամ չահել հայրենիքից: Լաւ է այն մարդը որ ե՛ւ սիրում է հայրենիքը ե՛ւ դրամ է չահում նրանից:

Հ.- Լիբանանը տարիներէ ի վեր Դաշնակցութեան աշխատանքի կեդրոնն է: Ըսել կ'ուզեմ «կեթօ»ն է: Հայաստան-Հ.Յ.Դ. լարուածութիւնը որքանո՞վ նեղութիւն կը պատճառէ ձեզի:

Պ.- Դուք դրի՞ք տեսական խնդիր՝ որ ես նեղութիւն պիտի ունենայի: Հաստատե՛մ. նեղութիւն ունեցայ: Եւ դեռ կարող եմ հաւանաբար ունենալ: Եւ մենք մեր քաղաքական յարաբերութիւնները առաջ կը տանենք այդ գիտակցութեամբ: Մենք նպատակ չունենք որեւէ մէկին ուղղելու, որեւէ մէկին սրբազրելու: Մեր հիմնական խնդիրը Հայաստան-Լիբանան միջ-պետական յարաբերութիւններն են: Եթէ մեզ չեն օգնելու, գոնէ չխանգարեն: Միեւնոյնն է, այդ յարաբերութիւնները զարգանում են: Որեւէ պետութիւն, ներառեալ Լիբանանը, չի հարցնում Դաշնակցութեան կարծիքը Հայաստանի հետ իր յարաբերութիւնները մշակելու համար: Լիբանանի պետութեան բոլոր բարձրաստիճան ներկայացուցիչները միշտ խօսում են Հայաստանի հետ բնականոն յարաբերութիւնների խորացման մասին:

Հ.- Բայց քանի որ ունին պետական երեսփոխաններ, կրնան արգելքներ յարուցանել եւ ժխտական «լուպիկն» ընել:

Պ.- Այսօր իբրեւ քաղաքական ուժ Հ.Յ.Դ.ի գծած ուղղութեամբ միատեղ գործող երեսփոխանական պլոք արդէն չկայ Լիբանանում: Յետագայում առաւել եւս չի լինի, որովհետեւ այս երկիրը եթէ պիտի զարգանայ ժողովրդավարութեան ուղղութեամբ, երեսփոխանին պիտի տայ ազատ մտածողութեան իրաւունք եւ քիչ թէ շատ իրեն յարգող երեսփոխանը պիտի նախընտրի ազատ որոշումի իր իրաւունքը հերթապահի գլխաւորած ժողովներին:

Հ.- Ինչպէ՞ս կը գնահատէք Ռ.Ա.Կ.ի 19-րդ Պատգամաւորական Ժողովի փլաթֆորմը Հայաստանի նկատմամբ:

Պ.- Փլաթֆորմի գնահատականը Ռ.Ա.Կ.ի անդամների իրաւունքն է: Մենք պարզապէս պիտի նշենք փաստը, որ մեր պետութեան համար կարեւոր էր այդ շրջադարձը: Ռ.Ա.Կ.ը ունէր մի աւանդութիւն Հայաստանի կողքին լինելու եւ սկսել էր անհասկանալի դառնալ թէ ինչո՞ւ էր նա տատանուում: Հիմա արդէն յստակ է: Այդ որոշումը եկաւ պատասխանելու Ռ.Ա.Կ.ի շարքերի եւ համակիրների տրամադրութիւններին, դրա համար էլ ողջունելի է եւ պէտք է յաջողութիւն մաղթել նոր Կենտրոնական Վարչութեանը: Տեղեակ եմ թէ ինչպիսի դժուարութիւններ են շրջապատել նրան: Փոփոխութեան «կոչ»երը չեմ կարծում որ արդիւնք կը տան: Այս վարչութիւնը նահանջի տեղ չունի: Ինքը արտայայտում է ժողովրդի տրամադրութիւնը եւ դրա վրայ հիմնուած պիտի ամրօրէն շարունակի իր գործը:



Քաղաքացիական պատերազմին աւարտէն ետք, Լիբանան առաջին այցելութեանս ընթացքին, Համրայի Քաւալիէր պանդոկին մէջ, Գէորգ Աճէմեանի եւ Պարոյր Աղպաշեանի հետ: Պանդոկը այդ օրերուն ժամադրավայրն էր ռամկավար եւ բարեկամ մտաւորականներու:

Հ.- Դիւանագիտական փորձ չէք ունեցած եւ նման դպրոցէ չէք անցած, եւ սակայն կը գործէք բարդ ուստանի մը մէջ: Ինչպէ՞ս կը յաղթահարէք դժուարութիւնները:

Պ.- Լիբանանում իմ հանդիպած առաջին դիւանագէտը Ռուսաստանի դեսպանն էր: Իր խորհուրդին դիմեցի թէ ինչպէ՞ս վարուեմ, նշելով որ փորձ չունեմ դիւանագիտական մարզում: Ասաց. «Բայց դու ունես ամենակարեւոր բանը՝ ազատ մտածելու հնարաւորութիւնը, քանի որ կաշկանդուած չես այդ բոլորով»: Ասեմ որ նա ճիշդ էր եւ այդ ազատ մտածելու հնարաւորութիւնն ինձ օգնեց:

Հ.- Մասնագիտութեամբ բանասէր էք: Առիթ ունի՞ք պարապելու ձեր մասնագիտութեամբ:

Պ.- Ոչ: Հայոց լեզուի եւ պատմութեան մասնագէտ եմ: Երկար տարիներ դասաւանդել եմ գրաբար: Կարօտով եմ յիշում այդ օրերը, եւ այդ կարօտը լցնելու համար շուտով Հայկազեան Գոլէճի ուսանողութեան կը տամ դասախօսութիւնների մի շարք «Հայոց լեզուի պատմութեան ուրուագիծ» անուան տակ: Սա պիտի նպաստի որ ես ինձ վերագտնեմ...:

Հ.- Դեսպանատան անձնակազմին մասին կ'ուզէ՞ք տեղեկութիւն տալ:

Պ.- Անձնակազմը փոքր է: Երեք դիւանագէտ ենք: Ունեմ մի առաջին քարտուղար, որ զբաղուած է տարածաշրջանի քաղաքական խնդիրներով, եւ մի կցորդ, որ վերջերս երկրորդ քարտուղարի մակարդակի բարձրացաւ: Գործունէութեան ոլորտը շատ յստակ չի, քանի որ ստիպուած ենք բոլորս ամէն ինչ անել:



ԷՏԻ ՊԱՀԱՏԻՔԱՆ

Ատենապետ Ռ.Ա.Կ. Լիբանանի
Շրջանային Վարչութեան

Հ.- Լիբանան սկսած է բոլորել վերականգնումի շրջան մը եւ վստահաբար լիբանանահայութիւնն ալ այս շրջանին վերանորոգ ոգիով պիտի ուզէ վերստանձնել սփիւռքահայութիւնը առաջնորդողի իր աւանդական առաքելութիւնը: Կրնա՞ք թուել այս սքանչելի գաղութին մէջ կատարուող կարգ մը նախաձեռնութիւններ:



Պ.- Մատնանշումդ ճիշդ է ու տեղի՛ն: Լիբանանահայութիւնը վերա-



Պէշրոթի Վահան Թէքէեան վարժարանը, որուն հողին գնման ու կառուցման մէջ մեծ դեր ունեցան Ռ.Ա.Կ.ի Միացեալ Նահանգներու գոյգ շրջանակները: Հակառակ Լիբանանի քաղաքացիական պատերազմին, ան բաց պահեց իր դուռները՝ որքան կրթական, նոյնքան բարեսիրական կարիքներուն առջեւ հայ թէ տեղացի արար բնակիչներու: Կրթական այս հաստատութիւնը իրագործուեցաւ շնորհիւ մեր Տէօրթ Եղէն եկած կրթասէր ընկերներու ամուր հաւատքին:

Նորոգ ոգիով կ'ուզէ վերստանձնել սփիւռքահայութիւնը առաջնորդողի իր աւանդական առաքելութիւնը: Մանաւանդ Հայաստանի անկախացումէն ետք, ըլլալով մօտ Հայաստանի, Արցախի թէ բռնազրաւեալ հայկական հողերուն, լիբանանահայ գաղութը այլ ընտրանք չունի՝ բացի վերագտնելէ իր աւանդական հզօրութիւնը: Պէտք է ընդգծել թէ առանց հայկական ազգային երեք կուսակցութիւններու դրական ներդրումներուն, Միջին Արեւելքի մեր գաղութները պիտի մատնուէին չփոթի, եւ թէ վերականգնումի գործընթացը ինկած է այդ կուսակցութիւններու ուսերուն: Վստահ ենք թէ մանաւանդ Միջին Արեւելքի մէջ հիմնական խաղաղութեան վերահաստատման ճիգերուն յաջողութեան պարագային՝ լիբանանահայ գաղութը դարձեալ կը դառնայ առաջնորդող միաւոր:

Հ.- Եկեղեցական տագնապը իր ամենէն սուր վիճակը ապրեցաւ 1956-ին, Պէյրութ, երբ Դաշնակցութիւնը գրաւեց Անթիլիասը: Այսօր կ'ուզենք ունենալ ձեր պաշտօնական կարծիքը՝ եկեղեցական տագնապի վերջին զարգացումներուն շուրջ:

Պ.- Մեր ժողովուրդի եկեղեցական տագնապը, անտարակոյս, զգալիօրէն նուազած է յատկապէս Գարեգին Ա.ի Ամենայն Հայոց իսկ Արամ Ա.ի Մեծի Տան Կիլիկիոյ կաթողիկոս ընտրուելէն ետք: Այսպէս կոչուած «տեթանթ»-ին իրականացման մէջ մեծ եղաւ դերը Հայաստանի Հանրապետութեան ներկայ իշխանութեան: Դրական բոլոր նախանշաններով հանդերձ, հեռու ենք տակաւին տագնապին լուծումէն: Կը տարուին լուրջ աշխատանքներ եւ Ռ.Ա.Կ.ը կը գնահատէ ու կը քաջալերէ մօտեցումի ամէն փորձ: Մենք սպասողական դրական դիրքի վրայ ենք: Սակայն դեռ ունինք ըսելիք: Հաստատ կը մնանք մեր այն կեցուածքին վրայ՝ թէ եկեղեցական տագնապը իր արդար լուծումը կը գտնէ միայն ա'յն ժամանակ, երբ հաստատուի Ս. Էջմիածնի գործնական գերակայութիւնը, լուծուին թեմերու հարցերը, եւ Անթիլիասի Ազգային Ժողովը դառնայ իսկապէ՛ս ազգային, բոլոր կողմերու մասնակցութեամբ:



Յորտ Պատերազմի աւարտէն ետք, Լիբանանի խորհրդարանի մեր առաջին պետական երեսփոխանը՝ ՌԱԿ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ Յակոբ Գասարճեանը իր տան մէջ, Պէյրութ: Վարչապետ Ռաֆիք Հարիրիի հետ իր բարեկամական յարաբերութիւնները մեծապէս նպաստեցին իր ընտրութեան: Լիբանանի մէջ հայկական երեսփոխանական դիրքերը աւելի քան յիսուն տարի Դաշնակցութեան մենաշնորհը ըլլալէ ետք, Ռ.Ա.Կ.ը վերջապէս կը յաջողէր փոփոխութիւն մը մտցնել պատկերին մէջ:

Հ.- Հ.Բ.Ը.Մ.ը միշտ ալ նկատուած է Ռ.Ա.Կ.ի հոգեհարազատ ծնունդը.

անցնող տասնամեակներուն միշտ ալ այս երկու կազմակերպութիւնները գործակցած են գաղութներու մէջ ազգային գերագոյն շահերը նկատի ունենալով: Ի՞նչ է այսօր Լիբանանի մէջ պատկերը այդ գործակցութեան:

Պ.- Ռ.Ա.Կ.ը Հ.Բ.Ը.Մ.ի հետ ունէ՞ր, ունի՞ եւ մի՛շտ պիտի ունենայ հաստատ ու ջերմ յարաբերութիւններ: Ալեք Մանուկեան մէկ նախադասութեամբ կրցած է տալ իսկական պատկերը այս յարաբերութեան: Ազգային բարերարը ըսած է. «Հ.Բ.Ը.Մ.ը հզօր է հոն, ուր Ռ.Ա.Կ.ը հզօր է. եւ հակառակը»: Լիբանանի պարագան չի տարբերիր այլ գաղութներէ:

Հ.- Լիբանանի քաղաքացիական պատերազմի տխուր հետեւանքով Ռ.Ա.Կ.ի կեդրոնատեղին ժամանակաւորապէս փոխադրուած էր Հիւսիսային Ամերիկա: Լատնագայի ԺԹ. Ընդհանուր Ժողովը միաձայնութեամբ որդեգրեց Կեդրոնը Պէյրութ վերադարձնելու որոշումը: Կը խորհի՞ք թէ այս փոխադրութեամբ կարելի պիտի ըլլայ աւելի ընդարձակածաւալ գործունէութիւն ունենալ տեղական քաղաքական կեանքի մէջ: Նաեւ՝ աւելի կարելո՞ր՝ Հայաստանի իշխանութիւններուն հետ ինչպիսի՞ յարաբերութիւն մը կը նախատեսէք:



Պէյրութ այցելութիւններէս մէկուն ընթացքին փափաքած էի Պրումմանայի Ալպուսթան պանդոկին մէջ ընդունելութիւն մը սարքել ի պատիւ ողբացեալ ղեկավար ընկերներ Գերսամ Ահարոնեանի եւ Մեթր Հրաչեայ Սեդրակեանի այրիներուն՝ Սոնայի եւ Մարլէնի: Հոն էինք, ձախէն՝ Արիի Վարդիվառեան, Դոկտ. Հրաչ Գումրուեան, Սոնա Ահարոնեան, Պարոյր Աղպաշեան, Յակոբ Գասարեան, Յակոբ Վարդիվառեան, Մարլէն Սեդրակեան եւ Անի Գասարեան:

Պ.- Այս հարցումը կարելի է նկատել առաջինին շարունակությունը: Որեւէ ժամանակ մենք չենք թերագնահատած մեր կուսակցության որեւէ մէկ շրջանակի իւրայատուկ դերը: Միաժամանակ, կը հաւատանք թէ որեւէ շրջանակ չի կրնար անտեսել լիբանանահայ գաղութին յոյժ կարեւորությունն ու առաջնորդողի առաքելությունը: Պէտք է մոռնալ, թէ միայն Լիբանանի քաղաքացիական պատերազմին հետեւանքով էր որ Ռ.Ա.Կ.ի Կեդրոնական Վարչությունը ժամանակաւորապէս տեղափոխուեցաւ ամերիկեան ցամաքամաս: Այդ պատերազմին աւարտէն ետք, Կիպրոսի մէջ, Ռ.Ա.Կ.ի 19-րդ Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը իր ընդհանուր պատգամաւորներու ջախջախիչ մեծամասնութեան որոշումով Կեդրոնական Վարչությունը վերադարձուց իր նստատեղին՝ Պէյրութ: Այս է պարզ ու անվիճելի իրողությունը: Յաւելեալ անտեղի մեկնաբանություններ դատարկ փիլիսոփայություն են: Հայաստանի Հանրապետության հետ յարաբերությանց պարագային, պարզ է թէ Լիբանանի շրջանակը կը հետեւի Կեդրոնական Վարչության առո՛ղջ քաղաքականության:

Հ.- Լիբանանի մէջ կուսակցական առոյգ կեանք մը գոյութիւն ունէր մինչեւ 1976: Ի՞նչ ծրագիրներ ունիք վերաբարձելու այդ առուգութիւնը ձեր գաղութէն ներս:

Պ.- Ծրագիրներ բազմաթիւ են: Ձեր մամուլին սահմանափակ տեղին պատճառով կարելի չէ մանրամասնություններու մէջ մտնել: Ռ.Ա.Կ. Լիբանանի շրջանակը վերականգնումի գործընթացի մէջ է, այս անգամ հիմնուելով առաւել հաստատ սիւներու վրայ: Մեր շրջանակը միջկուսակցական բեմի վրայ ունի իր իւրայատուկ տեղը եւ դերը: Առաջնորդող դեր կը վերցնենք Հայաստան-Լիբանան նախաձեռնություններու մէջ, ինչպէս՝ Հայաստան Համահայկական Հիմնադրամի պարագային: Ռ.Ա.Կ.ի Լիբանանի շրջանակը հետզհետէ իր ազդեցությունը կ'ընդլայնէ լիբանանեան քաղաքական բեմի վրայ: Կը բաւէ հետեւիլ «Զարթօնք» պաշտօնաթերթին՝ ունենալու համար յստակ պատկերացում մը:

Հ.- Լսեցինք թէ «Զարթօնք» դարձաւ կուսակցութեան գլխաւոր պաշտօնաթերթը: Ի՞նչ աշխատանքներ կը տանիք թերթին տարածումը ընդարձակելու սփիւռքի ամէն անկիւն:

Պ.- Ճիշդ է, «Զարթօնք» վերջերս կրկին դարձաւ Կեդրոնական Վարչության պաշտօնաթերթը: Լիբանանի եղբայրասպան պատերազմի օրերուն շրջանային իրերայաջորդ վարչություններ ամէն ջանք գործադրած էին թերթը պահելու կանգուն ու բարգաւաճ: Այսօր, մեր

չըջանակը նիւթական ու բարոյական առաւել մեծ պատասխանատուութիւն վերցուցած է այս ուղղութեամբ: Ուրախութեամբ կը յայտնեմ թէ Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ եւ մեր զօրակցութեամբ՝ մօտերս «Զարթօնք» լոյս պիտի տեսնէ ութ էջերով, միշտ խմբագրապետութեամբ Պարոյր Աղպաշեանի:



ՍԵՊՈՒՀ ԳԱԼՓԱՔԵԱՆ

Ատենապետ Ս.Գ.Հ.Կ. Լիբանանի Վարիչ
Մարմնի

Հ.- Լիբանան հետզհետէ կը վերագտնէ իր խաղաղութիւնը եւ վստահաբար ձեր պատուական գաղութն ալ պիտի վերահաստատէ իր առաջուան դիրքը: Ինչպէ՞ս կ'արժեւորէք այս խաղաղութիւնը:

Պ.- Իրականութեան մէջ, պատերազմի օրերուն իսկ յայտնի էր այս գաղութին դերը: Քանդումի աշխատանքին երբեք չմասնակցեցանք, հակառակ անոր որ մեր ազգային երեք կուսակցութիւնները տարակարծիք էին իրարու: Անմիջապէս զգացինք վտանգը, հաւաքուեցանք, քով-քովի եկանք եւ որոշեցինք որ այդ աղտոտ խաղին մէջ՝ Լիբանանը քանդելու ճիգին մէջ, հայ գաղութը պէտք է մասնակցութիւն ունենայ: Տասնութը տարիներ շարունակ, իրապէս կրցանք պահել դրական չէզոքութեան քաղաքականութիւնը եւ կրցանք երեք կուսակցութիւններով միատեղ դիմակալել նոյնիսկ ամենէն դժուար հարցերը: Վատերազմական տարիները կրցանք անցընել նուազագոյն վնասներով:

Հիմա որ խաղաղութեան տարիները եկած են, մենք անպայման կ'ուզենք մեր գործօն մասնակցութիւնը բերել վերաշինութեան գործին: Մենք այս գաղութին մէջ փորձած ենք ըլլալ, եւ տեղ-տեղ ալ յաջողած ենք, խաղաղութեան ամրապնդման եւ Լիբանանի վերաշինութեան գործօն մասնակիցներ: Մեր մասնակցութիւնը կը բերենք մեր թաղամասերէն սկսելով, հասնելով մեծահարուստներուն եւ անոնց թելադրելով որ իրենց գործերը եթէ դուրս տարած են՝ վերադարձնեն Լիբանան եւ իրենք ալ մասնակից դառնան վերաշինական աշխատանքին:

Վստահ եմ որ Լիբանան այլեւս չի վերադառնար իր հին, տխուր



օրերուն, որովհետեւ գոյութիւն ունի նա'խ ուժեղ բանակ մը եւ ապահովութիւնը արդէն վերահաստատուած է 95 տոկոսով: Ունինք կառավարութիւն մը եւ վարչապետ մը, որոնք տինամիք են: Վարչապետը հեղինակաւոր եւ արաբական երկիրներու մէջ ճանչցուած անձնաւորութիւն մըն է: Վստահ ենք որ իր գլխաւորած կառավարութեամբ եւ ուժեղ լիբանանեան բանակով խաղաղութեան երթը պիտի շարունակուի: Ետ-դարձի ճամբաները փակուած են:

Հ.- Լսեցի՞նք թէ մեծ թիով հայեր կ'ուզեն վերադառնալ Լիբանան: Ինչպիսի՞նք նոր լիբանանահայութիւն մը պիտի տեսնէք գալիք տասնամեակին:

Պ.- Նման խօսք կայ, բայց կը կասկածիմ որ իրականութեան համապատասխանէ: Վերադարձողներ կան, որովհետեւ արդէն սկիզբէն գացողները համոզուած չէին իրենց մեկնումին: Վերադարձողները կ'ուզեն տեսնել թէ գործի հնարաւորութիւններ կա՞ն Լիբանանի մէջ: Դժբախտաբար, հակառակ խաղաղութիւնը կերտուած ըլլալուն՝ աշխատանքի պայմանները այնքան ալ վարդազոյն չեն հոս: Ասիկա յատուկ չէ Լիբանանի: Տնտեսական տագնապը համաշխարհային է:

Փորձեր կ'ըլլան: Վերադարձողներ կան, սակայն ո'չ մեծ թիւով: Կու գան ուսումնասիրելու միայն: Սակայն չենք կրնար ըսել թէ իրապէս անոնք սկսած են գործնական աշխատանքի: Անոնք որ վերջին տարիներուն գաղթած էին, աւելի դիւրութեամբ կը վերադառնան:

70-ականներուն գաղթածները հոս գալու եւ ապրելու դժուարութիւն պիտի ունենան: Կու գան եւ յուսախաբութիւն կ'ապրին: Մեղաւորը իրենք չեն: Մեծ, կազմակերպուած երկիրներու մէջ ապրելէ եւ կարգ ու կանոն տեսնելէ ետք, Լիբանանը այլեւս իրենց իտէալներուն չի համապատասխաներ:

Պէտք է ըսել որ Լիբանանը շահոյթ ապահովելու համար լաւագոյն վայր մըն է, որովհետեւ ամէն կողմ շինարարութիւն կ'ըլլայ: Գործի միջոցներ չափ կան: Մեր ցանկութիւնն է որ մարդիկ գան եւ աւելի լուրջ կերպով հետապնդեն ծրագիրներ: Վստահ եմ որ այն ատեն պիտի յաջողին եւ իրենց այս սիրած գաղութին մէջ գտնեն իրենց արժանաւոր տեղը:

Կը խորհինք որ Միջին Արեւելքի խաղաղութեան բանակցութիւնները երբ լուծումի մը յանգին, Լիբանանը վստահաբար աւելի լաւ պայմաններ պիտի ունենայ ամէն մակարդակի վրայ:

Հ.- Հարցումին երկրորդ բաժնին գալով, ինչպէ՞ս կը տեսնէք նոր լիբանանահայութիւնը գալիք տասնամեակին:

Պ.- Ինչպէս ըսի,
արաբեւիսրայէլեան խա-
ղաղութեան բանակցու-
թիւնները վստահ եմ որ
դրական անդրադարձ
պիտի ունենան տարա-
ծաշրջանին համար՝ եթէ
դրական ձեւով աւարտին:
Այն ատեն Լիբանանի
առջեւ պիտի բացուի նոր
էջ մը: Լիբանանը կրկին
պիտի դառնայ զբօսա-
շրջիկներու երկիր:

Հ.- Նոր սերունդը ինչ-
պէ՞ս կը գնահատէ քաղա-
քական մեր կազմակերպու-
թիւնները եւ մասնաւորա-
պէս ձեր կուսակցութիւնը:

Պ.- Պիտի խոստովա-
նինք որ երիտասարդու-
թիւնը առաջուան չափ
հետաքրքրութիւն չի
ցուցաբերեր կուսակցու-
թիւններու հանդէպ: Դա-
րուս երիտասարդութեան
միտքը, ընդհանրապէս,
այլ տեղ է այսօր:

Դժբախտաբար, մեր այսօրուան երիտասարդութիւնը պատերազմի սե-
րունդ է, չկրցաւ ունենալ պէտք եղած դաստիարակութիւնը. այսօրուան
22-23 տարեկան երիտասարդը պատերազմէն բացի բան չէ տեսած: Ան
չէ՛ տեսած լուրջ թատրոն, իրա՛ւ ցուցահանդէս, մշակոյթ: Նաեւ ըսեմ թէ
անոնց մեծ մասը դպրոց անգամ չէ տեսած: Հետեւաբար, մեր գործը
չատ աւելի բարդ է, քանի որ կազմաւորուած երիտասարդին մէջ պիտի
փորձենք դնել հայրենասիրական գիծը, զօրացնել ազգին հանդէպ
նուիրումի փափաքը: Անցնող տասնութ տարիներուն երիտասարդը
իրապէս զրկուած էր բոլոր տեսակի դրական ու լաւ երեւոյթներէն:
Սերունդին յանցանքը չէր այդ:



Պիքֆայայի բարձունքին, Անթիլիասի դպրեվանքին
կից, Մեծ Եղեռնին նուիրուած յուշակոթողը, որ
Լիբանանի քաղաքացիական պատերազմի
տարիներուն զոհ դարձաւ ոմբակոծութիւններու:

Գործ՝ Զաւէն Խտշեանի:

Լիբանանահայութեան համար սրբավայրի
վերածուած այս վայրը վերանորոգուեցաւ
խաղաղութեան վերահաստատումով:

Երիտասարդութեան մօտ ձգտում մը կայ գործի ասպարէզ նետուելու, դրամ շահելու, բնակարանի տէր դառնալու, գուարճանալու: Այս կէտը շատ աւելի շեշտուած է արդի երիտասարդութեան մօտ:

Մենք դէմ չենք որ երիտասարդը այդ ձգտումն ունենայ. իւրաքանչիւր երիտասարդի իրաւունքն է այդ բայց նաեւ կը կարծենք թէ մեր ժողովուրդը եւ հայ կազմակերպութիւնները պէտք ունին գիտակից երիտասարդ ուժի, որպէսզի սերնդափոխութիւնը ապահովուի եւ մեր կուսակցութիւնները իրենց դերը կատարեն մեր ժողովուրդին մէջ:

Տակաւին ընելիք կայ. երիտասարդութիւնը որոշ չափով մոլորած է եւ մեր պարտականութիւնն է անոնց հասկցնել որ հաճոյքի կողքին կայ ծառայութեան պարտաւորութիւն: Ճանչցնելու ենք անոնց մեր պայքարը, որուն համար զինուորագրուելու են

Գալով մեր կուսակցութեան հանդէպ երիտասարդութեան կեցուածքին, լաւ գիտէք որ Ս.Դ.Հ.Կ.ը երիտասարդներէ սիրուած կազմակերպութիւն մըն է: Պատերազմական տարիներուն մենք ստեղծեցինք թաղային պաշտպանութեան յանձնախումբեր եւ երիտասարդներ եկան ու կապուեցան մեզի:

Նորանկախ պետութեան հանդէպ մեր կեցուածքն ալ կը խանդավառէ, կ'ոգեւորէ երիտասարդութիւնը, որով կ'ուզեն գալ եւ միանալ մեր շարքերուն, քանի որ ի վերջոյ կը համոզուին թէ այդ պատառիկ մը հողն ալ պէտք ունի աշխատողներու, զոհաբերողներու, որպէսզի կարենանք գէթ նորանկախ պետութիւնը պահել:

Հ.- Ի տարբերութիւն Հ.Յ.Դ.ի, դուք պահեցիք հայրենասիրութեան գիծը՝ հասնելով ժողովուրդի լայն զանգումին: Նաեւ՝ ի տարբերութիւն Ռ.Ա.Կ.ի նախորդ ղեկավարութեան: Ինչպէ՞ս եմ ձեր յարաբերութիւնները Հայաստանի դեսպանատան հետ:

Պ.- Հ.Հ. դեսպանատան հետ մեր կապերը բնականոնէն ալ լաւ են, որովհետեւ մենք հայկական դեսպանատունը կ'ընդունինք որպէս փոքրիկ Հայաստան մը: Դեսպանատան շէնքը կը նկատենք հայկական հող, հետեւաբար՝ սրբութեան հող: Եթէ այս գիտանկիւնէն նայինք հարցին, ձեր հարցումին պատասխանը պարզ պիտի ըլլայ.- մենք կը գուրգուրանք անոր վրայ եւ միշտ պիտի հասնինք անոր: Մեզի համար նշանակութիւն չունի դեսպանին անձը: Դեսպանատունը փոքրիկ Հայաստան մըն է, որուն կարիքներուն կ'ուզենք հասնիլ մեր կարելի միջոցներով: Մեր կապերը շատ լաւ են դեսպանատան հետ:

Հ.- Ձեր կուսակցութեան ծրագիրը գծուած է 100 տարի առաջ: Ինչպէ՞ս

կը համընկնի այդ գաղափարախօսությունը նոր օրերու իրականութեան, մանաւանդ երբ Եւրոպան սկսած է ընկերվարութեան գիծէն ընկրկիլ: Ինչպէ՞ս կրնաք համերաշխօրէն գործակցիլ հայրենի իշխանութեանց հետ, որոնք ընդունած են ազատական ուսմկավարությունը:

Պ.- Բարդ Հարցում է: Մենք կառչած կը մնանք սոցիալ դեմոկրատական մեր սկզբունքներուն եւ մեզի համար նշանակութիւն չունի թէ ընկերվարութիւնը տեղի կու տայ Եւրոպայի մէջ կամ այլուր: Մեր գաղափարախօսութեան մէջ սխալ չկայ. թերեւս սխալ կայ գործադ-



Լիբանան այցելութեան մը պահուն, Նիւ Եորքի Ռ.Ա.Կ. Արմենական-Յովսէփեան Ակումբի ատենապետ Գրիգոր Սալպաշեանի եւ Պէյրութի Թ.Մ.Մ-ի վարչական պատասխանատու Սարգիս Սեֆերեանի հետ ծաղկեպսակի զետեղում Հարաւային Լիբանանի Քանա գիւղաքաղաքին մէջ, ուր հարիւրէ աւելի նահատակներ զոհ գացած էին իսրայէլեան ուժակոծումներու: Յուշակոթողին առաջ մեզի կ'ընկերանար տեղական Ծիա համայնքի պատասխանատուն: Քանացիները ծանօթ են Նոր Կտակարանէն: Քանայի մէջ հարսանիքի մը ընթացքին Քրիստոս ջուրը վերածած էր գինիի: Այցելեցինք սուրբգրային յուշավայրերը: Սալպաշեան Լիբանանի քաղաքացիական պատերազմէն ետք առաջին անգամ է որ կ'այցելէր Լիբանան, ուր ընկերներ ժորճ Մանուկեանի եւ Վարուժան Աւետիսեանի հետ որպէս Արեւելեան Միացեալ Նահանգներու եւ Գանատայի շրջանակի պատգամատուրներ գացած էինք մասնակցելու 1976-ի Ռ.Ա.Կ-ի արտահերթ Ընդհանուր Պատգամատուրական Ժողովին:

րութեան կերպին մէջ, եւ սխալ կայ զայն հասկնալու, ըմբռնելու մէջ: Ճիշդ է որ այսօր Հայաստանի մէջ սոցիալ դեմոկրատի չի կիրարկուիր, բայց ատիկա մեզի համար առաջնահերթ նշանակութիւն չունի: Հայրենի ժողովուրդը փնտռտուքի մէջ է: Ան 70 տարիներ շարունակ դժուարութիւններու մատնուեցաւ եւ յաղթահարեց զանոնք: Այդ 70 տարիները բարիք ալ բերին մեր ժողովուրդին. չենք կրնար ուրանալ որ այդ տարիներուն մեր հայրենիքը ծաղկեցաւ: Մենք եթէ երթանք եւ մեր քարոզչութիւնը ընենք մեր ժողովուրդի փնտռտուքի այս շրջանին՝ կանխահապ պիտի ըլլայ: Առիթ պէտք է տանք ժողովուրդին որ տեսնէ եւ համոզուի: Այսօր ժամանակն է հասնելու Հայաստանի կարիքներուն եւ օգտակար ըլլալու ժողովուրդին, ո՛չ թէ գաղափարական քարոզչութիւններ ընելու:

Մեր գաղափարախօսութիւնը արդի աշխարհի համար լաւագոյնն է. սոցիալ դեմոկրատի իրապէ՛ս մարդու իրաւունքները պաշտպանող եւ մարդասիրական սկզբունքները զնահատող քաղաքական վարդապետութիւն մըն է:

Անշուշտ, 109 տարիներ առաջ գրուած ծրագիր մը պարզ է որ իր մէջ պարունակէ ժամանակավրէժ երեւոյթներ. կուսակցութեան համագումարները արդէն որոշ բարեփոխութիւններ կատարած են անցեալին: Մենք վերջերս ունեցանք մեր 16-րդ համագումարը Հայաստանի մէջ եւ հոն նման հարցեր սեղանի վրայ դրուեցան ու կարգ մը պատշաճեցումներ եղան այս ուղղութեամբ:

Հ.- Ս.Դ.Հ.Կ.ը կը հովանաւորէ Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը, Հայ Մարմնամարզական Միութիւնն ու Հայ Կրթական Բարեսիրական Միութիւնը: Տեղեկութիւններ կու տա՞ք անոնց Լիբանանի մէջ կատարած աշխատանքին մասին:

Պ.- Հ.Մ.Մ.ը իր բոլոր բաժանմունքներով եւ մասնաճիւղերով կը գործէ աշխուժօրէն: Ունի Ֆութպոլի գեղեցիկ խումբ մը առաջին դասակարգին մէջ: Ունինք հայրենի Ֆութպոլիստներ, որոնք յատուկ հրաւէրով մաս կը կազմեն մեր խաղերուն: Այս տարի Հ.Մ.Մ.ի 75-ամեակն է: Փառաշուք կերպով պիտի նշենք տարեդարձը:


Հ.Կ.Բ.Մ.ը ունի երկու դարմանատուն, մին՝ Հաճըն թաղ եւ միւսը՝ Ռաուտա, մեր ժողովուրդին ծառայութեան մէջ: Ունի մէկ վարժարան՝ Սահակեան-Լ. Մկրտիչեան գոլէճը. գեղեցիկ վարժարան մը, որ դժբախտաբար պատերազմի տարիներուն կրակագիծին վրայ գտնուելուն համար տուժեց, թէեւ այսօր վերագտած է ինքզինք: Ն.Մ.Մ.Մ.ը ունի թատերական եւ պարախմբային գործունէութիւն: Աշխոյժ վիճակի մէջ է:

Հ.Մ.Մ-ը շատ ժողովրդական է
 Լիբանանի մէջ: Այցելուներ կը
 վկայեն որ դաշտերուն վրայ,
 թրիպիւններու մէջ բազմահազար
 Հ.Մ.Մ.ականներ իրենց խումբը կը
 քաջալերեն հինէն եկած սովոր-
 ութեամբ:

Հ.- ինչպէ՞ս կը գնահատէք
 Արամ Ա.ի Կիլիկիոյ եւ Գարեգին Ա.ի
 Ամենայն Հայոց Կաթողիկոս ըլլալը:
 Կը խորհի՞ք թէ երկու վեհափառները
 պիտի յաջողին միութիւնը իրագործել
 իրենց գահակալութեան շրջանին:

Պ.- Կը մաղթենք որ յաջող-
 ցնեն: Առայժմ, գործնական ո՛չ
 մէկ բան կը տեսնենք: Պէտք է
 ընդունինք որ Գարեգին Ա.
 արժանաւոր եկեղեցական մըն է,
 որ իրաւամբ հասաւ Ամենայն
 Հայոց Հայրապետութեան գահին:
 Վստահ ենք թէ մեր նորանկախ
 պետութեան բարգաւաճման գծով
 մեծ աշխատանքներ պիտի կա-
 տարէ. իր վրայ մեծ պարտաւո-
 րութիւններ կան եւ վստահ ենք
 որ պիտի յաջողցնէ զանոնք:

Իսկ Հայ Եկեղեցւոյ միութեան
 գծով գործնական որեւէ աշխա-
 տանք առ այժմ չենք տեսներ: Եւ
 կը ցաւինք ատոր համար, որով-
 հետեւ երեւոյթները այնպիսին
 էին, որ գործնական քայլերու
 առնուիլը մօտալուտ կը թուէր:
 Բայց, ըստ երեւոյթին, չկայ
 գործնական որեւէ բան եւ ամէն
 ինչ տակաւին կը մնայ խօսքի
 սահմաններուն մէջ:



Տունը ուր ծնած եմ: Հրեաներու թաղամասը
 քաղաքացիական պատերազմէն ետք կանգուն
 մնացած էին միայն քանի մը շէնքեր, որոնք
 վերանորոգուեցան կառավարութեան կողմէ:
 Մեծ հայրս Քըրքիսանէն գալով Պէյրութի այս
 տան մէջ հաստատուած էր 1930-ականներուն,

վերի յարկը դրացի ունենալով Լիբանանի
 առաջին վարչապետը՝ Ահմէտ Տաութ: Imm.

Daouk, Rue Melki, Ouadi Abou Jamil

հասցէակիր մեր բնակարանը այսօր կը
 ծառայէ որպէս Արժանթինի դեսպանատուն:
 Մանկութեան և պատանութեան օրերուս, ան
 հաւաքավայրն էր եղած Հ.Ե.Ը.ի
 սկստուններուն, Փափագեան թատերախումբին,
 Ռ.Ա.Կ. Զարթօնք Ակումբին ու Հասան Պէլլի
 Հայրենակցական Միութեան: Հոն ծնած եմ
 նաեւ եղբայրս՝ Զարեհ ու զաւակս՝ Հայկ:

Հ.- Երկու կաթողիկոսներուն համար հաւանաբար լաւագոյն փորձաքարը ըլլար Դամասկոսի փոքրաթիւ գաղութին թեմը: Կ'իմանանք թէ վերջերս նոր ոտնձգութիւններ կատարած է Արամ Ա. Կաթողիկոս: Իբրեւ բողոք, առաւելաբար Հնչակեան Կուսակցութիւնն է որ դէմ կանգնած է անօրինութեանց: Կը խորհի՞ք թէ այդ թեմը մօտերս գտնէ իր բնականոն վիճակը:

Պ.- Անոնք որ կը կարծեն թէ եկեղեցական հարցը կրնայ լուծուիլ մասնակիօրէն՝ չարաչար կը սխալին: Ան կը կարօտի ընդհանուր լուծումի: Այսօր Դամասկոսի հարց մը առանձնաբար լուծելը սխալ է: Ընդհանուր օրակարգի հարց պէտք է կազմեն Դամասկոս, Յունաստան, Իրան, բոլորը մէկ: Զարտուղի ամէն աշխատանք կ'ուշացնէ եւ կը դժուարացնէ միութեան հարցը:

Հ.- Ծուտով տեղի կ'ունենան Լիբանանի երեսփոխանական ընտրութիւնները: Ինչպիսի՞ երեսփոխանական ցանկ մը կ'ուզէք տեսնել խորհրդարանէն ներս:

Պ.- Մեր փափաքն է որ ընտրուելիք երեսփոխանները ներկայացնեն լիբանանահայ գաղութը իր բոլոր կողմերով: Դժբախտաբար, տարիներ շարունակ ապրած ենք մեզի պարտադրուած կացութիւն մը, որուն համաձայն երեսփոխանները խորհրդարանէն ներս կը ներկայացնէին միայն Դաշնակցութիւնը: Մենք այդ պատը ճեղքեցինք 1992-ի ընտրութիւններուն եւ կրցանք հասկցնել որ լիբանանահայ գաղութը մէկ կուսակցութիւն չէ, ունի ուրիշ կուսակցութիւն մըն ալ (Ս.Դ.Հ.Կ.), եւ դեռ կայ երրորդ մըն ալ (Ռ.Ա.Կ.): Մեր ձգտումը գաղութը իր ամբողջութեան մէջ ներկայացուած տեսնել է եւ այս ուղղութեամբ պիտի աշխատինք:

Հ.- Սփիւռքի կազմակերպման աշխատանքներուն մէջ մեծ եղած է Ռ.Ա.Կ. եւ Ս.Դ.Հ.Կ. գործակցութիւնը: Հայաստանի անկախացումէն ետք եւ ներկայ դեկավարութեան դիրքափոխումով՝ ինչպէ՞ս կը տեսնէք այդ գործակցութեան շարունակումը:

Պ.- Մեզի համար մեր հին պատասխանատուներէն ժառանգութիւն մը կայ, որ Ռ.Ա.Կ.ի հետ մեր յարաբերութիւնները միշտ լաւ պէտք է ըլլան: Յարաբերութիւնները արդէն լաւ եղած են եւ մենք այդ գործակցութիւնը շարունակող ղեկավարութիւն մըն ենք: Կ'ուզենք բոլոր կազմակերպութիւններուն հետ գործակցիլ: Գոնէ լիբանանահայ գաղութին շահերուն համար, մենք միշտ փորձած ենք քաղաքական ու հայրենական հարցեր չբերել սեղանի վրայ, միջ-կուսակցական ժողովներու ընթացքին, որովհետեւ ատոնք կրնան բաժանումի առաջնորդել

մեզ, տրուած ըլլալով որ իւրաքանչիւր կուսակցութիւն ունի իր մօտեցումը հայրենիքի հանդէպ:

Ուրախ ենք որ ՌԱԿ-ը իր վերջին Ընդհանուր Պատգամաւորական ժողովով արդէն յստակօրէն դիրքորոշուած է հայրենի պետականութեան կողքին եւ վստահ եմ որ մենք ձեռք-ձեռքի տալով կ'աշխատինք որ նորանկախ պետութիւնը առաւել ամրապնդուի ու զօրանայ:

Պէյրութ, Փետրուար 1996

«ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆ», 8 եւ 22 Օգոստոս 1996

Հօրս նկարչատունը՝ «Ճոթօ Սանթրալ», Պէյրութ, Պուրճի (Նահատակաց) Հրապարակին վրայ, ոմբահարուած Լիբանանի քաղաքացիական պատերազմի ընթացքին:
Պատանեկութենէն երիտասարդութիւն անցման տարիներուս, հօրս խանութին մէջ ծանօթացայ հայկական կազմակերպութիւններու թէ տեղական քաղաքական կեանքի բոլոր կողմերու ամենայայտնի դէմքերուն, գաւաթ մը արաքական սուրճի շուրջ: Խանութը իր աշխարհագրական դիրքով կը գտնուէր քաղաքի կեդրոնէն դէպի հայաբնակ շրջանները տարածուող քառուղիին վրայ: Հայրս բարեկամ էր բոլորին՝ Կարօ Սասունիէն մինչեւ Արթին Մատէեան, Մեթր



Սեդրակեան, Յարութիւն Կուժունի, Գնէլ Սրբազան, Դերենիկ Սրբազան ու դեռ Փիէր Ժեմայէլ, Օսման Տանա, Քամալ Ճումպլաթ, Գասպար Մենակ, Միհրան Տէր Ստեփանեան, Ծառուկեան, Սիմոնեան, եւ դեռ քանի՜ ուրիշներ: Եռուզեռի օրե՛ր էին:



Սան Փաւլոյի երկնաքերները:

ՍԱՆ ՓԱՒԼՈՆ ԻՐ ՀԱՅՈՒԹԵԱՄԲ

Տակաւ հալող բայց բնաւ չհատնող մոմի կը նմանի Պրագիլի հայ գաղութը, որ առաւելապէս կազմուած է կիլիկեցի գաղթականներով եւ նուիրումով փարած կը մնայ ազգային կեանքին: Նոր սերունդը թէեւ շատոնց կորսնցուցած է հայերէն լեզուն, բայց տիրութի՛ւն կ'ընէ այսօր բոլոր հայկական հաստատութիւններուն: Հայաստանի Հանրապետութեան հռչակումը նոր ոգեւորութեամբ զանոնք կապած է իրենց ազգային երակներուն: Հայաստան Համահայկական Հիմնադրամի անվիճելի դայեակներէն մէկն է Սան Փաւլոյի հայութիւնը, որ առաջին իսկ պահէն իր տրամադրութեան ներքեւ գտնուող կէս միլիոն տղարը յատկացուց անոր:

Որքա՛ն տարբեր է ան Հարաւային Ամերիկայի հայկական խճանկարը կազմող միւս երկու երկիրներէն՝ Արժանթինէն եւ Ուրուկուէյէն, Պրագիլի մշակոյթին իսկ բերումով:

Տեղացիներ անձանօթ չեն մեր պատմութեան ու ցեղասպանութեան:

Հրապարակներ, պողոտաներ ու կաշարաններ կը կրեն հայկական անուններ:

Հետզհետէ ներկայացուելիք հարցազրոյցներու ընդմէջէն պիտի գտնէք տակաւ նօսրացող գաղութ մը, որ հայ մնալու վճռականութեամբ տոգորուն կը շարունակէ իր երթը:

ՏԱԹԵՒ ԱՐԲ. ՂԱՐԻՊԵԱՆ
Առաջնորդ Պրագիի հայոց



Հ.- Ձեր գաղութին մօտէն հետեւող մը առաջին առիթով կը նշմարէ Դուրեան ազգային վարժարանին կատարած դերը: Կը փափաքինք դպրոցին եւ հոն ջամբուող ազգային կրթութեան մասին ունենալ տեղեկութիւններ:

Պ.- Նախ շնորհակալութիւն ձեզի, Պրն. Վարդիվառեան, որ այս գեղեցիկ առիթը ստեղծեցիք՝ որպէսզի կարենանք խօսիլ պրագիլահայ գաղութին մասին: Սփիւռքի մէջ քիչեր ծանօթ են այս գաղութին, որ եօթանասուն տարուան գոյութիւն մը ունի: Պրագիլահայութիւնն ալ, այլ գաղութներու նման, ունի իր դժուարութիւնները, որոնք այս քաղաքին՝ լատին Ամերիկայի այս մեծագոյն ոստանին մէջ աւելի՛ չէշտուած են տարածութեան ընդարձակութեան եւ հայոց ցրուածութեան հետեւանքով: Դժուար է հաղորդակցիլ՝ քով քովի գալով: Սակայն եւ այնպէս, գաղութը ամէն ջանք կը թափէ, բարոյական եւ նիւթական ամբողջական գոհողութիւններով կ'իրականացնէ իր բոլոր ծրագիրները ազգային-եկեղեցական գետնի վրայ:

Դպրոցը գոյութիւն ունի մօտ եօթանասուն տարիներէ ի վեր գաղութին, բայց ո՛չ ներկայ չէնքին մէջ: Մինչեւ տասը տարի առաջ միակ հայ վարժարանն էր ան: Դուրեան վարժարանը կը գործէ մեր թեմին հովանաւորութեան ներքեւ եւ հոն յաճախող բոլոր աշակերտները մեր գաղութին հայախօս գաւակներն են:

Ունինք 150 աշակերտ մանկապարտէզէն մինչեւ երկրորդական: Թէեւ քիչ է աշակերտութեան թիւը, սակայն դպրոցը կու տայ որակաւոր դաստիարակութիւն եւ մակարդակը գոհացուցիչ է թէ՛ պետական եւ թէ՛ հայկական բաժիններուն մէջ: Դպրոցը մեր գաղութին համար ունի առաւելութիւն մը: Աշակերտութիւնն ամբողջ հայ ըլլալով, հայ պատանին կ'ունենայ հայ բարեկամ-բարեկամուհիներ: Հայկական միջավայրի մէջ կը ստանայ իր կրթութիւնը, հեռու՝ վտանգաւոր միջնորոտէն հազարաւոր աշակերտներ հաշուող պետական վարժարաններու, ուր բնաւ հոգ չի տարուիր բարոյական դաստիարակութեան, որով եւ դպրոց կը սողոսկէ թմրեցուցիչներու գործածութիւնը: Մեր վարժարանին մէջ աշալուրջ հսկողութեամբ այդ վտանգէն զերծ կը մնան մեր պատանիները:

Մեր դպրոցը կրթական այն հաստատությունն է, ուր ցանկալի պիտի ըլլար որ ամէն հայ ծնողք մտածէր իր զաւակը ուղարկել, բայց քաղաքին ընդարձակութիւնը զգալի կը դարձնէ իր աննպաստ պայմանները:

Ուրախ ենք ըսելու որ գաղութիս մէջ կը գործէ նաեւ Հ.Բ.Ը.Մ.ի վարժարանը իր 150 աշակերտներով, հեռաւոր թաղամասի մը մէջ: Այդ շրջանները բնակող հայեր հաւանաբար դժուարանային Դուրեան վարժարան ղրկել իրենց զաւակները:

Հ.- 1980-էն ի վեր Սան Փալօ կը գտնուի: Ինչպէ՞ս կը գտնէք եկեղեցի յաճախողներու ջերմեռանդութիւնն ու մասնակցութիւնը:

Պ.- Նախ պէ՛տք է շեշտել որ մեր եկեղեցին բնաւ պարապ չէ եղած՝ հակառակ դժուարութիւններու: Կ'ըսուի թէ ժողովուրդը հոգեհանգիստներու ժամանակ եկեղեցի կու գայ: Մեր եկեղեցիին համար ես ալ նոյն բանը կրնամ ըսել, բայց գոհ եմ որ ամէն Կիրակի մեր եկեղեցին լեցուն է, թերեւս անոր համար որ մեր ժողովուրդը իր ննջեցեալները յիշելու առաքինութիւնն ունի: Ի բացառեալ արձակուրդային շրջանէն, եկեղեցւոյ մէջ միջին հաշուով 15-20 հոգեհանգիստ կ'ունենանք տեւաբար, եւ եկեղեցին միշտ լեցուն կ'ըլլայ այդպիսով:

Քանի որ Մեռելոցի օրով այս հանդիպումը կ'ունենանք, կ'ուզեմ խանդավառութիւնս յայտնել երէկուան մեր Ս. Ծնունդի արարողութեան մասին: Յունուար 6-ը զուգադիպեցաւ երկուշաբթիի եւ հակառակ հոգեհանգիստ չըլլալուն՝ եկեղեցին լեցուն էր: Հայու գիտակցութեան մէկ վկայութիւնն է ասիկա:

Հ.- Հայց. Եկեղեցին այս երկրին մէջ ծանօթացնելու էքսմենիք շարժումներ կա՞ն: Այդպիսով գէթ մեր ժողովուրդին իրաւունքներուն մասին խօսելու առիթներ կը ստեղծուին:

Պ.- Առիթներ չե՛ն պակսիր՝ անկախաբար անկէ որ անցեալ տարի Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի ժողովը տեղի ունեցաւ Սալվատորի մէջ (Պահէա նահանգ), ուր մենք ալ մեր հանգամանքին բերումով մասնակցեցանք Հայց. Եկեղեցւոյ երեք ներկայացուցիչներով եւ զրոյցներ ունեցանք այս երկրի հեղինակաւոր դէմքերուն հետ:

Սան Փալոյի մէջ եկեղեցիներու մեծաւորներս կ'ունենանք տարեկան ժողովներ եւ յաճախակի հանդիպումներ, ուր Հայց. Եկեղեցին ունի իր ուրոյն տեղը: Տեղին է նշել որ պետական շրջանակներ եւս ամէն պատեհ առիթով հրաւէր կ'ուղղեն մեզի՝ ի շարս միւս եկեղեցիներուն:

Հ.- Ծանօթ է թէ Հարաւային Ամերիկան, հակառակ էջմիածնական թեմ

ըլլալուն, ազդեցութեան տակ եղած է Հ.Յ. Դաշնակցութեան: Ինչպէ՞ս կը պատահի որ Հարաւ. Ամերիկայի երեք թեմերն ալ կը շարունակեն կապուած մնալ Էջմիածնի:

Պ.- Թէեւ ես 16 տարիներէ ի վեր Սան Փաւլօ կը գտնուիմ, պէտք է ըսեմ որ 30 տարիներէ ի վեր Հարաւային Ամերիկա եմ. նախապէս Արժանթին էի: Հետեւաբար, լաւատեղեակ եմ խնդրին, որ պարզ է ինծի համար: Հարաւ. Ամերիկայի գաղութները առաջին օրէն եղած են էջմիածնական թեմ եւ հայրապետական պատուիրակին կեդրոնը եղած է Պուենոս Այրէսը: Երեք թեմերը ենթակայ եղած են պատուիրակին: Վարչութիւնները կրնան կուսակցութեան մը ազդեցութեան տակ գործող անձերէ բաղկանալ, բայց պաշտօնապէս կուսակցութիւններ չեն որ ղեկը ձեռք առած են՝ բացի այն պարագայէն որ 1968-ին Արժանթինի մէջ պատահած պայքարի մը հետեւանքով Հ.Յ.Դ. ձեռք առաւ գաղութին ղեկը՝ գրաւելով Հայ Կեդրոնը: Շատեր կարծեցին թէ անմիջապէս յաջորդ քայլը պիտի ըլլայ այս թեմերը կապել Կիլիկիոյ Աթոռին: Գոհունակութեամբ կը յայտարարեմ թէ Հ.Յ.Դ-ի հարաւ-ամերիկեան ղեկավարութիւնը բնաւ չէ մտածած նման քայլ առնել, որովհետեւ իմաստուն հեռատեսութիւնը ունեցած են չպառակտելու այս գաղութը. բան մը՝ որ պատահեցաւ Հիւսիսային Ամերիկայի մէջ: Որքան ալ ղեկավարութիւնը Հ.Յ.Դ-ի ձեռքին մէջ մնաց, եկեղեցին միշտ հաւատարիմ մնաց Ամենայն Հայոց Հայրապետութեան: Վազգէն Ա. Կաթողիկոս արդէն Արժանթին այցելած էր եւ շնորհաւորած նոր վարչութիւնը, որ էջմիածնէն բնաւ չբաժնուելու երաշխիք տուած էր:

Հ.- Գարեգին Ա. երբ վերջերս Հարաւ. Ամերիկա այցելեց՝ ինչպիսի՞ ընդունելութեան արժանացաւ:

Պ.- Գարեգին Ա.ի շրջապատյտին առաջին հանգրուանն էր մեր գաղութը: Զորս-հինգ օր մնալէ ետք, անցաւ Ուրուկուէյ եւ Արժանթին: Ընկերանալով Վեհափառին, տեսանք թէ ամէն տեղ անակնկալներու առջեւ գտնուեցաւ ան: Երբ այցելեց ազգային հաստատութիւնները, քանիցս կրկնեց թէ սխալ հաշիւ ըրած էր՝ այդքան քիչ օրեր տրամադրելով մեր գաղութներուն:

Վեհափառը սքանչացաւ երբ այցելեցինք Պրագիլիա մայրաքաղաքը, ուր ընդունուեցաւ հանրապետութեան նախագահէն, արտաքին նախարարէն եւ կառավարիչէն: Տեսաւ թէ գաղութը ո՛չ միայն չէ այլասերած, այլեւ արդարացուցած է իր գոյութիւնը իր ճիգերով ու մակարդակով: Արժանթինի պարագային ան ըսաւ թէ չէր սպասեր գտնել այդպիսի կազմակերպուած գաղութ մը Հարաւային Ամերիկայի մէջ:

Հ.- Հայաստանի անկախացումէն ետք նոր վիճակ մը ստեղծուած է սփիւռքի մէջ: Ինչպիսի՛ վիճակ կը պարզէ Հայաստան Համահայկական Հիմնադրամը ձեր գաղութին մէջ:

Պ.- Ուրախութիւնը ունեցանք ընդունելու այցելութիւնը նոյնինքն Նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի, որ 1992-ին եկած էր Ռիօ տը ժանէյրոյի բնոլորտի համաժողովին մասնակցելու: Ինք էր որ այդ առիթով Սան Փաւլոյի մէջ կազմեց յանձնախումբը: Իմաստը լաւ ըմբռնելով՝ կրցանք ապահովել մասնակցութիւնը բոլոր շրջանակներուն: Աւելի ուշ, սակայն, գտնուեցաւ կազմակերպութիւն մը (Հ.Յ.Դ.- Յ.Վ.), որ չուզեց մասնակցիլ՝ հաւանաբար հրահանգուած ըլլալով: Մեր ժողովուրդին մեծ մասը եւ նոյնիսկ այդ կազմակերպութեան անդամներէն շատեր կը կատարեն իրենց պարտականութիւնը՝ տալով Հիմնադրամին: Այս գործը հոս կը ղեկավարուի Պրն. Վարուժան Պուրմայեանի կողմէ:

Հ.- Հայ Աւետարանական եւ Կաթողիկէ համայնքներն ինչպէ՞ս կը վերաբերին Հիմնադրամին:

Պ.- Երբ ճգնաժամային պահերու առջեւ էինք, խանդավառօրէն մաս կազմեցին ժողովներու: Այդ համայնքներէն գտնուեցան ազգայիններ, որոնք դրական լայն մասնակցութիւն բերին Հիմնադրամին:

Հ.- Պրագիլը կարեւոր հանրապետութիւն մըն է: Չէ՞ք խորհիր որ Հայաստան իր դեպքնաւորութիւնը պէտք է ունենայ հոս:

Պ.- Պրագիլ Հարաւային Ամերիկայի այն երկիրն է, որ առաջինը պէտք է ըլլար հայկական դեպքնատուն ունեցող: Փոխադարձ աշխատանքներ եղան այդ ուղղութեամբ: Դեսպանատունը հաստատուելու էր Պրագիլի մայրաքաղաքին մէջ, ուր հայեր չեն ապրիր, եւ մատակարարուելու էր մեր գաղութին կողմէ: Թէեւ կառավարութիւնը հոգամաս տրամադրած է, բայց գաղութը տակաւին պատրաստ չէ նիւթական պահանջուող յանձնառութեան տակ մտնելու: Լուրջ հարց է ամսական 25,000 տոլար գոյացնելը դեսպանատուն պահելու համար: Ան կը մնայ մեր իրագործելի ծրագիրներուն մէջ:

Հ.- Ս.Դ.Հ.Կ. եւ Ռ.Ա.Կ. կը մասնակցի՞ն Ազգային Կերոնական Վարչութեան, թէ՞ Հ.Յ.Դ.ի թողած եւ եկեղեցական գործը:

Պ.- Մինչեւ քանի մը տարի առաջ գուցէ կարելի էր այդպէս մտածել, երբ Հ.Յ.Դ. տիրապետող էր գաղութին մէջ: Ներկայիս օրինակելի համերաշխութիւն մը կայ հոս՝ փոխադարձ հասկացողութեամբ: Ազգ.

Կեդր. Վարչութիւնն այսօր կը բաղկանայ եկեղեցասէր ազգայիններէ, որոնք կրնան պատկանիլ այս կամ այն կուսակցութեան, սակայն կուսակցական ներկայացուցիչներ չեն եկեղեցական մարմիններու մէջ:

Հ.- Երուսաղէմի միաբան էք: Լսեցիք թէ միաբանութեան կալուածները վտանգի տակ են: Կը խորհէինք թէ աւանդութիւն դարձած այդ տխուր փորձառութիւնը Թորգոմ Պատրիարքի օրով պիտի չկրկնուի: Ինչպէ՞ս կը գնահատէք տնտեսական տխուր տնօրինումները:

Պ.- Իբրեւ միաբան վերջին անգամ Երուսաղէմ էի Թորգոմ Պատրիարքին գահակալութեան առաջին օրերուն: Հակառակ մեր միաբաններու բռն փափաքին եւ դիմումներուն, Թորգոմ Պատրիարք դժբախտաբար չգումարեց միաբանական ընդհանուր ժողով՝ մանաւանդ վերջին հարցերը անոնց սեփականութիւնը գէթ դարձնելու: Մամուլէն միայն կ'իմանամ եւ ծանօթ չեմ իրադարձութիւններուն: Ինծի համար մեծ ցաւ է որ Առաքելական մեր Աթոռէն ներս դարձեալ տեղի ունենան անհասկացողութիւններ, զեղծարարութիւններ, որոնք կը գայթակղեցնեն ա'յն հաւատացեալները, որոնք պաշտամունքի հասնող հիացում եւ այդ Աթոռին պատկանելու նախանձախնդրութիւն մը ունին:

Ես ալ ձեզի պէս վստահ էի որ Թորգոմ Պատրիարքի օրով նման դէպքեր այլեւս չեն պատահիր: Ես դա՛րձեալ կը վստահիմ Պատրիարքին իմաստուն ղեկավարութեան, որովհետեւ շատ բան իրմէ կախում չունի հաւանաբար: Պատրիարքը վստահութիւն կ'ունենայ իր միաբաններուն վրայ եւ անոնց կը վստահի պաշտօններ. այդ միաբաններուն կը մնայ այլեւս հաւատարմօրէն ծառայել Աթոռին եւ խղճմտօրէն կատարել իրենց պարտականութիւնը: Եթէ միաբան մը դաւաճանէ իր կոչումին եւ Աթոռին պատկանելու գիտակցութեան՝ ատոր մէջ Պատրիարքը յանցաւոր չէ: Ես վստահ եմ թէ Պատրիարքը անտարբեր չէ, կը ցաւի, կը տառապի եղածին համար, եւ կը խորհիմ թէ պէտք եղած միջոցները ձեռք պիտի առնէ՝ լուսաբանելու եւ առաջը առնելու յետագայ բոլոր զեղծարարութիւններու:

Հ.- Վերջերս Վատիկանի մէջ գումարուեցաւ «գագաթ»ի ժողով մը Քահանայապետին եւ Կաթողիկոսին միջեւ: Մեր եկեղեցականութիւնը պատրաստուած էր այդ ժողովին՝ դաւանաբանական հարցերու շուրջ ստորագրութիւն փոխանակելու: Եպիսկոպոսական ո՞ր ժողովին արծարծուած էին նման հարցեր: Ժողովուրդին յստակ չեն պարագաները:

Պ.- Ինչպէս որ ժողովուրդին յստակ չէ, բացայայտօրէն ըսեմ թէ ինծի համար ալ յստակ չէ: Ուրախալի է երկու եկեղեցիներու գլուխ-

ներու հանդիպումը: Վստահ եմ որ Կաթողիկոսը բոլոր նախազգուշու-
թիւնները նկատի ունեցած է, խորհրդակցած՝ զոյգ պատրիարքներուն
եւ շրջանի արքեպիսկոպոսներուն հետ, որոնք իրեն ընկերացան: Ման-
րամասնութեանց տեղեակ չեմ: Մամուլէն կ'իմանամ ինչ որ կը պա-
տահի: Տակաւին չեմ գիտեր թէ այդքան պատասխանատու դաւանական
հարցերու մէջ զիջումներ եղած կամ որոշումներ առնուած են: Չեմ
կարծեր որ Վեհափառը նման քայլ մը կ'առնէ առանց նախապատրաս-
տութեան: Մեզի համար ցանկալի պիտի ըլլար մօտեցումը մեր զոյգ
եկեղեցիներուն:

Հ.- Քաղկեդոնի ժողովը մեզ դարերէ ի վեր կը բաժնէ Կաթողիկէ
Եկեղեցիէն. ինչո՞ւ այսքան արագ կերպով «համաձայնիլ» դաւանական
հարցերու շուրջ:

Պ.- Բնական է որ չենք կրնար չմտահոգուիլ: Բայց երբ ինծի համար
ամէն ինչ պարզ ըլլայ, լուսաբանուած ըլլամ եւ բաւարարուած չզգամ՝
այն ատեն կարելի կ'ըլլայ պահանջել եպիսկոպոսական ժողով մը՝
բոլորով քննելու եւ համաձայնելու եղած փոփոխութեանց: Մեզ բաժնող
աստուածաբանական հարցերը գուցէ հաւատացեալին համար այսօր մեծ
նշանակութիւն մը չունենան: Թերեւս աւելի պարզաբանելով եւ
դիւրացնելով ճանապարհ հարթուի որ եկեղեցիները իրարու հետ աւելի
սերտ յարաբերութիւն ունենան եւ աշխարհի օրինակ ըլլանք. այլեւս
տեղ չունենայ նոյն Քրիստոսի հաւատացողներու ձգտուածութիւնը:

Ըլլա՞յ ընդհանուր քրիստոնէական միութիւն մը՝ առանց անշուշտ
խախտելու մէկ կամ միւս եկեղեցւոյ հեղինակութիւնը իր հաւատաց-
եալներուն վրայ:

Հ.- Եկեղեցական պատրաստելու դժուարութիւն կամ այլ եկեղեցի բա-
նալու հարց ունի՞ք:

Պ.- Եթէ նկատի առնենք մեր գաղութին կեդրոնացումները այս
քաղաքին մէջ, անմիջապէս պէտք է մտածենք որ պէտքը կայ երկրորդ
եկեղեցիի մը: Մենք արդէն երկու եկեղեցի ունինք գաղութին մէջ:
Մէկը Սան Փաւլօ, միւսը՝ մօտակայ Օզասքօ քաղաքը: Երկուքն ալ կը
գործեն: Երեւակայեցէ՛ք՝ 15 միլիոննոց քաղաքի մը մէջ հազիւ քսան
հազար ժողովուրդ (եթէ կանք այդքան...) ցրուած վիճակի մը մէջ: Ո՞ւր
կարելի է հիմնել երրորդ եկեղեցի մը:

Ինձմէ՛ գատ կան երկու քահանայ հայրեր, որոնք Սան Փաւլոյի
համար բաւարար են: Ինչ որ զիս կը մտահոգէ, Սան Փաւլոյէն դուրս
գտնուող փոքր քաղաքներու,՝ որոնց մէջ եւ Ռիօ տը Ժանէյրոյի,՝ քանի

մը տասնեակ կամ քանի մը հարիւր հաշուող հայ ընտանիքներու պարագան է: Ռիոն, օրինակ, խառնամուսնութիւններով ուժացած համայնք մը ունի, որ ատենօք ծրագրած է իր եկեղեցին եւ հովիւը ունենալ, բայց բնաւ չէ իրականացուցած իր ծրագիրը: Մենք պարագայաբար հասած ենք Ռիոյի հայոց հոգեւոր կարիքներուն:

Հ.- Գրական գործերով զբաղելու փափաք կամ ժամանակ ունի՞ք:

Պ.- Կ'ըսուի թէ առաջնորդները պարագոյ ժամեր շատ կ'ունենան. ես բնաւ համաձայն չեմ ատոր: Առաջնորդ եղողը կը գիտնայ թէ պարագոյ ժամանակ ունի՞, թէ՞ ոչ: Անշուշտ եթէ ուզեմ ունենալ՝ շա՛տ կրնամ ունենալ... Բայց գաղութին հետ յարաբերութիւններս կը ստիպեն որոշ այլ աշխատանքներ եւս կատարել: Ատկէ դուրս, կը զբաղիմ միայն մեր պաշտօնաթերթին պատրաստութեամբ՝ ծայրէ ծայր գրելով ու կազմելով զայն: Պիտի սիրէի ունենալ մնայուն գրական զբաղումներ: Վերջին հինգ տարիներուն զբաղած եմ փորթուգալերէն-հայերէն բառարանի պատրաստութեամբ: Անմիջական ծրագրիս մէջ է Պրն. Աբովեանին հետ այլ բառարանի մը ձեռնարկել: Ըսեմ որ գրական շնորհներ չունիմ ես, բայց կը սիրեմ ընթեռնուլ. հետաքրքրուած եմ մեր մամուլով: Գրական որեւէ լուրջ աշխատանք չեմ կատարած:



ԳԱՔՐԻԷԼ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

Ատենապետ Ռ.Ա.Կ. Արմենակ Եկարեան
Ակումբի

Հ.- Ակումբիդ հակիրճ պատմականը կը հաճի՞ք տալ:

Պ.- Ակումբը ծնունդ առաւ քսան տարի առաջ, երբ Բենիամին Տիշչէֆէնեան իր կուսակցական ուխտը տուաւ Մոնթեվիտէոյի մէջ Մ. Հայկենցի առաջ ու վերադառնալով Սան Փաւլօ Աւետիս Շահինեանի հետ, որ Հալէպ տուած էր իր ուխտը, ձեռնարկեց կուսակցական գործունէութեան: Զանազան անձնական հարցերու պատճառով չկրցանք ունենալ մեծ թիւ մը շարքայիներու: Արժանթիւնէն Հայկ Շահինեանի գրքոյկը թարգմանած ենք փորթուգալերէնի: Մինչ այդ գաղութը կը ճանչնար միայն Հ.Յ.Դ.ն եւ Ս.Դ.Հ.Կ.ը:



Հ.- Ի՞նչ գնահատական կու տաք Դաշնակցության գործունեության եւ նոր սերունդի ազգային-քաղաքական կողմնորոշման:

Պ.- Դաշնակցութիւնը հոս բաժնուած է չորս կամ հինգ կտորի: Այս վիճակով դժուար թէ գործունէութիւն կարենան ունենալ: Նոր սերունդը մաս կը կազմէ Հայկական Ակումբին, ուր յիսուն տարի առաջ Դաշնակցութիւնը կ'ունենար իր գործունէութիւնը: Բայց նոր սերունդէն Դաշնակցութեան շարքերը մտնողներ չկան: Անոնք պարզապէս իրենց մասնակցութիւնը կը բերեն հայ կեանքին:

Հ.- Ռ.Ա.Կ.ը ինքնանպատակ կազմակերպութիւն մը չէ. ի՞նչ կ'ընեն ձեր շարքայիցները:

Պ.- Առաջին առիթով սատար կը կանգնին հայկական հաստատութիւններու: Աւետիս Շահինեան եւ Բենիամին Տիշէքէնեան եղած են Հ.Բ.Ը.Մ.ի մասնաճիւղի հիմնադիրներէն 1964-ին: Բացի իրենցմէ՝ Հ.Բ.Ը.Մ.ի մէջ գործած են Օշին Մոստիշեան, Հրայր Շահինեան, Մարտիրոս Մոմճեան եւ Զաւէն Տէր-Յարութիւնեան, որ 8 տարի ատենապետ է եղած եւ իր օրով կանգնած են Պազարեան վարժարանն ու Հ.Բ.Ը.Մ.ի մարզարանը: Ես եղած եմ ատենադպիրը միութեան՝ նոյն օրերուն: Տէր-Յարութիւնեան այժմու ատենապետն է Ազգային Կեդրոնական Վարչութեան, որուն մաս կը կազմէ Օշին Մոստիշեան եւս: Տէր-Յարութիւնեան նաեւ փոխ-ատենապետն է Հայաստան Համահայկական Հիմնադրամին:

Հ.- Գործակցութիւն կա՞յ տարբեր կազմակերպութիւններու միջեւ:

Պ.- Հպարտութեամբ կրնանք ըսել թէ բոլոր կազմակերպութիւնները կը գործակցին, մա՛նաւանդ Ապրիլ 24-ի գծով: Գործակցութեան վերջին օրինակը պարզուեցաւ Գարեգին Ա. Կաթողիկոսի այցելութեան օրերուն:

Հ.- Իսկ Հայաստան Հիմնադրամին գծո՞վ:

Պ.- Դաշնակցականներ անհատապէս մասնակցութիւն կը բերեն, բայց ո՛չ կազմակերպութիւնը, թէեւ ո՛չ բաւարար չափով:

Հ.- Ազգային պատասխանատու դէմքեր կ'անցնի՞ն արդեօք գաղութէդ յաճախ:

Պ.- Այցելութիւնները կարեւոր են: Մ. Նահանգներէն անձնաւորութիւններ Պրագիլի վրայով կ'երթան Պուենոս Այրէս՝ առանց մեզի այցելելու: Նոյնը կը պատահի Եւրոպայէն այցելուներու պարագային: Մենք կը զգանք լքուած: Մինչդեռ այցելութիւնները խանդավառիչ բան



Սան Փալոյի մէջ ուսմկաւար ազատական ընկերներու հետ, շրջապատած Հայաստանի Հանրապետութեան փոխ-նախագահ Գագիկ Յարութիւնեանը, իրեն ի պատիւ տրուած ընդունելութենէն ետք:

մը ունին՝ ինչպէս էր Տ.թ. Գ. Քեչիչեանի, Դոկտ. Վ. Ղազարեանի, Ա. Փոլատեանի, Մ. Հայկենցի, Պ. Սեդրակեանի, ձեր եւ նոյնիսկ Ե. Ազատեանի այցելութեանց պարագային:

Հ.- Կը մտածէ՞ք պրագիլահայ քաղաքական լոպի մը ստեղծելու մասին:

Պ.- Մեր միջոցներով անհնար է իրագործել նման բան մը, բայց Հայաստան Հիմնադրամին միջոցով կրնայ իրականանալ: Հիմնադրամի վարչութեան մէջ կան անձեր, որոնք կապեր ունին մայրաքաղաքի պաշտօնատարներուն հետ, որոնց մէջ կայ Հայազգի նախարար մը՝ Անթոնիօ Քենտիր (Քենտիրեան՝ ատենօք): Ծրագրումի նախարար Քենտիր կառավարութեան մէջ կը նկատուի երկրորդ մարդը եւ մտերիմն է հանրապետութեան նախագահին: Հիմնադրամի ատենապետ Վարուժան Պուրմայեանն ու Զաւէն Տէր-Յարութիւնեանը միասնաբար կրնան քաղաքական շատ դուռներ բանալ մեզի համար:

Հ.- Ունի՞ք նորաժամանկներ:

Պ.- Պետական դժուարութիւններ չեն խրախուսեր գաղթը Պրագիլ: Դրամաճումը բարձր էր եւ միայն երկու տարի է որ կայունացած է մեր

դրամանիշը: Նորաժամաններ հազիւ տարի մը կը մնան եւ կ'անցնին Արժանթին կամ Մ. Նահանգներ:

Հ.- Ի՞նչ ծրագրեր ունիք ապագայի համար:

Պ.- Կը փափաքինք սերտ կապ հաստատել Պէյրուի մեր Կեդրոնական Վարչութեան հետ եւ անոր ցուցմունքներով նոր թափ տալ մեր գործունէութեան:



ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՅԱՐՈՒԹԻԻՆԵԱՆ
Ատենապետ Հ.Բ.Ը.Մ.ի Սան Փաւլոյի
Մասնաճիւղի



Հ.- Գոհունակութեամբ նկատած ենք թէ Հ.Բ.Ը.Մ.ը հայապահպանման մեծ աշխատանք կը տանի Ռու: Այսօր եւս անցեալի ոգին կը տիրէ՞:

Պ.- Հ.Բ.Ը.Մ.ը, ինչպէս անցեալին, այսօր ալ մեր գաղութին ամենակարեւոր հաստատութիւնն է: 32 տարի առաջ իր հիմնադրութենէն ի վեր կը գործէ ան կրթական (միակ դպրոց ունեցող կազմակերպութիւնն ենք), մշակութային, ընկերային եւ մարզական գետնի վրայ: Մեր համալիրին կերտումը եղած է մեր կարեւորագոյն աշխատանքը, որ հիմա այլեւս աւարտած ըլլալով՝ մեր հիմնական պարտականութիւնը հայապահպանման գործը շարունակելն է:

Հ.- Բարեգործականի ղեկավարներ Ռինգ տարիէ ի վեր նախապատուութիւն կու տան Հայաստանի օգնելու: Ձեր մարդկային թէ նիւթական միջոցներով ինչպէ՞ս կրնաք հասնիլ ձեր թէ՛ ազգապահպան ծրագրերուն եւ թէ՛ Հայաստանի կարիքներուն:

Պ.- Հիւսիսային Ամերիկայի պարագան տարբեր է մերինէն: Հոն ազգապահպանման հարցը լուծուած է, հետեւաբար ղեկավարներ կրնան Հայաստանի համար աշխատիլ: Պրագիլի մէջ նա՛խ թիւով քիչ ենք, ապա՝ կերտելու վրայ ենք մեր գաղութին ապագան: Կը ջանանք Հայաստանի եւս օգնել՝ Հայաստան Համահայկական Հիմնադրամին միջոցով, բայց բնաւ չենք անտեսեր մեր գաղութին կարիքները:

Հ.- 13 տարի է որ ունիք այս վարժարանը: Ծրջանաւարտները մօտէն կը հետաքրքրուի՞ն Միութեամբ, որուն համար դպրոցը նաեւ անդամակցութիւն ապահովելու միջոց է:

Պ.- 4-5 տարի առաջ երիտասարդութիւնը պահ մը հեռացաւ Բարեգործականէն: Բայց անցեալ տարիէն ի վեր ունինք երիտասարդ վարչութիւն մը, որուն անդամները տասը տարի առաջուան չըջանա-
ւարտներն են: Ուրեմն կը սկսինք արդիւնքը տեսնել:

Հ.- ինչպէ՞ս կը յաջողիք հաւասարակշռել ձեր պիւտճէն՝ հակառակ տնտեսական տագնապին:

Պ.- Թէեւ քիչ ենք թիւով, բայց մեր գործօն անդամները կ'օգնեն Բարեգործականին: Անշուշտ, հակառակ ներկայ աւելի բարելաւ պայ-
մաններուն՝ երբ երկրին դրամանիշը կայունացած է եւ անցեալի նման չ'ենթարկուիր աներեւակայելի դրամաճնումի, մեր նիւթական բեռը կը մնայ ծանր: Ամէնօրեայ վարժարան պահել դիւրին չէ: Բայց կ'ընենք մեր կարելին՝ ըլլալու ինքնաբաւ:

Հ.- ինչպէ՞ս է ձեր կապը Միութեան Նիւ Եորքի կեդրոնական գրասեն-
եակին հետ:

Պ.- Մենք մեր կողմէ կարելին կ'ընենք, բայց դեռ հեռու ենք...: Կ'ուզենք աւելի սերտացնել մեր կապերը: Կ'ակնկալենք որ կեդրոնը մեր գաղութին նկատմամբ ցուցաբերէ աւելի մեծ ուշադրութիւն եւ հաշուի առնէ մեր մշակութային թէ՛ այլ կարգի տարբերութիւնները Արժան-
թիւնէն թէ՛ Ուրուկուայէն:

Կեդրոնական Վարչական Ժողովին համար մենք գլխու ցաւ չենք, ընդհակառակը՝ նիւթապէս ինքնաբաւ ըլլալով՝ հանգստութիւն: Չունինք նիւթական ակնկալութիւն իրենցմէ:

Հ.- Սփիւռքի մէջ հայախօսութիւնը տեղի կու տայ: Որքան հեռանաւք Մեծ Եղեռնի թուականէն՝ այնքան այլասերումը կը սաստկանայ: Կը մտածէ՞ք գալիք տասնամեակին դէպի հայախօսութիւն վերադարձի արշաւի մը ձեռնարկել:

Պ.- Մեր վարժարանը հիմնուեցաւ հայերէն լեզուի ուսուցման նպա-
տակով, որպէսզի նոր սերունդը հայերէն խօսի: Երբ անցնող տաս-
նամեակին նայինք՝ վարժարանը չարդարացուց ինքզինք. այնպէս որ՝ ապագային նայելով, չեմ կարծեր որ իրականանայ նման բան մը: Այլասերումը հոս օրէ օր կը սաստկանայ:

Հ.- Բանի որ դպրոցը կը թերանայ, ինչպէ՞ս կը մտածէք հայապահպանման գործը յառաջ տանիլ:

Պ.- Անցեալին, պատանին հայախօս դարձնելու եւ հայ եկեղեցիին կապելու աշխատանքը աւելի՛ հեռացուց պատանին լեզուէն եւ եկեղեցիէն: Ժամանակ շատ կորսնցուցինք: Փոխելու ենք մեր աշխատանքի ձեւը: Այսօր կը ջանանք հայ ըլլալու պատի՛ւը ներշնչել, ծանօթացնել մեր երգն ու երաժշտութիւնը, կազմակերպել մարզական խաղեր, հայ պատանիները հայկական միջավայրի մէջ համախմբել եւ նման միջոցներով նոր սերունդին հայկականութիւնը պահպանել:

Հ.- Ի՞նչ կը խորհիք մնալուն մշակութային շարժում ստեղծելու մասին:

Պ.- Մշակոյթը հիմը կազմելով հայապահպանման աշխատանքին՝ կը հաւատանք նման ծրագրերու: Եթէ ունենանք արուեստագէտ մը, որ կազմէ թատերական, երգի եւ պարի խումբեր՝ քաջալերողը պիտի ըլլանք նման շարժումի մը՝ որքան ալ դժուար ըլլայ ան:



ԳԱՌՆԻԿ ՊԱԶԱՐԵԱՆ

Նահապետ՝ պրագիլահայութեան

Հ.- Սան Փաւղոսիք ձեզ կը նկատեն իրենց նահապետը: Դուք, որ 60 տարի ծառայած էք հայութեան, որքանո՞վ փոխուած կը գտնէք գաղութը:

Պ.- Հիները ազգային զգացում ունէին. դժբախտաբար այսօրուան մեր զաւակները հեռացած են քիչ մը: Ծնողը այլեւս հայ չի՛ ծնիր: Կ'ըսեն թէ 20,000 հայ կայ հոս, բայց իսկական հայ 5,000 իսկ չկայ: Ամէն պարագայի դեռ ունինք զաւակներ ու թոռներ որ կրցածնուն չափ հայ կը մնան եւ հայրենիքի կողքին են:



Հ.- Ձեր եղբայրը՝ Փառէն, Հ.Բ.Ը.Մ.ի ամէնօրեայ դպրոցի իմնադիրնէրէն եղաւ: Դուք ալ կը հաւատաք հայ դպրոցի: Գո՞հ էք հայկական դպրոցէն:

Պ.- Բոլոր հայ վարժարանները կարեւոր են. աշակերտները գոնէ հայերէն բան մը կը սորվին: Շրջանաւարտները, դժբախտաբար, օտարներու հետ կ'ամուսնանան (70% խառնամուսնութիւն կայ): Թէեւ կը

զգան որ հայու գաւակ են, բայց հիներու զգացումը չէ:

Հ.- Հայաստանի իշխանութեան դէմ քարոզչութիւնը օգտակար կ'ըլլա՞ն հայութեան շահերուն:

Պ.- Հայաստանի դէմ արտայայտուողները նոյնիսկ իրենց կուսակցութեան չեն կրնար օգտակար ըլլալ: Ո՛վ որ Հայաստանի եւ Հայց. Եկեղեցւոյ չէ կապուած՝ հայութենէ դուրս է արդէն: Մեր հայրենիքը պզտիկ է, բայց մեր հայրենասիրութիւնը՝ մեծ: Անկախութեան տարեդարձին Հայաստան էի այս տարի տեսնելով մեր երիտասարդ զինուորներու տողանցքը՝ 3 ժամ լացի միայն... հայոց Անկախութիւն հրապարակին վրայ: 88 տարեկանիս՝ այդ տեսնելէ ետք եթէ նոյնիսկ մեռնիմ, կարեւորութիւն չունի երազս իրականացած է: Բայց պիտի չմեռնիմ եւ 2000 թուականին պիտի վերադառնամ Հայաստան...:

Հ.- Ինչո՞վ ձեր գաղութը օգտակար կրնայ ըլլալ Հայաստանի:

Պ.- Բոլորս պէտք է միանանք ու միասին աշխատինք: Երկու տեսակ հայ չկայ: Կուսակցապետերը պէտք է գիտնան թէ բոլորս հայութեան կը պատկանինք եւ առանց Հայաստանի ու անոր կառավարութեան մենք հայ չենք կրնար մնալ: Ինչ որ կրնանք ընել Հայաստանի համար՝ ան է որ կը մնայ:

Հ.- Ի՞նչ տպաւորութեամբ դարձաք Հայաստանէն:

Պ.- Լեւոն Տէր-Պետրոսեան սքանչելի մտաւորական է եւ շատ խելացի դիւանագէտ: Մենք դուրսէն միայն օգնելու ենք. Հայաստանը սփիւռքին պէտք ունի:

Հակառակորդները պատմութեան ընթացքին պիտի մոռցուին:

Հ.- Ձեր կեանքէն յատկանշական դրուագ մը կը հաճի՞ք պատմել:

Պ.- 1955-ին Հայաստան գացեր էի փախստական, քանի որ եկեղեցական վարչութիւնը բաղկացնող դաշնակցականներ դէմ էին Հայաստան ներկայացուցիչ ղրկելու, եւ մասնակցեցայ Վազգէն Վեհափառի ընտրութեան: Անկէ ի վեր 16 անգամ Հայաստան գացած եմ, վերջինը՝ Փառէն եղբօրս հետ: Մեր հայրենիքը շատ լաւ պիտի ըլլայ ապագային, բայց հիմա պէտք է օգնենք անոր: Հայաստանէն վերադարձիս, Փարիզի մեր ազգական դաշնակցական չէֆ Հրանդ Սամուէլեանի հետ գացի «Յառաջ»ի խմբագրատուն, ուր անակնկալօրէն հանդիպեցայ Սողոմոն Թեհլիրեանին: Զկրցայ արցունքս զսպել եւ ուզեցի ձեռքը համբուրել. չձգեց ու ինք ճակատս համբուրեց: Երբ մեռնիմ, աչքս ետիս պիտի

չմնայ, քանի որ լեցուն հայկական ոգի մը ունիմ: Գալով Պրազիլի, հիմնած եմ Գառնիկ Պազարեան Հիմնարկութիւնը, ուրկէ 200 գովէճականներու կրթաթոշակ տալով անունս այս երկրին մէջ եւս անմահացուցած եմ:



ՄԱՐՏԻՐՈՍ ՄՈՄՃԵԱՆ

Պրազիլահայ մտաւորական

Հ.- Այս գաղութին մէջ այն քիչերէն էք, որոնք հայկական բարձրագոյն կրթութիւն ունին: Անցնող օրերուն լսեցիք ուժացման վկայութիւնները: Բան մը փրկելու յոյս կա՞յ արդեօք:

Պ.- Քառասուն տարի է որ հոս կը բնակիմ: Երբ Սան Փաւլօ եկայ՝ աւելի հոծ էր գաղութը. հիմա նօսրացած է. եկեղեցիներ թափուր են հաւատացեալներէ. միութիւնները մերկ են անդամներէ: Կը խորհիմ թէ գաղութին նիւթական բարւոք վիճակը ուղղակի դեր մը ունի ազգային ընկրկումին մէջ: Նիւթը շուայլացուցած է գաղութը եւ հետզհետէ ուժացումի կ'առաջնորդուինք: Մեր միա՛կ ընելիքը երիտասարդութեան նեցուկ կանգնիլ եւ անոնց հոգին ու միտքը մեր աւանդութիւններով սնուցանելն է: Կը կարծեմ թէ Հ.Բ.Ը.Մ.ը իր դպրոցով եւ ակումբով, Հայ Կեդրոնը իր եկեղեցիով եւ ծխական դպրոցով, ինչպէս նաեւ Հայ Ակումբը կրնան որոշ չափով երկարաձգել հոգեվարքը: Յոռետես մը չեմ մեր գաղութին նկատմամբ, բայց դէպի յոռետեսութիւն առաջնորդուող ընթացքի մը մէջ կը գտնուիմ:



Հ.- Ձեր մտաւորական պատրաստութեամբ ինչո՞ւ չուզեցիք ձեր պարապոյ ժամերուն հայերէն դասաւանդել երկու վարժարաններուն մէջ, ինչպէս կ'ընեն Պոլսոյ հայ բժիշկները:

Պ.- Զիշդ է ձեր ըսածը: «Անկախութիւն»ի մէջ այդ ուղղութեամբ մեր ընկեր Թորոս Թորանեանի ստորագրութեամբ գրութիւն մը կարգացի եւ ուրախացայ, որովհետեւ սիրայօժար աշխատանք մըն է ատիկա: Ես ալ ատենին Հ.Բ.Ը.Մ.ի մէջ սիրայօժար աշխատանք տարածեմ չըջան մը: Ամէնօրեայ վարժարանին հիմնումով թէեւ վերջ գտած է

ան, բայց 1980-1985 իմ նախասիրած ուսուցչական ծառայութիւնս կատարած եմ Մարաշի Հայրենակցական Միութեան Տան մէջ, շուրջ քառասուն աշակերտներու կրցածիս չափ սիրցնելով մեր լեզուն ու պատմութիւնը: Աշակերտներս գոհ էին, բայց ժամանակի ընթացքին ցրուեցան եւ նորեր չունեցայ:

Այդ դաստուական շրջանը, կրնամ ըսել, եղաւ իմ մշակութային կեանքիս ոսկեդարը. եւ այդ սէրս ու սիրայօժար աշխատանքի պատրաստակամութիւնս կը պարտիմ նախ Հալէպի Մեսրոպեան նախակրթարանին եւ ապա Մելգոնեան Կրթական Հաստատութեան, որոնք ինծի ջամբած են հայ մշակոյթ, պատմութիւն ու լեզու:

Հ.- Գաղութներու պատմութեան արձանագրութիւնը կրնայ նաեւ նշանակութիւն ունենալ ապագային կազմուելիք այլ գաղութներու համար՝ իբրեւ օրինակ: Եզնիկ Քահանան հրատարակած է պրագիլահայ գաղութի պատմութիւնը մինչեւ 1940-ի վախճանը: Չէ՞ք խորհիր որ 50-ական թուականներէն ասդին եւս արձանագրուելու է պատմութիւնը ձեր գաղութին, եւ թէ դուք յարմարագոյն անձը կրնաք ըլլալ նման ծրագրի մը իրագործման տեսլետով:

Պ.- Ձեր մատը ճիշդ վէրքին վրայ դրիք: Ուսերուս վրայ պարտականութիւն մըն է ատիկա. ճիտիս պա՛րտքն է: Յոյս ունիմ յետ այսու առօրեայ աշխատանքներէս ետք գրական աշխատանքին վերադառնալու հոգեկան գոհունակութիւնը ապրելու: Կը խոստանամ յանձն առնել մեր գաղութի պատմագրութիւնը՝ առաջնորդ հօր եւ այլ տարեց անձերու աջակցութեամբ:

Յարակցաբար, հաւանաբար կարելի ըլլայ փունջ մը պատմութեան քերտէն մէջ եւս արտացոլել մեր գաղութին կեանքէն դրուագներ՝ երբ առօրեայ աշխատանքէս վերջնականապէս զերծ կացուցուիմ:

Հ.- Մելգոնեանի 70-րդ տարեդարձին առիթով անցեալ տարի այցելեցիք Նիկոսիա: Կ'ուզէ՞ք ձեր հոգեկան ապրումներուն մասին արտայայտուիլ:

Պ.- Ատիկա յուզական մէկ կողմն է մեր անցեալին: Մելգոնեանի օդը, ջուրն ու մթնոլորտը ամբողջութիւն մը կազմած են իմ մէջ: Կը յուսամ մօտ ատենէն «Անկախութիւն»ի մէջ արտայայտուիլ այդ գեղեցիկ հաստատութեան եւ իմ ապրումներուն մասին:

Սան Փալօ, 7 եւ 8 Յունուար 1997

ԾԱՆՕԹ.- Պրն. Մոմենան բարի եղաւ մեր բոլոր այցելութիւններուն

ուղեկցելու մեզի. իսկ Օր. Մոնիքա Նալպանտեան սիրալոծար թարգմանի
դեր կատարեց Պրն. Գեորգ Տէր Յարութիւնեանի հետ հարցազրոյցի
ընթացքին:

«ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆ», 23 Յունուար 1997

«ՆՈՐ ՕՐ», 5 Մարտ 1997



Ապու Տհապին իր արդիական կառույցներով:

ԱՊՈՒ ՏՀԱՊԻՆ ԻՐ ՀԱՅՈՒԹԵԱՄԲ

Ճետտա, Սեուտական Արաբիա, առետրական գործով այցելութեան օրերուն, ընդառաջած էի վաղեմի բարեկամիս, մանկութեան օրերու դասընկերոջս՝ Մայք Խարապեանի առաջարկին, այցելելու նաեւ Միացեալ Արաբական Էմիրութիւններ: Մայքը յաջողած անձնաւորութիւն մըն է արաբական քարիւղի երկիրներուն մէջ: Ան իր առետրական տան ճիւղերը սկսած է արձակել Ապու Տհապի եւ Տուպայ:

Անակնկալ մը չէր Էմիրութեանց ազգային եռուն կեանքը: Բարեկամէս՝ Յարութիւն Տիրացունեանէն յաճախ լսած էի այդ մասին եւ կարդացած՝ Արամ Սեփեթեանի թղթակցութիւնները: Սակայն անակնկալ մըն էր հանդիպումս դպրոցական դասընկերներէս Վաչէ Գասէմեանին՝ Ապու Տհապի եւ Զարեհ Թիթիւնեանին՝ Շարժա: Անակնկալ էր նաեւ հանդիպումս Գրիգոր Մահսէրէնեանին, որ Պէյրութի Հ.Ե.Ը.ի լաւ սկաւտներէս մէկն էր եւ հոս արդէն նուիրուած է ազգային հասարակական կեանքին:

Մեծ գաղութի մը մանրանկարն է Ապու Տհապին իր հայութեամբ: Ազգային մարմինը ընդհանրապէս հակակշռին տակ է Դաշնակցութեան իր առաջնորդով՝ Օշական Սրբազանով. իսկ Հայկական Մշակութային Ընկերակցութիւնը՝ հակակշռին տակ հնչակեաններու: Տուպայի եւ Ծարժայի հայկական կեանքը համարեա յար եւ նման է Ապու Տհապիինին:

Զգալի է կազմաւորուող համայնքի մը հաշաշունչ մթնոլորտը, մանաւանդ երբ համայնքի անդամներ ամէն տարի կը վերանորոգեն իրենց հայութիւնը այցելելով իրենց ծննդավայրերը՝ Պէյրութ, Հալէպ կամ Պաղտատ: Ահա՛ եւ հարցազրոյցներ համայնքի ներկայացուցչական դէմքերու հետ:

**ԹԱՄԱՐ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ ԵՒ
ԳՐԻԳՈՐ ՄԱՀՍԷՐԷՃԵԱՆ
Ներկայացուցիչներ Ազգային Վարչութեան**


Հ.- Լսեցինք թէ ազգային իշխանություն մը կազմուած է ձեր մօտ: Կրնա՞ք տալ կարգ մը տեղեկություններ այդ մասին:

ԹՏՅ- Ազգային Մարմինը նոր չէ որ կազմուեր է, այլ 1979-էն գոյութիւն ունի: Անկէ առաջ ալ բաւական հայեր կային Արաբական Միացեալ Էմիրութեանց մէջ: Մեզի նման ուրիշներ ալ եկած ու տեղա-
ւորուած են այս փերը, ընդհանրապէս լաւ դիրքերու հասնելով: 1974-ին Քուէյթի կաթողիկոսական փոխանորդին՝ Օշական Մ. Վ.ին Մելիք Մելիքսէթեանը կ'առաջարկէ երթալ Ծոցի երկիրները եւ կազմակերպել ազգային համայնք:

Տեսակցութիւններ տեղի կ'ունենան այստեղի գործունեայ հայերուն հետ: Ժամանակը հասած կը նկատեն հոս ալ կազմակերպուելու: Կը նշանակուի ազգային վարչութիւն մը: Ես 1980-ին ընտանիքիս հետ փոխադրուած եմ, երբ տարի մը առաջ արդէն կազմուած էր այդ մարմինը: Կար ազգային վարչութիւն եւ դպրոց 20-25 աշակերտով: Դպրոց ըսելով պէտք է ճշդենք որ ան միօրեայ վարժարան է, Հինգշաբթի կէսօրէ ետքերը, ուր կը դասա-
ւանդուի հայերէն: Շէնք չունինք, սակայն տեղական վարժարան մը վարձած ենք այդ նպատակով:

Այսպէս շարունակուեցաւ մինչեւ 1993: Երկու տարին անգամ մը վարչութիւն կը նշանակուէր եւ կ'ունենայինք ընկերային, մշակութային ձեռնարկներ: 1993-ին մնայուն հոգեւոր հովիւ ունեցանք Հայր Բաբգէն Վրդ. Զարեանը: Ինչ որ կ'ըսեմ, կը վերաբերի նաեւ Տուպայի հայոց: Վարդապետը թէեւ Տուպայ կը բնակի, բայց կը ծառայէ այս-
տեղի եւ Շարժայի հայոց եւս:

Մինչ այդ, կ'ունենայինք երկու շաբաթը անգամ մը պատարագ: Հովիւը կու գար կրօնքի դաս աւանդելու եւ Աստուածաշունչի սերտո-
ղութիւն կատարելու:



Հայր սուրբին գալեն ետք, երբ համայնքը աշխուժացաւ, Ազգային Ժողովին առաջարկ ներկայացուեցաւ որ Մոցի երկիրները դառնան առանձին թեմ: Առաջարկը ընդունուեցաւ: Մինչ այդ, կաթողիկոսական փոխանորդը եպիսկոպոսացաւ: Ունեցանք թեմական Խորհուրդ եւ ընտրեցինք Ազգային Խորհուրդ: Դեկտեմբեր 1994-ին Քուէյթ երթալով ընտրեցինք Ազգային Վարչութիւն: Այդ օրէն ասդին այդ վարչութեան կազմը կ'ընտրուի եւ ոչ թէ կը նշանակուի:

Հոս թեմականը կը համապատասխանէ Գաւառական Վարչութեան. կը բաղկանայ 18 աշխարհականէ եւ 3 կղերականէ՝ 9 Քուէյթէն, 5 Շարժա-Տուպայէն, եւ 4 Ապու Տհայիէն: Տեղական Ազգային Վարչութեան ատենապետն է Կարպիս Կարպուշեան. փոխ-ատենապետ՝ Գրիգոր Մահսէ-րէճեան: Ես անդամ եմ թեմականի:

Հ.- Լսեցի թէ վայելած էք Մեծի Տանն Կիլիկիոյ երկու կաթողիկոսներու այցելութիւնը: Կրնա՞ք ըսել դրոյապատճառները այդ այցելութիւններուն:

ԹՏՅ- Գարեգին Բ.ի այցելութիւնը լիբանանեան դեսպանատան միջոցով տեղի ունեցաւ: Մեր նպատակն էր որ ան գար եւ ճանչնար համայնքը 1995-ի Մարտ 13-ին, իր Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրութենէն երկու շաբաթ առաջ: Ան տեսակցեցաւ գաղութին եւ երկրին իշխանութիւններուն հետ: Բացառիկ ընդունելութիւն վերապահուած էր իրեն: Այցելութեան իբրեւ հետեւանք չէյիւեր խոստացան հայութիւնը ճանչնալ որպէս գաղութ. խոստացան մեզի տալ էմիրութեանց միւս գաղութներուն համահաւասար ճանաչում, որով եւ իրաւասութիւն՝ ունենալու հողաշերտ եւ կառուցելու մեր հայկական եկեղեցին:

Շարժայի մէջ եկեղեցիի շինութեան ծրագիրը այսպիսով յաջողեցաւ:

Արամ Ա. Վեհափառին այցելութիւնն ալ մեզի համար բախտաւորութիւն եղաւ իր դէպի Ճափոն եւ հեռաւոր Արեւելք ճամբուն վրայ Ապրիլ 1997-ին: Իր վերադարձին եւս առիթ եղաւ հանդիպելու հետը:

Գ.Մ.- Արամ Ա.ի այցելութիւնը պաշտօնական չէր, այլ՝ stop over մը: Ան Շարժա մնաց եւ առաւելաբար զբաղեցաւ եկեղեցւոյ շինութեան հարցերով:

Հ.- Հայր Բաբգէ՞նն է տակաւին ձեր հովիւը:

ԹՏՅ- Ո՛չ. վարդապետը վերադարձաւ, բայց Սրբազանն է որ կու գայ եւ անոր եկեղեցական պարտականութիւնները կը կատարէ: Տօնական օրերուն Անթիլիասէն միշտ վարդապետ մը կու գայ մէկ-մէկուկէս ամիսով: Շուտով կը սպասենք քահանայի մը, որ հաւանաբար Շարժա



Ապու Տհապիի մշակութային պալատին մէջ, ձախէն՝ թանգարանի տնօրէն Տկն. Կիլիզար Մարտիրոսեան, Հայաստանի Հանրապետութեան մշակոյթի փոխ- նախարար Միքայէլ Ստանպուլցեան, Պերճ Աքրահամեան, Վաչէ Քասեմճեան եւ տեղւոյն Սր. Սահակ-Մեսրոպ կիրակնօրեայ վարժարանի տեսուչ Վարդան Ինկիլիզեան:

մնայ, քանի որ հայուլթիւնը հոն մեծաթիւ է եւ տուներու գիները աւելի նպաստաւոր են:

Հ.- Իսկ ի՞նչ կրնաք ըսել դպրոցին մասին:

ԹՏՅ- 1984-ին միացայ դպրոցին: Ներկայիս աշակերտութեան թիւն է 62 եւ ան անցեալին հասած է մինչեւ 90-ի:

Թիւր կախում ունի գացող-եկողներէն: Արդիւնքէն գոհ ենք ծնող- ներն ու մենք: Երբ ժամանակաւորապէս հոս հաստատուածներ վերա- դառնան Պէյրութ, Հալէպ, կամ Ամերիկա, իրենց հայեցի կրթական մակարդակով քիչ դժուարութիւն կը կրեն իրենք զիրենք պատշա- ճեցնելու այդ տեղերու ազգային վարժարաններուն:

Հ.- Ուսուցիչի դժուարութիւն ունի՞ք:

ԹՏՅ- Ո՛չ: Մեր տիկիներն են որ սիրալոթար կը դասաւանդեն:

Հ.- Ուրեմն հայախօս համայնք մըն էք:

ԹՏՅ- Այո՛, հայախօս համայնք ենք եւ ըսեմ նաեւ թէ՛ զարգացած գաղութ մըն է մերը թէ՛ այրերու եւ թէ՛ կիներու մակարդակով, բաղ-դատած այլ գաղութներու հետ: Դպրոցին գործերը յառաջ կը տանինք կանոնաւորաբար եւ սիրողաբար, առանց վճարումի:

Հ.- Սիրելի Գրիգոր, եթէ խօսքը մասնաւորեմք անհատ ազգայիններու, ապա յաջողած հայերէ կազմուած գաղութ մըն է ասիկա: Կրնա՞ք քանի մը անուն եւ հակիրճ տեղեկութիւն տալ անոնց մասին:

ԳՄ- Թէեւ Թամարը ինձմէ լաւ գիտէ զանոնք, նկատելով որ ինձմէ շատ առաջ հոս հաստատուած է, յիշատակեմ հիներէն Պերճ Աբրա-համեանը, որ հոս հաստատուած է 60-ականներուն եւ ունի Spectrum անունով խորհրդատուական ընկերութիւն մը ու միշտ օգտակար կ'ըլլայ ազգային նպատակներու: Ունինք Լեւոն Տէր Յովհաննէսեանը, Թամարին ամուսինը, որ Ապու Տհապիի Ազգային Վարչութեան առաջին ատենապետը եղած է: Ան C.C.C. հանրածանօթ շինարարական ընկերու-թեան այս քաղաքի շրջանային նախագահն է: Հիներէն Վարդան Ինկի-լիզեանը ունի իր ճարտարապետական գործը եւ բաւական չէնքեր կառուցած է հոս, մանաւանդ հայկական ոճով, առանց որ ինք անդրա-դառնայ:

Միացեալ Նահանգներէն եկած Կարպիս Պառուշեանը պաշտպանու-թեան նախարարութեան խորհրդատուներէն է: Կեդրոնական օդափո-խիչի իր նոր գաղափարէն բովանդակ էմիրութիւնները պիտի օգտուին: Պէտք է նշել Վահէ Թուխմանի անունը եւս:

Հ.- Հայաստանի երկրաշարժի օրերուն ի՞նչ աշխատանք տարուեցաւ Ապու Տհապիի մէջ:

ԹՏՅ- Շատ մեծ: Յանձնախումբ կազմուեցաւ եւ յաջող հանգանա-կութիւն ըրինք: Հաւաքուած գումարով ատաղձագործարան հիմնեցինք Ստեփանակերտի մէջ: Հոս եւ Քուէյթ մօտ 200,000 տոլար հաւաքուեցաւ, ինչ որ մեծ գումար է մեր թիւին համեմատ:

Հ.- Կը լսեմ թէ շաքաթական երկու թոիչք կայ Տուպայէն Երեւան: Առեւ-տրականի կողքին՝ համայնքային կապեր կը հաստատուի՞ն հայրենաբնակ հայոց հետ: Արդեօք Էմիրութեանց մէջ մնայուն կայք հաստատող հայաս-տանահայեր կա՞ն:

ԳՄ- Այդ հարցումին կրնան Տուպայի մեր ազգայինները պատաս-խանել: Անոնք մինչեւ հոս չեն հասնիր: Առեւտրական կեդրոնը Տուպայն

է: Ըսեմ որ Ապու Տհապիրի էմիրութիւնը աւելի խիտ բնակչութիւն ունի քան Շարժայինը: Շարժա կրնաս հող գնել եւ անունիդ արձանագրել ուստի մեր համայնքին մէջ անձնական գործի նախաձեռնութիւնը նուազ է եւ աւելի մասնագիտացած պաշտօնէութիւն ունինք հոս՝ քան սեփական գործ ունեցող առեւտրականներ, որոնք կը նախընտրեն Շարժա հաստատուիլ:

Հ.- Վստահաբար կ'ունենաք ընկերային-ընտանեկան հաւաքոյթներ:

ԳՄ- Շատ: Մենք մեզ օտար չենք զգար: Հոս առաւելութիւնը ունինք մայր գաղութներուն մօտիկ ըլլալու եւ Ամերիկայի նման հեռաւորութիւններ ալ չկան երբեք:

Հ.- Ծամբորդի հոգեբանութիւն կա՞յ, թէ արդէն իսկ համայնքի անդամները իրենք զիրենք հաստատուած կը նկատեն հոս:

ԳՄ- Այո՛, այդ հոգեբանութիւնը կա՛յ միշտ, քանի որ մենք հոս կեցութեան արտօնագրով կը մնանք եւ չենք կրնար քաղաքացի ըլլալ: Երեք տարին անգամ մը այդ արտօնագիրը պէտք է նորոգուի: Նաեւ ըսեմ թէ ամէն եկող սկիզբը կ'ըսէ թէ մէկ կամ երկու տարուան համար կու գայ, բայց խորքին մէջ 20-30 տարի կը մնայ: Իւրաքանչիւրս պատրաստ ենք յաջորդ օրն իսկ մեկնելու. միշտ կա՛յ այս հոգեվիճակը:

Հ.- Մեծաւ մասամբ լիբանանահայերէ եւ սուրիահայերէ՞ կը կազմուի Էմիրութեանց հայութիւնը:

ԳՄ- Այո: Ունինք նաեւ իրաքահայեր եւ իրանահայեր:

Հ.- Լիբանանահայոց ծրագիրն ի՞նչ է արդեօք: Ապու Տհապիէն ետք Լիբանան վերադառնա՞լ, թէ Ամերիկայի ճամբան բռնել:

ԳՄ- Հոս ապրող լիբանանահայերու մեծ մասը արդէն ունի երկրորդ անցագիր մը: Անոնք Պէյրութէն նախ Ամերիկա անցած եւ ապա հոս եկած հայեր են: Մէկ մասն ալ Գանատայէն եկած է: Լիբանանէն ուղղակի եկողները կը փորձեն ուրիշ քաղաքացիութիւն մըն ալ ձեռք ձգել, օրինակ՝ աւստրալիական:

Հ.- Քանի Լիբանանի մօտ էք, աոիթ կը ստեղծէ՞ք յաճախ ծննդավայր այցելելու:

ԳՄ- Ծնողք ունեցողներ ընդհանրապէս տարին մէկ կամ երկու անգամ կ'այցելեն, յատկապէս ամրան արձակուրդին: Նոյնն է պարագան սուրիահայերուն:

Հ.- Հայաստանի Հանրապետությանն դեսպանատունն հաստատելու ծրագիր կա՞յ:

ԳՄ- Թէեւ լսած եմ թէ Հայաստանի մեր Հանրապետութիւնը պատրաստ է նման ներկայացուցչութիւն ունենալու, բայց նման քաղաքական հարցերու մենք չենք կրնար միջամուխ ըլլալ: Հաւանաբար քիչ մը եւս ժամանակի կը կարօտի նման քայլ մը: Մի մոռնաք որ իբրեւ իսլամ պետութիւն Ատրպէյճանի մօտիկ կը զգան էմիրութիւնները:

Հ.- Ի՞նչ է հայերու թիւը Էմիրութեանց մէջ:

ԹՏՅ- Ընդհանուր թիւը 2,000-ի մօտ է: Անոնցմէ 400-450-ը Ապուհ հապի կը բնակին: Քիչ ենք, բայց՝ գործունեայ:

Հ.- Բարեկամէս՝ Արամ Սեփեթճեանէն լսած եմ թէ ունեցած էք նաեւ մշակութային գործունէութիւն. այցելուներ ընդունած էք հայրենիքէն:

ԹՏՅ- Այո՛: Առաջին խումբը որ եկաւ՝ կը բաղկանար Եղուարդ Միրզոյեանէ, Լուսինէ Զաքարեանէ եւ այլերէ: Խումբին հոս գտնուած օրերուն էր որ երկրաշարժը տեղի ունեցաւ: Տեղացիներ եւս ներկայ գտնուեցան ձեռնարկներուն: Նաեւ վայելեցինք այցելութիւնները Զիւան Գասպարեանին ու Յովհաննէս Պատալեանին, որոնք համերգներ տուին:

Հ.- Լիբանանահայ արուեստագէտներ ալ այցելա՞ծ են:

ԹՏՅ- Քաղաքացիական պատերազմի հետեւանքով Լիբանանի մշակութային մակարդակը բաւական տուժած ըլլալով կը զգուշանանք հրաւիրել խումբեր. բայց անհատ բանախօսներ ունեցած ենք: Գալով ձեռնարկներու, Սեպտեմբերը վերամուտի ամիս է 2-3 ամսուան արձակուրդէ ետք: Կը նշենք Հայաստանի անկախացման տօնը (Սեպտ. 21) հրաւիրելով Իրանի մօտ Հայաստանի դեսպանը: Ապա կը սարքենք տօնավաճառ: Ունինք երիտասարդաց վարչութիւն մը իրեն յատուկ յայտագիրներով: Քանի մը օրէն պիտի նշենք երկրաշարժի յուշատօնը բանախօսով մը: Դեկտեմբերին կ'ունենանք տարեկան դաշտահանդէս: Փետրուարին՝ աւանդական պարահանդէս: Կը նշենք նաեւ Մայրերու Օրը, Զատիկը, Միջինքը, Բարեկենդանը: Կը սարքենք ցուցահանդէս: Բոլորն ալ ծախսալից ձեռնարկներ են: Ազգային տօներէն կը նշենք Վարդանանցն ու Ապրիլեան յուշատօնը: Ամիսը անգամ մը գրեթէ ձեռնարկ կայ: Տարեփակին ալ կ'ունենանք դպրոցի ամալերջի հանդէսը:

Ըսեմ որ մեր ձեռնարկներուն գրեթէ համայնքը ամբողջութեամբ ներկայ կ'ըլլայ: Պարահանդէսը կ'ընենք 400-500 հոգիով: Պատարագներ-

րուն 60-70 հաւատացեալ կը մասնակցին. տօնական օրերուն 150 հանդիսական կ'ըլլայ: Ունինք սարկաւագներ, դպրաց դաս, դպրապետուհի: Բաւական կազմակերպուած ենք:

Հ.- Տեղացիներ որքանով ծանօթ եմ մեր պատմութեան:

ԹՅՅ- Կը կարծէինք թէ մեր մասին շատ բան չեն գիտեր, բայց Կաթողիկոսին այցելութեամբ պարզուեցաւ որ բաւական գիտեն:

Հ.- Կուսակցական-գաղափարական բաժանում ունի՞ք:

ԹՅՅ- Ո՛չ: Համերաշխ համայնք ենք: Թէեւ միշտ ալ խնդիր հանող քանի մը անձեր կ'ըլլան, բայց այլ գաղութներու բաղդատմամբ համերաշխ ենք:

ԳՄ- Անձնական գետնի վրայ կրնան պատահիլ կարգ մը անախորժութիւններ, բայց մասնակի երեւոյթներ են եւ չեն խոչընդոտեր մեր գործը: Գաղութին մէջ ունինք մշակութային ուրիշ յանձնախումբ մըն ալ. առանձին միութիւն է, բայց կը գործակցի ազգային մարմնին հետ: Անցեալին թերթ մը գրած էր թէ համերաշխ չենք. սխալ է: Գործակցութիւն կայ եւ ոչ մէկ ճիգ կ'ըլլայ զիրար խաչաձեւելու. ընդհակառակը, իրարու օգնելու փորձ իսկ կ'ըլլայ: Անհատ կուսակցականներ կան, բայց կազմակերպեալ կուսակցութիւն չկայ հոս: Կարգ մը աւանդական ձեռնարկներ Ազգային Վարչութիւնը կ'ընէ, ուրիշներ ալ Մշակութային Ընկերակցութիւնը: Վերջին տարիներուն երկուստեք կրկնապատկուած է գործակցութիւնը:



ՎԱՉԷ ԳԱՍԷՄԾԵԱՆ ԵՒ ԳՐԻԳՈՐ ԾԵՐԵԾԵԱՆ

Վարիչներ Հայկական Մշակութային Ընկերակցութեան

Հ.- Ի՞նչ պայմաններու տակ ստեղծուեցաւ
ձեր միութիւնը:

Վ.Գ.- Խումբ մը մշակութասէր ազգա-
յիններ, որոնց մէջ էինք Արամ Սեփեթ-
ճեան, Անդրանիկ Տաղլեան, Վարդան
Ինկիրիզեան, Թադիկ Մանկասարեան եւ ես,
որոշեցինք Ապու ՏՏապիի մէջ հիմնել
մշակութային ընկերակցութիւն մը: Անու-
նին շուրջ հարցեր ստեղծուեցան. նոյնիսկ
առաջարկ եղաւ որ Հ.Բ.Ը.Մ.ի անունով
գործենք՝ բոլորիս հասարակաց յայտա-
րարը Բարեգործականն ըլլալուն: Դիմում
ըրինք Հ.Բ.Ը.Մ.ի, որ թելադրեց քանի մը
տարի սպասել ու գործել, որպէսզի մեր
դիմումը նկատի առնուի:

Կարեւորը, սակայն, այն էր որ մենք
որոշեցինք անյապաղ գործի անցնիլ, քանի
որ ունէինք ազգայիններ, որոնք թէեւ
յաջողած անձեր էին իրենց ասպարէզին
մէջ, սակայն հետաքրքրուած էին ազգային
մշակութային կեանքով:
Սկզբնական մեր հանդիպումները կ'ըլլային «Մերիտիէն» պանդոկը, 30-
40 հոգիով, զանազան մշակութային հարցերու շուրջ:

Սկզբնական նպատակն էր համախմբուիլ ու խօսիլ հայ մշակոյթի
զանազան երեսներուն մասին: Շրջան մը ետք զգացինք որ մեր ուժերով
կարելի չէր գործը շարունակել: Դիմեցինք հայրենիք, որպէսզի իր
արժէքներով ներկայացուինք համայնքին մէջ եւ տեղացի ժողովուրդին
մօտ: Առաջին առթիւ հրաւիրեցինք «Կոմիտաս» քառեակը: Ժամանակի
ընթացքին ումանք հեռացան, նորեր միացան, ինչպէս՝ Յակոբ Գասապ-
եան, Մանասէ Տէր Կարապետեան, Գրիգոր Ճերեճեան:

Հ.- Անդամակցութիւն ունի՞ք:

Վ.Գ.- Իւրաքանչիւրս զբաղած ենք եւ մեր ժամանակին ներած չափով
կը մասնակցինք ժողովներու: Տեղական քաղաքական առումով չենք



կրնար անդամակցական կազմակերպութիւն ունենալ: Կը գործենք կիսապաշտօնական հանգամանքով: Կը գործակցինք Մշակութային Կա-
ճառին, Համերգային Մարմնին եւ այլոց հետ. պետութիւնը արգելք չի
հանդիսանար:

Տուպայի մեզի նման մտածող ազգայինները եւս անցեալ տարի
ունեցան իրենց նոյնանուն ընկերակցութիւնը, որուն ներկայ նախա-
գահն է Յակոբ Գասապեանը: Հոն ունինք Զարեհ Թիւթիւնճեանի նման
կարեւոր ուժեր:

ԳՃ- Քանի պատմականին մասին կը խօսիք, պէտք է ըսել որ հիմնա-
դիրներէն շատեր երկար ժամանակէ ի վեր կը գտնուին Ապու Տհապի
եւ դեր ունեցած են այս գաղութին կազմակերպման մէջ: Հին անդամ-
ներէն կարելի է յիշել, Բացի Վաչէէն եւ Անդրանիկէն, Պերճ Աբրահամ-
եանը, Կարօ Սարրգեանը, Հրաչ Արզումանեանը եւ զիս (Աւստրալիա
մեկնելէս առաջ):

70-ականներու սկիզբը երբ գաղութը շատ փոքր էր, յիշեալները քով-
քովի գալով կազմակերպեցին համայնքը եւ ձեռնարկեցին կիրականօր-
եայ վարժարանի մը: Քանիցս կղերականներ հրաւիրեցինք Երուսաղէ-
մէն՝ պատարագ մատուցելու: Օշական Վրդ. Զոլոյեանը երբ 1976-77-ին
Քուէյթէն գալով իր առաջին այցելութիւնը տուաւ, ուղեց գաղութը
կազմակերպել իր ըմբռնած ձեւով եւ զայն կցել Անթիլիասի: Մեր
կողմէ արգելք չկար. բոլորս ալ լաւ ընդունեցինք եւ համաձայն
գտնուեցանք այն կարծիքին թէ այդպիսով համայնքը աւելի լաւ կրնար
կազմակերպուիլ: Բայց մենք մինչ այդ արդէն ունէինք վարժարան եւ
կապ պահելով հայրենիքի եւ Նիւ Եորքի մեր Առաջնորդարանի Կրթա-
կան Բաժնի վարիչ Օր. Սիլվա Տէր Ստեփանեանի հետ հայերէն լեզուի
գիրքեր ապահոված էինք ու մեր երախաներուն լեզու եւ պատմութիւն
կը դասաւանդէինք:

Երբ Զոլոյեան Վրդ. այս բոլորով հանդերձ ուղեց իր ըմբռնած ձեւով
ազգային իշխանութիւն հիմնել, մենք այդ մարմինը չնկատեցինք
ներկայացուցչական, քանի որ ինք նշանակեց զայն՝ համայնքէն կարե-
ւոր հատուած մը դուրս ձգելով: Բացի այդ, այդ իշխանութիւնը զբա-
ղեցաւ համայնքին հոգեւոր կարիքներով: Նկատելով որ մշակութային
մարզը բացակայ էր այդ մարմնին մօտ եւ ըստ մեզի կարեւոր էր
Հայաստանի հետ մշակութային կապը, որուն շնորհիւ գաղութը պիտի
գոյատեւէր, անհրաժեշտ նկատեցինք ունենալ Մշակութային Ընկերակ-
ցութիւնը՝ այդ կապերը հաստատելու եւ մշակութային գործունէութիւն
ծաւալելու համար:

ՎԳ- Ազգային Մարմինը գոհունակութեամբ չդիմաւորեց մեր Ընկե-

րակցութեան կազմութիւնը՝ մրցակից նկատելով զայն: Մենք կարեւորութիւն չտուինք եւ շարունակեցինք մեր առաքելութիւնը: «Կոմիտաս» քառեակը մեծ ընդունելութիւն գտաւ օտարներու մօտ: Ապա բերինք Ռաիսա Մկրտչեանն ու Սիլվա Կապուտիկեանը: Մեր գործունէութիւնը ժողովրդային բնոյթ ստացաւ եւ հասանք նաեւ Տուպայի գաղութի կարիքներուն:

Հ.- Ինչպէ՞ս ժողովրդային բնոյթ ստացաւ:

Վ.Գ.- Սիլվային այցը մեծ խանդավառութիւն ստեղծեց: Ժողովրդային բնոյթով «Հայ Մշակոյթի Շաբաթ»ը պետական կեդրոնին մէջ կատարեցինք: Հայրենիքէն բերինք 14 հիւրեր: Նոյնիսկ Լիբանանի նման մեծ գաղութի մը համար 14 արուեստագէտ հրաւիրելը մեծածախս բան է, բայց մենք յաջողցուցինք: Հայրենի երիտասարդ արուեստագէտներ մասնակցեցան նկարչական ցուցահանդէսի: Մշակոյթի Շաբաթին ներկայ եղան նաեւ «Կոմիտաս» քառեակն ու Հ.Հ. մշակոյթի փոխ-նախարարը: Այդ առթիւ ցուցադրեցինք հայկական ժապաւէններ: Օտարները մեծապէս գնահատեցին զանոնք: Աւարտին ունեցանք խրախճանք: Նոյնը կազմակերպեցինք Տուպայի մէջ:

Հ.- Ինչպէ՞ս կը ֆինանսաւորէք նման ծրագիրներ:

Վ.Գ.- Զեռնարկները որոշ հասոյթ կ'ապահովեն, բայց բացը կը գոցենք անձնական միջոցներով:

ԳԾ.- Սովորութիւն ըրած ենք բոլոր մշակութային ձեռնարկները աւարտել խրախճանքով, ուր տեղի կ'ունենայ վիճակահանութիւն եւ նուիրահաւաք:

Հ.- Ազգային իշխանութեան Գերկայացուցիչներն ըսին թէ շատ համերաշխ գործակցութիւն ունին ձեր հետ, բայց ձեր արտայայտութիւնները տարբեր տեսանկիւններ ալ կը բանան: Ազգային մարմինները կ'ընտրուին, թէ կը նշանակուին:

ԳԾ.- 1993-ին երբ սահամանադրութիւն գծուեցաւ, որոշուեցաւ ազգային իշխանութիւնը ընտրել եւ ոչ թէ նշանակել: Զոյրեան Սրբազանը այս բանին համակերպեցաւ երկար պնդումներէ ետք եւ կազմակերպեց թեմական ընտրութիւն: Սակայն, դժբախտաբար, ընտրութեան կազմակերպչական մասը հաւասար պատեհութիւններ չընծայեց համայնքի անդամներուն եւ չեղաւ արդար: Կողմ մը, այդպիսով, ունեցաւ աւելի իրաւասութիւն քան ուրիշ կողմ մը: Ընտրութիւնը եղաւ խախտումներով եւ միջամտութիւններով: Հետեւանքը եղաւ լարուա-

ծուլթիւն մը զանազան խմբաւորումներու միջեւ եւ մինչեւ իսկ պառակտում յառաջ եկաւ ու գաղութը տուժեց:

ՎԳ- Ընտրութիւններուն ճակատ մը ներկայացաւ չորս հոգինոց ցանկով, որուն դիմաց թեկնածուները անհատներ էին: Նշանակովի իշխանութիւնն էր այդ քառանդամ ցանկը ներկայացնողը: Ընտրութեան օրն ալ չորսին անունը քուէաթուղթին սկիզբը դնելով թելադրած էին առաջին չորսին քուէարկել: Օրէնքը կը պահանջէր որ այբուբենական կարգով անունները դրուէին:

Ընտրութեանէն չաբաթ մը առաջ պէտք է ծանուցուէր ընտրութիւնը բայց ա՛յդ ալ չեղաւ:



Ընկեր Մայք Խարապեան արար իշխաններու մօտ ծանօթ անուն մըն էր իր Ապու Տհապիի մէջ ծաւալած շինարարական լայն գործունէութեամբ: Ան հոս կ'երեւի հնչական բարեկամներու հետ:

ԳԾ- Խախտումներ շատ եղան: Առաջին օրէն յայտնի էր ցանկութիւնը Սրբազանին.- հաստատել հատուածի մը տիրապետութիւնը: Այդ հատուածին մաս կը կազմէին Տկն. Թամար Տէր Յովհաննէսեան, Վահէ Թուխմանեան, Ժան Թուլթիկեան եւ ուրիշ այր մարդ մը: Թեմական Խորհուրդի անդամները հաւաքաբար կը նշանակեն չըջանային վարչական անդամներ. պարզ է թէ ինչպիսի նշանակում կ'ըլլայ այդ: Մեր կարծիքով, վարչական մարմինը պէտք է ըլլար ներկայացուցչական, բաղկանար երեւելի անձերէ, որոնք տարիներ շարունակ ապրած են

խմիրութեանց մէջ եւ յարաբերութիւն մշակած տեղական շրջանակներու հետ: Բայց ընտրուեցան մարդիկ, որոնք պիտի գործադրեն Թեմական Խորհուրդէն տրուած հրահանգներ մեր համայնքէն ներս:

Յառաջացած անհամաձայնութիւնը տեւեց քանի մը տարի: Անոնք սկիզբը բոլորովին անտեսեցին մեր ընկերակցութեան կարողութիւնն ու տարողութիւնը: Բայց երբ յաջողցուցինք քիչ առաջ նշուած ձեռնարկները եւ արաբատառ ու անգլիատառ մամուլը արձագանգեցին մեր գործունէութեան (տեղ մը գրուած էր «Հայեր գրաւեցին Ապու Տհապին»), զգացին թէ կարելի չէ անտեսել մեզ: Շուքի մէջ մնացած էին եւ ուզեցին գործակցութեան ճամբայ մը գտնել: Իրենց համագործակցութիւնը կը տարբերի մեր հասկացողութենէն: Սակայն համաձայնած ենք որ չխաչաձեւենք զիրար, խորհրդակցինք ձեռնարկներ կազմակերպելէ առաջ թուականներու շուրջ: Համագործակցութեան առաջին հանգրուանին ենք ներկայիս: Պէտք է ըսել որ ամէն գծով համաձայն ենք, որովհետեւ ինչ որ օգտակար է գաղութին, պիտի նպաստէ մեր գերագոյն նպատակին՝ հայապահպանման եւ հայրենիք-սփիւռք կապերու ամրապնդման:

Հ.- Հայկական դպրոցի մասին ի՞նչ կը խորհիք:

Վ.Գ.- Վարդան Ինկիլիզեանը ունի իր ուրբաթօրեայ վարժարանը 35 աշակերտով, իսկ Ազգային Մարմինը իրը՝ 65 աշակերտով: Վարդանինը անձնական նախաձեռնութիւն է: Ինք սկսաւ կրթական գործին այս համայնքէն ներս: Ինք չ'ուզեր ենթարկուիլ Ազգային Մարմինն ու իր դպրոցականները յանձնել անոր, քանի որ վստահութիւն չունի այդ մարմնին վրայ:

Հ.- Կը խորհի՞ք թէ մօտ աստե՞նի՞ն Հ.Հ. դեսպանատուն մը կը հիմնուի Էմիրութեանց մօտ:

Վ.Գ.- Խօսած ենք եւ կը խորհինք թէ նիւթական պատճառներով կ'ուշանայ դեսպանատան բացումը: Քաթարի եւ Օմանի հետ կան դիւանագիտական կապեր: Եգիպտոսի եւ Իրանի Հ.Հ. դեսպանները յաճախ այցելած են մեր գաղութը:

Հ.- Ի՞նչ ծրագիրներ կը մշակէք 1998-ի համար:

Վ.Գ.- Պրն. Տաղլեանին ու Գրիգորին հետ գացինք Հայաստան նոր ձեռնարկներ մշակելու: Կ'ուզենք խմբային համերգներ կազմակերպել. օրինակ՝ սենեկային նուագախումբը բերել: Բայց բարերար պէտք է գտնենք նման ծախսալից ծրագրերու համար:

ԳՃ- Մշակութային գործի կողքին, մենք կը պահենք 26 որբեր: Անոնց յատկացումները կատարելու համար այցելեցինք Հայաստան: Մեր միւս պարտաւորութիւնն է մօտեցնել հայրենիքը էմիրութեանց. բայց կան դժուարութիւններ: Էմիրութիւնները մօտ կը գգան Ատրպէյճանի եւ Ղարաբաղի հարցը խոչընդոտ մըն է: Բայց մշակութային եւ առեւտրական կապեր կրնան հաստատուիլ: Մեր գործը պիտի ըլլայ գէթ մշակութային գետնի վրայ ստեղծել Հայաստան-էմիրութիւններ կապը:

Ապու Տիապի, Դեկտեմբեր 1997

«ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆ», 10 Ապրիլ 1998

«ԶԱՐԹՕՆՔ», 16 Մայիս 1998



Պրիքսելի Ազգային Թատրոնի շենքը:

ՊՐԻՔՍԵԼԸ ԵՒ ԱՆՎԵՐՍԸ ԻՐԵՆՑ ՀԱՅՈՒԹԵԱՄԲ

Պրիքսելի հայ գաղութը սկսած է պարզել տխուր պատկեր մը: Հանդարտ, օրինակելի, համերաշխ ազգային կեանքը, որ մինչեւ վերջերս յատկանիշներէն էր պելճիքահայ գաղութին, ընկրկումի մէջ է: Եւ պելճիքահայութիւնը շնորհիւ իր համերաշխութեան եւ Հայ դատի հետապնդման աշխոյժ ճիգերուն, յաջողած էր երկրի խորհրդարանին ընդունիլ տալ Հայկական Յեղասպանութեան ճանաչումը, որ կարեւոր յաջողութիւն մըն է մեր Մեծ Երազի հետապնդման ճամբուն վրայ:

Վերջերս դէպի Պելճիքա հոսքովը Հայաստանէն թէ Միջին Արեւելքէն հաչերու՝ գաղութին դիմագիծը բնականաբար պիտի փոխուէր: Այդ նոր հոսքը բարեփոխում պէտք է բերէր եւ դառնար ներդրում մը. բայց հակառակ պատկերն է որ կը պարզուի եւ ականատես կը դառնանք գաղութի տարտղնումին: Եթէ Միացեալ Նահանգներու հայ գաղութը նորաժամանկներու գալուստով

նման ցնցում չկրեց, ընդհակառակն՝ նորերը հայկական նոր շունչ ու կրող
բերին հիներուն, ապա այդ չեղաւ պարագան գէթ Պելճիքայի:

Քանի ուշ չէ, կ'արժէ որ ազգային քաղաքական, եկեղեցական թէ այլ
կազմակերպութիւններ ամէն ջանք թափեն վերականգնելու անդորրութիւնը
պելճիքահայ գաղութին:

ԱՆԳՐԱՆԻԿ ԳԱԶԱՐԵԱՆ
Ատենապետ Հայց. Եկեղեցույ
Հոգաբարձություն



Հ.- Կը հաճի՞ք ամփոփ պատմականն ընել գաղութիդ:

Պ.- 1921 թուականին կազմաւորուած է գաղութը: Մինչ այդ փոքր թիւով հայեր գտնուած են Պեճիքա, բայց այդ թուականէն ետք յատկապէս Պրիւքսէլի մէջ սկսած է աճիլ անոնց քանակը: Արեւելեան գորգերու առեւտուրը ատենին հայոց ձեռքն էր Պրիւքսէլի մէջ: Ներկայիս գորգավաճառներու թիւը նուազած է եւ հոս թէ Անվերս մնացած են քանի մը հայ գորգավաճառներ միայն: 1947-50 թուականներուն յատկապէս գաղութը յարաբերաբար արագ աճ մը ունեցած է եւ հասած է 1,200 հոգիի: Այսօր բովանդակ Պեճիքայի մէջ կ'ապրին 6-7,000 հայեր: Դժբախտաբար կէսէն աւելին իր կապը խզած է հայութեան հետ, իսկ մնացեալները հոս թէ Անվերս բաժնուած են քանի մը խմբաւորումի:

Ժամանակին գաղութը կը նկատուէր օրինակելի: Տարիներու ընթացքին փոխուեցաւ անոր դիմագիծը: Հիմա գաղութին մէջ կը տիրէ անվստահութիւն եւ անհամաձայնութիւն:

Հ.- Ի՞նչ է պատճառը անհամաձայնութեան:

Պ.- Իրական պատճառները չեմ գիտեր: Մարդոց միջեւ ատելութիւն կայ: Պատճառներէն մէկը Լիբանանէն եկած դաշնակցական հակումով մարդիկն են. անոնք մի'շտ խնդրայարոյց են: Մեծ խնդիրներ կը փնտռեն, ոչինչ հարցերու համար տագնապ կ'առաջացնեն եւ մեր հանդարտ ու համերաշխ գաղութը խանգարելով հասած են արդէն իրենց նպատակին:

Ի՞նչ պիտի ըլլայ մեր գաղութին վիճակը...: Ըսեմ թէ մեռած ենք բայց թաղող չունինք:

Գաղութին մէջ կան պոլսեցիներ, որոնց մեծ մասը հայերէն չի խօսիր: Թրքահայերու նոր սերունդը աւելի յառաջադէմ է: Մեր եկեղեցին՝ Ս. Մարիամ Մագդաղինացի, պահողը Պոլսէն եւ Թուրքիոյ գաւառներէն հոս հաստատուած հայերն են, հակառակ իրենց հայերէն չգիտնալուն: Անոնք իրենց կեանքը կու տան ազգային կրօնքի համար: Կ'ըսեն թէ կրօնքը զիրենք հայ պահած է:

Հ.- Պելճիքահայ գաղութը եկեղեցական ինչպիսի՞ կառույց ունի:

Պ.- Ան կապուած է Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական Պատ-
ւիրակին եւ ենթակայ է Փարիզի հայոց առաջնորդութեան: Քահանայ
չունինք: Տասնհինգ օրը անգամ մը այցելու հոգեւորական մը կու գայ:
Ներկայիս Լիոնէն Դաւիթ Արք. Սահակեանը կու գայ պատարագելու:

Եկեղեցւոյ բարերար Պր. Խաչիկ Խաչիկոֆ Պրիւքսէլի մէջ յար-
կաբաժին մը գնած է հոգեւոր հովիւին համար: Բարերարը դժբախտա-
բար տարի մը առաջ արկածի զոհ գնաց: Ան իր ամբողջ ունեցուածքը
կտակեց Փարիզի եկեղեցիին: Անվերսի իր հասութաբեր կալուածին
եկամուտը ան կտակած է մեր եկեղեցւոյ, ցորհափ Պրիւքսէլի մէջ մեր
եկեղեցին կը մնայ չջմրածնական. եթէ անթիլիասականներ ձեռք
անցնեն մեր կառուցած եկեղեցին՝ եկեղեցւոյ եկամուտը պիտի դադրի
հետզհետէ:

Հ.- Հ.Յ.Դ.Էն բացի ի՞նչ կազմակերպութիւններ կան հոս:

Պ.- Ներկայիս՝ ո՛չ մէկ: Ժամանակին կար Գաղութի Վարչութեան կից
տիկնանց միութիւնը, որ աղքատախնամ նպատակներով ճաշկերոյթներ
կը կազմակերպէր: Անցեալին ամէն բան բնականոն կ'ընթանար: Գաղու-
թի Վարչութեան նախկին նախագահներու՝ Մեթր Էտուար Ժախեանի
(թագաւորը կարեւոր հարցերով անոր հետ կը խորհրդակցի), Արբակ
Մխիթարեանի (թանգարանի փոխ-տնօրէն), Նուպար Տէօվլէթեանի օրով
հարց չունէինք: Այժմու նախագահը Միշէլ Մամուրեանն է, որ մէկ բառ
հայերէն չի գիտեր, տկար է, եւ գաղութը բաժան բաժան եղած է:

Ունինք Հայ Տունը, որ հաւաքավայրն է հայութեան եւ ուր կը բնակի
Հ.Հ. դեսպանը՝ Պր. Վիգէն Զիդեչեան:

Ժամանակին Հ.Բ.Ը.Մ.ի մասնաճիւղ կար, Պօղոս Նուպար փաշայի
Ֆոնտ կար: Այժմ ամայութիւն է եւ ամէն ոք՝ ինք իր գլխուն:

Այս Կիրակի ընտրութիւն ունինք. մեր երեսուն հոգինոց «ասամպ-
լէ»ն պիտի կազմուի, բայց ամէն մարդ պոյքոթ կ'ընէ:

Հ.- Ձեր հոգաբարձութիւնը ինչպէ՞ս կ'ընտրուի:

Պ.- Ընդհանուր Ժողովը (ասամպլէ) կը նշանակէ: Հոգաբարձութեան
կողքին ունինք հիմնարկութիւն մը, որուն նախագահն է Մեթր Ժախ-
եան: Տասնինը անդամներէ կազմուած այս մարմինը ինք ժամանակին
կը նշանակէր հոգաբարձութիւնը:

Հոգաբարձութիւնը ունի տասներեք անդամ. ատենապետը ես եմ:

Եկեղեցին ունի ինն սարկաւազ եւ ուրարակիր, բոլո՛րն ալ Երուսա-
ղէմի Ժառանգաւորացէն: Օգտակար գործ կը տեսնեն եկեղեցւոյ համար:

Հ.- ինչպե՞ս կը հակակշռէք եկեղեցիի պիտճէն:

Պ.- Մոմի դրամներով եւ ժողովրդային նուիրատուութիւններով: Հովիւ կրնանք պահել, բայց դեռ չկայ յարմար անձ մը որ մեր պահանջները գոհացնէ:

Հ.- Լսեցինք թէ Ապրիլ 24-ը ընդունուեցաւ Պելճիքայի խորհրդարանին կողմէ որպէս Հայոց Յեղապահութեան օր: Որո՞նք յաջողցուցին այս բանը:

Պ.- Ճանաչման գործին մէջ մեծ եղաւ դերը Ժախեանի, Մամուրեանի եւ Ժիժի Ստեփանեանի: Ժախեան ազդեցիկ քաղաքական անձնաւորութիւն է երկրին մէջ: Այս գաղութին մէջ ներկայ ամէն յաջողութիւն իրեն կը պարտինք: Դժբախտաբար դաշնակցականները ամէն բան տակնուվրայ կը ջանան ընել:

Հ.- Ի՞նչ կ'ընէք Անվերսի հայ գաղութին մասին:

Պ.- Բոլոր դաշնակցականները հոն հաւաքուած են: Անոնք գաղթած են Հալէպէն ու Պէյրութէն: Մեր եկեղեցին չեն գար: Բայց կան հոն լաւ հայեր, ինչպէս՝ Ժան Ապահեանը, Ճանիկ Օսկանեանը, Արա Վրոյրը, որոնք մեզի պէս կը մտածեն: Ժամանակին աղամանդավաճառ Հայկ Արսլանեանն ալ մեր հետ էր, բայց հիմա միացած է դաշնակցականներուն եւ անոնց կ'օգնէ:

Հ.- Հայկական դպրոց ունի՞ք:

Պ.- Շաբաթը երկու անգամ, Չորեքշաբթի եւ Շաբաթ, կ'ունենանք հայերէն լեզուի դասեր: 1986-ին Արբակ Մխիթարեանը կազմակերպեց «Սեւան» դպրոցը: Դպրոցաչէնքը գաղութին կը պատկանի: Անցեալին ունեցած ենք մինչեւ 120 աշակերտ: Այսօր հազիւ 40 հոգի կայ: Տնօրէնուհին է Հռիփսիմէ Գարագաշեան: Դպրոցը բաւական տկարացած է:



Պրիքսէլի Սբ. Մարիամ Մագդաղինացի եկեղեցին, որուն բացումին ներկայ գտնուեցայ, երբ երջանկայիշատակ Վազգէն Ա. մասնակցութեան հրաւեր տուած էր հոգելոյս Գարեգին Բ-ի:

Դաշնակցութեան կողքին կը գործէ Հայ Երիտասարդաց Միութիւնը որ ճանչցուած է «Տեմոքրաթ» անունով (Association des Arméniens Démocrates de Belgique), որ ունի իր դպրոցը երեսուն աշակերտով: Տեմոքրաթները կ'ունենան նաեւ ազգային քաղաքական գործունէութիւն, ինչպէս՝ օրինակ՝ ցոյցի կազմակերպում թրքական դեսպանատան առջեւ:

Դպրոցները, սակայն, ազգային քաղաքական ոչ մէկ ազդեցութեան տակ են:

Հ.- Պրիստելահայութիւնը ազգային քաղաքական լուրջ կազմակերպութիւն ունի՞:

Պ.- Ո՛չ: Նախ մեր գաղութը կուսակցական-քաղաքական հարցերով չէ զբաղած: Մեր գործը եղած է ազգապահպանում, եկեղեցաշինութիւն, Հայաստանի օգնել: Պէյրութէն եկած նորերը հիմա կուսակցական հարցերով կը զբաղին: Հին պելճիքահայերը զգուած եւ քաշուած են Հայ կեանքէ, Ֆրանսայի օրինակով: Նորեկներուն քաղաքական գործունէութիւնը հատուածական եւ ո՛չ թէ համազգային շահեր կը հետապնդէ: Քաղաքական միակ կարեւոր գործը խորհրդարանին կողմէ ցեղասպանութեան ճանաչումն էր, այդ ալ հին պելճիքահայերու շնորհիւ իրականացաւ:

Հ.- Հ.Հ. դեսպանատան մասին ի՞նչ կ'ըսէք:

Պ.- Դեսպանատունը մեր գործերով չի հետաքրքրուիր: Ան իր խնդիրները ունի: Կ'ուզէ որ կառավարութեան մօտ մեր եկեղեցին որպէս համայնք ճանչցուի. բայց այդ ուղղութեամբ մեր առաջնորդը՝ Գիւտ Արք., արդէն քայլերու դիմած է: Դեսպանատունը նաեւ կը զբաղի Ատլանտեան Ուխտով եւ Հայաստանի արտաքին քաղաքական ու տնտեսական կապերով:

Հ.- Առաքելականէն տարբեր հայ յարանուանութիւններ կա՞ն գաղութիդ մէջ:

Պ.- Երբ մեր եկեղեցին կառուցեցինք, նպատակն էր երեք յարանուանութեանց ծառայել: Հայ աւետարանականներն ու կաթողիկէները տարին երկու անգամ իրաւունք ունին պատարագելու Ս. Ծնունդի եւ Ս. Զատիկուան առիթներով: Պիտի կարենային նաեւ ծէսեր կատարել: Սերովբէ Արք. Մանուկեան, այդ օրերու առաջնորդը, մեծ դժկամակութեամբ ընդունած էր պելճիքահայերուս այս որոշումը... Իր մահուան պատճառը մենք եղանք:

Ահա տարի մըն է որ աւետարանականները մեր եկեղեցին չեն գար.

ունին տաճկախօս պատուելի մը, որ անկլիքան եկեղեցւոյ մէջ կ'ընէ իր պաշտամունքը, Անվերա: Հայ կաթողիկէները միշտ կու գան եւ հարց չունինք անոնց հետ:

Հ.- Ե՞րբ հաստատուած էք Պելճիքա:

Պ.- 1944-ին Սովետական բանակին հետ Եւրոպա եկած զինուորներէն եմ, հայաստանցի: Հաստատուած եմ Պելճիքա եւ ունեցած գորգի վաճառատունս: Ութը տարիէ ի վեր ատենապետն եմ եկեղեցւոյ հոգաբարձութեան: Մեր եկեղեցւոյ օծումը Վազգէն Վեհափառը ըրաւ, կողքին ունենալով Գարեգին Բ. Կաթողիկոսը, ինչպէս որ գիտես եւ ներկայ գտնուած էիր օծման հանդիսութեան:



ՏԱՐՕՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Պատասխանատու Անվերսի Հայ Տան

Հ.- Կը հաճի՞ք այս հարուստ քաղաքի Հայ Տան մասին տեղեկութիւններ տալ:

Պ.- Տան գլխաւոր նպատակն է հասնիլ օգնութեան կարօտ հայերու: Թէեւ անցեալի մեծահարուստ հայերը կան տակաւին, բայց հայաստանցի նոր հաստատուողներով փոխուած է զաղուծին դիմագիծը: Անոնք կ'ապրին գաղթականի հոգեվիճակով եւ իրենց գլխաւոր նպատակն է իրենց ընտանիքներուն բարեկեցութիւնը, ինչ որ հասկնալի է:

Հայ Տունը կը փորձէ իր կարելի միջոցներով իրարու մօտեցնել ցրուած հայութիւնը:

Հ.- Ի՞նչ տեսակի գործունէութիւն կ'ունենաք:

Պ.- Ամիսը անգամ մը՝ ընտանեկան ճաշկերոյթ: Ունինք տարեկան ճաշկերոյթ-պարահանդէս: Պատմական եւ ազգային տօներու առիթով կը կազմակերպենք դասախօսութիւն եւ ժապաւէնի ցուցադրութիւն: Ունինք պասքէթի խումբ: 1991-ին ծնունդ առաւ Հայ Երիտասարդաց Միութեան այս կեդրոնը: Հայ Տունը մէջտեղ եկաւ առաւելաբար Արմէն Արսլանեանի եւ իմ ջանքերով եւ ազգապահպանման լաւ գործ կը կատարէ Անվերսի մէջ:



Հ.- Հայկական դպրոց ունի՞ք հոս:

Պ.- Այո: Ամէն Ձորեքչաբթի կէսօրէ ետք տասնհինգ աշակերտներ կը յաճախեն մեր դպրոցը: Փոքր համայնքի մը համար կարեւորը սկսիլն է. ժամանակի ընթացքին վստահ եմ որ պիտի աճի աշակերտութեան թիւը:

Հ.- Ի՞նչ կրնաք ըսել ձեր համայնքին մասին:

Պ.- Հ.Հ. պատուոյ հիւպատոսը Պր. Հայկ Արսլանեանն է, որ ծանօթ ազգային բարերար է եւ ունի աղամանդի իր վաճառատունը Անվերս եւ մասնաճիւղեր՝ ամբիկեան երկիրներ: Մեզի մեծապէս օգտակար կ'ըլլայ: Անվերսի միւս երեւելի հարուստ հայերն ալ օգտակար կ'ըլլան երբ դիմենք իրենց: Գլխաւոր ծրագիրը հայապահպանումն է: Հայ Տունէն զատ կազմակերպութիւն չկայ: Կ'ուզեմ տալ մեր հասցէն եւ հեռաձայնի թիւը Անվերս այցելել փափաքողներու համար.- A.Y.C.C., Lamorinerstaat 157, 2018 Antwerpen, (03) 239-5594:

Հ.- Հալէպէն ազգային փորձառութիւն մը ունիք: Ինչպէ՞ս կարելի է աւելի արդիւնաբեր ազգային գործ կատարել հոս:

Պ.- Սիրողաբար ազգային գործ կատարելը սփիւռքի պայմաններուն մէջ դժուարացած է: Ամէն գործի համար անհրաժեշտ է ունենալ պաշտօնեայ մը՝ արհեստավարժօրէն գործերը կատարելու համար: Եթէ կ'ուզենք յարմարիլ նոր ժամանակներու հետ, պէտք է դրամ տրամադրենք եւ ազգային գործիչ պահենք:



ԷՏԻՎ ԳՈԹԱՆԾԵԱՆ

Հերթապահ Հ.Յ.Դ. Դրօ Կոմիտէութեան

Հ.- Կրնա՞ք ձեր Կոմիտէութեան կազմութեան մասին տեղեկութիւն տալ:

Պ.- Հ.Յ.Դ. Դրօն մեկուսի կոմիտէութիւն է: Պելճիքահայ գաղութի մէջ չկար կուսակցական կեանք: Դաշնակցութիւնը այստեղ ինքնապատակ կազմակերպութիւն չէ. նա ծնունդ անհրաժեշտութեամբ Յունիս 1997-ին:



Հ.- Ինչպիսի՞ր գործունեություն ունիք:

Պ.- Աղջիկներին եւ տղաներին պարախումբ «Հայք» անուամբ քսան հոգուց բաղկացած: Մայիս 9-ին Հայաստանի Հանրապետութեան 80-ամեակի եւ Շուշիի ազատագրման 6-րդ տարեդարձի առիթով մեր պարախումբը տուեց իր անդրանիկ ներկայացումը: Դաշնակցութիւնը իր հակակշռի տակ ունի Հայ Մշակութային եւ Ընկերային Ընկերակցութիւնը, որի հովանու ներքեւ է գործում «Հայք»ը:

Երկու ամիսների կեանք ունի Հայ Դատի Յանձնախումբը, որ սենս-թորներին մասնաւոր նամակ է ուղղել Յեղասպանութեան խնդրով: Մեր Հայ Դատի Յանձնախումբը Ֆրանսայի հետ ունի մշակուած ծրագիր: Ապագան ցոյց կը տայ մեր գործի արդիւնքը:

Համագործակցում ենք Ֆրանսայի Հայ Կապոյտ Խաչի հետ, որ օգնութիւն բաժանի հայ կարօտեալներին:

Կազմակերպեցինք Արցախի համահայկական վիճակախաղի վաճառ-քը Պելճիքայում: 500,000 լոթերից 250,000-ը սփիւռքի համար վստահուած էր Դաշնակցութեանը:

Հ.- Լսեցինք թէ վերջերս կազմակերպած էք յաջող ճաշկերոյթ-պարա-հանդէս մը:

Պ.- Նուիրուած էր Հայաստանի 80-ամեակի պատմական իրադարձու-թեանը: Հայերէն եւ ֆրանսերէն բանախօսութիւններ կատարուեցին: Հայոց դեսպանը քաղաքից բացակայ էր: Հիւպատոսը կարգաց նրա ող-ջոյնի գիրը: Աննախընթաց երեւոյթ էր 600 հոգի հաւաքելը պելճի-քահայ պատմութեան մէջ:

Հ.- Հ.Յ.Դ.Ն հաւաքավայր ունի՞ր Պելճիքայի մէջ:

Պ.- Մեր ընկերներից մէկը սրահ է տրամադրել Պրիւքսէլի մէջ: Ունենք ծրագիր մօտ ապագային բացելու դպրոց, որ պիտի տարբերուի միւս երկու դպրոցներից: Հայ լեզուից բացի պիտի տանք պատմու-թեան ուսուցում: Նախատեսում ենք ստեղծել երգչախումբ եւ մարզա-կան կեանք Համագային Մշակ. Միութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի անուամբ:

Հ.- Զեր շրջանակը ի՞նչ մամուլ կը ստանայ:

Պ.- Կը ստանանք Հ.Յ.Դ.ի օրկան «Դրօշակ»ը եւ «Կամք»ը: Internet-ով կը ստանանք հայրենական լուրեր, ինչպէս նաեւ «Ասպարէզ»ի լուրերը:

Հ.- Ինչպէ՞ս կը գտնէք պելճիքահայ նոր սերունդը:

Պ.- Մէկ ազգ, մէկ հայրենիք նշանաբանով մեր նպատական է համա-

խմբել բոլորը Հայ Դատի շուրջ: Անհատներից ֆինանսական օգնութիւն չենք ստացել ցարդ: Պիտի յարաբերուենք բոլորի հետ, որպէսզի համախմբուեն ի շահ հայութեան եւ հայրենիքի:

Հ.- Ձեր կապը որքա՞ն սերտ է Հ.Հ. դեսպանատան հետ:

Պ.- Յարաբերութիւն վերջերս է որ հաստատուեց. առայժմ դա բնականոն է:

Հ.- Պելճիքահայ այլ կազմակերպութիւններու հետ կը յարաբերի՞ք:

Պ.- Լաւ յարաբերութիւն ունենք Անվերսի Հայ Տունի հետ, որովհետեւ ազգային նոյն ցաւերն են բաժնում: Յարաբերում ենք Հայ Տեմոբրաթների հետ: Սրանք Պրիւքսէլի Հայ Տունից անկախ են գործում. մեծաւ մասամբ թրքահայեր են: Կազմակերպեցին Ապրիլ 24-ի մեծ ցոյցը եւ մենք մասնակցեցինք, թիկունք կանգնեցինք նրանց: Պելճիքայում առաջին դէպքն էր որ 700 հայեր հաւաքուեցին այդ առիթով:

Թէեւ լուրջ համագործակցութիւն չկայ տակաւին, սակայն լաւ կապեր ունենք հայ աւետարանական եկեղեցու հետ: Մեր նպատակն է ազգային ուժերը համախմբել ազգային գերագոյն նպատակների շուրջ:

Հ.- Հայրենիքի կողքին պիտի շարունակե՞ք մնալ, թե՞ վաղը նախագահ Քոչարեանի քաղաքականութեան համաձայն պիտի չգտնուիք:

Պ.- Լեւոն Տէր-Պետրոսեանի նախագահութեան օրով էլ հայրենիքի հետ էինք, այսօր էլ հայրենիքի կողքին ենք:

Հ.- Նոր շարքայիցներ կը միանա՞ն ձեզի:

Պ.- Միանում են ե՛ւ հայաստանցի հայեր ե՛ւ սփիւռքի այլ երկրներից եկածներ: Վերջերս ունեցանք չորս նորագիր: Դաշնակցութեան ծնունդը վատ չընդունուեց Պելճիքայի մէջ: Մենք անարդար ենք գտնում պելճիքահայ Գաղութային Վարչութիւնը եւ նա չի ցոլացնում բոլոր հայերի ցանկութիւնը:



ԿԱՐՊԻՍ ՎԱՐԳԱՆԵԱՆ
Անդամ Պելճիքահայ Գաղութային
Վարչություն



Հ.- Ինչպե՞ս կազմաւորուեցաւ Պրիքսէլի գաղութահայ կեանքը:

Պ.- Պելճիքահայ Գաղութային Վարչութիւնը կազմուած է 1922-ին: Առաջին հայերը եկած են Պոլսէն եւ Անատոլուէն որպէս գորգի եւ ծխախոտի վաճառականներ: Թէեւ 1915-էն առաջ եւս ունեցած ենք փոքրաթիւ համայնք մը, սակայն 1920-է ետք աճած է թիւը եւ մտաւորականներ ալ հաստատուած են հոս եւ անոնց նախաձեռնութեամբ ստեղծուած է վարչութիւնը՝ համայնքը օժտելով օրինագիրով մը: Օրինագիրը յաճախ վերամշակուած է: 30-ականներու նոր հոսքով գաղութին դիմագիծը փոխուած է: Այնուհետեւ հայեր եկած են Անատոլուէն եւ Պատմական Հայաստանի գաւառներէն մինչեւ 70-ականներու վերջերը:

70-ականներու վերջերէն սկսեալ Լիբանանի քաղաքացիական պատերազմին եւ Թրքական ճնշումներու հետեւանքով շատ հայեր եկած հաստատուած են հոս: Իսկ 1990-էն ետք սկսաւ Հայաստանէն հայերու հոսք մը, որ 1996-ին հասաւ իր գագաթնակէտին:

Այսօր Պելճիքայի հայութիւնը կը գնահատուի 7-8,000 հոգի, որոնց մէկ երրորդը հայաստանցի, մէկ երրորդը Միջին Արեւելքի երկիրներէ եկած հայեր, մնացեալն ալ Պելճիքա ծնածներ են:

Հ.- Պելճիքա ծնածները որքանով կը ղեկավարուին ազգային կեանքով:

Պ.- Հոս ծնած սերունդին մեծամասնութիւնը անտարբեր է եւ հեռացած հայ կեանքէ: Քիչեր կը մասնակցին, այդ ալ տիտղոսի կամ դիրքի հասնելու ցանկութեամբ: Հայերէն լեզուն կորսնցուցած են բոլորովին: Պելճիքահայ ազգային կեանքը գոյութիւն ունի շնորհիւ Միջին Արեւելքէն եւ Հայաստանէն եկած հայերու:

Գաղութային Վարչութիւնը, ըստ իր օրինագիրին, կը միտի ներկայացնել ամբողջ գաղութը. բայց հայերու իննսուն տոկոսէն աւելին քուէարկելու իրաւունքէն զուրկ է: Այդ իրաւունքը կապուած է տարեկան որոշ սակով անդամատուրքի վճարման՝ \$70:

Քուէարկելու համար անձ մը պէտք է չորս տարի անդամ ըլլայ. իսկ ընտրուելու համար՝ վեց տարի յաջորդաբար: Կան նաեւ այլ յօդուած-

ներ, որոնք կը սահամանափակեն հայոց մասնակցութիւնը ազգային կեանքին:

Համայնքը ներկայիս ունի մօտ 180 քուէարկող անդամ, որոնք իրենց միջեւ կ'ընտրեն երեսուն անձ, կազմելով Ներկայացուցչական Մարմինը (սասմպլէ)... 7,000 հայերու համար: Այս մարմնէն կը բխի Պելճիքահայ Գաղութային Վարչութիւնը, որ կը բաղկանայ տասը անդամէ:

Հ.- Ինչո՞ւ այսքան պայման՝ ընտրելու եւ ընտրուելու համար:

Պ.- Պարզ է. կան մարդիկ, որոնք իրենք զիրենք միայն նկատի կ'առնեն ու կը բաւարարուին նեղ շրջանակով: Կ'ուզեն մնայուն կերպով տէրն ու տիրականը ըլլալ համայնքին: Յաճախ վիճաբանութեան նիւթ եղած է օրէնքներու բարեփոխութիւնը, բայց ջանքերը որեւէ արդիւնքի չեն հասած մինչեւ այսօր, որովհետեւ մարմինը կազմող մեծամասնութիւնը միշտ դէմ եղած է փոփոխութեան:

Նոյն մտածելակերպին իբրեւ մարմնացում նման վիճակ կը տիրէ Պելճիքայի Հայ Եկեղեցիէն ներս՝ Պրիւքսէլի Հայ Տունէն ներս, որոնք հակակշռին տակ են վերոյիշեալ կարգ մը անձերու, հակառակ անոր որ գաղութին բոլոր կալուածները գաղութին սեփականութիւնը պէտք է ըլլան՝ հանրահաւաք նուիրատուութիւններով մէջտեղ եկած:

Գաղութին մէջ դրսեցի հայերու նկատմամբ վերապահութիւն կայ եւ վախ՝ անհասկնալի պատճառներով: Պատահար մը հաւանաբար ընդհանրացուցած է այդ հակակրանքը:

Հ.- Մենաշնորհը ձեռքէ չհանելո՞ւ վախ...

Պ.- Այո՛: Ո՛չ թէ մասնաւոր խումբէ մը վախ կայ, այլ իրենցմէ անկախ խմբաւորումի մը յանձնելու վախը կայ: Ամէն բան իրենց ձեռքը պահելու մտահոգութիւնն ունին անոնք:

Հ.- Բայց դուք ալ այդ վարչութեան անդամ էք:

Պ.- Այո՛, սակայն իրականութիւնը ըսելու եմ: Բոլոր այս բացասական իրողութիւններու կողքին, սակայն, վարչութիւնը դրական կողմեր ալ ունի: Տարիներով ան կատարած է ընկերային ու եկեղեցական գործ, թատերական ներկայացումներ, պարախմբային ելոյթներ: Կառուցած է Ս. Մարիամ Մազդաղինացի եկեղեցին հայկական ոճով: Ապահոված է Պրիւքսէլի Հայ Տունին գնումը:

Վերջերս ան յաջողցուց Յեղասպանութեան յուշարձանի մը կառուցումը հանրային հրապարակի մը վրայ, ինչպէս նաեւ Պելճիքայի ծերակոյտէն ապահովեց Հայկական Յեղասպանութեան ճանաչումը:

1922-ին գծուած օրէնքը նկատի ունենալով, այս վարչութիւնը խոր-

քին մէջ նպատակադրած է գաղութին մէջ ունենալ կուսակցութիւններէ եւ այլ կազմակերպութիւններէ վեր կառույց մը: Նպատակը բարի եղած է մինչեւ 1978, երբ անդամակցութեան սակն ալ մատչելի էր: 1978-ի գաղթէն ետք, սակայն, դիմուած է զգուշաւոր միջոցներու:

Հ.- ինչպէ՞ս կարելի կը գտնէք փոփոխութիւն մը այս կառույցին մէջ:

Պ.- Պէտք է մարդահամար կատարել, ապա վերամշակել հին օրինագիրը եւ մինչեւ անգամ նոր մը գրել՝ վարչական նոր սահմանադրութեամբ, որպէսզի ունենանք իսկական ներկայացուցչական մարմին մը, որ հաւանաբար ըլլայ առաջինը համայն սփիւռքի մէջ:

Մեր վարչութիւնը ունի իր հովանիին ներքեւ գործող այլ կազմակերպութիւններ, ինչպէս՝ օրինակ՝ հայկական «Սեւան» դպրոցը Օր. Գարագաշեանի տնօրէնութեամբ, որ հակառակ իր կամքին կցուած է Հայ Ընկերային Կեդրոնին, որուն նպատակն է օգնութեան հասնիլ գաղթական հայերու: Անոր կ'աշակերտեն ութսուն աշակերտներ, մեծ մասով Թուրքիայէն եւ քիչ մըն ալ Իրաքէն: Հայաստանէն եկած պատանիներ հոն բնաւ չեն յաճախեր:

Հ.- Ի՞նչ վիճակ կը ներկայացնէ Հայ Եկեղեցին:

Պ.- Եկեղեցւոյ հոգաբարձութիւնը, ըստ օրէնքի, կը նշանակուի ներկայացուցչական մարմնին կողմէ, բայց քանի մը տարի առաջ, քանի մը անձերու նախաձեռնութեամբ, հոգաբարձութիւնը ապօրինաբար անջատուած է ներկայացուցչական մարմնէն: Մեթր Ժախեան իբրեւ փաստաբան գիտէ ձեւերը նման օրինական խախտումներու, այլոց ձեռքով



Պրիւքսէլի հրապարակներէն մէկուն մէջ Հայկական Տեղասպանութիւնը խորհրդանշող հայկական խաչքարը:

կատարելով զանոնք եւ մաքուր պահելով իր անունը եւ հետք իսկ չձգելով իր միջամտութեան:

Հ.- Իսկ 7,000-նոց գաղութ մը, որ ունի այսքան գեղեցիկ եկեղեցի եւ այսքան կամօքակերպութիւն, ինչո՞ւ չունի մնայուն հովիւ:

Պ.- Երբ եկեղեցին կառուցուած է, ներկայացուցչական մարմինը չէ յաջողած եկեղեցին նիւթապէս ապահովել. պարզապէս պատրաստ չէր հաւատալու թէ ժողովուրդը այսքան կապուած կրնայ ըլլալ եկեղեցիին: Մեր մարմինը այսօր կը գտնուի այս իրականութեան առջեւ: Մեր մարմինը նոյնիսկ անդրադարձաւ թէ եկեղեցին եկամուտի աղբիւր կրնայ ըլլալ: Հակառակ ասոր, տակաւին չունինք մնայուն հովիւ:

Պէտք է ըսել որ եթէ Հայց. Եկեղեցին պաշտօնապէս ճանչցուի կառավարութեան կողմէ, իշխանութիւնները, ըստ օրինի, կը հոգան եկեղեցականին ամբողջ ապրուստը: Բայց նման քայլ զարմանալիօրէն չէ առնուած մինչեւ օրս:

Հ.- Դուք անդամ էք Պելճիքահայ Գաղութային Վարչութեան: Եթէ ձեր ըսածին մասն նեղ հակակշռի մը տակ է մարմինը, ինչպէ՞ս հաւանած էք ընտրուիլ եւ ինչո՞ւ հակառակ կ'արտայայտուիք ձեզ ընտրողներուն հանդէպ:

Պ.- Ընտրելու եւ ընտրուելու իրաւունքը ձեռք ձգած եմ անցեալ տասնամեակին եւ բարեկամներ ունիմ այդ մարմինն մէջ. անոնք զիս ընտրած են որպէս Գաղութահայ Վարչութեան անդամ:

Պրիւքսէլ, 14 Մայիս 1998

«ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆ», 16 Յուլիս 1998

«ԶԱՐԹՕՆՔ», Օգոստոս 1998



Սթոքհոլմի հին քաղաքամասը:

ՍԹՈՔՀՈԼՄԸ ԵՒ ՈՒՓՍԱԼԱՆ ԻՐԵՆՑ ՀԱՅՈՒԹԵԱՐԲ

Ընտանեկան բարեկամ եւ Կեդրոնական Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ Մեսրոպ Արք. Գրիգորեանէն լսած էի Ծուէտի հայութեան կեանքին ու կազմաւորման մասին: Իր Նիւ Եորք վերջին այցելութեան յանձնարարած էր որ առիթով մը կանգ առնեմ Ուփսալա եւ Սթոքհոլմ՝ անձամբ ծանօթանալու Ծուէտի հայութեան:

Նպատակայարմար գտայ այցելութիւնս կատարել Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամ Պարէտ Ծ. Վրդ. Երէցեանի հետ, որ կը պաշտօնավարէր Նիւ Եորքի առաջնորդարանը:

Գաղութին հոգեւոր թէ աշխարհիկ ներկայացուցիչներուն կողմէ ընդունուեցանք սրտբացօրէն, ծանօթացանք անոնց ազգապահպան ճիգերուն, այցելեցինք հայկական վարժարանները եւ «Նոր Հորիզոն» թերթի խմբագրին: Մասնակից եղանք Սթոքհոլմի այն հաւաքին, ուր կը քննարկուէր եկեղեցիի մը շինութեան հարցը:

Հոն եւս նշմարելի էր դաշնակցական եւ հակադաշնակցական հոսանքներու բեւեռացումը՝ ժառանգուած միջին-արեւելեան գաղութներէն:

Կազմաւորուող գաղութներու համար քաղաքական սուր հակոտնեայ տարակարծութիւններ վնասաբեր կ'ըլլան: Պերճանք եւ սուր պայքարները նման

գաղութներու համար եւ բոլորովին աղիտաբեր՝ գաղութը պատակտելու փորձը:

Առաւելաբար նախկին իրանահայերէ բաղկացած նորակազմ գաղութը խոստմնալից յառաջադրութիւններով կը դիմաւորէ 1999-ը: Անոնք ընտանիքի մը մէկ անդամին նման ընդունեցին մեզ իրենց յարկերէն ներս: Տէր Սարգիս Ուփսալայի մէջ, իսկ Տէր Նորայր Սթոքհոլմ, տեւապէս եղան մեր կողքին, մանաւանդ երբ ազգայինի կողքին կ'այցելէինք տեղական հաստատութիւններ:

Յարգա՛նք անոնց ազգապահպան ճիգերուն եւ նուիրական աշխատանքին, որ կը կատարեն լրջութեամբ, զոհողութեամբ ու մանաւանդ հաւատքով:

ՍԱՐԳԻՍ ԲՀՆՅ. ՄԵԼԻՔՈՆԵԱՆ
Հոգեւոր հովի Ուփսալայի եւ
Հայրապետական Պատուիրակի
ներկայացուցիչ Սքանտինաւիոյ հայոց



Հ.- Ինչպէ՞ս կազմուած է ձեր գաղութը եւ ի՞նչ եկեղեցական կառոյց ունի:

Պ.- Որպէսզի թիւրիմացութիւն չառաջանայ, Շուէտի գաղութի մասին պիտի արտայայտուեմ 87 թուականից, երբ որպէս սարկաւազ ժամանեցի յաւէտ երջանկայիշատակ Վազգէն Ա. Կաթողիկոսի հրամանով եւ օգնութեամբը Դամասկոսի այդ օրերի առաջնորդ Ոսկան Արք. Գալիաքեանի:

Երբ եկայ ու այցելեցի Ուփսալա եւ Սթոքհոլմ քաղաքները, տեսայ կարիքները եւ վերադարձիս Վեհափառ Հայրապետի կարգադրութեամբ օծուեցի Ս. Գայանէ եկեղեցում Յուսիկ Արք. Սանթրեանի ձեռամբ՝ որպէս հովիւ Շուէտի հայոց: Մինչեւ Շուէտ ժամանելս, առիթ ունեցայ տեսնուելու Եգիպտոսի հայոց առաջնորդ Զաւէն Արք. Զինչինեանի հետ, որ յայտնեց որ կարիքն ունի քահանայի: Վեհափառը առաջարկեց որ ժամանակաւոր կերպով օգտակար լինեմ այդ գաղութին: Վեց ամիսով էի գնացել, բայց դարձաւ երկուսուկէս տարի: 1991-ին եկայ Շուէտ եւ սկսեցի գործունէութեան:

Շուէտի համայնքի կազմը այսօր գտնուում է Կեդրոնական Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ Մեսրոպ Արք. Գրիգորեանի հովանուներքոյ: Նշուած թուականից էլ սկսեցինք եղաւ որ Սրբազան Հայրը տարին մէկ անգամ ժամանէ Շուէտ եւ նրա կարգադրութիւններով աւելի կազմակերպենք համայնքը:

Եթէ պատմական առումով մօտենանք համայնքին, ապա 20-25 տարի առաջ գործով կամ օտարի հետ օճախ կազմելու համար հատ ու կենտ անձինք են եղել միայն: Լիբանանի, Իրանի եւ Իրաքի իրադարձութիւնները այնպէս են արել, որ հայեր արտագաղթել են Շուէտ: Կառավարութիւնը գաղթականներին ցրուել է զանազան քաղաքներ, մանաւանդ որ չկար կազմակերպուած հայկական մարմին, որ ջանար համախումբ պահել նորաժամաններին:

1991-ից յետոյ կազմակերպուելով, մեր նպատակն եղաւ այն, որ տասներկու քաղաքներում ցրուած հայերին տեղեկացնենք որ կայ այստեղ եկեղեցի, խորհուրդ, հոգեւորական, եւ կարեւոր է որ հոգեւոր

մատակարարութեան կամ աւանդութիւնը պահելու թէ մարդահամարի նպատակներով կապ հաստատեն հոգեւոր հովիւի հետ:

Հ.- Ձեզմէ առաջ հոգեւոր հովիւ գտնուած է հոս:

Պ.- Եթէ յիշողութիւնս չի դաւաճանում, առաջինը եղել է Երուսաղէմից Անուշաւան Վրդ. Զղչանեանը, որից յետոյ ժամանել է Ս. էջմիածնից Արսէն Արք. Պէրպէրեանը, չնայած մինչ այդ նաեւ Լիբանանից այստեղ է գտնուել Կիպրոսում պաշտօնավարած Բարսեղ Ա. Քհնյ. Խաչերեանը, որ 91 թուին վախճանուեց:

Իմ ժամանումից առաջ Շուէտը պատկանում էր Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական Պատուիրակութեան. բայց յետոյ Վեհափառի կարգադրութեամբ Մթանտինաւեան երկրները դրուեցին Կեդրոնական Եւրոպայի Պատուիրակութեան ներքեւ, առաջնորդութեամբ Մեսրոպ Արք. Գրիգորեանի, որ կեդրոն ունի Աւստրիան:

Հ.- Ինչպիսի՞ եկեղեցական կառոյց ունիք:

Պ.- Մեր կրօնավարչական բաժանումը ներկայումս այնպիսին է, որ Ուփսալան եւ Սթոքհոլմը ունեն երկու անջատ եկեղեցական խորհուրդներ՝ տեղական հոգաբարձական կազմերով: Երբ այլ շրջանների մէջ հայեր կազմակերպուեն, կարող են եկեղեցական խորհուրդների մէջ ունենալ իրենց ներկայացուցիչները: Կառոյցը այնպիսին է, որ Ուփսալային եւ Սթոքհոլմին կարող են միանալ վերոնշեալ տասներկու քաղաքներից (ուր հայեր կը բնակին) վեցական հատ: Ներկայումս ունեմ երկու օգնական քահանաներ. մէկը նշանակել ենք Սթոքհոլմի համար, միւսը՝ մայրաքաղաքի արուարձանների: Առաջինը՝ Նորայր Քահանայ, ժամանել է Ռումինիայից, երկրորդը՝ Մկրտիչ Քահանայ՝ Հայաստանից: Երբ ի վիճակի ենք լինում, միասնաբար լուծում ենք հարցեր եւ տեղեկագրում ենք Մեսրոպ Արք. Գրիգորեանին:

Հ.- Լսեցի թէ տակաւին եկեղեցի չունիք: Ինչպէ՞ս կ'ընէք արարողութիւնները:

Պ.- Հայց. Եկեղեցւոյ ճարտարապետական կառոյց չունենք, բայց իմ այստեղ գալու օրուանից Ուփսալայի Քունկսքաթա պողոտայի վրայ ունենք վարձու քարաշէն մի շատ գեղեցիկ եկեղեցի (Պէրպէրեան Սրբազանի օրով, 87-ից վարձուած), որ պատկանում է Մեթոտիկ եկեղեցուն: Մինչեւ օրս կարողանում ենք պահել այն: Ուփսալայի շրջակայքի կրօնական թէ ազգային բոլոր արարողութիւններն ու միջոցառումները անց ենք կացնում այնտեղ: Անունն է Սան Եուհանէս: Կարողացել ենք

հասնել այնտեղ, որ եկեղեցու կողքը մի ցուցատախտակի վրայ նշուել է «Հայ Առաքելական Եկեղեցի»:

Հ.- ինչպե՞ս կը տնօրինէք երեք եկեղեցական պահելու եւ այլ ծախսեր:

Պ.- Շուէտում կայ «Ազատ Եկեղեցի» կոչուող մի կազմակերպութիւն՝ իբրեւ եկեղեցիների խորհուրդ: Սա զանազան ներգաղթող համայնքների յատկացնում է տարեկան օժանդակութիւն՝ քահանաների նուազագոյն աշխատավարձի քանակով: Համայնքի առ նուազն 75 տոկոսը ներգաղթողներից է բաղկացած եւ նրանք օգտւում են պետական ընկերային օժանդակութիւնից: Մենակ քսանհինգ տոկոսն է որ ունի անձնա-



Սթոքհոլմի հայակական համայնքի ներկայացուցիչներուն հետ ընկերային
հանդիպումի մը ընթացքին:

կան գործ կամ պաշտօնավարում է գրասենեակներում: Մեսրոպ Արք. հետ համախորհուրդ պետական յատկացումի կէսը տրամադրում ենք Սթոքհոլմի եկեղեցական խորհրդին եւ մնացածը գոյացնում ենք տեղական միջոցներով: Գալով ճանապարհածախսերին եւ ծիսական ծախսերի, ապա ղրանք հոգում են կա՛մ եկեղեցական խորհուրդները եւ կամ էլ հոգեւորականներին հրաւիրող համայնքները:

Հ.- Արդեօք ազգային-մշակութային գործունեությունն այլ կը ծառայէ՞ք:

Պ.- Քանի որ համալիր չունենք, մենակ օժանդակողի դեր ենք կատարում՝ բարոյապէս օգնելով միուլթիւնների շաբաթօրեայ դպրոցներին:

Հ.- Քանի՞ հայ կայ Շուէտի մէջ ձեր գնահատումով:

Պ.- Շուէտն ամբողջութեամբ եթէ վերցնենք՝ 3,750-ից 4,000 բնակիչ: 3,750 գոտս հայ ընտանիք, մնացածը՝ խառնամուսնացեալ:

Հ.- Կապ ունի՞ք սքանտինաւեան միւս երկիրներուն հետ:

Պ.- Շուէտի տարածքը նկատի ունենալով, արդէն այստեղ ծանր աշխատանք կայ տանելիք, բայց փորձում ենք նաեւ հասնել Նորվեկիայի, Ֆինլանտիայի եւ Դանիայի կարիքներին: Օրինակ, տարին մէկ այցելում ենք Ֆինլանտիա: Նորվեկիայում արդէն ստեղծել ենք եկեղեցական խորհուրդ: Դանիայում հայերը տարածուած են երեք կղզիներում՝ Շոփընհամ, Օդէս եւ Հորսէս: Հայ Մշակութային Միութիւնը գտնուում է Օդէսում:

Նկատի ունենալով մեր սահմանափակ մարդուժը, նոյնիսկ եկեղեցական խորհուրդների առկայութեամբ դժուար է հասնել ամբողջ Սքանտինաւիոյ կազմակերպական գործերին:

Հ.- Հայաստանէն նոր գաղթականներ ունի՞ք:

Պ.- Հենց քիչ առաջ զանգեցին որ Հայաստանից նոր գաղթականներ են եկել եւ ապաստան են խնդրում: Մենք անում ենք այն ամէնը՝ ինչ տեղի օրէնքների եւ բարոյական հասկացողութեան սահմաններում է: Գաղթականական հարցը շատ նուրբ հարց է Շուէտում: Քանակը մօտաւորապէս նուազել է 4-5 ընտանիքի անցնող տարի եւ պետութիւնը յարաբերաբար հեշտ է կարողացել լուծել նրանց տեղաւորման հարցը:

Հ.- Հայաստանի հետ մշակութային մակարդակի վրայ կապ կը հաստատէ՞ք:

Պ.- Ամէն Նոր Տարի Հայ Մշակութային Միութիւնը հրաւիրում է Հայաստանից տարբեր մենակատարներ, որոնք ելոյթներ են ունենում այստեղ: Իսկ եկեղեցական խորհուրդը ամէն տարի մի ամսով թուրիստական այցելութիւն է կազմակերպում Հայաստան: Իսկ երբ պատահում է որ մի հայ մտաւորական հրաւիրուի Շուէտի կողմից, առիթ ենք ստեղծում նրա հետ հանդիպումների, ինչպէս, օրինակ, Գէորգ Էմինի, Ալիսիա Կիրակոսեանի, զանազան նուազախմբերի: Յունիս ամսին կապ ստեղծեցինք Էջմիածնի Կոմիտասի անուան պալատի «Էջմիածին» նուա-

գախմբի հետ եւ հրաւիրեցինք որ մասնակցի Ուփսալայի մեր եկեղեցու տասնամեակին:

Հ.- Ծուէտի մտաւորականութեան եւ պետութեան հետ կապ ունի՞ք:

Պ.- *Իբրեւ հովիւ եւ եկեղեցական խորհուրդ մեր պարտականութիւնն ենք համարում նախ յարաբերուել շուետական եկեղեցու հետ:*


Հ.- Դուք Քամիշլիէն էք՝ հայկական շրջանակէ: Զմեռը հոս կ'ըլլայ սաստիկ եւ յաճախ դուրս ելլելն անգամ կ'ըլլայ անկարելի: Այդ պարապոյ ժամերուն արդեօք մտաւորական գործ կը տեսնէ՞ք:

Պ.- *Ինքզինքս աւելի ազգային եւ եկեղեցական գործերով եմ տաքացնում եւ չեմ զգում ցուրտը: Փոքր համայնք ենք, բայց գործ շատ կայ անելիք: Պէտք է հասնել ամէն ինչի:*



ԿԱՐՕ ՅԱԿՈԲԵԱՆ

Խմբագիր «Նոր Հորիզոն» պարբերաթերթի



Հ.- Ի՞նչ պայմաններու տակ սկսաք հրատարակել Ծուէտի հայկական միութիւնները համադրող կեդրոնի պաշտօնաթերթը: Այսօր քան փոքրաթիւ համայնքի մը մէջ ինչպէ՞ս կը յաջողիք ապահովել անոր գոյատեւութիւնը:

Պ.- *Ի հարկէ նկատի պիտի ունենանք որ թերթը համայնքին անդամները իրարու կապող միջոց է եւ ատոր կարեւորութիւնը նկատի ունենալով կեդրոնի վարչութիւնը որոշեց ամէն գնով հրատարակել «Նոր Հորիզոն»ը: Դժուարութիւններ չատ կան. համայնքը փոքր է. սակայն որոշումը տուած ենք: Առաջին թիւը լոյս տեսաւ 1994-ին եւ թերթին հրատարակութեան պատասխանատուութիւնը ինծի վստահուեցաւ: Համակարգիչները դիւրացուցին գործը: Կը տպենք 500 օրինակ թերթ եւ մեծ մասամբ կ'ուղարկենք արտասահման, շուրջ 20-25 երկիր: Կ'աշխատինք Հայաստան շատ ուղարկել: Կեդրոնի անդամ իւրաքանչիւր միութիւն մասնակցութեան եւ բաժանորդագրութեան իր բաժինն ունի. իսկ միութիւններու չանդամակցող հայերէն անոնց որ հասցէներն ունինք՝ անոնց թերթ կ'ուղարկենք:*

Հ.- Նշմարեցի թէ, հակառակ ձեր պարսկահայ ըլլալուն, թերթը Մեսրոպեան ուղղագրութեամբ չէք հրատարակեր: Ի՞նչ է պատճառը:

Պ.- Հիմնական պատճառը հետեւեալն է: Նկատի ունենալով որ Հայաստանի մէջ ա՛յդ ուղղագրութիւնն է որ կը գործածուի եւ գրականութիւնն ընդհանրապէս այդպէս լոյս կը տեսնէ, ուզեցինք մեծամասնութեան հետ ըլլալ՝ չփոթ չստեղծելու համար մանաւանդ նոր սերունդին մօտ: Որոշեր ենք որ Հայաստանի մէջ ի՛նչ ուղղագրութիւն որ կիրարկուի՝ անոր հետեւինք:

Հ.- Ծուէտի մէջ աշխատակիցներ ունի՞ք, թէ արտատպումներ է որ կը կատարէք:

Պ.- Կ'աշխատինք ինքնուրոյն յօդուածներ դնել մեր թերթին մէջ: Նոյնիսկ երբ Հայաստանէն կու գան գրութիւնները՝ յատուկ «Նոր Հորիզոն»ի համար գրուած են: Իսկ համազգային ու հայկական հարցերու կապուած լուրերը կ'արտատպենք:

Հ.- Ձեր թերթը երկլեզուեան է: Արդեօք նոր սերունդի՞ն համար շուտեւրէն բաժին ունիք, թէ կը ջանաք թերթը օտար շրջանակներու մէջ ալ տարածել, ինչպէս՝ համալսարաններ, գրադարաններ դրկելով:

Պ.- Թէ՛ սա կայ եւ թէ՛ նա: Շուէտի մէջ ունինք նաեւ հայեր, որոնք Թուրքիայէն եկած են եւ հայերէն չեն գիտեր. պէտք է անոնց հասնիլ, ինչպէս նաեւ պէտք է հայ-չուետական յարաբերութիւններուն զարգացման օգտակար ըլլալ:

Հ.- Ծուէտը ծանօթ է փոքրամասնութիւններու ընկերային օժանդակութիւն ընծայելու մէջ: Արդեօք ձեր թերթին ալ օգտակար կ'ըլլա՞յ կառավարութիւնը:

Պ.- Ըստ օրէնքի, չուետական կառավարութիւնը հնարաւորութիւն կու տայ գրեթէ բոլոր հասարակական կազմակերպութիւններուն եւ միաւորումներուն՝ եթէ անոնք աշխատանք ցոյց տան: Նպաստի չափը կ'որոշուի աշխատանքին ձեւով եւ որակով:

Սկզբնական տարիներուն երկու անգամ նպաստի դիմեցինք, բայց երկրին տնտեսական պայմանները նկատի առնելով, մեզի չօգնեցին:

Բարեբախտաբար անցեալ տարուէն սկսեալ պետութիւնը մեզի որոշ նպաստ կու տայ: Թէեւ մեծ չէ, բայց կը նպաստէ որ աշխատանքները չդադրին:

Հ.- Դուք նաեւ փոխ-ատենապետն էք Ծուէտի հայկական միութիւնները

համադրող կեդրոնին: Կը հաճի՞ք կեդրոնին եւ անոր ծրագիրներուն մասին տեղեկութիւն տալ:

Պ.- Շուէտի հայկական համայնքը, կարելի է ըսել, կազմաւորուած է անցնող քսան տարիներու ընթացքին: Հայերը առաւելաբար կեդրոնացած են Սթոքհոլմ եւ Ուփսալա: Ուփսալայի մշակութային միութիւնը ամենահիներէն է. անցեալ տարի նշեցինք անոր 17-ամեակը: Գլխաւորաբար իրանէն եկողները կազմեցին այդ միութիւնը: Բաւական լաւ աշխատանք կատարած են նոր սերունդին համար, հայապահպանութեան գծով, Հայաստանի եւ տարբեր համայնքներու հետ կապ ստեղծելու



Մթոքիոլմի հայկական շաբաթօրեայ վարժարանի աշակերտութեան հետ:

առումով: Ուփսալան ունի երկու միութիւն՝ Ռաֆֆի եւ Հայ Մշակութային Միութիւն, իրենց շաբաթօրեայ դպրոցներով: Սթոքհոլմի միութիւնները աւելի այլազան են: Կան նաեւ միութիւններ Շուէտի այլ քաղաքներու մէջ, բոլորն ալ լծուած ազգապահպանման աշխատանքին:

Հ.- Հայց. Եկեղեցին որքանո՞վ օգտակար կ'ըլլայ ձեզի:

Պ.- Հայց. Եկեղեցին պաշտօնական ճանաչում ունի Շուէտի մէջ, այլ եկեղեցիներու նման: Այդ իմաստով ալ ազգային խնդիրները եկեղեցիին միջոցով առաջ կը քշուին: Եթէ այս հանգամանքը լաւ կերպով օգտագործենք՝ շատ կ'օգնէ մեզ:

Հ.- Ազգային-քաղաքական խմբաւորումներ կա՞ն Շուէտի հայ կեանքին մէջ:

Պ.- Ես ո՛չ կ'ըսեմ: 1989-ի Դեկտ. 8-10-ին, երկրաշարժէն ետք, Սամպ-րուէէն քաղաքին մէջ կազմակերպուեցաւ Շուէտի բոլոր միութիւն-ներու առաջին համագումարը: Քաղաքական մօտեցում ուղղակի ցոյց չտրուեցաւ:

Կը խորհէինք թէ Շուէտի մէջ Իրանի եւ այլ երկիրներու նման խնդիրներ պէտք է յարուցանել: Բոլոր միութիւնները մասնակցեցան համագումարին՝ բացի «Ռաֆֆի»-էն: Երկրորդ համագումարը կայացաւ Ուփսալայի մէջ 1990-ին. այս անգամ «Ռաֆֆի» Միութիւնն ալ կար: Ճիգ թափուեցաւ անցեալէն եկած խառն տրամադրութիւններ մեղմելու: Կարելի է ըսել թէ մասամբ յաջողեցանք. թէեւ չեմ ըսեր հա-րիւր տոկոսով: Համագումարը կը հետապնդէր երկու նպատակ՝ օգտուիլ երկրին ընձեռած դիւրութիւններէն եւ մեր միութիւնը դնել շուէ-տական միութիւններու մակարդակին վրայ, ապա նաեւ կարգաւորել Հայց. Եկեղեցին: Ուփսալա եկեղեցական խորհուրդի խնդիր ունէինք: Այս երկրորդ կէտին մէջ յաջողութիւն չկրցանք արձանագրել. բայց ըսեմ որ կազմակերպչական իմաստով եկեղեցւոյ հարցերուն չենք միջամտեր եւ կացութիւնը այսպէս կը շարունակուի:

Հ.- Ազգային-քաղաքական խմբաւորում ըսելով ի՞նչ նկատի ունիք:

Պ.- Իբրեւ միութիւն ոչ, բայց կարելի է ըսել թէ անհատներու մտայ-նութիւններ խանգարիչ հանգամանք կը ներկայացնեն: Շուէտի մէջ կան թէ՛ դաշնակցական մտայնութեան տէր անձեր, թէ՛ ոչ-դաշնակցականներ եւ թէ՛ հակա-դաշնակցականներ: Այս մտայնութիւնները յառաջացած են Խորհրդային շրջանին, երբ մարդիկ կա՛մ հայաստանամէտ էին եւ կամ ո՛չ: Բայց մտայնութիւնը կը գոյատեւէ մինչեւ օրս եւ «Ռաֆֆի»-ն դաշնակցական միտումով միութիւն է: Ան բաժնուեր է Հայ Մշակու-թային Միութեան եւ բաժանումէն ետք բախումներ տեղի ունեցած են. բայց հիմա որոշակի հարցեր չկան:

Հ.- Հայաստանի հետ կապ ստեղծելու եւ անոր օգտակար ըլլալու ի՞նչ միջոցներ ունիք:

Պ.- Վերոյիշեալ համագումարէն ետք կեդրոնը ի մի բերաւ զանազան քաղաքներու մէջ գոյութիւն ունեցող միութիւնները՝ Ուփսալայէն եւ Սթոքհոլմէն բացի, Կեսթերոս, Սանտուիչէմ, Կոթեմպերկ, եւլն: Կապ հաստատեցինք Հայաստան Համահայկական Հիմնադրամի Երեւանի կեդրոնին հետ: Փոխ-նախագահ Գագիկ Յարութիւնեան համադրող կեդ-

րոնին վստահեցաւ Հայաստան Համահայկական Հիմնադրամի Շուէտի մասնաճիւղի պատասխանատուութիւնը:

Հ.- Յիշեցիք իրանահայերու մասին: Հայկական ուրիշ գաղութներէ հաստատուողներ կ'ըլլա՞ն:

Պ.- Ուփսալա իրանահայերը շատ են, բաց Սթոքհոլմ կան հայեր Լիբանանէն, Սուրիայէն եւ Թուրքիայէն: Վերջին տարիներուն ունեցանք նաեւ Հայաստանէն եկող հայեր, որոնք, սակայն, կեցութեան ձեւակերպութիւններու դժուարութեան կը բախին: Մենք չենք քաջալերեր նման հայերու գալը: Բայց պէտք է չեշտեմ որ մեր հարցերը կը մնան մեր մէջ եւ դուրս չենք հաներ: Օրինակ, երբ 96-ին ընդունեցինք Հայաստանի արտաքին գործոց նախարար Վահան Փափագեանը: Մինչ ուրիշ երկիրներու պետական դէմքերու այցելութեան առթիւ ցոյցեր կը կազմակերպուին, հայ դիւանագէտին այցին առիթով ոչ մէկ միջադէպ պատահեցաւ եւ ասիկա ուշադրութիւնը գրաւեց տեղացիներուն: Ծաղիկներով եւ յարգանքով ընդունեցինք զինք: Այս է որ կը մնայ տեղացիներու յիշողութեան մէջ:



ՓՈՒ ՄԻՆԱՍԵԱՆ

Ատենապետ Սթոքհոլմի եւ շրջակայքի
Եկեղեցական Խորհուրդի

Հ.- Ի՞նչ կառոյց ունի եկեղեցին Շուէտի մէջ: Կարելի՞ է պատմական ակնակ մը կատարել:

Պ.- Ունենք Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ մօտաւորապէս 4-ից 5,000 զաւակներ, որոնց մեծագոյն մասը ժամանել է այլ հայաշատ գաղութներում քաղաքական եւ հասարակական իրադարձութիւնների վատացման պատճառով, ինչպէս՝ օրինակ՝ Իրանից, Լիբանանից, Սիրիայից: Սթոքհոլմի շրջանում հաշոււմ ենք մօտ 3-ից 4,000 մարդ. մենք ունենք 2,000 անհատի անուն եւ հասցէ: Եկեղեցական Խորհուրդը կազմուել է Սթոքհոլմի շրջանում եւ եղել Շուէտի հայոց պատմութեան մէջ առաջինը՝ կազմուած 1976-ին: Առաջին օրուանից անդամ եմ եղել նրան:



Հ.- Ունի՞ք առանձին հոգեւոր հովիւ:

Պ.- Շրջանի հովիւն է Նորայր Քհնյ. Կանչումեանը. իսկ հարաւային շրջաններում հովոււմ է Մկրտիչ Քհնյ. Գրիգորեանը:

Հ.- Որպէս Եկեղեցական Խորհուրդ, ի՞նչ է ձեր կապը Հայ Եկեղեցւոյ կառոյցներուն հետ:

Պ.- Մենք էջմիածնական թեմին ենք պատկանում. մեր առաջնորդն է Մեսրոպ Արք. Գրիգորեանը:

Հ.- Ինչո՞ւ ցարդ եկեղեցի չունիք բովանդակ Ծուէտի մէջ:

Պ.- Պատճառները բազմաթիւ են: Նա՛խ, գաղութը շատ նոր է, ապա նաեւ երկրի կարգն ու սարքը այնպիսին է, որին ժամանակ է պէտք յարմարուելու համար:

Անդամների մեծ մասը ապրում է չնչին աշխատավարձերով, ոմանք նոյնիսկ ապրում են ընկերային խնամատարութեամբ եւ առայժմ անհնար է մեծ հանգանակութիւն կատարելը:

Կայ նաեւ մի այլ հանգամանք՝ տուրքի դրութիւնը: Այստեղ հնարաւոր է ձեռք բերել ձրի եկեղեցի կամ պարտքով ստանալ ինչ-որ կառոյց: Ճիշդ է որ մենք առանձին սեփական շէնքի կարիքն զգում ենք, բայց գործունէութիւնը աւելի կարեւոր է:

Հ.- Ի՞նչ է ձեր գործունէութեան դաշտը:

Պ.- Կարեւորագոյնը բնակչութեան հոգեւոր կարիքները հոգալն է: Զեռք ենք բերում աղօթատեղի կամ ժողովների համար հաւաքավայր եւ պահպանում ենք մեր դարաւոր սովորութիւններն ու մեր օրէնքների համաձայն կատարում մեր պաշտամունքը:

Հ.- Իսկ հայ դպրո՞ց:

Պ.- Հայ դպրոց առայժմ չունենք: Ուրիշ կազմակերպութիւններ, որոնց մէջ նաեւ եկեղեցու կից կազմուածներ, կազմակերպում են կիրակնօրեայ դպրոցներ. բայց ծաւալով փոքր են, թէեւ քիչ թէ շատ կառավարութիւնը նպաստում է դրանց:

Դպրոցներում եթէ կան հինգից աւելի աշակերտներ, կառավարութիւնը նրանց շաբաթական մէկ կամ երկու ժամ ուսուցիչ է տրամադրում:

Հ.- Ծուէտի կառավարութիւնն ու ժողովուրդը հայոց հանդէպ բարեացակամ եղած են միշտ: Նոյն յարաբերութիւնը կը շարունակուի՞:

Պ.- Տեղացիները հայութեան մասին չառ քիչ բան գիտեն: Անցնող հարիւր մարդու որ հարց տաք, թերեւս մէկը կամ երկուսը հազիւ լսած լինեն որ հայ ժողովուրդ կայ:

Մենք լողում ենք հոսանքի հակառակ. մեզ համար դժուար է այստեղ քարոզչութիւն կազմակերպել: Տարիների մեր ջանքերը անշուշտ որոշ արդիւնք տուել են: Մարդիկ կամաց-կամաց ճանաչում են այդ հեռաւոր անկիւնը...:

Հ.- Նոր սերունդը հայկական շունչով դաստիարակելու նկատմամբ լատտե՞ս էք:

Պ.- Լաւատես լինել անհնարին է. չի կարելի. բայց միեւնոյն ժամանակ պէտք է լինել անիրապաշտ: Հարիւր տոկոս հոսանքի դէմ լողալը միշտ է որ տեղ է հասցնում: Պէտք է մշակենք տեղական պայմանների հետ յարմարուելով հայութիւնը պահպանելու միջոցներ: Պէտք է լինել Շուէտի հպատակներ, բայց նաեւ մնալ հայ ազգի ու Հայց. Եկեղեցւոյ զաւակներ եւ չմոռանալ հայրենիքն ու մշակոյթը:

Հ.- Եկեղեցաշինական ծրագիր ունի՞ք:

Պ.- Այսօր հաւաքուել ենք այդ մասին զրուցելու: Ներկայ գտնուեցիք. տեսաք: Առաջին անգամը էլ որ նման մտքով հանդիպում ենք ունենում: Ծրագիրը միշտ կայ. դժուարը սկզբնական գումարը գոյացնելն է: Ամէն ինչ ահարկու կերպով սուղ է այս երկրում: Գնե՛լը միայն միլիոնների է կարօտում. իսկ պահպանելը՝ նոյնքանի...: Ինձ թւում է որ անհնարին է առաջիկայ 10-15 տարում իրագործել նման բան: Ձեր թերթին մաղթում եմ ամենայն յաջողութիւն եւ ուրախ եմ որ տեսնուեցիք այս կարեւոր օրը:



ՍԵՐԺ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Ատենապետ «Ռաֆֆի» Մշակութային

Միութեան եւ

ՍԱՄՍՈՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Տնօրէն Միութեան դպրոցի



Հ.- Կրնա՞ք ձեր միութեան կազմութեան եւ նպատակին մասին խօսիլ:

Ս.Կ.- Միութիւնը 12 տարի առաջ հիմնուել է Ուփսալայում. սկզբում ունեցել ենք մօտ 200 անդամ, իսկ այժմ՝ 110: Աշխատում ենք մասնաւորաբար մեր դպրոցի աշակերտների համար: Սամսոն Առաքելեանը մեր դպրոցի պատասխանատուն է եւ շնորհակալ ենք իր լաւ գործի համար: Աշխատում ենք երեխեքին հայ պահել եւ նրանց օգնել որ իրենց երեխաները հայ մնան:



Հ.- Այն տպաւորութիւնն ունի՞ք որ պարսկահայերէ կը բաղկանայ ձեր միութիւնը:

Ս.Ա.- Այո. սակայն մեր միջեւ հարց չկայ: Մենք օգնում ենք բոլորին՝ ինչպէս իրանում: Երբ սկսուեց լիբանանեան պատերազմը, իրանահայերը տնտեսապէս եւ բարոյապէս օգնեցին լիբանանահայերին:

Հ.- Ուրիշ քաղաքներ մասնաճիւղեր ունի՞ք:

Ս.Կ.- Ոչ: Բայց անդամներ ունենք Սթոքհոլմում եւ ալլուր:

Հ.- Կրթականէ բացի ի՞նչ գործունէութիւն կը ծաւալէք Ուփսալայի մէջ:

Ս.Ա.- Ազգային տօներ կը նշենք՝ Ապրիլ 24, Մշակոյթի Օր, Վարդանանք, Անկախութեան Օր, Մայիս 28:

Հ.- Առանց սեփական հաւաքավայրի, որքանո՞վ կը յաջողիք գործել:

Ս.Ա.- Շուէտում սեփականատիրական բաներ չկան. ինչ էլ որ մարդ առնի՝ պիտի գումար վճարի պահելու համար: Ճիշդն ասած, չենք նեղւում հաւաքատեղիի հարցով: Ամիսը 5,000 քրօն վարձք ենք տալիս

եւ անդամների միջոցով պահում ենք այդ 100-120 ոտք տարածութեամբ հաւաքավայրը:

Հ.- Մշակութային գործունէութեան մէջ կ'ընդգրկէ՞ք Հայաստանի հետ մշակութային կապը՝ իրեն ազդու միջոց հայապահպանութեան:

Ս.Ա.- Ուղղակի չէ: Ոչ թէ չենք ուզում, այլ՝ չեն թողնում: Կարծիք է ստեղծուել թէ մեր միութիւնը դէմ է նման կապերի: Ճիշդ չէ: Պատճառը այստեղի վարդապետն է: Ամբողջ գաղութը պարսկահայ է եւ դեռ Պարսկաստանից սկսած՝ կան կոմունիստական մտքերի տէր մարդիկ, որոնք կախալ են եղել Մոսկուայից: Մենք նրանց դէմ ենք: Գտնում ենք որ կոմունիզմը մեր ժողովրդին հարուած է տուել: Մենք հայրենասէր ենք եւ այդ ոգով էլ մեր երեխաներին դաստիարակում ենք:

Հ.- Միութիւնը որեւէ քաղաքական պատկանելութիւն ունի՞:

Ս.Ա.- Քաղաքական պատկանելութիւն չունենք:

Հ.- Քանի որ Ուփսալա կոմունիստական արեւելումով շարժում կայ, արդեօք Ծուէրի մէջ դաշնակցական արեւելումով կազմակերպութիւն ալ կա՞յ:

Ս.Կ.- Այո, կայ նման շարժում:

Հ.- Հ.Յ.Դ.-ն ունի՞ իր կոմիտէութիւնը հոս:

Ս.Ա.- Դաշնակցութիւնը կայ. զօրեղ չէ, բայց մտահոգութիւն չէ զօրեղ չլինելը. երբ պայմանները աւելի նպաստաւոր դառնան՝ կը զօրեղանայ: Մեզ մտահոգում է մեր միութեան դէմ եղող թոյնը, նրա հիմնադիրների դէմ եղող արտայայտութիւնները:

Հ.- Ուփսալայի Մշակ. Միութեան՞ կ'ակնարկէք:

Ս.Ա.- Այո: Ես նրա դէմ բան չեմ ասում, յաջողութիւն եմ մաղթում: Բայց այնտեղ կեդրոնացած են կոմունիստական մտքեր ունեցող մարդիկ եւ այնպիսիներ, որոնց շահերը համապատասխանում են կոմունիստական գաղափարաբանութեան տէր մարդկանց հետ: Իրենց յաջողութիւն. բայց չենք ուզում որ մեզանով զբաղուեն:

Հ.- Հայց. Եկեղեցւոյ ներկայացուցիչները ի՞նչ դեր կը խաղան Ուփսալայի մէջ:

Ս.Ա.- Մենք Հայց. Եկեղեցու զաւակներն ենք, բարոյական պարտաւորութիւն ենք զգում նեցուկ հանդիսանալու մեր եկեղեցուն. բայց դժբախտաբար Տէր Սարգիսը առաջին օրից իրեն սրսկուած թոյնի

պատճառով ժխտական մօտեցում ունի մեր միութեան նկատմամբ: Մեզանից ոչ մէկին չեն ընդգրկում եկեղեցական խորհրդի մէջ: Մէկին ասում է դու կնոջիցդ բաժանուել ես. միւսին ասում է չուետուհու հետ ես ամուսնացել, ինձ կ'ասի դու ուսուցիչ մարդ ես...: Տէր Սարգիսը մոռանում է որ ինքը պաշտօնեայ է. ապրում ենք 1998 թուին եւ մեր ժողովուրդը այլեւս հօտ չի եւ մենք հովիւի պէտք չունենք: Երբ գաղթական ընտանիքը սահմաններ անցնելով կը գայ Շուէտ եւ կը ստանայ կեցութեան եւ աշխատանքի իրաւունք, այլեւս կարիք չունի հովիւի:

Հ.- Համագաղութային ձեռնարկներ կ'ունենա՞ք եկեղեցւոյ հետ գործակցարար:

Ա.Կ.- Տէր Սարգիսի նախաձեռնութեամբ Հայաստանից երգիչ բերեցինք. լաւ էր, բայց իւրաքանչիւր միութիւն ինքը իրեն է կազմակերպում ձեռնարկ:

Հ.- Եթէ դուք նախաձեռնէք համագաղութային ձեռնարկ մը, չէ՞ք խորհիր որ Հայ Մշակութային Միութիւնը կը միանայ ձեզի:

Ա.Ա.- Ինչո՞ւ չէ: Եթէ կերուխումի բան լինի՝ կը լինի: Բայց դրա մէջ ազգային բան չկայ: Բայց երբ Ապրիլ 24-ի առթիւ քայլարշաւ կազմակերպենք՝ չեն միանում մեզ:

Հ.- Այս տարակարծութիւնը Ծուէտի մէջ չէ ստեղծուած. ան կու գայ հինէն: Դժգոհելու պէտք չունիք՝ եթէ ձեր միութեան մէջ դաշնակցականներ թափանցած են եւ միւս միութեան մէջ՝ տարբեր գաղափարի մարդիկ:

Ա.Ա.- Այո՛, ճիշդ էք ասում. բայց մէկ հարց կայ: Մենք միւս միութեան ձախողութիւնը չենք ցանկանում: Ուրախանում ենք նրանց յաջողութեամբ: Բայց նրանք այսպէս չեն:

Հ.- Մեսրոպ Արք. Գրիգորեանին չէ՞ք դիմած:

Ա.Ա.- Եղել է մի քանի անգամ, բայց բարիք դուրս չի եկել: Գալիս ու տարակարծութիւնները աւելի է խորացնում: Նա որպէս հայր լսելու է իր զաւակների սրտի ցաւը. բայց երբ եկեղեցու խորհրդի մի նախկին անդամ իր գանգատն է ներկայացնում՝ կոպիտ ձեւով խեղդում է նրա ձայնը:

Հ.- Սթոքհոլմի հայութեան հետ կը յարաբերի՞ք:

Ա.Կ.- Սթոքհոլմի Հայ Օգնութեան Միութեան հետ ենք յարաբերւում. աշխոյժ են նրանք:

Հ.- Հայ դատի
գծով տեղական
իշխանություններուն
հետ յարաբերություն
ունի՞ք:

Ս.Ա.- *Ծիշդն
ասած միւս միու-
թիւնը մեզ առիթ էի
տուել. միշտ գա-
ղութի անունից է
խօսել: Մենք էլ
անհատապէս նամակ
ենք գրել վարչա-
պետին Ապրիլ 24-ի
առթիւ:*

Հ.- «Նոր Հորիզոն»
թերթէն գո՞ր էք:

Ս.Ա.- *Այո. մտքե-
րը լաւ են. յօդուած-
ները խնամքով են խմբագրուում. լաւ մակարդակ ունի: Բայց չտես-
նուած թոյն, ատելութիւն, սարսափելի չափերի հասնող ատելութիւն
կայ Հ.Յ.Դ-ի նկատմամբ:*

*Հայաստանից խմբագրին խորհուրդ են տուել, որ եթէ ուզում ես
թերթիդ տարածուի՝ արեւելահայ ուղղագրութեամբ հրատարակի:*

Հ.- Ուսիսալա ունիք երկու դպրոց: Ուրախ եմ որ մէկուն տնօրէնն էք, Պրն.
Առաքելեան: Երբ Հայր Պարետին հետ այցելեցինք ձեր դպրոցը, նշմարեցինք
որ Մեսրոպեան ուղղագրութեամբ կը սորվեցնէք մեր լեզուն՝ ի տարբերութիւն
միւս դպրոցին: Հայերէն դասագիրքի դժուարութիւն ունի՞ք:

Ս.Ա.- *Բերում ենք Պարսկաստանից: Դժուարութիւն չունենք: Մեր
երեխաները այստեղ հայախօս են. չուետերէնը գործածում են իրենց
դպրոցներում: Մենք պահանջում ենք որ հայերէն խօսեն այստեղ:*

Հ.- Դպրոցը աւարտողները ընկերական շրջանակի մէջ ի՞նչ լեզուով կը
յարաբերին:

Ս.Ա.- *Հայերէն: Բնականաբար ընտանիքն էլ մեծ դեր ունի հայախօ-
սութեան մէջ: Բարեբախտաբար օտար ամուսնութիւնների թիւը չատ*



*Ուսիսալայի հայկական դպրոցի աշակերտութեան հետ:
Տնօրէնութեան հետ հանդիպման ընթացքին, նշմարեցի թէ
Արեւեանական ուղղագրութեամբ կը դասաւանդէին հայոց
լեզուն: Բացատրեցի թէ սփիւռքի մէջ մենք ստիպուած ենք
պահել Մեսրոպեան դասական ուղղագրութիւնը: Առարկեցին
թէ իրենք կը հետեւին հայրենի պետութեան, որ կը շարունակէ
պահել Արեւեանական ուղղագրութիւնը:*

չէ: Շուեռական դպրոց յաճախող հայ երեխաներ հայերէն դասերի են հետեւում եւ ծախսը հոգում է կառավարութիւնը:

Հ.- Կը խորհի՞ք թէ նոր սերունդը պիտի շարունակէ ձեր գործը:

Ս.Կ.- **Յոյս ունենք որ կը շարունակեն:**

Հ.- Քիչ առաջ նշեցիք թէ եկեղեցին պարապ է. մարդ չ'երթար: Ձեր երիտասարդները հոգեւոր կրթութիւն ստանալու համար պէտք չէ՞ եկեղեցի երթան:

Ս.Ա.- Աստուած վկայ, մենք ամենակեղեցասէր հայերն ենք: Բայց **Տէր Սարգիսի ճախող քաղաքականութեան հետեւանքով՝ չենք կարող երթալ եկեղեցի: Դպրոցում կրօնի դաս ենք տալիս եւ «Հայր Մեր» ենք սովորեցնում աշակերտներին:**

Սթոքհոլմ-Ուփսալա, 19-21 Սեպտեմբեր 1998

«ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆ», 31 Դեկտեմբեր 1998

«ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ», Յունուար 1999



Աթենքը դիտուած Աքրոպոլիսի բարձունքէն:

ԱԹԵՆՔԸ ԻՐ ՀԱՅՈՒԹԵԱՄԲ

Յունահայ գաղութը ունեցաւ տարբեր նշանակութիւն յետեղեռնեան մեր սերունդին համար: Հոն էին հաւաքուած հազարաւոր որբերը Արեւմտեան Հայաստանի, որոնք Քորֆուի եւ միւս որբանոցներուն մէջ հասակ կ'առնէին անապահով ապագայի մը հեռանկարով: Անոնցմէ շատեր, մեծնալով տնտեսական ամենէն տխուր պայմաններու տակ, հողագործութեամբ թէ այլ արհեստներով ընտանիք մը կազմել ջանացին Յունաստանի մէջ: Ուրիշներ գաղթեցին տարբեր եւրոպական երկիրներ, իսկ կարելոր մաս մը, ներգաղթի օրերուն, հայրենադարձուցաւ Հայաստան:

Գաղթականներով ծնունդ առած այս գաղութը նաեւ կարճ շրջանի մը համար դարձաւ մեր կուսակցութեան կեդրոնը:

Յունաստանի մէջ Հայ Առաքելական Եկեղեցին կը մնայ պառակտուած: Հակառակ էջմիածնական թեմ մը ըլլալուն, դաշնակցականներ կը շարունակեն գրաւեալ պահել մեր առաջնորդարանն ու մայր եկեղեցին: Ասոր որպէս

հակազդեցություն, էջմիածնասեր ճակատը իր ազդեցութեան տակ կը պահէ Դամասկոսի թեմը, որ կը գտնուէր պատմականօրէն Երուսաղէմի Պատրիարքութեան իրաւասութեան տակ եւ Սահակ Խապայեան Կաթողիկոսին օրով յանձնուած էր Կիլիկեան Աթոռին: Մինչեւ այսօր Աթէնքի ու Դամասկոսի թեմերը կը շարունակեն պահել յետ 56-ի իրենց գոյավիճակները:

Աթէնքի Բարեգործականը իր ակումբովն ու Գալիաքեան վարժարանով, Արարատ Մարզական Մշակութային Միութիւնը, Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը, «Նոր Աշխարհ» շաբաթաթերթը եւ Փերիսթերիի Ս. Աստուածածին հայոց եկեղեցին կը մնան նոյն ափ մը ընկերներուն տնօրինութիւն տակ: Անոնք մինչեւ վերջերս կը գործէին համերաշխ, մինչեւ որ մեր Ռ.Ա.Կ.ի տագնապին ցաւը հոն եւս հասաւ, սպասելիօրէն:

Դժբախտաբար, ցուրտ պատերազմին տխուր հետեւանքով է որ հոն եւս տեղի ունեցաւ եկեղեցական այս բաժանմունքը՝ ինչպէս եղաւ պարագան Ամերիկայի ու Պարսկաստանի:

Հայաստանի անկախացումով, կ'ըսեն թէ մինչեւ երեսուն հազար հայեր այսօր հաստատուած են հոն, առաւելաբար հիւսիսային Յունաստանի մէջ, եւ մեր դասական հայ գաղութը ոչ մէկ կապ կը հաստատէ այդ հայաստանցիներուն հետ: Գաղութին պատասխանատուները այս հարցին համար չունին պատասխան:

Յունաստան բարեկամ երկիր է Հայաստանին ու հասարակաց նոյն թշնամին կը բաժնէ: Թէ՛ Տէր-Պետրոսեանի եւ թէ՛ Քոչարեանի կառավարութիւնները Յունաստանի իշխանութիւններուն հետ հաստատած են սերտ բարեկամական յարաբերութիւններ, որոնք կը շարունակուին եւ մինչեւ իսկ հայկական սպայակոյտէն կարգ մը զինուորականներ կը մարզուին յունական զինուորական կանառներուն մէջ:

Ռ.Ա.Կ.ը Աթէնքի մէջ կ'ունենար իր Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը ընկեր Յակոբ Գասարճեանի ատենապետութեան օրով: Մնացի յաւելեալ քանի մը օր, պատրաստելու «Աթէնքը Իր Հայութեամբ» հանդիպումներու շարքը իբրեւ ժամանակագրութիւն՝ վաղուան հայ պատմագէտին օգտակար ըլլալու հեռանկարով:

ԱՐՄԱՆ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Հայաստանի Հանրապետության Ռեսպուբլիկ

Հ.- Պրն. Ռեսպուբլիկ, կը փափաքինք որոշ տեղեկություն ունենալ Յունաստանի մէջ Հայաստանի Ռեսպուբլիկի Բիւրոյի մասին:

Պ.- Դիւանագիտական յարաբերութիւնները Յունաստանի պետութեան հետ հաստատուեցին 1992 թուականին: 1993 թուականի Սեպտեմբերին ստեղծեցինք այս Ռեսպուբլիկը: Նոյն տարուան ընթացքում նաեւ բացուեց Յունաստանի Ռեսպուբլիկը Երեւանում: Շուրջ մէկ տարի Ռեսպուբլիկը Ռեսպուբլիկի Հաւատարմատար Աշոտ Յովակիմեանն էր այստեղի գործիչը եւ նա էր վարում գործերն ու Ռեսպուբլիկի հաստատման կազմակերպչական հարցերը: Ես այստեղ ժամանեցի 1994 թուականին եւ հաւատարմագիրս յանձնեցի Սեպտեմբեր 1994-ին:

Անցնող հինգ տարուան ընթացքում փաստօրէն շատ մեծ յաջողութիւնների ենք հասել մեր երկրների յարաբերութիւնների զարգացման գործում: Մենք կարողացանք այս ընթացքում մեր երկու բարեկամ ժողովուրդների միջեւ գոյութիւն ունեցող աւանդական, պատմական կապերը հասցնել միջ-պետական մակարդակի: Այս ընթացքում ստորագրուեցին քսանից աւելի պայմանագրեր: Հպարտութեամբ կարող եմ ասել, որ նման տեսակի իրաւական դաշտ Հայաստանը հունի այլ եւրոպական պետութիւնների հետ:

Ամենից կարեւոր պայմանագիրը բարեկամութեան եւ համագործակցութեան մեծ պայմանագիրն էր, որ ստորագրուեց 1996 թուականին Հայաստանի նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի Յունաստան այցելութեան ժամանակ: Ստեղծուեցին յարաբերութիւններ բոլոր մակարդակների վրայ, բոլոր բնագաւառներում:

Չնայած Հայաստանը նորանկախ պետութիւն է, իսկ Յունաստանը որպէս Եւրոպայի Միութեան անդամ՝ իր քաղաքականութիւնը կապ ունի եւրոպական ծրագրերի արտաքին քաղաքականութեան հետ, մեր երկու երկրների միջեւ հաստատուած են շատ բնականոն քաղաքական յարաբերութիւններ եւ մասնաւորապէս միջազգային կազմակերպութիւնների գծով Յունաստանի եւ Հայաստանի պատուիրակութիւնները միշտ իրար օժանդակում են:



Կան արտաքին գործերի նախարարների փոխ-այցելութիւններ: Հայաստանի բոլոր նախարարները փաստօրէն այցելել են Յունաստան:

1997-ին ունեցանք շատ յաջող այցելութիւնը Յունաստանի արտաքին գործերի նախարար Պանկալոսի դէպի Հայաստան:

Այսինքն կայ քաղաքական երկխօսութիւն որոշ մակարդակներով: Ունենք նաեւ ռազմական գործակցութեան մասին համաձայնագիր եւ ամէն տարի ստորագրուում է ծրագիր համագործակցութեան համար: Դրանք վերաբերում են սպաների փոխ-այցելութիւնների, կրթական ծրագրերի, եւայլն: Յիսուն ուսանող սպայ ունենք Յունաստանի (Էվիլ-վէրոմ) սպայական վարժարանում: Տարեկան տասը նոր թեկնածուներ են գալիս Հայաստանից: Շուտով կ'ունենանք առաջին շրջանաւարտները: Ամէն տարի Հայաստանը կ'ունենայ տասը շրջանաւարտ պատրաստուած սպայ այսուհետեւ:

Կայ նաեւ տեխնիկական մարզում համագործակցութիւն: Հայաստանը, օրինակ, մասնակցեց երկու զօրավարժութիւնների ՆԱԹՕ-ի շրջանակներում, Յունաստանում: Փաստօրէն սա առաջին դէպքն էր, որ Հայաստանը մասնակցում էր մեր երկրից դուրս զօրավարժութիւնների:

Տնտեսական բնագաւառը նոյնպէս յաջող է, այն իմաստով որ այսօր Յունաստանը համարում է ամենամեծ ներդրում կատարողը Հայաստանում: Նախ դա «Ամենթէլ»ի գնումն էր յունական ՕԹԷ հեռահաղորդակցութեան կազմակերպութեան կողմից, որ 140 միլիոն դոլարով գնեց «Արմենթէլ»ի 90 տոկոսը: Վերջերս այստեղ էր մեր կապի նախարարը, որ հանդիպումներ ունեցաւ իրենց նախարարի հետ: Մեծ յոյսեր ունենք, որ շնորհիւ այդ այցի, մեր հեռախօսային ցանցը աւելի կը զարգանայ:

Երկրորդ խոշոր ներդրումը «Քոքա-Քոլա»ի արտադրութիւնն է Հայաստանում յունական Թրիմասիլոն ընկերութեան միջոցով: Միւս կարեւոր ներդրումը յունական Թելասքոմ ընկերութեանն է ապակեմամբրաթելային (ֆայպրօփիթքս) հեռախօսային գծի կապակցութեամբ, որ գալիս է Սեւ Ծովից մինչեւ Իրան: Հայաստանը մասնակից է լինելու միջազգային այս ցանցին: Սա լինելու է քաղաքական համագործակցութիւն՝ ընդգրկելով Հայաստանը, Իրանը, Վրաստանը եւ Յունաստանը:

Տնտեսական ոլորտում, Յունաստանը մեզ միշտ աջակցում է զանազան միջոցներով. այստեղ կազմակերպւում են սեմինարներ մեր գործարարների, տնտեսական ոլորտի մասնագէտների համար: Յարդանցկացուել են տասը սեմինարներ: Պէտք է, սակայն, նշեմ, որ հակառակ տնտեսական ոլորտում արձանագրուած յաջողութիւններին, մենք դժգոհ ենք այսօրուան առեւտրական բալանսից երկու երկրների միջեւ,

որ ընդամենը տասը միլիոն դոլար է կազմել անցեալ տարի: Դա շատ ցած ցուցանիշ է եւ բացատրուում է առաջին հերթին նրանով, որ յունական պարանքը ունի բարձր գին եւ բարձր մակարդակ, որոնց աւելանում է փոխադրական բարձր գինը: Համեմատած թուրքական եւ իրանական ապրանքների հետ, վերջիններս աւելի մատչելի են այսօր Հայաստանի ժողովրդին: Ուզում ենք յաղթահարել այս դժուարութիւնը ամէն կերպ: Յունաստանի կառավարութիւնը մեզ տրամադրեց 10 միլիոն ամերիկեան դոլարի վարկ, լաւ պայմաններով, զուտ յունական ապրանքների Հայաստան ներմուծումը քաջալերելու նպատակով: Վարկը սկսում է արդէն աշխատել եւ տալ իր արդիւնքները:

Կան յաջողութիւններ նաեւ կրթական բնագաւառում: Օրինակ, այստեղ սովորել են չուրջ քսան ուսանողներ յունական կառավարութեան կողմից տրամադրուած կրթաթոշակներով, տարբեր համալսարաններում, քաղաքագիտական եւ տնտեսագիտական մասնագիտութիւններով:

Հ.- Երբ Յունաստանի եւ Հայաստանի միջեւ որեւէ համաձայնագիր ստորագրուի, նկատի կ'առնուի՞ Թուրքիոյ պարագան, ըսեմք՝ ռազմական գետնի վրայ:

Պ.- Ընդհանրապէս ոչ: Ռազմական համագործակցութիւնը արդէն քանի անգամ յայտարարել ենք, որ ուղղուած չէ բացարձակապէս երրորդ պետութեան դէմ եւ դա երկու բարեկամ պետութիւնների միջեւ համագործակցութիւն է, որի հիմնական մասը կազմում են կրթական ոլորտը եւ ՆԱՌՕ-ի չրջանակներում համագործակցութիւնն ու Հայաստանի բանակին օժանդակութիւնը յանուն խաղաղ գործակցութեան:

Հ.- Յունահայ գաղութը սկզբնական օրերուն որքանո՞վ օգտակար եղաւ դեսպանատան ստեղծման աշխատանքներուն:

Պ.- Ես կ'ասէի որ ամէնուրեք ուր ունենք դեսպանատներ, համայնքները օգտակար են եղել ե՛ւ նիւթապէս, ե՛ւ բարոյապէս օժանդակելով: Այստեղ նոյնն է եղել պարագան: Այս գրասենեակը տրամադրուել է մէկ անհատի կողմից դեսպանատան օգտագործման համար:

Ձնայած այն հանգամանքին, որ համայնքն ունի իր դժուարութիւնները, ներքին քաղաքական խնդիրները, այսօր ստեղծուել է իրավիճակ, որտեղ բոլոր կողմերը հաւասար վերաբերմունք ունեն դեսպանատան հանդէպ: Դա բացատրուում է նաեւ դեսպանատան վերաբերմունքով հանդէպ համայնքի եւ չխառնուելով նրա ներքին խնդիրներին: Փորձում ենք հաւասար աչքով նայել համայնքի բոլոր կազմակերպութիւններին: Կարծում եմ որ համայնքի օժանդակութիւնը մեծ է եւ տարեկան

նուիրատուութիւնները կազմում են դեսպանատան պիւտճէի շուրջ 30 տոկոսը:

Հ.- Լսած եմք թէ շուրջ տասը հազար հայեր Հայաստանէն եւ Գալիկիոյ խորհրդային երկիրներէ Յունաստան կայք հաստատած են: Արդեօք դեսպանատունը արտագաղթած հայերու հանդէպ որոշ քաղաքականութիւն ունի՞ եւ օգնութեան ձեռք կ'երկարէ: Ի՞նչ է ձեր կեցուածքը Հայաստանի քաղաքացիներուն նկատմամբ:

Պ.- Դեսպանութիւնը ճշգրիտ տուեալներ չունի այստեղ գտնուող հայաստանցիների վերաբերեալ: Հին համայնքը, յունահայերը, այստեղ կազմում են տասը հազարից աւելի մարդ: Հնարաւոր է որ այդ թուին հաւասար նաեւ հայաստանցիներ լինեն Յունաստանում: Դեսպանատունը ունի շուրջ 2,000 գրանցուած հայեր, որոնք օրինաւորապէս ունեն այստեղ ժամանակաւոր կեցութեան փաստաթուղթ: Մնացեալները անօրինական են, եկել են որպէս տուրիստ եւ մնացել ու աշխատում են որպէս սեւագործ բանուոր:

Բնական է, երբ մարդիկ դուրս են գալիս Հայաստանից աշխատելու եւ այնուհետեւ վերադառնալու կամ իրենց ընտանիքները պահելու համար, դա եւ համարում եմ բնական երեւոյթ: Յունաստանից էլ, օրինակ, 50-ական թուականներին, դրամ վաստակելու համար շատեր դուրս են եկել երկրից եւ հասել մինչեւ Միացեալ Նահանգներ: Բայց մեզ մօտ չկայ այնպիսի միտում, որ մարդիկ վերջնականապէս լքեն արմատները: Նրանք սովորաբար իրենց ընտանիքները թողնում են հայրենիքում եւ այստեղից հոգում են նրանց կարիքները: Շատ են դէպքերը, երբ այդպիսիները վկայական են խնդրել հայրենիք վերադառնալու համար: Հայաստանից եկածները ցրուած են այստեղ երկրով մէկ եւ այնքան էլ կապուած չեն տեղի հին համայնքին եւ նրա կառոյցներին: Դեռեւս իրենց աշխատանքով են մտահոգ: Դեսպանութիւնը դեռեւս չունի լծակներ նրանց համախմբելու՝ հասնելով Սալոնիկ, Քսալիի, Քալալա, Ալեքսանդրաքոլիս եւ այլուր:

Հ.- Թրքան մը Հ.Յ.Դ.Ն հայրենի իշխանութիւններուն դէմ լծուած էր աշխատանքի: Արդեօք նման աշխատանքը դժուարացուցած էր ձեր դեսպանութեան գործը հոս:

Պ.- Դաշնակցութիւնը առաջին իսկ պահից օժանդակել է դեսպանութեանը: Նախորդ իշխանութեան կողմից ընդունուած որոշումներից յետոյ այդ օժանդակութիւնը դադարեց տեղի կոմիտէի որոշումով: Բայց ես փորձել եմ իմ անձնական ըմբռնումներով մօտենալով, միշտ

հաւասար վերաբերմունք պահել համայնքային կառույցների հանդէպ, լինի դա Ռ.Ա.Կ. թէ Հ.Յ.Դ.։ Փորձել եմ իմ այդ հաւասարակշռւած քաղաքականութեան միջոցով ստեղծել այնպիսի իրավիճակ, որ ծայրայեղութիւններ չլինեն։ Մի անգամ ցոյց կազմակերպուեց, երբ Դաշնակցութիւնը Հայաստանում հարցեր էր ունենում։ Դա համարում եմ բնական երեւոյթ։ Մինչեւ այստեղ գալս յայտարարել էի որ ես դեսպան եմ Հայաստանի, չեմ միջամտի գաղութային ներքին հարցերին։ Կան արգելքներ այստեղ, որոնց չպէտք է նայենք կոսսակցականի կամ իշխանութեան աչքերով։ Դեսպանութիւնը մնայուն արժէք է։ միջպետական յարաբերութիւնները մնայուն արժէք են։ Դեսպանի հանգա-



Հայաստանի Հանրապետութեան դեսպանատունը ամփոփուած Աթէնք, շէնքի մը առաջին յարկին վրայ։

մանքը կախում չպէտք է ունենայ իշխանութիւններից, փոփոխութիւններից, որովհետեւ դեսպանը ապահովում է երկու երկրների եւ մանաւանդ երկու բարեկամ երկրների միջեւ հայրենի շահերը։

Հ.- Այս տարւում ընթացքին երկու ուրախարումներ կատարուած էին դեսպանատան ինքնաշարժերուն դէմ։ Ի՞նչ բանի կը ձգտին նման ոճրային արարքները։

Պ.- Կարծում եմ որ դա ուղղուած էր յունական կառավարութեան դէմ։ Այլ դեսպանութիւնների ինքնաշարժներ եւս վնասուել են։ Ինչո՞ւ

է ստացուել այսպիսի պատահականութիւն: Որովհետեւ այս շրջանում, Նէազմիրի շրջանում, որտեղ տեղադրուած են մեր դեսպանատունը եւ մեր անձնակազմի բնակարանները, ինքնաշարժի կանաչ համարները աչքի են ընկնում եւ դրանք այրողները չգիտեն թէ ո՞ր դեսպանութեան են պատկանում դրանք: Ես չեմ ուզում հաւատալ որ այդ արարքները ուղղուած են Հայաստանի կամ մեր դեսպանատան չահերի դէմ:

Հ.- Նորաստեղծ հանրապետութիւնը դիւանագիտական աւանդութիւն չէ ունեցած: Այս պարագան ձեզի չի վերաբերիր, որովհետեւ ծնունդով դուք գտնուած էք դիւանագիտական մթնոլորտի մէջ, ձեր ողբացեալ հօր՝ Զոն Կիրակոսեանի շնորհիւ: Սակայն երբ դիւանագիտական ցանցը այսքան արագօրէն կ'աճի, արդեօք ձեր ունեցած քատրերով պիտի կարենա՞ք արժանաւայել ու որակաւոր դիւանագէտներով լեցնել նոր բացուող պաշտօնները:

Պ.- Դժուար խնդիր է, որովհետեւ նորանկախ Հայաստանի առաջին քայլերից ես մասնակցել եմ արտաքին գործերի նախարարութեան գործընթացին, մանաւանդ որ 1991 թուին նախագահի կողմից հրաւիրուել էի ստանձնելու առաջին փոխ-նախարարի պաշտօնը: Իմ վրայ էր դրուած կազմակերպչական եւ կադրային ամբողջ գործը: Մենք կարողացանք հաւաքագրել երիտասարդ ուժեր եւ կարծում եմ որ այսօր ստեղծել ենք համապատասխան դիւանագիտական ցանց՝ չուրջ 30 դիւանագիտական ներկայացուցչութիւններով աշխարհով մէկ: Ի հարկէ կան կադրային կամ ֆինանսական դժուարութիւններ, եւ իմ անձնական կարծիքն է որ մենք պէտք է ունենանք զուտ պրոֆեսիոնալ դիւանագիտական համակարգ: Նոյնիսկ դեպանները լինեն պրոֆեսիոնալներ եւ ոչ թէ քաղաքական նշանակեալներ:

Հ.- Դիւանագիտական աշխատանքի կողքին, քնակաւարար ունիք անձնական հետաքրքրութիւններ այս երկրին մէջ:

Պ.- Մասնագիտութեամբ պատմաբան եմ եւ զբաղւում էի եւ զբաղւում եմ Հայկական Հարցի պատմութեամբ: Ունեմ հարիւրի չափ տպագրուած աշխատութիւններ, յօդուածներ, մենագրութիւն, որոնք վերաբերւում են Անգլիայի քաղաքականութեանը Հայկական Հարցի հանդէպ դեռ 1890-ական թուականներից: Այժմ աշխատում եմ աւելի մեծ գործի վրայ, որ կոչւում է «Հայկական Հարցը եւ Բրիտանական Դիւանագիտութիւնը 1830-1915 թուականներին», որ դառնալու է իմ դոկտորական թէզը:

Ուրեմն մասնագիտական իմաստով ազատ ժամերս նուիրում եմ այդ աշխատանքին, չնայած մեծ զբաղւածութեանս, որովհետեւ Յունաստա-

նից բացի՝ Կիպրոսը, Ալբանիան, Սլովենիան, Խրոաթիան եւ Եուկոսլավիան էլ են մեր պատասխանատուութեան տակ. մի խօսքով՝ Բալկանները:

Հ.- Եթէ ձեր հայրը ողջ ըլլար, ուրախ պիտի ըլլա՞ր ձեր տարած աշխատանքով:

Պ.- Կարծում եմ այո՛:



ՏԻՓՐԱՆ ԱՊԱՍԵԱՆ

Ատենապետ Հ.Բ.Ը.Մ.ի Յունաստանի
Կեդրոնական Մասնաժողովի



Հ.- Յունաստանը տասնամեակներէ ի վեր Բարեգործականի համար եղած է աշխատանքային դաշտ: Այսօր ինչպիսի՞ գործունէութիւն կը ծաւալէ Հ.Բ.Ը.Մ.ը բովանդակ Յունաստանի մէջ:

Պ.- Թուականներով խօսելով, Բարեգործականը Յունաստանի մէջ հիմնուած է 1920-ականներուն, նա՛խ հիւսիսային շրջանին մէջ, ուր կային հայկական գաղթօճախներ: Մասնաւորելով խօսքը Աթէնքի, Բարեգործականը կազմուեցաւ 1925-ի եւ 1930-ի շրջաններուն, երբ աւելի հոծ թիւով գաղթականներ եկան եւ հաստատուեցան, եւ ապա որոշ կղզիներու մէջ եւս տարածուեցան, ինչպէս՝ Քորֆու, Իթիլինի եւ Սիրոս: Այդ օրերուն Բարեգործականի գործունէութիւնը յստակ էր՝ պատսպարել Մեծ Եղեռնէն ազատած որբերն ու գաղթականները, որմէ ետք տեղ տալ աւօրեայ կեանքին: Վերջին տարիներուն Բարեգործականի աշխատանքը ամփոփուած է Աթէնքի եւ Սելանիկի մէջ: Աթէնքի մէջ ունինք մեր մանկապարտէզ-նախակրթարանը, որ մօտ երեքսուն տարիներէ ի վեր անդադրում կը ջամբէ հայեցի դաստիարակութիւն յունահայ նոր սերունդին: Պետական կրթական ծրագրի կողքին՝ մենք կ'ուսուցանենք հայերէն լեզուն, հայոց պատմութիւնը, կրօնքը, եւ, ինչու չէ, հայ երգն ու պարը եւ մշակոյթը:

Հայ դպրոցի կողքին, որպէս գործունէութիւն, Աթէնքի շրջանի մեր վարչական աշխատանքներուն օգտակար կ'ըլլան Տիկնանց Միութիւնը եւ Ծնողաց Յանձնախումբը՝ մատակարարելու բարեսիրական գործերու

համար պէտք եղած գումարները եւ հասնելու դպրոցի նիւթական կարիքներուն: Բացեր՝ որոնք դիւրին-դիւրին չեն գոցուիր եւ բարեբախտաբար կան Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչական Ժողովին բարի տրամադրութիւնները:

Իւրաքանչիւր աշակերտ Միութեան համար կ'արժէ մօտ 3,000 տոլար, իսկ ծնողներուն մասնակցութիւնը կը մնայ չնչին:

Կրթական գործէն անկախ, Միութիւնը վերջին տարիներուն կը փորձէ զարգացնել մարզական շարժումը: Ունինք Ֆութպոլի փոքր խումբ մը, ինչպէս նաեւ պատանիներու յատուկ ուրիշ Ֆութպոլի խումբ մը՝ բաղկացած դպրոցի աշակերտներէն:

Հակիրճ կերպով խօսելով, Աթէնքի Բարեգործականի մեր գործունէ-
ութիւնը վերը յիշուածն է:

Հիւսիսային Յունաստանի մէջ մեր աշխատանքը մասնաւորաբար կը կեդրոնանայ գաղթական հայերու տեղաւորման վրայ: Հոծ թիւով հայեր կու գան եւ յունահայ գաղութի այլ կազմակերպութիւններու հետ գործակցաբար կը փորձենք կարելիութեան սահմաններուն մէջ այդ գաղթական հայերուն տալ անմիջական օգնութիւն եւ շատ անգամ անոնցմէ ոմանց Հայաստան վերադարձի ճանապարհածախսը: Մեր այս բրածը մարդասիրական աշխատանք է:

Բարեգործականը, պէտք է ըսել, միակ կազմակերպութիւնն է Յու-
նաստանի մէջ, որ վերջին տարիներուն անշահախնդիր կերպով եւ առանց պայմաններու կ'օժանդակէ Հայաստանի իշխանութիւններուն, դեսպանատան տրամադրելով թէ՛ նիւթական եւ թէ՛ բարոյական նեցուկ:

Կ'ուզենք աւելցնել նաեւ, այս առթիւ, որ հաւանաբար ուրիշ կազմա-
կերպութիւններ կը հետեւին մեր օրինակին, որովհետեւ կաթիլ-կաթիլ
եղած օգնութիւնները կը վերածուին ծով օգնութեան:

Հ.- Ինչպէ՞ս կը տեսնէք լուսահայ նոր սերունդին հայեցի դաստիարակու-
թեան հիմնահարցը եւ ազգային մեր կառոյցներուն շուրջ բոլորուելու ճիգը:

Պ.- Պէտք է ըսել թէ բոլոր ազգայինները, որոնք նուիրուած են
ազգային աշխատանքին, ունին հեռանկարը նոր սերունդը պատրաս-
տելու ազգային շունչով ու ազգային հետաքրքրութեամբ, եւ եթէ
իսկապէս տոկոսային չափանիշով յաջողութիւնը մեծ ըլլայ, մեր բոլո-
րին ալ ուրախութիւնը այնքա՛ն մեծ պիտի ըլլայ:

Պայմանները այսօր որոշ չափով փոխուած են եւ ակնկալութիւնները
չեն արդիւնաւորուիր հարիւր տոկոսով: Զանք կը թափուի մեր դպրոց-
ներուն մէջ, որպէսզի մեր մանուկներուն եւ պատանիներուն մէջ հայե-
ցի զգացումները զօրացուին դպրոցէն վերջ: Զանք կը թափենք նաեւ

մեր եւ մեզի քոյր ընկերային թէ մշակութային սրահներու մէջ երիտասարդներուն մէջ հայեցի զգացումները արմատաւորելու, սակայն պէտք է ըսել թէ հոսանքն ի վեր թիավարել է եւ ունի իր դժուարութիւններն ու շատ անգամ կը տեսնենք կորուստները: Կորուստներ, որոնք մեզի ցաւ կը պատճառեն, բայց նաեւ աւելի ուժ կու տան, որպէսզի մեր ջանքերը աւելի կազմակերպենք, տարբեր կերպով ի գործ դնենք, որպէսզի նոյն վնասներուն եւ զոհերուն առջեւ չգտնուինք:

Հ.- Անշուշտ ազգապահպանման համար կատարուած ճիգեր եւ ասոնք, որոնց մեծապէս կը հաւատաք: Արդեօք ինչպիսի՞նք նիւթական օժանդակութիւն



Հ.Բ.Ը.Մ.ի կեդրոնը Աթէնքի մէջ:

կը կատարէ Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչական Ժողովը եւ որքանո՞վ գոհ էք այդ օժանդակութենէն:

Պ.- Պատկառելի Կեդրոնական Վարչական Ժողովին մտադրութիւնները եղած էին եւ են այսօր ալ որ իւրաքանչիւր շրջանակ ինքնաբաւ դառնայ: Սակայն ներքին եկամուտները այդ բացը չեն գոցեր: Միութիւնը ունի իր պարտաւորութիւնները եւ տարուէ տարի այդ բացը կը մեծնայ, կը խորանայ: Սակայն պէտք է ըսենք թէ մինչեւ հիմա տարեկան մեր ամբողջ բացերը Նիւ Եորքի Կեդրոնական Վարչական Ժողովը առանց որեւէ դժուարութեան կը գոցէ, անշուշտ միշտ մեր ուշադրութեան յանձնելով թէ պէտք է տեղական մեր միջոցներով ալ եկամուտ-

ներ ապահովուին եւ տեղւոյն գաղութն ալ որոշ չափով մասնակցի գաղութի պէտքերուն: Միութեան պարտաւորութիւնները ի սփիւռս աշխարհի աւելցած են եւ Բարեգործականը պէտք է ամէն տեղ հասնի: Քանի որ յունահայ գաղութը նպաստընկալ վիճակէն այլեւս անցած է, կարծէք հիմա ժամանակն է որ որոշ չափով վերադարձնէ այն, ինչ որ անցեալին ստացած է Բարեգործականէն: Այսօր Յունաստանի մէջ չկայ ընտանիք մը, որ ուղղակի կամ անուղղակի ձեւով օգտուած չըլլայ Բարեգործականէն:

Հ.- Լսած եմք որ ունեցած էք Բարեգործականին կտակուած կալուածներ, որոնց տնօրինումը Բարեգործականի կեդրոնին կողմէ կը կատարուի: Այդ կալուածներէն որո՞նք յունահայերու կողմէ կտակուած են: Դուք առիթ կ'ունենա՞ք օգտուելու անոնցմէ ձեր ազգապահպանման կարիքներուն համար:

Պ.- Յունաստանի մէջ կատարուած կտակները ընդհանուր իմաստով կը պատկանին Բարեգործականի կեդրոնին: Սակայն կեդրոնը մեզի տուած է այդ կտակներու եկամուտները մեր գաղութին անմիջական պէտքերուն համար գործածելու կարելիութիւնը: Այդ կտակները եթէ գոյութիւն չունենային, իրապէս Բարեգործականի Գալփաքեան վարժարանին գոյութիւնը հարցականի տակ կրնար առնուիլ:

Հ.- Վստահաբար որոշ ազգային կեցուածք ունիք որոշ ազգային երեւոյթներու նկատմամբ: Արդեօք Բարեգործականի նման կեցուածքները, օրինակ՝ Ս. Էջմիածնի գերագահութեան ի նպաստ, կը շարունակէ՞ք նոյն ուժգնութեամբ:

Պ.- Բարեգործականի դիրքը եղած է միշտ կանգնիլ թէ՛ Ս. Էջմիածնի եւ թէ՛ մայր հայրենիքի կողքին, մանաւանդ այս վերջին տարիներուն, անկախութենէն ետք, երբ հայրենիքն ալ տնտեսական նոր անկիւնադարձի մը առջեւ կը գտնուի: Բարեսիրական գետնի վրայ, մեր Միութիւնը տարած է իր աշխատանքը եւ հասցուցած է պէտք եղած օգնութիւնը: Ինչ որ կ'ընենք իսկական պէտքերուն դիմաց՝ գրեթէ ոչինչ է:

Հ.- Քիչ առաջ ակնարկեցիք ձեր դպրոցին: Արդեօք այդ դպրոցէն արժանատրներ Մելգոնեան Կրթական Հաստատութիւն կը յաճախե՞ն, ի՞նչ համեմատութեամբ, եւ երբ վերադառնան, կը մասնակցի՞ն Միութեան աշխատանքներուն:

Պ.- Յունահայ գաղութը, պէտք է ըսել, ամենէն բախտաւոր գաղութներէն է, որ կարելիութիւնը ունեցած է Մելգոնեան սան ղրկելու: Ամէն

տարի մեր վարժարանէն որոշ տոկոսով աշակերտներու թիւ մը կ'ուզէ իր երկրորդական ուսումը շարունակել Կիպրոսի Մելգոնեան Հաստատութեան մէջ: Ներկայ թիւերով, յունահայ մեր գաղութէն 38 սաներ կ'ուսանին Մելգոնեանի մէջ: Ըստ մեր դպրոցի բաղդատական ցանկին, աշակերտութեան թիւով Յունաստան կը գրաւէ երկրորդ տեղը:

Վերադարձին, աշակերտներուն մէկ մասը իր մասնակցութիւնը կը բերէ ազգային կեանքին: Կ'ակնկալենք որ այդ տոկոսը բարձրանայ:

Հ.- Հայաստանի ներկայ շրջափակման բերումով մեծ թիով հայեր արտագաղթած են եւ քիչ առաջ յիշեցիք թէ անոնք ընդհանրապէս հիւսիսային Յունաստանի քաղաքներուն մէջ կը գտնուին: Եթէ անոնցմէ ոմանք կարելիութիւնը ունենան մշտապէս հոս հաստատուելու, կը խորհի՞ք որ ազգային կեանքէն ներս աշխատանքի լծուին կամ ներդրում ունենան:



Փերիսթերիի Ս. Աստուածածին Էջմիածնական եկեղեցին:

Պ.- Յունաստանի մէջ այսօր, ըստ անպաշտօն թիւերու, 10-15,000 գաղթական հայեր կան: Այս թիւը չէ՞ յստակացուած եւ շատերը զայն կը գործածեն անձնական հաշիւներով: Հակառակ ատոր, մեծ ջանք կը թափենք, նկատի ունենալով որ այդ հայերէն փոքր թիւ մը օր մը կրնայ վերադառնալ Հայաստան: Մնացեալները կը փորձեն շաղախուիլ յունահայ կեանքին հետ եւ կը ջանանք ստուար թիւով հայ հայրենակիցներ բերել մեր ակումբները եւ մեր անմիջական շրջանակէն ներս, որպէսզի իրենք ալ կամաց կամաց զօրացնեն մեր գործունէութիւնները:

Հ.- Յունաստանի հայութեան թիւը ի՞նչ պատկեր կը ներկայացնէ:

Պ.- Յունաստանի հայութեան թիւը, ըստ բոլոր յարանուանութեանց տոմարներուն, մօտաւորապէս տասը հազար է: Այս թիւը ո՛չ կ'աւելնայ, ո՛չ ալ կը պակսի:

Հ.- Յունաստան մաս կազմելով Եւրոպական Խորհուրդին, վստահաբար տնտեսապէս կ'օգտուի անոր ընձեռած կարելիութիւններէն: Յունահայեր կ'արտագաղթե՞ն դէպի եւրոպական այլ երկիրներ:

Պ.- Արտագաղթը յունահայերու մօտ գրեթէ գոյութիւն չունի այլեւս: Մեր վերջին արտագաղթը 60-ական թուականներուն տեղի ունեցաւ: Յունաստանի տնտեսական վիճակը տարուէ տարի կը բարելաւուի եւ պայմանները, այսօրուան եւ վաղուան հեռանկարները դրական են: Կը կարծեմ թէ յունահայերը բարգաւաճ առօրեայ մը կրցած են ստեղծել եւ արմատաւորուիլ Յունաստանի մէջ:

Հ.- Ծնած էք Յունաստան եւ միշտ ծառայած էք Հ.Բ.Ը.Մ.ին: Ինչպէ՞ս կը տեսնէք Բարեգործականի ապագան այս երկրին մէջ:

Պ.- Փոքր տարիքէս եղած եմ Բարեգործականի աշակերտ, Բարեգործականի անդամ, Մեկգոնեանի սան եւ ապա վարչական: Կը կարծեմ թէ Բարեգործականը շատ ընելիք ունի եւ իր ապագան Յունաստանի մէջ շատ փայլուն կրնայ ըլլալ, քանի որ այսօր կան նիւթական միջոցները եւ Կեդրոնական Վարչական Ժողովի դրական տրամադրութիւնները: Պէտք է վերատեսութեան ենթարկենք բոլոր կառոյցներուն գործելակերպը եւ փորձենք շատ աւելի ճիշդ կերպով ու դրականապէս յառաջ երթալ:



ԶԱԻԷՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Ռ.Ա.Կ.ի «Նոր Աշխարհ» շաբաթաթերթի
խմբագիր

Հ.- «Նոր Աշխարհ» որո՞ւ կը պատկանի, քանի՞ տարիէ ի վեր լոյս կը տեսնէ եւ ուրիշ ի՞նչ կրնաք ըսել ձեր խմբագրած թերթին մասին:

Պ.- «Նոր Աշխարհ»ը լոյս կը տեսնէ 1957-էն ի վեր: Դժբախտաբար, անոր ծնունդը զուգադիպած է Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ պառակտումի դժուարին օրերուն՝ Առաքել Պետրոսեանի նախաձեռնութեամբ: Ինք եղած է առաջին խմբագիրը մինչեւ 1967: Անկէ ետք՝ Յակոբ Վարժապետեանը մինչեւ 1977, իսկ այդ թուականէն





“ΝΟΡ ΑΞΗΑΡ” ΑΡΜΕΝΙΚΗ ΕΒΔΟΜΑΔΙΑΙΑ ΕΦΗΜΕΡΙΔΑ

Է Տարի, քիւ 3(1736), Երկուշաբթի 15 Յունուար 2007 (ΚΩΔ. 3379) 38ο Έτος, αρ.φύλλου 3(1736), Δευτέρα 15 Ιανουαρίου

մինչեւ օրս՝ ես: Թերթը սկիզբը կը պատկանէր յունահայոց թեմական խորհուրդին: Այնուհետեւ, թերթին սեփականութիւնը ստանձնեց Աթէնքի Արարատ Մշակութային Մարզական Միութիւնը եւ այդ օրուէնէ ինծի յանձնուեցաւ խմբագրութիւնը:

Հ.– Հայաստան թերթ է ամբողջութեանը մէջ: Արդեօք նոր սերունդին մօտ հայերէն լեզուին տիրապետումը ի՞նչ մակարդակի վրայ է, որ կը շարունակէք հայերէն լեզուով լոյս ընծայել զայն:

Պ.– Մեր մօտ բախտաւորութիւն է որ աւելի քան երկու հարիւր մեկզոնեանցիներ չըջանաւարտ եղած են: Գաղութը տակաւին հայախօս է եւ հայերէն լեզուով կը կարդայ: Մեզի համար մեծ ողբերգութիւն պիտի ըլլայ այն օրը, երբ թերթը այլեւս չընթերցուի: Մենք յաճախ յունական թերթերու մէջ հայկական հարցին, հայ մշակոյթին կամ Հայաստանի նուիրուած կարեւոր նիւթեր կ'արտատպենք այդ թերթերէն, որպէսզի բոլոր անոնք, որոնք հայերէն լեզուին ծանօթ ու մօտ չեն, կարողանան տեղեակ ըլլալ:

Անցեալին թերթին մէջ յունարէն բաժին մը ստեղծեցինք, բայց վերջը նիւթական պատճառներով չկրցանք շարունակել, որովհետեւ յատուկ խմբագիր կ'ուզէր այդ բաժինը:

Հ.– Այս առիթը կ'ուզենք օգտագործել յունահայ գաղութին մասին տեղեկութիւններ քաղելու: Գիտենք թէ երկփեղկուած գաղութ մըն է, ընդհանրապէս եկեղեցոյ պառակտման պատճառով: 1956-ի եկեղեցական դէպքերուն ճետեանքով երկփեղկուածութիւնը տակաւին զգալի՞ է Յունաստանի մէջ:

Պ.– Ժիշդը՝ գոյութիւն ունի այդ անջատումը: Մենք հաստատ եւ հաւատարիմ կը մնանք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ մեր գործը կը շարունակենք: Մեզի համար փոփոխութիւն մը չկայ: Հայաստան անկախ դարձաւ, բայց տակաւին մենք նոյն տեղը կը մնանք: Սակայն այդ սուր պայքարը կամ եղբայրասպան վիճակն ու վրէժխնդրութիւնը արդէն տարիներէ ի վեր անհետացած են: Մենք իրարու հետ կը տեսնուինք, կը խօսինք, կը համագործակցինք, բայց հոն ուր սկզբունքային կամ գա-

դափարական հարցեր կան, իւրաքանչիւրս մեր ճամբան կը շարունակենք:

Հ.- «Նոր Աշխարհ»ը կը ներկայացնէ նաեւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան խօսքը: Կուսակցութիւնը ի՞նչ վիճակ կը ներկայացնէ գաղութէն ներս եւ քաղաքական ի՞նչ գործ կը կատարէ:

Պ.- «Նոր Աշխարհ»ը սկիզբը Առաքել Պետրոսեանի «Երկիր» թերթէն էր ու իրմէ ետք «Նոր Աշխարհ» անունով եղաւ: Ունէր ռամկավար ազատական գաղափարախօսութիւն: Բայց անիկա յունահայ թեմական խորհուրդի ժամանակ աւելի եկեղեցական բնոյթ ստացաւ:

Այն օրուէն սկսեալ, երբ Արարատ Միութեան անունով սկսաւ լոյս տեսնել, ձեւով մը այլեւս մեր կուսակցութեան պատկանած եղաւ: «Նոր Աշխարհ» մեր կուսակցութեան խօսնակն է եղած յունահայ գաղութին մէջ:

Մենք այսօր աւելի լաւ կազմակերպուած ենք որպէս Ռամկավար Ազատական Կուսակցութիւն: Աւելի հարուստ գործունէութիւն ունինք եւ ատոր փաստերէն մէկը՝ նոր կեդրոնի գնման եւ բարենորոգման իրագործումը, կը վկայէ գաղութէն ներս մեր ներկայութեան մասին:

Հ.- Ի՞նչ են ձեր յարաբերութիւնները Հ.Հ. դեսպանատան հետ:

Պ.- Դեսպանութիւնը հինգ տարիներ առաջ հիմնուեցաւ Յունաստանի մէջ: Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան կողմէ ղրկուած դիւանագէտները հրաշալի գործ կատարեցին: Երբ Պրն. Արման Կիրակոսեանը դեսպան նշանակուեցաւ, իր դիւանագիտական աշխոյժ գործունէութեամբ յարաբերութիւնները այնքան զարգացան, որ ես կրնամ հաստատել թէ աշխարհի մէջ չկայ երկիր մը, որ իր յարաբերութիւնները այնքան ամրացուցած է բոլոր ճիւղերուն մէջ՝ առեւտրական, ընկերային, հաղորդակցական, ուսումնական, մշակութային, քաղաքական եւ յաճախ ալ պաշտպանական:

Պէտք է մոռնանք նաեւ որ Հայաստան եւ Յունաստան դարաւոր կապեր ունին իրարու հետ, որոնք օգնեցին որ հինէն եկող աւանդութիւնները աւելի ամրապնդուին: Այսօր շատ աւելի ամրացած է բարեկամութիւնը երկու ժողովուրդներուն միջեւ:

Հ.- Լսեցինք որ վերջերս օժանդակութիւն մը փոխանցած էք Հայաստանի: Կրնա՞ք այդ ուղղութեամբ քանի մը խօսք ըսել:

Պ.- Ինչպէս գիտէք, Հայաստանի երկրաշարժէն տասը տարի անցած է: 1989-էն մինչեւ 1990, յունահայ գաղութը կրցաւ մօտաւորապէս

900,000 տողար հաւաքել: Այդ հաւաքուած գումարին մեծամասնութիւնը կը պարտինք մեր յոյն եղբայր ժողովուրդին, որ կը ցաւ մեր վէրքերուն կարեկից ըլլալ եւ տալ ո՛չ միայն դրամ, այլ նաեւ սննդեղէն, հագուստեղէն ու այլ օժանդակութիւններ:

Մննդեղէնը եւ այլ օժանդակութիւնները անցան գացին անշուշտ, բայց ինչ որ կը մնայ 230 հազար արժած աղիւս պատրաստող գործարանն է, որ հիմնեցինք յունահայութեան անունով: Ան կը շարունակէ գործել օրական 18,000 աղիւսի արտադրութեամբ, որպէսզի աղէտի շրջանի բոլոր պէտքերը հոգացուին:

Յունաստանը բաժնետէր է գործարանին մէջ եւ ասիկա ըրինք այսպէս, որպէսզի ապահոված ըլլանք գործարանին շարունակականութիւնը:

Անշուշտ գաղութը նիւթական ակնկալութեամբ չըրաւ այդ համաձայնութիւնը, այլ՝ գործարանին գործառնութեան վերահասու ըլլալու եւ գայն քննելու համար:



Մեր գումարէն մնացած էր 300,000 տողար: Ամիս մը առաջ, Հ.Յ.Դ.ն եւ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը երկուքական ներկայացուցիչն երո՞վ Ներեան գացին եւ այդ գումարը յանձնեցին նախագահ Ռոբերտ Քոչարեանին, որպէսզի Լոռիի եւ աղէտի շրջանին մէջ վեց դպրոցներ վերանորոգուին եւ աւելի քան 5,000 աշակերտներ կարենան իրենց դժուարին պայմաններէն դուրս գալ եւ ուսումը շարունակել: Այդ գումարէն բաժին մըն ալ յատկացուեցաւ երկու հիւանդանոցներու վերանորոգման:

Արարատ կեդրոնը, որ ամփոփուած են Ռ.Ա.Կ.ի գրասենեակներն ու «Նոր Աշխարհ» թերթին խմբագրութիւնը:

Հ.- Դուք նաեւ երկար տարիներէ ի վեր տնօրէնն էք Աթէնքի Հ.Բ.Ը.Մ.ի Գալփաքեան վարժարանին: Այս առթիւ կ'ուզեի՞ք հակիրճ տեղեկութիւն տալ Բարեգործականի կրթական գործին մասին:

Պ.- Յունահայ գաղութի մեր շրջանակին համար Հ.Բ.Ը.Մ.ի Գալփաքեան վարժարանը եղաւ փրկութիւն մը: Այս վարժարանը 1957-

էն մինչեւ այսօր, աւելի քան 500 շրջանաւարտ տուած է, որոնցմէ գոնէ 250-ը Մելգոնեան վարժարանը աւարտած են եւ արդէն այդ երիտա-սարդները տարիներէ ի վեր մեր ազգային կեանքի ղեկավարներն են: Այսօր Բարեգործականի վարչութեան անդամներէն ոմանք Մելգոնեան Կրթական Հաստատութեան շրջանաւարտներէն են:

Արարատ Մշակութային Մարզական Միութիւնը արդէն մեծամաս-նութեամբ մելգոնեանցիներէ կը բաղկանայ: Մելգոնեանը աւարտողներ ընդհանրապէս չարունակած են իրենց բարձրագոյն ուսումը եւ այսօր դարձած են բժիշկներ, ճարտարապետներ, դրամատուներու տնօրէններ եւ համալսարանի դասախօսներ ու առեւտրականներ:

Բարեգործականի դպրոցը շատ կարեւոր է Աթէնքի մէջ: Կարեւոր է որ պահուի այս դպրոցը՝ պահելու համար մեր գաղութին ազգային դիմագիծը:

Հո'ն ուր հայկական վարժարան կը գոցուի, գաղութը կը սկսի նօս-րանալ եւ օր մը անպայման կը մեռնի:

Պատմութեան մէջ եւ մօտակայ մեր օրերուն փաստեր են, որ երբ հայերէն լեզուն դադրի գործածուելէ, գաղութները կը մեռնին: Օտարախօս հայերուն հայրենասիրութիւնը մ'իայն ժամանակաւոր կը դառնայ:

Որեւէ խոչընդոտի առջեւ այդ օտարախօս հայերը կը հեռանան ազգային կեանքէ:

Հայ դպրոցն է որ հայութիւնը գաղութներու մէջ իրաւ հայ կը պահէ: Հայ եկեղեցիին կից հայ դպրոցը պէտք է գործէ: Ժամերգութիւնները, արարողութիւնները, պատարագը հայերէն լեզուով են:

Ասոնք կատարելու համար հայերէն լեզուի պէտք ունինք, հայ դպրո-ցի պէտք ունինք:



ՅՈՎԱԷՓ ՊԱՐԱԶԵԱՆ

Խմբագիր Հ.Յ.Դ. «Ազատ Օր» օրաթերթի



Հ.- Յամախ կը տեսակցինք զանազան հայկական համայնքներու պատասխանատուներու հետ, վերաքաղը ընելու տուեալ գաղութի ազգային կեանքին եւ մեր ընթերցողները տեղեակ պահելու անոր արձանագրած յաջողութիւններուն կամ յուսախաբութիւններուն: Գիտենք թէ «Ազատ Օր»ը պաշտօնաթերթն է Հ.Յ.Դ.ի Յունաստանի շրջանակին: Կրնա՞ք տեղեկութիւն տալ թերթին հիմնադրութեան եւ առաքելութեան մասին:

Պ.- «Ազատ Օր» օրաթերթը հիմնուած է 25 Դեկտեմբեր 1945-ին. այսինքն այս տարի կը լրացնէ իր գոյութեան 55-ամեակը: Սակայն պէտք է նաեւ յետադարձ ակնարկով նախապատմութիւնն ալ կատարել, տրուած ըլլալով որ թերթը միայն 55 տարուան գոյութեան իմաստ չունի, այլ Փոքր Ասիոյ ասիւրեանք, երբ առաջին գաղթականները հաստատուեցան Յունաստան, 1923-ին Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէին նախաձեռնութեամբ հիմնուեցաւ նոյն թերթը տարբեր անունով՝ «Նոր Օր» անունով: Երկրորդ Համաշխարհային Պատերազմին, երբ որ գրաւման չըջան մը անցուցինք հոս, Հիթլէրի նացիական բանակները մօտաւորապէս հինգ տարի մնալով՝ յունական բոլոր թերթերը փակուեցան, որոնց կարգին նաեւ «Նոր Օր»ը: Անկախութենէն անմիջապէս վերջ, առաջին թերթը, որ վերահրատարակուեցաւ յունական իրականութեան մէջ, «Ազատ Օր»ն էր, տրուած ըլլալով որ իր խմբագրական եւ տպագրական կազմածները կը պահէր: Ի պատիւ Յունաստանի անկախութեան, նախկին «Նոր Օր»ը, որ սկսած էր հրատարակուիլ 1923-ին, վերադադուեցաւ «Ազատ Օր»:

Հ.- Որքան գիտենք, տասը հազար է Յունաստանի հայութեան թիւը. օրաթերթ մը պահելու չափ ընթերցող ունի՞ք: Չէ՞ք խորհիր որ նիւթական այս գոհողութիւնը եթէ ուրիշ բնագաւառի մէջ կատարէք, աւելի օգտակար գործ մը ըրած կ'ըլլաք:

Պ.- Թերթի գործէն աւելի ուրիշ օգտակար բան չկայ: Մենք կը հաւատանք որ գաղութներու կեանքի հիմնական օղակները կը հանդիսանան թերթերը: Եթէ հայկական թերթերը փակուին, գաղութը կ'անդամալուծուի շատ կարճ ժամանակամիջոցի մէջ: Օղակը միութենական,

կազմակերպչական եւ ընկերային իմաստով, առաւել՝ Հայաստան-Արցախի հետ, եղած է եւ է օրաթերթը: Այնպէս որ հիմնական աշխատանք կը նկատենք մենք ասիկա:

Ճիշդ է թէ գաղութը կը բաղկանայ տասը հազար հոգիէ, բայց կրնանք ըսել որ մենք տակաւին ընթերցողներ ունինք, հայ ընթերցողներ: Սկսած ենք մտածել կամաց-կամաց մեր թերթին մէջ օտարալեզու, այսինքն յունարէն որոշ յօդուածներ հրատարակելու մասին: Անշուշտ գոյութիւն ունին մեր հովանաւորութեան տակ հրատարակուող որոշ շաբաթաթերթեր, ամսաթերթեր կամ երկամսաթերթեր, որոնք ուղղակի յունարէն լեզուով կը հրատարակուին մեր կողմի թերթերու եւ Հայ Դատի յանձնախումբերու կողմէ, բոլորովին տարբեր նպատակով, այսինքն՝ լուսաբանելու համար քաղաքական, գիտական, ակադեմական եւ համայնարանական շրջանակները:


Բայց մեր թերթը տակաւին հայագիր է, մեր երիտասարդութիւնը հայախօս է, գէթ այն շրջանակը, որ մաս կը կազմէ միութենական եւ կազմակերպչական մեքենային եւ տակաւին դիւրութեամբ կը կարդայ:

Հ.- Կը լսենք թէ Հայաստանէն եւ նախկին Սովետական Միութենէն մեծ թիւով արտագաղթողներ կու գան Յուանստան: Անոնք արդեօք հայ կեանքին մասնակցութիւն կը բերե՞ն:

Պ.- Կարելի է ըսել թէ ընդհանրապէս մաս չեն կազմեր, ինչպէս նաեւ դերակատար չեն: Սակայն իրենց հետաքրքրութիւնները շատ մեծ են եւ գիտենք թէ նախկին Խորհրդային Միութեան օրերէն իսկ հայ ժողովուրդը ընդհանրապէս կը յատկանշուէր իբրեւ ընթերցասէր ժողովուրդ: Ընթերցասիրութիւնը ժառանգած եւ իր հետ բերած է:

Մենք ակումբներու, եկեղեցիներու մէջ, ո՛չ միայն Աթէնքի, շրջակայքի եւ այլուր, նաեւ հիւսիսային Յունաստանի մէջ, ճրի թերթ կը տրամադրենք. մօտաւորապէս 300-500 թերթ օրական ճրի՝ միայն հայաստանաբնակ ու ժամանակաւոր գաղթականներու համար, որոնք ամէն օր հերթի կը սպասեն ակումբներու առջեւ, այդ թերթը կ'առնեն, կը կարդան եւ կը փոխանցեն նաեւ իրենց դրացի ընտանիքներու: Կարելի է ըսել թէ մեր թերթը, առնողներէն զատ, կը փոխանցուի 300-400 ընտանիքներու:

Այդ հայերուն, չեմ գիտեր ի՛նչ պատճառներով (գիտեմ պատճառները, բայց այս կարճ հարցազրոյցի ընթացքին ժամանակը չէ, քանի կրնան խնդրական ըլլալ), շատ փոքր մէկ տոկոսը մասնակից եղած է մեր ազգային կեանքին: Մէկ փոքր տոկոսն է որ իր զաւակները կ'ուղարկէ մեր վարժարանը եւ կը մասնակցի գաղութային կեանքին:



Պատճառներէն մէկը հաւանաբար այն է, որ իրենք կ'ապրին վախի մէջ, եւ կը կարծեն թէ հայկական կեանքի մասնակցելով կրնան ուղղակի իշխանութիւններու կողմէ յայտնի դառնալ եւ վերադարձուիլ։ Բայց յունական իշխանութիւնները հիմա գաղթականներու հանդէպ բարեացակամ են, որոնց ընդհանուր թիւը մօտ 800 հազար է, զանազան ազգերու պատկանող։ Ընդհանուր դասաւորման գործընթաց մը ստեղծուած է, որպէսզի կարենան հոս մնալու հնարաւորութիւններ ստեղծել։ Կը յուսամ որ հոս մնալով ժամանակի ընթացքին կը մասնակցին մեր միութենական աշխատանքներուն եւ կ'օգտուինք նաեւ իրենց ունակութիւններէն։

Հ.- Լիբանանցի՞ Էք դուք ծագումով։

Պ.- Ոչ, բայց Լիբանան ուսանած եմ։

Հ.- Հայաստանի նախկին իշխանութիւններուն օրով ընդդիմադիր էր Հ.Յ. Դաշնակցութիւնը։ Արդեօք ձեր ընդդիմադիր ըլլալը պատճառ դարձա՞ւ որ սփիւռքի թէ հայրենիքի հայութեան մօտ ձեր ժողովրդակաւութիւնը կորսնցնէք։

Պ.- Կրնամ այ՛ո՛ պատասխանել։ Սակայն մենք գիտենք թէ նախկին իշխանութիւնները ձախողած իշխանութիւններ են։ Այսօր կը փաստուի որ շատ աւելի վնաս պատճառեցին հայ ժողովուրդին, քան թէ օգուտ։ Թալանեցին ամբողջ երկիրը եւ ապագային կը յուսամ որ դատաւարութիւններու ճամբով պիտի կարենայ նաեւ արդարութիւնը վերահաստատուիլ։

Սկիզբի շրջանին, շատ, շատ փոքր խմբակներ միայն գիտել տուին մեզի որ հաւանաբար իշխանութիւն եւ պետութիւն երկու տարբեր բաներ են։ Անշուշտ մեզի պէս 108 տարուան փորձառութիւն ունեցող կուսակցութիւն մը շատ լաւ կրնայ զանազանել իշխանութեան եւ պետութեան միջեւ այն տարբերութիւնը, որ սակայն նաեւ իր սկզբունքներուն եւ համեմատութիւններուն միջեւ ալ չյարգուեցաւ նոյնինքն, Հայաստանի պետութեան եւ իշխանութիւններուն կողմէ։ Փաստօրէն, ժողովուրդը մեզի հետեւեցաւ, մեր կողքին եղաւ, չզօրակցեցաւ Հայաստանի իշխանութիւններուն, չինկաւ իրենց թակարդներուն մէջ, եւ

անոր ապացույցը այն է, որ ժողովուրդը ընդհանրապես կը հաւատայ մեր խօսքի արժանապատուութեան եւ կը հետեւի մեզի:

Անհատներ եւ շատ-շատ փոքր շրջանակներ ծառայեցին այդ իշխանութիւններուն եւ այդ շրջանակները այսօր ժողովուրդի արհամարհանքին արժանացած են: Ժողովուրդը կը շարունակէ հետեւիլ մեզի:

Հ.- Հիմա որ իշխանութիւնները բարի յարաբերութիւններու մէջ են Դաւնակցութեան հետ, կը խորհի՞ր թէ անոր բարեկապատ ազդեցութիւնը նաեւ Յունաստանի եւ այլ գաղութներու օգտակար պիտի ըլլայ:

Պ.- Նախ ըսեմ որ մենք ժողովուրդին հետ ենք եւ ոչ միայն իշխանութիւններուն: Մենք ընդհանրապես եղած ենք ժողովուրդի շահերու պաշտպան եւ ոչ թէ իշխանութիւններու:

Հ.Յ. Դաշնակցութիւնը այսօր իշխանութիւնն է: Հաւանաբար կան դաշնակցական հաւատամքի ծառայող երկու նախարարներ եւ կամ մարզպետներ, սակայն մենք պարզապէս կը զօրակցինք իշխանութիւններու գործին:

Իշխանութիւնն էնք, իշխանութեան հետ էնք, ժողովուրդի զաւակներուն հետ ենք եւ յաճախ կը գրենք այն բոլոր յոռի երեւոյթներու մասին, որ կը յատկանշեն այսօրուան իշխանութիւնները:

Գաղութներու մէջ այս հաղորդակցական փոփոխութիւնը կը դիւրացնէ նաեւ որ սփիւռքահայ գաղութները աւելի կապուին Հայաստանի օգնութեան նպատակներուն: Վերջերս տակաւին մենք, Հ.Յ.Դ.ի եւ Ռ.Ա.Կ.ի գործակցութեամբ, 1988-ի Դեկտեմբերին հիմնուած Հայաստանի Երկրաշարժի Կոմիտէին նախաձեռնութեամբ մնացած 300,000 տոլարի գումարը յանձնեցինք Հայաստանի իշխանութիւններուն, որպէսզի տրամադրուի Լոռիի շրջանի բուժարաններու, հիւանդանոցներու եւ դպրոցներու վերաշինութեան նպատակին:

Հ.- Հայկական վարժարաններ վստահաբար կը գործեն ձեր կուսակցութեան հովանաւորութեան ներքեւ: Գոհացուցիչ կը գտնէ՞ք այդ վարժարաններէն շրջանաւարտներուն մասնակցութիւնը հայկական կեանքին:

Պ.- Նախ ըսեմ որ Հ.Բ.Ը.Մ.ի Արթաքի Գալփաքեան մանկապարտէզ-նախակրթարանը գոյութիւն ունի, իսկ Հայ Կապոյտ Խաչի հովանաւորութեան տակ կը գործէ Ֆիքսի շրջանի մեր մանկապարտէզ-նախակրթարան-միջնակարգը, Գոգինիոյ Զաւարեան շրջանին մէջ կը գործէ մանկապարտէզ-միջնակարգը, ինչպէս նաեւ հիւսիսային Յունաստանի Թեսաղոնիկէ (կամ Սալոնիկ) քաղաքին մէջ կը գործէ ծաղկոց վարժարան մը շուրջ 80 աշակերտներով: Նաեւ հայակրթութեան աշխատանք

կը տարուի Թրակիոյ եւ Մակեդոնիոյ շրջաններու զանազան նահանգներու մէջ մասնակի շաբաթօրեայ վարժարաններով:

Աշակերտներու թիւը գոհացուցիչ է այն իմաստով որ հայախօս են ընդհանրապէս միութիւններու մօտ գտնուող ընտանիքներու զաւակները, որոնք կը յաճախեն այս վարժարանները եւ այդ վարժարաններէն ստացած իրենց դաստիարակութեան շնորհիւ կը կազմեն մեր ազգային կեանքի մեքենային շարժման ուժը:

Մեր վարժարաններէն շրջանաւարտ եղող տղաքը կը շարունակեն իրենց ուսումը յունական միջնակարգ կամ երկրորդական վարժարաններու մէջ, ուր կարելի է ըսել թէ մակարդակը շատ գոհացուցիչ է, որովհետեւ մեծ թիւով աշակերտ մուտք կը գործէ, ինչ որ վկայութիւն է մեր վարժարաններէն ներս անոնց ստացած դաստիարակութեան լաւ որակին:

Միութենական կեանքին մէջ ալ այն նոյն տղաքն են որ կորիզը կը հանդիսանան: Պատանեկան, երիտասարդական, սկսնակական, պատգէթպոլի, ֆութպոլի, երգչախումբի, կուսակցութեան, Հայ Դատի, թէ ազգային եկեղեցական շարժումներու մէջ նոյն այդ տղաքն են, որ շրջանաւարտ են մեր վարժարաններէն:

Հ.- Երկար ատենէ ի վեր եկեղեցին տխուր վիճակ մը կը պարզէ իր պառակտուած վիճակով: Ե՞րբ եւ ի՞նչ պարագաներու տակ կը խորհիք թէ Յունաստանը պիտի ունենայ մէկ թեմ:

Պ.- Եկեղեցին պառակտուած չէ: Մեր եկեղեցւոյ բոլոր մասունքները եւ միաւորները կոչուած են իւրաքանչիւրը իր դերը խաղալու: Ս. Էջմիածինը իր դերակատարութեամբ իբրեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւն եւ պատմական աթոռ ունի իր դերակատարութիւնը:

Այս ուղղութեամբ քայլեր առնուած են, երկու կաթողիկոսները յաճախ իրենց հանդիպումներուն ընթացքին օրակարգի վրայ կը բերեն այս խնդիրը: Ուրիշ հարց մըն է որ պիտի դասաւորուի կաթողիկոսներուն եւ անշուշտ ժողովուրդին կողմէ: Այսինքն՝ ընտրութիւններու ճամբով: Մենք կը հաւատանք ժողովրդավարական դրութիւններու, երբ որ այդ հարցը հասուննալու է: Կը տեսնեմ թէ արդէն ընդհանրապէս կը հասուննայ եկեղեցական հարցը, սակայն առաջնահերթութիւններու կարգով եկեղեցւոյ դերակատարութիւնը պէտք է բնորոշենք. առաջնահերթութիւններո՞ւ եւ ոչ թէ թեմական հարցերով:

Եկեղեցականները կրնան ունենալ իրենց հարցերը, սակայն ազգային եւ քաղաքական դերակատարութիւնն է որ հիմնականօրէն կը մտահոգէ մեզ:

Արդէն այս թեմական հարցերը, իմ անձնական տեսակէտովս, տարիներու ընթացքին սկսած են տԺգունիլ, որովհետեւ նոր գաղութներ հիմնուած են ո՛չ միայն սփիւռքի, այլ նաեւ նախկին Խորհրդային Միութեան հանրապետութիւններուն մէջ եւ եկեղեցականներ չկան բաւարար, որպէսզի կարելի ըլլայ նոր եկեղեցիներ բանալ եւ Ժողովուրդը իրենց շուրջ համախմբել:

Հիմնականօրէն էջմիածին եւ Անթիլիաս պէտք է դերակատար ըլլան զիրա՛ր ամբողջացնելու, որպէսզի երբ հոն ուր մէկը չի կրնար հասնիլ, հասնի ուրիշը, որպէսզի նոր եկեղեցիներ բացուին:

Այնպէս որ երբ կ'ականարկէի առաջնահերթութիւններու հարցին, ինծի համար շատ աւելի հիմնական է որ եկեղեցիներ բացուին, անոնք օժտուին հոգեւորականներով, եւ կարենան Ժողովուրդը առաջնորդել: Մնացեալ, թեմական հարցերը, որոնց դուք ականարկեցիք, նեղ իմաստով ես կը կարծեմ թէ առաջնահերթութիւններու կարգով պէտք չէ դրուին: Անձնական տեսակէտ է: Իսկ անոնց դասաւորումը պիտի կատարուի կաթողիկոսներու ճամբով եւ անշուշտ գաղութներու մէջ թեմական մարմիններու ճամբով:

Հ.- Այս գաղութին մէջ բաւական լուրջ հարց եղած է թեմական հարցը. մինչեւ իսկ ծայրայեղ միջոցներու դիմումն է, նոյնիսկ՝ պետական միջամտութիւններու: Վերքը սպիւնալ սկսած է, կ'ըսէք: Ի՞նչ կը խորհիք Յունաստանի պարագային առանձնապէս:

Պ.- Ես քիչ առաջուան արագ վերլուծումին մէջ արդէն արտայայտուեցայ թէ տխուր դէպքեր պատահած են: Բացատրութիւն ունին այդ դէպքերը. կամայականութիւն չէին, պատահական չէին, բան մը բրած ըլլալու համար չէր որ տեղի ունեցած էին: Բոլորս լաւ գիտենք թէ այդ օրերուն համայնավար իշխանութիւններու հովանիին տակ կամ թելադրութեան տակ ինչ դեր վերապահուած էր Ս. էջմիածնի:

Այդ դերակատարութիւնը փոխուած է: Ես կը հաւատամ որ Ժամանակները կը հասուննան, ազգային մեր հարցերն ալ սկսած են հասուննալ, միասնականութեան ընդհանուր մթնոլորտ մը սկսած է զարգանալ մեր Ժողովուրդի ղեկավար տարրին մօտ, ինչ որ շատ դրական է եւ յուսադրիչ:

Մեր ղեկավարները, ըլլա՛ն անոնք կուսակցական, ազգային կամ կրօնական, սկսած են հայ Ժողովուրդը մտահոգող հարցերը դիտել քիչ մը աւելի համապարփակ ձեւով, աւելի իրապաշտ ոճով եւ այդ իրապաշտութեան ընդմէջէն է որ մեր լուծումները պիտի գտնենք:



Աթէնքի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, որ կը մնայ գրաւեալ
անթիլիասականներու կողմէ:

Հ.- Ազգային տօնակատարութիւններու կամ սգատօնի առիթներով գործակցութիւն մը կա՞յ գաղութի զանազան կազմակերպութիւններուն մէջէն:

Պ.- Ժամանակին շատ դժուար էր ունենալ այդ մթնոլորտը, որովհետեւ մեզ բաժնող կէտերը աւելի շատ էին: Հիմա ես կը հաւատամ թէ մեզ միացնող կէտերը շատ են: Մենք իբրեւ խելացի մարդիկ պէտք է մտածենք մեզ միացնող կէտերու մասին: Վերջին տարիներուն նախաձեռնութիւններ կատարուած են ցեղասպանութեան ճանաչման ուղղութեամբ. միասնական քաղաքական ձեռնարկներ կը կազմակերպուին, նախկին սառը հալած է: Սկսած ենք տղոց հետ լեզու գտնել: Գործակցութիւն գոյութիւն ունեցած է մանաւանդ երկրաշարժի հարցով: Կը կարծեմ թէ լաւ ճամբու մէջ ենք եւ ասիկա խօսքի ըսելու ձեւ չէ. անկեղծ համոզումի հարց է, որովհետեւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան ընկերներուն հետ մենք յաճախ զանազան առիթներով կը տեսնուինք, հոն ուր պէտք է գործակցիլ՝ կը գործակցինք: Մթնոլորտը շատ լաւ է, բարեկամական է, ընդունելի է. եւ ժամանակը մնացեալ հարցերու լուծումները պիտի բերէ:

Հ.- Հայաստանի Հանրապետության դեսպանատունը Յունաստանի մէջ կը գործէ եւ մենք կը հետեւինք Պրն. դեսպանին կատարած սքանչելի գործին, մանաւանդ որ գետինը պատրաստ էր արդէն հայ-յոյն ժողովուրդներու դարաւոր աւանդական սերտ կապերուն: Ինչպէ՞ս կը գնահատէք դեսպանատան աշխատանքը քաղաքական առումով:

Պ.- Քաղաքական իմաստով, գործակցութիւն ունեցած ենք անցնող տարիներու ընթացքին: Բարեբախտութիւն է որ Յունաստանի մէջ գտնուող դեսպանատունը բարեկամ երկրի մը մէջ կը գործէ:

Յունաստանը չատ լաւ տրամադրուած է Հայաստանի նկատմամբ: Գործակցութեան բազմաթիւ պայմանագիրներ ստեղծուած են անցնող երեք տարիներու ընթացքին քաղաքական, առեւտրական, արտադրութիւններու եւ զանազան այլ մարզերէ ներս: Այս յարաբերութիւնները հետզհետէ պէտք է զարգանան, որովհետեւ Հայաստանի եւ Յունաստանի մէջ ձեռնտու միջնորդող գոյութիւն ունի եւ առաւելագոյն չափով մենք պէտք է օգտուինք այն հնարաւորութիւններէն, որ Յունաստանի պէս բարեկամ երկիր մը կրցեր է մեզի մօտենալ: Բաւական գործ եղած է, բայց բաւական գործ կայ տակաւին ըլլալիք: Եւ կը կարծեմ որ լաւ ընթացքի մէջ ենք:

«ՆՈՐ ՕՐ», 7 Օգոստոս 1999

«ԶԱՐԹՕՆՔ», 13-20-27 Նոյեմբեր 1999

«ՆՈՐ ՕՐ», 5 Փետրուար 2000



Թրքական գրաման տակ գտնուող Նիկոսիոյ երբեմնի Հայոց թաղը, ուր քով քովի կը գործէին մեր երեք կուսակցութիւնները:

ՆԻԿՈՍԻԱՆ ԻՐ ՀԱՅՈՒԹԵԱՄԲ

Պէշրութիւններու համար մի՛շտ ալ Կիպրոսը հմայիչ վայր մը նկատուած է. նախ՝ որպէս քաղաքակրթութիւն այնքա՛ն մօտիկ է ան աշխարհագրականօրէն եւրոպական մշակոյթին, երբ շրջապատուած ես արաբական ու իսլամական մշակոյթներով. ապա՝ մանաւանդ Բարեգործականի վարժարաններ յաճախող ուսանողներու համար, երբ ուսուցիչներու մեծ մասը շրջանաւարտ կամ նախկին ուսուցիչներ եղած են Մելգոնեան Կրթական Հաստատութեան: Վահէ-Վահեան, Արա Թովմեան, Գերսամ Ահարոնեան, Համբարձում Գումրուեան, Զարեհ Մելքոնեան, Պօղոս Մատուռեան, Աբրահամ Գատեան..., բոլորն ալ գովքը ըրած են այդ հաստատութեան:

Կիպրոսի վերամիացման առնչութեամբ ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի նախաձեռնութեամբ ներկայացուած նոր համաձայնութեամբ մը, աւելի քան երեսուն տարիներէ ի վեր կղզիին յունաբնակ ու թրքաբնակ


քաժիններու փակ մնացած սահմանները վերաբացուած էին: Այդ օրերուն կը գտնուէի Միջին Արեւելք եւ հեռաձայնեցի ընկեր Ասատուր Տէվլեթեանին, հաղորդելով որ կը փափաքիմ Մակարայ վանք այցելել: Ըսաւ թէ իրեն ալ աոիթ մը կ'ըլլայ այս միասին երթալու վանք, որ գրաւեալ կը մնար թուրքերու կողմէ: Կատարեցինք այդ ուխտագնացութիւնը, որուն մասին գրած եմ առանձին ճամբորդական ճօթեր:

Օգտուելով աոիթէն, Ասատուրին ըսի թէ մեր մամուլին համար կ'ուզեմ պատրաստել «Նիկոսիան Իր Հայութեամբ» տեսակցութիւններու շարք մը, մանաւանդ որ այդ օրերուն Մելգոնեանի հարցը մեծապէս կը զբաղեցնէր ազգայիններ եւ նախկին մելգոնեանցիներէ շատեր, մեր մամուլին մէջ թեր ու դէմ յօդուածներու երեւումով: Ասատուրը, որ առեւնապետն է Ռ.Ա.Կ.ի տեղւոյն ակումբին, նպատակայարմար գտաւ ծրագիրս:

Կիպրոսի գաղութը կազմուած է միջին դարերուն: Ունի իր առաջնորդաբանը Ստյ Կիլիկեան Աթոռին կապուած: Ունի վանքեր, գերեզմաններ, որոնց թուականները կը հասնին մինչեւ 14-րդ դար: Յետ Եղեռնի, հիմը դրուած է Հ.Բ.Ը.Մ.ի Մելգոնեան Հաստատութեան, որ երկար ժամանակ ծառայած է հայ դպրութեան՝ հասցնելով սերունդներ: Ունի այլ վարժարաններ: Հանդարտ գաղութ մը ըլլալով հանդերձ, վերջին տարիներուն փոթորկալից շրջան մը կը բոլորէ Մելգոնեանի հարցին առնչութեամբ:

Ընկեր Ասատուր զիս կ'առաջնորդէ ամէն տեղ: Ասատուրին հետ բարեկամութիւնս կը սկսի Պոսթոնէն, երբ գրեթէ նոյն ժամանակ հասանք Ուոթըրթաուն. ինք որպէս «Պայքար» օրաթերթի օգնական խմբագիր ու ես՝ Թ.Մ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան վարիչ քարտուղար: Բաժնեցիք միասին առաջին օրերու բոլոր դժուարութիւնները, առանց յուսահատելու: Զիրար քաջալերեցինք, իրարու օգնութեան հասանք, Ամերիկայի մեր կեանքը կարգի դնելու համար: Երկա՛ր գիշերներ լուսցուցած ենք ազգային ու մանաւանդ կուսակցական մտահոգութիւններէ թելադրուած, նոյնիսկ միասին հիմնած ենք գաղթական երիտասարդներէ բաղկացած «Արտակ Դարբինեան» Ակումբը: Ու մեր բարեկամութիւնը այսպէս շարունակած ենք, մանաւանդ կուսակցութեան ներքին պառակտումի տխուր օրերուն, երբ օրինականութեան պահպանումին համար աշխատած ենք միասին: Ասատուր ունի կոռ տրամաբանութիւն, խիզախ գրիչ, համոզիչ լեզու, սակայն աւելի արդարացուցած պիտի ըլլար իր բնատուր տաղանդն ու զարգացումը՝ եթէ աւելի՛ն արտադրէր ու տար յօգուտ մեր կուսակցութեան գաղափարախօսութեան:

ՎԱՐՈՒԺԱՆ ԱՐԲ. ՀԵՐԿԵԼԵԱՆ
Առաջնորդ Հայոց Կիպրոսի



Հ.- Շուտով, այս Մայիսին, Կիպրոսը պիտի միանայ Եւրոպական Միութեան: Ի՞նչ ճեղքանկարներ կը բացուին ձեր գաղութին առջեւ, մ'անաւանդ որ տնտեսական նոր զարգացում մը կը սպասուի այս միութեամբ: Ինչպէ՞ս պիտի դիմաւորէք այս միացումը Եւրոպային, մանաւանդ երիտասարդներու պարագային, երբ գործի նո՛ր կարելիութիւններ կրնան բացուիլ:

Պ.- Սկսելով վերջին մասէն. եթէ պատեհութիւն պիտի տայ Եւրոպա մտնելը, որ երիտասարդութիւնը գրաւենք այս կողմերը, շատ պիտի զարմանամ, որովհետեւ մեր երիտասարդները սկսած են պակսիլ. մէկ խօսքով թեմը սկսած է ծերանալ: Թէ ի՞նչ տնտեսական վերելք կամ հակավերելք կը բերէ, ժողովուրդը արդէն չփոթի մէջ է:

Մտավախութիւն կայ որ սղաճ կրնայ ստեղծել այս միութիւնը եւ նոր տնտեսական տագնապ կրնայ ստեղծել Կիպրոսի մէջ: Այս մասին շատ չեմ հետաքրքրուած, որովհետեւ շատ գաղափար չունիմ: Բայց, վստահաբար մեր Կիպրոսը աւելի ապահով պիտի զգայ ինքզինքը, ըստ երեւոյթին մասնակցելով Եւրոպական Խորհուրդին: Թերեւս ասիկա պատճառ մը ըլլայ որ մեր ժողովուրդը աւելի կապուի այս երկրին: Գիտեմ որ մեր ժողովուրդը չէ կապուած... մենք Զարդերէն առաջ ունեցանք գաղութներ, ուր փոխանակ պահելու մեր մշակոյթն ու աւանդութիւնները, շատ անգամ ձուլուած ու կորսնցուցած ենք մեր ինքնութիւնը:

Փոքր գաղութներ դժբախտ կացութեան մէջ են, մէջը ըլլալով Կիպրոսը: Նոր արիւն չի գար եւ խառն ամուսնութիւններով ու երիտասարդութեան մեկնումով գաղութը սկսած է տկարանալ եւ ծերանալ:

Հ.- Երբ ժողովուրդ կ'ըսէք, ի՞նչ թիւի ակնարկութիւն կ'ընէք:

Պ.- Հոս, մօտաւորապէս 3000 հայեր կ'ապրին, հայաստանցիներու հետ: Արձանագրուած մեր տոմարներուն մէջ ունինք 2500 հայեր:

Հ.- Անշուշտ, Կիպրոսը, բաղդատմամբ Միացեալ Նահանգներու, չունի երկու թեմի անպատեհութիւնը: Մենք հոն ունինք երկու պատկանելութիւն, էջմիածնական կամ անթիլիասական: Կիպրոսը աւանդականօրէն մ'իայն

Կիլիկեան թեմին կը պատկանի: Ազգային մեր բոլոր հոսանքներուն առջեւ
բա՞ց է Կիպրոսի առաջնորդարանը:

Պ.- Բոլորին համար բաց է եղած եւ է: Ամէն այցելու հոգեւորական
էջմիածնական թեմէ մը, երբ եկած է, անպայմանօրէն պատարագած է
եւ մենք պատարագին Ամենայն Հայոց Հայրապետին անունը կը յիշենք:

Հ.- Արդեօք մեր կողմի ազգայիններ եկեղեցական ձեր իշխանութիւն-
ներուն կը բերե՞ն վարչական մասնակցութիւն:

Պ.- Մեր դժբախտ երեւոյթներէն մէկը ա՛յն է, որ մինչեւ հիմա
ակումբներ կամ կողմեր կ'ուզեն իշխանութեան տիրանալ եւ մենք իշ-
խանութեան մէջ կ'ունենանք անձեր, որոնք եկեղեցիով հետաքրքրուած
չեն, ժամանակ չունին եկեղեցւոյ գործերուն տրամադրելու: Եկեղեցին
վերջապէս մեծամասնաբար եկեղեցականներուն ձեռքն է: Իմ փափաքս
է, որ կողմերը, կուսակցութիւնները կամ ակումբները, որոնցմէ շատ
ունինք եւ այդքան ունենալն ալ պերճանք է, իւրաքանչիւր կողմ իր
ներկայացուցիչը ունենայ մեր թեմական կեանքին մէջ եւ մնացեալ 2-
3 անդամները ըլլան եկեղեցին սիրող, եկեղեցիին կողքին կանգնող
ազգայիններ, որովհետեւ ակումբը երբ կ'ուզէ մարդ բերել, անպայ-
մանօրէն միայն իր մարդիկը պիտի ջանայ բերել: Թէեւ Կիպրոսի մէջ
չեմ խորհիր որ շատ չէզոք մարդիկ կան, բայց կան ազգայիններ, որոնք
կապուած են եկեղեցիին եւ որեւէ կողմէ կախեալ չեն. այսպիսի մար-
դիկ ալ պէտք է ըլլան ազգային եկեղեցական կառույցներուն մէջ, որ-
պէսզի եկեղեցիին գործերը սահուն կերպով ընթանան:

Հ.- Առաջնորդարանը, բացի հոգեւոր սնունդ ջամբելէ, արդեօք ուրիշ
մշակութային, կրթական, ընկերային, երիտասարդական եւայլն գործունէու-
թիւն ունի՞:

Պ.- Ի տարբերութիւն այլ գաղութներու, ըսեմ որ 1960-էն ի վեր մեր
կանոնադրութեան մէջ եղող ուսումնական խորհուրդը լուծուած է,
գոյութիւն չունի: Նարեկ դպրոցը մեր եկեղեցւոյ կողքին չէ, ինչպէս
նաեւ մեր միւս գոյգ համայնքներու՝ Լառնաքայի եւ Լիմասոլի մէջ մեր
հովանիէն դուրս է: Լա՛ւ երեւոյթ չէ: Առաջնորդարանը խօսք չունի
դպրոցէն ներս հոգեւոր թէ ազգային կրթական գործին մէջ: Ես կը
տեսնեմ անպատեհութիւն: Այլապէս եկեղեցին իր հոգեւոր գործը կը
տանի, ծիսակատարութիւնները կը կատարէ: Ունինք նաեւ հոգեւոր,
մշակութային ձեռնարկներու շարք մը. դասախօսութիւններով թէ
այլապէս մեր ժողովուրդին մէջ արծարծ կը պահենք մեր արժէքները:

Հ.- Կիրակնօրեայ վարժարաններու դրութիւնը կը պահէ՞ք կղզիէն ներս:

Պ.- Ունինք մեր երեք քաղաքներուն մէջ ալ «չաբաթօրեայ» վարժարաններ, ուր մեր գաղութի երախաներուն կէսէն աւելին կը յաճախեն: Ուսուցչուհիները կամաւոր տիկիներ են եւ քահանայ հայրերու գլխաւորութեամբ այդ գործը կը կատարեն: Փորձառու ուսուցչուհիներ են: Անկախ ասկէ, կ'աշխատինք պատրաստել նոր երիտասարդներ եւ կաթողիկոսարանի նախաձեռնութեամբ կը ղրկենք մայրավանք, հոգեւոր կրթութեան պատրաստութեան համար: Անցեալ Դեկտեմբերին երկու երիտասարդներ ղրկած էինք:

Հ.- Քանի՞ եկեղեցիներ կը գործեն ձեր թեմէն ներս:

Պ.- Երեք եկեղեցիներ, իրենց ծխատէր քահանայ հայրերով:



Դէպի Մակարայ վանք:

Հ.- Այսօր այցելեցի թրքական բաժնի մէջ գտնուող Մակարայ վանք եւ տխրութեամբ տեսայ դարաւոր մեր վանքին վիճակը: Կրնա՞ք այդ վանքին ու կալուածին մասին տալ մանրամասնութիւններ: Նաեւ՝ երբ Կիպրոսի միութիւնը ըլլայ յոյներու եւ թուրքերու միջեւ, ի՞նչ կը նախաձեռնուի վանքին համար:

Պ.- Ինչպէս դուք տեսաք, Մակարայ վանքը գրեթէ քանդուած է: Եւ քանդուած է ոչ թէ բնութեան կողմէ, այլ գիտակցաբար թուրքերուն

կողմէ: Հիմա, Քոֆի Անանի ծրագրին մէջ սրբատեղիներու մասին յատուկ ակնարկութիւն կայ, որ երեք տարիէն սրբատեղիները եւ ոչ թէ սրբատեղիներու կալուածները պէտք է իրենց տէրերուն վերադարձուն: Ատոր մէջ կ'իյնան միւս կողմի մեր Ս. Աստուածածին եկեղեցին եւ Մակարայ վանքին մ'իայն շրջափակը:

Ֆամակուսթայի Ս. Աստուածածին Կանչուոր փոքրիկ մատուռը, որ ամենէն հինը պէտք է ըլլայ, այդ վանքը, այսօր գոյութիւն չունի: Պզտիկ մատուռ մը կայ, որուն վրայ հայկական արձանագրութիւններ չկան, գրեթէ փճացած է, ես գացի տեսայ: Այս պզտիկ մատուռը անգլիացիները մեզի վարձու տուած էին հարիւր տարիով, փոքր խորհրդանշական գումարով մը, որպէսզի օգտագործենք որպէս եկեղեցի: Ասիկա անգլիացիներուն օրով եղած է, որովհետեւ հնաբանական ցանկին մէջ կ'իյնայ եւ կարելի չէ սեփականացնել այդ կալուածը:

Հ.- Իսկ Մակարայ վանքին կալուածը, որ տեսայ ընդարձակածաւալ բլուրէն մինչեւ ծովափը կարծես:

Պ.- Մակարայ վանքը մեծ հողամաս է: Նաեւ 20-էն աւելի կալուածներ ունինք հին քաղաքին եկեղեցիին շուրջ, ինչպէս նաեւ չէնքեր, որոնց օրինական կալուածաթուղթերը ունինք: Այդ մասին ակնարկութիւն կայ դարձեալ Քոֆի Անանի ծրագրին մէջ: Անոնք կ'ամ կրնանք ծախել իրենց, այսինքն՝ թուրքերուն, եւ կ'ամ կրնանք երկար ատենով վարձու տալ կամ փոխանակել այլ կալուածի դիմաց: Այդպէս է նախատեսութիւնը: Բայց մինչեւ որ այս ամէնուն շուրջ յստակ համաձայնութիւն գոյանայ, ոչինչ կարելի է նախատեսել թէ ի՞նչ պիտի ընենք մենք: Օրինակ, եթէ պիտի տրուի Մակարայ վանքի սրբատեղին մ'իայն, զայն վերանորոգելու համար բաւական մեծ ծախս կ'ենթադրուի ու մեր համայնքը այդ գումարը չի կրնար գոյացնել: Կ'ենթադրեմ այսօր որ դուրսի գաղութներէն ալ կարելի չէ սպասել այսքան մեծագումար դրամ: Պէտք է դիմել UNESCO-ին կամ ամերիկեան թէ եւրոպական բարեսիրական հաստատութիւններուն, որ կարենան օգտակար ըլլալ մէջտեղ բերելու շօշափելի նիւթական օժանդակութիւն:

Հ.- Ինչպէ՞ս եւ ձեր յարաբերութիւնները տեղական կառավարութեան հետ:

Պ.- Շատ լաւ: Պէտք է ըսեմ, որ Կիպրոսի յոյն կառավարութիւնը բացառիկ կերպով խնամք կը տանի երեք փոքրամասնութիւններուն: Աշխարհի վրայ չկայ երկիր մը, որ փոքրամասնութիւններուն նախա-կրթարանի բոլոր ծախսերը ինք հոգայ: Մեր կառավարութիւնը կը

հոգայ բոլոր ծախսերը եւ երկրորդականի ա՛յն աշակերտներուն, որոնք հայկական դպրոց կ'երթան, անոնց ալ կրթաթոշակին մեծ տոկոսը կառավարութիւնը կը վճարէ: Այս պարագային՝ Մելգոնեան յաճախողներուն:

Նաեւ, կառավարութիւնը կ'օգնէ եկեղեցիին, մօտաւորապէս 40,000 կիպրական ոսկիով (որ կ'ընէ 80 հազար տոլարէն վեր): Անցեալ տարի այսքա՛ն գումար տրուեցաւ եկեղեցիին, որովհետեւ մեր եկեղեցին կորսնցուցած է իր եկամտաբեր աղբիւրները եւ այստեղ մենք աղբիւրներ չունէինք:

Նոր է որ քանի մը յարկաբաժիններ ու եկամտաբեր կալուածներ ունեցանք:

Հ.- Մելգոնեան Կրթական Հաստատութեան մասին կը փափաքիմ ունենալ ձեր կարծիքը:

Պ.- Ես Մելգոնեան Հաստատութեան հետ, որպէս առաջնորդ, լաւ յարաբերութիւն ունիմ, բայց այդ սահմանէն անդին չ'անցնիր: Երբեմն պատահած է որ Առաջնորդարանը երբեք ալ կապ չէ ունեցած Հաստատութեան հետ: Բայց այս վերջին եօթը տարին տնօրէնութիւնը, հոգաբարձութիւնը որոշ չափով յարաբերութիւն ունին ու փոխադարձաբար՝ մենք ալ կը պահենք:

Ես Մելգոնեանի իրավիճակի մասին շուկներու մասին չուզեցի արտայայտուիլ, հիմա ալ պիտի չարտայայտուիմ, որովհետեւ չեմ գիտեր թէ իրականութիւնը ի՞նչ է: Պաշտօնապէս մեզի կամ հանրութեան չէ ըսուած թէ ինչո՞ւ համար ծախելու շուկները կան. մականդակի՞ն համար է, տնտեսական տազնապի՞ն համար է, թէ՞ այլ նկատառումներ կան: Մինչեւ հիմա պատասխանատուները չեն լուսաբանած մեզ: Խօսքեր են եղածը պարզապէս եւ այդ խօսքերը չեմ խորհիր որ տեղ կը հասցնեն. բայց մէկ բան յստակ է, որ ժողովուրդը ծախելու դէմ է, դպրոց փակելու դէմ է:

Անշուշտ սփիւռքի մէջ դպրոց փակելը լաւ երեւոյթ չէ: Լիբանանի մէջ փակուեցան դպրոցներ քաղաքացիական պատերազմի, գաղութի նուազումի կամ տնտեսական պատճառներով: Այս դպրոցները կրնային նաեւ չգոցուիլ: Եթէ մենք ծրագրուած ձեւով աշխատանք տանէինք սփիւռքի մէջ, մենք պէտք չէ այն կացութեան մատնուէինք, որ որեւէ շրջանի դպրոցը փակուի: Մասնաւորաբար պէտք չէ փակուին ա՛յն դպրոցները, որոնք կը գտնուին եկեղեցւոյ կողքին: Առանց դպրոցին եկեղեցին ինքզինքը չի կրնար պահել: Կը պահէ որպէս խորհրդակատար, բայց իր առաքելութիւնը մէկ չորրորդի կ'իջնէ: Պէտք է սերունդ

պատրաստուի եւ եկեղեցին ճիշդ ատոր համար ալ բացած է իր կողքի հայ դպրոցը: Ծխական դպրոց կը կոչենք: Մեր նախկին սերունդներուն լաւագոյն մտածումն ու ծրագիրն է եղած եկեղեցիին կողքին դպրոց ունենալը:

Իմ կարծիքը ա՛յն է, որ դպրոց պէտք չէ փակուի:

Բայց ինչ կը վերաբերի Մելգոնեանի այս հսկայ կալուածին եւ այժմու դպրոցին, պատասխանատուներ ունին եւ որոշ չափով վստահ եմ թէ օր մը ըսելիք պիտի ունենան:

Ատկէ ետք է որ կրնամ տալ իմ կարծիքս:

Հ.- Դէպի հոգեւոր կեանք երթալու եւ կոչում ունեցող երիտասարդներու պակասը տակաւ զգալի կը դառնայ մեր մէջ: Ծեշտուած է այս երեւոյթը սփիւռքահայ նոր սերունդին համար: Երուսաղէմի Ժառանգաւորացի աշակերտներուն ջախջախիչ մեծամասնութիւնը Հայաստանէն բերուած երիտասարդներն են: Պոլիսը չունիմք եւ կը մնայ Անթիլիասը, ուր տակաւին սփիւռքի գանազան գաղութներէն եկած տղոցմով կը շարունակէ դպրեվանքը գործել: Անշուշտ ունիմք Էջմիածնի Գէորգեան Ծմեարանը, որ ամբողջութեամբ հայրենաբնակ երիտասարդներուն համար է: Օր պիտի գայ, եւ շատ շուտով, երբ Հայաստանէն հոգեւորականներ պիտի գան առաջնորդական աթոռներուն կամ ծխական հոգեւոր տեսչութիւններուն, ու անոնք արդէն շա՛տ մը թեմերէ ներս կը գործեն: Անոնք տարբեր աշխարհայեացքներով, կեանքով եւ մտահոգութեամբ հասակ առած՝ անծանօթ սփիւռքահայ մեր ցաւերուն, պիտի գան առաջնորդութիւն եւ հոգեւոր կրթութիւն տալու: Արեւելահայ լեզուով պիտի քարոզեն՝ անծանօթ մեր արեւմտահայ լեզուին...: Այս ամբողջ երեւոյթը, պատկերը ինչպէ՞ս կը գնահատէք:

Պ.- Այս գաղութին որպէս պատասխանատուն նախ ըսեմ որ այս կողքին երկու հոգեւորականներ ունեցած ենք մի՛այն. Խորէն Կաթողիկոսը եւ Սահակ Արք. Այվազեանը, որ վերջերս վախճանեցաւ: Այս գաղութը դպրեվանքի չունի:

Չեմ գիտեր թէ այս կացութիւնը, այսինքն՝ Հայաստանէն աշակերտ ընդունելու եւ կամ մի՛այն Հայաստանէն աշակերտներով զոհանալու մտայնութիւնը ուրկէ՞ կու գայ: Արդեօք ինչո՞ւ Սուրիայէն, Լիբանանէն, Երուսաղէմէն չեն ընդունիր: Հաւանաբար քաղաքական պայմանները չեն թոյլատրեր եւ ուրեմն անոնք ա՛յդ դժուարութիւնը ունին: Անթիլիասը տակաւին Հայաստանէն աշակերտ չունի: Մէկ միաբան ունէինք եւ օրուան Վեհափառը՝ Գարեգին Բ. զինք ղրկեց արտասահման, որովհետեւ չկրցաւ շաղուիլ վանքաբնակ միաբան հայրերուն հետ: Անթիլիասը այս պարագային սփիւռքահայ ուսանողներով կը շարունակուի:

Թէեւ ըսեմ որ եթէ լա՛ւ պատրաստուած կղերականներ են եւ որակաւոր առաջնորդներ, անպատեհութիւն չկայ: Իսկ եթէ վնասակար ծրագրի համար ղրկուին, ա՛յն ատեն միայն սփիւռքին վնաս կը հասցուի: Ի վերջոյ մեր սփիւռքը կազմուած է Կիլիկիոյ եւ Արեւմտեան Հայաստանի հողերէն պարպուած զաւակներով ու անոնց ժառանգորդներով եւ անոնք իրենց ըսելիքները ունին մեր ազգային կեանքին մէջ: Հետեւաբար, սփիւռքը պէտք է զօրաւոր ըլլայ: Պարտադրուեցաւ մեզի այս կացութիւնը, բայց մենք պէտք է օգտագործենք այս ի նպաստ հայրենիքին:



Կիպրոսի առաջնորդանիստ նոր մայր եկեղեցին, Նարեկ վարժարանի կողքին:

Հ.- Գիտենք թէ Կիպրոսը խաղաղ կղզի մըն է: Մեծ գաղութ մը չէ որ օրական վազվզութի մէջ ըլլաք: Ձեր հոգեւոր ծառայութեան կողքին, գրական, բանասիրական աշխատանքներով կը պարապի՞ք:

Պ.- Ճիշդ է որ Կիպրոսը պզտիկ է, բայց հոգերը շատ են: Պզտիկ կղզիին մեծ գաղութն է իր պատմական դիմագիծով եւ դժբախտաբար այդ դիմագիծը կ'ուզէ պահել:

Հ.- Դժբախտաբա՞ր: Բարեբախտաբար պիտի ըսեիք:

Պ.- Ո՛հ, դժբախտաբար: Բացասական երեւոյթներու մասին է խօսքս: Դրական երեւոյթները շատ բարի, բայց այն ինչ որ վատ է, անոր առաջը պէտք է առնենք: Իմ դժբախտութիւններէս մէկը ա՛յն է, որ

այս գաղութին մէջ մտաւորականութիւնն չկայ: Այդ միջոցները չկայ: Իրենց առօրեայ աշխատանքներով, անձնական մտահոգութիւններով մարդիկ են: Հիմա առաջուան փարթամութիւնն ալ չկայ:

Բայց անձնապէս ես կը ջանամ այդ տաղտուկներէն ազատիլ, թէեւ հիմա մեծ հարցեր չկան, բայց մեծ գլխացաւեր կան, պզտիկ գաւաթի մը մէջ փոթորիկներ կան, որոնք աւելի կը վնասեն: Պիտի նախընտրէի ունենալ գաղութային լուրջ հարցեր, աւելի լաւին ձգտելու համար թէ՛ հայրենիքին եւ թէ՛ ներքին գաղութին կազմաւորման ու զօրացման համար: Այդպիսի բաներ չկան հոս: Այն աշխատանքները որոնք կը տարուին, ոմանք շատ անձնական հաշիւներով հսկայական վնաս կը հասցնեն գաղութին: Մտահոգութիւնն չունին երբեք: Մարդիկ կը կառավարեն գաղութ մը, երբ հոս չեն. Ամերիկա են կամ այլուր: Հեռուէն ուղղութիւն կու տան եւ ասոր համար մենք լաւ ընթացքի մէջ չենք: Անոնք աւել կը գործեն:

Կարելի է աշխատանք տանիլ: Օրական գործերս ես կը շարունակեմ տանիլ: «Արծիւ» թերթը 10-րդ տարին ըլլալով կը հրատարակեմ՝ առաջ երկշաբաթաթերթ որպէս ու հիմա՝ ամսաթերթ: Թերթը քաղաքականութեամբ չի զբաղիր, սակայն ազգային քաղաքականութիւնը խնդրոյ առարկայ է միշտ: Կը հրատարակեմ «Գառնի» մատենաշարը, որ հասաւ իր 39-րդ թիւին:

Իմ աւարտաճառէս՝ «Միլիթար Գոչի առակներ»էն մաս մը հրատարակած եմ: Այստեղ, հիմա կ'աշխատիմ «Հայոց Եկեղեցին Կիպրոսի Մէջ» հատորի մը վրայ, որ աւելի նկարագարդ պիտի ըլլայ: Երեք լեզուներով մեր պատմական անցեալը եւ ներկան տալով կարճ, որովհետեւ շատախօսութիւն չեմ սիրեր ես: Քանի մը ամիսէն լոյս պիտի տեսնէ այս: Պէտք է ըսեմ որ Կիպրոսը ամենէն հին գաղութներէն մէկն է: Այս տարի, 2004-ը, մեր առաջնորդարանի 825-ամեակն է: Ատկէ առաջ ալ գաղութ ունեցած ենք, բայց յատուկ արձանագրութիւններ չկան. 1179 թուականէն, երբ առաջնորդը Սիս հրաւիրուեցաւ Ժողովի մասնակցելու, ընդհատումներով ունինք մեր գաւազանագիրքը մինչեւ մեր օրերը հասած:



ԱՍԱՏՈՒՐ ՏԷՎԼԵԹԵԱՆ

Ատենապետ Ռ.Ա.Կ. Վահան Թեքեան
Ակումբի



Հ.- Կիպրոս միանալով Եւրոխորհուրդին, նոր քաղաքական դուռ մը կրնայ բացուիլ Ռ.Ա.Կ.ի համար Հայ Դատի եւ մեր իրաւունքներու հետապնդման աշխատանքներուն տեսակետէն: Ինչպէս ծանօթ է, Կիպրոսի Հանրապետութիւնը առաջին ճանցողն էր եղած Հայկական Յեղասպանութեան: Կիպրոսի մեր ակումբը արդեօ՞ք այդ ուղղութեամբ սկսած է ունենալ ծրագիրներ, թերեւս ալ գործակցաբար կիպրահայ այլ կազմակերպութիւններու հետ:

Պ.- Մայիս 1, 2004-էն սկսեալ Կիպրոս պաշտօնապէս մաս պիտի կազմէ Եւրոխորհուրդին եւ մեր հանրապետութիւնն ալ վեցանգամ պատուիրակութեամբ մը օրինականօրէն ներկայացուած պիտի ըլլայ Եւրոխորհրդարանէն ներս: Կիպրահայութիւնը միշտ ալ շատ սերտ կապեր ունեցած է կղզիի պետական եւ քաղաքական շրջանակներուն հետ, մասամբ որովհետեւ ընդամէնը 800,000 հաշուող բնակչութեան մը մէջ յարաբերաբար կը հեշտանայ այդպիսի յարաբերութիւններու մշակումը, բայց մանաւանդ՝ որովհետեւ մեր յոյն համա-երկրացիները անվերապահ կերպով քաջալեր հանդիսացած են որ այդ յարաբերութիւնները գոյանան եւ մնան յարաճուն կերպով ամուր եւ կազդոյր: Այս տուեալներէն մեկնելով, կիպրահայութիւնը հսկայական աշխատանք պիտի ունենայ կատարելիք, զինելու համար Կիպրոսի պետութեան ներկայացուցիչները, որպէսզի ամէն ճիգ ի գործ դրուի Եւրոխորհրդարանէն ներս բանաձեւ որդեգրել տալու, որ Թուրքիոյ թեկնածութիւնը նկատի առնելու կարեւոր նախապայմաններէն մին համարուի պաշտօնական ճանաչումը Հայկական Յեղասպանութեան:

Յիշեալ աշխատանքը լաւագոյնս արդիւնաւորելու համար նախընտրելի է, անշուշտ, որ տեղւոյս հայ գաղութը ներկայանայ միասնական ճակատով, նկատի ունենալով հարցին գերազանցօրէն համագգային բնոյթը: Առ այդ, նախապատրաստելու համար անհրաժեշտ ենթահողը, աւելի քան տարի մը առաջ սկսանք ունենալ խորհրդակցական արդիւնաւոր հանդիպումներ հայկական այլ կազմակերպութիւններու հետ, որոնց որպէս արդիւնք կազմուած է յստակ ծրագիր մը, զոր շուտով կը սկսինք կիրարկել:

Հ.- Ի՞նչ տեսակի գործունեություն ունի Ռ.Ա.Կ.ը Կիպրոսի մէջ, մանաւանդ որ բերրի դաշտ մը կայ ուսանողներու մեծ թիւի մը գոյութեամբ:

Պ.- Ռ.Ա.Կ.ը իր մշտական մասնակցութիւնը կը բերէ կիպրահայ համայնքի պետական ներկայացուցիչին կողմէ կեանքի կոչուած համագաղութային մնայուն եւ այլ յանձնախումբերուն, ինչպէս նաեւ ազգային առաջնորդարանին կողմէ հրաւիրուած յատուկ յանձառութեամբ մարմիններուն: Տարեկան մեր գործունէութեան մէջ կարեւոր տեղ կը գրաւէ Մեծ Եղեռնի ոգեկոչման կապակցութեամբ քաղաքական եւ այլ միջոցառումներու ծրագրումը, կազմակերպումը եւ կիրարկումը: Հայկական քաղաքական կազմակերպութիւններու ամբողջական համագործակցութեամբ եւ գաղութիս բոլոր այլ միաւորներուն մասնակցութեամբ, արդէն քանի մը տարիէ ի վեր համագաղութային տարողութեամբ կը կատարուի ապրիլեան ոգեկոչումը Կիպրոսի մէջ:

Կազմակերպչական աշխատանքները կը պահանջեն աւելի քան երկու ամսուան շարունակական ճիգ, որուն, ի պաշտօնէ, նկատառելի մասնակցութիւն կը բերեն մեր ակումբի անդամներէն շատեր:

Որպէս առանձնապէս Ռ.Ա.Կ.ին եւ մեր ակումբին վերաբերող գործունէութիւն, կ'ունենանք մեր պարբերական անդամական ժողովները, որոնց ընթացքին եւ յաճախակի կերպով լոյս տեսնող (եւ միայն ակումբի անդամներուն առաքուող) շրջաբերականներով կ'արծարծուին եւ կը քննարկուին առ հասարակ կիպրահայ գաղութը եւ մասնաւորաբար մեր ազգը յուզող կարեւորագոյն հարցերը: Կանոնաւոր յաճախականութեամբ կը կազմակերպուին նաեւ երիտասարդական ընկերահամակրական հաւաքներ, դաստիարակչական եւ ընկերային ծրագիրներով: Նախապատրաստական սպառիչ աշխատանքներ կատարելէ ետք, գրեթէ պատրաստ է եւ շուտով կեանքի պիտի կոչուի համացանցի մեր երիտասարդական ուտայնէջը (website):

Ճիշդ է թէ ուսանողներու մեծ թիւ գոյութիւն ունի Կիպրոսի մէջ, բայց շուրջ տասնամեակէ մը ի վեր, դժբախտաբար, պատասխանատու մարմիններու աչքառու եւ յաճախ չափազանցուած ու տարօրինակ ճիգերով, ուսանողները հեռու կը պահուին քաղաքական կազմակերպութիւններէն, այնպիսի մոլեռանդ անհանդուրժողութեամբ մը, որ կարծես ա՛յդ եղած ըլլար իրենց գլխաւոր մտասեւեռումը: Յաւալի է որ, ժամանակէ մը ի վեր, առաւելաբար ազգային յոյգերու անհաղորդ տարրեր, թերեւս իրենց համոզումներու պակասաւորութիւնը թաքուն պահելու խղճալի ճիգով մը, ծայր աստիճան անբարեացակամ են կազմակերպութիւններու նկատմամբ, հաւանաբար անոնց մէջ տեսնելով իրենց անարժանաբար գրաւած աթոռներուն եւ դիրքերուն ամենէն

հաւանական ասպարէզ կարդացողները: Ախտավարակ այս ըմբռնումին տխուր հետեւանքներն են պախարակելի խոչընդոտներն ու արգելքները, որոնք հետեւողական յամառութեամբ կը դրուին ուսանողներու եւ հայկական քաղաքական կազմակերպութիւններու միջեւ: Հակառակ ասոնց, սակայն, եւ թերեւս ալ ի հեճուկս անոնց, նկատառելի թիւով երիտասարդ-երիտասարդուհիներ ունինք թէ՛ մեր շարքերէն ներս, թէ՛ ալ մանաւանդ՝ մեր համակիր շրջանակին մէջ:



Մակարայ վանքը այսօր: Կիպրոսի յունեթրքական սահմանին բացումէն ետք ընկեր Ասատուր Տէվլեթեանն ու ես թերեւս վանք այցելող առաջին ուխտաւորներն ենք:

Հ.- Մշակութային գործունէութիւն ունի՞ք արդեօք, հակառակ անոր որ Թ.Մ.Մ.ի մասնաճիւղ գոյութիւն չունի Կիպրոսի մէջ:

Պ.- Միշտ նկատի ունենալով գաղութիս թուալիս սահմանափակումները, բայց նաեւ՝ այն պարագան, որ ակումբիս անդամներուն մեծ մասը ոչ միայն անդամակցութիւն, այլեւ վարչական մակարդակներու վրայ կարեւոր մասնակցութիւն կը բերէ Հ.Բ.Ը. Միութեան տեղւոյս երեք մասնաճիւղերու (Նիկոսիա, Լառնաքա եւ Լիմասոլ) բոլոր գործունէութիւններուն, հինէն ի վեր գոյացած անգիր համաձայնութեամբ մը,

մեր չըջանալի մշակութային բոլոր ձեռնարկները կը կազմակերպուին Հ.Բ.Ը. Միութեան կողմէ: Անհրաժեշտ առիթներով, սակայն, Ռ.Ա.Կ.ը, բացառութեան կարգով, կը նախաձեռնէ մշակութային կարեւոր որոշ հանդիսութիւններու կազմակերպումը: Այս տարի, օրինակ, կը ծրագրենք հանդիսաւոր շուքով նշել Արշակ Զօպանեանի ծննդեան 125 եւ մահուան 50-ամեակը:

Հ.- Ինչպիսի՞ր գործակցութիւն մը կայ կիպրահայ զանազան միութիւններու հետ:

Պ.- Բացի ուղղակի կամ անուղղակի կերպով արդէն ակնարկուած գործակցութիւններէն, յատուկ պարագաներու եւս, երբ հարկը պահանջէ, Ռ.Ա.Կ.ը միշտ ալ պատրաստ եղած է, ազգային գերագոյն շահերու ի խնդիր, գործակցութեան ոգի եւ ամբողջական տրամադրութիւն ցուցաբերելու: Անշուշտ, կրկնելու ի գին, հարկաւոր է նկատի ունենալ թէ գաղութին փոքրաթիւ ըլլալուն պատճառաւ, Ռ.Ա.Կ.ի անդամ-անդամուհիներէն շատեր, հինէն ի վեր, պատասխանատու հանգամանքներով, գործօն մասնակցութիւն կը բերեն զանազան կազմակերպութիւններու այլեւայլ մարմիններուն մէջ:

Հ.- Կիպրոսը օրինականօրէն Կիլիկեան թեմին պատկանելով հանդերձ, արդեօ՞ք ունի՞ք յարաբերութիւն առաջնորդին ու առաջնորդարանին հետ: Թեմական կամ եկեղեցական այլ մարմիններուն մաս կը կազմէ՞ք:

Պ.- Առաջնորդ Սրբազան Հօր եւ առաջնորդարանին հետ Ռ.Ա.Կ.ի կապերը, փոխադարձ լուրեայն հասկացողութեամբ, պատշաճ են եւ քաղաքավարական: Իսկ ինչ կը վերաբերի թեմական եւ եկեղեցական մարմիններուն, Կիպրահայ Համերաշխական Ճակատ անունով համախմբում մը, ուր մէկտեղուած են էջմիածնական հակում ունեցող բոլոր տարրերը, իր պաշտօնական թեկնածուներով կը մասնակցի թեմական ընտրութիւններուն:

Ի դէպ, 1996-ին տեղի ունեցած վերջին ընտրութիւններուն, Համերաշխական Ճակատը ներկայացնող եօթը թեկնածուներ յաջողեցան անդամ ընտրուիլ թեմական Ժողովին, որուն իբրեւ կանոն, մաս կը կազմեն 12 աշխարհական ընտրեալ անդամներ եւ Կիպրոսի մէջ քահանայագործող երկու հոգեւոր հովիւները:

Նկատի ունենալով որ թեմական Ժողովին կողմէ նշանակուած անդամներով է որ կը կազմուի վարչական Ժողովը, այդ մարմինին մէջ եւս հաւասար թիւով ներկայացուցիչներ կան Համերաշխական Ճակատէն:



Նիկոսիոյ հայոց՝ թուրքերու կողմէ գրաւեալ մայր եկեղեցին:

Հ.- Մելգոնեանը այս օրերուն բաւական նիւթ դարձաւ հայ մամուլին մէջ: Դուք որ մօտէն ծանօթ էք հաստատութեան անցեալին ու ներկային, ի՞նչ է ձեր անձնական կարծիքը Մելգոնեանի հետ կապուած շշուկներուն մասին:

Պ.- Որեւէ հայկական վարժարան, յատկապէս սփիւռքի տարածքին, եթէ գտնուի փակուելու հեռանկարին դէմ յանդիման, լրջօրէն պիտի մտահոգէ ազգային գիտակցութիւն ունեցող ամէն հայ անհատ: Իսկ Մելգոնեան կրթական Հաստատութիւնը որեւէ վարժարան չէ: Մեծ Եղեռնի դժոխային արհաւիրքէն ետք կեանքի կոչուած ան մեր անդրանիկ ուսումնարանն է: Ան մարմնաւորումն է եւ ամենէն խօսուել խորհրդանիշը վերապրումի ազգային մեր հզօր վճռականութեան: Կասկածէ վեր է նաեւ թէ Մելգոնեանը արդարօրէն կը վայելէ սփիւռքահայ ամենէն վաստակաւոր վարժարաններէն մին հանդիսացած ըլլալու մեծ համբաւը: Ոչ ոք կրնայ ուրանալ թէ վաղ 1930-ական թուականներէն սկսեալ, վարժարանի հայաբոյր մթնոլորտին մէջ ազգային դաստիարակութիւն ստացած եւ ազգային արժէքներու գիտակցուած սիրով տոգորուել բազմաթիւ շրջանաւարտ եւ նոյնիսկ թերաւարտ սան-սանուհիներ, նախ Մերձաւոր Արեւելքի հայկական բոլոր գաղութներէն ներս, ապա՝ նաեւ Հայաստանի, իսկ աւելի ետք Հիւսիսային Ամերիկայի եւ մինչեւ իսկ Աւստրալիոյ մէջ մատուցանած են եւ տակաւին կը շարունակեն

մատուցանել անփոխարինելի ծառայութիւններ, որպէս մտաւորականներ, դաստիարակ-ուսուցիչներ, խմբագիրներ, քաղաքական-մշակութային-հասարակական-միութենական գործիչներ, միշտ ալ ցուցաբերելով ազգային ամրակուռ ոգի եւ աչքի զարնող նուիրում:

Ճիշդ է թէ, յատկապէս վերջին շրջանին, հաւանաբար սխալ ընկալուած «միջազգայնականութենէ» թելադրուած, հաստատութեան պատասխանատուները զգալիօրէն նուազած կարեւորութիւն սկսան ցուցաբերել ազգային արժէքներու նկատմամբ:

Որպէս անխուսափելի հետեւանք՝ Մելգոնեանի սան-սանուհիներու վերջին սերունդը չունի ակնկալուած ազգային գիտելիքներու հարստութիւնը, չունի նաեւ ազգային գիտակցութեան եւ անկէ բխող մղումի բաղձացուած մակարդակը:

Այս կացութիւնը, սակայն, երբեք իրաւունք պէտք չէ տայ մտածելու թէ իր վախճանին հասած է հաստատութեան ազգային առաքելութիւնը: Ընդհակառակը՝ հարկաւոր է ուսումնասիրուած մասնագիտական նոր ծրագիրներ մշակել, որպէսզի ազգային այնպիսի տարագում մը չնորհուի Մելգոնեանին, որ ան երկար տասնամեակներ եւս շարունակէ հայեցի ամբողջական դաստիարակութեամբ օժտուած սերունդներ պարգեւել մեր ժողովուրդին:



ԱՆԻ ԼԱՉԻՆԵԱՆ

Տնօրէնուհի Հ.Բ.Ը.Մ.ի Մելգոնեան

Կրթական Հաստատութեան

(Հարցազրոյցը կատարուած է
Հաստատութիւնը փակելու որոշումը առնելէն
մէկ ամիս առաջ)



Հ.- Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը պատմութիւն մը ունի ամբողջ սփիւռքահայ մեր կեանքին մէջ: Որպէս երեսօթարդէն իր նմանը չունի որեւէ տեղ, որեւէ գաղութի մէջ: Մելգոնեանը իր ամբողջական մասնակցութիւնը բերած է ազգապահպանման մեր ջանքերուն եւ հասցուցած է որակաւոր ու մեծ սերունդ: Մելգոնեանցիներու անուններ կան, որոնք ծանօթ են ե՛ւ հոս ե՛ւ հայրենիքի մէջ. անուններ, որոնք երկա՛ր շրջանով եղան ազգային առաջնորդներ մեր

կրթական, ազգային-քաղաքական, ընկերային ու մշակութային կեանքին մէջ: Դուք, որպէս այս վարժարանի տնօրէնութիւն, բազմաձեռն անո՛յն աթոռին վրայ, ուր ձեզմէ առաջ նստած են մեր անցեալի փառաւոր կրթական մշակները: Ուրը տարիներէ ի վեր տնօրէնութիւն էք եւ կ'ուզէինք իմանալ այդ տարիներուն ձեր ձեռք բերած յաջողութիւններուն մասին: Ո՛ր էր ուրը տարիներ առաջ եւ այսօր ո՛ր կը գտնուի բոլորիս սիրելի հաստատութիւնը, կրթական թէ ազգապահպանման գործի մէջ:

Պ.- Սկսինք կրթական իրավիճակով. ութը տարի առաջ, երբ ստանձնեցինք տնօնութիւնը, աշակերտութեան թիւը 163 էր: Տարուէ տարի այս թիւը աւելցաւ ո՛չ միայն որովհետեւ բարելաւման հետ միատեղ քանակական թիւը աւելցաւ: Յաջորդաբար մինչեւ 174, 197, 249, 251 աշակերտներ: Անցեալ տարի, բաւական դժուար պայմաններ նկատի ունենալով, 241 աշակերտ եւ այս տարի, դժբախտաբար 206 ուսանող: Ինչո՞ւ կ'ըսեմ դժբախտաբար, որովհետեւ աշակերտահաւաքի մեր քաղաքականութիւնը հետեւեալ ձեւով անցեալին կազմակերպուած էր: Մենք ա՛յն ենթադրութեան տակ եղած ենք մի՛շտ, յատկապէս Միջին Արեւելքի հայերս, որ այլ գաղութներու մէջ մարդիկ բոլորն ալ գիտեն թէ Մելգոնեան կրթական Հաստատութիւնը ո՞ւր է, ի՞նչ կ'ընէ եւ որո՞նց կը յարմարի: Մինչ, իրականութիւնը այդ չէր, որովհետեւ մեր փորձառութիւնը զանազան ճամբորդութիւններով ի յայտ բերաւ թէ մարդիկ անտեղեակ են Մելգոնեանի երբեմն նոյնիսկ գոյութենէն, իսկ երբ տեղեակ են Մելգոնեանի մասին, ճի՛շդ չէ իրենց տեղեկութիւնը, իրենց արժեւորումը կամ աշակերտներու ապագայի գծով պատրաստման դաշտը:

Ուրեմն պէտք է հետեւողական աշխատանք մը այցելութիւններու, անհատական կապեր ստեղծելու գաղութներու հետ եւ նախնական շրջանին յատկապէս ընտրելու լա՛ւ եւ ընդունակ աշակերտներ եւ ձրիաբար զանոնք ընդունելու դպրոց: Ռումանիայէն, Հունգարիայէն, Եւրոպայէն, Ալպանիայէն, Ռուսաստանէն եւ մեր ծանօթ մայր գաղութներէն եւ Պարսկաստանէն ունեցանք աշակերտներ: Իրաքը միշտ մեր մտքին մէջ էր, սակայն պայմանները չէին ներեր: Իսկ Ծոցի երկիրներն ալ այցելած ենք, բայց նկատի ունենալով նոյնպէս այդ երկիրներու տնտեսական շատ բարեկեցիկ պայմանները եւ այնտեղի օտար վարժարաններուն նիւթական օժանդակութիւնը նոյնիսկ երբ իրենց աշխատած ընկերութիւնները կ'ապահովեն, ծնողներ չէին քաջալերուեր իրենց զաւակները զրկել հեռու մինչեւ Կիպրոս՝ գիշերօթիկ վարժարան:

Հիմա գիշերօթիկ զրկելու պայմանները աւելի նպաստաւոր դարձած են Մելգոնեանի նման դպրոցի մը պարագային: Հոս թերեւս հարց ալ

պէտք է տանք թէ գիշերօթիկ դպրոց մը մեր հայ իրականութեան մէջ որքա՞ն կարեւոր է եւ որո՞նց համար կարեւոր է: Նկատի ունինք որ Միլիթարեան վարժարաններու փակումէն ետք, մնացած է Հ.Բ.Ը. Միութեան ղեկավարած Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը, որ կը մնայ միա՛կը բովանդակ աշխարհի մէջ:

Միա՛կն ենք եւ յատկապէս ունինք բազմամշակութային աշակերտական խմբակ: Այս բազմամշակութային միջավայրին մէջ կը պատկերացնէք որքան աւելի բազմապատկուած են մեր դժուարութիւնները, ըլլա՛ն անոնք ուսումնական տարբեր միջավայրերէ գալու իրականութիւնը, անոնց ընկերային-մշակութային ու նիստ ու կացի հիմնական տարբերութիւնները, աշխարհահայեացքներու զանազանութիւնը:

Ծագումով հայ ըլլալը, հայ ծնողք ունենալը բաւարար չէ, որ նոյն մտայնութիւնը, հասկացողութիւններու արժէքները ունենան: Այնպէս որ մեր դպրոցը մի՛շտ դիմագրաւած է այս դժուարութիւնները, յատկապէս վերջին տարիներուն՝ աւելի քան անցեալին: Անցեալին աւելի միատարր եղած է ուսանողութիւնը, երբ անոնք կու գային հայախօս Լիբանանէն ու Սուրիայէն:

Հիմա, մեր ներկայ իրականութիւնը նկատի ունենալով, այսինքն սփիւռքացած նորաբոյս գաղութները պէտք ունին ազգապահպանման նոր միջոցներու: Եւ ինչպէ՞ս կարելի պիտի ըլլայ հայապահպանման աշխատանք տանիլ մանաւանդ անոնց նոր սերունդին տոհմային դաստիարակութիւնը ապահովելու առանց հայ դպրոցի:

Դպրոցի դերը, կ'ընդգծեմ, անփոխարինելի կը նկատեմ անձնապէս: Վստահ եմ թէ ինծի նման շատ շատեր համակարծիք են: Պայծառ այլ շատ ու շատ ծրագիրներ կրնան մշակուիլ, միօրեայ, ամառնային, ժամանակաւոր դպրոցներ, ակումբային, մշակութային կեանք, որոնք բոլորն ալ իրենց արդար դերը եւ կարեւորութիւնը ունին, անկասկած: Բայց թէ հայ դպրոցը կրնայ ասոնցմէ որեւէ մէկը փոխարինել, անկարելի է, ինքնախաբէսութիւն պիտի ըլլայ եթէ նման միտքի մը փորձենք հաւատալ:

Ու երբ կ'ըսենք հայ դպրոց, այսօր Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը եւրոպական չափանիշներով կը պատրաստէ իր կրթական ծրագիրը: Միջազգային կրթական մակարդակով ալ ունինք մեր ծրագիրները, որոնց նմանը ա՛յլ որեւէ հայ դպրոցի մէջ չունինք:

Ես չեմ ուզեր մեր Բարեգործականի դպրոցներու ցանցէն անդին ակնարկութիւն ընել, որովհետեւ աւելի ծանօթ եմ մեր դպրոցներուն, բայց մեր բոլոր վարժարանները, նոյնիսկ այն որ ամենէն յաջողը կը նկատուի, որովհետեւ նիւթական որեւէ դժուարութիւն չունի,-



Մելգոնեան եղբայրների դամբարանը:

կ'ականարկեմ Ամերիկայի Գանոկա Փարքի մեր դպրոցին,- տեղական պահանջները կը գոհացնէ մ'իայն: Այսինքն, հոն ազգապահպանման, մարդակերտումի, բազմամշակութային միջավայրի, այլազանութեան եւ համաշխարհայնացման այս մեր նոր իրականութեան մէջ մեր ունեցած առաւելութիւնը ուրիշ որեւէ վարժարան չունի:

Ես չեմ ուզեր ունենալ յաւակնութիւնը, թէ մենք բոլոր ճակատներու վրայ մեր բոլոր դժուարութիւնները հարթած ենք եւ սխալներ չունինք բացարձակապէս: Միշտ կ'ուզենք ողջմտութեամբ եւ առարկայօրէն մօտենալ կացութիւններուն, իւրաքանչիւր գալիք տարին յետադարձ ակնարկ նետելով, կ'ուզենք տեսնել թէ որ բնագաւառին մէջ տկար ենք ու կրնանք զօրանալ, որովհետեւ միշտ այն գիտակցութիւնը ունեցած ենք, առաջին իսկ տարիէն, որ բազմատեսակ ճակատներու վրայ աշխատանք տանելու ենք եւ մենք չենք կրնար այս բոլոր ճակատամարտերը միաժամանակ յաղթահարել:

Մենք նպատակներ ճշդած ենք, իւրաքանչիւր տարի, նկատի ունիմ յատկապէս կրթական բաժինը, ուր մեծ ուստում, իրապէս մեծ ուստում արձանագրած ենք: Դպրոցին արդիւնքները արդէն ցոյց կու տան: Աշակերտութեան պատրաստութիւնը եւ համալսարան յաճախողներուն

Թիւը, ու ո՛չ միայն Թիւը, այլեւ անոնց որակական պատրաստութիւնը ինքնին արդէն լաւագոյն փաստն է, այս կարճ ժամանակամիջոցին մէջ կրթական մեր հաստատութեան արձանագրած յառաջխաղացքին:

Տակաւին ունինք, անշուշտ, ճամբայ կտրելիք:

Հ.- Կրթական մակարդակին գալով արդէն լսած էինք Մելգոնեանի արձանագրած յաջողութիւնները: Ոմանք կ'ըսեն թէ ազգային կրթութիւնը, մանաւանդ հայագիտական առարկաներու դասաւանդութիւնը տեղատրութեան մէջ է: Անշուշտ այս միայն չի՝ վերաբերիր Բարեգործականի վարժարաններուն լոկ, համընդհանուր ցաւ մըն է բոլոր վարժարաններուն համար: Մելգոնեանի սկզբնական նպատակներէն է եղած զարկ տալ հայագիտութեան: Ինչպէ՞ս կը գնահատէք ձեր հաստատութենէն ներս հայագիտական դասաւանդութիւնները:

Պ.- Բնականաբար երբ աշակերտը կու գայ մեր մօտ եւ հայերէն մէկ տառ իսկ չի ճանչնար, ոչ ալ իր հայկականութենէն լուր ունի, ոչ-հայախօս ընտանիքէ կու գայ, հայկական եկեղեցի չէ յաճախած եւ չի գիտեր թէ ի՞նչ կը նշանակէ հայ՝ ըլլալ ու Մելգոնեանէն յարաբերաբար հայացած կը մեկնի, հայերէն գրել-կարդալ կը սորվի, որոշ չափով մեր գրականութեան պատմութեան կը ծանօթանայ, թէ՛կուզ եւ մեր հասկացողութեամբ բարձր չափանիշով չէ, բայց ուսանողին համար այս ամէնը արդէն մեծ ուսուում է. այս մէկը ես նուաճում կը նկատեմ:

Ըսեմ ու աւելցնեմ նաեւ որ մենք բազմամակարդակ ծրագրեր ունինք, որոնք զուգահեռ կ'ընթանան որոշ առարկաներու պարագային: Միատարր հայերէնի դասաւանդութեանց ծրագիրներ չունինք: Այսինքն՝ ունինք բնաւ հայերէն չգիտցողներու դասարան, սկսնակներու խումբ մը, որոնք լեզուամտածողութեամբ, հայկականութեամբ տարբեր են եւ որոնք չեն կրնար մէկ-երկու տարիէն հայախօս ու հայատրոփ լիբանանցիին ու կիպրացիին նման հայանալ եւ նաեւ հայերէն լեզուի մեր ամէնօրեայ դասաւանդութիւնները ընկալել: Ունինք մարդուժն ու անձնակազմը հասնելու բոլորին:

Մարդիկ կ'ըսեն, «այսքա՛ն հայերէն լեզուի եւ պատմութեան ուսուցչի ի՞նչ պէտք ունիք»: Որովհետեւ դպրոցի տեսչութիւնն ու պատասխանատուները կը տեսնեն որ այս կարեւոր ներդրում մըն է, ներգրաւելու երիտասարդ ուժեր, սրտցաւ ուսուցիչներ, որոնց Թիւը տակաւ կը պակսի հայ կեանքէն ներս: Հնարաւորութիւններ ստեղծեցինք ամէ՛ն մակարդակի եւ մթնոլորտի մէջ, որ կարենան իրենց հայեցի դաստիարակութիւնը ստանալ: Հանդէսներու կազմակերպութեան գծով, հրատարակչական աշխատանքներու գծով, օրինակ երբ

պատանի մը կու գայ որ առաջին անգամ ըլլալով հայկական պար պիտի սորվի, թատրոնի մէջ բաժին մը պիտի ունենայ կամ հայերէն լեզուով կարճ ոտանաւոր մը սորվի եւ արտասանէ, արդէն այս միջոցորտը ինքնին խիթան մը կը հանդիսանայ բոլորին եւ դրական ապրումներով ալ կը մօտենան այս ամէնուն:

Այս ալ ըսեմ, որ որպէս երկրորդական վարժարան՝ օտար քննութիւններու պարտաւորիչ դասաւանդութեանց շարք մը կը պարտադրուի անոնց: Այսօր մեր աշակերտները ամենէն շատ ծանրաբեռնուած ուսանողներն են, ժամանակացոյցի առումով, որովհետեւ ունին հայերէն առարկաները՝ 8 ամբողջական ժամերով (Լիբանանի պարագային իսկ



Բարեգործականի ակումբը գրաւեալ Կիպրոսի մէջ:

այսքան դասապահ չկայ): Անշուշտ դասապահներու թիւը չէ միայն որ պիտի տայ մակարդակ, բայց մենք կը ստեղծենք հայեցի դաստիարակութեան խանդավառութիւնը, սէ՛րը կը ստեղծենք. կարեւորը անտարբերութենէն դէպի հետաքրքրութիւն բերելն է ուսանողը: Ասոնք ինքնին արդէն նուաճումներ են: Ըսեմ նաեւ որ մեզի հասակակից մարդիկ կան, որ հայեցի կրթութիւն ստացած են շնորհքով, սակայն դժբախտաբար անտարբեր են հայութեան նկատմամբ:

Հ.- Կարծեմ ճիշդ կը բնորոշէք մեր դժբախտ ազգային կեանքի երեւոյթները: Արդեօք երբ ուսանողներ աւարտելէ ետք կը մեկնին իրեց

գաղութները եւ կամ այլ վայրեր, անոնց մօտ կը նշմարէ՞ք անլի ազգային հետաքրքրութիւն գաղութահայ կեանքով:

Պ.- Անշո՛ւշտ: Անպայման կը տեսնենք: Կրնայ ըլլալ որ յայտնաբերուած ու ամէնօրեայ ազգային դէմքեր չեն դառնար: Անոնք երիտասարդներ են տակաւին, ունին իրենց առօրեայ դժուարութիւնները, համալսարանական են, ինքնուրոյն կեանք մը պիտի վաստկին, որպէսզի կարենան բերել ներդրում իրենց հայ կեանքի առօրեային:

Հ.- Ակնարկութիւն կ'ընէիք թէ ուսանողներուն մեծ մասը այսօր կրթաթոշակ կը վճարէ: Կը խորհի՞ք թէ եթէ նիւթական անլի ձեռնարկ միջոցներ ըլլային՝ այս հաստատութիւնը անլի արդիւնաւետ կրնար դառնալ:

Պ.- Անկասկած այո՛: Որովհետեւ գիտենք որ այսօր նիւթական կարելիութիւններով կարգ մը նուաճումներ աւելի դիւրաւ կրնանք ապահովել: Այսինքն՝ կրնանք աւելի բարձր մակարդակ պարտադրել, աւելի լա՛ւ պայմաններ ստեղծել ուսուցիչներու թէ պաշտօնէութեան համար, աւելի լա՛ւ պայմաններ ստեղծել աշակերտութեան կրթութեան, սերտաբաններուն դրութիւններուն գծով, աւելի *technologically oriented* միջնորդող ստեղծել:

Հ.- Իսկ ներկայ նիւթական կացութիւնը այնպէս կ'երեւայ թէ խնդրական ու փափուկ կացութեան մէջ է. իրապէս կը զգա՞ք թէ ճնշիչ է այս ձեր աշխատանքներուն համար:

Պ.- Ո՛չ, չենք զգար: Անկեղծօրէն ըսելու եմ, որ հակառակ միջազգային տնտեսական կացութիւններու դժուարութեանց, մեր հաստատութեան պիւտձէն միշտ վաւերացուած ու հաւասարակշռուած է Հ.Բ.Ը. Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովին կողմէ, հետեւեալ հիմունքին վրայ. դպրոցը չենք կրնար կիսել կամ բաժնել, ճամբայ ելած ենք, մեզի ըսուած է մակարդակի բարելաւում, յառաջխաղացք, միջազգային մակարդակ եւ չափանիշ որդեգրել այս ուղղութեամբ, ուրեմն կը նշանակէ թէ ընկրկելու չենք եւ մենք մեր գործը կատարած ենք: Այս ալ ըսեմ որ, եթէ մարդիկ կը խորհին որ տարեկան մեծ բացն է որ Կեդրոնական Վարչական Ժողովը կը մղէ զանազան գաղափարներ մշակելու դպրոցին ճակատագրին հետ կապուած, այս արդէն սխալ տպաւորութիւն է:

Այս կը հաստատեմ, ես համոզուած եմ, թէեւ ուրիշներ՝ ոչ, որ եթէ նիւթական բացն է այդ լուծելը շատ դիւրին է, օրինակ՝ եթէ Կեդրոնը անցեալին որոշած է որ եւրոպական չափանիշներ հաստատելու ենք եւ որուն համար աւելորդ նիւթական բեռ կը դառնայ հաստատութիւնը,

դիւրաւ կրնանք վերադառնալ նախկին վիճակին, փոքրանալ, կղզիանալ, ունեցած մեր պիւտճէին համաձայն ուսում ջամբել եւ պահել հաստատութիւնը: Սակայն, ներկայ պահանջները լրացնելու համար եւ ապագայ սերունդը մակարդակով մը պատրաստելու համար, անպայմանօրէն չափանիշները համապատասխան պէտք է ըլլան միջազգային մակարդակներու: Նախկին, անցեալի որբանոցի կամ ազգային ուսումնական մակարդակը չի կրնար համեմատուիլ այսօրուան կրթական մեր պահանջներուն հետ:

Վերադառնալով հայազիտական նիւթերուն, մենք մի'շտ հարկ նկատած ենք որ միջազգային քննութեան մը չափանիշերու հասնինք: Դժբախտաբար, այս առումով մեր կատարած դիմումները այլ հայկական վարժարաններուն միանալու մեզի, չկրցանք իրագործել: Առանձինն ընելու պարագային իսկ, նիւթական միջոցներ անհրաժեշտ են:



Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութեան նոր հանրակացարաններու բացման արարողութեան մասնակից ընկերներ Յակոբ Աւետիքեանի (Երեւան), Արսէն Տեմիրճեանի (Շիքակօ) և Ռուբէն Թերզեանի (Շիքակօ) հետ:

Հ.- Բանակ մը նախկին մելգոնեանցի թերաւարտ թէ շրջանաւարտ ուսանողներ կան ամէնուրեք: Մելգոնեանով հպարտ, կարծէք իրենց ազգային տուրքը վճարած ըլլալու պարտականութիւնը կատարած կ'ըլլան: Դուք գո՞հ էք Մելգոնեանի սանուցներուն կատարած աշխատանքէն Հաստատութեան ի նպաստ:

Պ.- Ձեմ կրնար ըսել որ դժգոհ եմ, բայց կրնամ ըսել որ անբաւարար եղած է: Շատ աւելի հնարաւորութիւններ կան օգնելու մայր վարժարանին:

Հ.- Ո՞ր շրջանակը կը խորհիք թէ իր իրական ու սրտակից մասնակցութիւնը կը քերէ: Կրնա՞ք մասնաւորել:

Պ.- Իմ փորձառութենէս մեկնելով, կրնամ ըսել որ Գալիֆորնիոյ չըջանակը, ինչպէս նաեւ Լիբանանի չըջանակը ամենէն մօտը եղած են:

Դժբախտաբար, ամենէն հեռուն Կիպրոսի մեղքոնեանցիներու շրջանակն է:

Հ.- Վերջին շրջանին մեր պատուական ազգայիններէն Պենոն Սեւանը ստանձնած էր Մելգոնեանի Սանուցին Կեդրոնական Վարչութեան ատենապետութիւնը: Արդեօք իր պաշտօնը ան կատարե՞ց լաւագոյն կերպով:

Պ.- Ձեմ կարծեր որ ես ի վիճակի եմ այդ գնահատականը տալու Պրն. Պ. Սեւանի: Բայց, անձնապէս, կը կարծեմ որ անոր նման անձնաւորութիւն վստահաբար չատ կարեւոր դեր կընայ ունենալ հաստատութեան կեանքէն ներս:

Հ.- Կը խորհի՞ք որ տարբեր միջավայր մը աւելի դիրքութիւններ կրնայ ընծայել նման հաստատութեան մը աւելի արագ զարգացումին:

Պ.- Ես իմ կարծիքս պիտի տամ ոչ որպէս տնօրէն եւ ոչ որովհետեւ Մեղքոնեանը Կիպրոսի մէջ կը գտնուի: Բայց, պիտի ըսեմ առաւելութիւնները Մեղքոնեանը Կիպրոսի մէջ պահելու: Նկատի եթէ ունենանք մեր միւս գաղութները, մեզի ծանօթ օգնութեան եւ օժանդակութեան պայմաններ չկան կառավարութենէն մեր ազգային կրթական հաստատութիւններու նկատմամբ: Միւս կողմէ, նաեւ ինծի ծանօթ գաղութներ ի վիճակի են պահելու Մեղքոնեանի նման կրթական հաստատութիւն մը: Եւրոպա մտնելու հանգամանքը մեծապէս կը նպաստէ Կիպրոսին: Ինչո՞ւ. արաբական աշխարհը եթէ նկատի ունենանք, մինչեւ օրս մեր դպրոցները վայելած են որոշ մենաշնորհներ, բայց պատմութիւնը, ժամանակները եւ քաղաքականութիւնը ցոյց կու տան թէ հետզհետէ մեր հայկականութենէն շատ բան կորսնցուցած ենք ժամանակի ընթացքին եւ ապագայի հեռանկարները այնքա՛ն ալ փայլուն չեն: Ճիշդ է որ աւելի հայահոծ գաղութներ են Լիբանանն ու Սուրիան, բայց երկրի պայմանները փոխուած են, այնպէս որ հայերէն լեզուի եւ այլ առարկաներու դասաւանդութիւնները փոխանցելու համար հայ ուսանողին անհրաժեշտ է որոշ կարգավիճակ:

Կիպրոսի բարեխնամ կառավարութիւնը կ'ապահովէ բոլոր պայմանները, տալով ազատութիւնը հաստատութեան, յատկապէս հայերէն լեզուի ծրագիրները մշակելու մեր ուզած ձեւով, առանց միջամուխ ըլլալու: Իսկ այլապէս միւս ուսումնական ծրագիրը վաւերացուցած է այլ համայնքային վարժարաններու կողքին: Մինչեւ անցեալ տարի, հայկական դպրոց մը կը նկատուէինք, բայց կառավարութիւնը վերանայելով մեր ուսումնական ծրագիրներուն, նկատեց մեզ համահաւասար միւս մասնաւոր վարժարաններու մակարդակին:

Եթէ նկատի ունենանք գիշերօթիկի մեր պայմանները, քաղաքական ապահովութիւնը, կլիման, Եւրոպա մուտքը, սահմանադրական գոյավիճակը եւ արեւմտահայերէնի ընդունուած ըլլալը որպէս փոքրամասնութեան լեզու՝ արդէն բազմաթիւ առաւելութիւններ են, բաղդատմամբ ուրիշ վայրերու Միութեան վարժարաններուն: Նմանը չունինք եւ ոչ ալ կրնանք ունենալ ապագային:

Մեկգոնեանը որպէս բարոյական վարկ, կը վայելէ կիպրացի ժողովուրդին յարգանքը, ինչպէս նաեւ՝ կառավարութեան: Կրթօճախ որպէս, ազգային հարստութիւն որպէս, ունի ամէն յարգանք: Մշակութային ժառանգութիւն կը նկատեն մեր հաստատութիւնը: Արմատախիլ ընելը եւ տարբեր հողի մը մէջ աճեցնելը չի նշանակեր որ արմատներ կրնայ ծլարձակել. երբեք:

Հայաստանը նկատի ունենալով, անշուշտ որ մեր հայրենիքը օժանդակութեան պէտք ունի, բայց եւ այնպէս կարեւորը մեր արեւմտահայ գրականութեան եւ մշակոյթի պահպանումն է եւ այդ Հայաստանի մէջ կարելի չէ ունենալ:

Այս ամէնը կարեւոր ազդակներ են պահելու Մեկգոնեանը իր այսօրուան դիրքին մէջ: Սփիւռքացած 5 միլիոն հայութիւնը տէր ըլլալու է իր արեւմտահայ մշակութային ժառանգութեանց, ու Մեկգոնեանը խթան է, միջոց է պահելու մեր դարաւոր լեզուն ու մշակոյթը:

Եթէ միայն Ռուսաստանի մօտ երկու միլիոն հայութեամբ հետաքրքրուիլ ուզենք, ինքնին մեծ գործ կայ կատարելիք եւ այդ միայն հաստատութեան տնօրէնութեամբ կարելի չէ կատարել: Բարեգործականի ղեկավարութիւնն ու շրջանակները գործի լծուելու են:

Հ.- Ձեր ըսածէն մեկնելով, Հոլիվուտի Թէքէեան Մշակութային Միութեան Արշակ Տիգրանեան վարժարանի աշակերտութեան մօտ 90 տոկոսը հայաստանցիներ են: Նոյնիսկ եթէ չկարենանք հասնիլ արեւմտահայ ծնողներու աշակերտներու կրթական հոգին, գոնէ հասնինք վերջերս Հայաստանէն արտագաղթած մեր հայրենակիցներու նոր սերունդին:

Պ.- Զի՛չդ է եւ այսպիսով մօտեցուցած կ'ըլլանք այդ նոր սերունդը արեւմտահայ մեր մշակոյթին:

Հ.- Բարեգործականի մէջ տեսիլք ունեցող ղեկավարութիւն մը կար, որ կը հաւատար հայ դպրութեան: Չէ՞ք խորհիր որ եթէ Բարեգործականի Կրթական Կեդրոնական Յանձնաժողովը բաղկացած ըլլար ատլի հայաշունչ, հայատորոփ, մեր մշակոյթին ատլի ծանօթ կրթանուէր ազգայիններէ՝ տարբեր երեւոյթ մը ստացած պիտի ըլլար ընդհանրապէս կրթական մեր կեանքը:

Պ.− Կը հարցնէ՛ք թէ մշակութային տարբեր հասկացողութիւններու բախում կայ թէ չկայ: Այո՛, կայ: Մտայնութիւններու բախում կայ, որովհետեւ այսօր արեւմտեան աշխարհի մտայնութիւնը տիրող շրջանակներու մէջ երբեմն խաբուսիկ եւ միամիտ հասկացողութեամբ կը կրկնուի թէ առանց հայերէն լեզուն գիտնալու մենք հայ կը զգանք եւ հայ ժողովուրդին կ'օգնենք, Հայաստանին կ'օգնենք: Դժբախտաբար, նմանօրինակ մտայնութիւն ունեցող ազգայիններ չեն կրնար նոր հայ սերունդ պատրաստել, չեն կրնար ապահովել մեր ժողովուրդին սերնդափոխութիւնը: Համաշխարհայնացման այս կառոյցին մէջ մեր ինքնութիւնը որպէս փոքր ժողովուրդ շատ աւելի վտանգուած է ու շատ աւելի կառչած պէտք է մնանք մեր արմատներուն, մեր դպրոցներուն, քան երէկ:

Հ.− Ուրի տարիներէ ի վեր սիրով կը պաշտօնավարէք: Որպէս անհատ, գոհունակութիւն կ'ունենա՞ք ձեր ըրածին համար: Ձեր աշխատանքը իր պտուղը կու տա՞յ եւ ուրախ սրտով երեկոյեան երբ տուն երթաք կ'ըսէ՞ք դուք ձեզի թէ լա՛ւ ազգային գործ մը կը կատարէք:

Պ.− Եթէ բաղդատեմ իմ նախորդ աշխատանքի պայմաններուս հետ, թէեւ դարձեալ կրթական մարզի մէջ էի եղած, սակայն օտար աշակերտներ ունենալով, կրնամ վստահեցնել թէ որպէս մանկավարժ աշխատելով հայ ուսանողներու հետ եւ աշխատելով շատ աւելի դժուար պայմաններու տակ, անշնորհակալ թերեւս մթնոլորտի մը մէջ երբեմն, բայց եւ այնպէս անձնապէս որպէս Անի Լաչինեան շատ ու բազմապատկուած կերպով գոհունակութիւն կը ստանամ ըրած գործէս:

Նիկոսիա, 31 Յունուար 2004

«ՆՈՐ ՕՐ», 13, 20 եւ 27 Մարտ 2004

«ԱՊԱԳԱՅ», 12 Ապրիլ 2004



Արդիական Ալմաթին:

ԱԼՄԱԹԻՆ ԻՐ ՀԱՅՈՒԹԵԱՄԲ

Մեծ հայրս՝ Յակոբ աղան, փորձառու մարդ, մի՛շտ խրատած էր իր զաւակները. «Չգիտցած գործին մէջ մի՛ մտնէք:»

Ինք որ Կիլիկիոյ ու ապա, կարճ ժամանակ մը, Իսկէնտերունի մէջ առեստրական գործով զբաղած էր, պարզ շուկայի փորձառութենէն մեկնելով թրքերէն լեզուով այս խրատականը կու տար: Ու մենք, փոքրերս, մեր հասկցածին չափ մտիկ ըրած ենք զինք:

Տարիներ ետք, երբ Նազարեանին մօտ որպէս գործակատար տասնամեակ մը պաշտօնավարեցի, Պարոն Նազարէն կը լսէի հետեւեալը. «Հայրս՝ Լեւոն էֆէնտին, միշտ խորհուրդ տուած է մեզի ըսելով՝ գիտցած գործդ ըրէ՛, արդէն բաւարար է. մենք հիւստածեղէնի գործի մէջ ենք քանի մը սերունդներէ ի վեր, եթէ անիկա զարգացնենք՝ ամբողջ աշխարհ մը ունինք մարդկութեան, որ հագուստ-կապուստի պէտք ունի:» Այս աղա-էֆէնտիները իրաւունք ունէին:

Սակայն ինձի նման շատ-շատեր, շուտով հարստանալու հեռանկարով, փորձած են շատ անգամ նետուիլ այնպիսի նախաձեռնություններու մէջ, որոնց բոլորովին անտեղեակ եղած են:

Ահա՛ Քաղախստանի ոսկիի հանքերը պեղելու եւ շահագործելու այդպիսի նախաձեռնութեան մը լծուեցայ: Բարեկամս՝ Սթոյանը, Պուլկարիոյ նախկին արտաքին գործոց նախարար եւ, առաջին Պուշ նախագահի օրով, Մ.Ա.Կ.ի նստաշրջանի նախագահ, վստահեցուցած էր թէ ոսկիի գործով մեկնելու ենք Ալմաթի: Երեք ամբողջ տարիներ ուսումնասիրած էինք ծրագիրը, հրաւիրելով ոսկեհանքերու բաժնետէրեր, միջազգային դրամատուններու պատասխանատուներ, հանքային սպասարկութիւններու տնօրէններ, երկրաբաններ... ու մշակած էինք ծրագիր մը: Մեզի հետ, այս աշխատանքներուն մասնակից էր Նիւ Եորքէն ուրիշ բարեկամ մը՝ Վան Գրիգորեան, որ վերջին տարիներուն փաստաբանութիւնը լքած՝ հանքագործութեան հետամուտ էր Չիլի, Հայաստան, արաբական աշխարհ...: Ինք ալ խանդավառած էր զիս՝ նետուելու նման ծրագրի մը մէջ: Բարեբախտաբար, իմ ունեցած հիւսուածեղէնի առեւտրական ընկերութիւնս կը շարունակէի պահել իր բնականոն գործընթացով:

Մեկնեցանք Ալմաթի բոլորով: Հայաստանէն երկրաբաններ, փաստաբաններ մեզի միացան Քաղախստանէն պետական մարդոց հետ: Ժողովներ ու ժողովներ...: Յայտնի եղաւ որ Կեդրոնական Ասիոյ այս երկրին մէջ ներդրումով շահագրգռուածները աւելի աչքը բաց գործարարներ են: Մենք անոնցմէ դեռ շա՛տ դաս առնելու էինք: Ու անմիջապէս ընկերներուս թելադրեցի թէ կասեցնելու ենք մեր յարաբերութիւնները: Բոլոր նախնական համաձայնութիւնները, որոնց համար հասկացողութեան մը եկած էինք, մէկ առ մէկ փոփոխութեան կ'ուզէին ենթարկել: Ո՛չ... այդքան ալ տխմար չէինք: Գործակցող քաղախներուն համար մէջբերեցի մեծ հօրս հետեւեալ խօսքը թրքերէնով, քանի թրքախօս են անոնք. «Վնասին ուրկէ որ դառնաս, այդ կը շահիս»:

Բայց, անշուշտ, իմ այդ անդրանիկ այցս օգտակար եղաւ ուրիշ մարզի մէջ. մօտիկէն ծանօթացայ Ալմաթիի հայկական կեանքին ու իր գործունէութեան, հաւաքավայրին, նոր ծրագիրներուն, Հ.Հ. դեսպանատան ու դեսպանին՝ Տոքթ. Եդուարդ Խուրշուտեանին ու անոր քաղախ շնորհալի նկարչուհի տիկինին: Հետաքրքրական գտայ մանաւանդ այն տեղեկութիւնները, որոնք պարոն դեսպանը տուաւ այդ երկրին մասին, սկսելով Աստրախանի նախանցեալ դարու հայ վաճառականներու հիմնած Աքթանի հայոց եկեղեցիով:

Այցելեցի Ալմաթիի հայոց ակումբը, ուր վերահասու եղայ հոն կատարուող կրթական ու մշակութային ազգային գործունէութիւններուն, իր հայ դպրոցով ու երգի ու պարի խումբով: Ակումբին կից հողաշերտի մը վրայ հայկական

եկեղեցիի մը ծրագիրը մեծապէս տպաւորեց եւ ոգեւորեց զիս... ու այդ պահուն ափսոսացի որ մեր ոսկիի հանքերը ցամքած էին. այլապէս՝ սիրով բաժին մը պիտի կարենայինք հանել Ալմաթիի մեր եկեղեցիի շինութեան ծրագրին համար: Ծրագիր մը՝ որ մինչեւ այսօր չէ իրագործուած:

Քաղախները ծանօթ են իրենց խոհանոցով. ձիակեր են: Ու մեր բոլոր ճաշերուն ձիո միսը անպակաս էր: Իջեւանած էինք Սովետի օրերէն մնացած պաշտօնական հիւրերու պանդոկի մը մէջ, որ կանգուն էր սթալինեան փառքի օրերու վեհութեամբ: Վայելեցինք այդ: Նոյնպէս, խնձորաստանները կտրելով բարձրացանք Ալմաթիի լեռներն ու ձիւնածածկ անտառներու մէջ ունեցանք մեր խորովածը հաշկական քոնեակով ու ռուսական վոտկայով, վայելելով զուլալ օդը բնութեան:



Ալմաթին իր լեռներով:

Դեռպան Խորշուտեանի իսկ թելադրութեամբ, այցելեցի քաղաքի ծանօթ հնավաճառներէն մէկուն, որուն մօտ կար հանրայայտ հայ նկարիչ Թադէոսեանի մէկ պաստառը: Անմիջապէս գնեցի զայն: Նկարիչը Սթալինի օրերուն դէպի Քաղախստան տեղահանուած հայաստանցիներէն էր եւ հայ վրձինի մեծ վարպետ Մարտիրոս Սարեան մեծ գնահատանքով արտայայտուած էր անոր մասին: Առիթը չեղաւ այցելելու ծերունագարդ հայ նկարիչին:

Մեր մեկնումի օրը, ի պատիւ ինծի սարքուեցաւ ընդունելութիւն: Ներկայ էին համայնքին երեսելիները: Սրտի խօսքէս ազդուած՝ խնդրեցին յաճախակիօրէն այցելել:

Թադէոսեանին գործը մնաց միակ յիշատակը՝ այսօր կախում զրասենեակիս պատերէն մէկուն վրայ: Քաղախստանի ոսկին չտեսայ, սակայն քաղախահայ ոսկի սիրտերու հետ ըլլալու պատիւին արժանացայ:

ԴՈԿՏ. ԵԴՈՒԱՐԴ ԽՈՒՐՇՈՒԴԵԱՆ
Դեսպան Հայաստանի Հանրապետության



Հ.- Այս հանդիպումը լույս պիտի տեսնէ ուսմակավար ազատական մամուլի էջերուն մէջ: Ըսեմ թէ մեր ընթերցողները ընդհանրապէս տեղեակ չեն Քաղախստանի դեսպանատան եւ հայ ազգային կեանքին: Կրնա՞ք ամփոփ կերպով տեղեկութիւններ տալ դեսպանատան կարեւոր աշխատանքներուն մասին, ինչպէս նաեւ՝ ա՛յն յարաբերութիւններուն, զորս կը մշակէք քաղախական պետութեան հետ, անոնք ըլլան համաձայնագիրներ կամ այլապէս:

Պ.- Մեր յարաբերութիւնները հիմնած ենք դեռ 92 թուականին, իսկ դեսպանատունը կը գործէ 93 թուականէն: Ես առաջին արտակարգ եւ լիազօր դեսպանն եմ այստեղ, իմ նախորդս եղած է գործերու հաւատարմատար, իմ համակուրսեցի Արման Մելիքեանը, որ հիմա Ղարաբաղի Հանրապետութեան ներկայացուցիչն է Երեւան: Փաստօրէն ան բացած է դեսպանատունը եւ ես կը շարունակեմ: Ես գործողութեամբ եմ այստեղ 99 թուականին, 2000-ին յանձնած եմ իմ հաւատարմագիրս նախագահ Նազարպայեւին, իսկ 2001 թուականէն համատեղութեան կարգով նաեւ կը ներկայացնեմ Հայաստանի շահերը Քրիքիզստանի Հանրապետութեան մէջ: Փաստօրէն իմը չըջանային դեսպանատուն է:

Պէտք է ըսել որ բաւականին մեծ աշխատանք կը տանինք թէ՛ պետական ասպարէզի մէջ եւ թէ՛ գիտամշակութային, որովհետեւ բաւականին մեծ դաշտ կայ: Մենք փորձած ենք այս չորս տարուայ ընթացքին կարեւոր գործեր ընել: Կայացած է երկու պաշտօնական այց.- 99 թուականի Սեպտեմբերին նախագահ Ռոբերտ Քոչարեանը ժամանեց Ասթանա՝ Քաղախստանի նոր մայրաքաղաքը: Փաստօրէն այդ պատմական այց էր, որովհետեւ ստորագրուեցան կարեւոր պայմանագիրներ, անիկա նոր լիցք հաղորդեց մեր երկու հանրապետութիւններու յարաբերութիւններուն:

2001 թուականի Մայիսին տեղի ունեցաւ նախագահ Նազարպայեւի առաջին այցը Երեւան, ի պատասխան Քոչարեանի այցին: Նոյնպէս, ուրեմն, ստորագրուեցան փաստաթուղթեր: Պէտք է ըսել որ մեր իրաւական դաշտին մէջ ունինք 4 տասնեակ պայմանագիրներ, ստորագրուած մեր երկու երկիրներուն միջեւ: Անոնք շատ տարբեր են. քաղաքական, ռազմական, տնտեսական ու դեռ տարբեր ոլորտներու մէջ:

Աշխատանքի բաւական ընդարձակ դաշտ մը ունինք երկու երկիրներուն միջեւ:

Բացի ատկէ, քանի որ սփիւռքը կը ներկայացնէք այս պահուն ու ձեզ շատ կը հետաքրքրեն սփիւռքի համայնքի մը կապուած հարցերը, պէտք է ըսենք որ այստեղի հայկական համայնքը ունի շատ մեծ պատմութիւն: Ծիշդ է, անիկա կը համարուի ոչ-աւանդական համայնք, սակայն ես ձեռնամուխ եղայ, ուրեմն, մի քանի հետազոտութիւններու, քանի ինքս ես պատմաբան արեւելագէտ եմ:

Որպէս արդիւնք մեր հետազոտութիւններուն՝ լոյս տեսան մի քանի գիրքեր ու յօդուածներ նուիրուած շատ տարբեր բնագաւառներու:

Կրնանք նշել մեր կողմէ պատրաստուած եւ 99 թուականին հրատարակուած «Հայ-քաղաքական Պատմութեան Էջերէն» մենագրութիւնը, որ գրուած է ռուսերէն լեզուով եւ առաջին առթիւ պետական շրջանակներուն մէջ կատարուած է գիրքի շնորհանդէսը Ասթանայի մէջ: Գիրքին նախաբանը գրուած է երկու նախագահներու կողմէ, իսկ որպէս հեղինակներ կը հանդիսանանք ես եւ իմ կինը, որ քաղաք է ազգութեամբ:

Բաւականին մեծ աշխատանք տարի հայ համայնքի ուսումնասիրութեան գործին մէջ: Ուրեմն մի քանի թեմաներ կան, որոնք շատ հետաքրքրական են հայագիտութեան համար: Առաջինը Քաղաքաստանի հայ համայնքի պատմութիւնն է: Մինչեւ վերջերս անիկա սպիտակ էջ էր մեր սփիւռքահայ պատմութեան մէջ: Մենք յաջողեցանք մասամբ այդ կատարել. իսկ երկրորդը Հայաստանի ղփչայերէն գրականութեան նուիրուած հետազոտութիւններն են, այսինքն թրքախօս հայերու մասին: Քանի որ քաղաքները թրքախօս ժողովուրդ են եւ ղփչայերէն լեզուն կը վերաբերի թրքական լեզուաընտանիքի ղփչայերէն բաժնին, այդ իսկ պատճառով ղփչայերէնը մեծ հետաքրքրութիւն կը ներկայացնէ Քաղաքաստանի մէջ եւ քաղաք ժողովուրդին համար: Ու առաջին հրատարակութիւնը, նուիրուած այդ թեմային, եղաւ 2001 թուականին քրիստոնէութեան 1700-ամեակին նուիրուած. հրատարակեցինք այնպիսի գիրք մը, որ կը կոչուի «Հայ Ղփչայերէն Սաղմոսագիրք»ը: Քանի այստեղ կ'ապրի շատ յայտնի գիտնական Փրոֆ. Կարկաւերսը, որ շատ գիտակ կը համարուի այս բնագաւառին մէջ, մենք ձեռնամուխ եղանք միատեղ այս գիրքի հրատարակութեան եւ հայագիտական մասը ես պատրաստած եմ, որովհետեւ բնագիրը գրուած է գրաբարով եւ կը շարունակուի հայատառ թրքերէնով, այսինքն՝ ղփչայերէնով: Լատինատառ տուած ենք բնագիրը, բայց վերջաւորութեան կայ հայատառ օրինակը:

Արդէն հրատարակուած է երեք գիրք: Երկրորդը՝ «Ղփչայերէն Գրա-


կանութեան Ժառանգութիւնը» եւ երրորդը՝ Մխիթար Գօշի թարգմանութիւնն է: Պատմութիւնը այս է. Խրիմի մէջ ապրող հայերը, դեռեւս 12-13-րդ դարերէն, ստիպուած կը լքեն Խրիմը, սելճուքներու հալածանքներու որպէս հետեւանք, կ'երթան դէպի այսօրուան Լեհաստանի եւ Ուքրանիայի սահմանները եւ այնտեղ մեր թրքախօս հայերը ապագային տարբեր ազգերու ժամանումով կը դառնան լեհեր: Այսօր Հայաստանի մէջ այս թեմայով համարեա ոչ ոք կը զբաղի: Մատենադարանին մէջ մենք ունինք մօտաւորապէս տասը ձեռագիր եւ մնացեալ ձեռագիրները ցրուած են զանազան հայագիտական կեդրոններու մէջ:

Ասիկա նիւթ մըն է, որ ունեցաւ բաւականին մեծ արձագանգ:

Հաւանաբար գիտնալու էք որ 1933-38 թուականներուն այս հանրապետութիւնը գլխաւորած է Լեւոն Միրզոյեանը, բնիկ զարաբաղցի, որ բաւականին մեծ հետք ձգած է այստեղ: Միւս գիրքը, որ այստեղ հրատարակեցինք 2001 թուականին, Լեւոն Միրզոյեանին նուիրուած գիրքն էր, որ եղաւ նախագահի աղջիկին հետ միատեղ: Նախաբանը ես գրած եմ եւ կան տարբեր աղբիւրներ: Միրզոյեանը եղած է առաջին ղեկավարը Քաղախստանի:

Բացի անկէ որ մենք քաղաքական շփումներ կ'ապահովենք մեր երկու կամ երեք երկիրներուն միջեւ, բաւականին մեծ գիտական աշխատանք կը տարուի:

Քանի որ ես իրանագէտ եմ, թրքագէտ չեմ, երկու շաբաթէն լոյս կը տեսնէ պետական թանգարանի Սասանեան դրամներու նուիրուած իմ



Աքթսանի հայկական պատմական եկեղեցին:

աշխատութիւնը: Իսկ յաջորդը իմ դոկտորական թէզն է, որ կը կոչուի «Հայաստան եւ Սասանեան Պարսկաստանը», որ դարձեալ ռուսերէն լեզուով է, բայց մեծ ամփոփում կայ անգլերէնով, մօտ 10 էջի վրայ, որ ինքնին հետաքրքրական գործ է, քանի որ ծանօթ եմ ինքս իրանական աղբիւրներուն եւ մաքսիմալ փորձ ըրած եմ ներկայացնելու Հայաստանը Սասանեան հարստութեան շրջանին, որ եղած է մեր պատմութեան լաւագոյն շրջաններէն:

Հ.- Ծարուակելով հայկական տեղական գաղութին մասին, արդեօք կա՞նք միութիւններ:

Պ.- Քաղախստանի մէջ ունինք 11 կամ 12 ազգային կեդրոններ համարեա բոլոր քաղաքներուն մէջ՝ Ալմաթի, Ասթանա, Աքթան եւ այլուր գրանցուած հայկական հասարակական կազմակերպութիւններ: Անցեալ տարի ամրան աւարտեցաւ շինարարութիւնը Ալմաթիի ազգային մշակութային կեդրոնի շէնքին, որ փաստօրէն միա՛կն է ամբողջ Միջին Ասիայի մէջ որպէս առանձին շէնք, ուր կը գործէ դպրոց. բայց աւելի բովանդակալից դարձնելու ենք այդ կեդրոնը, քանի որ նոր է ու աւանդութներ չկան: Ժամանակ պէտք է այդ կեդրոնը վերածելու իրա՛ւ հայկական մշակութային օճախի: Վերը յիշեցի որ այս գաղութը աւանդութիւններ չունի: Հայեր հիմնականին մէջ ճշամիջոցներու հետեւանքով վտարուած են հայրենիքէն եւ հիմա կը գտնուին հոս, եկած են այս խոպանը մակարդակի մը բարձրացնելու: Ըսեմ թէ քաղախահայերէն չատերը ռուսերէն կը խօսին..., որովհետեւ չեն գիտեր հայերէն լեզուն: Առաջին եկուորները «ազգի դաւաճաններ» որպէս բռնազաղթուած են հոս Սթալինի օրերուն...:

Հ.- Ինչպէ՞ս ե՞ն գաղութին յարաբերութիւնները դեսպանատան հետ:

Պ.- Մենք ջերմօրէն կը համագործակցինք:

Հ.- Ինչպիսի՞ գործունէութիւն կ'ունենան հոս քաղախահայերը:

Պ.- Բաւականին շատ յայտնի են որպէս գինեգործներ: Յայտնի հայեր ունինք այդ ասպարէզին մէջ եւ անոնք կը գլխաւորեն գինիի գործարանները: Անցեալին շատ եղած են պետական պաշտօններով զբաղողներ, բայց հիմա քիչ մը աւանդոյթը փոխուած է եւ առեւտուրով կը զբաղին: Ունինք նաեւ բժիշկներ: Հայեր կը գլխաւորեն երկու ռուսական թատրոնները՝ Կարաքանթայի Հենրիկ Յովհաննիսեանը եւ Լերմոնթովի անուան ռուսական տրամաթիկ թատրոնի գլխաւոր բեմադրիչ Ռուբէն Անդրէասեանը:

Վերջին մարդահամարին համաձայն, հայութիւնը կը կազմէ 14,750 հոգի, բայց կան երեք այլ խմբաւորումներ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիներու, որոնք կը բնակին հոս.– փախստականներ եւ քաղաքացիներ՝ Վրաստանէն: Անոնց միասնական թիւը կ'երեւի տասը հազար կ'ընէ եւ ուրեմն ընդհանուր թիւը կը կազմէ տեղացիներու հետ միասին մօտ 25 հազար՝ միայն Քաղախստանի մէջ: Ոմանք գաղթած են Լենինկրատ, Գանատա կամ այլուր: Հայաստան վերադարձողները քիչ են եղած: Բայց անոնց փոխարէն նորեր եկած են:



Ալմաթիի հայկական ակումբը եւ իր բարի պահակը:

Հ.– Նախկին Սովետական երկիրներէն հայեր եկա՞ն Քաղախստան:

Պ.– Գիտէ՞ք, մենք միշտ մեր զեկուցագիրներուն եւ վերլուծական թուղթերուն մէջ գրած ենք թէ լաւ կ'ըլլար որ եթէ Հայաստան չկարենար հասնիլ նախկին Սովետական երկիրներու հայերուն օգնութեան, ապա ձեր նման աւանդոյթ ունեցող գաղութներէ գան ու այս նորակազմ համայնքներուն օգնեն: Այժմ կու գան զանազան տեղերէն ու կը տեսնեն եւ կ'աջակցին:

Հ.– Դեսպանատան մէջ բացի քաղաքականէ, տնտեսական բաժանմունք մը ունի՞ք, որովհետեւ այնպէս կ'երեւի թէ Ռուսաստանէն ետք Քաղախստա-

Անը երկրորդ ամենահարուստ երկիրն է: Վստահ եմ որ եթե դիրություններ ստեղծուին, զանազան շրջաններէ մեծ թիով հայ առևտրականներ պիտի գան ու հոս իրենց առևտրական գրասենեակները հաստատեն: Եթէ մօտ տնտեսական գրասենեակ մը ձեր դեսպանատան յարկին տակ ըլլայ՝ դիրություններ ընծայելու դուրսէն եկող առևտրականներուն եւ ճարտարարտեսականներուն, օգտակար գործ մը կը կատարէք:

Պ.- Դեսպանութիւնը կրնայ յանձն առնել այդպիսի համակարգաւորեալ գործերու ընդունումը: Թէեւ չունինք նման մասնաւոր գրասենեակ, սակայն ես կրնամ դիւրութիւն տալ, մանաւանդ իրաւական:

Հ.- Իսկ կրնա՞ք ձեր անձնակազմին մասին խօսիլ:

Պ.- Փոքր է: Ես եմ ու մեր հիւպատոսը. երկու դիւանագէտ ենք, իսկ մնացեալ երեք տեղացիները գրասենեակային գործերու համար կը ծառայեն, բայց ամէն պարագայի տակ, վերջերս, բաւականին հիւպատոսական ծառայութիւններով կը զբաղինք: Առայժմ, չատ սերտ տնտեսական համագործակցութիւն չունինք: Մեր շրջանառութիւնը երկու երկիրներու միջեւ տարբեր տարիներուն տարբեր եղած է: Առաւելագոյնը 7 միլիոն 2000 թուականին, հիմա մօտ մէկ միլիոնէն երկու միլիոնի սահմանի մէջ է: Ներուժ ունինք, բայց այսօր անիկա տկար է: Հայաստանէն Եւրոպա եւ Ամերիկա կ'երթան ու տարօրինակօրէն ձեզի նման ամերիկացիներ ալ Քաղախստան կու գան տնտեսական յարաբերութիւններ մշակելու... իսկ Քաղախստանէն դուրս կ'երթան դէպի Չինաստան ու հեռաւոր Արեւելք: Այս առումով հայաստանցի առևտրականները չատ տկար են:

Հ.- Կը հաշուէք 25 հազար հայություն: Անոնցմէ քանի՞ն Ալմաթիի մէջ է:

Պ.- Մօտաւորապէս հինգ հազարը: Հիմնականին մէջ Շիչուի կը գտնուին, ուր ցորենի արտեր կան:

Հ.- Մեր ասանդական գաղութներուն մէջ ընդհանրապէս Հայաստանեայց Եկեղեցին է որ կը կատարէ ազգապահպանման մեծ գործ: Գիտենք թէ հոս չունիք հայկական եկեղեցի: Մայր Աթոռին հետ եկեղեցի ունենալու ծրագիր մը կը մշակուի՞:

Պ.- Եզրաս Եպս. Ներսիսեանը մօտիկ ընկեր է ինծի: 2001 թուականին եկած է մեր մօտ: Ըսեմ թէ միակ գործող եկեղեցին Սամարղանտի հին եկեղեցին է, որ անցեալ տարի նշեց իր 100-ամեակը: Ան տարածաշրջանի միակ եկեղեցին է: Իսկ Քաղախստանի մէջ պատմական արմատներ ունեցող միակը Աթթանի մատուռն է: Զայն Աստրախանի հայ վաճառա-

կաններն էին հիմներ ժամանակին, որովհետեւ շատ աշխոյժ եղած են անոնք: Փաստորէն ալիք մը հայերու ներթափանցած է այս տարածաշրջանը, կապուած է Աստրախանի հայ վաճառականներուն: Մատուռը հոն է, բայց քանի որ ամենէն մօտիկ տեղը, ուր հայերը կ'ապրին, Աքթանն է (նաւահանգիստ) ու մատուռը կը գտնուի կիսափլատակ վիճակի մէջ, եւ քանի ռուսերը կ'ապրին այդ կողմերը, ես խնդրեցի ռուսական եկեղեցիէն որ վերցնէ իր հովանաւորութեանը տակ: Առայժմ կանգուն է այս մատուռը:

Հ.- Իսկ ի՞նչ ծրագիր ունի տեղւոյն գաղութի պատասխանատուները հայկական եկեղեցիի մը հիմնարկէքիմ նկատմամբ:

Պ.- Սկիզբը ծրագիր կար որ Ալմաթիի շէնքին մէջ կառուցուէր հայ-կական եկեղեցի: Բայց ինչ-ինչ պատճառներով փաստորէն չյաջողեցաւ ծրագիրը եւ անոնք հրաժարեցան այդ գաղափարէն: Անոնք հիմնած էին Ս. Խաչ կրօնական հաւատացեալներու համայնքը, որպէսզի կարենան կառուցել իրենց եկեղեցին: Փաստորէն գրանցուած է եկեղեցին, բայց չէնք չկայ: Ես իրենց խորհուրդ տուի որ մինչեւ բացումը չէնք տան էջմիածնի, որովհետեւ նախնական համաձայնութիւն ձեռք բերած էի, որ եթէ տեղ մը բան մը պատահի, վարդապետ դրկեն եւ այս համայնքին տէր կանգնին: Շատ կարեւոր էր անիկա, ըստ ինծի: Մշակութային այդ կեդրոնը այնքան կարեւոր չէր, որքան հայ եկեղեցին: Հիմա կան հայ գործարարներ, որոնք կ'ուզեն կեդրոնին կից եկեղեցի կառուցելու ծրագիր մշակել:

Հ.- Համայնք ըսիք: Ո՞վ է համայնքը առաջնորդող մարմինը:

Պ.- Համայնքապետը Ռուտիկ Մնացականեանն է: Ան Քաղախատանի մէջ յայտնի անձնաւորութիւն է՝ փրոֆեսէօր ու գինեգործ: Ան կ'ապրի Ալմաթիի մէջ, ես կապ կը հաստատեմ անոր հետ եւ դուք կրնաք հանդիպում ունենալ հետը: Այսօր երեկոյեան կրնանք հանդիպիլ: Ան շատ լաւ կը ճանչնայ նախագահ Նազարպայեւը: Հիմա մտադրութիւն կայ հայ համայնքներու «ընկերակցութիւն» ստեղծելու եւ կ'ուզենք որ Ռուտիկը գլխաւորէ զայն, որովհետեւ նախագահը անոր հետ շատ լաւ յարաբերութիւններ ունի ու այսպիսով փաստորէն ան կրնայ ներկայացնել ամբողջ Քաղախատանի հայութիւնը պետութեան մօտ:

Համայնքին մէջ, բացի իրմէ, ունինք ուրիշ լաւ ծանօթ դէմքեր:

Հ.- Կրթական մարզի մէջ ունի՞ք աչքառու մշակներ:

Պ.- Ոչ ամէն տեղ: Երեք-չորս համայնքներու մէջ կան դպրոցներ:

(կիրականորեայ): Գիտէք, 100-էն աւելի ազգութիւն կ'ապրի ու Բաւլատարի մէջ կայ պետական դպրոց մը, ուր կ'աւանդուի հայերէն լեզու եւ մենք մեր ուժի սահմաններուն մէջ կ'օգնենք այդ դպրոցին՝ դասագիրքերով ու նիւթերով:

Իսկ եկեղեցւոյ հարցով, եթէ արտասահմանի սփիւռքը ձեռով մը օգնէ Քաղախստանի մէջ հայկական եկեղեցի բարձրացնելուն՝ լաւ կ'ըլլայ: Ի՞նչ կը խորհիք, այդպիսի բարերար մը կարելի՞ է գտնել Ամերիկայի մէջ...: Ըսեմ որ Քաղախստանը կը գտնուի Մայր Աթոռի թեմին մէջ եւ ձեր մտահոգութիւնը որ Անթիլիասը կրնայ եկեղեցականներ զրկել, անհնար է արդէն: Եզրաս Եպս. Ներսիսեանը կը համարուի նաեւ թեմակալ առաջնորդը մեր համայնքին: Ան կապուած է Գարեգին Կաթողիկոսին հետ ու Վեհափառը ըսած է թող սկսին կառուցել, մենք յետոյ կ'օգնենք... այսպէս է խօսակցութիւնը:

Հ.- Վստահ եմ թէ Ամենայն Հայոց Կաթողիկոսը պիտի յարգէ իր խոստումը իր օրով տեսնելու Ալմաթիի հայոց եկեղեցիին օծումը: Միշտ ալ համայնքները իրենք նախագծելու եւ ծրագրելու եւ, որպէսզի բարձրացուելիք տեղւոյն եկեղեցին իրենցը նկատեն:

Պ.- Ես կը խորհիմ թէ հարիւր հազար տոլարով նման կառոյց մը հոս կարելի է բարձրացնել: Կառավարութիւնը հողը պիտի նուիրէ:

Հ.- Հայ մշակոյթը ծանօթացնելու մարզին մէջ ի՞նչ կը կատարէք:

Պ.- Ես միշտ ելոյթ կ'ունենամ հեռուստատեսութենէն, թերթերէն, ամսագրերէն... ես շատ աշխոյժ եմ այդ տեսակէտէն:

Հ.- Մէկ խօսքով, մէկ հոգիով հարիւր գործ տեսնելու վազվզուքի մը մէջ կը տեսնեմ ձեզ:

Պ.- Կինս նկարչուհի է: Ինքը մասնագիտական կրթութիւն չունի: Հայաստանէն հոս եկանք:

Հ.- Սիրողակա՞ն է:

Պ. Սիրողականը ո՞րն է, ան արհեստավարժի նման կը նկարէ: Ահա՛ իր գործերը, որ կը տեսնէք (ու ցոյց կու տայ նկարչուհի կնոջ գործերը, որոնք ամբողջ սրահը կը զարդարեն):

Ես ամուսնացած եմ Սան Փեթերզպուրկի մէջ: Հոն աւարտած եմ ասպիրանտուրան՝ արեւելեան ինսթիթուտին մէջ, 91 թուականին:

Հ.- Նախքան դիւանագիտական կեանք մտնելը, ինչո՞վ կը պարապէիք:

Պ.- Զուտ գիտական կրթութիւն ունիմ: Աւարտած եմ արեւելագիտական բաժանմունքի պարսկական-արաբական բաժինները, յետոյ գացի Ալճերիա, ուր որպէս արաբերէնի թարգմանիչ աշխատեցայ մէկ տարի, յետոյ եկայ ու գացի Սան Փեթերզպուրկ, վեց տարի այնտեղ աշխատեցայ, յետոյ պաշտպանեցի իմ դոկտորականս ու գացի Գերմանիա Ալեքսանդր Ֆոն Հոմպոյթ Ֆոռներէյչըրչի հիմնադրամով, որ ամէն տարի 500 լաւագոյն երիտասարդ գիտնականներու հնարաւորութիւն կու տայ երթալու Գերմանիա կամ եւրոպական որեւէ երկիր, գիտական հետազոտութիւններ կատարելու համար: Իմ թեկնածուական առաջին գիրքը, որ գրուած էր Պարթեւական եւ Սասանեան վարչակազմին մասին, ծրագրուած է գերմաներէնով ու հրատարակուած է Երեւան:

Յետոյ, 97-ին ես ձեռնամուխ եղայ Երեւանի մէջ հայ-քաղաքական բարեկամութեան կապերու ստեղծման:

Հ.- Ուրեմն փաստօրէն լաւագոյն թեկնածուն դուք պիտի ըլլայիք այս երկրին մէջ դեսպանութիւնը վարելու: Քաղախերէն կը խօսի՞ք:

Պ.- Անշուշտ: Քաղախերէնը թրքական լեզու է: Կարդալ կրնամ: Վերջերս գիրք մը պատրաստեցի քաղախերէնի իրանական ազդեցութիւններուն մասին: Իրենց կ'ըսեմ, ճիշդ է ես չեմ կրնար ձեզի նման խօսիլ, բայց ձեր բառերը կրնամ բացատրել: Ըսեմ թէ 97-ին ես հրաւիրուեցայ արտաքին գործերու նախարարութիւն, գլխաւորեցի Իրանի բաժինը, 99-ին նշանակուեցայ դեսպան, արդէն կը տեսնէք:

Հ.- Պրն. Վարդան Ոսկանեանը յաճախ կ'այցելէ՞ ձեզի:

Պ.- Պրն. Ոսկանեանը այստեղ էր, աշնան մենք միասին Պիչքէքի մէջ էինք, այստեղ ալ եղած է: Ճիշդ ձեր նստած տեղը գինի կը խմէինք: Ուրեմն 2001-ին նշանակուեցայ Պիչքէքի մօտ Հ.Հ. դեսպան:

Հ.- Արդեօք կ'այցելէ՞ք Քրքըզստան:

Պ.- Անշուշտ, մեր վարչապետը՝ Մարգարեանը, Ապրիլ 16-ին պիտի գայ Պիչքէք ու պիտի երթամ այդտեղ ու դիմաւորեմ զինք:

Հ.- Իսկ ի՞նչ կ'ըսէք Պիչքէքի հայութեան մասին:

Պ.- Այդտեղի հայութիւնը թուով աւելի քիչ է: Թիւը մօտ 3-4 հազար է: Անոնք ալ գէշ չեն, բաւականին աշխոյժ են, ունին լա՛ւ գործարարներ: Քանի փոքր է քանակը, հոն հայութիւնը ամփոփուած է: Հոն եւս առեւտրականներ ունինք, այնպէս որ բաւականին բարւոք է վիճակը:

Հ.- Անշուշտ Հայաստան-Ռուսաստան-Քաղախստան ապահովութեան տեսակէտով կը վարեն բարի յարաբերութիւններ:

Պ.- Ինչ կը վերաբերի այս տարածաշրջանի հայկական տարրին, ան շատ հաւատարիմ է եւ համապատասխան վերաբերմունքի կ'արժանանայ իշխանութիւններու կողմէ: Եւ այն հանգամանքը, որ հայ ղեկավարներ եղած են այստեղ, ինչ որ սովորոյթ ստեղծած է, այդ վստահութիւնը կայ քաղախ ժողովուրդի մօտ մեր նկատմամբ եւ բաւականին լաւ յարաբերութիւններ կան: Այս ոչ միայն վերին աստիճանի, այլեւ՝ ժողովուրդի մակարդակով:

Ես ալ բացառութիւն չեմ որ հայ-քաղախական ընտանիք հիմնած եմ. իմ նմանները շատ են: Երկու աղջիկ ունիմ: Բաւականին նուիրուած աղջիկներ են, հայերէն կը խօսին:

Հ.- Արտասահմանէն հայեր կ'այցելե՞ն ձեզի:

Պ.- Լոնտոնէն Պրն. Ասատուր Կիւզելեանը հոս էր, լա՛ւ անձնաւորութիւն է եւ ըսաւ թէ կրնայ օգտակար ըլլալ Ալմաթիի մէջ մեր եկեղեցւոյ շինութեան համար: Իսկ երկրորդն էք որ արտասահմանէն եկած էք մեր մօտ եւ ատոր համար շնորհակալ եմ: Ըսեմ թէ, ցաւօք սրտի, քիչ կու գան արտասահմանէն: Վստահ եմ թէ ձեր խօսքը կրնայ հասնիլ շատերու մեր այստեղի ծրագիրին համար:

Բաւականին մեծ հնարաւորութիւններու երկիր է Քաղախստանը եւ մենք կրնանք լա՛ւ լոպպիինկ ընել այստեղ:

Հ.- Մանաւանդ Մեծ Եղեռնէն ետք, երբ հայութիւնը անորոշութեան մատնուած ու ցրուած էր Միջին Արեւելքի արաբական մայր գաղութներու մէջ, Լիբանան, Սուրիա, Պաղեստին ու Իրաք, հոն մեր աւանդական կուսակցութիւնները, երեքն ալ հաւասարապէս, ազգապահպանման մեծ գործ կատարեցին: Հիմնեցին դպրոց, երիտասարդական ու մշակութային եւ մարզական կեդրոններ եւ անոր շնորհիւ է որ այսօր կրցանք փրկել ամերիկահայութիւնը: Այս ճշմարտութիւն է: Ամբողջ Միջին Արեւելքի այդ սերունդն է որ մեծաւ մասամբ գնաց Ամերիկա եւ հոն ազգային կեանքին նոր թափ տուաւ: Ես կը խորհիմ որ տակաւին մեր աւանդական երեք կուսակցութիւնները պէտք է ամէ՛ն գաղութի մէջ քերեն իրենց մասնակցութիւնը, երբեմն առանձին, երբեմն գործակցաբար, ապահովելու նոր գաղութներու ազգապահպանումը, մանաւանդ որ անոնք ունին փորձառութիւնը: Մրցակցութիւն անշուշտ կարելի է ունենալ այս երեքին միջեւ, ինչ որ անհրաժեշտ է: Ի վերջոյ առեստրական կեանքի փորձառութենէն գիտենք թէ յաջողութեան ենթահողը մրցակցութեան մէջ է եւ ոչ թէ մենաստիքութեան: Ու կը խորհիմ թէ հոս Միջին Ասիոյ

զանազան նոր գաղութներէն թէ համայնքներէն ներս անոնք արմատներ կրնան նետել:

Պ.- Թող հաստատուին, ես դէմ չեմ... Միայն թէ օգուտ բերեն: Փաստորէն դաշնակցականներ կան, որոնք Մոսկուայի մէջ արմատ նետեր են: Խորէն Աւոյեանն է հոն, իմ ընկերը, որ գործ կը տեսնէ: Բաւականին աշխոյժ մարդ է... Թէեւ դաշնակցական է: Ռամկավարներն ալ իմ բարեկամներս են. ՀՌԱԿ-ի անդամներէն շատեր բարեկամներս են:



ՌՈՒՏԻԿ ՄՆԱՅԱԿԱՆԵԱՆ

Համայնքապետ

Հ.- Դուք համայնքապետն էք Կեդրոնական Ասիոյ այս կարեւոր գաղութին: Կրնա՞ք ըսել թէ ե՞րբ սկսաւ այս գաղութին հաշուառեալ բեկորները քով-քովի բերելու կազմակերպչական աշխատանքը:

Պ.- Համայնքը 1991 թուականին արդէն կազմակերպուած էր: 2001 թուականին ես որպէս համայնքի ղեկավար ընտրուեցայ եւ նախաձեռնեցի մեր համայնքի տան չինութեան աշխատանքին եւ կազմակերպեցինք մեր կիրակնօրեայ հայկական դպրոցը: Ունինք հայկական պարախումբ, որ կը մասնակցի Քաղախստանի Հանրապետութեան մշակութային միջոցառումներուն եւ միջազգային փառատօններուն:

Մեր մշակութային կեդրոնը առանձինն մեզ չի բաւարարեր եւ անոր համար մենք ցանկութիւն ունինք կառուցելու մեր եկեղեցին: Բայց, ցաւօք սրտի, մեր համայնքը տնտեսապէս ամուր չէ, որպէսզի կարենայ այս նախագիծը իրականացնել, որովհետեւ Քաղախստանի մէջ կ'ապրի 25 հազար հայ, որմէ 5000-ը՝ Ալմաթիի մէջ, ուր հարկաւոր է ունենալ Հայաստանեայց Եկեղեցի: Դժբախտաբար համայնքին մէջ չունինք տնտեսապէս զօրաւոր ազգայիններ, որպէսզի գլուխ բերենք այս կարեւոր ծրագիրը:

Հայերը մեծ ներդրում ունին հոս ե՛ւ տնտեսապէս, ե՛ւ մշակութապէս, հասարակական ու քաղաքական կեանքին մէջ: Բաւական է ըսել որ մշակութային թատրոնի հիմնադիրը Սերգէյ Ռուբինի Պաշոյեանն է: Երկու ռուսական թատրոններու գլխաւոր բեմադրիչները հայեր են:



Սուրէն Անդրէասեանը կը գլխաւորէ Ալմաթիի ռուսական թատրոնը:

Իսկ ինչ կը վերաբերի այն անձերուն, որոնք ժամանակին բարձր պաշտօններ ունեցած են քաղաքական վարչամեքենային մէջ, այսօր անոնք չկան: Բայց ասոնք կարեւոր լուծայ կը ներդնեն, ինչպէս՝ Լեւոն Միրզոյեանը, Արթո Վարդանեանը, Եուրիկ Բաբախանեանը, Եւկենի Գէորգովիչը եւ ասոնց նման շատ անուններ, որոնք Քաղախստանի քաղաքական կեանքին մէջ ունեցած են կարեւոր դեր:

Պէտք է նաեւ յիշեմ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Է. Խուրշուտեանը, որ մեծ ներդրում ունի հայ-քաղաքական յարաբերութիւններու զարգացման մէջ: Պէտք է ըսել որ մենք հասանք հայ-քաղաքական յարաբերութիւններու մշակման մէջ կարեւոր զարգացման:

Հ.- Բացի Ալմաթիի համայնքներէն, ինչպէ՞ս կը գնահատէք Քաղախստանի տարբեր քաղաքներու մէջ ապրող հայութեան պատկերը:

Պ.- Մենք ունինք մօտ տասը ազգային կեդրոններ, որոնք յաջողապէս կ'աշխատին: Մէկ փափաք ունիմ՝ ստեղծել Քաղախստանի համայնքներու ընկերակցութիւն: Մենք կը կարծենք որ մօտ ապագային պիտի իրականացնենք այս երազը, կազմելով կեդրոնական մարմին մը, համախմբելով տարբեր-տարբեր շրջաններու մէջ գործող համայնքները:

Հ.- Ի՞նչ է Ալմաթիի ձեր կազմակերպութեան անունը:

Պ.- Կը կոչուի «Լոյս» Հայկական Մշակութային Կեդրոն:

Հ.- Գիտե՞ք որ եկեղեցին մեծ դեր կը խաղայ սփիւքահայ կեանքին մէջ, հայութիւնը ի մի բերելու աշխատանքին առումով: Ինչպէ՞ս պիտի ծրագրէք մասն աշխատանքներուն մը:

Պ.- Մենք ալ գիտենք որ եկեղեցին աւելի կը միացնէ հայ համայնքը, քան այն մշակութային տունը, որ մենք կ'առուցած ենք: Ինչպէս ըսի, տնտեսական արգելքն է որ նման յանդուգն ծրագիր մը իրագործելը կը դժուարացնէ:

Հ.- Ձեր մշակութային կեդրոնը իրողապէս որո՞ւ կը պատկանի:

Պ.- Անիկա մեր համայնքին սեփականութիւնն է: Մեր համայնքին վարչութիւնը կ'ընտրուի միայն ընդհանուր ժողովով:

Ըսեմ որ մեր յարաբերութիւնները հայկական դեսպանատան հետ համերաշխ են ու յաճախ կը գործակցինք: Բոլոր այն հարցերը, որ մենք չենք կրնար լուծել, կը յղենք Հ.Հ. դեսպանին եւ ան կը դիւրացնէ մեր աշխատանքները:

Հ.- Ի՞նչ ծրագիրներ նախատեսած էք ձեր մշակութային տան համար:

Պ.- Մենք կ'ուզենք որ այս տունը ըլլայ մշակութային կեդրոն: Ինչպէս ըսի, հոն կը գտնուի կիրականօրեայ դպրոցը, այնտեղ կ'անցընենք մեր ժողովները, մեր պարախումբերը այդտեղ փորձ կ'ընեն: Իսկ հոգեւոր կեանքի համար այդ տան մօտ գտնուող հողաչերտին վրայ կ'ուզենք մեր եկեղեցին կառուցել:

Հ.- Հիմա որ հողը ունիք, այդ եկեղեցին քանի՞ տոլարի ծրագիր մը կը նախատեսէք որ ըլլայ:

Պ.- Եթէ ես չեմ սխալիր, մօտաւոր գնահատումովս պիտի արժէ 250-300 հազար տոլար:



Ալմաթիի հայկական գաղութի պատասխանատուներուն հետ:

Հ.- Ինչպէ՞ս կրցաք գոյացնել մշակութային այդ ձեր տան շինարարական ծախսերը:

Պ.- Զայն կառուցեր ենք մեր համաքաղաքացիներու նիւթական օգնութեամբ: Առ այսօր, մօտ 85 հազար տոլար հաւաքած ենք այդ շէնքի կառուցման համար:

Հ.- Գիտենք թէ ջերմ յարաբերութիւններ ունիք Քաղախստանի կառավարութեան եւ պետական իշխանութիւններու հետ: Ինչպէ՞ս կրնաք այդ ձեր կապերը օգտագործել ի նպաստ ձեր համայնքին:

Պ.- Բարոյական է մեր ունեցած յարաբերութիւնը եւ նիւթական ակնկալութիւններ չունինք առայժմ: Շատ մտերմիկ կապեր ունինք հանրապետութեան նախագահ Նազարպայեւի հետ: Ան մեզ շատ կը յարգէ, միշտ դրապէս կը վերաբերի մեզի հանդէպ: Ինչպէս քիչ առաջ նշեցի, շնորհիւ կարգ մը հայերու, որոնք ներդրում ունեցած էին Քաղախտանի Հանրապետութեան զարգացման մէջ, հայութիւնը լա՛ւ անուն ունի այս երկրին մէջ: Պէտք է ըսել որ այս երկրի համայնավար կուսակցութեան առաջին ընդհանուր քարտուղարը՝ Լեւոն Միրզոյեան, քաղախ ժողովուրդին համար ամենադժուարին տարիներուն, սովի տարիներուն, մեծ օգտակարութիւն ունեցաւ: Ցեղախումբեր տեղահան եղած էին ու Միրզոյեան կ'ուզէր որ նստակեաց կեանքի անցնէին:

Հ.- Լսեցի թէ Ղարաբաղ ծնած էք, սակայն ձեր փոքր տարիքէն Քաղախստան գալով հոս հասակ առած ու մօտիկ եղած էք նաեւ ուս ժողովորդին, մանաւանդ որ այս երկրին կէսը ուսերէ կը բաղկանայ: Ինչպէ՞ս են յարաբերութիւնները հայութեան եւ ուսերուն:

Պ.- Խոստովանելու եմ, որ մի՛շտ ալ հայ եւ ռուս ժողովուրդներու յարաբերութիւնները սքանչելի եղած են: Խորհրդային շրջանի օրերուն նաեւ ազգակցական մեր կապերը բաղդատմամբ այլ հանրապետութիւններու, Քաղախտանի հետ եղած են մի՛շտ ջերմ, շնորհիւ ռուս եւ քաղախ ժողովուրդներուն:

Հ.- Մ.Ա.Կ.ի ընդհանուր քարտուղար Քոֆի Աննանի ի պատիւ տրուած էր ընդունելութիւն մը. հրաւիրեալներուն մէջ էիք նաեւ դուք եւ լսած եմ որ դուք հոն յայտարարութիւն մը ըրած էք:

Պ.- Այո, երբ հարց կը տրուէր թէ հայերը ինչպէ՞ս կ'ապրին Քաղախտանի մէջ, ես Պրն. Աննանին ըսի. «Հայերը կ'ապրին այս երկրի մէջ այնպէս ինչպէս քաղախները կ'ապրին, բայց քանի հայերը աւելի ձեռներէց ժողովուրդ են, ուրեմն հայերս կ'ապրինք աւելի լաւ», ու Քոֆի Աննան ջերմօրէն լսեց իմ այդ յայտարարութիւնը, պետական իշխանաւորներու ներկայութեան:

Ալմաթի, Քաղախստան, 24 Մարտ 2004

«ՆՈՐ ՕՐ», 26 Յունիս - 7 Օգոստոս 2004

«ԶԱՐԹՕՆՔ», 1 Սեպտեմբեր 2004

«ՏԻ ԱՐՄԻՆԻԸՆ ՌԻՓՈՐԹԸՐ», 10 Սեպտեմբեր 2005



Հինն ու նորը կողք կողքի Պոլսոյ մէջ:

ՊՈԼԻՍԸ ԻՐ ՀԱՅՈՒԹԵԱՄԲ

Առիթ ունեցած եմ ըլլալու Մեծ Եղեռնի մեր կարգ մը նահատակներու հարազատներուն հետ եւ վայելելու անոնց մտերմութիւնը: Նիւ Եորքի օտար բայց ոչ ամաչի ճամբաներէն անցնելով այցելած եմ Գրիգոր Զօհրապի դստեր Տոյորէսին ու Դանիէլ Վարուժանի աղջկան՝ Վերոնիքային: Միջերկրականի ափին՝ Նիսի մէկ արուարձանին մօտ, եղած եմ նաեւ Ռուբէն Սեւակի դստեր՝ Շամիրամին հետ: Գրած եմ յիշատակներս ցեղասպանութեան զոհ մեր աննման գրողներու հարազատներուն՝ մանկութիւն չունեցող այդ որբերու ցաւին, հոգեկան տառապանքին մասին:

Այդ օրերուն ուխտագնացութիւն մը կատարելու հոգեկան պահերն եմ ապրած գրկելով զանոնք, կամ համբուրելով անոնց դողդոջուն ձեռքերը... Զօհրապներու, Վարուժաններու եւ Սեւակներու սո՛ւրբ ձեռքերը համբուրած ըլլալու երջանկութեամբը:

Նոր ուխտագնացութիւն մըն էր որ կ'ունենայի երբեմնի հայատրոփ Պոլսոյ՝

այսօրուան Իսթանպուլի մէջ: Սակայն այս պարագային անոր գերեզմանը յայտնի էր... աննման՝ տասնհինգի այննահատակներուն, որոնց ցիրուցան ոսկորները բորենիներու յանձնուեցան:

Հայ լրագրութեան առաքելութեան հաւատացողի մը համար բնական պիտի ըլլար այցի երթալ Պալըքլիի գերեզմաննոցը եւ ծունկ մը աղօթք ընել Հրանդ Տինքի թաց հողակոյտին առջեւ:

Պոլսոյ մեր գերեզմանները՝ Ծիշլիի, Սկիւտարի եւ ասոնց նման տասնը-հինգի հասնող մեր սրբավայրերը, կը կազմեն, անկասկած, արեւմտահայութեան պատմութեան յիշատակարանները: Նախորդ օրերուն այցելած էի արդէն Պետրոս Դուրեանի, Ռէթէոս Պերպէրեանի, Մատթէոս Զարիֆեանի, Մաղաքիա Արք. Օրմանեանի, Բիզանդ Բէշեանի... մինչեւ իսկ Յակոբ Մարթայեանի (Խթաթիւրքի իսկ որակումով՝ Տիլաշարի) գերեզմանները, ընծայելու իմ յարգանքը այս մեծերուն, որոնց կեանքին ու գրականութեան ծանօթացուցած էին մեր ուսուցիչները մեր մանկութեան օրերուն:

Տինքը նոր զոհին էր արդէօք Հայկական Ցեղասպանութեան: Ինչպէս յանախ ըսուեցաւ իր սպանութեան օրերուն, ան եղաւ 1.5 միլիոն + 1 զոհը:

Թարմ ծաղիկներ գերեզմանին վրայ՝ ինծի նման ուխտաւորներու կողմէ, եկած հեռաւոր Գերմանիայէն ու Ֆրանսայէն: Այնքա՛ն թարմ ծաղիկներ, կարծես զոհուած ըլլար երէկ: Գունագեղ ծաղիկներով զարդարուած հողը գարնանամուտի մը տեսարանը կը պարզէր. ինք որ ծնած էր մայր հայրենիքի հողին վրայ՝ շրջապատուած Հայկական Բարձրաւանդակի մեր բուրաստաններով: Ան հարազատ քաջ ժառանգորդն էր հայ լրագրութեան մեր դայեակներուն՝ աննման Բէշեանի, Արփիարեանի, Զօպանեանի ու Թէքէեանի:

Տինքի սպանութեամբ, Իսթանպուլը իր նմանը չտեսած յուղարկաւորութիւն մը յանձնեց նորօրեայ Թուրքական Հանրապետութեան պատմութեան, երբ բազմահազար ցուցատախտակներով հայ ու թուրք, քիւրտ ու չէրքէզ սգաւորներ կը յայտարարէին. «Մենք բոլորս Հրանդ Տինք ենք, բոլորս հայ ենք»: Առաջին անգամ ըլլալով բացայայտօրէն կը դրսեւորուէր հայ թուրքական եղբայրակցութիւն մը:

Այլապէս ալ մի՛շտ գոյութիւն ունեցած էր հայութեան տառապանքը, կոտորածը, Եղեռնն ու տեղահանութիւնը եւ վերջապէս հայութեան արդար իրաւունքները ճանչցող թուրք փոքրամասնութիւն մը, առաւելաբար յառաջդիմական իտէալներով առաջնորդուած սերունդ մը, որ զինուորական իշխանութեան տակ լուռ կը մնար տասնամեակներ ամբողջ: Գոյութիւն ունէր մարդասէրներու հաւաքականութիւն մը, որ կը գիտակցէր թէ հայութիւնը Օսմանեան կայսրութեան օրերուն թէ Թուրքիոյ նոր հանրապետութեան շրջանին բերած էր իր ամբողջական մասնակցութիւնը իր երկրին բարգաւաճումին, տնտեսական ու մանաւանդ մշակութային կեանքի եզակի հզօրացումին:

Այսօր, բարեբախտաբար, հակառակ իսլամ կրօնամոլ քաղաքական իշխանութեան, համեմատաբար աւելի բարեխիղճ ու իր նախորդներէն աւելի լայնախոհ կառավարութիւն մը արտօնեց Հրանդ Տինքի յուղարկաւորութիւնը կազմակերպել ժողովրդային չափանիշով: Նոյն օրերուն, արդէն հայոց Վանայ ծովուն վրայ կը վերանորոգուէր Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին, նոյնինքն թրքական պետութեան պատուէրովն ու նիւթական յատկացումովը:

Այդ օր, չէր բաւեր այցելել շիրիմին հէք հայ լրագրողին: Ծանշնալով Յուրտ Պատերազմի օրերուն ռամկավար ազատական մամուլի քաջ խմբագիրներուն՝ Պօղոսեանի, Անդրէասեանի ու Ահարոնեանի ապրած տխուր օրերը, Տինքը բախտակից մը կ'ըլլար անոնց՝ Իսթանպուլի մէջ: Անպայման այցելելու էի Հրանդի հարազատներուն:



Ռաքէլ եւ Արատ Տինքերուն հետ, ճահատակ Հրանդին տան մէջ:

Նախ՝ «Ակօս»ի խմբագրութիւն երթալու էի, ըլլալու Հրանդի առաքելութեան հաւատացող մեր նորօրեայ սրբազան խենթերուն հետ. նոր խմբագրին՝ Էթիէն Մահմուպեանի, արուեստի բաժնի վարիչ՝ Մաշտա Սարիսի ու թերթին աշխատակցող թուրք լրագրողներուն:

Խմբագրատան դրան մօտ, ուր սպաննուած էր Հրանդ, պահ մը խոնարհեցայ... մինչ փողոցին անկիւնը թուրք ոստիկաններ տակաւին կը հսկէին խմբագրատան:

Ապա այցելեցի ողբացեալին կնոջ՝ Ռաքէլին ու զակին՝ Արատին, որ մեր Արարատի յապաւումն է անկասկած: «Ակօս»ի հիմնադիրներէն հայատրոփ

երիտասարդ բարեկամ մը՝ Յարութիւն Ենշէթեան, զիս առաջնորդեց Տինքերու բնակարանը:

Հայու տուն չէի գտնուած Պոլսոյ մէջ: Առաջին հայկական բոյնն էր որ կ'այցելէի այս քաղաքին մէջ: Կը բարձրանանք չորրորդ յարկ: Կը դիմաւորէ մեզ Ռաքէլը: Յուզումի քանի մը խօսք, ցաւակցական քանի մը արտայայտութիւն: Տան մէջ ծնած է արդէն Հրանդի նոր թոռնուհին: Արատը կ'ապրի իր ընտանիքով մօրը հետ: Մանուկի մը՝ նոր սերունդին ձայնն է որ կը լսեմ հայկական այս տան մէջ: Նոր Հրանդներ արդէն կը ծնին Պոլսոյ մէջ: Կը ծնին շարունակելու համար հայկական կեանքը:

Յարութիւն պատմած էր Ռաքէլի եւ Հրանդի հանդիպման մասին. քրտախօս Ռաքէլ, Մեծ Եղեռնի մնացորդացի սերունդէն, Սասունի լեռներէն կու գայ Գնալը ու Հրանդի մօտ կը սորվի հայերէն լեզուն եւ ամէն ինչ որ հայկական է...: Կը սիրահարին, կ'ամուսնանան ու կը կազմեն երջանիկ բոյն մը: Ռաքէլ, աստուածավախ հայուհի մը, ամուսնոյն մահէն ետք կը շրջապատէ ինքզինք իրեն նման եկեղեցասէր տիկիներով:

Զօհրապի, Վարուժանի ու Սեւակի հարազատներուն հետ ըլլալու երջանկութիւնը ունեցած էի օտա՛ր մայրերով առաջնորդուելով ու բարձրանալով անոնց տուները: Տինքի հարազատներուն հետ կու գամ Հրանդին իսկ ապրած տունը: Եթէ միւսները չունեցան պատեհութիւնը շրջապատուած ըլլալու իրենց հօրենական յիշատակներովը, ապա Տինքի ընտանիքին անդամները երջանիկ են գոնէ ապրելու իրենց ամուսնոյն, հօր ու մեծ հօր յիշատակներով:


Կ'իջնեմ վար, Պոլսոյ փողոցները... կը քալեմ մայրերէն, ուրկէ քալած են Եղեռնի մեր զոհերը եւ ուրկէ քալած է ճակատաբաց ինքը՝ Հրանդը: Այլեւս այս փողոցները ինծի անծանօթ չեն թուիր: Կարծես մանկութիւն մը ապրած ըլլայի հոս, Վոսփորի այս ափին: Այս պահուն կ'ունենամ զգացումը երբեմնի հայկական Պոլիսը ճանչնալու իր ազգային կեանքով, որքա՛ն տարբեր իմ գիտցած Պէյրութի ու այլոց համար՝ Հալէպի ու Գահիրէի կեանքէն:

Հրանդը իր ազատական գաղափարներով հիմնած էր «Ակօս»ը, որ այսօր իր հայ թէ թուրք ընթերցողներուն համար կը մնայ փնտռուած շաքաթաթերթ մը:

Յարգա՛նք իր յիշատակին:

Իսթանպուլ, Մարտ 15, 2007

ՄԵՍՐՈՊ ԱՐԲ. ՄՈՒԹԱՖԵԱՆ
Պատրիարք Հայոց Կոստանդնուպոլսոյ



Հ.- Ձեր եկեղեցական իշխանութեան առաջին օրերուն կ'իմանայինք, թէ մեծ թիով երիտասարդներ բոլորած էիք ձեր շուրջ եւ ուրախութիւն էր տեսնել թէ անոնք ազգային համայնքային կեանքով կը հետաքրքրուին: Ձեռով մը գաղութը վերանորոգելու աշխատանք մըն էր: Արդեօք այսօր այդ ճիգը ո՞ր հասած է:

Պ.- Այժմ ալ ունինք երիտասարդ յանձնախումբ, «Երիտ» կոչած ենք ատիկա. բաւական արթուն տղաք են եւ իրենք բարեգործական գործերով կը զբաղին. օրինակ՝ Ս. Փրկիչ Հիւանդանոց կ'այցեւեն, ծերերով կը հետաքրքրուին, որբանոցները կ'այցեւեն եւ հայ երիտասարդները քով-քովի բերելու համար որոշ ուխտագնացութիւններ եւ կամ պտոյտներ կը կազմակերպեն: Պէտք է ըսել որ բաւական մօտիկ ալ են Պատրիարքարանի շրջանակին: Լաւ ընթացքի մէջ են, կը խորհիմ: Լա՛ւ կ'աշխատին:

Հ.- Սրբազան Հայր, այսօրուան տուեալներով ի՞նչ է մեր համայնքի վարժարաններուն եւ աշակերտութեան թիւը:

Պ.- Այժմ ունինք 17 ազգային վարժարաններ, 48 եկեղեցիներ Թուրքիոյ տարածքին, 20 սանուց միութիւններ, մէկ ազգային Հիւանդանոց, դպրոցներէն երկուքը որբանոց են եւ 16 համայնք Պոլսէն դուրս, որոնք Անթալիայի տարբեր վայրերը կը գտնուին: Այս տարի Մայիսին առաջին անգամ ես մինչեւ Արեւելք պիտի երթամ, թէեւ շատ այցելած եմ զանազան շրջաններ: Շնորհք Պատրիարքի հետքերով ես ալ պիտի այցելեմ...:

Հ.- Ինչպէս ամէն գաղութի մէջ, վստահաբար Պոլսոյ համար ալ հարց է հայախօսութեան պարագան: Այս այցելութեամբ նշմարեցի որ ձեր դպրոցներուն մէջ, ինչպէս Ամերիկայի մեր դպրոցներուն մէջ, հայախօսութիւնը սկսած է նահանջել:

Դժբախտաբար, այս երեսոյթը այսօր նաեւ Միջին Արեւելքի մեր վարժարաններուն մէջ կայ, երբ կը լսենք արաբերէնը: Ինծի ըսուեցաւ որ հայերէն լեզուի ուսուցման համար պէտք եղած գիրքերը անտրամադրելի են: Ինչպէ՞ս կարելի է լուծում գտնել այս ուղղութեամբ:

Պ.- Թիւ մէկ խնդիրը նախ եւ առաջ ուսուցիչ ունենալու հետ է: Նախ, լա՛ւ ուսուցիչ պատրաստելու միջոց չկայ Թուրքիոյ մէջ: Ուստի կը փորձենք ամառները վերապատրաստութեան դասընթացքներ ստեղծել իրենց համար եւ որովհետեւ պարտադիր չէ, ոմանք կու գան եւ ոմանք ալ չեն գար:

Իսթանպուլի համալսարաններէն մէկուն մէջ ես առաջարկեցի պետութեան որ հայագիտութեան ամպիոն մը բացուի, ուր կարելի պիտի ըլլայ ազգային վարժարաններու համար ուսուցիչ պատրաստել, սորվիլ գրաբար եւ արդի արեւմտահայերէն լեզուները ու եթէ ատիկա համալսարանական մակարդակի վրայ ըլլայ՝ քիչ մը աւելի լուրջի կ'առնուի: Նաեւ միեւնոյն ամպիոնէն կարելի է հոգեւորականներ պատրաստել: Ոմանք կ'ըսեն թէ ատիկա կարելի չէ... ինչպէ՞ս կարելի է ծէս սորվեցնել: Ծէսը եկեղեցիին մէջ կրնաս սորվեցնել, իսկ աստուածաբանութեան դասերը կարելի է համալսարանին մէջ տալ: Այս առաջարկս անշուշտ միայն մեզի՝ հայ համայնքիս համար չէր: Ես խորհեցայ comparative theology-ի նման բան մը ընել եւ բոլոր միւս փոքրամասնութիւններուն համար ալ subunit-ներ դնել: Ու այսպէս իրարմէ ալ դասեր կարելի է վերցնել... օրինակ՝ հրեայ համայնքի դասընթացքներէն կարելի է եբրայերէն սորվիլ, յոյն համայնքի դասընթացքներէն՝ սուրբ-գրական յունարէնը սորվիլ, լատիներէն եւ այլն:

Գրեթէ բոլոր համայնքները համամիտ են, բացի յոյներէն: Յոյները կը փափաքին իրենց դպրոցը՝ Հէյպլիի կղզիին վրայ միայն բանալ, իրենց հին վանքին մէջ: Իրենք ալ ժամանակի ընթացքին կ'երեւի կրնան մեր առաջարկին միանալ, ապագային, երբ տեսնեն որ կը գործէ նոր հիմնարկ մը: Այժմ իրենք կը հակառակին անոր: Իրենք քիչ մըն ալ իրենց կռնակը տուած են Յունաստանի կառավարութեան եւ խորհելով որ Եւրոմիութեան ընթացքը կը շարունակուի Թուրքիոյ համար, իրենք կը խորհին որ ճնշում կարելի է բանեցնել Թուրքիոյ վրայ եւայլն... Բայց, կը խորհինք որ շատ աւելի համապարփակ, շատ աւելի ընդունելի է մեր առաջարկը եւ այս ուղղութեամբ կ'աշխատինք: Եթէ ասիկա կարելի ըլլայ, մինչեւ իսկ ես կրնամ դասաւանդել համալսարանին մէջ եւ ուրիշ լա՛ւ ուսուցիչներ ալ կան դեռ քաղաքին մէջ, գրողները զանազան թերթերու... օրինակ՝ Ռոպէր Հատտէճեանը ինքը պատրաստ է դասաւանդելու: Կը խորհիմ որ անոնք ալ համալսարանի այդ ամպիոնին մէջ կրնան դասաւանդել:

Երկրի կրթական գործերու նախարարութեան հետ բարձրագոյն կրթութեան խորհուրդ մը ունինք, անոնց հետ ես խօսեցայ, հակառակ չեն այս գաղափարին, միայն կ'երեւի պիտի սպասեն ընտրութիւններու



Գում Գափուի մէջ հայոց պատմական Պատրիարքարանը:

աւարտին եւ ատկէ յետոյ որոշումի պիտի գան: Ու այս պիտի հոգացուի պետական պիւտճէով:

Հ.- Թուրքիոյ մեր հոգեւորականաց դասի պատրաստութիւնը ինչպէ՞ս կը կատարուի:

Պ.- Առանց պատրաստելու մենք ոեւէ մէկը չենք ձեռնադրեր եւ մեր բոլոր հոգեւորականները, գոնէ կուսակրօն եկեղեցականները, անպայման կա՛մ էջմիածին եւ կա՛մ Անթիլիաս ու Երուսաղէմ գացած են: Անով ալ չենք բաւարարուիր. իրենց վերադարձէն յետոյ մենք այստեղ եւս իրենց համար դասընթացքներ կը ստեղծենք եւ ես անձամբ իրենց կը դասաւանդեմ: Այդ բոլորէն չանցած՝ ոեւէ մէկը չի կրնար ձեռնադրուիլ:

Ըսեմ թէ այստեղ հիմա կուսակրօն քահանաներուն թիւը եօթն է, երկու սրբազան ունինք: Թիւը բաւարար չէ մեզի համար, քառասուն եկեղեցի ունինք եւ քահանաներու թիւը 26 է: Ուրեմն կը նշանակէ որ գաւառին պէտք եղած ուշադրութիւնը չենք կրնար տալ, նաեւ՝ Կրէտէին, որ մեզի կապուած է: Այնպէս որ ժամանակ առ ժամանակ գաւառ ալ զոյգ-զոյգ հոգեւորականներ կ'ուղարկենք, որպէսզի մկրտութիւններ կատարեն եւ տօնական օրերուն գոնէ առանց քահանայի չմնան:

Հ.- Պատրիարք Սրբազան Հայր, անշուշտ այս հարցումը պետք է հարցնել այլոց, սակայն քանի այս հանդիպումը կ'ունենաք միասին, ունիմ հարցում մը: Ասելի քան ութը տարիներէ ի վեր կը պաշտօնավարէք որպէս տէրը այս պատմական պատրիարքական աթոռին: Արդեօք հոգեկան երջանկութիւնը կ'ունենա՞ք այս աթոռին բերած ըլլալու ներդրում մը, որ հարստացուցած ըլլայ այս գաղութը:

Պ.- Պէտք է ըսել որ առաւելաբար շինարարական գործերով զբաղեցայ այս ինը տարիներու ընթացքին եւ կը խորհիմ որ երիտասարդական կարեւոր շարժումի մը նախաձեռնեցի:

Հ.- Ըսեմ թէ պատրիարքական շէնքի վերանորոգումը իրապէս պատուաբեր աշխատանք մըն է: Սքանչելի գործ մը տեսած էք:

Երեկ Աղթամար այցելեցիք ու ներկայ գտնուեցաք վերանորոգուած մեր եկեղեցւոյ բացման հանդիսութեան: Թէեւ նոյն օրն իսկ հեռուստատեսիլէն իմացանք ձեր թրքերէն լեզուով յայտարարութիւնը. պիտի ուզեմ որ գոնէ մեր հայ ընթերցողներուն համար այս առթիւ կրկնէք զայն, որպէսզի մենք մեր կարգին փոխանցենք զայն սփիւքի մեր ժողովուրդին:

Պ.- Այսօր չորս նուիրապետական աթոռներ ունինք, սակայն ժամանակին Աղթամարի կաթողիկոսութիւնն ալ հինգերորդն էր, մէյ մըն ալ Ղարաբաղի մեր կաթողիկոսութիւնը կար այդ ժամանակին, որ վեցերորդն էր: Այնպէս որ Աղթամարը իր ուրոյն տեղը ունի մեր պատմութեան մէջ: Պէտք է ըսել նաեւ որ այդ կողմերը թագաւորութիւն ունեցեր ենք եւ Գազիկ թագաւորի ջանքերով ալ այդ եկեղեցին կառուցուեր է հոն:

Բացի ասկէ, ես այցելեցի նաեւ Նարեկ գիւղը եւ Վարազայ վանքը եւ տեսայ որ Նարեկի մէջ գտնուող մեր նախկին վանքը ամբողջութեամբ անյայտացեր է, անոր տեղը մզկիթ մը շինուեր է... թէեւ ասկէ առաջ երբ գացեր էի այդտեղ, տեսած էի որ եկեղեցին ախոռի վերածուած էր... չիտակը պէտք է ըսել թէ աւելի գոհ մնացի որ աղօթարան մը եղեր է, քան՝ ախոռ:

Մենք շատ լաւ դիմաւորուեցանք, պետական աւագանիին կողմէ: Սակայն քաղաքական կուսակցութիւններէն մէկը, որ Պէօյլիք Պիրլիք Բարդիսի կը կոչուի, որուն գլուխը Մովսիս Եազըճի անունով մէկն է, այս մարդը յատուկ կերպով, գիտնալով որ մենք հոն պիտի երթանք, ինքն ալ գացեր է եւ քիչ մը խառնշտկած էր այդտեղ: «Փոքրամասնութիւնները պէտք է որ մաքրուին Թուրքիայէն» լողունգով փանքարթներ հրապարակած էր: Ատիկա քիչ մը անհանգստացուց հայերը, որոնք ներկայ գտնուեցան բացման արարողութեան:

Ես կը խորհիմ որ մշակութային արժէք մը փրկուեցաւ եւ ասիկա առաջին անգամ կը պատահի Թուրքիոյ Հանրապետութեան մէջ, պետական գանձէն վճարելով: Մենք մինչեւ հիմա վարժուած էինք որ Սեբաստիայի սա վանքը, միւս վանքը... մարդիկ մինչեւ իսկ կը պայթեցնէին եւ հետքերը մէջտեղէն կը վերցնէին: Հիմա, առաջին անգամ, իբրեւ ժեսթ վերանորոգուեցաւ հայկական ճարտարապետական կոթող մը եւ դրամն ալ պետական գանձէն տրուեցաւ...:



Պատրիարքարանին մուտքը:

Հիմա, ես շատ չհասկցայ, թէ ինչո՞ւ էջմիածնի մեր Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը եւ Անթիլիասի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը չուզեցին մարդ ուղարկել բացման այս արարողութեան, հակառակ որ հրաւէր ալ կար. կը խորհիմ նաեւ որ երկխօսութեան ալ դուռ մը բացուած կ'ըլլար այսպիսով:

Սակայն, ինծի համար կարեւոր էր որ երթայի: Ես գացի, որովհետեւ կարեւոր էր որ հոն ըլլայի եւ մշակութային արժէք ներկայացնող Աղթամարը փրկուած տեսնէի: Ի վերջոյ, մեր ժողովուրդին կը պատկանի ասիկա, արժէք մըն է եւ կը խորհիմ որ այդ մտածումով է որ Հայաստանի կառավարութիւնն ալ 19 հոգինոց պատուիրակութիւն մը ուղարկած էր, որուն գլուխը Կիւրլեանը կար, Մշակոյթի փոխ նախարարը: Ըսուեցաւ որ նախարարը վարչապետ Անդրանիկ Մարգարեանի յուղարկաւորութեան կազմակերպիչ յանձնախումբին մէջ էր եւ այդ պատճառով չկրցաւ գալ: Այդպէս ալ յայտարարուեցաւ այդտեղ:

Կը խորհիմ թէ ճիշդ էր որ մենք հոն ներկայ գտնուեցանք:

Հ.- Եկեղեցիին գմբէթին վրայ խաչ դնելու հարցին կապակցութեամբ նաեւ ըրած էիք յայտարարութիւն մը:

Պ.- Այո՛, ես պահանջեցի որ խաչը դրուի: Նաեւ պահանջեցի որ

տարին մէկ անգամ ուխտագնացութիւն կատարուի այդտեղ: Թէեւ, եթէ արտօնուի, վստահ չեմ որ մենք պիտի ուզենք երթալ, որովհետեւ հոն տեսայ լարուած մթնոլորտ մը: Որոշ կուսակցութիւններ ժողովուրդը կը գրգռեն, որպէսզի ցոյցեր կատարուին փողոցներուն մէջ... Որքա՞ն խոհեմութիւն է ժողովուրդ տանիլ հոն...: Որեւէ բախում ըլլալու պարագային, ի՞նչ պիտի կարենանք ընել: Պարագան զիս մտահոգեց քիչ մը, սակայն մեծ հաւանականութեամբ պիտի արտօնեն այդ բոլորը. այսինքն՝ խաչն ալ կը դրուի, կը խորհիմ թէ ուխտագնացութեան արտօնութիւնն ալ կը տրուի: Ես առաջարկեցի որ հոն աղուոր ֆեսթիվալ մը, տօնավաճառի պէս բան մը ըլլայ եւ տարին անգամ մըն ալ Ս. Պատարագ մատուցուի: Այսինքն, մեր երգչախումբերը երթան, այդտեղ ֆոլքլորի խումբեր գան եւ այդպէս իրենց ձեռագործները ցուցադրեն: Ու այսպէս ժողովուրդներու համակցութեան message-ներ ալ կարելի կ'ըլլայ տալ:

Հ.- Մտածում մը ունիմ այս առթիւ: Կ'արժէ Աղթամարին նուիրուած երկեզու ալպոմ մը լոյսին բերել եւ թրքական զբօսաշրջային տեղերը տեղաւորել:

Պ.- Լա՛ւ գաղափար է: Միլանոյի համալսարանը շատ գեղեցիկ կերպով հրատարակած է: Այո՛, կարելի է պատրաստել:

Հ.- Կը խորհի՞ք որ Զեր երկրի մշակոյթի նախարարը, այս նախաձեռնութենէն ետք, պիտի շարունակէ մեր միւս ճարտարապետական կոթողներն ալ Աղթամարի նման վերանորոգել, գոնէ Անին իր մայր տաճարով:

Պ.- Արդէն կը մտածեն ըսաւ ինքը այդտեղ: Յայտարարեց որ կ'ուզէ Անիի աւերակներն ալ վերանորոգելէ յետոյ, նորէն այսպէս մեծ խումբով երթալ եւ բացման արարողութիւն մըն ալ այդտեղ կատարել:

Հ.- Նորոգութիւնը ի՞նչ մասնագիտական մակարդակի վրայ կատարուած է արդեօք:

Պ.- Նախ պէտք է ըսել որ մեզի պատկանող արժէք մը փրկուեցաւ: Որովհետեւ ես այցելել էի Աղթամար եւ տեսած էի որքան վատ էր վիճակը վանքին եւ հաւանաբար փուլ պիտի գար այդ եկեղեցին: Հիմա ատկէ փրկուեցանք: Պէտք է ըսել որ ոմանք իրենց մտահոգութիւնը կ'արտայայտեն այս restoration-ի որակին շուրջ. պէ՛տք է ըսեմ որ ամառն ալ գացի եւ շատ գոհ մ'նացի տարուած աշխատանքէն: Նախ եւ առաջ մենք ալ այստեղէն հայ ճարտարապետ մը՝ Զաքարիա Միլյանօղլու, գործուղեցինք եւ բաւական խղճմտանքով ինքն ալ վարուեցաւ:

Որեւէ նիւթական յատկացում չստացաւ իր կատարած այդ աշխատանքին դիմաց: Ես արդիւնքէն շատ գոհ եմ:

Հ.- Տիւնքի սպանութիւնը, այս օրերուն, կը մտահոգէ բոլորս: Միջազգային մամուլին ալ նիւթ դարձած է դէպքը: Այս սպանութիւնը ի՞նչ բացասական եւ դրական կողմեր ունեցաւ իսթանպուլահայ կեանքէն ներս:

Պ.- Դրական կողմը այն էր որ որոշ շրջանակներ հայ համայնքին հետ միասին ցաւակից եղան այդ ցոյցերու ընթացքին, յուղարկաւորութեան եւ քայլարշաւին: Բացասական կողմը այն էր որ այն կուսակցութիւնները, որոնք այդ սրտակցութիւնը ցոյց տուին եւ «ամէնքս ալ հայ



Գարսիէօզեան որբանոցը:

ենք» լողունգը օգտագործեցին, ատկէ յետոյ բոլորն ալ քաշուեցան հրապարակէն եւ ամէն անգամուան պէս հայ համայնքը առանձինն մնաց: Ու այս առթիւ ազգայնամոլականներու կողմէ յարձակման թիրախը մենք դարձանք:

Մինչեւ իսկ Պատրիարքարան մէկը եկաւ, կրակեց... բաներ մը ըսաւ եւ մեր թերթերուն տարօրինակ մարդիկ այցելութիւններ տուին, հարց տալով թէ «Դուք հայերդ հոս ի՞նչ գործ ունիք», կամ արդեօք «Դուք «Ակօս»ի շարունակութիւնն էք»: «Մարմարա»ի ու «Արագ» հրատարակչատան ըրած են նման հարցադրումներ: Նաեւ մեր պատրիարքարանի փաստաբաններուն այցելութիւններ տրուեցին: Այսինքն կազմակեր-

պուլած ազգայնամոլական շարժում մը կայ եւ թիրախ ըլլալով հայ համայնքը ընտրած են ասոնք, որպէսզի կ'երեւի մենք բաւ է ըսենք ու ելլենք այս երկրէն: Բայց մենք այստեղ հաստատութիւններ ունինք եւ շատ աւելի խոր է մեր կապը Պոլսոյ հետ եւ բնականօրէն պիտի փորձենք մեր հաստատութիւնները կարգին պահել:

Հ.- Հայաստանեայց եկեղեցւոյ միութեան հետ կապուած նոր նախաձեռնութիւն մը կա՞յ արդեօք այս օրերուն:

Պ.- Դժբախտաբար չկայ, որքան որ ես կը տեսնեմ: Կ'երեւի քիչ մը մարդկային, քիչ մըն ալ մեր ցեղին յատուկ պատճառներով...:

Հ.- Գարեգին Բ.-ի օրհնաբեր այցելութիւնը ինչպէ՞ս դիմաւորուեցաւ պոլսահայ հաւատացեալներուն կողմէ:

Պ.- Լա՛ւ այցելութիւն մըն էր: Շատ լաւ անցաւ: Համայնքը ուրախացաւ Ամենայն Հայոց Վեհափառին այցելութեամբ: Վեհափառն ալ գոհ մնաց, մենք ալ գոհ մնացինք:

Հ.- Սրբազան Հայր, գրասէր մա՛րդ էք դուք. արդեօք առիթ ունի՞ք քիչ մըն ալ գիրով՝ գրականութեամբ կամ աստուածաբանական գործերով պարապելու, հակառակ Ձեր ծանր պատրիարքական պաշտօնին:

Պ.- Առայժմ, բոլոր գրածներս լրագրային բնոյթի գործեր են դժբախտաբար, սակայն մտադրած եմ հիմա գրել յուշերս:



**ՏՈՔԹ. ԱՐՏԱՇԷՍ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ
ԱՔՏԱՂ,
Բժշկապետ Ս. Փրկիչ Հայոց Հիւանդանոցի**

Հ.- Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցին մասին ամերիկահայ մեր ընթերցողները այնքան ալ տեղեկութիւն չունին: Ուրախ պիտի ըլլանք իմանալ ձեզմէ կարգ մը տեղեկութիւններ մեր այս հիւանդանոցին մասին:

Պ.- Ասկէ 180 տարի առաջ Գազազ Արթին Ամիրա Պէգճեանի փափաքով ու Սուլթան Մահմուտ Բ-ի ֆերմանով այս հիւանդանոցը կը հիմնուի եւ մինչեւ այսօր կը շարունակուի որպէս



ծերանոց, որպէս հոգեկան
հիւանդութիւններու
դարմանատուն եւ ընդհա-
նուր բժշկութեան կեդրոն:
Այսօր մեր հիւանդանոցին
մէջ մօտաւորապէս 450
հիւանդ կայ, որոնց մէջ
350-ը ծերանոցի բնակիչ
են եւ որոնց 80 տոկոսը
մեր ազգին խնամքի
կարօտ հիւանդներն են:

Հ.- Զեր Ռիւանդանոցը
ընդհանրապէս բժշկական
ո՞ր բաժնին մէջ մասնա-
գիտացած է:

Պ.- Մենք ամէն
մասնագիտութեամբ մեր
հիւանդներուն կը ծա-
ռայենք: Օրինակ, ունինք
սրտաբանութեան,
մանկաբուժութեան,
ծննդաբերութեան, ջղախի
հիւանդութեան ց
բաժիններ եւ ասոնց հետ ունինք գէթաքէն... ամէն ինչ որ կը մտածէք
ունինք մենք:



Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցին մուտքը:

Հ.- Վստահ եմ թէ ձեր Ռիւանդանոցում մեծ մասը ոչ հալեր են:

Պ.- 85 տոկոսը մեր հիւանդներուն այս շրջանը ապրող մահմտական
թուրքերն են: Ըսեմ նաեւ թէ մեր հիւանդանոցին պետական օժան-
դակութիւն չի տրուիր: Ամբողջութեամբ մեր ազգին բարերարներուն
կտակներով ու նոր նուիրատուներով կը ֆինանսաւորուի մեր
հիւանդանոցը:

Հ.- Քանի՞ բժիշկ կը պաշտօնավարէ ձեր մօտ:

Պ.- 40-ի մօտ բժիշկ ունինք, որոնց վաթսուն տոկոսը հայ բժիշկներ
են: Իսկ մեր բուժքոյրերուն յիսուն տոկոսը հայեր են: Հիւանդանոցի
ընդհանուր պաշտօնէութեան թիւը երկու հարիւր է:

Հ.- Արդեօք Հայաստանի հետ ունի՞ք որեւէ յարաբերություն:

Պ.- Պարզապէս կ'այցելեն մեզի: Ոչ մէկ կապ ունինք այլապէս: Թուրքական օրէնքներով կը ղեկավարենք այս հաստատութիւնը:

Հ.- Ի՞նչ է ձեր մասնագիտութիւնը:

Պ.- Կինեզոլոկ եմ:

Հ.- Կ'ըսէք թէ ազգային հիւանդանոց է Ս. Փրկիչը: Ո՞վ է տէրը այս ընդարձակ հաստատութեան:

Պ.- Հոգաբարձութիւնն է: Սակայն, իսկական տէրը ազգն է: Հոգաբարձութիւնը պարզապէս այս հիւանդանոցը կը ղեկավարէ:

Հ.- Ինչպէ՞ս կ'ընտրուի հոգաբարձութիւնը:

Պ.- Չորս տարին անգամ մը, ամբողջութեամբ պոլսահայերուն քուէներով կ'ընտրուին հոգաբարձութեան անդամները՝ ժողովրդային քուէներով:

Հ.- Բժշկական նոր զարգացումներուն հետ միշտ քայլ կը պահէ՞ք:

Պ.- Անշուշտ, անշուշտ... Այս հիւանդանոցը, գիտէք, վերջին նորոյթ գործիքներով կը գործէ: Ռատիովիժըն գործողութեան սրահը ամբողջ արդիական սարքերով կազմուած է: Այս հիւանդանոցը by pass-էն զատ, ամէն տեսակ գործողութիւն ընելու հնարաւորութիւնները ունի:

Հ.- Ձեր բժշկները իրենց մասնագիտութիւնը ո՞ր կը կատարեն:

Պ.- Շատեր Թուրքիայէն շրջանաւարտներ են, իսկ անոնք որոնք արտասահմանի երկիրներէն կու գան, ստիպուած են պետական համապատասխան վկայականները առնել: Ես, օրինակ, շրջանաւարտ եմ Թուրքիայէն: Մենք եօթը սերունդ պոլսեցի ենք:

Հ.- Գիտեմ որ ունիք հրատարակչութիւն մը՝ «Ս. Փրկիչ»:

Պ.- Բժշկագիտական թերթ մըն է, օգտակար ըլլալու մեր ազգայիններուն եւ ծանօթացնելու բժշկական մեր աշխատանքները իրենց:

Հ.- Նոր բարերարներ կ'ունենա՞ք:

Պ.- Դուրսէն բարերարներ կու գան, նախկին պոլսահայեր եւ ոչ պոլսահայեր կը հանդիպին ու նուէրներ կու տան: Այս հիւանդանոցը այցելող հայը անպատճառ նուէր մը կու տայ: Օրինակ Պրն. Վ. Սաաթճեան, Զուլիցերիայէն, մեր հիւանդանոցին Emergency Room-ը պիտի չինէ:

Հ.- Ո՞ր է արդեօք ձեր հոգաբարձության ատենապետը:

Պ.- Պրն. Պետրոս Շիրինողլու: Մօտ քսան տարի Փիլօ Աթան եղած էր Հոգաբարձութեան ատենապետը:

Հ.- Ուրիշ հայկական հիւանդանոց ունի՞ք Պոլսոյ մէջ:

Պ.- Այո, հայ կաթողիկէ համայնքը ունի, սակայն այսքան ընդարձակ ու կանոնաւոր չէ: Մենք մեծ հիւանդանոց ունինք: Զեզի ըսեմ որ ասիկա Պոլսոյ ամենէն հին ու կարեւոր հիւանդանոցն է: Պէգճեան Ամիրայի հիմնելէն ետք, յոյները, պուլկարները իրենց հիւանդանոցները կը բանան:

Ասոնցմէ շատ վերջ է որ Վազըֆ Քուրապոյի հիւանդանոցը կը հիմնեն մահմետականներուն համար:



ԷԹԻԷՆ ՄԱՀՃՈՒՊԵԱՆ

Խմբագիր «Ակօս» Ծաբաթաթերթի

Հ.- «Ակօս» շաբաթաթերթը ի՞նչ պայմաններու տակ սկսաւ եւ ի՞նչ կը հետապնդէր իր հրատարակութեամբ:

Պ.- Հիմնադրութեան օրերուն ես մասնակից չէի անոր, Հրանդին ծանօթացայ հրատարակութեան գալէն ետք:

Հ.- Ո՞ր տարին հիմնուեցաւ թերթը:

Պ.- 1996-ին:



Հ.- «Ակօս»ին միացա՞՞ծ էիք 1996-ին:

Պ.- Ոչ: Հրանդին հետ մտերիմ բարեկամներ եղանք, միասին կը ճամբորդէինք, բայց «Ակօս»ի հետ խմբագրական աշխատանքներուն մէջ չէի: Սակայն, անշուշտ, յաճախակի մեր խօսակցութեանց նիւթ կ'ըլլար թէ ինչպէ՞ս կարելի էր հասնիլ աւելի լայն զանգուածներուն եւ մեր ըսելիքը յայտնել:

Հ.- Ե՞րբ միացաք «Ակօս»ի խմբագրութեան:

Պ.- Միայն Հրանդին մահէն ետք:

Հ.- «Ակօս»ը միայն թրքահաճ ընթերցողներուն կը հասնի, թէ՞ ընդհանրապէս բոլոր կարգի ընթերցողներու:

Պ.- Ունինք ընթերցողներու ընդարձակ թիւ մը, որուն 75 տոկոսը թուրքեր են, ոչ հայկական ծագումով: Կ'ունենանք հետզհետէ աւելի տարածում:

Հ.- Հայկական լուրերէն բացի, ի՞նչ հարցեր կը հրատարակուին թերթին մէջ:


Պ.- Ունինք քաղաքական բաժին վեց էջերով: Թերթը 24 էջերով արդէն կը հրատարակուի:

Հ.- Տեղական թրքական լուրեր՞ր եւս...:

Պ.- Այո, արմատական ռամկավար շաբաթաթերթ է մերը:

Հ.- Որեւէ թրքական կուսակցութեան հետ առնչութիւն ունի՞ք, թէ՞ անկախ շաբաթաթերթ մըն է:

Պ.- Ոչ, մենք ամբողջութեամբ անկախ ենք: Հրանդը տէ՛րն էր թերթին եւ ան որեւէ կազմակերպութեան կամ անհատի գեկուցում չէր տար: Առայժմ թերթին սեփականատէրն է Տինք ընտանիքը... անկախ է «Ակօս»ը:



«Ակօս»ի խմբագրատան մէջ:

Հ.- Անձնակազմին մասին կրնա՞ք տեղեկություն տալ:

Պ.- 15 հոգի ենք. ունինք լման թէ մասնակի ժամանակով աշխատակիցներ:

Հ.- Ինչպե՞ս կը հաւասարակշռէք թերթի պիտոնէն, լաւ գիտնալով նման աշխատանքի մը առօրեայ լուծը:

Պ.- Ընդհանրապէս ծանուցումներով եւ բաժանորդագրութեամբ:

Հ.- Բացի ժողովուրդէն, պետական քաղաքական դէմքեր կը կարդա՞ն ձեր թերթը:

Պ.- Ժամանակ առ ժամանակ կը նշմարուի որ կը կարդան... սակայն մենք անոնց թերթ չենք դրկեր: Վստահաբար պետական պաշտօնատարներ կրպակներէն կը գնեն:

Հ.- Թերթը կը տարածէ՞ք նաեւ հայ սփիւռքի զանազան շրջաններ:

Պ.- Ունինք 500-ի մօտ բաժանորդներ զանազան երկիրներու մէջ, ինչպէս՝ Ֆրանսա, Գերմանիա:

Հ.- Կայքէջի վրայ ունի՞ք թերթը:

Պ.- Մայիսին պիտի սկսինք: Այդ եւս բաժանորդագրութեամբ պիտի ըլլայ:

Հ.- Կը լսեմ թէ Հրանդին յարաբերությունները Պուտոյ Պատրիարքին հետ, սկզբնական օրերուն, այնքան ալ ջերմ չէին եղած:

Պ.- Անշուշտ հիմա, անոր տխուր սպանութենէն ետք, շատ աւելի բնականոն են այդ յարաբերութիւնները: Պէտք է ըսել, որ իւրաքանչիւրը ունի իր ամուր անհատականութիւնը: Պատրիարքը մեր այս փոքրացած գաղութին հարցերուն ու Հրանդն ալ իր լրագրական դիրքերէն մեկնած, կարեւոր էր որ համագործակցութիւն մը ստեղծուէր:



«Ակօս»ի մուտքը, որուն առջեւ արիւնլուայ փոռեցաւ հէգ Հրանդի մարմինը:

Հ.- Հրանդի սպանությունն էտք անոր խմբագրական աթոռին վրայ
նստիլը վստահ եմ թէ դժուար է ձեզի համար:

Պ.- Մի՛շտ դժուար է փոխարինել Հրանդը: Ան իւրայատուկ
նկարագիրով մարդ մըն էր: Բայց գիտէի իր հեռանկարները եւ
ծրագիրները, որով կը քալենք Հրանդի ճամբով: Օրական 7-8 անգամ
հեռաձայնով կը խօսէինք:

Հ.- «Ակօս»ին միանալէ առաջ, արդեօք խմբագրական կամ լրագրական
ասպարէզներու մէջ եղա՞ծ էք:

Պ.- Այո, կ'աշխատակցէի զանազան մամուլի սպասարկութիւններու:
Ամենէն աւանդապահ եւ յետադիմական թերթին՝ «Զաման»ին, տակաւին
սիւնակագիրն եմ: Տնօրէնն եմ Թուրքիոյ մեծագոյն NGO-ին, որ կը
հետապնդէ ռամկավարական սկզբունքներու տարածումը այս երկրին
մէջ: Ժամանակս առայժմ բաժնած եմ «Զաման»ի եւ «Ակօս»ի միջեւ:

Հ.- Այսօր ինչպէ՞ս կը նկարագրէք ռամկավարութիւնը Թուրքիոյ մէջ,
մանաւանդ Եւրոպային միանալու կապակցութեամբ:

Պ.- Ուժական փոփոխութիւններ տեղի կ'ունենան հոս: Արագօրէն
փոխուող կացութիւնը նաեւ կը ստեղծէ ընդդիմութեան մը շարժումը:



Բոլորս Հայ ենք, բոլորս Հրանդ Տինք ենք...
Պողազիչի համալսարանի փոխ նախագահ Կիլէն
Աքթաշ՝ հին բարեկամուհիս, եւ նոյն
համալսարանի դասախօս իր ամերիկացի
ամուսինը՝ Թոնին, Կիլէնի գրասենեակին մէջ:

Եւրոմիութեան հետ
առնչութիւնը երկսայրի
սուր մըն է, որ երբեմն
նպաստաւոր է եւ երբեմն
աննպաստ. զիկ-զակ յարա-
բերութիւն մը՝ այս երկու
բեւեռային վիճակներուն
մէջ: Այսպէս ըսեմ,
թրքական պատմութիւնը
ճանչնալով երբ հասարա-
կութեան նայիմ՝ լաւատես
եմ, երբ պետութեան
նայիմ՝ ընդհակառակը՝
յոռետես եմ: Այս է
Թուրքիոյ հիմնական
հարցը:

Հ.- Սակայն հասարակու-
թիւնը մի՛շտ հոն է եղած...:

Պ.- Ճիշդ է: Մական ժողովուրդը չի գիտեր իր կճեպէն դուրս ելլել եւ իջնել փողոց: Զունի այս փորձառութիւնը: Չի գիտեր քաղաքականացնել իր ըսելիքը: Պիտի սպասենք տեսնել բարեփոխութիւններու ընթացքը:



Մայտա Սարիս, թերթին արուեստի բաժնի պատասխանատուն:

Հ.- Այսօրուան պետական իշխանութիւններուն մօտ կը տեսնէ՞ք հայոց իրաւունքներու եւ մշակութային ժառանգութեանց նկատմամբ փոփոխութիւն մը:

Պ.- Այս կառավարութիւնը գոնէ բարի կամեցողութիւն ունի: Անոնց հեռակայ նպատակներուն ծանօթ չեմ, սակայն պէտք է ըսել թէ տակաւին տկար է: Զունի փորձառութիւն եւ կը վախճայ մտնելու փորձաքարերու... Կ'ուզեն փոփոխութիւն մը մտցնել հանրապետութենէն ներս:

Հ.- Ի՞նչ է «Ակօս»ի յաջորդ առնելիք քայլը:

Պ.- 12-ի փոխարէն արդէն 24 էջով լոյս կ'ընծայենք թերթը: Այսօր կը ծախենք 6-7000 օրինակ: Առաջ 2000 էր միայն:

Կը խորհիմ թէ արդէն թերթը դարձած է համայնքայինէն անդին, Թուրքիոյ մէջ փնտռուած թերթ: Կը խորհիմ թէ չուտով «Ակօս» պիտի ըլլայ մտաւորական եւ ռամկավարական մամուլը երկրին մէջ:

Հ.- Արդեօք բախումներ կա՞ն պոլսահայ մեր զոյգ օրաթերթերուն հետ:

Պ.- Ոչ:

Հ.- Ծրագիր կա՞յ արդեօք Հրանդին նուիրուած հատորի մը հրատարակութեան:

Պ.- Տիւնք ընտանիքը հաստատած է Ֆոնտ մը եւ ատոր միջոցով հաւանաբար նման ծրագրումներ ըլլան: Անշուշտ եթէ խնդրեն մեզմէ... սիրով:

Հ.- Ըսին թե հայ կաթողիկէ համայնքի զաւակ էք: Կու տա՞ք ձեր համայնքի մասին կարճ տեղեկութիւն:

Պ.- 5-6000-ի մօտ հայ կաթողիկէներ կ'ապրին Պոլսոյ մէջ առաւելաբար: Ես բարեպաշտ կրօնասէր մը չեմ եւ այդ շրջանակին մաս չեմ կազմեր: Բայց, որքան գիտեմ, նոյն մտահոգութիւնները կը բաժնեն Հայ Առաքելական համայնքին հետ: Մանաւանդ կալուածներու հարցով նոյն հիմնահարցերը ունին:



ՅԱՐՈՒԹԻՒՆ ԾԷՇԷԹԵԱՆ Հիմնադիր անդամ «Ակօս» Ծաբաթաթերթի

Հ.- «Ակօս»ի հիմնադրութիւնը ինչպէ՞ս սկսաւ եւ ի՞նչ ընթացք առաւ տարիներու ընթացքին:

Պ.- 1994 թուականն էր, Մեսրոպ Սրբազանը (Մութաֆեան) այն ատեն պատրիարքական փոխանորդ էր, ինծի օր մը հեռաձայնեց որ պատրիարքարան երթամ: Այցելեցի ու ան ըսաւ թէ կ'ուզէ յանձնախումբ մը կազմել հայ եւ թուրք լրագրողներով ու մշակութային դէմքերով, որպէսզի լաւագոյնս կարենանք ներկայացնել մենք զմեզ: Անոնք մեզ չեն հասկնար եւ մենք անոնց հետ յարաբերութիւն չունինք:



Առաջարկեց որ մամուլոյ յանձնախումբ մը կազմենք: Հոն էին Հրանդ Տինքը եւ Աննա Թուրայ, որ թրքական լրագիրի մը մշակութային բաժնին խմբագիրն էր: Հրանդը գրքավաճառ էր եւ մեր մշակութային մարմիններուն մէջ՝ գործունեայ: Հոն էինք նաեւ Լուիզ Պաքարը, որ իրաւագիտուհի մը ըլլալով ազգային գործերով օգտակար կ'ըլլայ, ու ես: Չորսերնիս էինք Սրբազան Հօր հետ այդ առաջին հանդիպման: Ըսեմ որ ես «Ժամանակ» օրաթերթին մէջ շարժապատկերի էջ մը կը խմբագրէի: Ունէի լրագրական փորձառութիւն: Բարեկամներ ունէի թրքական լրագրական աշխարհէն, Աննան շատ մարդ կը ճանչնար, Հրանդը կապեր ունէր եւ Լուիզն ալ որպէս փաստաբան իր ճանչուորները ունէր:

Ուրեմն բոլորս միասին աշխատեցանք: Հայութեան վերաբերող հարցերուն համար մեր թուրք բարեկամ լրագրողներուն հետ կապ

հաստատեցինք եւ մեր տեսակէտները պարզեցինք: Բացատրութիւններ տուինք եւ վերահասու դարձուցինք մեր տեսակէտներուն:

Ըսեմ թէ թուրք լրագրողները մեզ քաջալերեցին, ըսին թէ հայերէն լեզուէն դուրս, թրքերէն լեզուով լրագրի մը պէտք ունիք: Պայման չէր որ օրաթերթ ըլլար, այլ որեւէ հրատարակութիւն, որ կարենար տալ բացատրութիւն, տեղեկութիւն թրքահայ կեանքին մասին: Պէտք է ըսել որ մեր ազգային հարցերը Պոլսոյ համայնքին հասցնելու ալ դժուարութիւնը կար, որովհետեւ քիչեր հայերէն թերթ կը կարդային, այսօր ալ նոյնն է պարագան եւ հասնելու էինք նաեւ թրքախօս մեր հայ համայնքին: Պոլսահայութիւնը 60 հազար հայութիւն կը հաշուէ, սակայն «Ժամանակ» ու «Մարմարա» օրաթերթերը հազիւ հազար ընթերցողի կը հասնին ու այդ հազարին մէկ մասն ալ հայ թերթի մը օգտակար ըլլալու համար բաժանորդագրուած է: Թերթը կու գայ, չեն կարդար, ու անկիւն մը կը մնայ:

Ուրեմն, համայնքը ընդհանրապէս լուր չ'ունենար ազգային անցու-դարձերէն: Օրինակ, եկեղեցիի մը բացումը կ'ըլլայ, հիւանդանոցին մասնաբաժինի մը հիմնարկէքը կ'ըլլայ եւ համայնքը լուր չ'ունենար:

Ասկէ մեկնելով, պոլսահայութեան համար թրքերէն լեզուով թերթի մը անհրաժեշտութիւնը զգալի էր: Դժբախտաբար պոլսահայ գաղութին լեզուն այլեւս թրքերէն է: Ասոր նաեւ եթէ աւելցնենք մեր ձայնը թուրքերուն հասցնելու պարագան, անհրաժեշտութիւն էր որ թերթ մը ունենայինք տեղական լեզուով:

Մենք չորսս այս հարցով բաւական երկա՛ր խօսեցանք, մտածեցինք: Պէտք է ըսել որ մեր ժողովներուն Մուրաֆեան Սրբազանը միշտ մեր հետն էր: Մեր ժողովներուն նաեւ կը մասնակցէին համալսարանի ընկերաբանութեան դասախօս Արուս Եումուլուն, կարգ մը թուրք թերթերու պատասխանատուներ, որոնք ընդհանրապէս թերթ մը ունենալու նիւթական հարցերով օգտակար կ'ըլլային եւ նաեւ՝ էջադրութեան, նիւթերու դասաւորման...:

Այսպէս հասանք 1995 թուականին:

Օր մը Հրանդ Տինքը առաջարկեց որ ժամանակը հասած էր ունենալու մեր տեղը, որովհետեւ աւելի քան տարի մը տուններու մէջ ժողովներ ունենալով կարելի չէր լուրջ աշխատանք մը կազմակերպել: Ընդհանրապէս Լուիզին տունը կը հաւաքուէինք, յարմարութիւններ ունէր, իր պարտէզին մէջ երբեմն կը հաւաքուէինք: Երբեմն Գնալը կղզի կը հանդիպէինք...:

Տոլապտէրէ պողոտային վրայ, հայկական թաղամասին մօտ յարկաբաժին մը վարձեցինք 1996-ի սկիզբը, խոշոր սենեակ մը, առանց

խոհանոցի... մեզի համար մեծ տեղ մը ունենալու հարկը չունէինք: Այնուհետեւ աւելի լրջութեամբ սկսանք ծրագրել: Թերթի մը օրինակները կը գծէինք այդ օրերուն թուրք լրագրողներու օգնութեամբ: Ու տպեցինք «օրինակ» թերթ մը եւ դրինք 0 թիւ թերթին վրայ: Ներկայացանք մեր համայնքին այս մեր թիւով:

Թուրքիոյ Լրագրողներու Միութիւնը իր կեդրոնատեղին մեր տրամագրութեան տակ դրաւ ու մենք հոն մեր թերթը ներկայացուցինք համայնքին, քոթէձյլ ընդունելութեամբ: Ներկաները չափազանց ուրախացան: Նոյն օրն իսկ անոնք փափաք յայտնեցին բաժանորդագրուիլ:

Տակաւին չէինք որոշած թուականը՝ լոյս աշխարհ բերելու թերթին առաջին պաշտօնական թիւը:

Հ.- Ինչպէ՞ս ֆինանսաւորեցիք թերթը:

Պ.- Մենք չորսս՝ Աննա Թուրայը, Լուիզ Պաքարը, Հրանդ Տինքը եւ ես առաջին դրամագլուխը դրինք թերթին: Ապա մեզի միացան Տիրան Պաքարը, Յարութ Էօզէրը, Սարգիս Սերոբեանը:

Հ.- Ե՞րբ հրատարակեցիք թերթին առաջին թիւը:

Պ.- Այդ տարուան՝ 1996-ի Զատիկը յարմարագոյն թուականն էր առաջին թիւը լոյս աշխարհ բերելու: Զատիկը լաւ օր մըն էր, մտածեցինք, ու Զատիկի շաբաթ՝ Ուրբաթ օրը առաջին թիւը ելաւ 3000 տպաքանակով: Հարկաւ չուտ մը տարածուեցաւ: Մարդիկ գնեցին, քաջալերեցին, եւ այսպէս «Ակօս»ը սկսաւ իր աշխատանքին:

Հ.- Հայ մամուլի փորձառութեան մեկնելով, հրատարակիչներ մի՛շտ կը մտահոգուին թէ արդեօք որքա՞ն կեանք պիտի կարենայ ունենալ թերթ մը: Զեր պարագային ունէի՞ք նման մտահոգութիւն:

Պ.- Այո՛: Ունէինք այդ վախը: Կը կարծէինք թէ հազիւ երկու տարի կեանք կրնայ ունենալ մեր թերթը, որովհետեւ դրամը կարեւոր էր: Եթէ ծանուցումներ չգային, ոտքի վրայ անկարելի էր մնալ...: Յուսահատական խօսքեր մի՛շտ ալ կ'ունենայինք: Սակայն Հրանդը օր մը ըսաւ մեզի. «Տղա՛ք, ինչո՞ւ յուսահատ ճամբայ կ'ելլէք, մտածենք որ 5-10 տարի պիտի շարունակաբար հրատարակենք»: Իրաւունք ունէր: Ահա տասը տարի անցաւ ու գալ շաբաթ 11-րդ տարին պիտի տօնենք: «Ակօս»էն հեռաձայնեցին որ տարեդարձին առթիւ զրութիւն մը հասցնեմ:

Հ.- Թերթին «Ակօս» անունը ինչպէ՞ս որոշեցիք ունենալ:

Պ.- Այս անունին հարցը մեզմէ երկար ժամանակ առաւ: «Գուլթան», «Բարեւ» եւ այլ անուններ կ'առաջարկէինք: Անուն մը կ'ուզէինք որ թէ՛ թուրքերէնով եւ թէ՛ հայերէնով իմաստներ ունենար, իւրայայտուկ անուն մը կ'ուզէինք ունենալ մեր թերթին համար: Օր մը Լուիզ Պաքարին տունը ժողովի ենք, մեր պոլսահայ կեանքի մշակութային դէմքերէն Պրն. Ռուբէն Մաշոյեանը մտիկ ընելով մեզ առաջարկեց որ «Ակօս» անունը դնենք: Առաջին անգամ գոնէ ես այդ բառին հանդիպած էի: Ան բոլորիս ակօս բառը բացատրեց, կապելով զայն հողին. ան նաեւ ունէր վերացական իմաստ՝ թէ մենք ակօսները պիտի բանանք ու նոր ծլարձակումներով պիտի տարածուինք: Ըսաւ թէ թուրքերէնով ալ հին բառ մը կայ՝ Ակոս, որ գրեթէ նոյն իմաստը ունի մեր ակօսին նման:



«Ակօս»ի խմբագրատան հարաւը գտնուող Թաքսիմի հրապարակը, որ ականատես եղաւ Հրանդ Տիմքի յուղարկաւորութեան:

Որոշեցինք 8 էջ թրքերէն եւ 2 էջ ալ հայերէն հրատարակել, եւ «Ակօս»ը յարմարագոյնն էր թերթին որպէս անուն: Նոյնիմաստ մտածումներով անուն մըն էր:

Ու յաջորդ մեր ժողովին քուէարկեցինք «Ակօս» անունը: Մեր էջագրողն ալ համաձայն եղաւ այս անունին գործածութեան: Ուրեմն հասկնալի եւ լսելի էր բոլորին կողմէ:

Հ.- Առաջին օրէն խմբագիրը Հրաճողը ընտրեցիք:

Պ.- Այո: Պատասխանատու տնօրէնը Տիրան Պաքարը եղաւ. ան իրաւագէտ է արդէն: Գիտէինք որ շատ հարցեր պիտի ունենայինք յառաջիկային եւ ուզեցինք որ իրաւագէտ մը այդ պատասխանատուութիւնը առնէր: Հրանդը քաջ անձնաւորութիւն մըն էր եւ համայնքի զանազան մարմիններուն ծանօթ էր եւ ըսաւ թէ այդ զոհողութիւնը

յանձն պիտի առնէ: Ան մեզի օգտակար ըլլալու համար այդ յանձնա-
ռութիւնը կատարեց: Խմբագրապետը առաջին օրէն Հրանդն էր:

Հ.- Կը կարդամ թէ տակաւին խմբագրական կազմի անդամ էք:

Պ.- Այո: Անունս հոն է, տակաւին թերթին բաժնետէրերէն եմ:
Սկիզբի օրերուն, Հրանդով միասին աշխատեցանք խմբագրական
մարմինին հետ: Յետոյ ես միայն նիւթական հարցերով կը զբաղէի:

Ըսեմ որ անհատական գործերու ծանրաբեռնուածութեան, յաճա-
խակի ճամբորդութիւններու պատճառով Հրանդին յանձնեցինք ու
վստահեցանք «Ակօս»ի խմբագրութեան բեռը: Արդէն գիտէինք թէ նոր
տղաք գալու են «Ակօս»ին շուրջ: Մենք 2-3 հոգիով սկսած էինք ու
այսօր արդէն 20 հոգի կ'աշխատի խմբագրատունէն ներս:

Հ.- Վերադառնալով Հրանդին, տասը տարի կրցաւ դիմանալ այդ
պաշտօնին վրայ:

Պ.- Հրանդը արդէն դարձած էր ոչ միայն համազգային, այլեւ
համաշխարհային դէմք մը: Չէր կրնար ձգել ու հեռանալ: Կը սիրէր իր
գործը: Կեանքը «Ակօս»ին նուիրած էր ու մնաց. մենք հեռուէն միայն
օգտակար կ'ըլլայինք իրեն: Անշուշտ երբ Հրանդը մեզմէ որեւէ
օգնութիւն կը խնդրէր, մենք ներկայ էինք:

Ան եզակի դէմք մըն էր:



ՌՈՊԷՐ ՀԱՏՏԷՄԵԱՆ

Խմբագրապետ «Մարմարա» Օրաթերթի

Հ.- Այս հանդիպումը նախ լոյս պիտի
տեսնէ ռամկավար ազատական մամուլին մէջ
ու ապա մաս պիտի կազմէ գաղութահայ
կեանքին նուիրուած ամբողջական հատորին,
որուն խմբագրումի աշխատանքին արդէն իսկ
սկսած եմ. պիտի չուզէի որ պոլսահայութիւնը
դուրս մնացած ըլլար այս հատորէն:

Ամերիկահայ մեր ընթերցողներուն հաս-
նելու համար, առաջին հարցումս պիտի ըլլար
«Մարմարա»ն ե՞րբ սկսած է հրատարակուիլ եւ ի՞նչ պայմաններու տակ
ծնունդ առած է:



Պ.- Շատ սիրով: Նախ ձեզի բարի գալուստ կը մաղթեմ եւ ձեր բուն հարցումին պատասխանելէ առաջ կ'ուզեմ ձեզի շնորհակալութիւն եւ գնահատանքի զգացումներս արտայայտել: Ինչո՞ւ: Որովհետեւ կը տեսնեմ որ դուք հայ գրականութեան աշխատաւորներու նկատմամբ յարգանք եւ հետաքրքրութիւն ցոյց կու տաք: Բան մը, որ ինծի համար շատ կենսական կարեւորութիւն ունի, որովհետեւ այդ հետաքրքրութիւնը, որ այսօր ցոյց կու տաք եւ ձեր ընթերցողներուն կը փոխանցէք, պատմութիւն պիտի դառնայ եւ օր մը շատ օգտակար պիտի ըլլայ... տասը, քսան եւ երեսուն տարի վերջ, այս շրջանի անցուդարձերով հետաքրքրուիլ ուզող պատմաբաններու եւ կամ պարզ գրասէրներու համար: Հետեւաբար, նախ կը գնահատեմ ձեր այս աշխատանքը:

Յետոյ, կը շնորհաւորեմ ձեր ընթերցողները, որովհետեւ այս նիւթերը կը սիրեն եւ կը կարդան, որովհետեւ այս ցիր ու ցան հայ ժողովուրդը, մինուճար մեր ժողովուրդը, հակառակ ամէն բանի, տակաւին գրասէր կողմ մը ունի: Կա՛ն, գիտեմ, աշխարհի ամէն կողմը իրենց առօրեայ թերթին եւ գրքին սպասող այսպէս ծարաւի մարդիկ: անոնք ալ ամէն կերպով գնահատանքի արժանի են:

Եւ ճիշդ այս նպատակով է, որ «Մարմարա»ն հիմնուած է, մասնաւորաբար քառասուն տարիէ ի վեր ի՞մ հսկողութեան տակ կը շարունակուի, իրեն գլխաւոր առաքելութիւնը ընտրելով հայ մշակոյթի եւ հայ լեզուի հաւատարմութիւնը: Եւ այդ հաւատարմութիւնը բաժնելու համար իր ընթերցողներուն հետ, որքան որ ալ մեր թերթին ճակատին գրուած ըլլայ «Մարմարա» - հասարակական, քաղաքական օրաթերթ, եթէ ինծի հարցնէք, մենք քաղաքական օրաթերթ չենք, կամ այն իմաստով, ինչ որ կը հասկնայ ժողովուրդը ընդհանրապէս քաղաքական բառով... մենք ընդհանրապէս մշակութային եւ ազգային թերթ ենք, որովհետեւ մեզի համար, ամէն բանէ առաջ, երբ կ'ըսուի ազգային ապրում, կը հասկցուի լեզու, մեր լեզու՛ն, մեր մայրենի լեզուն եւ մենք պարտաւոր ենք, նոյնիսկ թուրքիոյ նման երկրի մը մէջ, ուր զանազան ճնշումներ մեզ կը ստիպեն որ մայրենի լեզուէն, մեր մայրենի անունէն մի քիչ հեռանանք, կամ գոնէ թաքցնենք, կամ գոնէ գաղտագողի գործածենք, ուրեմն, այսպիսի երկրի մը մէջ անգամ հայախօսութիւնը շատ-շատ կարեւոր է եւ ի հպարտութիւն պոլսահայութեան պիտի ըսեմ, որ որոշ չափով ալ մենք կրցած ենք մեր հայախօսութիւնը պահել, հոգ չէ թէ հիմա որոշ կաղացումներ կան:

«Մարմարա»ն հիմնուած է 1940 թուականին Սուրէն Շամլեանի կողմէ եւ մենք մօտաւորապէս 67 տարիէ ի վեր անընդհատ կը շարունակենք հրատարակութիւնը, բացի Կիրակի օրերէ, ամէն օր:

կիրակի օրն ալ պարզապէս ցրուումի, տեղ հասցնելու դժուարութեան պատճառով դադրեցուցինք: Եւ ես 1967-էն ի վեր, աւելի քան ուղիղ 40 տարիէ ի վեր ստանձնած եմ այս շատ դժուար, բայց նաեւ շատ երջանկացուցիչ, շատ հաճելի պատասխանատուութիւնը:

Հ.- Ընդհանրապէս, մայր գաղութներու մէջ ալ, նոր երիտասարդութեան հայախօսութիւնը կը նուազի հասկնալի պատճառներով: Վստահաբար հոս ալ նոյնն է պարագան: Արդեօք այս իր ազդեցութիւնը կ'ունենա՞յ այժմ «Մարմարա»ի վրայ, թէ՞ դուք միջին եւ աւագ սերունդին միայն կը հասնիք:

Պ.- Անշուշտ որ շատ տրամաբանական է որ ունենար, որովհետեւ երբ ես թերթին պատասխանատուութիւնը կը ստանձնէի, մեր տպաքանակը մօտաւորապէս 3000-ի շուրջ էր, եւ հիմա կրնամ ըսել որ կէսի իջած է, անցնող քառասուն տարիներուն ընթացքին, պարզապէս անոր համար որ հայերէն կարդալու կարելիութիւնը ունեցողներուն թիւը հետզհետէ կը պակսի: Ճի՛շդ է, որքան որ ալ մենք հպարտանանք Պոլսոյ ի՛ր փառքերուն հաւատարիմ մնացած ըլլալու աւանդութեամբ, հայախօսութիւնը որոշ նահանջ մը արձանագրեց: Սա ընդունելի է: Բայց, սա չի նշանակեր, որ հայախօսութիւնը դադրած ըլլալով հանդերձ, հայ ըլլալէ դադրած է: Հիմա նայեցէք, մենք այստեղ մեր համայնքին մէջ, գաղութ բաւը ես մեզի համար չեմ գործածեր,- երկու շատ կարեւոր հարցեր ունինք: Մէկը հայախօսութեան նահանջն է, իսկ միւսը՝ խառն ամուսնութիւնն է: Երբ կ'ըսենք խառն ամուսնութիւն, կը հասկնանք հայու եւ թուրքի միջեւ ամուսնութիւն:

Այս երկու հարցերը մեզի համար խոշոր հիմնահարցեր են, բայց պիտի ըսեմ որ մէկը միւսէն մի քիչ տարբեր է: Ունինք շատ հայեր, որոնք հայախօս չեն, բայց շատ լաւ հայ են: Եւ անոնք իրենց հայութիւնը ոչ միայն կը պահեն, այլ նաեւ կը պահեն հայկական հաստատութիւնները: Այսօր մեր հայկական հաստատութիւնները, նիւթական եւ բարոյական աշխատանքի տեսակէտով, ընդհանրապէս ոտքի կանգնած են այնպիսի ազգայիններու կողմէ, որոնք հայերէն անգամ չեն խօսիր: Շա՛տ հայրենասէր մարդիկ են, հայութեան իմաստը շատ լաւ գիտեն, իրենց հայկական ինքնութեան իսկապէս տէ՛ր են եւ տէր կը կանգնին մեր բոլոր ազգային հաստատութիւններուն:

Նոյնը պիտի չկարենամ ըսել, դժբախտաբար, խառն ամուսնութիւններու պարագային, որովհետեւ խառն ամուսնութիւնը հայախօս չեղողներու ճակատագրէն տարբեր է, անոնք կորո՛ւստ են մեզի համար: Ամէն անգամ որ խառն ամուսնութիւն մը կը կատարուի, շատ ճղճիմ բացառութեամբ կը պատահի որ երբ հայ մը թուրքի հետ ամուսնանայ, կամ

ՄԱՐՄԱՐԱ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ



Նշանատր Պրպրոդ Ու Արուեստարան Կարօ Քիւրքման Ձոյգ Մը Կոթողային Հապորներ Կը Հրամցնէ Արուեստաւերներու «ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԻՆ ՀԱՅ ՆԿԱՐԻՉՆԵՐ»

Համբաւաւոր պրպրոդ ու պատուած են չափազանց նուրբ երկրորդ ոգորկ թա-
արուեստարան Կարօ Քիւրքման փանցիկ խաւով մը:
Փողային երկու հատորներով կը ներկայանայ արդիւնք
յրութեան, իր թանկագին նպատար բերելով մեր
փոյթը ծանօթացնելու եւ պատմութեան փոշի-
ուն մէջ կորսուելու դատա-
րտուած ինչ ինչ արուեստա-
րներ, իրենց անուններով եւ
լեզւագործութիւններով վերա-

Կարօ Քիւրքմանի այս աշխատասիրութիւնը արդիւնք
է 16 տարուայ խղճամիտ եւ տքնաջան պրպրոմի:
Ան այցելած է Փարիզ, Լոնտոն, Վենետիկ, Հռոմ,
Միլան, Վիեննա, Նիւ Եորք, Թո-
րոնթօ, Գահիրէ եւ Ադրբայճանի
եւ այնտեղ թանգարաններու
փանքերու ու եկեղեցիներու մէջ

OSMANLI IMPARATORLUĞU'NDA
ERMENT

«Մարմարա»: Անուանաթերթին եւ յօդուածներէն մէկուն համադրումը:

օտարի մը հետ ամուսնանայ եւ կողակիցն ալ, կամ իր կեանքի ընկերն
ալ կը սկսի հայերով հետաքրքրուիլ, հայերէն կը սորվի եւայլն: Բայց,
ասոնք բացառութիւններ են: Որովհետեւ, բոլոր խառն ամուսնութիւն-
ները կորուստով կը վերջանան, երկու կողմի համար ալ: Զաւակ մը
աշխարհ պիտի գայ, ի՞նչ պիտի կոչուի, ի՞նչ պիտի ըլլայ, ո՞ր դպրոցը
պիտի երթայ, անունը ի՞նչ պիտի ըլլայ...:

Այսպիսի հարցեր:

Բայց հակառակ անոր, ես ուրախ եմ որ պոլսահայութիւնը իր առողջ,
կազմակերպչական ոգին կը պահէ՝ իր պատրիարքարանին շուրջ համա-
խմբուած, իր 33 եկեղեցիներով, 15 վարժարաններով, մշակութային
նոյնքան թիւով ակումբներով, երգչախումբերով, հիւանդանոցներով,
մեր ազգային պարծանքը հանդիսացող հիւանդանոցներով եւ, ի վերջոյ,
ուսուցչաց հիմնարկներով եւ այլ կազմակերպութիւններով:

Հ.- Թերթը բազկերակն է գաղութին: Ինչպէ՞ս կը գնահատէք գոնէ մեր
լիւէներէն աւարտող երիտասարդութեան հայախօսութիւնը: Մեր կրթական
նիւնարկները արդեօք տակաւին կը մնա՞ն դարբնոցներ հայագիտութեան,
հայերէն լեզուի...:


Պ.- Դժբախտաբար, կացութիւնը նոյնն է բոլոր վարժարաններուն
համար ալ՝ ազգային Կեդրոնական, ազգային էսայեան, կամ մեր Միւի-
թարեան, որովհետեւ ես Միւիթարեանցի եմ... եւ ունինք նաեւ հրաշալի

ուրիշ վարժարաններ՝ Սամաթիոյ Լիսէ, դպրեմանք եւայլն, բայց բոլոր դպրոցները գրեթէ իրարու հետ նոյն դիրքի վրայ կը գտնուին: Ինչ մեղք որ այս լիսէները, այս վարժարանները աւարտող մեր աշակերտները մեր փափաքած չափով հայերէն չեն կրնար խօսիլ, որովհետեւ քիչ մը հոսանքի դէմ թիավարելու հարց մը կայ: Մեր խեղճ ուսուցիչները շատ մեծ տառապանքի մէջ են եւ կը փորձեն ասոնց հայերէն սորվեցնել: Ստացուած արդիւնքը հարիւր տոկոս լաւ չէ՝: Բայց եղածն ալ, ինծի համար, միւլթարական է, որովհետեւ ես միշտ կը մտածեմ, որ այդ աշակերտը, հոգ չէ թէ բաւականաչափ հայերէն առանց սորվելու կը բաժնուի դպրոցէն, ի՞նչ պիտի ըլլար, եթէ բնա՛ւ հայկական դպրոց գացած չըլլար: Եթէ ըսենք որ թրքական դպրոց երթայ կամ օտար վարժարան երթայ, այն ճղճիմ քիչը որ ինք հայկական վարժարանէն կը ստանայ, այդ մէկն ալ ստացած պիտի չըլլար: Իսկ այդ ճղճիմ քիչը, իմ կարծիքով, հիմք մըն է: Օր մը եթէ տղան պահանջք գզայ, անոր վրայ կրնայ շէնքը բարձրացնել: Եթէ հայերէնը տկար է, օր մը կրնայ հայերէն սորվիլ, որովհետեւ գէրօ չէ իր մօտ, բա՛ն մը կայ... ատիկա հիմք պիտի ծառայէ, ուրեմն հայկական մեր վարժարանները, իմ կարծիքով, կը շարունակեն հրաշալի գործ տեսնել, եւ երբ մենք հրաւիրուինք գրական երեկոյթներու, այսպէս գեղարուեստական հանդէսներու, որոնք իսկապէս մեր սիրտը հպարտութեամբ կը լեցնեն եւ մեզ կ'ուրախացնեն, կը մտածենք որ այդքան ալ պատճառներ չունինք շատ յոռետես ըլլալու:

Հ.- Վերադառնալով թերթին, շնորհիւ ձեր համակարգիչին տեղեակ կը պահուինք մեր հայկական հարցէն: Տողերու ընդմէջէն, մենք անհրաժեշտ մեկնաբանութիւններ կ'ընենք: Նման երեւոյթ մը արդեօք ձեզ կը դնէ՞ որեւէ քաղաքական դժուարութեան առջեւ:

Պ.- Ո՛չ: Գիտէք, մենք լայն քաղաքական փորձառութիւն ունինք: Այս երկրին մէջ ծնած, մեծցած ենք: Այս երկրին հաւատարիմ քաղաքացիներն ենք: Ըսեմ թէ Թուրքիոյ մէջ ապրող հայերը այս երկրին հաւատարիմ քաղաքացիներն են: Օսմանեան շրջանին ալ այդպէս էին: Հաւատարիմ ժողովուրդ կը կոչուէին:

Այսօրուան կացութիւնը նո՛յնն է: Մենք հա՛յ ենք, լա՛ւ հայեր ենք, բայց միեւնոյն ժամանակ ալ այս երկրին լա՛ւ քաղաքացիներն ենք: Ինչ կ'ուզեն ըլլան քաղաքական պայմանները, մենք կը ջանանք որպէս հայ քաղաքացի այս երկրին, այս պետութեան գլխացաւ չըլլալ, այս երկրի շահերուն դէմ չգործել, ինչ որ իրենց բնական ակնկալութիւնն է եւ նաեւ մեր ալ քաղաքացիական պարտականութիւնը:



«Մարմարա»ի համացանցային թիւերէն մին:

Ասոր քով, սակայն, մենք միշտ իրենց բացատրած ենք որ մենք կրնանք միաժամանակ թէ՛ լաւ թուրք քաղաքացի ըլլալ եւ թէ՛ ինքնու-
թիւնը պահող լաւ հայեր ըլլալ: Մեզի արտօնեցէք, որ մեր այս դիմա-
գիծը պահենք: Եւ այդպէս ալ յաջողած ենք մինչեւ այսօր: Այնպէս որ
բոլոր քաղաքական հարցերուն կը մօտենանք զոյգ մտահոգութիւն-
ներով: Նախ որպէս այս երկրին քաղաքացի, որ այս երկրին բարօր
ըլլալը, լաւ ըլլալը կը փափաքի, որովհետեւ ինք ալ գուցահեռաբար լաւ
պիտի ըլլայ, եւ նաեւ որպէս հայ: Մենք անշուշտ որպէս հայ համայնք
երբեք եւ երբեք անտարբեր չենք կրնար մնալ հայութիւնը հետա-
քըքրող ճակատագրական հարցերուն նկատմամբ: Բոլորս ալ մեր անձ-
նական կարծիքները, համոզումները ունինք, մենք պատմութիւնը շատ
լաւ գիտենք, առանց պատմութեան գիրք կարդալու, որովհետեւ աշ-
խարհի բոլոր ժողովուրդները պատմութիւնը պատմութեան գիրքերէն
կրնան սորվիլ, բայց հայ ժողովուրդին համար իր անցեալը իր ընտա-
նական գիրքն է:

Մեզմէ ոեւէ մէկը պատմութեան գիրք կարդալու պէտք չունի:
Ուստի մենք ունինք մեր կարծիքը, ունինք մեր ծանօթութիւնները եւ
կը ջանանք այս բոլորը հաշտեցնել իրարու հետ եւ գտնել ճամբայ մը,
որուն վրայ ապահով պիտի ընթանանք մինչեւ այն թուականը, երբ այս
բոլոր տարակարծութիւնները օր մը իրենց նուազագոյն չափին պիտի
իջնեն:

Ես չատ մօտէն կը հետեւիմ Թուրքիոյ մէջ քաղաքական կեանքին եւ կայծակնային արագութեամբ ամէն օր Թուրք մամուլէն կը թարգմանեմ մեզ՝ հայերս հետաքրքրող նիւթեր, ըլլա՛յ դրական կամ ժխտական... մինչեւ իսկ ժխտականները թերեւս մեզի համար շատ աւելի կարեւոր են քան դրականները: Բայց, ի միջի այլոց, ուրախութեամբ ըսեմ որ դրականներն ալ սա վերջին շրջանին բազմացած էին: Հանրային կարծիքի մէջ, մամուլի մէջ, թերթեր, որոնք ասկէ մօտաւորապէս 10 տարի առաջ հայու թշնամի էին, հայութեան մասին մի՛շտ շատ ժխտական կերպով կ'արտայայտուէին, այսօր անկիւնադարձ ըրած են եւ հայերու մասին միշտ ալ շատ նպաստաւոր լուրեր, յօդուածներ եւ մեկնաբանութիւններ կը հրատարակեն:

Բայց անոնց կարգին անշուշտ կան ժխտականները: Ես կը կարծեմ որ մեզի համար շատ աւելի կարեւոր է ժխտականներուն արժէք տալ, ժխտականները հասկնալու ջանալ եւ այդ ժխտականներուն մասին մեր բոլոր ընթերցողներուն գաղափար տալ, որպէսզի իրենք ալ տեսնեն եւ հաւասարակշռութիւն մը ապահովեն այս բոլորին մէջ: Մեր պարտականութիւնը այս է: Թուրք հանրային կարծիքին մտածումները կերպով մը այստեղի կամ արտասահմանի մեր ընթերցողներուն կը փոխանցենք եւ կը հրաւիրենք որ մտածեն, առանց որ մեր մեկնաբանութիւններուն պէտք ունենան:

Հ.- Կ'ըսէք թէ կարգ մը մտայնութիւններու փոփոխութիւններ եղան այս վերջին տարիներուն: Ի՞նչ է արդեօք պատճառը. Եւրոմիութեան անդամ դառնալու պահա՞նջքն է, թէ ոչ իրապէս Թուրքիոյ մէջ նոր սերունդի մը ծնունդը՝ առաջնորդութեամբ մտաւորականութեան մը:

Պ.- Պրն. Վարդիվառեան, ես ձեր հարցումին սապէս պիտի պատասխանեմ: Այդ դրական տրամադրութիւնները ես հիմա սկսած եմ հաւատալ, որ արդէն առաջուց ալ կային, սակայն արգելքներ կային: Այս երկրին մէջ հայկական հարցը մի՛շտ թապու եղած է եւ այսօր ալ որոշ չափով թապու է: Հետեւաբար, երբ համալսարանական մակարդակներու վրայ, մամուլի մակարդակներու վրայ, մտաւորականներու միջեւ իսկապէս կային մարդիկ, որոնք անցեալը գիտէին, հայ ժողովուրդի նկատմամբ սեմբաթի ունէին, բայց այս բոլորին մասին չէին խօսեր: Անշուշտ երբ Թուրքիա սկսաւ մօտենալ Եւրոմիութեան եւ երբ Եւրոմիութեան կողմէ կարգ մը պահանջներ ներկայացուեցան Թուրքիոյ եւ Թուրքիա ալ ուզեց ընդառաջել այդ բոլորին, անշուշտ ստեղծուեցաւ տարբեր միջնորդող մը, որուն մէջ այդ երբեմնի մարդիկը կամաց-կամաց սկսան իրենց զգացումները դուրս տալ: Քանի այդ զգացում-

ները դուրս տրուեցան, ուրիշներ ալ անոնցմէ քաջալերուեցան: Այսօր Թուրքիոյ մտաւորականութեան մէջ շատ կարեւոր շարժում մը ստեղծուած է. մարդիկ սկսած են հետաքրքրուիլ որ արդեօք մերին մեծ մայրերուն, մեծ հայրերուն մէջ հայեր կայի՞ն... եւ գիտէ՞ք գիրքեր հրատարակուեցան: Սա շատ կարեւոր է: Այլեւս իրենք քաջաբար եւ հպարտօրէն սկսան ըսել որ իմ մեծ մայրս հայ է եւայլն...:

Այս բոլորը շատ նպաստաւոր մթնոլորտ մը ստեղծած էին: Դժբախտաբար «Ակօս» Թերթի խմբագիր Հրանդ Տինքի սպանութիւնը յանկարծ ամէն ինչ տակնուվրայ ըրաւ: Եւ այս դէպքը եկաւ անգամ մը եւս լռութեան հրաւիրել քաջարի մարդիկը, որոնք ընդհանրապէս հայերու ի նպաստ խօսիլ կ'ուզէին եւ աւելի ազատ ասպարէզ ստեղծեց այս ծայրայեղ ազգայնապաշտներուն համար: Ազգայնապաշտ բառը կը սիրեմ, որովհետեւ մենք ալ ազգայնապաշտ ենք, մենք ալ մեր ազգը կը սիրենք, մեր ազգին համար կ'աշխատինք: Բայց ծայրայեղ, կծու, մոլեւռանդ ազգայնապաշտութեան դէմ ենք: Այդպիսի շարժում մը ստեղծուեցաւ հայերու դէմ:

Հիմա սա փոխանցման շրջանն է: Դժբախտաբար, հայ համայնքը քիչ մը գլուխէն զարնուեցաւ այս հարցերուն մէջ: Սկսած ենք վախնալ որ այդ ստեղծուած վերջին շրջանի չափաւոր, բարեացակամ մթնոլորտը յանկարծ քիչ մը դարձեալ պիտի ցնցուի, պիտի վիրաւորուի: Բայց պարտաւոր ենք լաւատես ըլլալ եւ հաւատալ որ Հրանդ Տինքի սպանութեամբ ստեղծուած այս ցնցումը որոշ ժամանակ մը վերջ իր բնականոն հունին պիտի վերադառնայ: Եւ մենք ալ պիտի շարունակենք աւելի առողջ եւ հանգիստ պայմաններու մէջ ապրեցնել մեր ազգային բարքերը:

Ապահովութեան հարցեր կան: Ապահովութեան տնօրէնութիւնը բոլոր հայկական հաստատութիւնները հրաւիրած է որ իրենք եւս յաւելեալ ապահովութեան եւ անվտանգութեան միջոցներու դիմեն: Մենք ալ այդպէս ըրած ենք... քամերաներ դրած ենք, կղպանքներ դրած ենք, եւայլն...:

Այս բոլորը անշուշտ անհանգստացուցիչ կէտեր են, բայց պիտի ուզէի հաւատալ որ անցողակի են եւ պիտի անցնին:

Հ.- Կ. Պոլսոյ Պատրիարքարանին մասին ունիմ հարցում, Պրն. Հատտէճեան: Աւանդութիւնը այն է, որ Պատրիարքութիւնը ամենախստապահանջ ու աւանդապահ աթոռներէն է, չըսելու համար ամենաաւանդապահը մեր նոյրական աթոռներուն: Ներկայ Պատրիարք Սրբազան Հօր նկատմամբ, ըլլա՛յ այս գաղութին մէջ, ըլլա՛յ արտասահման, կան տարբեր կարծիքներ:

Դուք ի՞նչ կը խորհիք Պատրիարք Սրբազան Հօր կատարած աշխատանքներուն նկատմամբ: Օրինակ, Բարեգործականի հետ յարաբերութիւնը՝ Մելգոնեան Կրթական Հաստատութեան փակման խնդրով: Արդեօք ասոնք վնաս կը հասցնե՞ն ձեր համայնքի հեզասահ ընթացքին:

Պ.- Ասիկա շատ փափուկ հարց է: Գաղտնիք մը չէ, որ խզուած յարաբերութիւններ ունեցած ենք: Բայց գիտէք Պոլսոյ ժողովուրդը նախ եւ առաջ եկեղեցասէր եւ աւանդապահ ժողովուրդ է: Պատրիարքին անձը խնդրոյ առարկայ չէ, պատրիարքարանի աթոռը խնդրոյ առարկայ է: Հետեւաբար, այն շրջաններուն իսկ, երբ մենք շատ տեղ երբեմն վերապահութիւններ եւ տարակարծութիւններ ունեցած ենք Պատրիարքին հետ, պատրիարքական աթոռին նկատմամբ մեր յարգանքը երբեք չենք պակսեցուցած:

Մեր Պատրիարք Սրբազանը ընդհանրապէս ճիշդ է որ երբեմն մասնաւորաբար արտասահմանի շրջանակներուն անհանգստութիւն պատճառող յայտարարութիւններ կ'ընէ եւ գործունէութիւններ կ'ունենայ: Սակայն, արտասահմանի մեր բարեկամներն ալ պէտք է լա՛ւ հասկնան որ Թուրքիոյ Հայոց Պատրիարք մը ինչպիսի պատասխանատուութիւններ ունի իր ուսերուն վրայ ոչ միայն այն երկրին նկատմամբ, ուր կ'ապրի, այլ նաեւ այն գաղութին, որուն հովիւն է: Եօթանասուն հազար հայ հայրենակիցի ճակատագրին անձնապէս պատասխանատու է ինք, իմ կարծիքով: Պէտք է նկատի առնուի հայ համայնքին անվտանգութիւնը, ապահովութիւնը եւ այս երկրին հետ միասնութիւնը:

Օրինակի համար, Բարեգործականի խնդրին մէջ ես ընդհանրապէս հարիւր տոկոս դէմ էի իրեն եւ շատ կը նեղուէի որ ինչո՞ւ դատ կը բանայ Հ.Բ.Ը. Միութեան նման հաստատութեան դէմ, որուն այնքա՛ն բարիքները տեսած է հայ ժողովուրդը: Թէեւ Թուրքիոյ հայութեան նկատմամբ յարաբերաբար բարիքները քիչ եղած են, բայց մեզի համար Թուրքիան չէ կարեւորը, համընդհանուր հայկական շահերը նկատի առած, Բարեգործականը կարեւոր հաստատութիւն մըն է: Այսօր թերեւս սխալներ կրնայ գործել, այսօր մենք ալ թերեւս Մելգոնեանի գոցուելուն դէմ կրնանք ըլլալ, բայց այս բոլորը տարբեր հարցեր են: Պատրիարք մը, իմ կարծիքով, պէտք չէ՝ դատ բանայ Բարեգործականի նման հաստատութեան դէմ: Այս նիւթերու շուրջ տարակարծութիւններ ունեցած ենք: Եւ իրեն ալ կրնամ ըսել. սա իրեն ետեւէն խօսիլ չէ:

Բայց ես Պատրիարք Սրբազանին քովը տեսած եմ շատ գնահատելի կողմեր: Ժիշդ է որ մեր Պատրիարք Սրբազան Հայրը երբեմն սփիւռքահայութեան անհանգստութիւն պատճառող արտայայտութիւններ կ'ընէ, բայց սփիւռքահայութիւնը պէ՛տք է նաեւ յիշէ որ Պատրիարք

Սրբազանը երբեմն հայ ժողովուրդին ի շահ շատ քաջարի, շատ խիզախ եւ շատ իրաւացի ալ յայտարարութիւններ կ'ընէ։ Եւ երբեմն ալ եղած դէպքերու ալ մեկնաբանութիւնները յարաբերական են։ Այստեղ ապրող հայերը տարբեր ձեւ կը տեսնեն, արտասահմանի մէջ ապրող հայերը տարբեր ձեւ կը տեսնեն։

Պէտք է ըսեմ որ Պատրիարք Սրբազանին հետ այս յարաբերութիւնները միայն մերը չեն, մեր ժողովուրդի մէջ ալ տարակարծութիւններ ունեցողներ կան եւ սակայն մեր ժողովուրդը անխտիր իր յարգանքը կը պահէ մեր Պատրիարքին նկատմամբ։ Եթէ Պատրիարքը այսօր հրահանգ տայ մեր ժողովուրդին, մեր հայութիւնը ատիկա իր գլխուն վրայ կը դնէ եւ նոյնութեամբ կը կատարէ։ Յարգանքը, այդ կարգապահութիւնը հարիւր տոկոս ի գօրու է։

Պէտք է ըսել, որ Պատրիարք Հայրը մեր ազգային եւ եկեղեցական մշակութային ապրումներուն մէջ շա՛տ կարեւոր տեղ ունի։ Ամենաչնչին հանդիսութիւնը անգամ մենք կ'ուզենք որ Պատրիարքին նախագահութեամբ ըլլայ։ Անիկա տարբեր չուք մը ունի, ինք կը սիրէ կամ չի սիրեր, տարբեր հարց, բայց Պատրիարքի մը ներկայութիւնը ուրիշ չուք մը կը ձգէ հանդիսութեան։



Հ.- Ուրիշ երեւոյթ մըն էր պոլսահայ գաղութին մէջ «Ակօս» շաբաթաթերթին հրատարակութիւնը։ Դուք որ մամուլի մարդ եղած էք, «Ակօս»ը ինչո՞վ թրքահայ կեանքի մէջ տեղ գրաւեց եւ ինչպէ՞ս կրցաւ մեր յուզումները, զգացումները տեղացի ժողովուրդին հասցնել։ Խնդրեմ որ «Ակօս»ի մասին տաք ձեր կարծիքը։

Պ.- Ես, ճիշդը ըսելու համար, պիտի չուզէի այդ նիւթին մասին արտայայտուիլ, որովհետեւ անշուշտ որ ես նախ եւ առաջ հա՛յ մամուլի ներկայացուցիչ եմ։ Եւ յետոյ ես ընդհանրապէս կը նախընտրեմ որ իմ հայ մամուլի ներկայացուցիչի հանգամանքս մոռցուի, հայ գրագէտի հանգամանքին քով։ Ինծի համար հայ գրագէտ ըլլալը, հայ գրակա-նութեամբ զբաղիլը առաջին գծի վրայ կու գայ, յետոյ կու գայ ինծի

համար մամուլի մարդ ըլլալը: Բայց այս երկուքին մէջ հասարակաց մէկ բան կայ. հայոց գիրի եւ հայոց լեզուի պաշտամունքը:

81 տարեկան եմ, ամբողջ կեանքս անցաւ հայոց լեզուի պաշտամունքին համար եւ ճիշդ այս կէտէն մեկնելով է որ ես ընդհանրապէս «Ակօս»ի նման թերթի մը երեւումին կողմնակից չէի:

Ընդհանրապէս ինքը Հրանդ Տինքը եւ Պատրիարք Սրբազանն էին որ ինծի առաջարկեցին «Մարմարա»ի մէջ այսպէս «Ակօս»ի նման թրքերէն բաժին մը հաստատել, ես դէ՛մ եկայ, ըսելով որ իմ առաքելութիւնս հայերէն, հայալեզու հրատարակութիւնն է:

Ինչո՞ւ: Որովհետեւ այսօր գէշ-աղէկ այս քաղաքին մէջ ապրող եօթնասուն հազար հայերը եթէ հայութեան մասին բան մը կարդալ պիտի ուզեն պիտի դիմեն հայ մամուլին: Հայերէն գիտնան կամ չգիտնան: Նոյնիսկ եթէ անձը մէկ բառ հայերէն կարդալ չգիտնայ, անպայման իր շուրջ պիտի գտնէ մէկը որմէ պիտի խնդրէ որ թարգմանուին: Ուրեմն ինքը կերպով մը իր օրկանիկ կապը պիտի պահէ հայ մամուլին հետ: Բայց բնութեան օրէնքն է. երբ որ դուն այդ ժողովուրդին լա՛ւ գիտցած լեզուով ուրիշ թերթ մը կը հրատարակես, մեքենաբար, ինքնաբերաբար հարցը կը փոխուի եւ այդ անձը այլեւս անդին կը շարտէ հայերէն թերթը, որ կարդալու դժուարութիւն ունի, եւ ուրեմն կը սկսի գուրգուրալ այդ թրքերէն թերթին վրայ:

Կացութիւնը այսպէս եղաւ:

«Ակօս»ը թրքերէն հրատարակելով, կերպով մը մեր հայախօսութեան կամ հայատառ թերթ հրատարակելու ճիգին անմեղ վնաս մը հասցուց, ըսենք: Չեմ ուզեր զանոնք ամբաստանել:

Երկրորդ, ինծի համար անպատեհ կէտը այն էր, որ «Ակօս» թերթը հրատարակելով թրքերէն լեզուով, դուրս ելաւ հայ ընթերցողներու սահմանէն եւ իր ըսելիքները սկսաւ հասցնել նաեւ թուրք ժողովուրդին: Այսօր «Ակօս» թերթը կարդացողներուն շատ կարեւոր մէկ տոկոսը, չըսեմ կէսը, հայ չեն, թուրքերն են որ կը կարդան: Ուստի այսպիսի թերթի մը մէջ հայկական նիւթերը պէտք է տրուին շատ ուշադրութեամբ: Մենք այս երկրին մէջ մի՛շտ հպարտօրէն ըսած ենք, պետութենէն գաղտնի որեւէ բան չունինք: Այս երկրին դէմ դաւադրութիւն չունինք, գաղտնի կազմակերպութիւններ եւայլն... բան մը չունինք: Այսինքն պետութենէն պահելիք բան չունինք: Բայց եւ այնպէս ամէն ընտանիք, որեւէ ընտանիք պէտք չունի չարագործ ըլլալու, ունի՛ իր գաղտնիքները, իր մտերմիկութիւնները, չըսելու համար «գաղտնիքները», որոնք կ'ուզենք որ ընտանիքի անդամներուն միջեւ միայն խօսուին: Այս տեսակէտով ալ ես կը կարծեմ որ «Ակօս»ը երբեմն ունե-

ցաւ այնպիսի հրատարակութիւններ եւ հարցադրումներ, որոնք աւելի լաւ պիտի ըլլար որ մեր միջեւ խօսուէին:

Բայց այս բոլորէն դուրս, միշտ հպարտօրէն պիտի ըսեմ, ես եղած եմ Հրանդ Տինքը քաջալերող որպէս լրագրող: Առաջ մեր թերթին կու գար եւ կ'աշխատակցէր: Հրանդ Տինքը շատ արժանիքներ ունեցող տղայ էր: Նաեւ քաջ էր, խիզախ էր: Անշուշտ երբեմն ինքն ալ կը դիտէր իր ելոյթները, երբեմն կը զարնէր անխորհուրդութեան, անշրջահայեցողութեան դուռը եւ ինքն ալ արդէն զգացած էր որ իրեն դէմ որոշ դաւադրութիւն մը կ'ընայ պատահիլ եւ այդ վախով ապրեցաւ: Այնուհանդերձ այդ աղէտը մեր բոլորին կարծածէն ու սպասածէն շուտ եկաւ: Շատ ցաւալի կորուստ մը ունեցանք: Այդ կորուստը միայն իր սեփական կեանքին կորուստը չէր, այլ ամբողջ համայնքին կորուստն էր, սա տեսակէտով որ իր մահը նաեւ այսպէս անհանգստութիւն եւ մտավախութիւն սկսաւ պատճառել համայնքին, իր մահով ստեղծուած եւ իր մահէն վերջ ցուցաբերուած այդ միասնական ցոյցերու ստեղծած, քիչ մըն ալ ժխտական միջոցառման պատճառով: Որոշ անհանգստութիւններ ստեղծուեցան համայնքին համար:

Անշուշտ ես միշտ կը հաւատամ որ այդ հարիւր հազար հոգիով ստեղծուած «բոլորս ալ հայ ենք», «բոլորս ալ Հրանդ ենք» ասացուածքին մէջ միայն Հրանդ Տինքի նկատմամբ սիրմաթիի հարց մը չկար, կային ուրիշ ազգականներ ալ, որոնք կրնային դժբախտաբար մեզի դէմ գործել... եւ սկսան գործել:

Այս հանգրուանին, մեր բոլորին մաղթանքն այն է, որ Աստուած հոգին լուսաւորէ Հրանդին եւ Հրանդին նման այսպէս հայկական հարցերով զբաղող ընկերներ ալ ապագային ունենանք, բայց մաղթանքը այն է, որ շատ շուտ անցնի այս քիչ մը անհանգիստ շրջանը եւ մենք վերադառնանք մեր բնականոն նաւահանգիստներուն:

Հ.- Վերադառնալով դարձեալ «Մարմարա»ին, նախ քան անձնակազմին մասին հաճեցէք տալ կարգ մը տեղեկութիւններ:

Պ.- Ես կ'ուզեմ ամէն բանէ առաջ ընդգծել «Մարմարա»ի մէկ յատկանշական գիծը, որն է գրականութեան հանդէպ սէրը: Ես ալ որպէս գրագէտ... Մոռցայ քիչ առաջ ըսելու, որ ազգային դիմագծութեան կողքին ունինք նաեւ գրական դիմագիծ: Աշխարհի վրայ ես չեմ կրնար երեւակայել որեւէ թերթ, որեւէ հայկական թերթ, որ առաջին էջին վրայ գրականութիւն ընէ:

Մեր թերթը, քառասուն տարիէ ի վեր, իր առաջին էջին վրայ գրականութիւն ալ կ'ընէ, ցոյց տալու համար որ գրականութիւնն ալ

այնքան կարեւոր է, որքան քաղաքականութիւնը: Եւ ցոյց տալու համար որ նաեւ հայ ժողովուրդի փրկութիւնը միայն քաղաքական անցուդարձերով չէ, այլ նաեւ գրականութեամբ է: Ես վստահ եմ որ դուք ալ ինծի հետ ձայնակից պիտի ըլլաք, որովհետեւ գիտեմ որ գրականութեան քաջալեր հանդիսացող անձ էք:

Մեր թերթը այս գիծով է որ կ'աշխատի, ունինք մեր գրական յաւելուածները, մեր գրական շարժումները եւ այն ինչ որ այսօր պոլսահայ գրականութիւն կը կոչուի, սկսեալ Զահրատով, Խրախունիով, ինձմով, Իգնա Սարրասլանով եւ բոլոր ձեզի ծանօթ անուններով, այս բոլորը ծնունդ առած են «Մարմարա»ի սիւնակներուն մէջ:

«Մարմարա» երբ որ կ'ըսենք, չկարծուի որ հարիւրաւոր մարդիկ կ'աշխատին մեզի հետ. դուք այս կէտը շատ լաւ գիտէք որպէս սփիւռքահայ մամուլի ծանօթ անձ: Մենք ընդհանրապէս 12 հոգիով է որ կը հրատարակենք այս թերթը: Մեր խմբագրական կազմը ահա՛ այս է, իմ գլխաւոր օգնական խմբագրուհիս Օրդ. Մաքրուհի Յակոբեանն է: Ունինք երկու գրաշար եւ էջադրող ընկերուհիներ, ներսը: Մէկը Հայաստանէն եկած է, իրեն հրաշալի, ճիշդ մեր սիրած ձեւով արեւմտահայերէնը սորվեցուցած ենք եւ մեր աւանդական ձեւով նկարագրական գրելն ալ սորվեցուցած ենք: Ինքը այս բոլորը կ'ընէ: Իմ երկու որդիներս՝ Արին եւ Այգը շատ կարեւոր ներդրում ունին «Մարմարա»ի մէջ, մէկը թեքնիք աշխատանքով եւ թուրքերէն լեզուով յաւելուածի հրատարակութեամբ, իսկ միւսը թերթի ամենէն ծանր պարտականութիւնը ստանձնելով՝ վարչական եւ տնտեսական բաժիններով:

Բարեբախտութիւնը ունինք մեր տպարանը մեզի հետ ունենալու: Այնպէս որ առաւօտուն ճերմակ էջը կ'առնենք, կէսօրուայ ժամը 1-ին թերթը կը տպենք մեր հաստատութեան մէջ: Ունինք մեր տպագրիչը, կաղապար հանողները, թերթին ցրուումով զբաղողները:

Կէսօրուան ժամը 1-ին հրատարակելու առաւելութիւնը սա է, մինչեւ այդ ժամուն օրուան թուրքերէն բոլոր թերթերը կը սանտրենք այսպէս, աչքէ կ'անցընենք ու երկու ժամուան մէջ կը թարգմանուին ու կը տպուին մեր թերթին մէջ: Հիմա համացանցի վրայ ալ մեր թերթը ունինք, թէեւ, դժբախտաբար, որոշ մտահոգութիւններով, «Մարմարա»ի ճղճիմ մէկ մասն է որ կը դնենք, բայց կը կարծեմ որ այդ մասն ալ բաւական օգտակար կ'ըլլայ սփիւռքի մեր ընթերցողներուն:

Հ.- «Մարմարա»էն դուրս ելլենք եւ ձեր գրականութեան գանք: Արագ արտադրող էք, ձեր գործերը կը տարածուին եւ հաճոյքով կը կարդացուին: Ինչպէ՞ս մտաք մեր գրական անդաստանը:

Պ.- Ես չափ կանուխ տարիքէս գրականութիւնը սիրած եմ: Կրնամ ըսել որ 10-12 տարեկանէս, ծնողքէս գաղտնի, որովհետեւ կ'ուզէին որ դպրոցէն դուրս ուրիշ բանով չգրադիմ: Բայց ես գաղտնի կը կարդայի, բարձիս տակը կը դնէի, յայտնի չէի ընեմ: Շատ կը սիրէի գրականութիւնը... այդ չըջանին մանկական գրականութիւնը:

Մխիթարեանցի եղած եմ եւ մինչեւ որ Մխիթարեանը աւարտեցի սկսայ գրել թրքերէն լեզուով: Շատ զարմանալի է: Մեր Մխիթարեանի մէջ շատ առողջ դաստիարակութիւն կար, հայերէն ալ շատ լաւ գիտէի, բայց ես թրքերէն կը գրէի, մինչեւ որ իմ գրչի ընկերներէս խաչիկ Ամիրեանը, լուսահոգին, եւ Վարուժան Աճեմեանը, որ ինքը եւս լուսահոգի եղաւ, օր մը ինծի անակնկալ ըրին, իմ թրքերէն պատմուածքներէս մէկը, առանց ինծի լուր տալու, հայերէնի թարգմանեցին եւ 1946 թուականին հրատարակուած «Անիւ» ամսագրին առաջին թիւին մէջ դրին:

Ու երբ ատիկա տեսայ, ուղղակի ցնցուեցայ եւ տեսայ որ ի՛նչ լաւ բան է հայերէն գրելը: Եւ այդ օրը իմ ընկերներու առջեւ երգում ըրի որ միայն հայերէն պիտի գրեմ եւ երգումիս հաւատարիմ մնացի:

Այսօր, հրատարակուած գիրքերու թիւը գրեթէ յիսունի հասած է, բայց հաւատացէ՛ք առանց չափազանցութեան կ'ըսեմ, տակաւին 60-70 գիրք ունիմ պատրաստ որ պէտք է հրատարակուին եթէ ժամանակս, դրամս եւ թեքնիք տրամադրութիւնները բաւեն:

Շատ արագ կը գրեմ: Այսօր ալ կը շարունակեմ գրել: Երբ որ կ'ըսեմ թէ սա չափ դեռ գիրք ունիմ հրատարակելու, ատիկա ամէն օր կը փոխուի, որովհետեւ տարեկան 4-5-5 գիրք կ'աւելնայ...: Որովհետեւ իմ գրած բոլոր գրութիւններս ընդհանրապէս գիրքերու մէջ մնալու հանգամանքը ունեցող, մնայուն արժէք ունեցող գործեր են, նիւթեր են: Շատ կը սիրեմ գրելը, եթէ մէկ օր սա կամ նա պատճառով չկարենամ գրել, շատ դժբախտ եմ այն օրը: Պէտք է ընդունիլ որ մեր ասպարէզին մէջ երբեմն այնքան զբաղած ենք, որովհետեւ գրականութեան հանդէպ իմ սէրս պատճառ կ'ըլլայ որ միայն սեղանին վրայ չաչխատիմ...: Զկայ գրական հանդիսութիւն մը, թատերական, բանախօսային, երաժշտական, որովհետեւ արուեստներու բոլոր սեռերուն նկատմամբ պաշտամունք ունիմ, բոլորին ալ կ'երթամ, ներկայ կը գտնուիմ, նկարագրականները կը գրեմ: Իւրաքանչիւր նկարագրական մէկ յօդուածի հագամանք ունի: Ես ընդհանրապէս շատ ալ կը սիրեմ գնահատել արուեստները:

Ժամանակակիցներս գոնէ միայն այդ կէտին համար ինծի պէտք է շնորհակալ ըլլան: Բոլոր արուեստներու ճիւղերուն մէջը քիչ մը այսպէս շօշափելի գեղեցիկ գործ տեսնողներուն նկատմամբ շատ լաւ

յօդուածներ կը գրեմ, այսպէս մասնագէտի բժախնդրութեամբ կը մօտենամ:

Շատ ալ կը սիրեմ բեմերէն խօսիլ: Ընդհանրապէս այդ վարժութիւնն ալ ձեռք բերինք ժամանակի ընթացքին: Իմ ընթերցողներս շատ կ'ախորժին իմ խօսակցութենէս, որովհետեւ կը սիրեմ իրենց պատգամ մը տալ եւ շատ հասկնալի ձեւով տալ, առանց ձանձրացնելու զանոնք, երբեմն խնդացնելով ու մտածումի հրաւիրելով: Այսպիսի աշխատանք մըն է որ կը տանինք այսքան երկար տարիներէ ի վեր:



ԱՐԱ ԳՈՉՈՒՆԵԱՆ

Խմբագիր «Ժամանակ» Օրաթերթի

Հ.- Մեր ընթերցողներուն հասնելու համար, կ'ուզեմ իմանալ «Ժամանակ» թերթի հիմնադրութեան մասին, ի՞նչ պայմաններու տակ լոյս աշխարհ եկած է:

Պ.- 28 Հոկտեմբեր, 1908-ին հիմնուեցաւ «Ժամանակ»ը, Միսաք եւ Սարգիս Գոչունեան եղբայրներուն կողմէ: Օսմանեան կայսրութեան շրջանին էր եւ երկրորդ սահմանադրութեան հռչակման ըսենք



յարաբերաբար աւելի ազատութիւններուն շրջանն էր: Ազատութիւններ, որոնք կ'առնչուէին առաջին հերթին, անշուշտ, երկրին փոքրամասնութիւններուն: Այդպիսի միջոցորտի մը մէջ սկսաւ լոյս տեսնել թերթը, որ մինչեւ Թուրքիոյ հանրապետութեան հռչակուելը տարբեր առաքելութիւն մը ունէր, այն իմաստով որ, այդ շրջաններուն, արեւմտահայոց վերաբերեալ ճակատագրային բոլոր գործընթացները կը բնորոշուէին եւ կամ աւելի ճիշդ ճակատագիրը կը վճռէին ըսենք, ձեւով մը Պոլսոյ մէջ, Օսմանեան պետական կառոյցներու որոշումներու բովոյժ:

Այդ իմաստով աւելի տարբեր, աւելի ազգային քաղաքական առաքելութիւն մը ունէր թերթը այդ շրջանին, բնականաբար՝ համապատասխան ալ բովանդակութիւն:

Թուրքիոյ հանրապետութեան հռչակուելէն վերջ, երբ որ հայութեան համար նոր պայմաններ ստեղծուեցան, թերթը ստացաւ աւելի համայնքային թերթի մը բնոյթը եւ երկար տասնամեակներ այդ դիմագիծով շարունակեց իր գործունէութիւնը:

Այսօր, նո՛յն առաքելութիւնը եւ դիմագիծը ունի, բայց ես կը կարծեմ որ Հայաստանի վերանկախացումը եւ զուգահեռաբար հաղորդակցութեան դար ըլլալը, սփիւռքի մեր բոլոր թերթերուն յաւելեալ առաքելութիւն մը տուին, որովհետեւ Հայաստանը հայութեան օրակարգի գլխաւոր հասարակաց յայտարարը հանդիսացաւ:

Այդ իմաստով մենք ալ, որպէս Հայաստանի հարեւան երկրի համայնք, շատ ուշադրութեամբ կը հետեւինք Հայաստանի վերաբերեալ իրադարձութիւններուն եւ զուգահեռաբար պէտք է ըսենք, որ Հայաստանը մեզի առիթը ստեղծեց, որպէսզի աւելի սերտանան նաեւ սփիւռք-սփիւռք յարաբերութիւնները: Ու այդ կարելիութիւններուն ընձեռած միջոցառումով մենք հետզհետէ կը սերտացնենք նաեւ սփիւռքի հետ մեր յարաբերութիւնները:

Այսօրուան պայմաններով սփիւռքի մէջ, իր ամենաբազմամարդ համայնքներէն մինչեւ ամենահամեստ համայնքները, հայեր հետզհետէ կը գիտակցին որ սփիւռքի որեւէ գաղութ առանձին աւելի չի կրնար գոյատեւել, սփիւռքը պէտք ունի ինչպէս հայրենիքէն, այնպէս ալ իրարմէ սնուելու: Եւ չըջանառութիւն մը կը նախատեսէ այդ բանը եւ այդ առաւելաբար անշուշտ կ'ըլլայ մամուլով, որովհետեւ եթէ հաղորդակցութեան, տեղեկատուութեան փոխանակում չըլլայ, արդէն միասնականութեան գաղափարը ձեւաւորել դժուար է:

Այս բոլորին մէջ «Ժամանակ»ը կը պատկերացնէ իր գործունէութիւնը: Այսօր, անշուշտ, թերթը իր 100-ամեակին կը մօտենայ քանի մը ամիս վերջը փաստօրէն: Դար մը առաջուան նման, այսինքն արեւմտահայ մտաւորականութեան սերունդի առաջատար դէմքերու նման դէմքեր մեր խմբագրական կազմին մէջ չեն այսօր: Աւելի համեստ, շատ աւելի համեստ պայմաններ կան, բայց մենք, յամենայն դէպս, պատասխանատուութեան զգացում մը կը կրենք որ այդ մարդոց արժանաւոր ժառանգորդները, յաջորդները ըլլանք: Եւ ամենէն կարեւորը՝ կարենանք այսօրուան պայմաններով վերարթնութեան շրջան մը ապահովել, որպէսզի Պոլսոյ պարագային, այս Պոլիս ըսուած ատեն բոլորին միտքին մէջ եզոզ այդ խորհուրդին մէջ պարփակուած այդ զգայնութիւնները, այդ արժէքային համակարգը, մենք կարողանանք բաժնել աւելի հայ աշխարհին հետ, բաժնել աւելի Հայաստանի հետ յարաբերութիւններու ուղղութեամբ եւ աշխարհի մէջ այս գաղութին ունեցած ուրոյն տեղը կարենանք շեշտադրել, արտայայտել մեր մամուլին միջոցով:

Հ.- Անշուշտ հայախօսութիւնը, արտասահմանի ալ գաղութներու նման, Պոլսոյ մէջ ալ կը տեսնեմ: Կարծէք ըլլայ բնականոն ընթացքը ընդհանրապէս

որեւէ հաւաքականութեան մը սփիւռքի պարագային: Կրցած էք 100 տարի շարունակաբար երաշխաւորել թերթին հրատարակութիւնը: Ինչպէ՞ս կը նախատեսէք այժմ անոր շարունակականութիւնը:

Պ.- Հայախօսութեան պարագան այսօր մենք պէտք է ընկալենք ըստ հետեւեալին: Անշուշտ բոլորովին տարբեր աշխարհի մը մէջ կ'ապրինք. նախ պէտք է ինքնաքննադատաբար նշենք որ այսօր հայերէն սորվելու պատրաստակամութիւն, կամ հայերէնով հաղորդակցելու տրամադրութիւն ունեցող մարդոց մենք ի՞նչ կարեւոր բան ունինք հրամցնելիք: Մենք պէտք է ընդունինք այսօր հայախօս մարդոց սովը նոր սերունդի մէջ, միեւնոյն ժամանակ ընդունինք որ մեր հայերէն սորվեցնելու կառոյցները բաւական ժամանակավրէժ են:

Խօսքը, այստեղ, բնականաբար շատ լոգունգային ձեւ մը ստացած հայ վարժարանի գործունէութիւնը քննադատելու եւ կամ այդ քննադատութիւնները ձեւով մը կացինահարութեան հասցնելու մասին չէ: Աշխարհի վրայ առարկայական գիտութեան մը վերածուած երեւոյթ է, որ նոյնիսկ հասուն մարդիկ կրնան օտար լեզուներ սորվիլ: Այսինքն, կրնայ 60 տարեկան իտալացի մը այսօրուան գիտութեան մեթոտներով չինարէն սորվիլ, հետեւաբար, մեզի համար երբեք չբմեղանք չէ որ Ամերիկայի կամ Եւրոպայի մէջ ապրող 18 տարեկան հայ երիտասարդ մը հայերէն չի գիտեր եւ չի սորվիր: Մենք հարցը նախ եւ առաջ պիտի դնենք սկզբունքային տեսակէտէ անշուշտ, մարդոց մօտ մայրենի լեզուն սորվելու հետաքրքրութիւնը եւ այդ զգայնութիւնը պէտք է քաջալերել, որպէսզի մարդիկ կարիքը զգան իրենց լեզուով հաղորդակցելու:

Մեր գաղութները եթէ կը պահպանեն իրենց հայկական դիմագիծը, անիկա հայախօս զանգուածին պատճառով է. ատիկա թթիւմորն է մեր գաղութներուն, հայկական ինքնութիւնը եւ դիմագիծը պայմանաւորելու իմաստով: Այսինքն, մենք ունինք, այսպէս կոչուած, այլասերած հատուած մը մեր ժողովուրդին մէջ, բայց գաղութներուն մէջ միշտ կան որոշ քանակութեամբ մարդիկ, որոնք կը կազմեն կշիռ մը հաւաքականութեան մէջ, որ կ'օգտուի Հայ Առաքելական Եկեղեցւոյ հայերէն պաշտամունքի կարելիութիւններէն, կ'օգտուի հայ մամուլի ծառայութիւններէն, հայկական ընկերային զանազան կազմակերպութիւններու մատուցած յայտագիրներէն եւ այս բոլորին մէջ կ'օգտուի նաեւ հայ դպրոցէն:

Հիմա, մեր պարագային, ահազանգային կացութիւնը կը խորանայ անոր համար, որ այլեւս այդ թթիւմորը կազմող զանգուածն է որ սկսած է վնասուիլ: Այսինքն, այսպէս կոչուած, եթէ նմանութիւնը տեղին է, մեր միջնաբերդին հասած է վտանգը: Մէկ բանը ցաւալի է



անշուշտ, որ մենք, դժբախտաբար, հաւաքաբար որոշ տկարութիւն մը ունինք արդիւնաւէտ կազմակերպչական աշխատանքի մէջ մտնելու եւ գործնականութիւն ապահովելու ուղղութեամբ: Այս ուղիին մէջ ալ, քիչ մը կը թերանանք, այսինքն քիչ մը ժամանակ կը կորսնցնենք, մեր ուժերը միացնելու առումով որոշ խնդիրներ ունինք:

Ես, չեմ գիտեր ոմանք կը բաժնեն թէ ոչ, ունիմ իմ մօտեցումս: Մենք այսօր պէտք է սփիւռքի մեր ժողովուրդին ապագան ապահովելու համար կազմակերպուինք այնպէս մը, որ մեր նոր սերունդը նոյն միջավայրին մէջ միջազգային մակարդակով կրթութիւն ստանալու հնարաւորութիւն ունենայ: Այսինքն, ըսենք Հայաստանի թէ սփիւռքի կարգ մը կեդրոններու մէջ ըլլան 4-5 դպրոցներ, ուրկէ աշխարհի զանազան տեղերէ գացած երիտասարդներ միջազգային կարեւոր լեզուները սորվելու կողքին, սորվին նաեւ կատարեալ մակարդակով հայերէն: Դառնան արդիական մարդիկ, որոնք ժամանակակից աշխարհի մէջ առանց բարդոյթներու գործելու հնարաւորութիւն պիտի ունենան եւ, միեւնոյն ժամանակ, ամբողջ աշխարհով մէկ ցրուած ժողովուրդի մը զաւակները ըլլալու հանգամանքը առաւելութեան մը վերածելով կարենան գործել: Եթէ կարենանք դպրոցի մը ծրագրումին սկսելով այս խնդիրը ապահովել հինգ տարի վերջ, նախանձելի կրթական կառոյց մը կ'ունենանք: Ու եթէ քսան տարի վերջ այդ կրթարանին պտուղները քաղեն մեր այսօրուան հաստատութիւնները, ներառեալ մեր մամուլը, կ'ունենանք քսան տարուան մը շունչը եւ անկէ վերջ ալ շատ առողջ սերնդափոխութիւնով մը իրենց շատ աւելի երկարաժամկէտ ապագան երաշխաւորուած կ'ըլլայ: Բայց ես կը կրկնեմ որ նման կառոյցներու հիմքը այժմէն պէտք է դնենք ու այժմէն այդ բոլորը նախապատ-րաստենք: Այդ պարագային մամուլն ալ արդէն շատ աւելի հանգիստ ու ինքնավստահ երթ մը կ'ունենայ:

Հ.- Գիտեմ որ «Ժամանակ» օրաթերթը միշտ եղած է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կողքին եւ վստահ եմ որ դուք եւս պիտի շարունակէք այդ ընել:

Կը լսենք սակայն որ Պոլսոյ Պատրիարք Սրբազան Հայրը կարգ մը պահերու արտայայտուած կամ գործած է Մայր Աթոռի գահակալին դէմ: Ինչպէ՞ս կը տեսնէք այս փոխ յարաբերութիւններու լուծումը:

Պ.- Հայ Առաքելական Եկեղեցւոյ նուիրապետական այս գոյգ աթոռներուն մասին է խօսքը: Մենք որպէս մամուլ բնականաբար խօսելով լուծումներու մասին, կրնանք քիչ մը չափէ վեր ընկալուիլ, բայց ես մէկ բան կ'ուզեմ ըսել. ճիշդ է որ մեր թերթին մէջ ալ ամենէն բացայայտ կերպով խնդիրներ երեւան կու գան Մայր Աթոռի եւ Պոլսոյ Պատրիարքութեան միջեւ, սակայն վերջին տարիներուն Իսթանպուլի մէջ կայ շատ աւանդապահ համայնք մը, որ սփիւռքի ամէն կողմ իր եկեղեցասիրութեամբը ծանօթ է: Գիտէք որ Պոլիսէն գաղթած մարդիկ սփիւռքի զանազան անկիւններու մէջ շատ աւանդապահ մարդիկ, Հայ Առաքելական Եկեղեցւոյ կեանքին, գործունէութեան նուիրուած մարդիկ են եւ մեզի համար շատ մեծ պատիւ է, որ այդ ազգայինները առհասարակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կողքին կանգնող մարդիկ են: Պոլսահայ մարդու խառնուածքին, աւանդութեան եւ ինքնագիտակցութեան տարրերէն մէկն է Էջմիածնի հանդէպ հաւատարմութիւնը: Հետեւաբար, միա՛կ բանը որ մենք պիտի ըսենք այն է, որ պոլսահայ մարդը երբեք չի կրնար հանդուրժել, չի կրնար հաշտուիլ այն գաղափարին հետ, որ Մայր Աթոռին հետ Պոլսոյ Աթոռը տարակարծութեան մէջ գտնուի:

Մեր ժողովուրդը մատնել այսպիսի դիրքի մը, ես պիտի ըսեմ, ճիշդ պիտի չըլլար: Մենք այս սկզբունքներէն առաջնորդուելով կ'ընենք մեր դատողութիւնը, ինչ կը վերաբերի Մայր Աթոռի հետ կապուած յարաբերութիւններուն:

Ես կը կարծեմ որ իւրաքանչիւր պատասխանատու հայու գլխաւոր մտահոգութիւններէն մէկը պիտի ըլլայ մեր հաւաքական կեանքէն ներս Մայր Աթոռի գերակայութիւնը վէճի նիւթ չդարձնել: Եթէ գերակայութիւնը հարցականի տակ դնենք, կը սկսինք կտրել մեր նստած ճիւղը, մեր արժեքային համակարգը մեր ձեռքով կացինահարելով: Ի՞նչ շահ պիտի բերէ մեզի բացի պղտորութենէ, անտեղի ալեկոծումներէ:

Պոլիսը այնպիսի անկիւն մըն է, որ նման ալեկոծումներէ գերծմնացած գաղութ մըն է: Ու հիմա երբ սփիւռքի մէջ որոշ մեղմացման շրջան մը կը բոլորենք, եթէ նոյնիսկ այդ ձեւական ըլլայ, մեզի համար ցաւալի է, որ այս անգամ Պոլիսէն այսպիսի վէճեր կը յառաջանան, բայց վերջին հաշուով պիտի ըսենք որ մենք մեր եկեղեցական հայրերուն աջալրջութեան մի՛շտ պիտի վստահինք եւ յոռետես պիտի չըլլանք այս հարցով:

Հ.- «Ակօս»ը իրապատուկ հրատարակություն մըն է մեր մամուլի պատմութեան մէջ: Չեմ ուզեր անդրադառնալ Տինքի սպանութեան քաղաքական երեսին, սակայն եւ այնպէս «Ակօս»ը ի՞նչ բացասական եւ դրական երեսներ ունեցաւ պոլսահայ կեանքին մէջ:

Պ.- Նախ հետեւեալը ըսեմ. եթէ նոյնիսկ մահափորձի քաղաքական երեսակներուն չանդրադառնանք «Ակօս»ի մասին խօսելու ատեն, մեզի համար կարծէք ըլլար բարոյական պարտք ողբացեալ Հրանդ Տինքի վաստակին նկատմամբ ունենալու յարգանք, որովհետեւ իսկապէս ան լա՛ւ ընկեր մըն էր, լա՛ւ պաշտօնակից մըն էր: Լաւ երբ կ'ըսենք, այսինքն՝ մարդկայնօրէն իր ազնուութեամբ: Որպէս մարդ անհատ՝ ունինք թերութիւններ. Հրանդը նկարագիրով իսկապէս նուիրուած անձնաւորութիւն մըն էր: Պէտք է խոստովանիլ որ տասը տարուան իր գործունէութեամբ, իր թերթով, իսթանպուլահայ մամուլին բերաւ նոր շունչ:

Երբ որ մենք հաշուեկշիռ մը պիտի ընենք «Ակօս» թերթի գործունէութեան մասին, անշուշտ իւրաքանչիւր մամուլի օրկան կրնայ ունենալ իր դրական թէ բացասական երեսակները: Անշուշտ ատիկա կախեալ է նաեւ այդ հաշուեկշիռը ընող մարդուն հայեացքներէն եւ կամ ընկալումներէն: Հետեւաբար առանց չափէն աւելի ենթակայական մօտեցումներու մէջ խորանալու, մենք մէկ բան անվարան կրնանք ըսել այդ հաշուեկշիռի պարագային. Հրանդ Տինքի ղեկավարած թերթը տասը տարիներու ժամանակահատուածի կտրուածքով, նժարի վրայ դրական կողմով ծանր կը կշռէ:

Հրանդը պատրաստակամ էր ինչպէս թուրքիոյ, այնպէս ալ ամբողջ մեր հայ սփիւռքի խնդիրներով զբաղելու, թուրք-հայ յարաբերութիւններով, այս տարածաշրջանին մէջ Հայաստանի ունեցած խնդիրներով, հեղինակներով, որոնք նաեւ մեր առաջնահերթութիւնները կը կազմեն,



Տիկին Նատիա Գոշունեան:

բայց իսթանպուլահայ համայնքի ներկայ դիմագիծով «Ակօս» թերթը լեզուական առաւելութիւն մը ունեցաւ, որովհետեւ իսկապէս մեր մօտ այսօր հայերու ոչ-հայախօս զանգուածը, ըսենք, որ որոշ համեմատութեան մը հասած է եւ մեր մամուլին մինչեւ այսօր միայն հայերէն ըլլալը ոչ հայախօս զանգուածը համայնքային կեանքէն քիչ մը հեռու պահած է: Ես հարիւր տոկոս չեմ ձայնակցիր այս մօտեցման:

Հրանդը փորձեց լաւ թարգման մը հանդիսանալ այդ զանգուածի զգայնութիւններուն եւ մենք շա՛տ ուրախ ենք որ մէկ բան անգամ մը եւս գործնականօրէն հաստատուեցաւ. մեր գաղութին մէջ ոչ-հայախօս զանգուածն ալ, իրականութեան մէջ, այս գաղութի կառույցներով եւ ընդհանրապէս այս համայնքի ճակատագիրով իրապէս հետաքրքրուած, մտահոգուած եւ տէր կանգնելու պատրաստակամ է:

Այս բոլոր երեւոյթները շեշտադրելու, մարդոց յիշողութեան մէջ թարմացնելու իմաստով, ես կը նկատեմ որ Հրանդը եւ իր անձին մէջ «Ակօս» շաբաթաթերթը դրական գործունէութիւն մը ունեցան: Կը մաղթեմ որ հիմա ալ, ինչպէս թերթին մէջ ալ գրեցի, Հրանդին այսպիսի ողբերգական բացակայութենէն վերջ, թերթը այս ցնցումը յաղթահարէ եւ իր առաքելութիւնը կատարելագործելով շարունակէ:

Հ.- Ներկայիս Թուրքիոյ դէպի Եւրոպական Միութիւն ուղղուելու ճամբուն վրայ, արդեօք տեղական քաղաքականութեան մէջ մտայնութիւններու փոփոխութիւն մը կը տեսնէ՞ք, առ հասարակ, մասնաւոր թրքական պետական շրջանակէն դէպի փոքրամասնութիւններ եւ այս պարագային դէպի հայկական մեր հարցերը:

Պ.- Հետեւեալը ըսեմ: Թուրքիոյ մէջ, վերջին չորսններուն, Եւրոմի-
նութեան գործունէութիւններով պայամանաւորուած էական փոփոխու-
թիւններ եղան: Եթէ նոյնիսկ հարիւր տոկոս չփոխուեցաւ, մեզի համար շատ կարեւոր էր որ այսպիսի պահպանողական հասարակութեան մը մէջ, սկսան բազմաթիւ թապուներ հարցաքննուիլ: Այդ հարցաքննուող թապուներու կարգին էր անշուշտ հայկական հարցը:

Հիմա, մենք մեր առջեւ հետեւեալ համայնապատկերը ունինք. Թուրքիա այսօր կ'ընթանայ դէպի Եւրոպական Միութիւն: Թուրքիան ինքն ալ գիտէ որ ատիկա շա՛տ երկար գործընթաց մը պիտի ըլլայ, ինչպէս որ Եւրոմիութեան ղեկավարները այսօր կը նախատեսեն տասնամեակներով արտասանուած պայմանաժամ:

Մէկ բան՝ փոքրամասնութիւններու տեսակէտէն ուշադրաւ այս ամբողջ դրական համայնապատկերին մէջ: Բարեփոխումները այնպիսի արագութեամբ մը կատարուեցան եւ Եւրոմիութեան գացող ճանապար-

հին դիմադրող հոսանքները այնպիսի conjuncture մը յառաջացուցին, որ հասարակութեան կարեւոր մէկ մասը սկսաւ այդ բարեփոխումներու գործընթացին մէջ երկրի փոքրամասնութիւններուն համար առնուած քայլերը եւ կամ կատարուած բարելաւումները ընկալել որպէս օտարներուն համար կատարուած զիջումներ: Այս հանգամանքը մեզի համար քիչ մը տհաճ է, որովհետեւ իրականութեան մէջ այդ ամբողջ բարեփոխուած բաները փոքրամասնութիւններու պարագային ուրիշ որոնում մը չեն, եթէ ոչ այս երկրին մէջ փոքրամասնութիւններու համահաւասար իրաւունքներով, պարտաւորութիւններով եւ պատաս- խանատուութիւններով քաղաքացիներ դառնալը:

Բայց, մէկ բան կայ: Մինչեւ այսօր երբ այս ճանապարհը կտրուեցաւ, իր բոլոր խնդիրներով ու դժուարութիւններով հարթեց իր ճանապարհը եւ մեզի կը մնայ լաւատես ըլլալ որ այլ խնդիրներ լուծելով պիտի չարունակենք ընթանալ, որովհետեւ այնպիսի վիճակ մըն է, որ արդէն յոռետեսութիւնը մեզի բան պիտի չբերէ: Լաւատեսութիւնը գլխաւոր մղիչ ուժն է այս ճամբուն:

Հ.- Ձեր թերթին ծնունդին 100-ամեակն է գալ տարի: Այս առթիւ տեղի պիտի ունենա՞ն տօնակատարութիւններ, Պոլիս կամ այլուր, ուր նախկին պոլսահայեր կան:

Պ.- Մենք կը ծրագրենք մեր քաղաքին մէջ որոշ տօնակատարու- թիւններ ընել: Կը ծրագրենք ընել ոչ միայն այնտեղ ուր պոլսահայեր կան, հայ մամուլի օրկանները ուր ալ հրատարակուին մեր բոլորին կը պատկանին. հետեւաբար, ուր որ այսպիսի յոբելեան մը նշելու պատ- րաստակամութիւնը կայ, մենք ալ պատրաստ ենք փոխադարձելու եւ այդտեղի ազգակիցներուն հետ մեր յոբելեանի ուրախութիւնը բաժնելու:



**ՍԻԼՎԱ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
ՏՆՕՐԷՆՈՒՅԻ Ազգային Կեդրոնական
Վարժարանի**



Հ.- Վստահ եմ որ հպարտությամբ նստած էք տնօրէնութեան այս աթոռին, որովհետեւ այս վարժարանին ծառայած եմ այլ արժէքաւոր ու համբաւաւոր ուսուցչապետեր: Ինչպէ՞ս պատահեցաւ որ ներկայացաք այս պաշտօնին:

Պ.- 26 տարիներ առաջ ես սկսայ այս պաշտօնին: Համալսարանէն դեռ նոր չըջանաւարտ, 28 տարեկան էի եւ քաջութիւնը ունեցայ ընդունելու: Այդ տարիները Թուրքիոյ համար դժուար չըջաններ էին... բաւականին երկա՛ր չըջան մը եւ դժբախտաբար, տնօրէն, ուսուցիչ գտնելու ալ դժուարութիւնները ունէինք: Այսօր այդպէս չէ... աւելի դիւրին է: Բայց, դիւրին չի նշանակեր որ որակաւոր են: Աւելի շատ փափաքողներ կան թերեւս ուսուցչական ասպարէզի համար:

Ինծի առաջարկուեցաւ այս պաշտօնը: Բաւական մտածեցի, որովհետեւ իմ նպատակս ուսուցչութիւնը երկրորդական գործ ըլլալով ընել էր. իմ ճիւղս տարրաբանութիւն է: Տարրաբանութեան մէջ խորանալ կ'ուզէի, նոյնիսկ Մագիստրոսի տիտղոսի քննութիւններուն պիտի սկսէի: Մտածեցի, չաբա՞թ մը իրենցմէ հրաման առի...: Եղբայրս Կեդրոնականէն չըջանաւարտ էր եւ դժբախտաբար երիտասարդ տարիքին զոհ գացած է զինուորական ծառայութեան, արկածամահ եղած է ու անոր յիշատակին համար ընդունեցի: Այս ալ կարեւոր ազդակ մըն է: Ուրեմն 26-րդ տարիս է այս պաշտօնին մէջ:

Հոս ե՛ւ տնօրէն եմ, ե՛ւ տարրաբանութեան ուսուցիչ: Սակայն տարրաբանութեան ուսուցիչ շատ կար, հայերէնը կը թերանար վարժարանին մէջ, ինչպէս ամբողջ համայնքին մէջ. ես սկսայ հայերէն լեզուի ուսուցման վրայ ծանրանալ, որովհետեւ այդ միջոցին քիչ մը գրականութեամբ ալ կը զբաղէի... Մնձուրիի թարգմանութիւններ եւայլն: Անշուշտ սիրողական ըլլալով էր գրականութիւնը, բայց երբ տեսայ որ իմ շուրջս եղող հայերէն լեզուի ուսուցիչները ինձմէ աւելի լաւ չեն, դժբախտաբար,- բնաւ միտքէս չէր անցներ որ հայերէնի ուսուցիչ ալ պիտի ըլլամ,- սկսայ հայերէն լեզու դասաւանդել եւ հիմա առաւելաբար հայերէնի ուսուցիչներու հետ կը գործակցիմ:

Հ.- Աշակերտութեան թիւը կ'ուզենք իմանալ եւ քանի՞ դասարաններ կան Կեդրոնականէն ներս:

Պ.- Միջնակարգ ու լիսէ ըլլալով բացուած է Կեդրոնականը 1886-ին: Շրջանի Պատրիարքին՝ Ներսէս Վարժապետեանի նախաձեռնութեամբ, որովհետեւ մինչեւ այդ ժամանակները Պոլիսը ազգային վարժարաններ չէր ունեցած: Մասնաւոր վարժարաններ եղած են, ինչպէս՝ Պէրպէրեանը, ուր գացած են առաւելաբար դրամ ունեցող աշակերտները: Այսինքն, ազգի հասարակ, խոնարհ խաւերէն երկրորդական վարժարան ուսանող չատ չէ եղած:

Կեդրոնականը բացուած է գաւառէն եկող տղոց համար ու նաեւ՝



Կեդրոնականի մուտքը եւ ցուցատախտակը՝ Կեդրոնական Հայկական Լիսէ, 1886:

ուսուցիչ ու մտաւորական հասցնելու նպատակով մեր ազգին: Կեդրոնականէն չատ մը ուսուցիչներ գաւառ գացած են. ասոնցմէ է նաեւ Երուսանը (Երուանդ Սրմաքէշխանլեանը): Կեդրոնականը կարելոր դեր մը կատարած է այս ուղղութեամբ:

1992-ին մենք երկսեռ ըրինք վարժարանը: Անկէ առաջ, կարճ միջոց մը, էսայեանի Լիսէի բաժնին փակումովը, տասը տարուան երկսեռ պատմութիւն մը ունի, սակայն բուն՝ հիմնականին մէջ, մանչերու վարժարան է եղած:

2000 թուականին ալ, որովհետեւ Թուրքիոյ մէջ պարտադիր ուսումը ութը տարիի բարձրացաւ, մենք կա՛մ 5 տարի եւս պիտի բանայինք

նախակրթարան բաժին մը, եւ կա՛մ միջնակարգը պիտի գոցէինք: Համայնքը արդէն կը դժուարանար մեր դպրոցները բաց պահելու, այնպէս որ մենք միջնակարգը գոցեցինք եւ մեր ուժերը կեդրոնացուցինք լիսէին վրայ, աւելի որակաւոր մակարդակի մը հասցնելու: Լիսէն երկրորդական վարժարան է մեր հասկացողութեամբ, այսինքն՝ հոս չորս տարի ուսում կ'առնեն տղաքը եւ այստեղէն ուղղակի համալսարանի կը պատրաստուին:

Այսօր ունինք 200 աշակերտ: Համայնքին ամենէն բազմաճաշ վարժարանն է:

Հ.- Ու... անշուշտ որակաւոր:

Պ.- Այդպէս է...: Բայց ատիկա ուրիշներ պէտք է ըսեն: Այս յարաբերական է: Եղածներով պիտի չափենք: Մեր պարագային, Պոլսոյ հինգ լիսէներով պիտի չափենք:

Առանց քննութեան աշակերտ կ'ընդունինք: Դժբախտաբար Թուրքիոյ մէջ յաջողագոյն աշակերտները մարմաջ մը ունին օտար վարժարան կամ Անատոլ Լիսէ երթալու: Այդ պայմաններու տակ քիչ մը մաղին տակը մնացողները կու գան եւ անոնցմէ բան մը ընելու կը ջանանք: Բայց ուսուցչական կազմը նուիրումով, լաւ կ'աշխատի:

Հ.- Ուսուցչական կազմը քանի՞ հոգիէ կը բաղկանայ:

Պ.- 38 հոգի ենք. ասոնց մէջ ունինք թուրք ուսուցիչներ: Մշակոյթի դասերուն համար պետութիւնը՝ կրթական նախարարութիւնը կը ղրկէ այս թուրք ուսուցիչները:

Նաեւ կը ղրկէ փոխ տնօրէն մը: Ուրեմն հինգ հոգի ունինք այսպէս, մնացեալները մեր պայմանագիրներով կ'աշխատին: Ըսեմ նաեւ թէ մեր փափաքով քանի մը թուրքեր ալ ունինք:

Հ.- Հետաքրքրուած եմ Կեդրոնականի հայագիտական նիւթերու հետ կապուած դասընթացքներով: Ձեր գնահատումով ի՞նչ է մակարդակը այդ դասերուն եւ ուսանողութեան հետաքրքրութիւնը դէպի այդ առարկաները:

Պ.- Մենք թրքերէնի դասերուն, գրականութեան դասերուն համարժէք իրաւունք ունինք նոյն դասաժամով հայերէն դասաւանդել: Ըսենք թէ շաբաթը հինգ ժամ թուրքերէն կը տրուի, հինգ ժամ ալ հայերէն: Առաւել՝ կրօնքի դասը միշտ ունինք: Այնպէս որ շաբաթը վեց ժամ հայագիտական դասեր կը տրուին:

Ատկէ դուրս ալ, բացի թուրք մշակոյթի դասերէն, որոնք են թրքական գրականութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն, ընկերաբանու-



Կեդրոնականի պատմությունը ներկայացնող նկարածակ պատ: Վահագն Թեքեան
պահ մը վարած էր վարժարանին տնօրինությունը:

Թիւն, մնացեալ դասերը մենք հայերէնով կրնանք տալ. Թուաբա-
նուլթիւն, գիտութիւն, մարզանք, գծագրութիւն կարելի է հայերէն
լեզուով դասաւանդել: Մենք կը ջանանք հայերէնով դասաւանդել: Բայց
չեմ կրնար համարձակօրէն ըսել որ հարիւր տոկոս դասաւանդել,
որովհետեւ ո՛չ ուսուցիչները այդ հայերէն լեզուին տիրապետած են, ո՛չ
ալ աշակերտները հակամէտ են այդ հայերէնով ըմբռնելու: Նոյնիսկ
ծնողներէ գանգատ կը ստանանք թէ ինչո՞ւ հայերէնով կը դասաւանդէք,
թէ այս տղաքը համալսարանի պիտի պատրաստուին: Բայց մենք, նորէն
ալ, կը ջանանք թիավարել հոսանքն ի վեր:

Հ.- Ինչպէս ամէն կրթական հաստատութիւն սփիւռքի տարածքին, վստահ
եմ որ ձեր վարժարանն ալ պիտոճէ մը կը պահանջէ: Ինչպէ՞ս կը հաւասա-
րակշռէք պիտոճէն: Պատրիարքարա՞նը կը հոգայ բացը:

Պ.- Ոչ, դպրոցը կը պատկանի Ղալաթիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ
եկեղեցւոյ, բայց դժբախտաբար ամէն տարի կը դժուարանայ բացը
գոցել: Համայնքին հարցն է ասիկա: Կեդրոնականն ալ չքաւոր վար-
ժարաններէն մին է, ըսենք, նիւթապէս:

Ուրեմն, մեր աշակերտներէն հազիւ մեր պիւտճէին կէսը կրնանք
գանձել: Մեր պիւտճէն մէկ թրիլիոնի հասած է: Ասոր կէսը աշակերտ-
ներէն կ'առնենք, բացին մէկ մասը եկեղեցւոյ հոգաբարձութիւնը իր

ունեցած միջոցներով, վարձու տուած կալուածներով, խանութներով կը հոգայ, իսկ մնացածն ալ մատաղօրհնութիւն կ'ընենք: Ամէն շաբաթ ձմեռը հոս սիրոյ սեղաններ կը գոյանան եւ հոն ժողովուրդին կը ներկայանանք: Այսինքն ծայրը-ծայրին պիտձէն կը հաւասարակշռենք:

Հ.- Քսանվեց տարուայ տնօրէնութիւն էք: Երջանաւարտներուն մէկ մասը վստահ եմ որ արտասահման գաղթած է, մնացեալը Պոլիս է: Արդեօք անոնք հայկական կեանքով, հայ մշակոյթով ու կրթութեամբ հետաքրքրուած են, թէ՞ հեռու են հայկական իրականութենէն, առանձնացած կեանք մը կ'ապրին:

Պ.- *Կը տեսնեմ որ կեդրոնականցիները համայնքէն ներս ազգային պատասխանատու դիրքերու վրայ են: Այո՛, ծառայութեան մէջ են: Հաւանաբար երիտասարդները հետաքրքրուած են իրենց վարժարանով: Ըսեմ թէ ունի՛ն իրենց ազգային ոգին:*

Հ.- Ուրեմն դպրոցը կ'արդարացնէ հայապահպանական իր գոյութիւնը:

Պ.- *Այո՛: Բայց այս ալ անշուշտ յարաբերական է: Գիտէ՞ք սփռուքի մէջ հայութիւնը պահպանելը դիւրին չէ: Ինքնութեան կորուստը կայ, ամէն կողմ կայ, հոս ալ կայ: Բայց նորէն բազմաթիւք ելլէ՛ դրական կը տեսնեմ պատկերը:*

Հ.- Կրօնքի պատմութիւն ըսելով, կը դասաւանդէ՞ք քրիստոնէական հաւատքի կողքին մեր եկեղեցւոյ պատմութիւնը, որ ձեւով մը մեր ժողովուրդին պատմութիւնը նկատած ենք: Զուգահեռ կ'իմանա՞նք մեր անցեալը:

Պ.- *Այո: Անշուշտ: Մեր մշակոյթը պահպանողը մեր եկեղեցականները եղած են: Հասկնալի է:*

Հ.- Գրական շնորհներ ունեցող տղաք կրցա՞ք հասցնել այս 26 տարիներուն: Գոնէ 2-3 նոր ուժեր մեր գրական անդաստանին համար:

Պ.- *Դժուար հարցում է: Երիտասարդներուն մէջ, այսպէս կոչուած, «գրող-բրող» մէկը հասաւ եթէ ըսեմ, շատ ճիշդ պիտի չըլլայ...: Բայց հետաքրքրուողներ կան: Անուն մը ունենալ, միւս կողմէ, արդէն ժամանակի կը կարօտի: Հիմա այս երիտասարդները 38-40 տարեկան են, ըսենք, անուն մը չեն գրական աշխարհի մէջ, բայց գրիչ շարժող ներկայութիւն մը կայ: Ծանօթ անուն մը չկայ դժբախտաբար:*

Հ.- Կեդրոնականէն շրջանաւարտ աղջիկնե՞րը ընդհանրապէս աւելի հետաքրքրուած են հայ կեանքով, թէ՞ մանչերը: Հայ մայրն է որ հայ ընտանիքը կը պահէ մեր մօտ:

Պ.- Այո՛, այո: Հոս ալ նո՛յնն է: Կիներն են պահողները: Կանանց Միջազգային Օրուան առթիւ «Ակօս»ի մէջ գրութիւն մը գրած էի այս նիւթին մասին: Դժբախտաբար այրերը հեռու են: Օրինակ, վարժարանէն ներս ուսուցիչները հարիւրէն 95 համեմատութեամբ կիներն են: Բայց հարիւր տարի առաջ այդպէս չէր: Կարեւոր հարց մը կայ ուրեմն, կիներու ազատագրման հարց է միայն, թէ ոչ հետաքրքրութիւնն է: Մանաւանդ այնպիսի ասպարէզ մըն է, որ ոմանց համար շատ ալ կարեւոր չէ, դրամն ալ քիչ է...: «Մանչերը այսպէս բաներով պէտք չէ զբաղին, անոնք դրամ պէտք է շահին, թող կիները երկրորդական բաներով զբաղին...»: Այս է մտայնութիւնը, դժբախտաբար:



Կեդրոնականը՝ հայ դպրութեան դարբնոց:

Հ.- Իսկ ուսանողներու թիւի համեմատութիւնը:

Պ.- Աղջիկները օր ըստ օրէ կ'աւելնան: Ուրիշ վարժարաններու մէջ գրեթէ երկու երրորդ համեմատութեամբ աղջիկներ են:

Հ.- Ի՞նչ գիրքեր կը գործածէք հայերէն լեզուի ուսուցման համար:

Պ.- Հի՛ն գիրքեր են: Հին գիրքերէ աւելի ֆոթոքոփիներով, թերթերէ կտրոններով կը դասաւանդենք: Ժամանակավրէպ նիւթերով չենք ուզեր ուսանողները յոգնեցնել:

Հ.- Գրականութեան դասապահերուն պոլսահայ գրականութեան վրայ կը ծանրանա՞ք:

Պ.- Այո. կը սկսինք մատենագիրներէն եւ կը հասնինք մեր օրերը:

Հ.- Պոլսահայ ուսանողները ունի՞ն հետաքրքրութիւն Հայաստանի նկատմամբ:

Պ.- Ունին, անշուշտ: Հայաստանի անկախացումէն յետոյ, աւելցան նաեւ յարաբերութիւնները: Մենք եւս անոնց հետ աւելի շատ շփուեցանք, մտաւորականներ այցելեցին եւ այլն: Իրենց ծնողներով Հայաստան այցելողներ եղան: Ճանչցան Հայաստանը:

Հ.- Բացի դասապահերէն, ատենամարզանքի կամ արտադպրոցական պահեր ունի՞ք:

Պ.- Այո, արտադասարանային աշխատանքները, նախ ընդհանուր են, անշուշտ, եւ մեզի համար շատ կարեւոր են, նոյնիսկ երբեմն դասապահերէ աւելի, որպէսզի ուսանողը դառնայ աւելի ընկերային: Մենք ունինք մասնաւոր ծրագիր մը այդ ուղղութեամբ. առաջին դասարանէն սկսեալ տղոց կը ծանօթացնենք մեր համայնքին բոլոր հաստատութիւնները. օրինակ, Վոսիորի արեւելեան եւ արեւմտեան ակերու եկեղեցիներու այց, ապա՝ պատրիարքարան: Ս. Փրկիչ հիւանդանոց ամէն շաբաթ այցելութիւն մը կ'ըլլայ խումբ-խումբ աշակերտներով: Հոն ծերերուն օգտակար ըլլալու կը ջանան:

Ունինք թատրոն, եւայլն: Բայց չենք կրնար ըսել որ համայնքին մէջ շատ լաւ, լիովին կազմակերպուած են: Որովհետեւ սանուց միութիւնները շատ լաւ դժբախտաբար չեն գործեր այլեւս: 1947-ին բացուիլ սկսած են սանուց միութիւնները, բայց գրեթէ իրենց առաքելութիւնը լրացուցած են: Այլեւս մշակոյթով չեն հետաքրքրուիր: Աւելի ընկերային գործունէութիւն է, ճաշկերոյթներ կը կազմակերպեն:

Հ.- Անձնական հարցում մը ունիմ. լսեցի թէ սիրոյ գործ է եւ կը հետաքրքրուիք գրականութեամբ: Զեր գրական շնորհներն ու տաղանդը, բացի առօրեայ մամուլին աշխատակցելէ, ուրիշ մնայուն աշխատանքի մը վրայ ծանրացա՞ծ եմ:

Պ.- Գիտէք, հոս բաւականին ծանր պաշտօն մը ունիմ: Ժամանակի հարց է: Հազիւ կարողացայ Մնձուրիի թարգմանութիւնները ընել: Գրեթէ բոլորը աւարտած եմ, հայերէնէն թուրքերէն լեզուի: Ատկէ դուրս «Արաս» հրատարակչութեան մէջ անձայն ամուսնոյս օգտակար կ'ըլլամ, խմբագրական աշխատանքներուն կը բերեմ մասնակցութիւնս...: Յառաջիկային եթէ դպրոցէն հեռանամ, անպայման աւելի լայն մասնակցութիւն մը պիտի բերեմ մեր գրականութեան:

Հ.- Վստահ եմ, որ դեռ երկա՛ր ատեն պիտի շարունակէք Ազգային Կեդրոնական վարժարանէն ներս ձեր պատասխանատւութիւնը:

Պ.- Այլեւս դէպի վայրէջք սկսած եմ... օրինակ մինչեւ 65 տարեկան

կրնամ մնալ, բայց այդ ալ ուշ ժամանակ է: Բայց քանի մը տարի եւս կը խոստանամ մնալ: Կը մտածեմ որ մէկը պէ՛տք է հասնի, տաղանդաւոր ուսուցիչ մը՝ տնօրէնութեան այս պաշտօնին համար: Ինձմէ աւելի լա՛ւը ընէ, որովհետեւ ես այդ դպրոցը ձեռք առած ատենս 65 աշակերտ կար եւ միջնակարգ Լիսէ էր: Այսօր 200 աշակերտ միեւնոյն Լիսէի մէջ ունինք: Ըսեմ որ միջնակարգ Լիսէ եղած ատեննիս մինչեւ 400-ի բարձրացուցած էինք աշակերտութեան թիւը այս պատիկ շէնքին մէջ:

Կեդրոնականը սրբավայր մըն է իսկապէս, մեծ յարգանք ունիմ իրեն անցեալին: Ասիկա պէ՛տք է կանգուն մնայ միշտ:

Հ.- Ձեզմէ առաջ ո՞վ եղած էր տնօրէնը:

Պ.- Պրն. Պերճ Զալըքեանը, գծագրիչ, որ կեդրոնականցի մըն էր: Կ'ապրի: Արժէքաւոր անձնաւորութիւն մը:



ԱՐՓԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Տնօրէնութեան Մերամէթեան Վարժարանի

Հ.- Պոլսահայ կեանքը նկարագրող յօդուածաշարքի մը համար է որ ծրագրած եմ այս այցելութիւնը: Մերամէթեան վարժարանը ինչպէ՞ս սկսած է իր կրթական աշխատանքներուն ձեր տնօրէնութեամբ:

Պ.- 1912-ին հիմնուած է, այսինքն՝ մեր 95-րդ տարին է: Զենոբ Էֆ. Մերամէթեանի նուիրած հողամասին վրայ ու Պոլսոյ պատրիարքարանին նախաձեռնութեամբ, Ֆէրիգիւղի պարտէզին մէջ

շէնքին կառուցման որոշումը առնուած է: Այդ շրջանին, Օսմանեան սուլթանին Ֆէրմանով փայտաշէն վարժարանի մը շինութեան սկսուած է: 1912 թուականին երկսեռ աշակերտութեան դասաւանդութիւնը սկսած է մանկապարտէզի եւ նախակրթարանի բաժիններու մէջ:

Հաստատութեան առաջին հիմնադիրն է Վահան Էֆ. Խոտաւերտեան: 1952-ին յաւելեալ շինութեամբ մը միջնակարգի բաժինը աւելցած է, իսկ 1970-ական թուականներուն բարերարներ Տէր եւ Տիկ. Գէորգ Գարամանուկեաններու շնորհիւ յարկ մը եւս աւելցած է շէնքին վրայ:





Մերամեթոճեան դպրոցաշէնքը:

Ընդառաջելով պետութեան 8 տարուան ծրագրին, վարժարանս 1998-99 տարեշրջանին վերածուած է ութը տարուան նախակրթարանի:

Հ.- Աշակերտութեան թիւը այսօր ի՞նչ կը կազմէ:

Պ.- Ունինք 250 աշակերտ. այսինքն երկու մանկապարտէզ, չորս եւ հինգ տարեկաններու համար եւ առաջինէն մինչեւ 8-րդ դասարան:

Հ.- Ինչպէ՞ս կը կատարուի հայերէնի ուսուցումը այս վարժարանէն ներս:

Պ.- Առաջին երեք դասապահերուն մէջ, պետական օրէնքով, արդէն կու տանք տասը ժամ: Զորրորդ եւ հինգերորդ դասարաններու համար վեցական ժամ, իսկ 6-7-8 դասարաններուն մէջ 5-ական ժամ:

Հ.- Ի՞նչ հայերէն գիրքեր կը գործածէք:

Պ.- Նախապէս ունէինք ուսուցչաց հիմնարկին կողմէ պատրաստուած հայերէն գիրքերը, բայց հիմա անոնք այլեւս ժամանակավրէյ եւ, իսկ նոր գիրքերու պատրաստութիւն մը թէ՛ նիւթական եւ թէ՛ բարոյական շատ մեծ բեռ կը դնէ, այդ պատճառաւ մեր ուսուցիչները Լիբանանէն, Հալէպէն, արտասահմանէն եկած գիրքերէն կ'օգտուին, document-ներ կը պատրաստեն, ընդհանրապէս ֆոթոքոփիով կը բաժնուին:

Այսինքն ուսուցչաց հիմնարկի գիրքերը օժանդակ դեր միայն կը խաղան. աւելի արդիական գիրքերու պէտք ունինք:

Հ.- Կեդրոնական վարժարանի տնօրէնուհին ալ կ'ըսէ թէ նոր դասագիրքերու պակասը ունին: Ուսուցիչներու թիւը ի՞նչ է: Հայերէն լեզուի ուսուցչուհի գտնելու դժուարութիւն կ'ունենա՞ք:

Պ.- Ընդհանուր ուսուցիչներու թիւը 28 է, հայ եւ թուրք: Հայերը 25 հոգի են: Այո, հայերէն լեզու դասաւանդող ուսուցչուհի գտնելու դժուարութիւնը ունինք: Ուսուցչուհի պատրաստելու դժուարութիւն կայ, քանի որ համալսարաններու մէջ հայագիտական ֆաքիւլթիներ չկան: Առաւելագոյնը, ընդհանրապէս լիսէի ուսումով է որ կու գան: Համալսարանի վկայականով թէեւ կու գան, բայց ոչ հայերէնի մէջ մասնագիտացած: Ինքնաշխատութեամբ հասած հայ ուսուցիչներ են:

Հ.- Քանի՞ տարի է որ մանկավարժական ասպարէզի մէջ էք:

Պ.- Ինը տարի է որ տնօրէնուհի եմ այս վարժարանին, իսկ ուսուցչութիւն՝ 22 տարի է որ կ'ընեմ: Ես անգլերէն լեզուի ուսուցչուհի եմ: Այս վարժարանէն շրջանաւարտ եմ, յետոյ օտար լիսէ աւարտած եմ:

Հ.- Ինչպէս դուք ազգային ծառայութեան մէջ մտած էք, արդեօք հիմա նոր սերունդէն անդամներ ազգային ծառայութեան հետաքրքրութիւն ունի՞ն:

Պ.- Ընդհանրապէս մեր փափաքն է որ մտնեն: Այո: Անոնք սանուց միութիւններու պարախումբերու, երգչախումբերու միջոցաւ կը միանան հայ համայնքին:



Աշակերտներ՝ դէպի Մերամթեճեան ուղղուելու պահուն:

Հ.- Երկսե՞ռ է վարժարանը:

Պ.- Հիմա բոլոր վարժարանները արդէն երկսեռ են:

Հ.- Շրջանաւարտներ ձեր վարժարանէն հայ ընտանիք կը կազմե՞ն, թէ՞ օտար ամուսնութիւններով կը կազմեն իրենց ընտանիքները:

Պ.- Անմիջական մեր շրջանակին մէջ չունինք խառն ամուսնութիւններ, սակայն նման հոսանք մըն ալ կայ: Իրականութիւն է:

Հ.- Հիմա որ Հայաստան անկախացած է, արդեօք ձեր շրջանաւարտները Հայաստան կ'այցելե՞ն, կամ հայրենի հիւրեր կ'ունենա՞ք:

Պ.- Եթէ Հայաստանէն Պոլիս հիւրեր ըլլան, կու գան եւ կ'այցելեն վարժարանը: Անպատեհութիւն մը չկայ անոր մէջ: Ինչպէս դուք, այնպէս ալ Հայաստանէն այցելուներ կ'ունենանք: Հոն այցելողներ ալ կ'ըլլան...:



Ս. Վարդանանց եկեղեցին:

Հ.- Դասերէն դուրս, արտադպրոցական հայկական յայտագիրներով ծրագիրներ ունի՞ք:

Պ.- Այո, ունինք գրական պահեր, մէկ կամ երկու անգամ, որոնք կը գուգադիպին Թարգմանչաց Տօնին: Կ'ունենանք Մայրերու Օրուան յայտագիր: Զեւով մը, տարին երկու անգամ գրական օրեր կազմակերպել կը ջանանք: Երկու տարի առաջ ունէինք միջվարժարանային

«Միասին Երգենք» երգչախումբերու մրցում մը: Անցեալ տարի, Ապրիլ 29-ին, համաշխարհային պարի տարուան առթիւ, հայ միջվարժարանային Հայերէն Պարենք Ու Երգենք յայտագիրը ունեցանք: Այս տարի, դարձեալ Ապրիլ 28-ին պիտի ունենանք նման յայտագիր: Ունինք դպրոցի երգչախումբ, հայերէն, թուրքերէն եւ անգլերէն լեզուներով: Իրականութեան մէջ երեք հատ երգչախումբ ունինք:

Հ.- Որո՞ւ տնօրէնութեան տակ կը գտնուի Մերամէթնեան վարժարանը:

Պ.- Ազգապատկան հաստատութիւն է, սակայն Ֆէրիզիւղի Ս. Վարդանանց եկեղեցւոյ Թաղական Խորհուրդին հոգածութեան տակ է:

Հ.- Հայերէն լեզու եւ գրականութիւն կը դասաւանդէք վստահաբար:

Պ.- Հայերէն լեզուի ուսուցում կը տրուի: Գրականութեան շատ քիչ կը մօտենանք, լիսէի կարգի դասարանները հայ գրականութեան մօտ են:

Հ.- Ձեր վարժարանը աւարտող ծանօթ պոլսահայ շրջանաւարտներ կա՞ն այսօր ձեր համայնքին մէջ:

Պ.- Մտակ թոշիկեանը կայ, ծանօթ երաժշտագէտ յօրինող է: Պարգեւ կարեանը կայ:



ՀԱՅԿ ՆՇԱՆ

Տնօրէն Ս. Խաչ Լիսէի

Հ.- Ինչպէ՞ս ծնունդ առաւ եւ իր ընթացքը ունեցաւ ձեր վարժարանը:

Պ.- Մեր վարժարանը Ս. Խաչ դպրեւանքն է եղած, որ 1953 թուականին Գարեգին Արք. Խաչատուրեանի (Տրապիզոնի) ձեռամբ հիմնուած վարժարան մըն է: 1950-ական թուականներուն, պատրիարքական խնդիր կը ծագի իսթանպուլահայ կեանքէն ներս, ծանօթ Ասլանեանական - Հակասասլանեանական անունով, իսթանպուլահայութիւնը կը հաւաքուի ու կ'որոշէ բերել Արժանթինի արժանաւոր առաջնորդը՝ Գարեգին Տրապիզոնին: Իսթանպուլահայութիւնը երկուքի կը բաժնուի, ըսելով թէ այսքան դպրոց կայ, ի՞նչ պէտք կայ դպրեւանք մըն ալ համայնքին



վրայ իբրեւ նիւթական բեռ աւելցնելու: Երկար վիճաբանութիւններէ ետք կ'ընդունուի, որովհետեւ Գարեգին Պատրիարք ըսած է իր ընտրութենէն առաջ, որ պատրաստ է գալու եթէ դպրեւանքի մը ծնունդը ունենայ իսթանպուլահայութիւնը:

Այս համոզումը ունէր, որովհետեւ ինք արմաշական էր եղած: Արմաշը գիտէք թէ հոգեւորական սերունդ մը պատրաստած էր ու իր եպիսկոպոսներով հասած էր զանազան շրջաններու, մէջը ըլլալով Եղիշէ Արք. Դուրեանը: Գիտեմ որ մօրդ կողմէ դուն ալ այդ կողմերէն, Պարտիզակի շրջաններէն՝ Իզմիրիէն ես:

Ուրեմն կ'ընդունուի դպրեւանքի բացումը պետութեան պաշտօնական հրամանագրով, այն ատեն Մկրտիչ Շէլլեֆեանի միջնորդութեամբ: Սա ըսեմ, որ դիւանագէտ-քաղաքագէտ մը եղած էր: Այսպիսով Տրապիզոնի նախաձեռնութիւնը կ'իրականանայ, միմիայն Անատոլի տղոց որպէս ուսումնարան: Այն ատեն, Սահակ Ծայրագոյն Վարդապետին պաշտօն կը յանձնուի, որ երթայ Անատոլի եւ հաւաքէ ուսումնատենչ տղաքը: Ան կը պտըտի գիւղէ գիւղ, Տիգրանակերտ, Սեբաստիա, Կեսարիա... ամէն կողմ կ'երթայ եւ կ'այցելէ հայ ընտանիքներու, հայ տուներ ու իր հետ կը բերէ գաւառացի տղաք: Ըսեմ որ իսթանպուլէն այն ատեն դպրեւանքը աչակերտ չէր ընդուներ:

Գարեգին Գազանձեան, որ վերջը Պատրիարք եղաւ, տնօրէնս ըլլալով դպրեւանքի ղեկը անոր կը յանձնուի: Հսկիչ ըլլալով ալ քանի մը քահանայ հայրեր կը մնային դպրեւանքը, որովհետեւ դպրեւանքը գիշերօթիկ էր: Մինչեւ այն ատեն թուրքերէն անունն էր «Ս. Խաչ էրմէնի Բուհլան Օթուլու», որ կը նշանակէ դպրեւանք: Մինչեւ 1971 այս անունով կը շարունակէ, որովհետեւ բացի լիսէ ըլլալէ ան նաեւ ընծայարան էր: Գարեգին Պատրիարք երեք տարիներու դասընթացքի վրայ դրած էր աստուածաբանական ընծայարանը: Ան սակայն 1961-ին վախճանեցաւ եւ իր մահով դպրեւանքի այս յայտագիրը կիսատ մնաց:

Սակայն, եթէ քիչ մը վերլուծելու ըլլանք Գարեգին Խաչատուրեան Պատրիարքը, չեմ կարծեր որ Անատոլի տղաքը հոգեւորական ըլլալու հեռանկարով բերած էր հոս: Կ'ըսէր. «Աստուած ինչ որ տնօրինած է ձեզի, ապագային այդ պիտի ըլլաք»:

1971-ին ընծայարանի բաժինը դադրեցաւ: Արդէն ուսանող ալ չունէինք գաւառներէն եկող: Ու այս զուգահեռ կ'ընթանայ կը կարծեմ Հէյպէլիի Յունաց Աստուածաբանական հիմնարկի դադրեցումին հետ...: Ասիկա մեծ խնդիր մ'ըն է, հիմա այդ հարցը բանալու պէտք չունինք: Պետական ալ ճնշում կար: Այդ թուականին Ս. Խաչ դպրեւանք լիսէ անունը աւելցաւ... եւ վերջը արթնցան որ դպրեւանք «բուհլան» ըսել

է, այդ ալ վերցուցին պատկան իշխանութիւններու ձեռամբ ու մնացինք այսօրուան Ս. Խաչ Լիսէ անունով:

Քանի մը տարի առաջ թրքական կրթական օրէնքի փոփոխութեամբ նախակրթարանները ութը տարիի բարձրացան եւ մենք ալ երեք տարիները գոցելու ստիպուեցանք: Մերը հիմա երեք դասարանով լիսէ է: Միջնակարգի աշակերտները Սկիւտարի Գալֆայեան ու Ներսէսեան վարժարանները գացին:

Հ.- Քանի՞ տարուայ տնօրէնն էք Ս. Խաչ Լիսէին: Ի՞նչ է աշակերտութեան թիւը:

Պ.- Ես 1979-էն սկսեալ տնօրէնն եմ: Այժմ 76 աշակերտ ունինք, 19 ուսուցիչներով:



Ս. Խաչ Լիսէ:

Հ.- Հայերէն լեզուի դասընթացքները ի՞նչ մակարդակի վրայ կը դասաւանդուին:

Պ.- Հայերէնի դասընթացքներուն գալով, երկու տեսակ են անոնք. լեզու եւ գրականութիւն: Առաջինը՝ երեք ժամ շաբաթը, երկրորդը՝ երկու ժամ: Ամէն դասարան շաբաթական հինգ ժամ հայերէն կ'առնէ: Ասոր քովը կրօնք ունինք, իսկ միւս դասերը ընդհանրապէս թրքերէն լեզուով կը տրուին:

Հ.- Սփիւռքի մէջ ամէն տեղ հայախօսութիւնը նահանջի մէջ է: Վստահաբար Թուրքիոյ պարագան ալ նոյնն է: Առաջքը առնելու ձեւեր կը գտուի՞նք Պոլսոյ մէջ, թէ՞ այլեւս ընդունելու ենք այս նահանջը:

Պ.- Այս հայախօսութեան պարագան մեծ մասամբ ընտանիքներէն կախեալ է: Այսօր, խորհեցէք որ քիւրտերը վարժարան չունին: Քիւրտ մը տեսնէք «չաթըր-չաթըր» քրտերէն կը խօսի: Ուրեմն, հայ դպրոցը որքան ալ մշակէ՝ չի՛ նշանակեր որ հայախօսութիւնը միայն դպրոցով



Գալֆայեան վարժարանը:

պայմանաւորուած է: Ընտանիքները միայն հայախօսութեան համար չեն, այլ մեր սրբութիւնները, սովորութիւնները եւ ականդութիւնները պահպանելու կոչուած են: Շատ մեծ դեր պէտք է ունենան հայ ընտանիքները: Մենք եկանք դարերու մէջէն, կրելով հազար դժուարութիւն ու հասանք հոս: Ես տիգրանակերտցի եմ: Հայրս տան մէջ Յիսուսի իզոն մը ունէր, առաւօտները անոր առաջ կեցած կ'աղօթէր: Եկեղեցի պէտք չունէր երթալու, աղօթարանը տունը բերած էր:

Պէտք է ըսել որ արդի թեքնոլոգիին բերած աւերն է որ կ'ունենայ ազդեցութիւն նաեւ հայ ընտանիքներու պարագային: Կարծես իրենց ինքնութենէն սկսան հեռանալ: Կը խորհիմ թէ այլեւս ժամանակը հասած է, որ մեր մայր հայրենիքը կարգ մը լուրջ միջոցներ ստեղծէ հայապահպանման, որովհետեւ մենք սպասեցինք այսօրուան, որպէսզի Հայաստան իր անկախութիւնը առնէ եւ հայութեան թեւ ու թիկունք կանգնի: Մենք Թուրքիոյ մէջ հայ ըլլալով հայութիւն ապրելու համար մե՛ծ տուրք վճարեցինք մեր անձնականէն: Կրնայինք մեր անունները փոխել եւ շատ տարբեր տեղեր հասնիլ:

Հ.- Այցելութիւն տուա՞ծ էք Հայաստան:

Պ.- Ես տակաւին չեմ տուած: Առիթը չեմ ունեցած:

Հ.- Ուսուցչաց համագումարներ կը կազմակերպուի՞ն Պոլսոյ մէջ:

Պ.- Մեր մէջ այո, մի՛շտ կը գումարուի: Մենք շատ ընդարձակ ծրագիրներ ունինք, մանաւանդ հայ դպրոցներուն ապագայով մտահոգ հիմնարկ մը ունինք: Մեր վարժարանները Իսթանպուլի մէջ խնամակալութեամբ կը ղեկավարուին ու կը հովանաւորուին: Անոր առընթեր, ունինք Ուսուցչաց Միութիւն, հիմնարկ եւ, առաւել, կրթական հարցերով զբաղող յանձնախումբ մը:

Հ.- Պրն. Նշան, գրականութեամբ կը զբաղի՞ք, մանաւանդ որ դպրեւանքի լաւ օրերուն սան էք եղած:

Պ.- Կը սիրեմ, կը հետեւիմ, կը կարդամ: Իսկապէս կը սիրեմ: Մտքիս մէջ մանր-մունր քառեակներ կը հիւսեմ կը պահեմ:

Հ.- Սկիսարը 19-րդ դարու աւարտին ու անցեալ դարու սկիզբը եղած է հայատրոփ համայնք մը: Գաղափար մը ծնաւ այցելելով այս ափը. ինչո՞ւ համար համագաղութային առումով Սկիսարի տարի չէք հռչակեր, հրաւիրելով գրողներ, արուեստագէտներ Հայաստանէն, արտասահմանէն եւ նաեւ՝ նախկին պոլսահայեր: Առիթ է որ նման կապեր հաստատուին: Օրինակ, տարի մը հռչակել Պետրոս Դուրեանի յիշատակի տարի, ուրիշ մը՝ Ռէթէոս Պէրպէրեանի, ու այսպէս շարունակաբար: Գրական եռուզեռ մը կրնաք ստեղծել հոս:



Աղօթասացութիւն Ա. Խաչ եկեղեցւոյ մէջ:

Պ.- Եթէ իսթանպուլահայ մշակութային կեանքին մօտ էք, կը տեսնէք որ մեր կեանքը լեցուն կ'անցնի: Սակայն, ձեր առաջարկած մտածումին մասին չենք խորհած տակաւին: Բայց եւ այնպէս Պետրոս Դուրեանի յիշատակին եղած են շատ մը ձեռնարկներ, սակայն տեղական առումով: Ըսեմ նաեւ որ մինչեւ վերջերս նման ազատութիւններ ալ չունէինք: Հիմա համեմատաբար աւելի ազատ ենք եւ կրնանք լայն բանալ մեր ծրագիրները հայութեան առաջ: Մեր ձեռնարկներուն ընդհանրապէս հազուադէպ կերպով դուրսէն գրողներ կամ արուեստագէտներ կու գան:

Հ.- Կ'ուզէ՞ք անլցնել ուրիշ բան լեզուի նկատմամբ:

Պ.- Գիտեմ որ կը զբաղիք հայ գրականութեամբ եւ արուեստներով, կը խնդրենք, որ մեզ անտես չառնէք: Ըսել կ'ուզեմ իսթանպուլահայութիւնը: Մեր համայնքը հայութեան համար շատ կարեւոր տարր է: Տակաւին իր բոլոր ուժերը կեդրոնացնելով կը շարունակէ մնալ հայ:

Միւս կողմէ, ամենէն կարեւորը՝ կ'ուզեմ որ լեզուի հարցը հարթուի: Այսինքն Հայաստանի արեւելահայ բարբառը Մեսրոպեան ուղղագրութեան վերադառնայ: Արեւմտահայութեան լեզուն պոլսահայ լեզուն է, մաքրուած: Օտարամուտ, ռուսական լեզուէն եկող բառեր մաքրելու են:



Սկիւտարի Ս. Կարապետ եկեղեցին:

Հ.- Զեր դպրոցին կից եկեղեցին ե՞րբ կառուցուած է եւ արդեօք ձեր դպրոցէն առաջ հոն ալ վարժարան գոյութիւն ունեցա՞ծ է:

Պ.- Մ. Խաչ 1676-ին հիմնուած է: Պատիկ դպրոց մը եղած է եւ մենք անոր շարունակութիւնը կ'ըլլանք: Մեր դպրոցը մինչեւ Նալեան Պատ-
րիարքի օրերը կը հասնի՝ 18-րդ դար: Սքոլիա դպրատուն անունով
պատիկ դպրոց մը եղած է:

Առաջին Աշխարհամարտէն ետք որքանոց ըլլալով կը գործածուի այս
դպրոցը: Հոս կը գիշերէին ու Ներսէսեան եւ Սեմերճեան վարժարան-
ները կը յաճախէին: Հիմա այս երկու դպրոցներն ալ չկան: Սկիւտարի
մէջ մնացին Մ. Խաչ ու Գալֆայեան վարժարանները:

Այժմ ձեզ պիտի առաջնորդեմ Մ. Կարապետ եկեղեցին, Գալֆայեան
վարժարանը ու հոնկէ մեր սրբավայրը՝ Սկիւտարի գերեզմանը:



ԵԳՈՒԱՐԳ ԹՈՎՄԱՍԵԱՆ

Հիմնադիր «Արաս» Հրատարակչատան

Հ.- Այս հարցազրոյցը պիտի ծառայէ մեր
մամուլով առաւելագոյն չափով ծանօթա-
ցնելու ձեր լուրջ աշխատանքը նուիրուած հայ
գրականութեան տարածման: Ե՞րբ եւ ի՞նչ
պայմաններու տակ սկսած է «Արաս»ը:

Պ.- «Արաս» Հրատարակչատունը 1993-
ին հիմնուեցաւ, մօտ 13-14 տարի է, որ
երկլեզու գիրքեր կը հրատարակէ: 93-ին
Հրանդ Տինքին հետ միասին հիմնեցինք,
մեզի հետ էր մեր երէց եղբայր Մկրտիչ
Մարկոսեանը, գաւառական գրականութեան վերջին մոհիկանը: Մեզի
հետ սկսան նաեւ Մկրտիչի եղբայրը, քոյրս եւ կինս:

Աւելի առաջ ալ գիրով ու գրականութեամբ կը զբաղէի, «Մարմարա»
օրաթերթին գրական էջերուն կ'օգնէի, փայլինէն «Մարմարա»ի
ծաղկեփունջ մանկական էջը կը պատրաստէր, ամէն Ուրբաթ,
տարիներով:

Մկրտիչը առաջին գիրքը արդէն հրատարակած էր «Մարմարա»
տպարանին մէջ, թրքերէնի ալ թարգմանուած էր եւ ընդունելութիւն
գտած էր: «Կեաւուր Մահալէսի» վերնագիրն ունէր: Ուզեցինք Պոլսոյ
մէջ ալ թուրք եւ հայ յարաբերութիւնները բարելաւել: Այդ օրերուն



այդ յարաբերութիւնները նեղ օրեր կ'ապրէին: Ուրեմն մեր ձայնը լսելի դարձնելու պահանջը զգացինք: Եւ ասկէ մեկնելով Հրանդին հետ հիմնեցինք «Արաս» Հրատարակչատունը: Երկու տարի ետք, Հրանդը առաջարկեց շաբաթաթերթ մը հրատարակել: Մենք չփափաքեցանք: Հրանդին հետ երէց եղբօր յարաբերութիւնը ունեցած եմ: Ըսաւ. «Արդ-եօք ես ի՞մ թերթս սկսիմ»: Ըսի. «Ա՛յ տղայ, արտօնուած ես...»: Գնաց այդ «Ակօս»ը հիմնեց, որ մինչեւ այսօր կը շարունակէ լոյս տեսնել:

Հ.- Նօսրացող գաղութ է իսթանպուլահայութիւնը, ինչպէս դժբախտաբար Միջին Արեւելքին մեր մայր գաղութներու պարագան է: Հայագիտութեան իմաստով ալ պարագան նոյնն է: Յանդգնութիւնը ինչպէ՞ս ունեցաք հայերէն գիրք հրատարակելու որոշում առնելու:

Պ.- Ինչպէս ողբացեալ Հրանդը կ'ըսէր, մենք զմեզ գաղութ չենք ընդունիր: Մենք գաղութ չենք: Մենք հօրենական մեր հողերուն վրայ կ'ապրինք: Որ տեսանկիւնէն որ նայիք մենք 1000, 2000, 3000 տարուան պատմութեան վրայ կ'ապրինք: «Ժամանակ» օրաթերթը, որ հարիւր տարի է կը հրատարակուի, կ'ապացուցանէ որ այստեղ հրատարակչական կեանք մը կայ: Պոլիսը գաղութ չէ: Աշխարհի վրայ կան հայեր, ու Հայաստան, սփիւռք իր Լիբանանով, Փարիզով, Ռուսաստանով ու Ամե-րիկայով... մէյ մըն ալ թրքահայութիւն կայ: Ես երեքով կը դասաւորեմ հայ կեանքը. հայրենիք, սփիւռք եւ պոլսահայութիւն: Այստեղ կայ հայ կեանք մը, որ ունի իր հօրենական ակունքները եւ մենք անոնց վրայ կ'ապրինք:

Իսկապէս, ձեր ըսածը շատ ճիշդ է. հայախօսութիւնը կամ հայերէն ընթերցումը գրեթէ նուազագոյնի իջած է: Աշխարհի վրայ 7-8 միլիոն հայ կ'ապրի, կը կարծեմ որ կէսէն աւելին հայերէն չի կարդար: Բայց աշխարհը գեղեցկացնողները խենթերն են: Մեր եւ մեզի նման վարուողներուն ըրածը խենթութիւն է...:

Մենք, ըսեմ նաեւ, ձախլիկ երես մը ունինք: Ձախլիկները չեն վախ-նար: Այսպիսի քաջութիւններ, չըսելու համար խենթութիւններ, կ'ընեն: Այստեղ անցեալ մը կար եւ մենք այդ անցեալին վրայ է որ կը նստինք: Մեր մեծ ու մեծ հայրերուն ժառանգն է որ կը շարունակենք: Պէտք է արժանի ըլլանք մեր մեծերուն:

Հ.- Ընդհանրապէս ձեր հրատարակութիւնները պոլսահա՞յ գրողներու գործեր են, թէ՞ ունիք այլ գրողներու հրատարակութիւններ:

Պ.- Որեւէ գրական գործ չենք հրատարակեր: Մեր պարագային գործը պէտք է հայկական երես ունենայ: Կա՞մ գրողը հայ պէտք է ըլլայ,



Արաս Հրատարակչատան մէջ, հիմնադիրին եւ իր կողակցին ու քրոջ հետ:

Կա՛մ օտար, թուրք գրողի մը գործը, որ հայկական հարցին առնչուած պէտք է ըլլայ: Ունինք հայկական գործեր հայ հեղինակներէ թուրքերէն լեզուի թարգմանուած: Հայերէն գիրքերէն է, օրինակ, Հալէպէն Թորոս Թորանեանի աշխատութիւնը:

Հրատարակեցինք Հայաստանէն նաեւ գրողներու գիրքեր: «Պատուհան դէպի հայ գրականութիւն» թրքերէն թարգմանութիւններու համար: Մեքսիքայի գրականութիւնը մեզ չի հետաքրքրէ:

Հ.- Ինչպէ՞ս կը տարածէք ձեր հրատարակած գիրքերը:

Պ.- Պոլսոյ մէջ կան 6-7 մեծ ընկերութիւններ եւ անոնց միջոցով կը տարածենք: Հայերէն գիրքերը լոյս կը տեսնեն 500 օրինակով, իսկ թրքերէն գիրքերը՝ 2000 օրինակով: Այդ ընկերութիւնները կը տարածեն մեր գիրքերը: Մենք չենք տարածէր:

Հ.- Դպրեվանք ուսանած էք եւ վստահ եմ որ նաեւ գրասէր ըլլալէ բացի լայն հետաքրքրութիւն ունիք դէպի մեր գրականութիւնը: Զահրատ, Խրախունի, Հատտէճեան, արդէն ութսունին բարեւ տուած են. ի դէպ, վերջերս կորսնցուցիք Զահրատը: Արդեօք գիրենք փոխարինող նոր անուններ կա՞ն Պոլսոյ գրական հրապարակին վրայ: Փայլատակող աստղեր կա՞ն:

Պ.- Չկան: Կայ ոմանց մօտ հետաքրքրութիւն, սակայն պէտք չէ յուսահատիլ: Եթէ 20-30 տարի առաջուան յուսահատութեան օրերուն վերանայինք, հասանք այս օրերուն: «Ակօս»ի ու «Արաս»ի ջանքերով եթէ նայինք, կը զարմանաք: Մէկը եթէ երեսուն տարի առաջ ըսեր որ Թուրքիոյ մէջ Հրանդին պէս հայ մը հրապարակ պիտի գար ու սպաննուէր, այդ մարդը կ'առնէին ու յիմարանոց կը դնէին: Այդ օրերէն հասանք մեր այս օրերը: Պէտք չէ յուսահատիլ:

Մենք երիտասարդ գրողներու գիրքերն ալ կը հրատարակենք, ինչ-պէս ամէն երիտասարդ բանաստեղծութեամբ կը սկսի մտնել գրական աշխարհ, անոնք ալ այսպէս են: Ամենէն երիտասարդը Իգնատիոս Սարը-ասլանն է, որ կարծեմ 50-60 տարեկան է արդէն: Վերձիան Զիֆչիօղլուի երկու բանաստեղծութեան գիրքերը հրատարակեցինք: Կան ուրիշ փորձեր: Մխիթարեան Սանուց Միութեան մէջ «Նոր Սան» պարբերաթերթը կար, այնտեղ բաւական երիտասարդներ հաւաքուած էին, բայց ցաւօք սրտի այդ աշխատութիւնը բաւական երկար ժամանակէ ի վեր դադրեցաւ:

Հ.- Քանի՞ անուն հայերէն գիրք լոյս ընծայեցիք այս 13 տարիներու ընթացքին:

Պ.- Հարիւրի մօտ գիրք հրատարակած ենք, որոնց 25-30 հատը հայերէն լեզուով, իսկ մնացեալ 70 հատը թրքերէն լեզուով:

Հ.- Ձեր գիրքերը Հայաստան կամ սփիւոքի այլ գաղութներ կը տա-րածէ՞ք:

Պ.- Հայաստան կ'երթայ: Նոր-նոր կ'աշխատինք: Այնտեղ «Քաֆէ Թուրք» գրատուն մը կայ եւ հոն կը տարածուի: Լոս Անճելըս «Սարգա-րապատ», Փարիզ «Սամուէլեան», Լիբանան Անթիլիասի գրախանութ-ներուն մէջ: Հալէպի մէջ «Կիլիկիա» հաստատութեան հետ կը փոխա-նակենք գիրքեր:

Հ.- Պատմութիւնը ի՞նչ պիտի արձանագրէ Հրանդ Տիմքի մասին:

Պ.- Դեռ չատ կանուխ է: Պատմութիւնը ժամանակի կը կարօտի: Կարծեմ լաւ բաներ պիտի ըսէ Հրանդին մասին, որովհետեւ ան հաւա-սարակչութեամբ բաներ կ'ըսէր: Երկու կողմերու համար ալ շատ հաւասա-րակչութեամբ: Կարծեմ ոչ մէկս կ'ուզէինք որ ան մահանար: Ես չէի կրնար խորհիլ որ այսպիսի մահ մը ունենար եւ նման յուղարկաւորութիւն մը: Միայն հայերը չէ որ ողբացին Հրանդին մահը, այլեւ թուրքեր, գերմանացիներ, օտարներ...:

Հ.- Թուրք մտաւորականութիւնը ինքզինք գտա՞ւ Հրանդին ընդմէջէն արդեօք:

Պ.- 1980-էն ի վեր, թուրք ժողովուրդը զինուորական ճնշումի տակ կ'ապրէր: Պոռթկում մըն էր այս: Այս երկրին մէջ դեմոկրատիա չկայ: Արդէն Հրանդին ըսածն ալ այդ էր: Եթէ չկայ դեմոկրատիա, ապա Յեղասպանութեան ու Եղեռնի մասին ալ լուծում կարելի չէ գտնել: Ուրեմն նաեւ կարելի չէ ըսել որ այստեղ դեմոկրատիա կայ, որպէսզի այդ դեմոկրատ մարդոց հետ կարենանք նստիլ ու Եղեռնի մասին զրուցել:

Միայն հայերուս վրայ չէ որ կ'ազդեն պայմանները, այլ թուրքին, տեղացիին, այսինքն իր հայրենակիցին վրայ ալ:

Հ.- Հրատարակչութեան հետ կապուած ուրիշ հարց մը կ'ուզե՞ք դնել:

Պ.- Ուրախ եմ որ եկաք, այցելեցիք մեզի: Գրասէր մարդիկ արտասահմանէն աւելի շատ մեր երկու օրաթերթերուն՝ «Ժամանակ»ին եւ «Մարմարա»ին կ'այցելեն: «Արաս» Հրատարակչատուն գրեթէ չեն հանդիպիր: Պէտք է ըսել որ Հրանդին մահուամբ այդքան ժողովուրդի ոտքի ելլելն ու փողոց իջնելը այս գիրքերուն շնորհիւ եղաւ նաեւ:

Ըսեմ նաեւ թէ ուրիշ թրքական հրատարակչութիւններու համար մրցակցութիւն մըն ալ եղաւ, երբ սկսան հրատարակել հայերու հետ առնչութիւն ունեցող գիրքեր, քանի որ մեր գիրքերը կը վաճառուին արագ կերպով: Անոնք թէեւ որպէս առեւտուր կ'ընեն այդ գործը, բայց հարց չէ... կարեւորը նպատակին ծառայելն է:

Օրինակ, շատ ցած որակով, Անդրանիկ Փաշային յուշերը հրատարակեցինք: Գանելիք հրատարակութիւն մըն է, բայց հարց չէ: Մեր հաստատութիւնն է որ պատճառ կը դառնայ ուրիշներու:

Թարգմանական աշխատութիւնը մեր պատմութեան մէջ սուրբ անունով ճանչցուած է: Թարգմանիչները սրբացուցած ենք: Եթէ կ'ուզենք աշխարհի երեսին մնալ, ապա կարեւոր է որ մշակութային արժէքները թարգմանուին օտար բոլոր լեզուներու՝ արաբերէն, ֆրանսերէն, սպաներէն...: Անպատճառ պէտք է թարգմանել:



ԳԵՐԱՊԱՅԾԱՌ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՔ.

201ԱՔԵԱՆ

Վիճակաւոր Հայ Կաթողիկէ Համայնքի



Հ.- Մեր ընթերցողներուն կը հաճի՞ք տեղեկութիւն տալ Պոլսոյ մէջ հայ կաթողիկէ համայնքին կազմութեան մասին եւ նշել թէ ի՞նչ ուշագրաւ գործ տեսաւ թրքահայ կեանքէն ներս անցնող մէկ-մէկուկէս տարիներու ընթացքին:

Պ.- Ինչպէ՞ս կազմուեցաւ Հայ կաթողիկէ Հասարակութիւնը Պոլսոյ մէջ: Ձեզի պիտի նուիրեմ գիրք մը, որուն հեղինակն էմ: Կերպով մը պիտի գտնէք բոլոր տեղեկութիւնները: Մենք մի՛շտ Իսթանպուլի մէջ կաթողիկէ համայնք մը ունեցած ենք: Եւ այդ համայնքը պաշտօնապէս ճանչցուած չէր կառավարութենէն՝ Օսմանեան պետութենէն: Այնպէս որ համայնքը ըլլալով հանդերձ, պարտաւոր էինք մկրտութիւններու, յուղարկաւորութիւններու եւ հարսանիքներու համար դիմել Հայ Առաքելական Եկեղեցիին:

Բայց, 1830-ին Օսմանեան պետութեան հրովարտակով ազատ արձակուեցանք եւ ճանչցուեցանք իբրեւ ուրոյն համայնք: Այդ թուականէն մինչեւ այսօր կառուցուած են 12 եկեղեցիներ, ունինք շատ աղուոր հիւանդանոց մը՝ Ս. Յակոբը, եւ յետոյ սա պահուս հիմնուեցաւ երեք վարժարան՝ Բանկալթիի Մխիթարեանը, Շինապոլսէն Վենետիկ Մխիթարեաններու նախակրթարանը եւ Անաղարտ Յղութեան վարժարան մը ունինք: Մեր թիւը վերիվարոյ 3500-ի կը հասնի: Այս է մեր կացութիւնը այսօր:

Հ.- Գերապայծառ, դուք կապուած էք հայ կաթողիկէ պատրիարքարանին, Զմմառ:

Պ.- Այո կապուած ենք Լիբանանին ու անոր ուղիով՝ Հռոմի: Ունինք Հռոմի մէջ Լեւոնեան վարժարանը եւ առհասարակ մեր թեկնածուները հոն կը ղրկենք:

Հ.- Քանի՞ տարի է ի վեր կը պաշտօնավարէք հոս:

Պ.- Ըսեմ: Ես ապրեցայ ամբողջ Երկրորդ Համաշխարհային Պատերազմի տարիներուն Իտալիա, Հռոմ: 1937-1946 Հռոմ մնացի: Թէպէտեւ ուսումնաւ աւարտած էի, ճամբաները գոց էին, պարտաւորուեցայ հոն

մնալ եւ աստուածաբանութենէն ետք հետեւեցայ երկու տարի եկեղեցական իրաւաբանութեան: Եկայ հոս 1946-ին, 14 Յուլիսին էր, կը յիշեմ, Ֆրանսայի յեղափոխութեան օրը հասայ հոս: Հասնելէս անմիջապէս ետք, զիս փոխ ժողովրդապետ կարգեցին այս եկեղեցիին՝ Ս. Աստուածածնի: 1949-ին ստիպուեցայ կատարել զինուորական պարտականութիւնս, բայց իբրեւ ենթասպայ: Վերադարձին անուանուեցայ ժողովրդապետ, իսկ 1967-ին, անուանուեցայ Պոլսոյ Արքեպիսկոպոս:

Միջանկեալ ըսեմ, որ 17 տարի դասաւանդեցի էսայեան վարժարանը իբրեւ ուսուցիչ տրամաբանութեան, փիլիսոփայութեան եւ հոգեբանութեան: Բայց ատեն մը, եպիսկոպոս ըլլալով հանդերձ, օրէնք մը ելաւ, որ կ'արգիլէր հոգեւորականներուն ուսուցիչ ըլլալու հանգամանքը: Այն ատեն կեցուցի ուսուցչական պատասխանատուութիւնս: Շա՛տ լաւ յուշեր ունիմ: Օր. Հերմինէ Գալուստեանի տնօրէնութեան ժամանակն էր: Այդ ժամանակ էսայեան վարժարանը կը հաշուէր 1,100 աշակերտ: Հիմա որքան գիտեմ 350-ի շուրջ է եւ շատե՛ր աշակերտուհիներս եղած են:

Հ.- Բոլոր գաղութներու համար ալ հայախօսութիւնը տեղի սկսած է տալ, վստահ եմ, որ Պոլսոյ հայ կաթողիկէ վարժարաններու պարագային ալ նոյնն է: Արդեօք ասոր առաջքը առնելու ձեւեր կը խորհուի՞ն, ընդհանրապէս:

Պ.- Նայեցէք, աշակերտներուն թիւը նուազած է ըստ ինծի երկու պատճառով: Ատեն մը արտագաղթ եղաւ: Շատ-շատ: Ամէն օր գրեթէ



Էսայեան վարժարանը:

մկրտութեան վկայականներ կու տայի: Միւս կողմէն ալ թերեւս մեր ուսուցչական կազմերը չեն ինչ որ պէտք է ըլլան եւ ծնողներն ալ կը ղրկեն օտար վարժարաններ: Այս է պատկերը: Բայց, ասով հանդերձ, ըսեմ որ մեր Բանկալթիի Մխիթարեան վարժարանին տուած կրթութիւնը բաւական լա՛ւ է: Ուսումը լաւ է: Կը յաջողին ընդհանուր քննութիւններու մէջ: Սա ալ ըսեմ, որ ուսումնասիրեցի որ Պոլսոյ մտաւորականներուն մեծամասնութիւնը այդ վարժարանէն շրջանաւարտ եղած է... Հատուցեան, Տոքթ. Վարդ Շիկահեր, Խրախունի, Զահրատ, բոլորն ալ մեր վարժարանի հունձքէն են:

Ըսեմ նաեւ թէ երկու համայնքներու մէջ բնաւ տարակարծութիւններ չկան: Երբեք այսքան մտերիմ եղած չեն մեր այս երկու համայնքները:

Մութաֆեան Պատրիարքին հետ մեր յարաբերութիւնները շա՛տ լաւ են: Տօնական օրերուն միասին ենք: Յաճախ զիրար կ'այցեւենք: Վերջերս գիրերու գիւտի 1600-ամեակին առթիւ հանդիսութիւններու փակումը կատարեցինք մեր եկեղեցիէն ներս: Զինքը հրաւիրեցինք, իմ աթոռս իրեն տուի այդ օր իբրեւ պատրիարք: Ժողովուրդը խանդավառուեցաւ, առաջին անգամն էր որ նման դէպք մը կը պատահէր:

Հ.- Ունի՞ք հրատարակութիւններ:

Պ.- Դժբախտաբար ոչ: Ս. Յակոբը ունի պզտիկ հրատարակութիւն մը, մեծ բան մը չէ:

Հ.- Զեր վիճակին մէջ քանի՞ հայ կաթողիկէ հոգեւորական կը պաշտօնավարէ:

Պ.- Երեք հատ թեմական ունիմ, աշխարհական վարդապետ մենք կ'ըսենք, երկու հատ ալ Մխիթարեան կրօնաւոր: Բայց Մխիթարեան վարժարանին կրօնաւորներուն համար մտահոգ եմ: Ետեւէն եկող չկայ...: Մեր ընտանիքներէն շատերը Մխիթարեան կը ղրկեն, որովհետեւ հոն վարդապետներ կան: Կը Զանան անշուշտ գիտութեան աւելցեալ հայաշունչ, կրօնաշունչ դաստիարակութիւն մը տալ:

Հ.- Պոլսոյ հետ թէւէ կապ չունի հարցումս, սակայն քանի Մխիթարեաններու մասին կը խօսինք, միշտ լսած եմ, որ հակառակ Մխիթարեան Միաբանութեան զոյգ թելերու միանալուն, տակաւին տագնապէ կ'անցնի միաբանութիւնը:

Պ.- Վիեննա դաստիարակութիւնը գերմանական է, Վենետիկ՝ իտալական է: Ուրեմն երկու մշակոյթներու միջեւ հարց մը կայ հոս: Որքան

որ միացած է կ'ըսենք, իրականութեան մէջ դեռ այդ երազը չէ իրականացած:

Հ.- Կը խորհի՞ք, որ հայ կաթողիկէ համայնքը Հայաստանի անկախացումէն ետք, նոր զարթօնք մը կրնայ ապրիլ գոնէ հայաստանցի նոր ու երիտասարդ հոգեւոր ուժերով:

Պ.- Վստահ եմ ասոր եւ արդէն հոն ունինք տասնեակ մը կեդրոններ, հինգ վարդապետ կայ կարծեմ, մէկ եպիսկոպոս: Անարատ Յղութեան քոյրերը կը գործեն, մէյ մըն ալ հիւանդանոց մը կայ որ մեզի Սրբազան Քահանայապետը նուիրած է: Պիտի ըսեմ ապագան Հայաստանն է: Մա ըսեմ, ուրիշներու ալ ըսեր եմ, հայ կաթողիկէներու ներկայութիւնը հոն մրցակցութեան հարց չէ, այլ օգնելու, Աւետարանը քարոզելու հարց է մեր եղբայրներուն:



Պեզճեան մայր վարժարանը:

Հ.- Արդէն ես խօսած եմ մեր Ամենայն Հայոց Վեհափառին հետ այս հարցին կապակցութեամբ: Ինք ալ ըսաւ որ հազար անգամ նախընտրելի է հայ կաթողիկէներու ներկայութիւնը՝ քան Ամերիկայէն եկած աղանդաւոր շարժումները: Պոյիս հովուական այցելութեան եկած էր Գարեգին Բ. Վեհափառը եւ այս առթիւ արդեօք այցելե՞ց Ձեզի:

Պ.- Ես պատրաստ էի մեծահանգէս ընդունելու զինքը, բայց գացի Մուրաֆեան Սրբազանին տեսնելու Վեհափառին յայտագիրը: Տեսայ որ խճողուած է եւ ըսուեցաւ որ այցելութիւն մը կրնայ տալ կէս ժամուան: Նոյն օրը ուրիշ տեղ մը պիտի երթար, ուզածիս պէս չկրցայ ընդունիլ, բայց համայնքիս մեծ ջոշերը հրաւիրեցի, եկեղեցական դասը եւ հրաշափառով դահլիճին մէջ ընդունեցի զինքը եւ իրեն բարի գալստեան խօսք ու ընդունելութիւն ըրի եւ ինք ալ պատասխանեց: Իրեն նուիրեցի ինչ որ ձեզի ալ պիտի նուիրեմ: Ինք ալ փոխադարձաբար շատ գեղեցիկ ձեռաց խաչ մը նուիրեց, որ ապագայ թանգարանիս մէջ պիտի ըլլայ:

Հ.- Մօտ երեսուն տարիէ ի վե՞ր կը պաշտօնավարէք:

Պ.- Այս տարի եպիսկոպոսութեանս քառասուններորդ, իսկ քահանայութեանս 66-րդ տարին է: Պոլսոյ թեմին մէջ ոչ ոք հոն հասած է: Աշակերտութեանս շրջանը Հռոմ հիւանդութեամբ անցած է: Ստամբուլի արիւնահոսութիւն ունէի, որ չէր կենար. այդ ժամանակ գիտութիւնը այսքա՛ն յառաջացած չէր եւ մեռնելու վրայ էի: Բժիշկը կանչեցինք, քննեց ու ըսաւ. «գամպա, է նոն գամպա», որ կը նշանակէ «կ'ապրի եւ չ'ապրիր»: Եւ որոշեցի ատեն մը վերադառնալ Պոլիս եւ մայրիկիս քովը մեռնիլ: Բայց օր մը նետուեցայ խորանին առջեւ, ըսի. «Աստուած իմ, եթէ կ'ուզես որ ես ծառայեմ իբրեւ հոգեւորական, զիս փրկէ»: Անկէ վերջը շտկուեցայ, առողջացայ: Հակառակ այդ առողջական վիճակիս, մինչեւ այսօր կրցայ աշխատիլ: Որովհետեւ Աստուած կ'ընտրէ տկար գործիչներ իր ծրագիրները իրագործելու համար:

Տեսաւ որ Պոլսոյ թեմը քահանայի պէտք ունէր, զիս պահպանեց....

Հ.- Սրբազան Քահանայապետը այցելեց Պոլիս: Արդեօք այդ այցելութեան առթիւ նաեւ անցա՞ւ հալոց պատրիարքարանէն:

Պ.- Ասկէ առաջ երկու քահանայապետեր եկած էին՝ Պօղոս Զ. եւ Յովհաննէս-Պետրոս Բ., մէկը հոս այցելեց, միւսը Ոսկեբերան մեր եկեղեցին: Այս անգամ պզտիկ դժուարութիւն եղաւ, որովհետեւ Սուրիանի եւ Քաջիացի քահանաներ ուզեցին որ քահանայապետը իրենց ալ երթայ: Եւ անոնց երեսնէն, ըստ իս, չկրցաւ գալ մեզի: Ան 80 տարեկան է, ըսին որ խնայենք: Բայց լատինաց եկեղեցին գտնուեցանք, ամէնքս միասին, եւ մենք ալ մեր մասնակցութիւնը բերինք թափօրին, «Խորհուրդ Խորին»ով ու «Հրաշափառ»ով ու ապա «Սուրբ Սուրբով» մասնակցեցանք՝ հիացնելով բոլորն ալ: Այս առթիւ ծիսարան մը տպուեցաւ ու հայերէն լեզուով վերի շարականները տրուեցան:

Հ.- Զանազան գաղութներու մէջ մտահոգութիւն մը կայ, որ երբ ժողովուրդին թիւը նօսրանայ, փոքրանայ, մեր կալուածները առարկայ կը դառնան անորոշութեան: Օրինակ, Հնդկաստանի կամ Հեռաւոր Արեւելքի Հայ Առաքելական եկեղեցւոյ կալուածներու պարագան: Գիտենք որ թէ՛ Հայ Առաքելական եւ թէ՛ Հայ Կաթողիկէ համայնքները Պոլսոյ մէջ կը փոքրանան, արդեօք հեռաւոր մտածումներ կա՞ն ապահովելու անոնց հայկականութեան իրաւունքները:

Պ.- Ես կը խորհիմ, որ առանց յոռետես ըլլալու, իրապաշտ ըլլալով, քիչ մը մտահոգիչ է ապագան, սակայն մէկ փրկութեան ճամբայ կայ. եթէ թուրքիա մտնէ Եւրոպական Միութենէն ներս, այդ ժամանակ

առաւելութիւններ պիտի ունենանք: Եւ այդ մասին ըսեմ որ ներկայ կառավարութիւնը աւելի մօտիկ է, կը յուսանք որ մեր բարիքին համար այդ պիտի ըլլայ:

Հ.- Անշուշտ ես նպատակ չունիմ ձեզի քաղաքական հարցումներ հարցնելու, սակայն եւ այնպէս երկու դէպքեր Թուրքիոյ մէջ քաղաքականացուցին մթնոլորտը՝ Հրանդ Տինքի սպանութիւնը եւ Աղթամարի Ս. Խաչ եկեղեցիին վերաբացումը որպէս թանգարան: Տինքի գործունէութիւնը եւ անոր ժողովրդային ցոյցի վերածուած յուղարկաւորութիւնը իսթանպուլահայութեան համար բացասական, թէ՞ դրական հետեւանքներ ունեցան:

Պ.- Պիտի ըսեմ, որ մաս մը կայ որ դրական է: Ազգամոռները շատ լաւ դիմաւորեցին այդ, բայց կը տեսնեմ որ «Ակօս»ի մէջ թուրք լրագրողներ ալ կան, որոնք կ'ըսեն որ հայերն ալ առաջին գիծի քաղաքացիներն են այս երկրի: Իսկ Աղթամարի պարագային, մաղթելի պիտի ըլլար որ իբրեւ եկեղեցի ան վերաբացուէր ու խաչ մըն ալ դրուէր եւ ինչու չէ՞ զանգակատուն ալ տեսնուէր: Հիմա, արդեօք խաչը պիտի դրուի՞... ատիկա հարցական է եւ չեմ կրնար պատասխանել: Ես շատ յուսալից չեմ անձնապէս, որովհետեւ կրնան ըսել որ եթէ ձեզի արտօնութիւն տանք, յոյներն ալ վաղը միւս օրը Այա Սոֆիայի համար պիտի խնդրեն:

Հ.- Հայ կաթողիկէներու պատկան 12 եկեղեցիները հայ համայնքը կառուցած է, թէ՞ ոչ յոյներէն առնուած պաշտամունքի կեդրոններ են եղած:

Պ.- Ասոնցմէ 8-ը ծանօթ հայ ընտանիքներու կողմէ կառուցուած են: Քիչ ետք երբ վար իջնենք պիտի տեսնէք, այս եկեղեցին երկու քոյր բարեպաշտներու կողմէ շինուած է: Իրենց բոլոր հարստութիւնը տրուած է: Իսկ մնացեալ 4 հատը համայնքիս բոլոր խաւերուն օգնութեամբ կառուցուած են: Ոչ միայն եկեղեցին շինած են, այլեւ եկամուտի աղբիւրներն ապահոված են: Մենք Առաքելական Եկեղեցւոյ նման մատաղի օրհնութեան սովորութիւնը չունինք, որովհետեւ մեր նախնիները մեզի ապահոված են պիւտճէն ու տարուան վերջը առ հասարակ կրնանք հաւասարակշռել մեր պիւտճէն՝ առանց դիմելու մեր ժողովուրդի օգնութեան:

Իսկ սա ալ ըսեմ, որ յաչս օրէնքի մենք եկեղեցականներս գիտենք որ պաշտօնեայ ենք: Ես այստեղի դրամով բացարձակապէս գործ չունիմ: Մատակարարման խորհուրդ մը ունինք եւ շատ գոհ եմ որ աշխարհականները կը մատակարարեն: Մեզմէ՝ եկեղեցականներէս, շատ աւելի լաւ գործ կը տեսնեն անոնք: Համոզուած եմ ես ասոր եւ կը

կրկնեմ եւ օրհնութիւն կ'ընեմ, սակայն անշուշտ պէտք է գիտնալ ընտրել: Որքան որ մենք չենք կրնար միջամուխ ըլլալ պաշտօնապէս, սակայն միշտ կը խորհրդակցինք, կը տեսնուինք:

Հ.- Գրական հետաքրքրութիւններ ունիք վստահ եմ: Արդեօք ի՞նչ գրական ու բանասիրական գործերով զբաղած էք եւ ի՞նչ ծրագիրներ ունիք ապագայի համար:

Պ.- Հիմա հոս մեծ հատոր մը ունիմ, որ 1998-ին հրատարակուած է: Այս երկրորդ հատորն է: Եւ գուշակեցէք թէ իմ երրորդ հատորը ի՞նչ պիտի ըլլայ...:

Հ.- Ձեր յուշերը:

Պ.- Ոչ: Էջմիածնի փոխ յարաբերութիւնները Հռոմի հետ: Բայց պիտի կարենա՞մ հասցնել նիւթերը, ատաղձը, մանաւանդ լուսանկարները ունիմ: Առաջին անգամ, ըստ աւանդութեան, Հռոմ այցելած է Ս. Գրիգոր Լուսաւորիչ: Աւանդութիւն մըն է: Ատկէ վերջ, 16-րդ դարուն կը նշմարուի սերտ յարաբերութիւն մը Հռոմի հետ օրուան կաթողիկոսներուն կողմէ: 1970-ին Վազգէն Ա., ապա Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսները եւ ապա մեծ դէպքը՝ Քահանայապետին էջմիածին այցը: Այս բոլոր document-ները ձեռքս են հիմա:

Կը խորհիմ երկու լեզուով հրատարակել, հայերէն եւ ֆրանսերէն:

Հիմա այս գիրքը (ցոյց կու տայ- Յ.Վ.) ֆրանսերէնով է եւ համառօտութեամբ թուրքերէն: Ինչո՞ւ ֆրանսերէն: Սկսած էի հայերէն գրել: Օր մը, բարձրաստիճան օտար հոգեւորական մը գիտնալով որ հայերէն կը գրեմ ըսաւ. «Դուք հայ էք, ազգային զգացումներ ունիք անշուշտ, բայց ես կը թելադրեմ ուրիշ լեզուով լոյսին բերել, որպէսզի ծանօթացնէք հայութիւնը օտարներուն»: Ու ֆրանսերէն սկսայ գրել: Քանի համայնքս ֆրանսերէն չի գիտեր, պարտաւորուեցայ թրքերէն լեզուով բաժին մը աւելցնել:

Իսկ այս մէկն ալ մեր հիւանդանոցին՝ Ս. Յակոբի պատմութիւնն է: Այս անգամ, սակայն, հայերէն եւ թրքերէն լեզուներով: Այս լոյս ընծայեցի այն ժամանակ, երբ Էսայեանի մէջ ուսուցիչ էի, եպիսկոպոս էի, դիւանապետ ու քարտուղար...: Ես ալ զարմացայ թէ ինչպէ՞ս կրցայ ի գործ դնել:



ԿԱՐԷՆ ՄԻՐԶՈՅԵԱՆ

Սեւծովեան տնտեսական

համագործակցութեան կազմակերպութեան

մօտ Հայաստանի Հանրապետութեան

մշտական ներկայացուցիչ



Հ.- Հայաստանի միա՛կ դիւանագէտն էք Թուրքիոյ մէջ: Այս կազմակերպութեան կեդ-
րոնը ո՞ր կը գտնուի, ի՞նչ պաշտաններու տակ
ծնունդ առած է Սեւծովեան Տնտեսական
Համագործակցութեան Կազմակերպութիւնը:

Պ.- *Էստեղ Իսթանպուլում: Կազմակեր-
պութիւնը հիմնուել է 90-ական թուականների սկզբին: 2001-ի կազ-
մակերպութեան շրջանակներին ու կազմակերպութեան կից բացուել է
Հայաստանի մշտական ներկայացուցչութիւնը, որտեղ ես այժմ պաշտօ-
նավարում եմ եւ որտեղ դուք գտնուում էք:*

Հ.- Ուրեմն այս կազմակերպութեան անդամ միակ երկիրը, որ Թուրքիոյ
մէջ դեսպանութիւն չունի, Հայաստանի Հանրապետութիւնն է:

Պ.- *Այո: Մնացեալ երկրները իրենց շփումները տնտեսական
համագործակցութեան կազմակերպութեան հետ իրականացնում են
կա՛մ ուղղակիօրէն իրենց Իսթանպուլում գտնուող հիւպատոսարաննե-
րի, կա՛մ էլ Անգարայի դեսպանութիւնների միջոցով:*

*Որպէս կանոն, Իսթանպուլում գտնուող իրենց գլխաւոր հիւպատոս-
ները միաժամանակ կրում են այդ երկրի կազմակերպութեան ներկա-
յացուցչի պաշտօնը:*

Հ.- Հոս պզտիկ հարց մը կը ծագի մեր մտքերում մէջ: Ինչպէ՞ս Սեւծով-
եան համագործակցութիւն, երբ մենք այդ ծովուն վրայ ափ չունինք:

Պ.- *Այս հարցը յաճախ է ծագում առաջին հայեացքից, երբ մօտե-
նում ենք Սեւ Ծով հասկացողութեանը զուտ որպէս ծով նկատառումով:*

*Խօսքը գնում է աշխարհագրական մի հասկացողութեան մասին,
այսինքն՝ մի շրջան, որ ոչ միայն ներառում է Սեւ Ծովը, այլ նաեւ՝ նրա
յարակից բոլոր շրջանները, տարածաշրջանները: Եւ այդ առումով
Հայաստանը ի հարկէ հանդիսանում է Սեւծովեան մեծ տարածաշրջանի
անբաժանելի մասը, ինչպէս միւս երկրները, օրինակ՝ նոյն Ատրպէյճանը,
որը նոյնիսկ չունի ցամաքային կապ, օրինակ՝ Ալպանիան...:*

Հ.- Քանի՞ երկիրներէ կը բաղկանայ այս կազմակերպութիւնը:

Պ.- 11 երկրներէ: Ուրեմն թուարկեմ. Հայաստան, Ատրպէյճան, Վրաստան, Ռուսաստան, Ուքրանիա, Մոլտովա, Ռումինիա, Պուլկարիա, Ալպանիա, Թուրքիա, Յունաստան:

Հ.- Տնտեսական կազմակերպութիւն պէտք էք նկատել այս: Արդեօք անոր կողքին ունի՞ք քաղաքական ծրագիրներ:

Պ.- Կազմակերպութիւնը արդէն իր անուան մէջ բուն նպատակը տուած է՝ տնտեսական համագործակցութիւն: Այսինքն՝ հիմնական նպատակն է այս տարածաշրջանում ընդգրկուած երկրների միջեւ տնտեսական համագործակցութեան հաստատումն ու զարգացումը: Տնտեսական յարաբերութիւններ ասելով մենք հետամուտ ենք ոչ միայն առեւտրական կամ արդիւնաբերական յարաբերութիւնների, այլեւ դրանց հետ առնչուող սոցիալական խնդիրների, շփումների եւ պետական կառավարման համակարգի, եւայլն:

Հ.- Այս կազմակերպութիւնը ո՞վ կը հովանաւորէ: Առանձին կազմակերպութիւն է, թե՞ ոչ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան մէջ բաժին մըն է:

Պ.- Սա տարածաշրջանային տնտեսական կազմակերպութիւն է, որը յատկապէս վերջին շրջաններում փորձում է շատ աշխոյժ փոխ համագործակցութիւն հաստատել նաեւ այլ միջազգային կազմակերպութիւնների հետ. մասնաւորապէս այսօր օրակարգի վրայ է համագործակցութիւն Եւրոմիութեան հետ:

Ինչպէս գիտէք, Եւրոմիութիւնը իր ընդարձակման ծրագիրների մէջ յատուկ կարեւորութիւն է տալիս այսպէս կոչուած լայն շրջանակների: Կարեւոր է համագործակցութիւն Եւրոմիութեան եւ Եւրոպական այլ կառույցների հետ:

Մենք ունենք մեր հաստատուած փոխ յարաբերութիւնները այլ միջազգային քաղաքական թէ՛ տնտեսական կառույցների հետ, որոնց միջոցով փորձում ենք որոշակի ծրագիրներ իրագործել:

Հ.- Դուք որպէս ներկայացուցիչ այս կազմակերպութեան, կապուած էք արտաքին գործոց նախարարութեան:

Պ.- Ունենք նոյն կարգավիճակը, ինչպէս Հայաստանի այլ ներկայացուցիչները միջազգային կառույցների մօտ: Դա լինի Մ.Ա.Կ.ում, լինի դա Եւրոմիութիւնում...:

Հ.- Հայաստանի Հանրապետությունը արդեօք առաջին օրէ՞ն մաս կազմեց այս կազմակերպութեան:

Պ.- Այո, Հայաստանը հանդիսանում է հիմնադիր անդամներից մէկը այս կազմակերպութեան:

Հ.- Դուք առաջի՞ն դեսպանն էք հոս:

Պ.- Ինչպէս ասացի, 2001-ին հաստատուած է այս կազմակերպութիւնը եւ 2005-ից եմ այստեղ, ինձանից առաջ մեր Արսէնն այստեղ էր: Իմ օրօք գրասենեակի գործունէութիւնը աւելի է ընդարձակուել:

Հ.- Այս տարիներուն իրապէս Հայաստանը կրցա՞ւ օգուտ մը քաղել այս կազմակերպութենէն, բացի այն իրողութենէն, որ Ռուսաստանէն արդէն Հայաստան կ'օգտուէր:

Պ.- Կազմակերպութիւնը հիմնուած չէ ապահովելու տնտեսական անմիջական շահոյթ: Աշխատում ենք մի շարք ծրագրերի վրայ: Պէ՛տք է խոստովանեմ, որ դրանք որոշակի դժուարութիւններ են բերում այդ ծրագիրը կեանքի կոչելու, իրագործելու առումով, որովհետեւ, ցաւօք սրտի, մեր տարածաշրջանում առայժմ կան խնդիրներ, որոնք դժուար որ հասցնեն այդ տնտեսական համագործակցութեան ցանկացուած մակարդակին, սակայն դա մի վայր է, լսարան, որտեղ հնարաւորութիւն է ընձեռում կազմակերպութեան անդամ բոլոր երկրներին իրենց տեսակէտները յայտնել:

Հ.- Անցնող գոնէ հինգ տարիներուն Հայաստանի տարածաշրջանին մէջ գոնէ 3-4 մեծ իրագործումներ տեղի ունեցան եւ ասոնցմէ մի՛շտ Հայաստանը դուրս մնաց: Արդեօք այս կազմակերպութեան անդամ միւս հանրապետութիւններէն թելադրութի՞ւն եղաւ ընդգրկելու Հայաստանն ալ այս ընդարձակ ծրագիրներուն մէջ:

Պ.- Այս կազմակերպութիւնը որեւէ առնչութիւն չունի այլ ծրագրերի հետ, որովհետեւ դրանք իրագործուելու են մասնակից երկրների միջեւ ձեռք բերուած պայմանագրերի հիման վրայ, ունենալով հանդերձ տնտեսական բնոյթ:

Կազմակերպութեան նպատակը, ասեմ, մի քիչ այլ է՝ մշակել այնպիսի ծրագրեր, որոնք ընդգրկուելու են բոլոր երկրները միատեղ: Մեծ Մեծովեան տարածաշրջանը անբաժանելի մի մաս է: Այսինքն այն կարելի չէ մասնատել: Ի հարկէ, Հայաստանը օժանդակում է կազմակերպութեան այս մօտեցմանը: Ասեմ որ այս տարի Յունիսին այստեղ իսթանպուլում կատարուեց գազաթափողով, որտեղ կազմակերպութեան

15-ամեակի նշումը եղաւ եւ այսօր կայ այնպիսի մի տրամադրութիւն որ այդ գազաթափողովի շրջանակներում փորձ է արուելու ոչ միայն տարուած աշխատանքի քննարկումները կատարելու, այլ նաեւ որոնելու նոր ուղիներ, որպէսզի կազմակերպութիւնը ընթանայ յառաջ: Ասացի արդէն կայ եւրոպական կառոյցների հետ համագործակցութեան աւելի սերտացում եւ կայ այլ միտում եւս. կազմակերպութիւնը ոչ միայն զբաղուի վերացական ծրագրերով, այլ նաեւ կենտրոնանայ որոշակի գործնական ծրագրերի վրայ:

Հ.- Անշուշտ մեծ պետութիւնները այս պարագային կրնան շահագրգռուած ըլլալ այս կազմակերպութեամբ: Արդեօք Ամերիկան երբեք շահագրգռութիւն ցուցաբերա՞ծ է այս կազմակերպութեան նկատմամբ:

Պ.- Բացի անդամ երկրներից, մեր կազմակերպութիւնը ունի նաեւ դիտող երկրների կարգավիճակ: Մօտ մէկ տարի է արդէն դիտող երկրի կարգավիճակ ունի նաեւ Ամերիկան, այսինքն՝ ամերիկեան իշխանութիւնների ներկայացուցիչները պարբերաբար մասնակցում են համարեա թէ մեր բոլոր աշխատանքային հանդիպումներին, նախարարական հանդիպումներին, որոնք կայանում են: Ամերիկան չենք կարող ասել որ շատ աշխոյժ է կազմակերպութեան շրջանակներում, բայց արդէն հանդէս է գալու որոշակի առաջարկներով որպէս դիտորդ:

Հ.- Ձեր այս գրասենեակին մէջ քանի՞ հոգի կը կազմէ անձնակազմը:

Պ.- Մեր այս գրասենեակին մէջ երկու դիւանագէտ ենք: Սակայն հերթափոխութիւն է կատարուում ու մեր ընկերը վերադարձել է Երեւան, հիմա մօտաւորապէս երկու շաբաթից նրան փոխարինողը կը գայ. ունենք նաեւ քարտուղարներ:

Հ.- Անշուշտ այս Սեւծովեան Համագործակցութեան Կազմակերպութեան հետ ձեր մասնակցութիւնը առիթ կը ստեղծէ որ նաեւ քաղաքական շփումներ ունենաք...: Բնական է որ երկխօսութեան ալ դուռեր բացուին ձեր առաջ:

Պ.- Մեր այս պաշտօնին մէջ չի մտնում ուղղակի շփումներ հաստատել թուրքական իշխանութիւնների հետ: Բայց անշուշտ կայ որոշակի տրամաբանութիւն եւս այս ձեր հարցումին պատասխանելով: Այո՛, ունենք որոշակի շփումներ, որոնք բնականաբար անպաշտօն են: Այս կազմակերպութեան նախագահութիւնը այժմ ստանձնել է թուրքիւն եւ առանց խտրականութիւն անելու կատարում է իր գործը:

Հ.- Գրեթէ մեր բոլոր դեսպանատուները այցելած եմ եւ տուած եմ նման

հարց: Արդեօ՞ք տեղւոյն հայ համայնքը՝ պոլսահայութիւնը, օգտակար կ'ըլլայ ձեր ներկայացուցչութեան: Նման գրասենեակ մը պահել Իսթանպուլի մէջ պիտի ըլլայ մեծածախս մեր հանրապետութեան արտաքին գործոց նախարարութեան համար:

Պ.- Նոր եմ վերադարձել պոլսահայ համայնքի ներկայացուցիչների հետ Աղթամարից, ուր բացումը կատարուեց վերանորոգուած եկեղեցու: Ճանապարհին խօսք եղաւ ու պոլսեցիները ասացին Հայաստանից եկող պատուիրակներին որ ես պոլսահայ պատուիրակութեան մաս եմ կազմում:

Ուրեմն, ախր, ի հարկէ չա՛տ մեծ օժանդակութիւն կայ համայնքի կողմից, սկսած դրանից որ այս յարկաբաժինը, որ մենք վարձակալում ենք, պատկանում է հայ կաթողիկէ համայնքի հիմնադրամին: Ես չատ լաւ յարաբերութիւններ ունեմ նրանց հետ:

Օժանդակում են բարոյապէս: Շա՛տ բարեկամներ ունենք Իսթանպուլի հայ համայնքի մէջ եւ երբ որեւէ խնդիր է լինում, մի՛շտ օգնում են մեզ:

Հ.- Մաս կը կազմէ՞ք երբեմն այս համայնքի կրթական ու մշակութային կեանքին ու գործունէութեան:

Պ.- Ես պոլսահայ համայնքի այսպէս կոչուած «սիրոյ սեղաններ»ին անբաժան մասն եմ կազմում:

Հ.- Իսկ ձեր յարաբերութիւնները Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր ինչպէ՞ս են:

Պ.- Շատ ջերմ ու գործնական:

Հ.- Ամուսնացա՞ծ էք, ընտանիք ունիք:

Պ.- Այո՛:

Հ.- Ձեր զաւակը հոս հայկական դպրոց կ'երթա՞յ:

Պ.- Չէ, ասեմ որ երկրի օրէնքով արտասահմանցին իրաւունք չունի իր երեխան յանձնել փոքրամասնութիւնների պատկան կրթական դպրոցի: Դա հնարաւոր է անել, սակայն յատուկ թոյլտուութիւն է պէտք:

Հ.- Նախքան ձեր այս դիւանագիտական պաշտօնին կոչուիլը, ո՞ր էք պաշտօնավարած արտասահմանի մէջ:

Պ.- Ես աշխատում եմ 93 թուականից արտաքին գործերի նախարարութիւնում: Հիմնականում կենտրոնում եմ աշխատել: Մէկ տարի

նախարարութիւնից դուրս եմ ելել, այդ ընթացքում եղել եմ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան ներկայացուցիչը Հայաստանի մէջ:

Հ.- Ուրեմն արտասահմանեան մասնագիտական ձեր առաջին պաշտօնը այս է եղած: Իսկ ձեր բարձրագոյն կրթութիւնն ի՞նչ է եղած:

Պ.- Աւարտել եմ Երեւանի Պետական Համալսարանի թուրքագիտութեան բաժինը, արեւելեան լեզուի բաժնում: Իմ ուսուցիչը պոլսեցի է եղել եւ թուրքերէն խօսում եմ:

Հ.- Հայաստանցիները դժբախտաբար մեծ թիւով կ'արտագաղթեն դէպի Եւրոպա, նաեւ՝ Թուրքիա: Արդեօք այս ներկայացուցչութիւնը անոնց օգտակար ըլլալու իրաւունքը ունի՞: Գիտեմ թէ այս գրասենակը հիւպատոսարան կամ դեսպանատուն չէ: Մարդկային պէտքերուն համար ձեռք կ'երկարէ՞ք:

Պ.- Ձեր հարցի պատասխանը թէեւ դուք տուած եղաք: Նման հարցեր յառաջանալու պարագային հայաստանցիները հնարաւորութիւն ունեն դիմելու Ռուսաստանի հիւպատոսարանը այստեղ: Հիւպատոսարանը իր ծառայութիւնները նրանց տրամադրում է:

Սակայն նրանք գիտեն որ համայնքում կան բազմաթիւ բարերարներ եւ դիմում են պատրիարքարան կամ այլ եկեղեցիների պատասխանատուներին:

Հ.- Ըստ ձեր գնահատականին, Հայաստանէն Թուրքիա եկած եւ հոս աշխատող քանի՞ հայ կայ:

Պ.- Ես ասեմ չկայ որեւէ յստակ վիճակագրութիւն: Տրուած թուերը մտացածին են: Վերջին շրջանին տրուած շրջանառութեան թիւը թուրքական իշխանութիւնների կողմից տրուած 70 հազար հայ է, ինչ որ ուղղակի աբսուրդ է եւ դա պէտք է հասկանալ որ քարոզչական նպատակներով յայտարարուած թիւ է: Ես չեմ ուզում որեւէ սխալ թիւ ասել, բայց իմ արդար տպաւորութեամբ այստեղ ապրող հայերի թիւը չի գերազանցում 15-20 հազար մարդ:

Հիմնականում կենտրոնացուած են իսթանպուլում եւ այն էլ հայաշատ շրջաններում, ինչպէս՝ պատրիարքարանի մօտ, Գում Գափուում: Որոշ քանակութեամբ հայեր կան Սեւծովեան շրջանում եւ շատ քանակութեամբ հայեր վերջին շրջաններում գալիս են ամառը եւ Անթալիայում աշխատում:

Հ.- Ըսիք թէ Աղթամար էիք, ի՞նչ եմ հայու ձեր զգացումները եկեղեցւոյ վերաշինութեան կամ վերանորոգման առթիւ:

Պ.- Ասեմ. բաւարարուած եմ իրօք, որովհետեւ ցեղասպանութիւնից յետոյ առաջին անգամ լինելով վերականգնուած է մի յուշարձան, որը պատկանում է մեր ազգին: Իրօք վերականգնուած է չա՛տ լաւ: Հայաստանեայց Եկեղեցու մասնագէտների եւ վերականգնման աշխատանքին բոլոր մասնակցողների կարծիքը այն էր, որ առանձին թերացումները միտումնաւոր չէին: Այսինքն հոյակապ աշխատանք է տարուել: Իսկ ոչ լիարժէք, որովհետեւ դա վերականգնուել է ոչ թէ որպէս եկեղեցի, այլ որպէս թանգարան: Եւ ցանկալի պիտի լինէր որ այդ եկեղեցին փոխանցուէր իսկական տէրերին, այսինքն այսօր դա Պոլսոյ Հայութիւնն է, յանձին Պոլսոյ Պատրիարքարանին: Այսօր Հայերը ապրում են Թուրքիայի տարածքին, ու նրանք այս երկրի քաղաքացիներն են:

Հ.- Գիտնալով որ թրքական հարցերու մասնագէտ էք, արդեօք ժամանակ կը գտնէ՞ք հոս ձեր մասնագիտութեան հետ կապուած արխիւային եւ կամ այլ նիւթեր ուսումնասիրելու, գէթ թանգարաններու եւ գրադարաններու մէջ հայերու հետ կապուած նիւթեր յայտնաբերելու: Այդ ժամանակը ունի՞ք:

Պ.- Ո՛չ: Իսթանպուլում եղած իւրաքանչիւր օրս արդէն ուսումնասիրութեան նիւթ է, սակայն ոչ որոշակի կերպով, ձեր հարցըցած կերպով: Այժմ հետաքրքրում է պետութեան նորագոյն շրջանը, այդ էլ արդէն անում եմ գործնականապէս:

Իսթանպուլ, Մարտ 2007

«ՆՈՐ ՕՐ», 28 Ապրիլ - 14 Յուլիս 2007

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՄԵՐ ԱՆՄԱՀՆԵՐՈՒՆ ՀԵՏ ՊՈԼՍՈՅ ԳԵՐԵՉՄԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՉ

Պոլսոյ հանդիպումներու այս շարքը վերջ պիտի չգտնէր եթէ վերջին մեր այցելութիւնը չտայինք ա՛յն անմահներուն, որոնք կերտեցին պոլսահայ ընկերային, մշակութային, կրթական ու քաղաքական կեանքը: Անո՛նց, որոնց անիւնները կը հանգչին Ծիշլիի թէ Սկիտարի, Պալըքլիի թէ տասը այլ գերեզմաններու մէջ: Հապա անո՛նց, որոնք աքսորի ու Մեծ Եղեռնի օրերուն նահատակուեցան ու մնացին անգերեզման: Թող որ անոնց ոգին ամփոփուի Սկիտարի գերեզմանատան այն փոքրիկ յուշակոթողին տակ, ուր արձանագրուած կը մնան «Ընդհ. Նահատակաց» զոյգ մը բառերը: Հո՛ն եւս ծունկ մը աղօթք ըրի ի յիշատակ Զօհրապներուն, Վարուժաններուն ու Տաղաւարեաններուն:

Պոլիս այցելութիւնս նախաձեռնած էի ներկայ ըլլալու համար Աղթամարի Ս. Խաչ եկեղեցւոյ վերանորոգման աշխատանքներու բացման հանդիսութեան: Ծամբայ էի ելած այդ նպատակով: Դեռ դպրոցական գրասէղան-



Ընդհանուր Նահատակաց յուշարձանը:

ներէն տպաւորուած էի Վանայ ծովով ու անոր վրայ գտնուող Աղթամարով: Հերոսական ինչ-ինչ պատկերներ հիւսուած կը մնային յիշատակներուս Վասպուրական աշխարհէն ու Վանի եւ Այգեստանի մեր հերոսական ազատագրական պայքարներէն: Վերջապէս, Արմենական Կուսակցութեան ծնունդ տուող Վանը կը մնար այս բոլոր տարիներուն իմ մտածումներուս ու հոգեկան ապրումներուս մէջ իր երեք Մկրտիչներովը՝ Խրիմեան, Փորթուգալեան, Աւետիսեան, որոնց ազգային գաղափարական ուղիով էր քալած ամբողջ մեր սերունդը:

Սակայն, նկատի ունենալով թէ՛ Մայր Աթոռին եւ Պոլսոյ պատրիարքական շրջանակնե-

րուն, եւ թէ՛ իմ կուսակցութեանս որդեգրած դիրքը Աղթամարին վերապահուած այս տեսակ բացման մը հանդիսութեան պարագաներուն հանդէպ, մտածել տուին որ ուրիշ պատեհ առիթով կատարեմ այս ուխտագնացութիւնը:

Այդուհանդերձ, Պոլսոյ գերեզմաններուն ու անոնց բնակիչներուն այցը կրկնակիօրէն կը դասեմ ուխտագնացութիւն մը: Անշուշտ Յեղասպանութեան վերջին զոհին՝ Հրանդ Տինքի շիրիմին ու անոր հարազատներուն այցելութիւնս նաեւ եղանշանակալի:

«Պոլիսը Իր Հայութեամբ» այս շարքին առաջինը նուիրած էի Տինքին:



Հրանդ Տինքի շիրիմը:

Աղթամարի գծով կորսնցուցած առիթս, միւս կողմէ, օգտակար եղաւ ինծի՝ ճանչնալու այսօրուան Իսթանպուլի հայ կեանքը իր ուրախ ու տխուր երեսներովը: Համայնքային եռուն կեանք մը՝ իր անցեալի փառքովն ու այսօրուան հրամայականներովն ու մարտահրաւերներովը:

Հայ դպրոցներու բակերուն մէջ վազվզող մատղաշ աշակերտներով, հայկական եկեղեցիներու ծառայող հաւատացեալներով, հայատառ թերթերու բաժանորդներով, հայկական միութիւններու շուրջ հաւաքուած նոր սերունդով եւ վերջապէս հայոց պատրիարքութեան ունեցած հեղինակութեամբ մեր հարուստ անցեալի իր կալուածները, սրբատեղիները, ազգային հաստատութիւնները պաշտպանելու մարտերովը, Պոլիսը կը դասենք օրինակելի համայնքը մեր ազգային կեանքին:

Գերեզմաններու այցելութեամբ խոնարհելէ ետք ականաւոր հայերու անմար յիշատակին առաջ, մտածեցի որ լաւագոյնը ըրած պիտի ըլլայի եթէ անոնցմէ ոմանց մասին արձանագրեմ, այս իմ վերջին շարքով, Խորհրդային Հայաստանի լա՛ւ օրերուն հրատարակուած Հայկական Հանրագիտարանի էջերուն մէջ լոյս տեսած տողերը, որպէսզի ականդեմական մակարդակով մը զանոնք ներկայացնելու իրաւունքը ունենամ:

Այսօր Իսթանպուլը աւելի հայաբնակչութիւն ունի իր ազգային գերեզմաններուն մէջ, քան՝ Պոլսոյ թաղերուն: Իւրաքանչիւր հողակոյտի, գերեզմանաքարի ու դամբարանի տակ ննջող հայու շունչն է որ տակաւին կը շարունակէ տալ ապրելու եւ ստեղծագործելու կա՛մքը պոլսահայուն: Գաւառներէն եկող մեր գիւղացի ջրկիրներուն ու պալլըքճիներուն թէ Պոլսոյ ամիրաներուն, հայ եկեղեցւոյ ծառայութեան մտած թէ հայ գիրի հաւատացող այդ սքանչելի սերունդներուն յիշատակը հո՛ն է ամփոփուած:

Պետրոս Դուրեան

Պալեաններ

Գարեգին Եպս. Սրուանձտեանց

Մաղաքիա Արք. Օրմանեան

Խորէն Արք. Գալֆայեան (Նար-Պէլ)

Ռէթէոս Պէրպէրեան

Յովհաննէս Հինդլեան

Յակոբ Մարթայեան (Տիլաշար)

Մատթէոս Զարիֆեան



Կոլոտ Պատրիարքի շիրիմը:

... Ու դեռ շարքը կրնայ շարունակուիլ մանաւանդ Կոլոտ պատրիարքով, Գալֆայեան կոյսերով ու աւելի արդի շրջանին Տրապիզոնի, Գալուստեան, Գազանճեան պատրիարքներով:

Պոլիսը աւելի հայացած վերադառնալու պատիւին արժանացուց զիս, որուն համար խորապէս երջանիկ եմ:

Բարի յիշատակը անոնց դեռ երկա՛ր ատեն պիտի մնայ մեր հոգիներուն մէջ:



ՊԵՏՐՈՍ ԱՅՐԱՀԱՄԻ ԴՈՒՐԵԱՆ (ԶԸՄՊԱՅԵԱՆ)

(Մայիս 20, 1851, Սկիւտար, Կ. Պոլիս - 21 Յունուար 1872, Կ. Պոլիս), հայ բանաստեղծ, դերասան: Աւարտած է Սկիւտարի ձեմարանը (1867): Եղած է դեղագործի աշկերտ, գրագիր, տնային ուսուցիչ, դերասան: Գրած է բանաստեղծութիւններ, տրամաներ, զբաղած է հրապարակախօսութեամբ (եղած է «Օրագիր ծիլն Աւարայրոյ» թերթի օգնական խմբագիր), կատարած է թարգմանութիւններ (Վ. Հիւկօ, «Թագաւորը կը զուարճանայ», Ու. Շէյքսպիր, «Մակպէտ» եւայլն): 1869-ին եւ 1871-ին «Օրագիր ծիլն Աւարայրոյ», «Մեղու», «Եփրատ», «Մամուլ» թերթերուն մէջ տպագրած է տաղեր: Գրական ժառանգութեան զգալի մասը (երգիծական ոտանաւորներ, «Տիգրան Բ.», «Կործանումն Հռովմայ», «Շահատակութիւնք Հայոց» ողբերգութիւնները, թարգմանութիւնները, բազմաթիւ նամակներ) չեն պահպանուած:

Դուրեանի թատերախաղերը նպաստած են հայ թատերական արուեստի զարգացման: Դուրեան գրած է «Տարագիր ի Սիպիրիա» (նուիրուած Միքայէլ Նալպանտեանի) այլաբանական ողբերգութիւնը, «Վարդ եւ Շուշան կամ Հովիւք Մասեաց» (1867) հովուերգական մելոտրաման, ապա՝ «Սեւ հողեր կամ յետին գիշեր Արարատեան» (1868), «Արտաշէս աշխարհակալ» (1869), «Անկումն Արշակունի Հարստութեան» (1870), «Ասպատակութիւնս պարսկացի Հայս կամ աւերումն Անի մայրաքաղաքին Բագրատունեաց» (1870) պատմական ողբերգութիւնները:

Անդրադարձեր է հայոց պատմութեան այն անցքերուն, երբ ժողովուրդը ազատագրական պայքարի մէջ է եղեր օտար հրոսակներու դէմ: Ան 19-րդ դարու հայ առաջին գրողն է, որ պատմական անցեալը արտայայտած է պատկերաւոր կերպով ժողովուրդի բողոքն ու ատելութիւնը թագաւորներու եւ նախարարներու հանդէպ:



Պետրոս Դուրեանի շիրիմը:

Հրաժարելով պատմա-հայրենասիրական ողբերգութեան թեմայէն՝ 1871-ին գրեր է «Թատրոն կամ թշուառներ» տրաման, Գ. Սունդուկեանէն եւ Յ. Պարոնեանէն անկախ յանգեր է արդիական թեմայի անհրաժեշտութեան գաղափարին: Հասարակական կեանքի մէջ տեսնելով աղքատացում ու թշուառութիւն՝ ցոյց տուած է անոնց բարոյական-հոգեկան ծանր հետեւանքները:

Դուրեան հայ գրականութեան մէջ ստեղծեր է ռոմանտիկական տրամային բնորոշ նմոյշներ, յաղթահարել դասականի կապանքները ու պայմանականութիւնները: Անոր տրամաները, բացառութեամբ «Տարագիր ի Սիպիրիա»ի եւ «Թատրոն կամ թշուառներ»ը, հեղինակի կենդանութեան օրով բեմադրուեր են «Թատրոն Օսմանիէ» մէջ եւ մեծ յաջողութիւն ունեցեր են:

Դուրսէն մեզի կը հասնի 39 բանաստեղծութիւն, որոնցմէ 26-ը գրուած են 1871-ին: Հայրենասիրական մի քանի երգերու մէջ «Վիշտք Հայուն», «Իղձք առ Հայաստան», նկարագրելով Հայաստանի ծանր վիճակը Դուրեան փրկութեան ելքը կը համարէ լուսաւորութիւնն ու

միաբանութիւնը, կոչ կ'ընէր դիմել ինքնապաշտպանութեան («Նոր սեւ օրեր»)....:

...Դուրեան վերականգնեց միջնադարեան քնարերգութեան հետ պատմականօրէն խզուած կապը, հրաժարելով դասականութենէն, բանաստեղծութեան հաղորդեց զգացմունքային խորութիւն, հոգեբանութիւն: Ան խոր հետք ձգեց հայ բանաստեղծութեան վրայ: Դուրեանին բարձր կը գնահատեն, Յ. Թումանեան, Գ. Զօհրապ, Մ. Մեծարենց, Դ. Վարուժան, Վ. Տէրեան, Ե. Չարենց, Պ. Սեւակ եւ իտալացի, ռուս, ֆրանսացի, գերմանացի գրողներ: Թարգմանուած է բազում լեզուներու, որոնց կարգին թուրքերէնի:



Բիւզանդ Բէշեանի շիրիմը:

ՊԱԼԵԱՆՆԵՐ

ԺԸ-ԺԹ դարերու, հայ ճարտարապետներու, արուեստագէտներու եւ ազգային-հասարակական գործիչներու ընտանիք Կ. Պոլսոյ մէջ: Ընտանիքի նախահայրը Պալի Քալֆան է, Կեսարիայէն: 1788-ին նշանակուել է պալատական ճարտարապետ: Որոշ իրավիճակներու մէջ եղեր է նաեւ սուլթան Սելիմ Գ-ի խորհրդականը: Կառուցեր է Սարայ Պուրնոյի, Պեչիկթաշի թագաւորական, նախկին պէյլերպէյի եւ այլ սուլթանական պալատներ:



Արքունի ճարտարապետ Պալեաններու շիրիմները:

...Պալեանները կառուցեր են Գումգաբուլյի Ս. Աստուածածին Մայր եկեղեցին (1828, ճարտարապետ Գ. Պալեան), Տոլմապահէի պալատը (աւարտեր է 1856-ին, ճարտարապետ Կ. Պալեան), Պէչիկթաշի Ս. Աստուածածին եկեղեցին (1838, ճարտարապետ Կ. Պալեան)...



ԳԱՐԵԳԻՆ ԵՊՍ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

(Նոյեմբեր 17, 1840, Վան - Նոյեմբեր 17, 1892, Կ. Պոլիս), հայ բանասէր ու բանահաւաք, ազգագրագէտ, հասարակական գործիչ, նախնական կրթութիւնը կը ստանայ Վանի մէջ, այնուհետեւ աւարտեր է Վարազայ վանքի ժառանգաւորաց դպրոցը, ուր կարգուեր է ուսուցիչ: Եղեր է «Արծուի Վասպուրական» թերթի խմբագրի տեղակալ, այս պարբերական թերթին մէջ լոյս կը տեսնէին յօդուածներ, ուր կ'արծարծուէին ազգային ազատագրական պայքարի գաղափարները: 1865-ին «Արծուի Տարօնոյ» նորաբաց շաբաթաթերթի խմբագիր: Խրիմ-եան Հայրիկի հետ, որպէս նուիրակ ու քարոզիչ, 1860-61-ին շրջագայեր է զանազան գաւառներ, ուր հաւաքեր եւ պարբերաբար հրապարակեր է նաեւ ժողովուրդին բառ ու բանի նմոյշներ:

...Սրուանձտեանց իրաւամբ կը համարուի հայ բանահաւաքներու ու



ազգագիրներու ռահվիրան, որու մէջ ինքնօրինակ ձեւով դրսեւորւեր են 1850-60-ական թուականներու հայ ազգային լուսաւորիչներու եւ 1870-80-ական թուականներու լուսաւորական ռամկավարներուն բնորոշ աշխարհահայեացքներուն գիծերը: Անոր գործունէութիւնը իր ապրած ժամանակաշրջանի հայ հասարակական մտքի առաջաւոր գործիչներու արծարծած ժողովրդական-հայրենասիրական եւ ազգային-ազատագրական գաղափարներու իւրովի արձագանգն է:



Սրուանձտեանցի շիրիմը:

ՄԱՂԱՔԻԱ (ՊՕՂՈՍ) ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ

(Փետրուար 2, 1841, Կ. Պոլիս - Նոյեմբեր 6, 1918, Կ. Պոլիս) ազգային-պահպանողական ուղղութեան հասարակական-քաղաքական գործիչ, հրապարակախօս, պատմաբան, բանասէր, Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարք (1896-1907): Սկզբնական կրթութիւնը ստացեր է ծննդավայրին մէջ, 1851-էն ուսումը շարունակեր է Հռոմի Անտոնեանց վանքի մէջ 1858-էն՝ Վատիկանի հոգեւոր դպրոցը, ընդունելով կաթողիկոսութիւնը: 1865-ին ստանալով աստուածաբանութեան մագիստրոսի աստիճան՝ վերադարձեր է Կ. Պոլիս, 1867-ին նշանակուել է Հռոմի Անտոնեանց վարժարանի տեսուչ:



Օրմանեանի շիրիմը:

1868-ին ստացեր է փիլիսոփայութեան, աստուածաբանութեան, եկեղեցական իրաւագիտութեան մագիստրոսի գիտական աստիճան, ընտրուելով Հռոմի աստուածաբանական ակադեմիայի անդամ: Տիրապետեր է բազմաթիւ լեզուներու (իտալերէն, ֆրանսերէն, յունարէն, լատիներէն, արաբերէն եւ թուրքերէն), եղեր է իտէալիստական փիլիսոփայութեան հետեւող:

Չգիմանալով Հռոմի կաթողիկ հոգեւորականութեան հալածանքներուն, 1870-ին կրկին վերադարձեր է Կ. Պոլիս: 1875-ին Խաւրիոյ մէջ հանդիպեր է Զ. Կարիպալտիին, որու հետ քննարկեր է հայ եւ իտալացի ժողովուրդներու ազատագրական պայքարին վերաբերող հարցեր: Որոշելով իրեն նուիրել Հայաստանեայց եկեղեցիին, ժողովուրդի լուսաւորութեան գործին Օրմանեան 1877-ին Կ. Պոլսոյ մէջ հրաժարեր է կաթողիկոսութենէն, 1874-ին օծուել է Հայ Առաքելական եկեղեցւոյ ծայրագոյն վարդապետ:

Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարք Ն. Վարժապետեանին օգնել է հայկական հարցի արծարծման գործին, կազմելով եւրոպական պետութիւններու դեսպանատուներու, արտաքին գործերու նախարարութիւններու ղեկա-

վարներուն ուղղուած գրութիւններ, կատարել խորհրդատուի, բանագնացի պարտականութիւններ:

1880-ին ընտրուեցին Բարձր Հայքի հոգեւոր առաջնորդ, իր աթոռանիստ Կարին քաղաքին մէջ կապ հաստատելով «Պաշտպան Հայրենեաց» ազատագրական կազմակերպութեան ղեկավարներուն հետ: 1887-ին ազատագրական ոգեւորումներով մեկնեցին Էջմիածին, Գէորգեան Ճեմարանի մէջ դասաւանդելով աստուածաբանութիւն, սակայն Օրմանեանի ազատախոհ ճառերը գրաւեր են Ռուսաստանի ներքին գործերու նախարարութեան ուշադրութիւնը, եւ ան արտաքսուեցին Էրզրում:

1889-ին նշանակուած է Արմաշի վանքի վանահայր եւ իր կազմակերպած դպրեվանքի տեսուչը: Ընտրուելով Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարք՝ Օրմանեան Ապտիւլ Համիտ Բ. (սուլթանի) արիւնոտ բռնապետութեան պայմաններու մէջ վարեցին Գեորգի, Հափաւոր, պահպանողական քաղաքականութիւն, յարուցելով հայ մտաւորականութեան, քաղաքական կուսակցութիւններու առաջնորդներու դժգոհութիւնը: 1906-ին, Հայոց Ազգային Սահմանադրութեան վերաքննման եւ, փաստօրէն,

արգիւման վերաբերեալ Ապտիւլ Համիտ Բ.ի հրամանի առիթով Օրմանեան իրեն ներկայանալով հրաժարած է, որը չէ ընդունուած:

1908-ի Յուլիս 16-ին Կ. Պոլսոյ մէջ կազմակերպուած բազմամարդ ցոյցի մասնակիցները կը խուժեն պատրիարքարան եւ Օրմանեանը կը յայտարարեն պաշտօնանկ: 1914-ին հաստատուելով Երուսաղէմի Ս. Յակոբ վանքը, շարունակեցին գրական-պատմագիտական աշխատութիւններու շարադրանքը: «Մասիս», «Արարատ» եւ այլ պարբերականներու մէջ տպագրեցին հրապարակախօսական, դաւաբանական, գիտական յօդուածներ: Տարբեր լեզուներով, հրապար-



Նարոյեան Պատրիարքի շիրիմ:

րակեր է դաւանաբանական գրքոյկներ («Հայ արեւելեան կաթողիկէայք» - 1870, իտալերէն, «Ռեվերսորուս կամ Հայք եւ պապութիւն» - 1872, իտալերէն, «Արեւելեան կաթողիկաց կրօնական ազատութիւնը եւ քաղաքական իրաւունքները» - 1872, ֆրանսերէն, «Վատիկան եւ Հայք - 1873, ֆրանսերէն), որոնք յետագային Հռոմի Պապի յատուկ կոնդակով արգիւրուեցին:

Օրմանեանի ամենախոշոր երկը՝ «Ազգապատում», հարուստ նիւթ կը պարունակէ ոչ միայն հայ եկեղեցւոյ, այլեւ հայ ժողովուրդի քաղաքական-մշակութային պատմութեան վերաբերեալ:

Արժէքաւոր աշխատութիւն է նաեւ «Խոհք եւ խօսք»ը (1929):



ԽՈՐԷՆ ԳԱԼՖԱՅԵԱՆ (ՆԱՐ-ՊԷՅ)

(Հոկտեմբեր 1, 1832 - Կ. Պոլիս, Նոյեմբեր 4, 1892), հայ բանաստեղծ, թատերագիր, թարգմանիչ, հրապարակախօս, եկեղեցական գործիչ: Սկզբնական կրթութիւնը ստացեր է իր ծննդավայրին մէջ, ապա՝ Վենետիկի Ռափայէլեան վարժարանը: Գործօն մասնակցութիւն ունեցեր է Մխիթարեան Միաբանութեան աշխատանքներուն մէջ, «Բազմավէպ»ի հրատարակութեանը, ուր տպագրեր է ինքնուրոյն եւ թարգմանական (Շէքսպիրէն, Հիւկոյէն, Լամարթինէն, Ալֆիերիքէն) երկեր: 1857-ին, հրաժարելով Մխիթարեաններէն, մեկնել է Փարիզ, մասնակցելով Գ. Ալվազովսկիի «Մասեաց աղաւնի» հանդէսի հրատարակմանը, միաժամանակ դասաւանդելով Հայկազեան վարժարանի մէջ:

1861-ին Թէոդոսիայի Խալիբեան վարժարանի ուսուցիչ էր: 1867-ին էջմիածնի մէջ կը ձեռնադրուի եպիսկոպոս: Թարգմաներ եւ հրատարակեր է «Դաշնակէ Լամարթինիա» (1859) բանաստեղծութիւններու



Նար-Պէյի շիրիմը:

ժողովածուն: Նար-Պէյի չափածոյ գործերու առաջին ժողովածուն՝ «Վարդենիք»ը (1863), ունի էրրոտիզմի տարրեր: Ասոր քննադատութեամբ հանդէս կու գայ Մ. Նալպանտեանը «Աղցմիք» պատասխան բանաստեղծութեամբ: «Ստուերք հայկականք» (1874) եւ «Քնար պանդխտին» (1868) բանաստեղծութիւններու ժողովածուններուն մէջ Նար-Պէյ երգեր է պանդուխտի ցաւերն ու յոյգերը: 1870-ին հրատարակեր է «Հայոց եկեղեցին եւ անդրալեռնականք» աշխատութիւնը, բազմաթիւ յօդուածներ, ուր անդրադարձեր է Հայաստանի անազատ վիճակին, ապագայ Հայաստանի ընկերաքաղաքական կարգին վերաբերող հարցերուն: 1877-78-ի ռուս-թրքական պատերազմէն ետք, ան ուղարկուեր է Ս. Փեթերբուրկ՝ դիւանագիտական բանակցութիւններու, ապա Խրիմեան Հայրիկի պատուիրակութեան կազմին մէջ է Պերլինի վեհաժողովին որպէս թարգմանիչ ու խորհրդական:



Ռ. Պերպերեանի շիրիմը:

ՌԷԹԷՈՍ ՅԱԿՈԲԻ ՊԵՐՊԵՐԵԱՆ

(Հոկտեմբեր 10, 1848, Կ. Պոլիս, Խասգիւղ - Ապրիլ 7, 1907, Կ. Պոլիս), հայ բանաստեղծ, մանկավարժ, հրապարակախօս, տնտեսագէտ: Աւարտեր է Ներսէսեան վարժարանը (1866), այնուհետեւ զբաղեր է ուսուցչութեամբ: 1876-ին հիմներ է Պէրպէրեան վարժարանը:

Ռ. Պէրպէրեանի բանաստեղծութիւնները («Առաջին տերեւք», 1877, «Խոհք եւ յուշք», 1904, ժողովածուներ) կը կրեն ֆրանսական ռոմանթիզմի ազդեցութիւնը, մասնաւորապէս՝ Լամարթինի, որմէ թարգմաններ է շարք մը բանաստեղծութիւններ («Մահ Սոկրատայ», «Լիճ» եւ այլն):

Անդրանիկ բանաստեղծութիւնները սիրոյ եւ բնութեան երգեր են՝ դասականի չյաղթահարուած ազդեցութեամբ, վերջին շրջանի բանաստեղծութիւններուն մէջ կը գերակշռէ փիլիսոփայական խոհը: Լեզուն գրաբար է եւ կիսագրաբար:

Ռ. Պէրպէրեանի մանկավարժական-բարոյագիտական հայեացքները («Դաստիարակի մը խօսքերը», 1901, «Դպրոց եւ դպրութիւն», 1907 եւ այլն) հիմնուել են գեղեցիկի, բարիի, ճշմարիտի սկզբունքներու վրայ:

...Մանկավարժական գործունէութեան զուգընթաց, հրապարակախօսներ է ժամանակի մամուլի մէջ, եռանդուն կերպով մասնակցելով հասարակական կեանքին: Որպէս մտածող եւ մանկավարժ ռամկավար էր...:



Յովհաննէս Հինդլեանի շիրիմը:



ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀԻՆԴԼԵԱՆ

(1866, Կ. Պոլիս - Մարտ 16, 1950, Կ. Պոլիս), մանկավարժ, հասարակական գործիչ: Ուսումը ստացած է ծննդավայրի Ներսէսեան-Երմոնեան եւ Պէրպէրեան վարժարանները: Աշխատել է Պէշիկթաշի Մաքրուհեան, Ս. Խաչ վարժարաններու մէջ, դասաւանդելով հայերէն, անգլերէն: Եղել է Մաքրուհեան, Թարգմանչաց (Օրթա գիւղ), Բերայի թաղային, Ազգային Կեդրոնական վարժարաններու տնօրէնը: Ընտրուել է ուսումնական խորհուրդի անդամ եւ ազգային երեսփոխան: Յառաջդիմական Միութեան նախագահ: 1909-ին, Գ. Մալաթեանի հետ Կ. Պոլսոյ մէջ հիմնել է «Նոր Դպրոցը»: Ուսումնասիրել է մանկավարժական պատմութիւն ու տեսութեան հարցերը: Հինդլեանի գրիչին կը պատկանին «Փունջ մանկավարժական բանախօսութեանց» հրապարակային դասախօսութիւններու շարքը (1901)...:

ՅԱԿՈԲ ՎԱՀԱՆԻ ՄԱՐԹԱՅԵԱՆ (Տիլաչար)

(Մայիս 22, 1895, Կ. Պոլիս - Սեպտեմբեր 12, 1979, Կ. Պոլիս), լեզուաբան, թուրքագետ, մանկավարժ։ Ուսումը ստացած է Կ. Պոլսոյ ամերիկեան միջնակարգ դպրոցը, Ռոպերթ գոլէճ, ուր եղեր է այդ գոլէճի անգլերէն լեզուի դասատուն, ապա՝ տնօրէնը, ստացեր է ամերիկեան ակադեմական «Մագիստրոս արուեստներու» տիրող եւ փրոֆեսօրի կոչում (1922)։ Մինչեւ 1932-ը Պէյրութի, Սոֆիայի եւ այլ վայրերու մէջ զբաղուեր է հայագիտութեամբ, ստանձներ է Պէյրութի առաջին հայկական վարժարանի տնօրէնութիւնը, հիմներ է «Ռահվիրայ» եւ «Մշակոյթ» թերթերը (Սոֆիա), խմբագիր էր «Լոյս» շաբաթաթերթի (Պէյրութ), յօդուածաշարքերով հանդէս է եկեր մամուլի մէջ։ Այդ շրջանին հրատարակուեր են իր «Առաջին փորձութիւն» փիլէսոփ (1922), Լ. Շանթի «Հին աստուածներ»-ու անգլերէն թարգմանութիւնը (1922), «Գիրի ծագումը եւ տարածումը» (1928) եւ «Յաբէթաբանութիւն» (1929) աշխատութիւնները, անգլիացի բանաստեղծներէն թարգմանուած «Ալպիոնի պարտէզէն» ժողովածուն (1929)։



Յակոբ Մարթայեանի շիրիմը։

1932-էն ի վեր աշխատեր է թուրքիոյ մէջ, եղեր է թուրք լեզուաբաններու միութեան գլխաւոր մասնագէտը։ Տիրապետեր է անգլերէն, թուրքերէն, ֆրանսերէն, յունարէն, սպաներէն, իտալերէն, ռուսերէն, լեհերէն, պուլկարերէն եւ այլ լեզուներու։

Ստացած է տիլաչար (լեզուի բանալի) անունը 1936-50 թուականներուն Անգարայի համալսարանի մէջ դասախօսեր է լեզուաբանութեան պատմութիւն եւ ընդհանուր լեզուաբանութիւն։ Հեղինակ է լուծերէն լեզուի տարբեր բնագաւառներուն վերաբերող շարք մը մենագրութիւններու։ Ունի հայագիտական աշխատու-

թիւններ («Համայնապատկեր հայ մշակոյթի» 1966, «1500-ամեակի խոհեր», 1951, «Աստուածաշունչը եւ աշխարհաբարը», 1956 եւայլն) եւ բազմաթիւ յօդուածներ: 1942-70-ին եղեր է թուրքական հանրագիտարանի խորհրդատուն, ապա գլխաւոր խմբագիրը:



ՄԱՏԹԷՈՍ ՏԱՃԱՏԻ ԶԱՐԻՖԵԱՆ

(Յունուար 1, 1894 Վ. Պոլիս - Ապրիլ 9, 1924, Վ. Պոլիս), հայ բանաստեղծ: Աւարտած է Վ. Պոլսի Պէրպէրեան վարժարանը (1913), ուսուցչութիւն ըրած է Կիլիկիոյ Ատանա քաղաքը (1913-14): 1919-21-ին դասաւանդած է Վ. Պոլսոյ Պէրպէրեան վարժարան, աշխատակցած է «Նաւասարդ», «Ճակատամարտ» պարբերականներուն: Հրատարակած է բանաստեղծութիւններու երկու ժողովածու՝ «Տրամութեան եւ խաղաղութեան երգեր» (1921), «Կեանքի եւ մահուան երգեր» (1922):



Մատթէոս Զարիֆեանի շիրիմը:

Իսթանպուլ, Մարտ 2007

«ՆՈՐ ՕՐ», 28 Ապրիլ - 28 Յուլիս 2007

«ԱՐՄԻՆԻԸՆ ՄԻՐԸՐ ՍՓԵՔԹԷՅԹԸՐ», 28 Ապրիլ եւ 23 Յունիս 2007

«ԱՊԱԳԱՅ», 7 եւ 11 Յունիս 2007

«ՆՈՐ ԿԵԱՆՔ», 9 Օգոստոս 2007



Ֆրանսայի ինքնատիպ նկարագրով Լիոն քաղաքի փողոցներէն մին:

ԼԻՈՆԸ ԻՐ ՀԱՅՈՒԹԵԱՄԲ

Առաջին անգամ Լիոն այցելած եմ Հ.Ե.Բ.ի «Վահրամ Փափազեան» թատերախումբին հետ, երբ հիւրախաղերով Ֆրանսայի զանազան հայաշատ քաղաքներուն մէջ կ'ունենայինք ելոյթներ:

Առաջնորդը Լիոնի, Յովակիմեան-Մանուկեանի մեր ընկերներէն՝ Նորվան Սրբազան, լուրջ ու հետեւողական աշխատանքով զգալի կերպով կրցաւ յաջողցնել ազգային ոգին ու հայախօսութիւնը այդ համայնքէն ներս:

Դիւրին չէր անշուշտ իր կատարած աշխատանքը: Մինչ այդ, Ռ.Ա.Կ.ի մեր ընկերները անդուլ ճիգերով Ֆրանսայի այս ճարտարարուեստական քաղաքէն ներս, շնորհիւ իրենց տեղական քաղաքական կապերուն եւ յարաբերութիւններուն, կրցած էին Հայ Դատի համար բաւական դրական աշխատանք տանիլ:

Նորվան Սրբազան, ինչպէս վաղեմի բարեկամիս՝ Տոքթ. Մարգարետ Մարկոսեանի Նիւ Եորք ամուսնութեան եւ այլ սրտակից ընկերոջ մը՝ Տոքթ.


Յակոբ Կիլէքճեանի զակին՝ Արագին Պրիքսէլ ամուսնութեան օրերուն թէ զանազան այլ առիթներով, խնդրած էր անպայման այցելել Լիոն:

Ու պատե՛հ առիթը ներկայացաւ:

Եւ տեսայ վիթխարի աշխատանքը, զոր հայ համայնքը կը տանի կրթական, ընկերային ու մանաւանդ քաղաքական կեանքէն ներս: Տպաւորիչ էր մայր հրապարակին վրայ Մեծ Եղեռնի նահատակներուն նուիրուած գերարդիական յուշակոթողը: Բարեգործականի ակումբը, ճիշդ քաղաքին կեդրոնը, ժամադրավայրն է նաեւ ուսմկավար ազատականներուն, ճիշդ այնպէս ինչպէս էր դեռ մօտիկ անցեալին Միութեան բոլոր հաւաքավայրերու պարագային: Բնական էր ատիկա շատերու, ինչպէս նաեւ ինծի համար. Պէյրութի Զարեհ Նուպար ակումբը որքան Հ.Ե.Ը.ի կեդրոն էր, նոյնքան՝ Ռ.Ա.Կ.ի: Մենք այդ ոգիով աճեցանք, այդպէս կը տեսնէինք մեր բարեկամութիւնը, եւ դեռ կ'ուզենք Հ.Բ.Ը.Մ.-Ռ.Ա.Կ. յարաբերութիւնները տեսնել անցեալի ոգիով:

Ծնորհակալութիւն կը յայտնեմ ընկեր Վազգէն Էսքիճեանին, որ Լիոն կեցութեանս բովանդակ ընթացքին ընկերակցեցաւ ինծի ամէն տեղ, լաւագոյնս կարենալ ներկայացնելու Լիոնը իր հայութեամբ:

**ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԱՔԱՐԵԱՆ
Հայրապետական Պատուիրակի Փոխանորդ
(Ներկայիս Ֆրանսայի թեմի ընտրեալ
Առաջնորդ)**



Հ.- Ունիմ շարք մը որ կը վերաբերի մեր համայնքներուն եւ կ'ուզէի որ այս շարքին մաս կազմած ըլլար նաեւ Լիոնի հայութիւնը իր շրջակայքով: Վստահ եմ թէ արտասահմանի ամէն համայնքի մասն, յետ եղեռնեան շրջանին ծնունդ առած պէտք է ըլլայ նաեւ ձեր համայնքը: Կը խնդրեմ որ ծանօթացնէք Լիոնի համայնքի ծնունդն ու կազմութիւնը՝ ընդհանրապէս նշելով կարգ մը թուականներ:

Պ.- Լիոնահայ գաղութը հիմնուած է 1918 թուականին, Պոլսէն եկած խումբ մը հայերու կողմէ: Շատ քիչ թիւով եղած են հայերը այն ատեն: Այդ խմբակը միութիւն մը հիմնած է, 1901-ի Ֆրանսական օրէնքի տրամադրութիւններու համաձայն, որուն նպատակը եղած է քով-քովի գալ եւ մշակութային ազգային կապ մը պահել: Բայց, յետոյ, չմոռնանք որ 1918 Հայաստանի հիմնումին թուականն է, ու այդ խմբակը ցրուած է, ոմանք Պոլիս վերադարձած են, ոմանք երկիր: Բայց յետագային, երբ խուժած են Յեղասպանութենէն փրկուած հայերը, 1920-22 թուականներուն, այն ատեն Լիոնի շրջանը դարձած է գաղութ:

Ծնունդ առած են այդ օրերուն զանազան միութիւններ, այսպէս՝ Մասիս Մշակութային Միութիւն...: Ու ամէն անոնք որոնք Պոլիս չէին վերադարձած 1918-ին, եւ այդ ընկերակցութեան մէջ եղողները վերստին կը վերակազմաւորուին եւ Հայ Ազգային Միութիւն անունով իրենց կազմակերպութիւնը կը սկսի զբաղիլ եկեղեցական կեանքով:

Բայց մեր հասկցած ձեւով ծխական-եկեղեցական կեանք մը չէ որ կը հիմնեն, այլ այդ Ազգային Միութիւնը կը զբաղի նաեւ տարուան ընթացքին պատարագներ կազմակերպելով, եկեղեցականներու այցելութիւնը կը հովանաւորէ, այդ օրերուն Մարտիրոսայէն կու գային մեր հոգեւորականները եւ աղօթքները կը կատարուէին, տեսակ մը, սենեակներու մէջ:

Ես ձեզի կը փափաքեմ, այս առթիւ, մեր համայնքին մասին գրուած գիրք մը նուիրել, ուր այդ շրջանի վերաբերեալ գլուխ մը կայ, ու եթէ երբեք կարդաք, աւելի տեղեակ կ'ըլլաք այդ օրերու կացութեան մասին, թէ ինչպէս հայ գաղթականներու կեդրոն մը կար, որոնք կը ղեկավար-

րէին այդ կեդրոնը, թէ ինչպէս հայերու մէկ մասը հոն կը գտնուէր եւ թէ հոն է որ հիմնուած էր առաջին եկեղեցին: Յետոյ պարտաւորուած են ձգել եւ երթալ ուրիշ տեղ: Եւ դարձեալ ուրիշ տեղը որ գացած են, աշխատանոցի մը վրայի յարկը, յարկաբաժինի մը մէջ խորան չտկած են... եւ պատարագները սկսած են հոն ընել:

Մինչ այդ, կամաց-կամաց, եկեղեցական կեանքը սկսած է նաեւ կազմակերպուիլ, այն իմաստով որ ամուսնացեալ քահանաներ կամ կուսակրօն վարդապետներ սկսած են գալ Լիոն, տեղաւորուիլ եւ փոխանակ տարին քանի մը պատարագներ ընելու, ուղղակի տեղւոյն վրայ պաշտօնավարած են: Ու այդ ձեւով, Ազգային Միութեան անուան տակ, նաեւ շարունակուած է եկեղեցական գործունէութիւնը:

Որպէս կառուցուած եկեղեցի համայնքին կողմէ, առաջինը եղած է մեր շրջանին մէջ Տեսինի հայաչափ քաղաքին մէջ գտնուող Սուրբ Աստուածածին եկեղեցին, 1947-ին հիմնուած: Պատերազմը պատճառ եղած է շինարարական աշխատանքներու ուշացումին:

Լիոնէն առաջ, որպէս կառույց, Տեսինի եկեղեցին գոյութիւն ունէր:

1956-ին, երբ Վազգէն Ա. Կաթողիկոս առաջին հովուական այցելութիւնը տուած է Լիոնի շրջանին, Լիոնի մէջ եկեղեցի չըլլալով, որովհետեւ այդ վարձուած տեղը շատ անյարմար նկատուած է Վեհափառ ընդունելու համար, Տեսինի եկեղեցին ծառայած է որպէս Վեհափառ հիւրընկալող եկեղեցի: Երեւակայեցէք:

Այստեղի եկեղեցւոյ շինարարական աշխատանքները տեսած է Վեհափառ Հայրապետը:

Հ.- Գալով գաղութին բնակչութեան թիւին, Լիոնը իր շրջակայքով ի՞նչ թիւ կը կազմէ:

Պ.- Երկու ձեւով պէտք է ներկայացնել: Նախ եւ առաջ Ռոն-Ալպեան շրջանի 10 քաղաքներու մէջ ցրուած է հայութիւնը: Այդ ընդհանուրին թիւը այսօր, Հայաստանէն եկողներուն հետ, կը կազմէ մօտաւորապէս 80 հազար: Ութսուն հազար հայութիւն կայ Լիոն, Տեսին, Շարվիօ, Սէնթ Էթիէն, Վալանս, Բոման, Կրոնոպլ, Սէն Շամոն, Վիեն, Էւայլն: 30 հազար կը հաշուէ Լիոնը իր շրջակայքով: Մասնաւոր ճշգրիտ թիւեր անշուշտ չունինք:

Հ.- Իսկ Հայաստանէն եկողներուն թիւը որքա՞ն կը գնահատէք:

Պ.- Ըստ մեր քաղած վերջին տեղեկութիւններուն պաշտօնական շրջանակներէն, ամբողջ Ֆրանսայի տարածքին 100 հազար հայ եկած է Հայաստանէն:

Հ.- Լիոնը ճարտարարուեստական քաղաք է եւ ի՞նչ եմ ընդհանրապէս հայութեան զբաղումները:

Պ.- Առաջին շրջանին երբ եկած են, ընդհանրապէս աշխատած են դերձակի գործարաններու մէջ: Ընդհանրապէս հիւսուածեղէնի մարզէն ներս եւ նաեւ ըսեմ թէ Սէնթ Էթիէնի կողմերը հանքերու մէջ աշխատած են: Բայց անոնք որոնք երկրէն եկած են արհեստաւոր, օրինակ դերձակը՝ իր դերձակութեամբ զբաղած է, կօշկակարը՝ իր կօշիկի խանութով, եւ հետզհետէ ժամանակի ընթացքին, արհեստաւորները իրենց գործը զարգացուցած են, այն աստիճան, որ կօշկակարը եղած է կօշիկի վաճառական, դերձակը՝ հագուստի վաճառական: Այսպիսով մեծ թափ մը առած է: Ընդհանրապէս առեւտրական հայերու թիւը այդ ատեն չատ փոքր էր, իսկ հիմա շատ են մեր շրջանին մէջ. Քէլեան ընտանիքը կօշիկի հանրածանօթ միջազգային ընկերութիւն մըն է, նոյնպէս՝ Ալէն Մանուկեանը՝ հագուստեղէնի:

Հ.- Սրբազան, Փարիզը հմայիչ քաղաք է, արդեօք նոր սերունդին հետ ձեր քաղաքէն՝ Լիոնէն, արտագաղթ մը կա՞յ դէպի լոյսի քաղաքը՝ Փարիզ, կամ այլուր:

Պ.- Լիոնցիները, առհասարակ, եթէ արհեստ մը ունին, մանաւանդ մասնագիտական ճիւղերու մէջ՝ բժիշկ, ատամնաբույժ, կը մնան Լիոն ու չեն երթար: Փարիզ զացողները ընդհանրապէս կը պատկանին այն սերունդին, որ գրականութեան, ընկերաբանութեան, փիլիսոփայութեան, ճարտարապետութեան կը հետեւին եւ բարձրագոյն ուսումի տիրանալու համար Փարիզ կ'երթան, կը տեղաւորուին եւ դժուար թէ վերադառնան:

Հ.- Հայրապետական պատուիրակի փոխանորդ էք: Ինչպէ՞ս այս հանգամանքը Լիոնի մէջ սկսաւ:

Պ.- Յրանսան, ինչպէս որ գիտէք, Եւրոպայի հայրապետական պատուիրակութեան ծիրէն ներս գործած է միջոց, սկիզբէն ի վեր: 1925 թուականէն յետոյ, Գրիգորիս Պալաքեան Եպիսկոպոսին պարտականութիւն տրուած է, որպէսզի Եւրոպայի համայնքները կազմակերպէ, եւրոպահայ թեմի առաջնորդին ընտրութեան նախապատրաստական աշխատանքները տեսնէ: Այդ բոլոր աշխատանքները իրագործած է ան եւ այդ շրջանին, եթէ մեր փաստաթուղթերը կարդալու ըլլաք, պիտի տեսնէք թէ անոր մէկ ոտքը Փարիզ, միւս ոտքը Մարսիլիա, Լիոն է եղած: Ան անվերջ կը շրջէր թեմը կազմակերպելու համար:

Եւ կը յաջողի կեդրոնական մարմիններ ստեղծել: Մինչ այդ, չմոռնամ ըսելու որ այստեղ 20 թուականէն ետք հայերը եկած... քաղաքի մէջ

տեղաւորուած են, անմիջապէս իրենց հասկցած ձեւով մարմին մը կազմած են ու ընդհանրապէս այդ Ազգային Միութիւն անունը փոխ առած են, 1918-ին գոյութիւն ունեցող ընկերակցութեան հիման վրայ, եւ ամէն տեղ ազգային միութիւններ հիմնած են: Ազգային Միութիւնը, խորքին մէջ, իրենց հասկացողութեամբ ծխական խորհուրդներ են, կամ ծխական միութիւններ են: Բայց երբեք այդ պատկերը չունին եւ այդ ծուխերը այդպիսով կազմակերպուած են զանազան քաղաքներու մէջ, ամէն մէկը իր ինքնավար կանոնադրութիւնը ունենալով, գրելով, խմբագրելով եւ ներկայացնելով ու արձանագրելով տեղւոյն նահանգապետարանի մօտ:

Ուրեմն 1925-ին երբ Պալաքեան Սրբազանը կը սկսի Եւրոպայի թեմական կազմակերպչական աշխատանքներուն նախաձեռնել, ընդհանրապէս գաւառային խորհուրդներ կը ստեղծէ, բայց անոնց մանրամասն արխիւները չունինք: Փոխադրութիւններու ատեն զանազան մարդոց մօտ մնացած են, թերեւս անոնց պարագաները աւելորդ թղթածրար նկատելով նետած են...: Բայց ուսումնասիրելով այն քիչ թուղթերը, որոնք մեր ձեռքը կը գտնուին, տեսանք որ ազգային միութիւններու կեդրոնական մարմին մը ստեղծուած է, զոր կոչած են գաւառական խորհուրդ: Անոնք պատգամաւորներ ընտրած են յառաջիկայ Եւրոպայի թեմին համար: Այդ պատգամաւորներն ալ գացած են առաջնորդի ընտրութեան: Եւ Գրիգորիս Սրբազանը ընտրուած է Եւրոպայի այդ թեմին առաջնորդ, կեդրոն ունենալով Փարիզը:

Զանազան պատճառներով չհաստատուեցաւ իր առաջնորդութիւնը... մանրամասնութիւններու մէջ չեմ ուզեր մտնել: Թերեւս այդ տարիներու քաղաքական վիճակը պատճառ դարձաւ որ իր պաշտօնին մէջ չհաստատուի: Յետոյ առանձնացաւ Մարսիլիոյ մէջ, ուր ապրեցաւ մինչեւ 1934 թուականը եւ հոն ալ վախճանեցաւ:

Մարսիլիոյ Սրբոց Թարգմանչաց մայր եկեղեցին, որ գոյութիւն ունի ներկայիս, շնորհիւ իր ջանքերուն կը կառուցուի, որովհետեւ ան կը հանդիպի Պրն. Ասպետ Խորասանձեանին, Փարիզի մէջ, եւ անոր բարերարութեամբ կը կառուցանէ այդ հոյակապ հայկական ոճով մայր տաճարը. վստահ եմ որ տեսած էք: Հակառակ որ այդ եկեղեցին 1931-ին աւարտած է, ինք չէ յաջողած այդ եկեղեցիին մէջ պաշտօնավարել, որովհետեւ հոն ալ իրեն դէմ բաւական խաղեր ու ընդդիմութիւններ եղած են: Այդպէս, ուրեմն, փորձած է 1924-ին Ազգային Սահմանադրութեան հիման վրայ, Ֆրանսայի Հարաւային շրջանի, Մարսիլիոյ համար թեմական կառոյց մը ստեղծել եւ այդ կանոնադրութեան համաձայն գործած է ինք 1929-էն մինչեւ իր վախճանումը:



Լիոնի հայոց եկեղեցին:

Բայց փաստ մը չկայ որ իր խմբագրած այդ թեմական կանոնագրութիւնը Մայր Աթոռի հովանաւորութիւնը վայելած է թէ ոչ: Ատոր համար, վերջերս պիտի նայինք Սանդրօ Բայբուրդեանի փաստաթուղթերուն: Այն տպաւորութիւնը ունինք որ չէ վաւերացուած Մայր Աթոռին կողմէ:

Այդ կանոնագրութիւնը մինչեւ օրս գրանցուած կը մնայ, բայց, ինչպէս ըսի, իրեն յաջորդողները, քահանաներ, որոնք փոխանորդի պաշտօն ունեցած են, մանաւանդ 1936-էն ետք, որոնց կարգին Գարեգին Եպիսկոպոս Տրապիզոնի, Մարսիլիա կը ղրկուի Խորէն Մուրատեկեան Կաթողիկոսի կողմէ, կոնդակ կը ստանայ, որպէսզի Հարաւային Ֆրանսայի թեմը կազմակերպէ եւ այդ կոնդակն է որ այդ թուականին թեմը կը հռչակէ: Թեմը կը հռչակուի եւ պաշտօն կը տրուի Գարեգին Տրապիզոնի (Պաշտօնաւարեան) Սրբազանին, որ չի յաջողիր թեմական կանոնագրութիւն մը խմբագրել: արդէն երկար չի տեւեր, յետոյ կ'երթայ Արժանթինի թեմը հովուելու:

Այդպէս կը մնայ: Եւ հայրապետական պատուիրակութիւնը այսպէս կը շարունակուի ամբողջ Ֆրանսայի տարածքին:

Մինչեւ հայրապետական պատուիրակի փոխանորդութիւնները սկսան գործել Մարտիլիոյ մէջ 1965-ին, իսկ Լիոնի մէջ ալ 1976-էն ետք միայն, երբ Դաւիթ Սրբազանը եպիսկոպոսացաւ: 1964-ին եկաւ Դաւիթ Սրբազանը, այն ատեն վարդապետ էր: Բայց մինչեւ եպիսկոպոսանալը այդ տիտղոսը չկրեց:

Հ.- Բաւական բարդ գաղութ մը կ'երեւայ ֆրանսահայ գաղութը իր թեմական կառոյցով: Այս անշուշտ ոչ միայն ազգային, այլեւ՝ ֆրանսական տեղական քաղաքական պատճառներով: Սակայն կը լսենք վերջերս, որ Ամենայն Հայոց Հայրապետին նախաձեռնութեամբ վերջապէս կրցած էք կանոնագրային կառոյցի մը շուրջ համաձայնիլ բովանդակ Ֆրանսայի համար եւ գիտեմ նաեւ թէ ձեր մասնակցութիւնը անոր յաջողութեան մէջ եղած է աղիւծի բաժին: Կրնա՞ք որոշակի տեղեկութիւն տալ այս վերջին 2-3 տարիներու անցուդարձերուն մասին եւ ըսել թէ ի՞նչ կը սպասուի մօտիկ ապագային:

Պ.- Այս վերջին 2-3 տարիներուն անդրադառնալու համար նախ պէտք է փակագիծեր բանանք, ըսելու համար որ Երջանկայիշատակ Վազգէն Ա. Կաթողիկոսի օրով սկսաւ արդէն այդ նախաձեռնութիւնը, երբ տակաւին Սերովբէ Արք. Մանուկեանն ալ ողջ էր: Անոնց օրով մտահոգութիւն յառաջացած էր որ Ֆրանսան պէտք է թեմական կառոյցով մը օժտուի:

1979-ին, գումարուեցան առաջին նախապատրաստական ժողովները, երբեմն նախագահութեամբ Վազգէն Կաթողիկոսին: Իսկ 1984-ին Սերովբէ Սրբազանին վախճանումէն անմիջապէս ետք շատ աւելի յստակ կերպով դրուեցաւ այդ հարցը Վազգէն Ա. Կաթողիկոսին կողմէ: Սկիզբը յայտնի չէր. Ֆրանսան երե՞ք թեմի բաժնել, մէ՞կ թեմով ներկայացնել, եւայլն: Այդ խնդիրը բիւրեղացաւ 84-էն վերջ, տարիներու ընթացքին եւ յանգեցան այն եզրակացութեան, որ Ֆրանսան պէտք է որ մէկ թեմով օժտուի:

1988-ին ներկայացուեցաւ նախագիծ մը, բայց այդ նախագիծը իր մէջ ամէն ինչ չէր պարունակեր: Եւ ուրեմն իբրեւ աշխատանքի հաստատում տրուեցաւ մեզի որ յետագային շարունակէինք աշխատիլ այդ նախագիծին վրայ, վերջնական ձեւ մը տալու համար: Այդ նախագիծը անշուշտ հիմնուած էր մեր աւանդական ու դասական մոտէլին վրայ: Բայց, դժբախտաբար մեր Ֆրանսայի ծուխերը 1918-էն, 20-էն, 22-էն վերջ առանձին-առանձին անկախ-անկախ կանոնադրութիւններ նահանգապետարաններու մէջ զետեղած ու արձանագրած ըլլալով, տրամադիր չէին հրաժարելու իրենց ծխական կանոնադրութիւններէն:

Ասոր համար է որ թեմական կառույցի դասական ձեւին շատ մօտ չգտնուեցան ծուխերը: Զերմ չէին եւ այն տպաւորութիւնը առինք որ այս գործը պիտի ձախողի եւ յաջողութիւն պիտի չգտնէ:

Բայց 88-ին, այդ առաջին նախագիծը՝ դասական մոտէլի վրայ պատ-րաստուած աշխատանքը չկրցանք շարունակել, վերջացնել, որովհետեւ երկրաշարժը վրայ հասաւ, յետոյ Հայաստանի անկախացումը, Վազգէն Կաթողիկոսի վախճանումը, Գարեգին Ա. Կաթողիկոսի ընտրութիւնն ու յետոյ անոր վախճանումը...: Այս բոլորը պատճառ եղան, որ ձգձգուի:

Գարեգին Բ. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը երբ կաթողիկոս ընտրուեցաւ ու 1700-ամեակի առթիւ իր հովուական առաջին այցե-լութիւնը տուաւ Ֆրանսայի գաղութին, տեսաւ այսպէս անկազմակերպ վիճակը, բայց ինքը նախօրօք ալ տեղեակ էր տարուած աշխատանքնե-րուն, որովհետեւ, հաւանաբար, Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի անդամ ըլլալով մօտէն ծանօթ էր այստեղի վիճակին: Ուրեմն ինք վերստին թափ ու թռիչք մը տուաւ այս աշխատանքին: Ինք տեղեակ ըլլալով օրուան տրամադրութիւններուն, թէ ծուխերը ինչո՞ւ կը մերժեն դասական մոտէլը, փորձեց ուրեմն նոր խմբագրական կազմ մը նշանակել, եւ նախկին գոյութիւն ունեցող 88-ի նախագիծ պատրաստող խմբագրական կազմը բարեփոխութեան ենթարկեց, առաջարկելով որ երեք շրջաններէն 5-ական հոգի ընտրուին, 15 հոգինոց մարմին մը կազմուի:

Այդպէս ալ եղաւ: Այդ 15 հոգինոց մարմինը յետոյ աւելի խտացեալ մարմին մը կազմեց, 6-էն 8 հոգիի միջեւ եւ այդ աշխատանքները, 1981-1988-ի նախագիծին տրամադրութիւններուն վրայ տարուելով, ինչ որ կը պակսէր անոր մէջ աւելցուցինք, օրինակ՝ ծխական բաժինը, եւ ներկայացուցինք Ֆրանսայի ծուխերուն: Անշուշտ դիւրին չեղաւ: Մինչ այդ, որպէսզի անպայման թեմի կառույցը հաստատուէր, մեր բուն նպատակը այդ էր, ուրեմն ծուխերը տեսանք որ անգիջող պիտի մնան իրենց կանոնադրութիւններուն նկատմամբ, մտածեցինք որ ուրեմն դասական ձեւով երբ թեմը կը հիմնուի թեմն է որ ծնունդ կու տայ ծուխին, այս պարագային, ըսինք թող ծուխերը հիմնադիր անդամ դառնան եւ թեմը իրենք հիմնեն: Եւ այս տեսակէտին, գործնական մօտեցումին բոլորը համաձայն եղան եւ ստորագրեցին:

Ուրեմն Եւրոպական Միութեան մօտէլին քիչ մը հետեւեցանք, եթէ կ'ուզէք: Եւ այդ ընդունելի դարձաւ: Երբ որ ընդունելի դարձաւ, ուրեմն աւելի բուռն թափով սկսանք յստակ կերպով խմբագրել թեմական կանոնադրութեան յօդուածները: Այդ բոլոր փուլերէն անցանք, պէտք է բոլորը իրենց յանձնառութիւնները ստորագրէին, մանաւանդ այդ նոր

ձեւին մէջը գրուած էր, որ իւրաքանչիւր ծուխ թէեւ, ճիշդ է որ չի ջնջեր իր կանոնադրութիւնը, բայց իր կանոնադրութիւնը պիտի բարեկարգէ ընդունելով թեմին առաջարկուած ծխական կանոնադրութեան մոտէլը: Ասիկա ընդունուեցաւ: Յօժարեցան: Այնքան ատեն որ իրենց ծխական կանոնադրութիւնը չէր ջնջուեր, բարեփոխումի առաջարկ կ'ըլլար, ընդունեցին: Եւ ա'յն ինչ որ թեմական կառոյցի մէջ ծխական բաժնի մասին գրուեցաւ, այդ է որ ընդունեցին բոլորն ալ, բարեկարգեցին, ընդհանուր տեղական արտակարգ ժողովներով վաւերացուցին, որմէ ետք ստորագրեցին նաեւ թեմական կանոնադրութիւնը, այդ բոլորը հաստատուեցան Մայր Աթոռին կողմէ: Մանրամասնութիւններու մէջ չեմ ուզեր մտնել: Նաեւ Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռի մէջ եօթը եպիսկոպոսներէ բաղկացած մասնաւոր ուրիշ յանձնախումբ մը կազմեց իր գլխաւորութեամբ եւ որոնք մօտէն հետեւեցան:

Այս ամբողջ գործին յաջողութիւնը մենք կը պարտինք Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին: Իսկապէս կ'ըսեմ, համոզումով կ'ըսեմ, որ Վեհափառ Հայրապետը վճռական կեցուածք ցոյց տուաւ, հետեւեցաւ, մանաւանդ ամէն մէկ բարեկարգութեան փոփոխութեան... գլուխը կեցաւ այնպիսի՝ նախանձախնդրութեամբ եւ բծախնդրութեամբ, երբեմն ա'յն աստիճան մանրակրկիտ, որ իսկապէս կը զարմացնէր:

Շնորհիւ Գարեգին Բ. Վեհափառին մենք հասանք հո'ն, ուր որ ենք այսօր: Ունինք թեմական կառոյց, թեմական կանոնադրութիւն ունինք եւ որ պետութեան քով գրանցուած է, այդ գրանցումէն վերջ կոնդակ հրապարակուած է, տեղապահ՝ Գիւտ Արք. Նազգաչեան ընտրութիւններուն նախաձեռնած է:

Եւ ուրեմն տեղապահին գլխաւորութեամբ տեղի ունեցաւ, 2007-ի Փետրուար 17-ին, Փարիզի մէջ պատգամաւորական ժողովի մնայուն դիւանի ընտրութիւնը, նաեւ՝ թեմական խորհուրդի ընտրութիւնը:

Այժմ, թեմական խորհուրդը կը պատրաստէ առաջնորդի ընտրութիւնը: Ըստ կանոնադրութեան, առաջնորդի ընտրութեան թուականէն երեք ամիս առաջ պէտք է որ պատգամաւորները եռանուն ցանկը ունենան թեկնածուներուն, պատրաստուին եւ այդպէս գան քուէարկելու:

Հ.- Նախ, այս հարցով, ո՞վ է թեմական խորհուրդի ատենապետը:

Պ.- Փարիզէն Պրն. Գրիգոր Փափազեանն է:

Հ.- Իսկ որո՞նք են եռանուն ցանկի թեկնածուները առաջնորդական պաշտօնին համար:

Պ.- Չեմ գիտեր, իրաւունք ունի՞մ ըսելու, որովհետեւ առայժմ մամուլին չեն հաղորդած: Բայց պատգամաւորներուն յղած էին, բայց կը կարծէ՞ք որ անոնց յղելով այդ անուններու ցանկը գաղտնիքը դուրս ելած է արդէն...:

Հ.- Անշուշտ, գաղտնիք չի մնար...:

Պ.- Դուք ե՞րբ լոյսին պիտի բերէք այս տեսակցութիւնը:

Հ.- Վստահաբար, Յունիսէն ետք:

Պ.- Այդ անուններն են՝ Նարեկ Սրբազան Շաքարեան, Նորվան Սրբազան Ջաքարեան եւ Կոմիտաս Վրդ. Յովնանեան: Բոլորս ալ էջմիածնի միաբան ենք: Եթէ Երուսաղէմի միաբան մը Մայր Աթոռի միաբան չէ եղած, չի կրնար թեմի մէջ առաջնորդական պաշտօն ունենալ:

Հ.- Ե՞րբ եմ ընտրութիւնները:

Պ.- 22 Յունիսին: Պատգամաւորական ժողովը պիտի ընտրէ Ֆրանսայի առաջին առաջնորդը: Առաջին պատգամաւորականը կը սեպտեմբեր 17, 2007-ինը, իսկ այս՝ Բ. պատգամաւորական ժողովը պիտի ըլլայ:

Հ.- Սրբազան, Ֆրանսայի նոր կանոնագրութեան նուիրում այս բաժինը փակենք: Կրնա՞ք ձեր 28 տարիներու պաշտօնին հետ մշտ կարգ մը իրագործումներ կոնկրետ գաղութէն ներս: Հաւանաբար ուրիշներ պէտք է ըսեն այդ, սակայն, աւելի լաւ է որ իմանանք եմքակայէն՝ ձեզմէ, ստոյգ կերպով այդ իրագործումներու մասին:

Պ.- Իմ հովուական պաշտօնիս մէջ մի քանի պատճառներ ունիմ ուրախ ըլլալու. նախ, երբ երիտասարդ աբեղայ էի (ըսեմ թէ օծուած եմ Փարիզի մէջ, 1968 Հոկտեմբերի վերջաւորութեան, Սերովբէ Սրբազանի ձեռամբ) պարտականութիւն տրուած էր ինծի նախագահել Իսի-Լէ-Մուլինոյի արուարձանի հայաշատ կեդրոնի եկեղեցաչէն յանձնախումբին: Դիւրին չեղաւ այդ գործը, քանի որ հոն միջ-կուսակցական բաւական վէճեր կային: Այդ եկեղեցաչէն յանձնախումբը 25 տարիներուն ընթացքին, չեմ ըսեր չէր յաջողած, բայց առկախուած էր գործը, զանազան պատճառներով: Ուրեմն այդ յանձնախումբի բոլոր վարչական աշխատանքները, վերանորոգումի աշխատանքները Սերովբէ Սրբազանը ինծի յանձնեց: Կարճ կապելով ըսեմ թէ 1970-75, Իսի-Լէ-Մուլինոյի մէջ հողը գտանք, եկեղեցին կառուցեցինք, սրահով, հովուատունով եւ այլն...:

75-էն մինչեւ 80 հոգեւոր հովուութեան պաշտօնը ստանձնեցի այդ հայ գաղութին:

1980-ին երբ Դաւիթ Սրբազան մեկնեցաւ Լիոնէն դէպի Հարաւային Ամերիկա, ուրեմն ես թեկնածու չէի Լիոն գալու համար, բայց Սերովբէ Սրբազանը յարմար տեսաւ որ Կեդրոնական Ֆրանսայի պատասխանատուութիւնը ինծի յանձնէ, սիրայօժար ընդառաջեցի իրեն եւ 80-էն ի վեր այստեղ կը պաշտօնավարեմ:

Այստեղ չեմ ուզեր մանրամասնութիւններու մէջ մտնել, ամենէն առաջին կարեւոր գործերէս մէկն էր, որ չորս տարի ամառները ամէնօրեայ դպրոց մը բանեցուցի երկու ամսուան շրջանի համար, եւ այդտեղէն փորձառութիւն ձեռք ձգեցի եւ այդ փորձառութիւնը մեզի առիթ տուաւ 1988-ին Մարգարեան-Փափազեան ամէնօրեայ վարժարանը հիմնելու: Ինը հոգիով սկսուած վարժարանը այսօր 190 աշակերտ ունի եւ լրիւ կառոյցը աւարտած է: Բայց, պէ՛տք է իսկապէս այդ տարիները ապրիլ, տեսնել թէ ի՞նչ չարչարանքներէ եւ տազնապներէ անցանք, որովհետեւ նաեւ՝ ընդհանուր միջազգային տնտեսական տազնապի տարիներուն զուգադիպեցաւ: Բայց, փա՛ռք Աստուծոյ, նախախնամութիւնը օգնեց եւ այդ բոլո՛ր դժուարութիւններուն տակէն դուրս եկանք:

Ուրիշ միտիթարուելու պատճառ մըն ալ ունիմ, ան ալ հայ աստուածաբանութեան եւ հայ հայրաբանութեան կեդրոնի մը հիմնումն էր Լիոնի Institut de Catholique-ի մէջ, 1987-ին, բայց այնպէս համաձայնեցանք համալսարանի վերատեսչութեան հետ, որ նիւթական ծախսերը համայնքը հոգար: Այդ պայմանով մեզի տուին: Մէկ-երկու տարի դիմացանք, Պիւլիւքեան հիմնարկութիւնը կայ այստեղ, անիկա օժանդակեց, նաեւ՝ անհատ բարերարներ: Բայց յետոյ տեսանք որ դժուարութիւններու պիտի հանդիպինք, դիմեցինք Լիզպոն Գալուստ Կիւլպէնկեան Հաստատութեան, որպէսզի այդ գործին համար հիմնադրամ մը տրամադրէ, որպէսզի մնայուն կերպով շարունակուէր: Անոր փոխարէն մենք ալ առ ի երախտագիտութիւն այդ աստուածաբանական հայկական ճիւղը կոչեցինք Armenologie Calouste Gulbenkian: Եթէ այսօր երթաք ինստիտուտ, բարերարներու պատուոյ մարմարին վրայ կարդալու ըլլաք անունները, պիտի տեսնէք նաեւ Գալուստ Կիւլպէնկեան Հաստատութեան անունը, որ մեզի պատիւ կը բերէ:

Ուրեմն, հովուական տեսակէտով ուրիշ բաւական մանրամասն այլ ձեռնարկներ կազմակերպեցինք, որոնց մասին ժամանակ չունինք խօսելու... Աւելի լաւ է որ գործը ինքը խօսի, քան ես ըլլամ խօսող:



Կարպիս Մանուկեան վարժարանը:

Հ.- Մտաւորական ի՞նչ աշխատանքներ կատարեցիք կամ ի՞նչ գործեր կրցաք արտադրել այս շրջանին:

Պ.- Երկու հատոր գիրք գրած եմ հայ արդի բանաստեղծութեան մասին: Ժամանակակից գրողներէն Գրիգոր Պլըտեանի բանաստեղծութիւնը ընթեռնելու զփուարութիւններ ունեցած էի, զանոնք յաղթահարելու համար փորձեցի գրաւոր մեկնաբանութիւններ կատարել, յետոյ յարմար տեսայ որ հրատարակուին անոնք: Առաջինը՝ «Յաղագս Գրիգոր Պլըտեանի քերթողութեան», հրատարակեցի Ամերիկայի մէջ: Յետոյ, մամուլին մէջ զանազան քերթուածներու մասին ուսումնասիրութիւններ ունէի, որոնք տպուած են յատկապէս «Յառաջ»ի «Միտք եւ Արուեստ» թիւերուն մէջ: Հայաստանի մէջ Արթուր Անդրանիկեան անունով բանաստեղծ մը յետագային հաւաքեց զանոնք եւ փոքրիկ գրքոյկ մը հրատարակեց: Այդպիսով երկու գրական գիրք ունիմ:

Իսկ կարեւոր աշխատութիւն մը ունիմ, որուն տակաւին նախապատրաստական բաժինը գրած եմ. Քրիստոսի չարչարանքներու վերաբերեալ գործ մըն է, մեր Ծ-րդ դարու հայրերէն մէկուն գործը, զոր թարգմանած եմ Փրանսերէնի: Բայց թարգմանութիւնը պէտք է վերանայուի եւ մանաւանդ որպէսզի ան գիտական հրատարակութեան արժանի ըլլայ, պէտք է որ ուսումնասիրութիւն մը ներկայացնեմ անոր հետ: Այս

գործին ետեւն էի արդէն, երբ թեմական կազմակերպութեան պատասխանատուութիւնը յանձնուեցաւ ինծի, չկրցայ ուրեմն երկուքը միատեղ շարունակել: Նախապատուութիւնը գնաց թեմական կազմակերպութեան աշխատանքներուն:

Հ.- Վերջին հարցում մը Սրբազան Հայր: Գիտեմ որ մեր մայր վարժարանէն էք՝ Պէյրութի Հ.Բ.Ը.Մ.ի Յովակիմեան-Մանուկեան մանչերու երկրորդական վարժարանէն, եւ կը բաժնենք դպրոցական նոյն դասընկերները եւ բարեկամները: Կրնա՞ք ըսել որ բացի ձեր հովուական եկեղեցական կեանքէն, կը շարունակէ՞ք պահել կապ մը ձեր երբեմնի ընկերներուն հետ:

Պ.- Անշուշտ, մանաւանդ երբ որ ճամբորդութեան մէջ ըլլամ: Օրինակ, եթէ անոնք Ամերիկա գաղթած են ու պատահի որ Ամերիկա երթամ հանդիպիմ անոնց հետ, ընկերային շատ հաճելի բացառիկ ժամեր կ'անցնենք միասին: Երբեմն կը պատահի որ նոյնիսկ անոնցմէ ոմանց զաւակներուն ամուսնութեանց բախտը կ'ունենամ ներկայ գտնուելու եւ այդ առիթներով մեր բարեկամութիւնները կը վերանորոգուին: Յետոյ հեռաձայնային կապերը այսօր մեզի առիթ կու տան որ աւելի յաճախ չփման մէջ մտնենք իրարու հետ: Շա՛տ կարեւոր են այդ բարեկամական յարաբերութիւնները:

Մեզի ծանօթ այդ բարեկամները վստահ եմ որ ուրախ պիտի ըլլան կարգալով մեր այս հանդիպումը ձեր հետ:



ԶԱՐԼԶ (ԿԱՐԱՊԵՏ) ՓԱԼԹՕ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Ատենապետ Ռ.Ա.Կ. Ֆրանսայի
Շրջանային Վարչութեան

Հ.- Ֆրանսայի Ռ.Ա.Կ.ի գործունէութիւնը ե՞րբ վերաշխուժացաւ:

Պ.- 1983-ին վերսկսանք մեր կուսակցական կեանքին նոր թափ տալ հոս՝ Լիոնի մէջ: Այդ տարիներուն, Փարիզէն ընկերներ Լեւոն Քեպապճեանը, Տոքթ. Էտի Ադամեանը, Յակոբ Գասարճեանը եկան հոս:

Ժողովներ գումարեցինք եւ 83-ին վերակենդանացուցինք կուսակցական կեանքը: Ըսեմ որ Ֆրանսայի բոլոր շրջաններէն՝ Փարիզէն,



Վալանսէն, Մարսիլիայէն եկան հոս եւ վերակազմութեան հիմը դրին:

Հ.- Ֆրանսայի մէջ Ռ.Ա.Կ.ը ի՞նչ կառոյցներ ունի:

Պ.- Առաջժամ հինգ ակումբներ ունինք. Փարիզի «Արշակ Զօպանեան», Լիոնի «Միհրան Տէր Ստեփանեան», Մարսիլիոյ «Յակոբ Կօչկարեան», Վալանսի «Հրանչ Երուանդ» եւ շուտով Սէնթ Էթիէնի նորակազմ ակումբը: Հոն ընկերներ ունինք եւ ուզեցին ունենալ իրենց առանձին ակումբը:

Հ.- Մեր կուսակցութիւնը թերթ ունի՞:

Պ.- «La Lettre de L'ADL», որ երկու ամիսը անգամ մը լոյս կը տեսնէ: Երբ հիմնուեցաւ, որպէս շաբաթաթերթ լոյս կը տեսնէր, ապա՝ ամսաթերթ. իսկ հիմա դժբախտաբար դարձած է երկամսեայ, որուն խմբագիրը ներկայիս ընկեր Վարուժան Սիրաբեանն է, Փարիզէն:

Հ.- Նկատելով որ ձեր երկիրը քաղաքականացած լայն մթնոլորտ մը ունի Հայկական Հարցի նկատմամբ, արդեօք մեր կուսակցութիւնը կը տանի՞ լուրջ քաղաքական գործունէութիւն այս երկրի տարածքին վրայ:

Պ.- Մենք հոս նախագահ Շիրաքի կուսակցութեան՝ UMP-ին հետ կը գործենք, այսինքն հիմա նախագահութեան թեկնածու Սարքոզիին հետ կ'աշխատինք: Բացի անհատապէս մեր հայութեան զանգուածին քուէները բերելէ, առանձնապէս մենք անդամ ենք այդ կուսակցութեան: Ըսեմ որ Ֆրանսայի մէջ մեր կուսակցութիւնը կռնակ կը կենայ UMP-ին: Կը յայտարարենք մեր ժողովուրդին որ քուէները տալու էք այս կուսակցութեան թեկնածուներուն, անոնք ալ հաւատարմով մեզի կ'ընդառնեն: Ժողովներ կ'ընենք, մարդիկ ներկայ կ'ըլլան, կը բացատրենք քաղաքական կացութիւնը:

Հ.- Ֆրանսայի մէջ երբ Հայկական Յեղասպանութեան ճանաչումը տեղի ունեցաւ Խորհրդարանին կողմէ, բրոքականոյ կ'ըլլար թէ առաւելաբար Հ.Յ. Դաշնակցութեան աշխատանքով այդ ճանաչումը յաջողած է: Կ'ուզեմ ձեզմէ լսել իրականութիւնը:

Պ.- Ո՛չ, Դաշնակցութիւնը առանձինը չէր այդ աշխատանքին մէջ: Երբեք: Միասին էինք: Մեր երկու կուսակցութիւնները գլխաւոր դերը խաղցան այս հարցին կապակցութեամբ, հաւասարապէս ցեղասպանութեան ճանաչման հարցին մէջ, հիմնելով «Ապրիլ 24 կոմիտէ»։ ճիշդ չէ այդ բրոքականտը...: Ըսեմ նաեւ որ եթէ մենք ռամկավարներս չըլլայինք, այդ ճանաչումը պիտի չըլլար:

Հ.- Բացի նախագահական ընտրապայքարէն, որ եօթը տարին անգամ մը տեղի կ'ունենայ Ֆրանսայի մէջ, ուրիշ ի՞նչ տեսակ քաղաքական գործ կ'ընէք հոս:

Պ.- Հոս միշտ ընտրութիւններ կ'ըլլան երեսփոխանական, գաւառական, քաղաքական եւ այդ ընտրութիւններուն մեր մասնակցութիւնը կը բերենք: Օրինակ, Լիոնի եւ այլ քաղաքապետարաններէ ներս ունինք մեր մարդիկը, մեր անդամները: Մեր կարգ մը ընկերները մաս կը կազմեն քաղաքապետական խորհուրդներուն:

Հ.- Լիոնէն բացի ուրիշ ո՞ր քաղաքներուն մէջ ուսմկավարներս ունինք աշխոյժ մասնակցութիւն:

Պ.- Փարիզի, Մարսէյի, Վալանսի մէջ: Մեր ընկերները քաղաքական իրապէս լայն գործունէութիւն ունին եւ Ֆրանսահայերը այս մէկը չատլաւ գիտեն:



ՅԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Փոխ Ատենապետ Հ.Բ.Ը.Մ.ի Լիոնի
Մասնաճիւղի

Հ.- Կրնա՞ք ամփոփ կերպով ըսել մեզի թէ Լիոնի մէջ Բարեգործականը ի՞նչ պայմաններով սկսաւ:

Պ.- Պէտք է ըսեմ որ մասնաճիւղիս ատենապետը Պրն. Միշէլ Սանճեանն է, այսօր չկրցաւ գալ ու մեր հետ ըլլալ:

Ես փարիզաբնակ եղած եմ եւ գործով, 1990-էն ի վեր Լիոն փոխադրուած եմ: Այդ օրէն Լիոնի Բարեգործականին մէջ եմ: Ճիշդը ըսելով, այս քաղաքիս Բարեգործականին ծնունդն ու կեանքը չեմ գիտեր:

Կրնամ ըսել միայն որ Լիոնի կեդրոնական թաղամասին վրայ գլտնուող այս շէնքը շնորհիւ քանի մը ծանօթ Բարեգործականի բարերարներու գնուած է: 1983-էն այս մեր սրահը ունինք եւ անկէ ի վեր հայութիւնը Լիոնի մէջ ունի Դաշնակցութեան Maison Culturelle Armenienne-ը եւ Բարեգործականի մեր կեդրոնը: Թէեւ մէկ երկու միութիւններ ալ փոքր սրահներ ունին, սակայն մեծ մասը Բարեգործականին շուրջ բոլորուած է:



Այսօր կրնամ ըսել որ Հ.Բ.Ը.Մ.ի անդամներուն թիւը 350 հոգիի կը հասնի: Ամէն տարի նոր դէմքեր կը տեսնենք մեր Միութեան շուրջ: Առաջ այդ ազգայիները չէին միանար մեզի: Մի՛շտ կը նորոգուի մեր անդամակցութիւնը:

Լիոնի քաղաքապետարանը մեզի դաշտեր ու սրահներ տուած է, որ մեր երիտասարդները մարզական խաղերու համար գործածեն: Ֆուտպոլի, պասքէթպոլի, վոլիի խումբեր ունինք: Ըսեմ որ երիտասարդներու համար բաւական զբաղումներ կան:

Հ.- Ուրիշ ի՞նչ յայտագիրներ ունի Բարեգործականը:

Պ.- Ունինք երիտասարդ արհեստավարներու յանձնախումբը, որ նոր շարժում է եւ ունի իր յայտագիրները, Ունինք նաեւ Փարիզի եւ այլ համալսարաններու մէջ ամառնային արձակուրդին վարժութիւն ձեռք ձգելու մասնաւոր յայտագիրներ:

Այս տարի, Ֆրանսայի մէջ կը տօնուի, «Հայաստանի տարի»ն եւ Լիոնի Բարեգործականը հրաւիրեց Երեւանի պետական ֆիլհարմոնիան եւ 11 ֆետրուարին, ներկայացուցին Արամ իլաչատուրեանի թիւ երկու սիմֆոնին եւ Փականինիի «Ռափոստիի Մարչը»: 1250 հոգի ներկայ գտնուեցան Լիոնի լաւագոյն երաժշտասրահին մէջ:

Զատիկին, Բարեգործականի ողիմպիական խաղերուն համար, այս տարի ժընեւ գացին մեր երիտասարդ մարզիկները:

Տունիք ճաշկերոյթներ:

Տարուան մէջ յաճախակի ձեռնարկներ ունինք եւ մի՛շտ զբաղուած ենք:

Հ.- 1984-էն առաջ Բարեգործականի կեանքին մասին լա՛ւ պիտի ըլլար իմանայինք այս առթիւ:

Պ.- Ընկեր Վազգէն Էսքիճեանը հոս է եւ ինձմէ առաջ ան ներկայ է. թո՛ղ ան տայ կարգ մը բացատրութիւններ:

Վազգէն Էսքիճեան.- Ուրեմն 1984-էն առաջ, կարծեմ 82-ին, Բարեգործականի նախագահ Պրն. Ալեք Մանուկեանը այցելած էր Ֆրանսա եւ յատկապէս Ռոն-Ալպի մեր շրջանը: Եէնի մէջ, որ Լիոնէն 32 քիլոմետր հեռու է, ակումբ ունեցած ենք եւ տեսեր է որ այնտեղի համայնքը շատ փոքրաթիւ է եւ պզտիկ գիւղաքաղաք մըն է, ուզեր է որ Լիոնի մէջ Բարեգործականը իր տեղը գրաւէ:

Այս ուղղութեամբ, երբ Բարեգործականը ժընեւի մէջ ժողով ունեցեր է, նուիրատուներու շարքին ազգային մը հարիւր հազար տոլար նուիրած է, որուն անունը մինչեւ այսօր չենք գիտեր: Այդ գումարով



Զախէն աջ, նստած՝ Յարութիւն Տէրտէրեան, Յակոբ Կարապետեան, Զարգ Փալթօ Պետրոսեան: Ուրի՛ Վազգէն Էսքիճեան եւ Յակոբ Վարդիվառեան:

Պրն. Շաւարշ Սեւօնքեանը փսփսացեր է Պրն. Ա. Մանուկեանին ականջին, որ խոստացանք Լիոնի մէջ ակումբ մը ունենալ ու այս նուիրատուութիւնը կը յատկացնենք այս նպատակին: Մեր ընկերը՝ Սեւօնքեան, աւելցուցած է թէ լիբանանահայերն ալ կը մասնակցին ակումբի մը սեփականատիրութիւնը ունենալու նուիրահաւաքին:

Ուրեմն այսպէս ծնունդ առած է այս մեր կեդրոնը, ուր այսօր հաւաքուած ենք:

Այդ թուականներուն ընկեր Անդրանիկ Քէշիշեան, որպէս պաշտօնեայ Բարեգործականի կը ներկայանայ Ռոն-Ալփի շրջանը. ան Վալանս կ'ապրէր: Իրեն կը յանձնուի Լիոնի շրջանակը կազմակերպելու աշխատանքը:

Կ'առաջարկեն Պրն. Սեդրակ Սալպեանին ընդունիլ տտենապետի պաշտօնը: Սակայն գործարար մարդ, Մարաշ ծնած, ան կ'ըսէ առանց ակումբի ու երիտասարդներու չեմ ընդունիր նման պաշտօն մը:

Ընկեր Անդրանիկ գտած է այս կեդրոնը եւ այդ օրերուն տոլարը ֆրանքի հետ համեմատած բարձր ըլլալուն, այդ հարիւր հազարի նուիրատուութեամբ ունեցեր ենք այս կեդրոնը: Լիոնահայեր եւս բերած են իրենց նուիրատուութեան բաժինը:

1984-էն ի վեր այս կեդրոնը ունինք: Այս մեր հաւաքավայրը Լիոնի կեդրոնական հրապարակին ճիշդ դիմացն է: Այս թաղը անուանի է վաճառանիչ ունեցող խանութներով: Ունինք նաեւ ծանօթ հայ անուն-

ներ՝ Ստեփան Քէլեան, Բարակեան, եւայլն: Շա՛տ ծանօթ վաճառատուներ են ասոնք Ֆրանսայի մակարդակի վրայ:

Իսկ գալով Բարեգործականի մասնաճիւղին, մինչեւ 1936 վարչութիւններ գոյութիւն ունեցեր եւ մարդիկ անդամակցած են Միութեան: Սակայն շրջան մը եղեր է որ ազգային տարբեր մտահոգութիւններով զբաղած են եւ կամ անդամ չէ մնացած: Սակայն, 1984-էն ի վեր, այսինքն այս կեդրոնը գնուելէն ի վեր, մեր մասնաճիւղը կ'ունենայ չատ խանդավառ գործունէութիւն:

Հ.- Ընկեր Կարապետեան, կը լսեմ որ Միութեան մասնաճիւղէն ներս կը բերենք առիւծի ներդրում:

Պ.- Այո՛, չատ անգամ մեր ժողովները ես կը վարեմ: Կը հսկեմ բոլոր աշխատանքներուն, հակառակ փոխ ատենապետի իմ հանգամանքիս: Ասիկա կ'ըսեմ փակագիծի մէջ:



ՖԻԼԻՓ ՊԷՅԼԷՐԵԱՆ

Ատենապետ Թ.Մ.Մ.ի Լիոնի Մասնաճիւղի

Հ.- Լիոնի մէջ ե՞րբ հիմնուեցաւ Թէքէեան Մշակութային Միութեան Մասնաճիւղը:

Պ.- Հոս հիմնուեցաւ 1986-ին, սկիզբը թէեւ գործունէութիւն ունեցաւ, սակայն երկա՛ր շրջան մը, ինչպէս կ'ըսեն, «քուն»ի մէջ կը մնար, մինչեւ անցեալ տարի, երբ ինծի յանձնուեցաւ Թ.Մ.Մ.ի մասնաճիւղին ատենապետութիւնը:

Այժմ առաւելաբար մեր շրջանակին երիտասարդ անդամներով է որ կ'ունենանք գործունէութիւն:

Ֆրանսահայ երիտասարդներ են մեր շուրջը, որոնք կ'ուզեն վերադառնալ իրենց հայկականութեան: Կ'ուզեն սորվիլ մեր պատմութիւնը, ծանօթանալ մեր մշակոյթին եւ աւանդութիւններուն:

Ունինք մասնաւոր յանձնախումբ եւ մօտ 20-25 անդամներ:

Հ.- Ի՞նչ տեսակի գործունէութիւն կ'ունենաք Լիոնի մէջ:

Պ.- Անշուշտ կ'ունենանք մեր ժողովները, կը կազմակերպենք շարժանկարի ելոյթներ, ընկերային երիտասարդական հաւաքոյթներ:



Ունինք դասախօսական հաւաքներ նուիրուած մեր պատմութեան:
Հետաքրքրական են նաեւ հայկական խոհանոցի նուիրուած դասերը:

Մեր այս բոլոր հանդիպումները կ'ունենանք հոս, Բարեգործականի
այս յարկէն ներս:

Հ.- Աւելի լայն հասարակութեան հասնելու համար կ'ունենա՞ք ժողո-
վրդական այլ ձեռնարկներ:

Պ.- Այո, ունեցանք հայ մշակոյթի նուիրուած փառատօն, Լիոնի
քաղաքապետարանի սրահներէն մէկուն մէջ: Մէկ շաբաթ տեւող յայ-
տագիր մըն էր, նկարչական ցուցահանդէսովը Ֆրանսահայ երիտասարդ
նկարիչի մը՝ Սէյլին Տէրպիքեան, որ Հայաստան այցելելով լուսա-
նկարած է հայրենի բնութիւնը: Ունեցանք խմբային ցուցահանդէս հայ
արուեստագէտներու՝ Ֆրանսահայ թէ՛ հայրենի նկարիչներու: Դասա-
խօսական երեկոյ հայոց պատմութեան նուիրուած: Հայ երաժշտութեան
եւ հայ մշակոյթին ընդհանրապէս ծանօթացնելու դասախօսական շարք
մը:

Առաջին օրը «Սպիտակ» նուագախումբը ունեցաւ ելոյթ՝ նուիրուած
հայ երաժշտութեան ու Վահան Թէքէեան բանաստեղծին ու այլ գրական
գործերու: Ապա «Գորիս-Սասուն» պարախումբը ունեցաւ ելոյթ:

Այս բոլոր հանդիսութիւններուն ներկայ եղան հայ թէ՛ Ֆրանսացի
ուսնկները:

Գիտէ՞ք այս տարի Ֆրանսայի մէջ «Հայաստանի Տարի» հռչակուած
էր եւ այսպիսով մենք ալ բերինք մեր մասնակցութիւնը: Ըսեմ թէ
սրահը ամբողջութեամբ լեցուցեր էինք:

Հ.- Ինչպիսի՞ ընդունելութիւն գտաւ այս ձեռնարկը:

Պ.- Պէտք է ըսեմ որ այլ կազմակերպութիւններ նախանձով դիմաւորե-
ցին մեր այս յանդուգն ձեռնարկը եւ արդէն իրենք ալ կ'ուզեն ծրագրել
մերինին նման այլ յայտագիրներ... սակայն, տակաւին ծրագրերն են
մնան անոնք:



ԺԻՒԼ (ՊԵՐՃ) ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ
Ֆրանսալի Հայկական Միություններու
Համախմբումի Լիոնի Ատենապետ



Հ.- Ձեր ատենապետած համախմբումը ինչպե՞ս ծնաւ եւ ի՞նչ գործունէութիւն կը ինտապնդէ այժմ:

Պ.- Այս համախմբումը սկսաւ 2001-ին, պաշտօնապէս, երբ իւրաքանչիւր մեծ շրջանի մէջ (Ֆրանսան ունի ազգային երեք շրջաններ՝ Փարիզի, Ռոն-Ալպի եւ Մարսիլիոյ) կամաց-կամաց սկսած էին Ապրիլ 24-ի յանձնախումբեր ծնունդ առնել: Ուրեմն այս յանձնախումբերը միմիայն Մեծ Եղեռնի յուշահանդէսներով կը զբաղէին եւ որոշ ազգային միութիւններ արդէն մաս կը կազմէին այս յանձնախումբերուն. կային ռամկավարները, դաշնակցականները, Փարիզի մէջ՝ հնչակեանները, նաեւ տարբեր հոսանքներու՝ ընկերային թէ մշակութային միութիւններու ներկայացուցիչներ:

1990-ական թուականներուն, ռամկավարները եւ դաշնակցականները եւ Փարիզի հնչակեանները COPA մը ստեղծեցին, կազմակերպելով հանդիպումներ, երկու տարի շարունակաբար, ուր իսկապէս շատ համերաշխ ձեւով կ'արծարծէինք Ֆրանսահայ կեանքի մեր խնդիրները եւ լուծումներ կը գտնէինք: Այս հանդիպումները տասնհինգ օրը կամ ամիսը մէկ անգամ կ'ըլլային:

Որոշեցինք այս Ապրիլ 24-ի յանձնախումբերու ծրագիրները աւելի ընդարձակել եւ աւելի հեռունները երթալ: Համաձայն գտնուեցան: Ժողով մը գումարեցինք Փարիզի մէջ, ուր Մարսէլէն, Լիոնէն եւ մայրաքաղաքէն ներկայացուցիչներ եկան եւ որոշեցինք CCAF հիմնել, որ հայերէն լեզուով Ֆրանսայի Հայկական Միութիւններու Համախմբում անունը կ'ունենայ:

Իւրաքանչիւր համախմբում ունի իր ծրագիր-կանոնագիրը, որ իւրաքանչիւր նահանգապետարանի մէջ պաշտօնապէս արձանագրուած է:

Հ.- Այս ծնունդն է: Իսկ նպատա՞կը այս համախմբումին:

Պ.- Առաջին նպատակը անշուշտ Մեծ Եղեռնի յուշահանդէսները կազմակերպելն է: Բայց մեծագոյն յիշատակումները կ'ըլլան Փարիզ, Լիոն, Մարսէլ: Ուրեմն համախմբումները այս երեք մեծ ոգեկոչում-

ները կը կազմակերպեն, սակայն, ուրիշ քաղաքներ ալ անոնց օրինակով կը կատարեն ոգեկոչումներ: Երեք մեծ հայաշատ քաղաքներու պարագային, աւելի քաղաքական հանգամանք մըն է որ կը ստանայ ոգեկոչումը: Մերը քաղաքական ոյժ մը կը բերէ, երբ մանաւանդ Ֆրանսացի քաղաքագէտներ, կուսակցապետներ ներկայ կ'ըլլան:

Երկրորդ, թիկունք կը կանգնինք բոլոր ցեղասպանութեան ժխտումներուն դէմ եղող աշխատանքներուն:

Թիկունք կանգնիլ այն բոլոր աշխատանքներուն, որոնք կը մերժեն Թուրքիան Եւրոմիութեան անդամակցութեան հրաւիրելու: Թիկունք կանգնիլ այն բոլոր ազգային կազմակերպութիւններուն, որոնք օգտակար կ'ըլլան Հայաստանին ու Ղարաբաղին: Ու նաեւ՝ նախկին Սովետական երկիրներէն մեր երկիրը հաստատուած հայերուն օգտակար ըլլալուն՝ վերադառնալու Հայաստան, ներգաղթելու դէպի Հայաստան ու Ղարաբաղ:

Ասոնք են մեր ընդհանուր եւ կարեւոր նպատակները:

Հ.- Միմչեւ այսօր համախմբումդ ի՞նչ նշանակելի յաջողութիւն արձանագրած եղաւ:

Պ.- Ցեղասպանութեան ճանաչումը մեր մեծագոյն յաջողութիւնը կրնանք սեպել: Նախագահ Շիրաքը պաշտօնապէս ստորագրեց Յունուար 2001-ին:

Ես կը սեպեմ որ Ֆրանսահայ գաղութէն ներս համերաշխութիւն մը ստեղծելը մեծ յաջողութիւն մըն է, որ մեր համախմբումը կրցաւ իրագործել: Ինծի համար այս կարեւոր քայլ մըն է: Տակաւին Մարտէյլը ամբողջութեամբ չէ հաստատած, որովհետեւ հոն կէս Միջին Արեւելք մըն է...: Բայց հոն եւս յոյսով եմ որ գաղութահայ խաղաղութիւնը պիտի հաստատուի: Ներքին խռովութիւններու պատճառով բաժանումներ կային անցեալին, սակայն, ինչպէս ըսի, կը յուսանք որ անոնք ալ հարթուին շուտով: Այդ բաժանումները ոչ թէ ռամկավար-դաշնակցականի գաղափարական բաժանումներ էին, այլ տեղայնական:

Հ.- Ի՞նչ է դերը Հայաստանեայց Եկեղեցւոյ այս համախմբումի աշխատանքներուն մէջ:

Պ.- Մասնաւոր դեր մը չունի: Առաջնորդը ներկայ կ'ըլլայ մեր համախմբումի ժողովներուն որպէս ներկայացուցիչը կազմակերպութեան մը՝ այս պարագային եկեղեցիին: Մենք բոլորովին լայիք կազմակերպութիւն մըն ենք:



Ի յիշատակ Յեղասպանության զոհերու:

Հ.- Ձեր գլխաւորած համախմբումին յարաբերութիւնները Ֆրանսայի քաղաքական մարդոց հետ ինչպէ՞ս կը մշակէք:

Պ.- Ըսեմ որ Շարլ Փալթօպետրոսեանը այս համախմբումին փոխատենապետն է:

Ուրեմն կիսապաշտօնապէս այսօր համախմբումը կը ներկայացնէ Ֆրանսահայութիւնը իր ամբողջութեամբ: Ըսի կիսապաշտօնապէս, որովհետեւ մենք գաղութին կողմէ ընտրուած չենք: Ներկայացուցչական հանգամանք ունինք: Կազմակերպութիւններն են որ իրաւունք ունին մաս կազմելու Ֆրանսայի Հայկական Միութիւններու Համախմբումին:

Ամբողջ սփիւռքի մէջ հայկական կազմակերպութիւնները ընդհանրապէս կը ներկայացնեն հայութեան երեք տոկոսը միայն: Բայց միւս կողմէ ժողովուրդն ալ կը ճանչնայ այս միութիւնները: Մենք կ'ուզենք յետագային հասնիլ տեղ մը՝ գտնելու միջոց մը, որ իսկապէս այս համախմբումը ունենայ աւելի ընտրեալ հանգամանք: Տակաւին խօսակցութիւններու մէջ ենք եւ ձեւը չենք որդեգրած: Կը յուսամ մինչեւ երկու տարի այդ ալ յաջողցուցած պիտի ըլլանք:

Հ.- Ինչպէ՞ս է ձեր յարաբերութիւնը Իլ-Տը-Ֆրանսի, Փարիզի եւ Մարսիլիոյ հետ:

Պ.- Ըսեմ որ մեր երեք համախմբումները շատ ներդաշնակ կերպով

կը գործակցին: Իւրաքանչիւր ատենապետ չաբաթական կ'ունենայ հեռաձայնային խորհրդակցութիւն. Փարիզի ատենապետը՝ Ալեքսի Կոխեան, Մարսիլիոյ ատենապետը՝ Փասքալ Շամմասեան, ու ես յաճախ իրարու հետ կը կապուինք: Իսկապէս մենք երեքս շատ համերաշխ ձեւով մեր ժողովները յառաջ կը տանինք: Մինչեւ այսօր ոչ մէկ տարակարծութիւն ունեցած ենք: Գիտենք որ զիջումներ պէտք է ընենք գործը յաջողցնելու համար: Բարեբախտաբար այս երեք ատենապետները գիտեն ազգին շահերուն համար համապատասխան զիջումներ ընել:

Հ.- Հիմա որ Ֆրանսայի խորհրդարանը ճանչցած է ժխտումի օրէնքը եւ ան ծերակոյտին պիտի երթայ, լաւատես ըլլալով սեպեմբ թէ ան ընդունուի: Այս համախմբումին ի՞նչ ընելիք կը մնայ:

Պ.- Համախմբումին սխալն այն էր, որ ազգին գործերը արագօրէն իր պատասխանատուութեան տակ առաւ:

Պէտք է զօրացնել միւս փոքր միութիւնները: Եթէ քաղաքական ու ընկերային գետնի վրայ ուսումնասիրենք, կամաց-կամաց մարդիկ դէպի կեդրոնացում կ'ուզեն տանիլ ազգային կեանքը, ըսելով թէ, եթէ մեր աւանդական կազմակերպութիւնները խեղճացնենք ու տկարացնենք ու անոնց գործունէութիւնը դանդաղեցնենք, ապա ատիկա պիտի նպաստէ նաեւ այս համախմբումին ուժեղացման: Այն ատեն մենք պիտի մեռնինք: Ընդհակառակը, անոնց ոյժ տալու ենք... պէտք է Ռ.Ա.Կ-ը, Հ.Յ.Դ-ն, միւս մշակութային կազմակերպութիւնները զօրանան, որպէսզի համախմբումը զօրանայ:

Փոքրամասնութիւններու մօտ բարդոյթ մը կայ մեր պարագային. օրինակ, ցեղասպանութեան ճանաչումը կարեւոր է, այո՛, շատ կարեւոր է, բայց կարեւորութիւն մը ունին իր սահմանները եւ այդ սահմանէն անդին պէտք է անցնի:

Հ.- Լիոնի պարագային քանի՞ կազմակերպութիւն մաս կը կազմէ համախմբումին:

Պ.- 58 կազմակերպութիւն կը մասնակցի քոթաները վճարելով: Սակայն թիւով 66 են: Կ'ուզեմ պնդել, որ Ռոն-Ալփի (Լիոնի) մեր համախմբումը չափազանց համերաշխ գործակցութիւն մը ունի: Ըսեմ նաեւ որ Լիոնի մեր այս համերաշխ գոյավիճակը բարի օրինակ դարձաւ միւս երկու համախմբումներուն:

Հ.- Քանի ձեր հետ կ'ունենանք այս հանդիպումը, ուրախ պիտի ըլլամ որ Լիոնի Հ.Յ. Դաշնակցութեան մասին նաեւ տաք տեղեկութիւններ, մանաւանդ

որ տարիներով պատասխանատու դիրքերու վրայ եղած էք Դաշնակցութեան մօտ:

Պ.- Իր աշխատանքները ընդհանրապէս կը կեդրոնացնէ ժողովուրդին հետ մօտիկ յարաբերութիւններ մշակելու վրայ, օրինակ՝ դասախօսութիւններու միջոցաւ:

Այսպէս, Եւրոպայի Սահմանադրութեան որդեգրումէն առաջ Հ.Յ.Դ.ն կազմակերպեց շարք մը դասախօսութիւններ, ուր հրաւիրուեցան մասնագէտներ եւ այս շրջաններուն մէջ բացատրութիւններ տրուեցան ժողովուրդին: Նաեւ՝ Զաւախքի, Ղարաբաղի նուիրուած այլ մասնագիտական դասախօսութիւններ կազմակերպեցին:

Ունի նաեւ որոշ կազմակերպութիւններ իրեն կապուած եւ այս բոլորին համադրումը կը կատարէ՝ Կապոյտ Խաչ, Հ.Մ.Ը.Մ., եւայլն: Ունի նաեւ Հայ Դատի յանձնախումբերը, մշակոյթի տունները, ռատիոհաղորդումներ: Ծիշդ ըսելով, «անիմասիոնէ» կ'ընէ այս բոլորը:

Լիոնի մէջ Հայ Դատի յանձնախումբի ատենապետն էի բովանդակ Ֆրանսայի եւ կրնամ ըսել որ յանձնախումբը Լիոնի մէջ մեծ գործ կատարեց: Ըսեմ որ Հայ Դատի յանձնախումբի անդամները անպայման շարքային դաշնակցականներ չեն: Մեծամասնութեամբ մեզի համակիր մարդոցմէ կը բաղկանան այդ յանձնախումբերը:

1985-ին երբ Մ.Ա.Կ.ի ենթալանտիստները ճանչցաւ ցեղասպանութիւնը, պէտք է ըսել որ Լիոնի մեր յանձնախումբը մեծ գործ տեսաւ: Եւրոպայի 1987-ի ճանաչման աշխատանքներուն մէջ, ես, օրինակ, 11 տարի շարունակաբար ժընեւ կ'երթայի ու ապա՝ Սթրասպուրկ եւ Պրիւքսէլ, մինչեւ որ կրցանք յաջողցնել զայն:

Հ.- Ընդհանրապէս տարբեր գաղութներէ Լիոն հաստատուած դաշնակցականներ եւ մեծ աշխատանք տանողը կուսակցութենէն ներս, թէ բնիկ ֆրանսահայ շարքայիներ:

Պ.- Ինչ որ վերեւը յիշեցի, ի հարկէ Ֆրանսահայ դաշնակցականներու աշխատանքով եղաւ: Ֆրանսայի մէջ, ի մասնաւորի, երբ կատարեալ մակարդակով Ֆրանսերէն լեզուով չես կրնար արտայայտուիլ, դժուար թէ մեծ յաջողութիւններ ունենաս:

Այս պարագան Ամերիկայի եւ Գանատայի համար նոյնը չէ: Իմ գործիս մէջ, օրինակ, Ամերիկա անգլերէնով նամակ կը ղրկէի եւ անկէ նամակ կը ստանայի: Անգլերէնով նամակ կը ստանայի որ անգլերէն չէին: Ֆրանսերէնով երբ մէկ տառասխալ ընեն, կ'անտեսեն... կ'ըսեն թէ յարգանք չունին մեր լեզուին նկատմամբ:

Հ.- Արդեօք Ռիմա մեր աւանդական կուսակցութիւնները ժամանակավրէպ կարելի՞ է համարել, թէ՞ կը խորհիք որ տակաւին դեր մը վերապահուած են անոնց:

Պ.- Շատ հետաքրքրական հարցում է այս մէկը եւ հիմնական հարցում է:

Գիտէք, ես քիչ մը ընկերաբանութիւն ուսումնասիրած եմ եւ որքան ալ տարրական եմ մասնագիտութեամբ, կարգ մը ուսումնասիրութիւններ ըրած եմ հրէական գաղութին եւ կամ ֆրանսական կազմակերպութիւններու մասին եւ եզրակացուցած եմ որ բոլորը 19-րդ դարու կազմակերպութիւններ են: Ոմանք անուննին փոխեցին, բայց կը տեսնես թէ նոյնն է: Թէեւ ոմանք իրենց մօտեցումները քաղաքական հարցերու նկատմամբ փոխեցին՝ համապատասխան ընկերութեան պահանջներուն եւ զարգացումներուն: Թէեւ ոմանք պահեցին իրենց պատմական անունները, օրինակ ընկերավարականները, համայնավարները, դեմոկրատները:

Ուրեմն, մենք հայերս ուրիշ մոլորակէ արարածներ չենք, մենք ալ այս հասարակական կեանքին մաս կը կազմենք, ինչպէս որ Ամերիկայի մէջ ռամկավարները եւ հանրապետականները երկու հարիւր տարիէ ի վեր կը գործեն:

Պէտք է ըսենք, որ այս երեք աւանդական կուսակցութիւնները կան, ուրիշը չկայ: Պէտք է ընդունինք: Այս երեք կուսակցութիւնները, բարոյական պայման մը դնելով վրանին, եթէ չկարենան քայլ պահել, համապատասխան մեր ազգային նոր պայմաններուն, ապա անոնք պէտք է փակեն իրենց դռները, այսքա՛ն: Սակայն, եթէ անոնք գիտնան զարգանալ, արդիականանալ, անշուշտ որ ունին իրենց տեղը ազգային քաղաքական կեանքին մէջ:

Ու աւելի հեռուն երթալով, անհրաժեշտ է որ այս կուսակցութիւնները զարգանան, որովհետեւ մէկ օրէն միւսը դիւրին չէ քաղաքական կազմակերպութիւն ստեղծել: Զ'ըլլար: Ես երբ կը քննեմ Հ.Յ.Դ.ի պարագան, երբ որոշ քատրեր, որոշ պատճառներով կորսնցուցինք, 15-20 տարի ետք չկրցանք վերանորոգել այդ շրջանները նոր քատրերով: Նոր ոյժեր եւ ղեկավար դէմքեր մէկ օրէն ծնունդ չեն առներ...:

Ուրեմն, պատասխանելով ձեր հարցումին, մեր երեք կուսակցութիւններն ալ աւելի արագօրէն զարգանալու են, որովհետեւ մեզի համար ազգային հրամայական է անոնց ներկայութիւնը եւ գործունէութիւնը ի շահ հայ ժողովուրդին:

Նոյնիսկ Հայաստանի պարագային, հոն եղած կուսակցութիւնները իրենց ղեկավարներով պայմանաւորուած կուսակցութիւններ են:

Օրինակ տալով Ստեփան Դեմիրճեանի, Արտաշէս Գեղամեանի, Վազգէն Մանուկեանի, Սերժ Սարգսեանի եւ այլոց գլխաւորած կուսակցութիւնները, կրնամ ըսել, անոնք անհատներով պայմանաւորուած քաղաքական խումբեր են եւ մեր հասկացողութեամբ կուսակցութիւն չեն: Չունին կառոյց ու մանաւանդ գաղափարախօսութիւն, իտէալ, հաւատամք...:

Լիոն, Մարտ 2007

«ՆՈՐ ՕՐ», 4 Օգոստոս - 29 Դեկտեմբեր 2007



Դանուպի եզրն ի վեր ձգում Վիեննան:

ՎԻԵՆՆԱՆ ԻՐ ՀԱՅՈՒԹԵԱՄԲ

Վիեննա անունին կապում էի տակալին ճախակրթարանի առաջին դասարանէս, երբ սկսած էի յաճախել Հագմիէի նորաբաց Մխիթարեան վարժարանը: Հայրս հակառակ ըլլալով ազգային իշխանութիւններու մէջ Դաշնակցութեան մեծատիրութեան, զիս արձանագրած էր 1957-ին Վիեննայի Մխիթարեան հայրերու վարժարանը, որովհետեւ հայրերը չէզոք դիրք մը որդեգրած էին Լիբանանի առաջին քաղաքացիական պատերազմի օրերուն: Արդէն տարի մը ետք կը բացուէր Հ.Բ.Ը.Մ.ի Երուանդ Տէմիրճեան վարժարանը եւ եղբօրս՝ Զարեհին հետ կը սկսէի յաճախել հոն:

Հայր Համազասպ, հայր Ռաֆայէլ, հայր Օգոստինոս, հայր Փիլիպպոս անունները մինչեւ այսօր դրոշմուած կը մնան իմ մանկական տպաւորութիւններու եւ յիշատակներու մէջ:

Սակայն Վիեննային կապուեցայ առաւելաբար երբ մեր ընտանիքին հաւրագատը՝ Մեսրոպ Վարդապետ Գրիգորեան, եղաւ այդ երաժշտական աշ-

խարհին հոգեւոր հովիւը: Յաճախակի այցելութիւններ եւրոպական մշակոյթի այդ ուստանը տակաւ աւելի սիրելի դարձուցին զայն իմ ընտանիքին:

Լիբանանի 1976-ի քաղաքացիական պատերազմին հետեւանքով Միացեալ Ազգերու Կազմակերպութիւնը կինս՝ Արփինէն, ու զաւակս՝ Հայկը, փոխադրած էր Վիեննա, իսկ ես անցած էի Պոստոն, որպէս Թ.Մ.Մ.ի վարիչ քարտուղար: Տօնական օրերուն յաճախակի այցելութիւններ կու տայի եւ հայր սուրբին հետ կը ծանօթանայի տեղւոյն համայնքին ու անոր ցաւերուն: Առիթ կը ստեղծուէր նաեւ ըլլալու երաժշտական հայաշխարհի մեծ դէմքերուն՝ Օհան Տուրեանի, Սոնա Դազարեանի, Լուիզա Պոզապալեանի, Սեդա Դանիէլի, Աւօ Գուլումեանի եւ ուրիշներու հետ, որոնք հայու անունը կը պանծացնէին այդ աղուոր օրերուն Վիեննայի մէջ:

Միեւնոյն ժամանակ տարբեր էր այդ օրերուն: Տակաւին կը պահուէր անցեալի աւանդութիւնը մատենագիտութեան տալով լուրջ գիրքեր, «Հանդէս Ամսօրեայ»ի կանոնաւոր հրատարակութեամբ եւ վանաքնակ մի քանի լուրջ վարդապետներով: Հաճոյք էր այցի երթալ հոն: Պատկերը քնականաբար բոլորովին տարբեր է այսօր, դժբախտաբար:

Ու 2007-ի այցէս կրեցի այն տպաւորութիւնը, զոր մարդ կը կրէ Ամերիկայի սնանկացած առեւտրական հաստատութիւններէն, որոնց լքուած վիճակը կը նկատես ամէն անգամ որ մուտք կը գործես անոնց դարպասներէն ներս:

Ներքին հակամարտութիւններ, գլխաւորաբար Հ.Յ.Դ.ի անդամ քանի մը ազգայիններու պատճառով, համայնքը դատապարտած են անկազմակերպ եւ անփառունակ վիճակի: Հինէն՝ Անթիլիասի հերձուածի օրերէն եկող անհանդուրժող կեցուածքը հանդէպ հայր Մեսրոպի աւելի պառակտուած վիճակ մը ստեղծած է, որովհետեւ Մեսրոպ Սրբազան այսօր կը ջանայ պահել Վիեննան հաւատարիմ Մայր Աթոռին: Անշուշտ դաշնակցականներ կը ջանան հոն եւս ճեղք մը բանալ գաղութէն ներս, ինչպէս եղաւ պարագան Գանատայի:

Այսուհանդերձ, հակառակ իր ազգային տխուր պատկերին, Վիեննան կը մնայ զմայելի իր հրապուրիչ մշակութային կեանքով: Հաճոյք է հոն խառնուիլ երաժշտական աշխարհին, որուն երկրպագուներէն է, անկասկած, մեր գերշարգելի Գրիգորեան Սրբազանը՝ Հայրապետական Պատուիրակը Կեդրոնական Եւրոպայի ու Սկանտինաւեան երկիրներու, հոգեհայրը՝ Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Բ.ին, որ շրջան մը մնաց Վիեննա:

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԳՐԻԳՈՐԵԱՆ
Հայրապետական Պատուիրակ
Կեդրոնական Երոպայի եւ Սկանդինավեան
Երկիրներու



Հ.- Այս տեսակցութիւնս պիտի ընդգրկէ առաւելաբար վիեննահայ համայնքի կեանքը: Անշուշտ մեր ընթերցողները, առաջին առթիւ, պիտի հետաքրքրուին այս համայնքին անցեալով:

Պ.- 1682-83 թուականին թուրք օսմանեան բանակը, երբ պաշարած է Վիեննան, այն ատեն օսմանացիներուն հետ եկած են մի քանի հայեր, իբր օգնական՝ ճաշերու պատրաստութեան եւ այլնի համար: Անոնք արդէն կերպով մը այն զգացումը ունեցած են, որ աւելի լաւ է քրիստոնեաներուն օգնել, քան թէ թուրքերուն:

Անոնք դիտարկած են օսմանեան բանակին դիրքերը, շարժումները եւ տեղեկացուցած են կայսեր թրքական դիրքերու մասին եւ գաղտնի նամակներ գրած են, որոնք մինչեւ այսօր պետական արխիւներուն մէջ կը պահուին: Այստեղ հետաքրքրական կերպով հայ վարդապետ մը եղած է, կ'երեւի, աւելի կաթողիկէ, Ներսէս Վարդապետ, որ այստեղի Ստեֆանց մայր տաճարին մէջ ժամերգութիւն կ'ընէր 1681-83 թուականներուն: Անոնք 10-15 գաղտնի նամակներ կը գրեն կայսեր եւ թրքական դիրքերը կը հաղորդեն: Անգամ մը կայսրը իրենց առաջարկ մը կ'ընէ, որ մթերանոցը պայթեցնեն եւ իրենք անիկա յաջողած են ընել առանց յայտնի ընելու:

Երբ ի նպաստ աւստրիացիներուն պատերազմը լրացած եւ Վիեննան ազատագրուած է, Լէոփոլտ կայսրը 25 տարուան իրաւունք եւ մենաշնորհ տուած է սուրճ եւ թէյ ծախելու: Այդ ձեւով սուրճը (արեւելեան եւ այլ նմանօրինակ խմիչքներ) մուտք գործած է Աւստրիա:

Հ.- Այսպէ՞ս է որ աւստրիահայ առաջին գաղթականները երկիր մուտք գործած են:

Պ.- Աւստրիոյ մէջ առաջին սրճարանը, որ սուրճ ներածած է, Աստուածատուրինն է եղած, Վիեննայի մայր տաճարէն ոչ շատ հեռու տեղ մը: Միւսը Գաբրիէլ Թոգաթեցիինն է եւ անոր օրագրութիւնը կայ Ազգային Գրադարանի ձեռագիրներուն մէջ, որուն մէկ պատճէնը ունիմ մօտս:

Հ.- Ասոնք առաջին եկողներն են. ասոնցմէ անդին ե՞րբ մեծ թիւով հայեր եկած ու հաստատուած են:

Պ.- Շատ քիչ թիւով հայեր, այսպէս, մի քանի հարիւր տարի եկած են Աւստրիա մինչեւ 19րդ դար: Բայց 1800-ական թուականներուն Թուրքիայէն սկսած են գալ հայեր, անոնք որոնք քիչ մը ճնշուած կը զգային, մարգարէական ոգիով, որովհետեւ կը կարծէին որ իրենց ապագան Թուրքիոյ մէջ լաւ պիտի չըլլար: Բայց թիւը միշտ սահմանափակ եղած է:

1860-ական թուականներուն կամ քիչ մը աւելի վերջ ուզած են մատուռ մը, եկեղեցի մը կառուցանել: Այն ատեն Ներսէս Վարժապետեան Պատրիարքը դիմում ըրած է, բայց այդ գործը չէ յաջողած:

Հ.- Նկատելով որ Վիեննան մշակոյթի կեդրոն եղած է, արդեօք ուսանողներ եկա՞ծ են այդ օրերուն:

Պ.- 19-րդ դարուն, այո՛, սկսած էին գալ. մասամբ Ռուսաստանէն եկած են ուսանելու եւ վերադարձեր են, մասամբ Պարսկաստանէն: Ես երբ 1961-62 թուականներուն այստեղ եկայ եւ 1962 Յունուարին հաստատուեցայ, այն ատեն ըսենք 15-20 ուսանող կար, 10-էն 15ը պարսկահայ էին: Մեծ մասը բժշկութիւն, մէկ կարեւոր մասը երաժշտութիւն կ'ուսանէր:

Հ.- Սա հաշուով, Յեղասպանութենէն յետոյ է որ մեծ թիւով հայեր եկան ապաստանիլ Վիեննա:

Պ.- Այսպէս հատուկեօնտ եկած են. այսպէս, սահմանափակ թիւով մնացած է, 50-ի եւ 100-ի միջեւ: Ուզած են Վարժապետեան Պատրիարքի ժամանակ եկեղեցի մը հիմնել, ինչպէս ըսի, սակայն իրաւունք չեն ստացած...

Հ.- 1915-էն ետք ուրեմն գաղութը աճած է: Ի՞նչ պայմաններով արդեօք:

Պ.- Այո, 1915-16-էն վերջ...: Հաւանաբար 1895-ի ջարդերէն վերջ եկած են նաեւ եւ, բնական է, Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքին եւ անկէ վերջ բոլոր անոնք, որոնք կրցած են իրենց կեանքը փրկել, եկած են հոս: Բայց միշտ սահմանափակ եղած է անոնց թիւը: Հաւանաբար, 100-150 հոգիի շուրջ միայն:

Հ.- Մեր հասկացողութեամբ ե՞րբ որպէս համայնք ծնունդ առաւ Վիեննայի հայութիւնը:

Պ.- Ուրեմն, փակագիծի մէջ հետեւեալը պէտք է ըսեմ, որ Քոբոտի-

նա, ժամանակ մը, որ Աւստրո-Հունգարական կայսրութեան մէջ կ'իյնար եւ այդ ժամանակ Սուլավայի վանքը, որ այսօր Ռումանիոյ մէջն է, ըսեմ թէ ատիկա կ'իյնար Հաբսպուրկի մէջ, եւ անիկա կը նկատուի մայրը այստեղի համայնքին:

Կայսրը, Եռնէֆ (Յովսէփ) Բ. 1780-81 թուականներուն, որ կ'ընէր իր բարեկարգութիւնները... ինչպէս բողոքականներու նկատմամբ անհաշտ քաղաքականութիւն մը ցուցաբերած է, անհանդուրժող դիրք ունեցած է:

Այդ ժամանակներուն ան այցելած է Սուլավայի վանքն ու եկեղեցին, եւ ներկայ գտնուեր է պատարագին եւ այնքան տպաւորուած է, որ իր ժամանակուայ Հատիք հրամանատարին ղրկած է նամակ մը, ըսելով թէ կաթոլիկ եկեղեցիէն մեծ տարբերութիւն մը չունի հայկական եկեղեցին, լա՛ւ մարդիկ են, նայեցէք որ հայերու նմանները բերուին կայսրութեան մէջ: Բարձրօրէն տպաւորուած է կայսրը հայութեամբ:

Սուլավան, այսպիսով, կը նկատուի մայրը Աւստրիոյ համայնքին:

1921-ին, այնտեղի համայնքի ընտանիքներէն մէկը, որ բարեկեցիկ եղած է, գորգի մեծ գործ ունեցած է, ուզած է իր երախաներուն մկրտութեան համար քահանայ մը բերել: Դիմած է Ռումանիա եւ այնտեղէն եկած է առաջին հովիւը, 1912-ի վերջերը, Սուլավայէն, Արիստակէս քահանայ Ֆէսլեանը: Անիկա իր հետ բերած է նաեւ եկեղեցական ծէսի, ժամբարգութեան գիրքեր, երկու սրբապատկերներ, սկիհ... եւայլն, որոնք մինչեւ այսօր կը պահուին:

Երկու-երեք հայեր միասին յարկաբաժին մը կ'առնեն եւ զայն կու տան համայնքին, որպէսզի օգտագործեն: Այդպիսով, առաջին մատուռը, առաջին թաղամասին մէջ, որ Տոմինիքանըր Պասթայ կը կոչուի, չորրորդ յարկի վրայ մատուռը ձեւով մը կը հիմնուի:

Վերջը, Համաշխարհային Պատերազմէն ետք, 100-ի հասնող համայնքը կը ցրուի, սակայն յետոյ նոր գաղթականներով դարձեալ գաղութը կ'աշխուժանայ: Հետզհետէ բաւական հայերու ժամանումով, քանի մը հարիւրի կը հասնի համայնքը:

1928-29 թուին դարձեալ Ռումանիա կը դիմեն, եւ Եղիշէ Իւթիւճեանը կու գայ որպէս քահանայ, որ 30 տարի որպէս քահանայ (1929-էն մինչեւ 1959) այստեղ հովուութիւն կ'ընէ: Ամուսնացած քահանայ էր, մէկ տղայ, մէկ աղջիկ ունէր, որ Աթէնք ամուսնացած էր ու հոն կ'ապրէր: Թոռներ ունէր եւ տղայ մը՝ Արամ Իւթիւճեան, որ տակաւին հոս ողջ է, եւ որուն մեծ տղան Աթէնք կ'ապրի եւ միւսը՝ փաստաբան է, որ հոս կ'ապրի եւ երկար տարիներ եկեղեցւոյ վարչութեան մէջ կ'աշխատէր:

Հ.- Ինչպէ՞ս սկսաւ եկեղեցւոյ ծրագիրը Վիեննայի մէջ:

Պ.- 1961-ի ամառը, երբ դեռ ուսանող էի, շատ համեստ հազուած կ'իյն մը եկաւ եկեղեցի, Կիրակի օր, տարիքոտ, շատ հաւատացեալ... գետինները կը համբուրէր...: Զերմեռանդ, բայց թափթփած հաքած...: Զեռքը 20-30 տարուան հիւն պայուսակ մը կար: Պատարագէն վերջ, ըսեմ որ փոքրիկ մատուռ մըն էր, ուրեմն 25-30 հոգի ըլլային սրահը կը լեցուէր, հարցուց թէ ինչո՞ւ եկեղեցի մը չենք շիներ: Պատասխան անգամ չտուինք: Ի՞նչ պիտի պատասխանես այս կնոջ:

Նորէն ու նորէն հարցուց... ըսինք որ դրամ չունինք եկեղեցի ունենալու համար: Ու պատասխանեց. «Եթէ ես ձեզի դրամը տամ, կը շինէ՞ք»: Այսպիսով սկսաւ: Թող Թրիքի էր անգլիական անունը... հայկական անունը՝ Հռիփսիմէ Հալլաճեան, իզմիրցի: Ուրեմն, 20-ական թուականներուն երբ Իզմիրը կը պարպուի, անգլիացի իր ամուսնոյն հետ Անգլիա կու գայ: Դժբախտաբար, Համաշխարհային Երկրորդ պատերազմին ամուսինը ճակատ կ'երթայ եւ չի վերադառնար: Ինքը ուսումով շատ համեստ մէկը եղած է, ո՛չ շնորհքով հայերէն կրնար խօսիլ ու գրել, ոչ ալ անգլերէն: Բայց եթէ հաւատանք բախտի, ասիկա առտու մը կ'ելլէ, թերթը կ'ուսումնասիրէ... բաժնեթուղթեր, ո՞րը կ'ելլէ, ո՞րը կ'իջնէ... հեռաձայն կ'ընէ, բաժնեթուղթեր կը գնէ: Այս ձեւով, այդ օրերուն ունէր մօտ 125 հազար փառնտ սթերլինկ, որ լաւ գումար էր այդ ժամանակ:

Շինութեան ծախսին մասնակցեցաւ: Ըսեմ թէ անձնապէս ես գրած եմ կտակ-նամակը, էջմիածնին նուիրած էր: Իր փափաքն էր որ հողը համայնքը գնէր, ինք շինութեան ծախսը հոգար:

Ուրեմն, Երրորդ թաղամասին մէջ առինք շէնք մը, որուն հետ բակ մը կար: Նպատակաւարմար էր որ այդ բակին վրայ բարձրացնէինք եկեղեցին: Այս տեղի ունեցաւ 1964 թուականին եւ 1964-ի Յունիսին վերջերը կատարեցինք հիմնարկէքը եւ հրաւիրեցինք բարերարուհին՝ Տիկ. Հալլաճեանը, որ ներկայ եղաւ, բայց դժբախտաբար, քանի մը ամիս ետք մահացաւ:

Ճիշդ այդ օրը, երբ հիմնարկէքը կամ անկիւնաքարը դրինք, Հայաստանէն թուրիստական խումբ մը եկաւ, որուն մէջ էր Երեւանի քաղաքային ճարտարապետ Եղուարդ Սարապեանը: Պրն. Սարապեան խանդավառուելով խոստացաւ յատկազօծը պատրաստել անվճար: Խորհեցայ, որ քաղաքավարական ազնիւ խօսք մըն էր: Բայց իսկապէս, մէկ-երկու ամիս վերջ էջմիածնի միջոցով ստացանք հսկայ գիրք մը, ուր կային բոլոր յատկազօծերը. մանրամասնօրէն դրուած էր խորանը, գմբէթը, եւ այլն:

Շատ պզտիկ փոփո-
խութիւններ ըրինք
հողին պատշաճեցնելու
համար:

Հ.- Ի՞նչ արժեք ձեր
այս գեղեցիկ եկեղեցին:

Պ.- Այդ ժամանակ 1.5
միլիոն շիլինկ արժեք
միայն շինութիւնը, երբ
այն ատեն տուարը 25
շիլինկ էր:

Բնական է այսպիսի
կառոյց մը այսօր
քսանապատիկ աւելի
պիտի արժէ:

Հ.- Ո՞վ կատարեց
եկեղեցիին բացումը:

Պ.- Վազգէն Վեհա-
փառին ձեռամբ կատա-
րեցինք. Ապրիլ 21, 1968-ին էր: Նախատօնակը ըրինք եկեղեցիին ու
բացումը եկեղեցւոյ կից մշակութային սրահին: Ներկայ եղաւ Պոլիսէն
Շնորհք Պատրիարքը, ան Վեհափառին միացաւ: Մեզի նուէր մը բերաւ
ինք, եթէ չեմ սխալիր Արմաշի Վանքէն, հրաշագործ Աստուածամօր
նկարը, որ կը պահենք:

Հ.- Եկեղեցւոյ կից ի՞նչ շարժումներ ունի համայնքը:

Պ.- Բոլոր կազմակերպութիւնները մեր եկեղեցիին համալիրին մէջ
են: Ունին իրենց գրասենեակները չէնքին մէջ: Հ.Բ.Ը.Մ.ը եւ Հ.Մ.Ը.Մ.ը
ունին իրենց յարկաբաժինները: Դպրոցը ունի մի քանի յարկաբաժին:
Եկեղեցւոյ Վարչութիւնը ունի իր գրասենեակը:

Հ.- Ինչպիսի՞ հանգամանք ունի Վիեննայի եկեղեցական աթոռը:

Պ.- 1962 Յունուար 3-ին ես հասայ այստեղ իբր հովիւ, պայմանաւ որ
Պէյրուի պիտի երթայի երեք տարի ետք, ինչպէս ըսի:

Ըսեմ թէ Պէյրուի մէջ կը հրատարակէինք «Սփիւռք» թերթը
Գէորգ Աճեմեանի եւ Սիմոն Սիմոնեանի հետ: Մեր հետ էին Լեւոն



Ս. Խաչ եկեղեցւոյ մուտքը:

Վարդան, Սարգիս Խայեան: Դարուհի Յակոբեան եւ Յովակիմեան-Մանուկեան ուսուցիչ էի կրօնի եւ հայագիտական դասերու: Շատ լաւ կը զգայի եւ կ'ուզէի վերադառնալ: Համոզեցին որ սպասեմ, մինչեւ եկեղեցւոյ շինութեան աւարտը եւ ահա՛ 45 տարի է ի վեր արդէն հոս եմ:

Ուրեմն պատասխանելով հարցումին, 1962-էն սկսեալ Գերմանիոյ մանաւանդ հարաւային շրջանները կ'այցելէի՝ պատարագ մատուցանելու. գացած եմ, սակայն, մինչեւ հիւսիս, Պերլին, նշելու Ապրիլ 24ի սգահանդէսը:

Ամէն ինչ պաշտօնականացաւ 1980 թուականին: 1979-ի վերջը, Վեհափառէն հրահանգ եկաւ զինք տեսնելու: Այն ատեն կը պատրաստուէի Ամերիկա գալու եւ Ֆիլատելֆիոյ մէջ գումարուող առաջին հայագիտական համագումարին մասնակցելու: Վեհափառին գրեցի որ այդ համագումարէն ետք երթամ Էջմիածին:

1979-ի Դեկտեմբերին Հայաստան այցս նշանաւոր ճամբորդութիւն մըն էր, պատմական ձեւով մը: Գարեգին Աբեղայ (Կտրիճ) Ներսէսեանը, որ 1972-էն 1975 իմ մօտս էր այստեղ՝ տունս, եւ որ վերջը Գերմանիա ուղարկած էի, 1979-ին թողած էր Գերմանիան, Վեհափառին թելադրութեամբ վերադառնալու Մայր Աթոռ եւ ծառայելու հոն:

Երբ Մոսկուա հասաւ, Գարեգին արեղան զիս դիմաւորեց. կ'ուզէր ուղեկցիլ մինչեւ Էջմիածին: Օդանաւի ժամը եկաւ, սակայն չկրցանք մեկնիլ, որովհետեւ Երեւան մշուշապատուած էր. իսկապէ՞ս մշուշ էր, թէ՞ տարբեր «մշուշ», չենք գիտեր: Մնացինք 2-3 օր. ձանձրացայ, մինչեւ կէս գիշեր օդակայան կը մնայինք, յետոյ իր հետ վազելով Մոսկուա քաղաք կ'իջնէինք:

Քանի մը օր ետք հեռաձայնեցի Վեհափառին ըսելով թէ պիտի վերադառնամ: «Ո՛չ, անպայման պիտի գաս», ըսաւ: Իսկապէս ալ չոր-րորդ օրը լուր տարածուեցաւ, որ օդանաւ մը երեկոյեան ճամբայ պիտի ելլէ: Անշուշտ, քիչերուն կը վիճակուի այդ օդանաւով Երեւան երթալ:

Ուրեմն, Էջմիածնի մէջ Կաթողիկոսը յայտնեց որ տրամադիր է ստեղծելու հայրապետական պատուիրակութիւն մը կեդրոնական Եւրոպայի համար, որուն մէջ պիտի իյնային Աւստրիան, Գերմանիան եւ Սկանտինաւեան երկիրները: Զկրցայ մերժել, բայց ըսի թէ զիս անմիջապէս եպիսկոպոս պիտի չձեռնադրէք: Համաձայնեցաւ: Կոնդակը գրեց եւ 1980 Յունուար 1-էն սկսեալ եղայ հայրապետական պատուիրակ, երկար ատեն ալ այդպէս մնաց:

Հ.- Լա՛ւ ճանչնալով մեր Վեհափառ Հայրապետը, ուրախ պիտի ըլլամ լսել ձեզմէ իր մասին: Ծանօթ էք եղած Գարեգին Կաթողիկոսի դժուարին

օրերուն նաեւ: Վստահ եմ թէ ձեր խօսքը պատմական նշանակություն էւս պիտի ունենայ այս մեր հարցազրոյցին մէջ:

Պ.- *Բնական է, իբր մարդ ու ազգային գործիչ եւ եկեղեցական առաջնորդ, շատ առիթներով օգնած եմ շատերուն: Ոմանց կեանքը, այսպէս ըսեմ, փրկած եմ: Մի՛շտ մարդիկ ապերախտ գտնուած են:*

Ներկայ Կաթողիկոսը այն բացառիկներէն է, որ երախտապարտ անձ մըն է:

Ես կը կարծեմ որ շատ սովորական ձեւով իրեն այստեղ հոգատարութիւն ցոյց տուի: Ինքը կը խորհի որ բացառիկ ուշադրութիւն ըրած եմ իրեն: Եւ չա՛տ երախտապարտ, բոլորին, նոյնիսկ Հ.Բ.Ը.Մ-ի դեկավարներու առջեւ կը յայտարարէ, թէ Մեսրոպ Սրբազան ամէն ինչ սորվեցուցած է, իր ուսուցիչն է, ամէն ինչ ինծի կը պարտի... Եւ անիկա ցոյց կու տայ նաեւ անձին ազնուութիւնը կամ ազնուական նկարագիրը: Մէկը որ այդ ազնուութիւնը չունի, ապերախտ է... կը նշանակէ որ որոշ թերութիւն մը կայ այդ անձին վրայ, չէ՞. իր մօտ այդ ոգիի ազնուութիւնը կայ:

Այդ օրերուն, ինչպէս մի՛շտ, ի՛մ նիւթական վիճակն ալ լաւ չէր, սակայն յաճախ կու գար ինծի, միասին կը պատրաստէինք մեր ընթրիքը, ինչ որ կար իմ տրամադրութեանս տակ, եւ կը զրուցէինք: Տնօրհնէքներու միշտ հետս կը տանէի հասկնալի պատճառներով: Աղոտոր յիշատակներ ունիմ այդ օրերէն:

Աշխատասէր ու ջանասէր է եւ պայմաններու բերումով այնպէս եղաւ որ երկրաշարժէն ետք փորձառութիւն ձեռք ձգեց շինարարական գործին մէջ: Հիմա իբր Կաթողիկոս շինարարական մեծ աշխատանք կը տանի:

Արդէն արքեպիսկոպոս եղած ատեն Սեւանի դպրեմանքը հիմնեց, որ շատ կարեւոր ձեռնարկ մըն էր. կը շարունակուի Դամասկոսէն Եազուպեան բարերարին օժանդակութեամբ:

Անցեալին այնպէս էր որ տարեց, 60-70-էն վեր հոգեւորականներ կաթողիկոս կ'ընտրուէին: Հիմա այնպէս է որ ատիկա անկարելի է, որովհետեւ պարտականութիւնները անքա՛ն շատ են, որ դժուար թէ յառաջացած տարիքով մէկը այս բեռը կարենար տանիլ: Օրինակ՝ Վեհափառ մէկ ամիս Ամերիկա էր: Առտուընէ մինչեւ իրիկուն չըջեցաւ, քարոզներ տուաւ, ժողովներ ըրաւ, պատարագեց: Երեւակայեցէք եօթանասուն տարեկան կաթողիկոս մը ինչպէ՞ս պիտի կարենար դիմա-նալ երեսուն օրեր:

Առաջ կաթողիկոս ընտրուողը թերեւս Հայաստանի մէջ փոքրիկ հովուական ճամբորդութիւններ կ'ընէր. այդքա՛ն: Պայմանները

փոխուած են, այս օրերուն պէտք ունինք երիտասարդ ժրաջան հոգեւորականներու:

Ես չատ ուրախ եմ, չատ հպարտ եմ իրմով:

Հ.- Իսկ ազգային կեանքի որպէս տիպար զո՞ւլ ունիք ձեր մտքին մէջ:

Պ.- Այն անձնաւորութիւնները, զորս ճանչցայ, նո՛յն հեղինակաւոր անձնաւորութիւններն են, որ նաեւ քեզի ծանօթ են: Առաջին առիթով Գերսամ Ահարոնեանը պիտի յիշեմ: Ինք թէեւ աւետարանական էր, սակայն խտրութիւն մը չկար: Զիս քաջալերած էր որ «Զարթօնք»ին աշխատակցիմ, գրեմ, յայտնի եւ ծածուկ անուններով: Ինքը նուիրուած, խանդավառ, սկզբունքի տէր կուսակցական մըն էր: Եւ կը կարծեմ որ Ահարոնեանը այդ բոլորին մէջ շատ յիշատակելի տեղ մը ունի:

Վերջը բնական է Փրոֆ. Բարունակ Թովմասեանը, զոր ճանչցած եւ գնահատած եմ, եւ բնականաբար Մեթր Հրաչեայ Սեդրակեանը:

Ուսուցիչներէս՝ նախակրթարանի մէջ Սիսեռեան մը կար, կը յիշեմ տակաւին Դերձակեանը եւ, անշուշտ, Սիմոն Սիմոնեանը: Նաեւ Խորէն Գաբրիկեանը, որ համայնագիտական միտք ունէր: Աւելի ուշ երբ Յովակիմեան կը դասաւանդէի, բնականաբար տպաւորած է զիս Արա Թոփճեանը, որ պատրաստուած ուսուցիչ եւ տնօրէն մըն էր:

Վանքէն ներս... կը տատամսիմ, սակայն Շահան Պէրպէրեանը կրնամ ըսել որ եղած ըլլար մեր մեծագոյն դէմքը, որուն աշակերտ եղած եմ: Մայրավանքէն ներս դրացի էինք իմ ձեռնադրութենէն վերջ: Յաճախ սենեակիս մէջ կը զրուցէինք Պոլսոյ մտաւորականութեան մասին: Անշուշտ, Սիմոն Սիմոնեան գրաբարի եւ մատենագրութեան որպէս ուսուցիչ յարգելի էր: Եւ ի վերջոյ գործակիցներ ու պաշտօնակիցներ դարձանք:



ԱՇՈՏ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

Հ.Հ. Դեսպան Աւստրիոյ մօտ



Հ.- Հայաստանի Հանրապետութեան դեսպանատունը ե՞րբ ծնունդ առաւ հոս եւ ո՞վ էր առաջին հաւատարմատարը:

Պ.- Հայաստանի դեսպանատունը բացուեց 1993 թուականին եւ Արման Նաւասարդեանն էր Հայաստանի առաջին դեսպանը: Այդ պահից սկսեալ ես Աւստրիայում Հայաստանի չորրորդ դեսպանն եմ: Այն ժամանակ դեսպանատունը ե՛ւ մշտական ներկայացուցչութիւն էր միջազգային կազմակերպութիւններում, ե՛ւ մշտական դեսպանութիւն: Հիմա ունենք երկու առանձին կազմակերպութիւն՝ ներկայացուցչութիւն Ե.Ա.Հ.Կ.ում եւ Մ.Ա.Կ.ում, Պրն. Թապիպեանի գլխաւորութեամբ, եւ դեսպանութիւն չորս երկրների՝ Աւստրիա, Հունգարիա, Սլովաքիա եւ Չեխիա, իմ գլխաւորութեամբ:

Հ.- Արդեօք Աւստրիան փոխադարձաբար դեսպանատուն ունի՞ Հայաստանի մէջ:

Պ.- Աւստրիան ունի դեսպանատուն Հայաստանի համար. այսինքն՝ աւստրիացիները չունեն այնտեղ բնակուող դեսպան. ընդհանրապէս չունեն դեսպան Կովկասում, բայց իրենց արտաքին գործոց նախարարութեան մէջ առանձին դեսպանութիւն է կոչուում, իր գրասենեակը ունի, իր դեսպանը ունի, որ Կովկասի երեք երկրների համար է եւ նստավայրը Վիեննայում է:

Բայց նրանք էլ փոփոխութեան ենթարկուեցին, որովհետեւ մինչեւ այս նոր դեսպանի նշանակումը, կար եւս մէկ դեսպան, որը միաւորում էր Կովկասն ու Կենտրոնական Ասիան. այսինքն՝ ութը երկրներ: Հիմա բաժանուել եւ դարձել են առանձին:

Հ.- Ինչպիսի՞ն է գաղութին վերաբերումը ընդհանրապէս դեսպանատան նկատմամբ: Ծանօթ ենք որ ամէնուրեք, Հայաստանի անկախութենէն ետք, տեղական գաղութները իրենց անմիջական նիւթական օժանդակութիւնը բերին Հայաստանի դեսպանատուներուն:

Պ.- Գիտէ՞ք, ես, ի հարկէ, մանրամասն չեմ իմանում թէ ինչպէս էր 15 տարի առաջ, բայց, այսպէս ասած, տարբեր տեղեկութիւններից

գիտեմ որ երբ նոր հիմնադրուեց ղեսպանատունը եւ երբ առաջին ղեսպանները եկան, իսկապէս գաղութը լայն օգնութիւն ցուցաբերեց: Մանաւանդ այդ ծանր ժամանակներին, երբ կարիքները շատ էին, բաւականին լուրջ օգնութիւն եղաւ: Աւստրիահայ համայնքը իր կարեւորութեան սահմաններում օգնում էր եւ կ'օգնի:

Հ.- Այսօր փառաւոր շէնքի մը տէրն է դեսպանատունը: Ինչպէ՞ս կարելի դարձաւ այս:

Պ.- Այստեղ, ուրեմն, այս շէնքը արդիւնքն է Հայաստանի նոր, վերջին տարիների պետութեանը, որովհետեւ այն մի մեծ նոր ծրագրի մէկ մասնիկն է: Հայաստանի կառավարութիւնը որոշում կայացրեց որ ամէն տարի տարբեր երկրներում, մանաւանդ այն երկրներում, որտեղ չունենք սեփական ղեսպանատուն, մէկ կամ երկու ղեսպանատուն դառնայ մեր պետութեան սեփականութիւնը:

Եւ մի քանի երկրում դա արուեց, հերթը հասաւ Վիեննային եւ մենք այս ամբողջ շէնքը եւ տարածքը բաւական փնտռութեան յետոյ գնեցինք: Մեր նպատակների համար գոհացնում է: Մենք սա գնեցինք Հայաստանի կառավարութեան պիւտճէով՝ 970 հազար Եւրոյի: Բայց ինչ վերաբերում է շէնքի վերանորոգման, որովհետեւ շէնքը շատ հին էր, 130 տարեկան, ահագին շինարարական աշխատանք կատարեցինք եւ դեռ անելիք չաւ կայ:

Տակաւին վերջնական պաշտօնական բացում չենք կատարել, որովհետեւ ես դեռ չեմ հաւատում որ մենք պատրաստ ենք:

Մենք արեցինք մի ուրիշ միջոցառում, որը կոչեցինք բաց դռների օր եւ դա արեցինք Հայաստանի Անկախութեան Օրուան առիթով, որովհետեւ մենք չունենք մեծ տարածք, որտեղ կարող ենք կազմակերպել Անկախութեան Տօնը: Դա արեցինք դուրսը՝ բակում: Հոյակապ օր էր եւ մենք կանչեցինք բոլոր ցանկացողներին, ուր որ հասաւ մեր յայտարարութիւնը: Նաեւ հրաւիրեցինք բոլոր նուիրատուներին, որոնք տարիների ընթացքում համայնքից նուիրատուութիւն էին անում շէնքի գնման կամ տարածք առնելու համար: Ասեմ որ, ինչ որ ունենք այսօր, երբ բաղդատենք համայնքի տուած նուէրների հետ, մեծ տարբերութիւն կը նկատենք: Նուիրատուներից եւ վարչութիւններից հաւաքուած գումարը օժանդակեց առայժմ այս կահաւորման եւ վերանորոգման, որը միջին որակի վերանորոգում է, որովհետեւ դեռ շատ անելիք կայ:

Հ.- Վստահ եմք թէ պայմանագրեր ստորագրուած են երկու երկիրներու միջեւ: Ի՞նչ կարելու պայմանագրեր կրնաք յիշել:



Հայաստանի դեսպանատունը Վիեննայի մէջ:

Պ.- Այստեղ շատ մեծ երկկողմ յարաբերութիւններ չեն մշակուած. եղել է նախագահի այցը այստեղ, մի հինգ տարի առաջ, եւ արտաքին գործերի նախարարի այցը: Ունենք մի շարք տնտեսական պայմանագրեր, օդային թռիչքի համաձայնագիր: Այս տարի նախագահը ստորագրեց նաեւ պայմանագիր Վիեննայի դիւանագիտական ակադեմիայի հետ համագործակցութեան վերաբերեալ:

Հ.- Դեսպանատան մէջ քանի՞ դիւանագէտ ունիք:

Պ.- Շէնքի մէջ մենք երկու դեսպանատուն ունենք, եւ ամէն մէկը՝ չորս դիւանագէտ:

Հ.- Հայաստանի տնտեսական ծանր պայմաններուն բերումով մեծ թիւով հայեր արտագաղթած են, ցաւ ի սիրտ: Անոնց մէկ մասը Եւրոպայի զանազան համայնքներուն մէջ այսօր տեղաւորուած է: Ինչքա՞ն է Հայաստանէն դուրս բնակող հայերու թիւը Աւստրիոյ պարագային:

Պ.- Գիտէք ինչ, ես չեմ կարող գնահատական տալ, սակայն կարող եմ միայն քիչ թէ շատ անպաշտօն տուեալներ տալ, որոնք մենք գիտենք Աւստրիոյ ներքին գործերի նախարարութիւնից:

Հ.- Մօտաւոր գնահատական մը տուէք:

Պ.- Գիտէ՞ք ինչ, ես չեմ ուզում սպեկիւլատիւ ինչ-որ թուեր ասել, որովհետեւ ես նոյնիսկ մինչեւ հիմա, օրինակ, չեմ կարող ասել հայ համայնքի թիւը...: Իսկ եթէ Մեսրոպ Սրբազանը վստահ է, կարող է ասել: (Սրբազանը կը նշէ թէ Վիեննայի մէջ կարելի է երեք հազար հայ հաշուել, իսկ չըջակայքը, երկու հազար - Յ.Վ.:) Ենթադրաբար մէկուկէս հազար լինելու է հայաստանցիներին թիւը՝ զանազան կարգավիճակներով:

Հ.- Որեւէ կապ կա՞յ արդեօք քաղաքացիներուն եւ դեսպանատան միջեւ:

Պ.- Ի հարկէ, մեր քաղաքացիները Աւստրիայում մեր դեսպանատան անմիջական պաշտպանութեան տակ են: Եթէ մեր քաղաքացիները իրենց վտանգուած նկատեն կամ որեւէ խնդիր ու հարց ունենան, օրինակ՝ փաստաթղթերի փոխանակում, կարող են դիմել դեսպանատուն եւ մենք մեր հիւպատոսական եւ իրաւական ծառայութիւններով օգնութիւն կը մատուցենք:

Ինչքան ես հասկանում եմ, Հայաստանի քաղաքացիները հիմնականում Աւստրիայում փախստականի կարգավիճակ փնտռողներ են, որոնք ուրիշ պետութիւնից են պաշտպանութիւն հայցում, ցաւօք սրտի:

Հ.- Կարգ մը ուրիշ դեսպանատուներ մշակութային ձեռնարկներ կամ նկարչական ցուցահանդէսներ կը կազմակերպեն: Արդեօք Աւստրիոյ Հ.Հ. դեսպանատունը ունի՞ր նման ծրագիրներ:

Պ.- Անպայման, որովհետեւ մշակութային քարոզչութիւնը մեր նպատակներից մէկն է այս երկրում: Ի վերջոյ, Վիեննան Եւրոպայի մշակութային կենտրոններից է: Այստեղ մրցակցութիւնը մեծ է եւ մեծ գումարներ են հարկաւոր: Մենք ծրագրել ենք կազմակերպել քիչ, բայց բարձր որակի միջոցառումներ: Համայնքի մէջ թէեւ արւում են մշակութային այլազան ձեռնարկներ, մեզ համար կարեւոր է մեր մշակութիւնը ներկայացնել տեղացի աւստրիացիներին: Իմ այս մէկուկէս տարուայ շրջանին մի քանի լուրջ ձեռնարկներ կատարեցինք եւ դրանով ես չատ հպարտ եմ:

Հ.- Օրինակ...:

Պ.- Եկեղեցական վարչութեան ֆինանսաւորմամբ եւ միւս միութիւնների օժանդակութեամբ տրուեց մեծ համերգ: Յասմիկ Պապեանն էր, Սերգէյ Խաչատրեանը եւ Վարդան Մամիկոնեանը՝ այսօրուայ մեր Հայաստանի երեք լաւագոյն կատարողները: Համերգին մի չորս

հարիւր հոգի կար: Դա կատարուեց փաստօրէն հայութեան համատեղ ջանքերով: Ապրիլ 24-ի հետ կապուած ձեռնարկ, մանկական ցուցահանդէս...: Գիտէք ինչ, ամէն ինչ որ հնարաւոր է, անում ենք:

Հ.- Ի՞նչ էր ձեր մասնագիտութիւնը դիւանագիտական կազմին մասնակցելէ առաջ:

Պ.- Նախքան դիւանագիտութիւնը՝ դիւանագիտութիւն չէր, բայց քաղաքականութեան մօտ էր: Ես պալքանագէտ, սլաւոնագէտ եմ իմ հիմնական մասնագիտութեամբ: Ես զբաղւում էի խրուաթերէն լեզուով: Այսօր չկայ նման մասնագիտութիւն: Նաեւ հեղինակ եմ մի քանի գրքերի՝ պալքանեան ժողովրդների եւ հայերի ազատագրական շարժումների, մշակութային կապերի մասին:

Հ.- Ժամանակ կ'ունենա՞ք ձեր նախասիրած ճիւղով պարապելու:

Պ.- Ոչ, ցաւում եմ:

Հ.- Վիեննայի մէջ կա՞ն արդեօք հայկական ամսագրական կուսակցական խմորումներ, շարժումներ:

Պ.- Դեսպանատանը չկայ: Չեմ կարծում. որպէս կազմակերպութիւն չկան: Կայ Բարեգործականի մասնաճիւղ. ա՛յսքան:

Հ.- Ինչպէ՞ս են ձեր յարաբերութիւնները մեր եկեղեցիին հետ: Հայաստանեայց եկեղեցին Աւստրիոյ մէջ Էջմիածնի Մայր Աթոռին ենթակայ է, ի տարբերութիւն կարգ մը այլ երկիրներու: Նաեւ, ինչպէ՞ս են ձեր յարաբերութիւնները առաջնորդին հետ:

Պ.- Այսինքն ինչպէ՞ս կարող էին լինել յարաբերութիւնները Հայ Առաքելական եկեղեցիի զաւակ Սրբազանի հետ: Որպէս հաւատացեալի՝ շատ ժամանակ չունեմ, բայց երբ հնարաւորութիւն լինում է, մի՛շտ եկեղեցի այցելում եմ:

Հ.- Ըսիք թէ պաշտօնի բերումով գլխաւոր դիւանագէտն էք նաեւ երեք այլ երկիրներու: Ի՞նչ մակարդակի ներկայացուցչութիւն ունիք արդեօք:

Պ.- Մենք ունենք միայն մէկ ներկայացուցչութիւն՝ Փրակայում, մի քանի ամիս առաջ դրուած: Վիեննայի դեսպանութեան գրասենեակ ունենք Փրակայի մէջ՝ անունով հաստատուած: Չեխիան իսկապէս լուրջ երկիր է մանաւանդ Հայաստանի համար: Ես ի վիճակի չեմ եւ հնարաւորութիւններ չունենք որ անընդհատ կարողանանք մի երկրից միւսը ճամբորդել, սակայն ամենակարեւոր զարգացումների պարագային ես

այցելում եմ: Փորձում եմ ամէն մէկ երկիր դռնէ տարուան մէջ երեքից չորս անգամ այցելել, բայց ոչ ամէն ամիս: Սլովակիան աւելի հեշտ է, աւելի մօտ է: Նման գրասենեակ ունենալը մեր գործը կարող է դիւրացնել: Մենք անընդհատ կապի մէջ ենք:

Հ.- Հայաստան Համահայկական Հիմնադրամի վարչութիւն կա՞յ Վիեն-
նայի մէջ: Եթէ կայ՝ ի՞նչ արդիւնք կու տայ:

Պ.- Հայաստան Հիմնադրամը ունի իր վարչութիւնը, թելեթոնի աշխատանքներին մասնակցում է. գիտեմ որ աշխատում են:



ԼԵՒՈՆ ԹՈՐՈՍԵԱՆ

Ատենադպիր Հ.Բ.Ը.Միութեան

Մասնաճիւղի



Հ.- Մօտաւորապէս երեսուն տարիներէ ի վեր դուք հաստատուած էք Վիեննա եւ մօտէն ծանօթ էք վիեննահայ գաղութին: Ինչո՞ւ այս գաղութը, նման այլ գաղութներու, չկրցաւ կազմաւորուիլ կանոնաւորապէս դուրսէն եկող գաղթականներով:

Պ.- Ըստ իս, գաղտնիքը ձեռով մը եկ-
ւորներուն յարաբերական տկարութիւնն է: Մանաւանդ, մեր տեսակի մտածողութիւն ունեցողներու՝ ռամկավարա-
միտներուս հազուադիւտ ըլլալն է: Եթէ այսօր հոս ռամկավարներ համրեմ, միայն մէկ ձեռքիս մատերուն վրայ կարելի է ամփոփել: Ուրեմն դժուար էր այդ քիչ թիւով տղաներով զօրաւոր շարժում սկսիլ:

Միւս կողմէ, սակայն, գաղութը ինքը բաւականին աշխոյժ ու տինամիք է: Հայկական աւիւն ունի, դիմագիծ ունի եւ իր թիւին համաձայն (3-4000 հայութեամբ) ունի յարաբերաբար մեծ թիւով կազմակերպութիւններ: Ունի Հ.Բ.Ը.Մ., Երիտասարդական Միութիւն, Հ.Մ.Ը.Մ., ունի Հայ Աւստրիական Մշակութային Ընկերակցութիւնը, ու դեռ Միւլթարեանները ունին իրենց Համակիրներու Միութիւնը, որ բաւական գործունեայ է:

Ըսելիքս այն է որ, գաղութը փոքր ըլլալով հանդերձ, հինէն հայա-
սիրութիւնը բոյն դրած է եւ յարաբերաբար պէտք է ըսել որ աշխոյժ համայնք մըն ենք:

Դժգոհ ըլլալու պատճառ մը չունինք, միայն թէ առաքելական համայնքէն ներս երկփեղկում եղած է... մի՛շտ երկու զօրաւոր կողմեր եղած, զիրար խօսեցած են...: Ձանք չեն թափած որպէսզի իրենց տարակարծութիւնը մէկ կողմ դնեն եւ համերաշխաբար համայնքը յառաջ տանին: Օր մը այս կողմը կը յաղթանակէ, ուրիշ օր մը վարչականօրէն միւս կողմը:

Հ.- Գալով Բարեգործականին, հոս հինէն ի վեր, դուք վարչական եղած էք: Ի՞նչ է այսօր մեր Միութեան վիճակը Վիեննայի մէջ:

Պ.- Այդ հին, քսան տարի առաջուան փառաւոր գործունէութիւնը չունի Բարեգործականի մեր մասնաճիւղը: Ու ատիկա պէտք է դնել հաւանաբար հայ գաղութներու ընդհանուր պատկերին, այդ perspective-ին մէջ, որովհետեւ մենք չենք կրնար բացառութիւն ըլլալ այս համընդհանուր երեւոյթին մէջ: Իսկ միւս կողմէ, Բարեգործականի պարագան հետեւեալն է. այսպէս կոչուած գաղութի այլադաւան տարրերը,- ու պէտք է ըսել, որ պարսկահայութիւնը իրապէս թիւով բաւական զօրաւոր է,- այդպէս կը մտածեն, այսինքն՝ Բարեգործականի նկատմամբ անոնք շատ տաք, շատ ջերմ չեն:

Իրանի մէջ Բարեգործականը յատուկ ճանաչում չունէր, եւ ուրեմն Բարեգործականի գործունէութեան նկատմամբ որոշ պաղութիւն, անտարբերութիւն մը կար:

Վերջերս, ընդհանուր ժողովին, ուր վարչութիւն պիտի ընտրէին... չկարողացանք նոյնիսկ եօթը հոգինոց վարչութիւն մը կազմել: Ընտրեցինք հինգ հոգի եւ երկու հոգին մնաց առկախ: Ես ատենադպիրն եմ, դեռ մինչեւ անցեալ շաբաթ այդ երկու անդամները թափուր կը մնային:

Հ.- Վիեննան մշակոյթի կեդրոն է: Արդեօք ունի՞ր մտաւորական շրջանակ մը, գոնէ բաղկացած հայ երաժիշտներէ, նկարիչներէ: Սալոն մը ունի՞ր: Մանաւանդ որ մասն խումբ մը ձեր հետաքրքրութիւններուն մաս կը կազմէ:

Պ.- Հասկցայ հարցումին իմաստը: Աւստրիան, ճի՛շդ է, բացառիկ երաժշտական երկիր մըն է: Հոս երաժշտութիւնը կարեւորութիւն ունի: Այդ ճիւղին մէջ թէ՛ գործիք նուագողներ եւ թէ՛ երգիչներ ու խմբավարներ ու յօրինողներ կան: Հիմա թիւ չեմ ուզեր տալ: Կան երիտասարդ ու միջին տարիքի երաժիշտներ: Բայց, հոն ալ դժուարութիւնը Եւրոպայի յատուկ երեւոյթ մըն է: Իրենց մօտ կը պակսի այդ նուիրումի մասը, որ գան ու առանց ակնկալութեան ծառայութիւն մատուցանեն: Եթէ գան, իւրաքանչիւր երգի համար... այսքան գումար պիտի ուզեն:

Այդ կէտը ահաւասիկ մեր յարաբերութիւններուն վրայ տխուր ազդեցութիւն կը ձգէ: Օրինակ, Հայաստանի անկախութեան համար դիմեցինք եւ դրամ ուզեցին: Նոյնիսկ, երեւակայեցէք, մեր հայրենիքի անկախութեան տարեդարձին դրամ ուզեցին: Եւ ստիպուած օտար յայտագիր մը հրամցուցինք...: Այդ օրերուն հասած ենք:

Հ.- Գրասէր էք եղած: Զեզմէ ոչ շատ հեռու, Փրակայի մէջ երիտասարդ մտաւորական մը «Օրեր» անունով թերթ մը կը հրատարակէ: Ինչո՞ւ դուք հոս քանի մը մտաւորականներով նման ծրագրի մը չէք ձեռնարկեր:

Պ.- Շիտակը, 80-ական թուականներուն մեր ունեցած փորձառութիւնը «Հրայրք» չաբաթաթերթի ուղղութեամբ մեզ չքաջալերեց: «Հրայրք»ը փակուեցաւ պարզապէս որովհետեւ բաւարար թիւով ընթերցող չունէր, բաժանորդ չունէր եւ հետեւաբար չկարողացաւ պիւտճէ գոյացնել: Կարելի չէ թերթ մը մնայուն կերպով դուրսէն եկած նիւթական օժանդակութիւններով հրատարակել: Ու այդ է միա՛կ պատճառը: Մի մոռնար, որ Միջին Արեւելքի երկիրներու մէջ հայերէն լեզուն դպրոցներուն մէջ կը դասաւանդուի, հայերէն կարդացող պատրաստ սերունդ մը կայ հոն: Հոս չկայ այդ թիւը, դժբախտաբար: Հոս միջին երիտասարդը կը նախընտրէ գերմաներէն կարդալ: Թող հայերուն մասին հետաքրքրող նիւթ մը ըլլայ, բայց գերմաներէն լեզուով մի՛այն, քան թէ դժուար հայերէնով կարդայ:

Ուրեմն, բաւարար թիւով ընթերցող չունինք, որպէսզի այդ տեսակ ծրագիր մը կարենանք գլուխ հանել:

Հ.- Գաղութահայ մակարդակի վրայ Մեծ Եղեռնի տարեդարձներ արդեօք տեղի կ'ունենա՞ն: Եթէ կ'ըլլան, որո՞նք են կազմակերպողները:

Պ.- Գաղութահայ որ կ'ըսէք՝ գլխաւոր միութիւնները, զորս յիշեցի արդէն, կը մասնակցին: Մեծ Եղեռնը, բարեբախտաբար, կողմի հարց չունի: Եւ ճիշդ Ապրիլ 24ի օրը, մի՛շտ հոգեհանգստեան պաշտօն կ'ըլլայ եւ ամէն միութիւն իր ծաղկեպսակը կը դնէ յուշարձանին առջեւ:

Հ.- Իսկ օտար համալսարանական կամ այլ շրջանակներու մէջ արդեօք Ցեղասպանութեան մասին սեմինարներ կամ դասախօսութիւններ կը կազմակերպուի՞ն:

Պ.- Ոչ այդքան շեշտուած կերպով, կամ յաճախակի ձեւով: Վստահ եմ որ տեղեակ ես, որ քանի տարիէ ի վեր Բարեգործականը, ինչպէս ամէն տեղ, երիտասարդ արհեստավարժներու կազմակերպութիւն մը ստեղծած է: Ուրախութեամբ յայտնեմ, որ հոս ալ այդ խումբը ստեղ-

ծուեցաւ. երկրորդ տարին է եւ որոշ չափով՝ գործունեայ: Ինծի դիմած են, որպէսզի դասախօսութեան շարք մը տամ արեւմտահայ եւ արեւելահայ մեր երկու լեզուներուն վերաբերող: Արդէն պատրաստած եմ:

Հ.- Ինչ կը վերաբերի ձեր անձնական հետաքրքրութիւններուն, հիմա որ հանգստեան կոշուած էք, ի՞նչ մտաւորական աշխատանքով կը պարապիք:

Պ.- Հակառակ իմ նախկին հետաքրքրութիւններուն՝ բնագիտութիւն կամ հիւլէական գիտութիւն, ըսեմ որ վերջին 15 տարիներուն հետաքրքրութեանս կիզիկէտը դարձած է բառարանագիտութիւնը եւ բառերու աշխարհը: Առտու, կէսօր, իրիկուն խելքս բառերով կը զբաղեցնեմ: Մանաւանդ մեր լեզուն, երբ կարգ մը արդիական բառեր չունի եւ կարգ մը բառարաններու մէջ արեւմտեան բառերու համարժէքը չես գտներ: Հետեւաբար, մէկը այդ բառերը պէտք է ստեղծէ: Դժբախտաբար, արտասահմանը չունի իր ակադեմիան: Հայաստանի ակադեմիայի նախագահին՝ Փրոֆ. Բարսեղեանին հանդիպեցայ 1988-ին. ան տուաւ տարեգիրք մը, ուր նոր բառերու ցուցակ մը կար, ուր օտարամուտ բառեր շատ կային:

Հայաստանի մեր մասնագէտներուն մօտ այն գաղափարը կար, որ կարգ մը բառեր օտար չեն: Ըսեմ միայն, մեր՝ արեւմտահայերուս մօտ է որ տակաւին կը պահպանուի բառամթերքի անեղծութիւնը, հարազատութիւնը: Բառ կերտելը շատ դժուար չէ հայուն համար, փառք Աստուծոյ, առատ արմատներ ունինք եւ նաեւ՝ ածանցներ: Կեղրոնացումով կարելի է մեր լեզուն հարստացնել:

Օրինակ տամ. հայաստանցիները կ'ըսեն կինեգոլով իսկ մենք ունինք ի՛նչ աղուող կնախտաբան բառը...:



**ՀԱՅՐ ՊՕՂՈՍ ՎՐԴ. ԿՈՃԱՆԵԱՆ
ԱՐԲԱՐԱՅՐ ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ
ՄԻԱՔԱՆՈՒԹԵԱՆ**



Հ.- Մխիթարեան Միաքանութեան ազգանունէր պատմութիւնը բոլորիս ծանօթ է. կրկնել անելորդ է մանաւանդ այն մե՛ծ աշխատանքը, զոր ձեր միաքան հայրերը կատարած են բանասիրական լուրջ աշխատութիւններով ու հրատարակչական շնորհալի գործունէութեամբ: Կ'ուզեմ իմանալ ձեզմէ, թէ արդեօք Վիեննայի մէջ հայ կաթողիկէ համայնք մը գոյութիւն ունի՞ եւ եթէ այո՛, այդ համայնքը օգտակար կ'ըլլա՞յ ձեր վանքին:

Պ.- Մենք ընդհանրապէս կաթողիկէ ակնոցով չենք նայիր, այլ՝ որպէս հայ կը դիտենք բոլորը: Այստեղ հայ կաթողիկէ չատ քիչ թիւով անձեր կան: Թէ՛ դպրոցներէ ներս եւ թէ՛ ընդհանրապէս, ո՛վ որ կու գայ մեզի, մենք զինք կ'ընդունինք: Մեզի կու գան տեղացիներ: Մեր եկեղեցին բաց է բոլորին:

Համայնք ունինք... կարելի չէ ըսել, բայց որովհետեւ անցեալին հայ կաթողիկէներ կու գային մեր քով մկրտուելու եւ պսակուելու, կ'ընդունէինք զիրենք: Մենք որպէս ժողովրդապետութիւն իրաւունք մը չունինք: Ստիպուած էինք տեղական ուրիշ ժողովրդապետի մը տանիլ մեր թուղթերը վաւերացման համար: Տարիներ առաջ Վիեննայի գարտինալին դիմում կատարուած էր ճանչցուելու որպէս ժողովրդապետութիւն. այդ ճանաչումը, անունը ունինք, սակայն որոշակի կազմակերպուած հանգամանք մը չունինք:

Հ.- Մխիթարեան Միաքանութեան այս կալուածը քանի՞ տարուան պատմութիւն ունի:

Պ.- Միաբանութեան բաժանումը եղաւ Վենետիկէն 1772 թուականին: Նախ բաժնուող վարդապետները եկան Թրիէսթէ եւ հոն մնացին մինչեւ 1810 եւ այդ թուականէն ետք եկան Վիեննա: Մեր հոս հաստատուելուն 200-ամեակը պիտի տօնենք:

Հ.- Գիտեմք որ երկա՛ր բաժանումէ մը ետք դարձեալ միութիւն տեղի ունեցաւ: Ինչպէ՞ս կը տեսնէք այս վանքին ապագան:

Պ.- Նախապէս բաւական խորհրդակցութիւններ ունենալէ վերջ, 2000 թուականին երկու միաբանութիւնները միացան, մէկ արբահայր եւ մէկ

վարչութիւն կազմեցին: Այդ շրջանի Վիեննայի արբաճայրերէն մէկը ես էի: Վենետիկի արբաճօր հետ հրաժարեցանք եւ ընտրեցինք նոր մը: Բայց Վիեննան որպէս պատմական կարեւոր կեդրոն, նորէն արբաճայր տիտղոսով առաջնորդ մը ունի: Սկիզբը անորոշ էր եւ վերջը զիս ընտրեցին դարձեալ Վիեննայի վանքին համար: Միութենէն վերջ ալ այս կեդրոնները կը մնան:

Ըսեմ թէ Վիեննան մշակութային արժէք որպէս շատ աւելի հարուստ է քան Վենետիկը: Գրադարանի հնամեայ գիրքերով, հայ աշխարհի ամենէն ճոխ թերթերու հաւաքածոյով, հայկական դրամներու եւ թանգարանային նկարներու հաւաքածոներով ծանօթ ենք:

Յետոյ, Իտալիայէն տարբեր միջավայր, տարբեր մշակոյթ ունի Վիեննան: Նոյնիսկ քաղաքական ու հոգեւոր պատասխանատուներ կը փափաքին որ հոս որպէս կեդրոն շարունակուի:

Հ.- Առայժմ հոս դպրոց կամ դպրեւանք գոյութիւն ունի՞:

Պ.- Միութենէն վերջ, որոշուեցաւ որ դպրեւանքը մէկ տեղ ըլլայ: Նախ փորձեցին Հռոմ ընել, մէկ-երկու տարի վերջ տեսան որ աւելի յարմար էր Լիբանանը: Լիբանան սկսաւ, սակայն աւելի կարեւոր էր մեզի համար Հայաստանը: Երկու տարի է ի վեր Երեւանի հիւսիսարեւելեան շրջանի Աւան քաղաքին մէջ սկսած ենք դպրոցը:

Հ.- Ուրեմն արտասահմանի աշակերտները այսուհետեւ Երեւան պիտի երթան ուսանելու եւ հոն դպրեւանքի՞ն մէջ պիտի ստանան իրենց կրօնական կրթութիւնը ու ձեռնադրութիւնը վարդապետ:

Պ.- Դեռ մանրամասնութիւնները յստակ չեն: Երկու տարի առաջ սկսանք, այս երրորդ տարին է ընդամէնը: Պիտի ըսեմ որ ես 1995-ին, դեռ միութենէն առաջ, գացի այնտեղ, չէնքի եւ կալուածի փոխանակումներ ըրի: Ամբողջական նախկին ինստիտուտ մը առինք: Եւ ես ամառները, երեք-չորս տարի հոն երթալով կազմակերպեցի չէնքը, նորոգութիւններ կատարելով: 1997-ին արդէն աւարտած էին այդ նորոգութեան աշխատանքները:

Անձի պակաս ունէինք ու այդ օրերուն չկրցանք յաջողցնել այդ սկզբնական ծրագիրը, սակայն 7-8 տարի ուշացումով է որ ահա՛ կը ձեռնարկենք այդ: Վենետիկէն ունինք երկու վարդապետներ, որոնք յանձն առած են դպրոցի հետ կապուած հարցերը: Իմ տարիներու երա՛զս էր այդ: Մեր ապագան հո՛ն է: Սփիւռքի մէջ ձիրուցան եղանք: Լիբանանը շատ լաւ գիտէք: 70-ական թուականներու սկիզբը ես ալ հոն էի: Ունէինք երեք հարիւր հազար հայութիւն:

Այսօր կ'ըսեն թէ Պէյրութի մէջ 30-40 հազար հայ մնացած է, հազիւ:

Հ.- Միութեանն ետք, միաբանութիւնը քանի՞ վարժարան կը պահէ:

Պ.- Նախկին Վիեննայի վարժարաններէն կան, ամենէն հինը՝ Պոլիսը, Պէյրութը եւ նորը՝ Լոս Անճելըսը: Վենետիկի վարժարաններէն՝ Հալէպը, Փարիզը, որ փակուեցաւ եւ միօրեայ դպրոցի վերածուեցաւ, եւ Արժան-թինը, ուր վարդապետ չունինք: Տեսակ մը աշխարհականներուն յանձնուած է գործը շարունակել կարենալու համար:

Հ.- Կը խորհի՞ք որ այսուհետեւ Միաբանեան Ընդմիջեալ միաբանները Հայաստանէն պիտի գան:

Պ.- Մի՛շտ ու տարիներէ ի վեր արդէն կը խորհէի թէ ապագան հո՛ն է: Ուրիշներ տարբեր ձեւով կը մտածէին: Բնական երեւոյթ է այս: Անցեալին Հնդկաստան ալ եղած էինք...: Քանի որ մեր հայրենիքը չէ, ժամանակաւոր կայք մըն է որ հաստատած ենք: Հայերը երկիր մը ժամանակաւոր կերպով կը բնակին, եւ երբ ծագին զանազան հարցեր, կը թողուն ու կ'երթան ուրիշ երկիր:

Հ.- Վիեննայի այս վանքին մէջ ունինք ազգային մշակութային արժեքներ, որոնք վերջին հաշուով կը պատկանին համայն հայութեան: Ասոնց վախճանական վայրը կը խորհի՞ք թէ Հայաստանը պիտի ըլլայ:

Պ.- Ընդհանուր օրէնք մը կայ. պետութիւններ ինչ որ իրենց սահմաններուն մէջ ունին՝ իրենցը կը նկատեն: Եւ որեւէ արժէքաւոր իր դուրս հանելու համար մասնաւոր հրաման պէտք է առնուի: Ուրեմն պարզ է որ Աւստրիան պիտի չուզէ որ այս գանձերը որեւէ ժամանակ այս երկրէն դուրս հանուին: Ամէն երկրի օրէնքը այդպէս է եղած: Ուրիշ կէտ մըն ալ կայ, որ ամէն արժէք ունեցող հաւաքածոյ մէկ տեղ հաւաքելը ճիշդ չէ: Անցեալին մեզի կ'ըսէին որ ձեռագիրները Հայաստան տանինք եւ Երեւանի մատենադարանը ամենէն վստահելի տեղն է պահելու զանոնք: Հազիւ թէ անկախութիւն ունեցանք, հոն ելեքորական հոսանք չկար եւ այդ հիմնարկը ծանր կացութեան մատնուեցաւ:

Յետոյ, ինչպէս մասնագէտներ յաճախ ինծի ըսած են, մեծ պատերազմի մը պարագային, կ'արժէ որ մեր մշակութային արժէքները բաժնենք զանազան կարեւոր շրջաններու մէջ: Երեւակայեցէք եթէ բոլորը մէկ տեղ բերուած ըլլան եւ արկած մը պատահի...:

Հ.- Հայագիտական նպատակներով գիտաշխատողներ կամ մասնագէտներ կու գա՞ն արդեօք Վիեննայի մեր այս հաստատութիւնը:



Վիեննայի Միխայիլ Սխոթարեան Միաբանութեան նստավայրը:

Պ.- Անցեալին աւելի շատ կու գային: Համայնավար շրջանին, Հայաստանէն աւելի գիտնականներ կ'ունենայինք: Որովհետեւ միջոցներ ունէին, պետութիւնը կը տրամադրէր բոլոր ծախսերը: Հիմա ալ կան եկողներ ե՛ւ սփիւռքէն, ե՛ւ հայրենիքէն, սակայն քանի մը օրով միայն:

Հ.- Անցեալի սերունդին նման, այսօր ունի՞ք միաբաններ, որոնք հետաքրքրութիւն ունին բանասիրութեան հանդէպ, թե՞ առաւելաբար այդ վարդապետներուն գործը այսօր կազմակերպչական աշխատանքներ տանիլ է:

Պ.- Ըսեմ. հիմա այստեղ Վիեննայի մէջ կան հինգ վարդապետներ: Առօրեայ մեր գործերը բաւական ժամանակ կը խլեն մեզմէ իւրաքանչիւրէս: «Հանդէս Ամսօրեայ»ի խմբագիրն եմ, բայց առաւելաբար Հայաստանի մէջ կը խմբագրենք զայն: Կիւլպէնկեան Հաստատութիւնը կը շարունակէ հոգալ տպագրական ծախսերը: Այլեւս տարեգիրք է:

Հ.- Անձնապէս դուք ի՞նչ գրական հետաքրքրութիւններ ունիք:

Պ.- Մի՛շտ եղած են լեզուագիտական: Պարզ է որ այդ գրաբար ու աշխարհաբար լեզուներն են: Նաեւ լեզուաբանական, համեմատական հետաքրքրութիւն ունեցած եմ, բայց իմ ժամանակս, արբահայր ըլլալէս

առաջ, տրամադրած եմ դպրեվանքի աշակերտներուն: Այստեղ երկար տարիներով եղած եմ դպրեվանքի պատասխանատուն: Կու գային 11-12 տարեկան երախաներ եւ կը մնային մինչեւ 21-22 տարեկան իրենց հասակը: Այդ բոլորին պատասխանատուն էի:

Ամբողջ ժամանակ տրամադրած եմ կրթական եւ դաստիարակչական աշխատանքի: Լեզուաբանական բաժինը, որ այնչափ սրտիս կը խօսէր, չեմ կրցած հետեւողականօրէն շարունակել:

Հիմա, այս օրերուն, քիչ մը աւելի ժամանակ ունիմ եւ վերջերս Հայաստանի մէջ հրատարակեցի «Ուղղագրութեան ուղեցոյց» մը: Շատ պարզ, հասկնալի, յստակ եւ դիւրամատչելի: Լա՛ւ արձագանգ գտաւ:

Հ.- Քանի Հայաստանի դպրեվանքին մասին խօսք եղաւ, արդեօք ձեր հոգ ուսուցումը արեւելահայ, թե՞ արեւմտահայ լեզուով է. կամ, լաւ եւս է ըսել՝ մետրոպէա՞ն, թե՞ արեւելահայկան ուղղագրութեամբ է:

Պ.- Դպրոցական շրջանին, պետական յայտագիրը ըլլալուն, արեւելահայերէնով է, եւ բնական է որ երկրին ուղղագրութիւնն է որ կը սորվին. այդպէս պիտի գրեն ու կարդան: Բայց, բնական է նաեւ մեզի համար, միւս կողմէն, նոյնիսկ անհրաժեշտ, որ սորվին արեւմտահայերէն մեր լեզուն, քերականութիւնն ու ուղղագրութիւնը:

Տակաւին որոշ չէ մեզի համար, որ ասոնք որքա՞ն ժամանակով պիտի մնան Հայաստան...:

Պարզ է որ մինչեւ տարրական կրթութիւն անոնք հո՛ն պիտի մնան: Եթէ կարելի ըլլայ տեղւոյն վրայ աստուածաբանական դասընթացքներ ունենալ, պիտի ուզէինք զանոնք հոն պահել: Այստեղ ալ չունինք այդ հնարաւորութիւնը:

Հ.- Զմամուի վանքին հետ ձեր յարաբերութիւնները ի՞նչ աստիճանի ջերմ են: Արդեօք օգտակար կ'ըլլա՞ն ձեզի:

Պ.- Օրինական որեւէ կապ չունինք Զմամուի հետ: Որեւէ իմաստով կապ չունինք:

Հ.- Սակայն, օրինակ, Հայր Վարդան Աշգարեան Վիեննայի Մխիթարեան միաբան ըլլալով, այսօր Լիբանանի հայ կաթողիկէ համայնքին առաջնորդն է: Ի վերջոյ, այս իմաստով կապ մը կայ, չէ՞:

Պ.- Միայն այդ պայմաններու տակ, երբ պատրիարքութիւնը եւ հայ կաթողիկէ համայնքը պէտք ունենայ մխիթարեանական վարդապետի մը՝ ծառայելու որպէս ժողովրդապետ, այն ատեն կը խնդրեն ու մենք կը տրամադրենք: Ու այս պարագային հայր Վարդան աւելի պատրիար-

քարանի գործերով կը զբաղի քան մեր գործերով: Այլապէս, որպէս հաստատութիւններ օրինական կապ չունինք:

Հ.- Անցեալ Ապրիլին Պոլիս կը գտնուէի եւ ականատես եղայ այն հսկայական կալուածներուն եւ հաստատութեանց, որոնք Միախարեաններուն կը պատկանին: Ինչպէ՞ս կը գնահատէք կացութիւնը հոն:

Պ.- Ունինք երկու վարդապետներ, տարիքնին 50-60 է: Դպրոցը ունի առանձին դժուարութիւններ, նիւթականի կողքին... տնտեսական անկումներու պատճառով: Բայց, ընդհանրապէս, Պոլսոյ մեր դպրոցը կանոնաւորապէս կը շարունակէ իր աշխատանքները տանիլ: Կու տայ կրթական փայլուն արդիւնք: Վերջին շրջանի պոլսահայ մեր լաւագոյն գրողները՝ Զահրատ, Խրախունի, Հատտէճեան, Շիկահեր, մեր վարժարանի շրջանաւարտներն են եղած: Թէեւ, բնականաբար, հայութիւնը կը պարպուի եւ աշակերտներուն թիւը կը պակսի: Կրնայինք անցեալին հազար աշակերտ ունենալ, բայց տեղ չունէինք: Դասարան մը ներկելու համար արտօնութիւն կը խնդրէինք: Ամիսներ կը տեւէր:

Հ.- Իսկ գալով ձեր Պէյրութի վարժարանին, ի՞նչ կրնաք ըսել:

Պ.- Քաղաքական պատերազմին պատճառով, մնացինք պահակ, որպէսզի չէնքը չքանդուի...: Կը ջանայինք, այդ տխուր պայմաններուն տակ, շարունակել դասաւանդութիւնները: Մէկ-երկու շաբաթ բաց կը պահէինք դպրոցը ու դարձեալ հարկադրաբար կը ստիպուէինք փակել: Աշխարհագրական տեղը՝ Հազմիէ, այնքա՛ն ալ վտանգաւոր չէր, սակայն այդ անունը կը վտանգէր առաւելաբար: Սահմանի վրայ էր մեր դպրոցը: Մինչեւ վերջ մէկ վարդապետ մնաց հոն ու մինչեւ հիմա ալ հոն է: Մէկ վարդապետով շատ գործ չենք կրնար ընել: Զի՛ կրնար պէտք եղած ձեւով հասնիլ կրթական գործին:

Յետոյ, հոն, ժողովուրդը շատ աղքատացած է. ունինք մեծ թիւով աշակերտներ, որոնք բոլորովին ձրի կը ստանան իրենց կրթութիւնը: Դպրոցը նիւթական լուրջ դժուարութիւններու դէմ յանդիման է, բայց կը շարունակուի գործը: Կարծեմ 200-ի մօտ աշակերտութեան թիւ մը ունինք Պէյրութի մէջ:

Հ.- Իսկ Լոս Անճելըսի դպրոցին ականարկելով, ի՞նչ կրնաք ըսել:

Պ.- Հոն հարցեր ունեցանք: 1997-ին մեր հին դպրոցը Լա Գրեսեն-Թայի մէջ ունէինք եւ ամէն ինչ լաւ ու բնականոն կ'ընթանար: Սակայն վարձու դպրոցի մը մէջ էինք եւ ստիպուած էինք հոն թողուլ: Ու այդ օրերուն որպէս աբբահայր տեսայ թէ մենք շատ մարդ չունինք այդ

գործը շարունակելու: Արդէն մեր վրայ դրուած պարտականութիւնները մեր աւանդական գաղութներէն ներս թէ Վիեննայի մէջ ծանր բեռ մը դրած էին մեր միաբանութեան վրայ: Ըսի թէ Լոս Անճելըսի մէջ նոր չէնք ունենալու համաձայն չեմ: Այլ դարձեալ վարձու տեղ մը գտնենք եւ հոն շարունակել ջանանք կրթական մեր գործը: Բայց հոն գտնուող վարդապետը դժուարութիւններ յարուցեց, առանց մեր հրահանգին սպասելու տեղ գնեցին, աշակերտութիւնը ցրուեցաւ, ներքին խնդիրները կուտակուեցան եւ կը ցաւիմ ըսելու որ եթէ փակէինք այդ դպրոցը՝ աւելի լաւ պիտի ըլլար այսօր: Շատ տգեղ երեւոյթներու դէմ յանդիման գտնուեցանք:

Հ.- Միխայիլեան հայրերը քանի՞ հոգի եմ այսօր:

Պ.- 28 վարդապետ, զոյգ միաբանութիւնները միասին:

Հ.- Հայաստանի մէջ միաբանութեան յարաբերութիւնները ինչպէ՞ս եմ Մայր Աթոռին հետ:

Պ.- Ինչպէս Պէյրութի մէջ Անթիլիասի հետ, այնպէս ալ Հայաստանի մէջ Ս. Էջմիածնի հետ յարաբերութիւնները շատ լաւ ու բնականոն են: Ամէն այցելութեամբ նաեւ կը հանդիպինք Վեհափառին: Նոյնիսկ 2001 թուին, Էջմիածնի մէջ, Միխիթարեան Միաբանութեան 300-ամեակը տօնեցինք: Շատ լաւ կապեր կան:

Հ.- Իսկ 200-ամեակի համար ի՞նչ ծրագիրներ ունիք:

Պ.- 200-ամեակի համար, նա՛խ նիւթական տեսակէտէն, չէնքի նորոգութիւնները կան, ինչպէս տեսաք արդէն: Ճաշարանը հին առաջուան ձեւին կը վերածենք եւ կառավարութիւնն ալ կ'օգնէ մեզի: Թանգարանի համար նոր ծրագիրներ կան:

Գրական առումով ունինք քանի մը ծրագիրներ. ունինք Ներսէս Շնորհալիի ձեռագիր մը «Յիսուս Որդի» աղօթքը, շա՛տ գեղեցիկ, նուրբ մանրանկարներով, կ'ուզենք արտատպել զայն: Ունինք հոս արուեստի բարեկամներ, տեղացի: Անոնք արուեստի բաժինը պիտի կատարեն, իսկ պատմական մասը՝ մենք: Տպագրութիւնը բաւական սուղ է, նիւթականի հարց ունինք հո՛ն եւս:

Ես քերականութեան գիրք մը կը պատրաստեմ ու այդ առիթով լոյս պիտի տեսնէ: Անշուշտ հանդիսութիւններ տեղի պիտի ունենան, պետական եւ եկեղեցական մակարդակներով: Ցուցահանդէս ու համերգներ կը ծրագրենք կազմակերպել:

Հ.- Կա՞ն օտարներ, որոնք կը ճետաքրքրուին Միխիթարեաններու Վիեն-
նայի վանքով:

Պ.- Հետաքրքրուողներ կան երկու իմաստով: Ոմանք հետաքրքրուած
են ինչպէ՞ս կրնան վանքը ձեռք ձգել...: Անշուշտ, չատ ազնիւ տարբեր
մտաւորականներ ալ կան, որոնք մեր գրադարաններու նիւթերէն կ'ու-
զեն օգտուիլ: Կան նաեւ օտարներ, որոնք կը բերեն իրենց ծառայու-
թիւնը ձեռագիրներու վերանորոգմամբ եւ կամ թանկագին այլ կարգի
գանձերու պահպանութեան աշխատանքներով: Ունինք օտար լա՛ւ բարե-
կամներ, վերջապէս:

Վիեննա, Աւստրիա, Նոյեմբեր 2007

«ՆՈՐ ՕՐ», 1-29 Մարտ եւ 11 Հոկտեմբեր 2008

«ԶԱՐԹՕՆՔ», 13 Յունիս - 19 Սեպտեմբեր 2008

«ՏԻ ԱՐՄԻՆԻԸՆ ՌԻՓՈՐԹԸՐ», 10 Սեպտեմբեր 2008



Գեղեցիկն Փրակայի պատմական դղեակներէն մին:

ՉԵԽԻԱՆ ԻՐ ՀԱՅՈՒԹԵԱՄԲ

Փրական սիրցուցած էր ինծի Պէշրութի մեր ընկերներէն Վարուժան Խաչատուրեանը: Իրմէ լսած էի Եւրոպայի արտին վրայ հանգչող այս գեղեցիկ ուստանին մէջ ապրող միա՛կ հայուն, պատուական հայուն՝ Հայկ Մարտիրոսեանին մասին, որ երրորդ սերունդի զաւակ ըլլալով հանդերձ պահած էր ազգային նկարագիրն ու մայրենի լեզուն: Աւանդապահ ընտանիքի մը շառաւիղ՝ ընդունած ու հիւրասիրած էր իր պապեհական տան մէջ Վազգէն վեհափառն ու Մարիետտա Ծափնեանը, Ալեք Մանուկեանն ու Ծափէ Արք. Աճեմեանը եւ դեռ բազում ծանօթ անուններ հայ կեանքէն:

Նոյն արտքաց ընդունելութիւնն էր տուած ինծի քսանամեակ մը առաջ, Փրակա իմ առաջին այցելութեանս: Ան նախապէս այցելած էր մեզի՝ Նիւ Ճըրզի, ու յաճախակի ընդունած էի այցելութիւնը իր դստեր՝ Քրիստինային, որ բարի տրամադրութիւններով մի՛շտ ակնկալած էի որ զաւակիս՝ Հայկին կողակից ըլլայ: Ընդհալի ջութականաբար՝ ան կը խօսի հայերէն, նշմարել

տալով մեծ մօրմէն սորված խարբերդի բարբառը: Ամէն պարագայի, մենք մնացինք մտերիմ ու կը շարունակենք պահել մեր մնայուն բարեկամութիւնը:

Փրական նոյնը չէ արդէն: Խորհրդային Հայաստանի փլուզումով մեծ թիւ կը կազմէ հայ բնակչութիւնը հոն, այնքա՛ն որ արդէն Մայր Աթոռը դրկած է հոգեւոր հովիւ մը ու Յակոբ Ասատրեանի ջանքերով լոյս կը տեսնէ «Օրեր» ամսաթերթը: Գլխաւոր հրապարակներուն վրայ հայ գեղանկարիչներ կը շատնան օրէ օր եւ անոնցմէ յաջողակներ արդէն բացած են իրենց արուեստանոցներն ու ցուցարահները:

Իրաւ արուեստի քաղաք է Փրական: Կեդրոնական Երոտայի այն երեք քաղաքներէն մին, ուր անպայման պէտք է այցելէ ամէն զբօսաշրջիկ: Միւսներն են Պոտափէշթն ու Վիեննան:

Հակառակ անոր որ երկիրը բաւական ծանրաբեռնուած է հրէական լոպիինկով, տակաւին տեղւոյն հայերը ամէն ջանք կը թափեն չեխերուն ծանօթացնելու հայոց իրաւունքները: Գիտական համաժողովներ, նոյնիսկ խորհրդարանէն ներս, կ'ունենան իրենց ազդեցութիւնը: Արդէն բացուած է հայկական դիւանագիտական գրասենեակ:

Այս բոլորով հանդերձ, գոնէ ինծի համար Փրական կը մարմնաւորուի Հայկով: Առանց իրեն, կը հաւատամ որ համ ու հոտ չունի փրակահայութիւնը: Անոր տունը թանգարան մըն է իր հայկական արուեստի գործերով ու իրական հայկական գորգերով, որոնք յաճախ կը ցուցադրուին, տարուան ընթացքին, զանազան թանգարաններու թէ պալատներու մէջ:

Կը պակսի հայկական եկեղեցին հոն:

ԴՈԿՏ. ԱՇՈՏ ՈՍԿԱՆԵԱՆ
Մնայուն Ներկայացուցիչ Հայաստանի
Դեսպանություն



Հ.- Պարո՛ն դեսպան կրնա՞մ ըսել արդե՞ս:

Պ.- *Ես ունեմ դեսպանի կարգավիճակ, որովհետեւ տարիներ շարունակ աշխատել եմ որպէս դեսպան Աւստրիայում եւ յետոյ Գերմանիայում՝ չորս տարի. բայց դա որպէս տիտղոս: Իսկ այս պահիս ես աշխատում եմ Վիեննայում որպէս Հ.Հ. դեսպանութեան Փրակայի մշտական գրասենեակի ղեկավար:*

Հ.- Ե՞րբ սկսաւ իր աշխատանքներուն ձեր ղեկավարած այս գրասենեակը:

Պ.- *Ես ժամանել եմ այստեղ Ապրիլին: Մէկ-երկու ամիս աշխատեցինք կազմակերպչական խնդիրների վրայ, որովհետեւ պէտք էր արագորժ նախարարութեան հետ վերջնականապէս ճշգուէր կարգավիճակը եւ արձանագրուէր թէ՛ որպէս Վիեննայի դեսպանութեան ճիւղ եւ թէ՛ որպէս դիւանագիտական ցուցակի մէջ արձանագրուած ներկայացուցչութիւն: Մենք կատարեցինք պաշտօնական բացումը Յունիսին:*

Հ.- Անմիջականօրէն, այս պահուն, ուրեմն դուք ենթակայ էք Աւստրիոյ դեսպանութեան:

Պ.- *Այո՛, փաստօրէն դեսպանը շարունակում է մնալ Աւստրիայում, իսկ այստեղ մենք ունենք մշտական գրասենեակ:*

Հ.- Վստահաբար ունիք հեռանկար, որ ժամանակի ընթացքին հոս եւս Հ.Հ. ունենայ իր դեսպանատունը, անշուշտ եթէ նիւթական պայմանները ձեռնտու ըլլան:

Պ.- *Նման որոշումներ ես ինքս չեմ տալիս, բայց կարող եմ ասել որ հեռանկարով, ի հարկէ, վաղ թէ ուշ, Հայաստանը պէտք է դեսպանութիւն ունենայ Փրակայում, որովհետեւ, տեսէք, արդէն տարիուկէս գործում է ատրպէյճանական դեսպանութիւնը եւ վերջերս, Սեպտեմբերին, դեսպանը յանձնեց արդէն իր հաւատարմագրերը, եւ փոխադարձաբար Չեխիան՝ Պաքուին, եւ երկուսն էլ այլեւս դեսպանութիւն ունեն:*

Հ.- Կը լսեմք որ մեծ թիւով հայեր արդէն սկսած են այս երկիրը հաստատուիլ: Արդեօք որեւէ յարաբերութիւն ունի՞ք հոս հաստատուած հայերու հետ:

Պ.- Ի հարկէ յարաբերութիւններ կան շատ շատերի հետ, անհատական մակարդակով, որովհետեւ շատերը գալիս են եւ մենք օգնում ենք: Բայց նաեւ կազմակերպութիւնների հետ, թէեւ թիւով շատ չեն, բայց ինչ որ մի բան կայ, աւելի շատ համայնքների մակարդակով: Համայնքներ կան Փրակայում, Պըռնոյում, Օսթրավայում եւայլն: Թիւերը ճշգրիտ կերպով դժուար է ասել. երեւի 7000-ի մօտ հայութիւն կայ Չեխիայում:

Հ.- Առաւելաբար Ձեր առաջին գործը պիտի ըլլայ տնտեսական յարաբերութիւններու մշակումը այս երկրին հետ: Ի՞նչ այլ յարաբերութիւններ կարելի է մշակել Չեխիայի հետ:

Պ.- Այս պահին գրասենեակը զբաղւում է դիւանագիտական յարաբերութիւնների ամբողջ շրջանակում, բացառութեամբ հիւպատոսական հարցից: Մենք դեռեւս հիւպատոսական խնդիրներով չենք զբաղւում մի պատճառով միայն՝ դեռ պէտք է ստանանք նոր աշխատակիցներ: Յոյս ունեմ ստանալ շուտով:

Հիմնականում ե՛ւ քաղաքական է, ե՛ւ տնտեսական, ե՛ւ մշակութային: Քաղաքական առումով, մենք փորձում ենք աւելի ամբողջացնել պայմանագրային հիմքերը, որովհետեւ կարեւոր է ունենալ պայմանագրերի անհրաժեշտ քանակը: Վերջերս արդէն բոլորովին պատրաստ է կրկնակի պատերազմներից խուսափելու պայմանագիրը Հայաստանի եւ Չեխիոյ մէջ, որը ես կարծում եմ կը ստորագրուի 2008-ի սկիզբը, երբ որ Չեխիոյ արտգործ նախարարը այցելի Երեւան:

Մի պայմանագիր եւս ենք պատրաստում պաշտպանութեան նախարարների միջեւ, համագործակցութեան հետ կապուած. տարուան սկիզբը, կարծում եմ որ Հայաստան կ'այցելի պաշտպանութեան փոխ նախարարը: Վերջերս վերադարձայ Երեւանից, ուր գտնւում էր Չեխիայի արտգործ առաջին փոխ նախարարը եւ որ ունենում էր հանդիպումներ պարոն Վարդան Օսկանեանի հետ:

Տնտեսական առումով, ի հարկէ, հնարաւորութիւնը մեծ է եւ երկու կողմերը գտնում են որ դա լայնօրէն կ'օգտագործուի: Հիմա արդէն պիտի քննարկուի ներդրումների վերաբերեալ պայմանագիրը: Արդէն հայկական կողմին մօտ է նախագիծը: Կ'երեւի յաջորդ հարցը, որ հստեղ պէտք է ներկայանայ, այն է՝ թէ մեր արդիւնաբերութեան ներկայացուցիչները այցելեն Չեխիա եւ ծանօթացնեն ո՛չ միայն մեր երկրի արտադրանքը, այլեւ՝ ռեֆորմները, թէ ինչպէ՞ս է տնտեսութիւնը կազմա-

կերպուով: Ասենք նաեւ թէ նրանք՝ չեխերը, գիտեն մեր մշակույթի ու պատմութեան մասին:

Հ.- Պարոն դեսպան, միշտ դիւանագիտական՝ աշխատանք տարած էք Հայաստանի մէջ, թէ՞ անցեալին ուրիշ աշխատանքով պարապած էք:

Պ.- Գիտէ՞ք ինչ, ես մասնագիտութեամբ փիլիսոփայ եմ: Դասաւանդել եմ փիլիսոփայութիւն իմ ողջ կեանքում եւ աշխատել եմ դա երբեք չթողնել, նաեւ երբ ուրիշ գործի եմ դիմել:

Երբ որ Շարժումը սկսուեց 88 թուականին, բոլորս քաղաքականութեան մէջ էինք. այդ իմաստով հինգ տարուց աւել եղել եմ խորհրդարանում, խորհրդարանի անդամ 90 թուականին եմ ընտրուել եւ 95-ին նորից եմ ընտրուել: Բայց այդ ժամանակ արդէն նշանակուել եմ որպէս դեսպան: Այնտեղ արդէն համատեղելի չէր. պէտք է ընտրես քաղաքականութիւն կամ դիւանագիտութիւն: Ես գնացի Վիեննա: Երկու տարի եղել եմ չորս երկրների դեսպան՝ Աւստրիա, Հունգարիա, Չեխիա եւ Սլովաքիա: Համատեղում էին այդ ժամանակ Ե.Ա.Հ.Խ.ի եւ Մ.Ա.Կ.ի դեսպանութիւնը: Հիմա արդէն Վիեննայում ունենք երկու դեսպան:

Ուղարկուել եմ ապա Գերմանիա եւ չորս տարի աշխատել եմ որպէս դեսպան, երկու տարի Պոննում, յետոյ կառավարութիւնը տեղափոխուեց Պերլին, ուր եւս աշխատեցի երկու տարի:

Վերադարձել եմ Հայաստան արագորժ նախարարութիւն եւ եղել եմ վերլուծական վարչութեան պետ, յետոյ խորհրդական եմ եղել Հայաստանի՝ Եւրոպայի ինդեկրացման գծով: Սա դիւանագիտական գծով:

Բացի այդ, ուղղակի 95 թուականին ձեւաւորեցինք նաեւ NGO, որը կոչւում էր «Հումանիտար Հետապնդումների Հայկական Կենտրոն», որը փաստօրէն երկու ժողովածու հրատարակեց. մէկը, 95-ին, միւսը՝ 2005-ին: Ահա՛ այդ ինքնութեան խնդիրները որպէս փիլիսոփայ ինձ շատ են հետաքրքրում:

Հ.- Այնպէս կը թուի թէ առաւելաբար Հայոց Համագգային Ծարժումին (Հ.Հ.Ծ.) մէջ էք գտնուած:

Պ.- Այդ ժամանակ այո, եւ եղել եմ նաեւ նախագահութեան անդամ մինչեւ 1995 թիւը, երբ դիւանագիտութիւնը արդէն իսկ ընդունեցի կեանքի ճանապարհ:

Հ.- Փիլիսոփայական նոր հեղինակություններու վրայ կ'աշխատի՞ք: Ժամանակ կը գտնէ՞ք շարունակելու Ձեր սիրած նախասիրությունները:

Պ.- Այո, բայց շատ դժուար է: Պարտադիր կ'աշխատիմ, դա արդեն ինձ համար հիմնական աշխատանքներից մեկն է: Մօտաւորապէս 40 աշխատանք ունեմ, հայերէն, ռուսերէն, գերմաներէն եւ անգլերէն լեզուներով: Հիմա մէկ յօդուածս ֆրանսերէն լեզուով է հրատարակուում: Այդ երկու ժողովածուներում, ինչպէս քիչ առաջ ասացի, փաստօրէն ես մասնակցել եմ որպէս հեղինակ եւ կազմակերպել՝ այդ բոլորը:

Յառաջիկայ նիւթը, որը պէտք է ներկայացնեմ Վիեննայի միջազգային կոնֆերանսում, որը տեղի պիտի ունենայ Դեկտեմբեր 5-ին, վերաբերում է բազմամշակութային յարաբերութիւնների խնդրին: Այդտեղ պատուիրակութիւն է լինելու, որին մաս է կազմելու Ազատ Նղիազարեանը, երեւի գիտէք, նա տնօրէնն է: Վիեննայի մեր դեսպանն էլ պէտք է մասնակցի:



ՅԱԿՈԲ ԱՍԱՏՐԵԱՆ

Խմբագիր «Օրեր» Երկամսեայի

Հ.- Տարօրինակ պիտի թուէր որեւէ հայու համար տեսնել բոլորովին նորակազմ համայնքէ մը ներս իր հայերէն լեզուով թերթը: Թերթ մը, որ տարածուն է եւրոպական ցամաքամասէն ներս նաեւ: Ի՞նչ էր արդեօք դրոշապատնաւը նման թերթ մը հրատարակելու, մանաւանդ՝ բոլորովին անձնական նախաձեռնութեամբ:



Պ.- Ես փրակա տեղափոխուեցի Երեւանից անձնական ընտանեկան նկատառումներով, քանի որ կինս հրաւիրուեց աշխատելու Ներոպայի «Ազատութիւն» ռատիոկայանի ծառայութիւնում: Երկու տարի ես ուսումնասիրեցի թէ ի՞նչ վիճակում է գտնուում եւրոպահայ մամուլը: Ի՞նչ պարբերականներ, թերթեր են լոյս տեսնում, ի՞նչ պահանջք կայ, եւ արձանագրեցի մի կարեւոր հարց, որ վերջին տասը տարիների ընթացքում արդէն չկայ որեւէ հրատարակութիւն արեւելահայ լեզուով Ներոպա գաղթած հայաստանցիների համար:

Հիմնական օրաթերթերն ու պարբերականները լոյս են տեսնում Փարիզում, Կիպրոսում եւ Յունաստանում: Այս թերթերը, ի հարկէ,

չէին կարող հասնել բոլոր հայերին, յատկապէս՝ Կենտրոնական Եւրոպայի: Իսկ ասեմ որ, եթէ Ֆրանսիայում, Յունաստանում, նոյնիսկ Կիպրոսում ինչ որ ձեւով հայատառ մամուլ լոյս է տեսնում եւ պատմական որոշակի ընթացքում կայացած մամուլ կարելի է համարել, ապա Կենտրոնական Եւրոպայում ընդհանրապէս հայ մամուլ չկար եւ եղածներն էլ տեղի լեզուներովն էին, ասենք՝ Գերմանիայում գերմաներէն լեզուով պարբերական կար, չորս ամիսը մի անգամ լոյս տեսնող: Կամ Լեհաստանում կար տեղեկագիր, Պոլկարիայում կար, բայց աւելի շատ պուլկարերէնով քան հայերէնով... ու Հայաստանից մի քանի լուր, այդ էլ արեւմտահայերէնով. Սոֆիայում՝ «Երեւան»ը, «Վահան»ը եւ Պոլկասում՝ «Հայեր»ը:

Եւ այսպէս, որոշեցինք խիզախել եւ Փրակայում հրատարակել արեւելահայերէնով ամսագիր, որը նպատակ ունէինք նաեւ տարածել եւրոպական միւս երկրներում, յատկապէս հայահոծ երկրներում՝ Աւստրիա, Սլովաքիա, Լեհաստան, Գերմանիա, Պելճիքա, Ֆրանսիա... նոյնիսկ որոշ չափով աւելի հեռու՝ Շվէյցարիա, Յունաստան, Իտալիա եւ Անգլիա: Հիմա Անգլիոյ մէջ հնչակեանները տպագրում են Մանուէլ Աղամեանի խմբագրութեամբ «Նոր Սերունդ»ը:

Այս իմաստով, «Օրեր»ը անշուշտ նոր շունչ էր եւ մեր հայրենակիցների կողմից շատ լաւ ընդունուեց: Սկզբնական տարիներին բաւականին մեծ աշխատանք տարան, որպէսզի բաժանորդներ գտնենք: Այդ ընթացքում եւրոպահայ միութիւնների ֆորումը ստեղծուեց, որը նոյնպէս նպաստեց նրան, բայց յետագայում ֆորումը փակուեց եւ մենք ֆինանսական դժուարութիւնների մէջ ընկանք՝ անկախ ֆորումի փակումից, ի հարկէ:

Արձանագրեցինք մի հետաքրքիր դաս, որ հայերը շատ սիրով կարող են թերթ ստանալ, բայց դրա համար չվճարել: Այս իմաստով ունենալով եւրոպահայ մտաւորականութեան աջակցութիւնը, որոնք Ֆրանսիայից, Իտալիայից, Հայաստանից կ'ուղարկեն թղթակցութիւն, զգալով մեր վիճակը, միշտ ոգեւորում էին, ասելով՝ ափսոս եթէ «Օրեր»ը կանգ առնի:

Հիմա, ի հարկէ նորից նոյն դժուարութիւնների մէջ ենք, բայց, այսպէս ասած, ատամներս սեղմելով շարունակում ենք ինչ որ չափով գործել: Հիմնականում արդէն փոխելով ընդհանուր ուղղութիւնը. եթէ առաջ լրատուական, մշակութային, հասարակական, քաղաքական բաժիններ կային, հիմա լրատուական մասը աւելի ենք քչացնում եւ փորձում ենք զուտ Զեխիայի տարածքում չեխահայութեան համար հրատարակուող այս չորս էջանոց լրատուական տեղեկագիրները

բաժանել, փոխարենը արդեն ամսագրի մէջ աւելի շատ վերլուծական, մշակութային, հասարակական նաեւ՝ մարզական եւ այլ նիւթերի ենթ տեղ տալիս:

Նաեւ փորձում ենք եւրոպահայութեան ընդհանուր կարեւոր իրադարձութիւններին տեղ տալ, որպէսզի որեւէ տեղ եթէ եւրոպահայը կարդայ ամսագիրը, եթէ ոչ ամբողջութեամբ, ապա գոնէ տեղեակ լինի թէ Հայաստանում ինչ է տեղի ունեցել վերջին մի քանի ամիսներին, եւ կամ եւրոպահայ համայնքում ամենակարեւոր իրադարձութիւններից որո՞նք ենք մենք առանձնացրել մեր ամսագրում:

Հիմնականում այս նկատառումներից ելնելով մենք սկսեցինք այդ գործը, առաջին հերթին, գլխաւոր նպատակ ունենալով, որ նոր սերունդը, որը Հայաստանից տեղափոխուել է Եւրոպա եւ կիսով չափ հայ է մնացել, հայերէնի հետ չփման գրաւոր եւ կարդացուող աղբիւր ունենայ, որը շատ կարեւոր է լեզուապահպանման համար: Մենք ինչքան էլ հիմա ասում ենք որ հայկական հեռուստատեսութիւն կարող ենք դիտել, կարող ենք իրար հետ տանը հայերէն խօսել, դա բացարձակապէս բաւարար չէ որ մարդը գոնէ գրագէտ հայերէն շարունակի պահպանել եւ փոխանցել եկող սերունդներին:

Փրակայում, ասենք, ինչ-որ չափով, կամ Պըռնոյում նոր բացուած հայկական դպրոցներ կան: Կամ որոշ չափով այդտեղ երեխաները յաճախում են եւ սովորում, հնարաւորին չափ, գոնէ հայերէն գրել-կարդալ են սովորում: Երգում կամ արտասանում են ազգային ժողովրդական կամ հայրենասիրական երգեր: Դա ընդհանուր մասսային չի վերաբերում, որովհետեւ հայերը, ինչպէս ամէնուր, տարածուած են ամէն տեղ, եւ ամէն գիւղում չես կարող հայկական դպրոց բացել: Հետեւաբար, այս պայմաններում, օգնութեան է գալիս տպագիր մամուլը եւ ամէն մէկն էլ իր տանը համակարգիչ չունի, որպէսզի ինթերնէթ բացի, լուրեր առնի կամ հայերէն բնագրեր կարդայ:

Այս իմաստով այդ խնդիրը արդէն իսկ զգացւում է: Զեխիայում, օրինակ, մենք զգում ենք որ այն երեխաները, որոնք եկել են Զեխիա, սովորել են չեխական դպրոցներում, աւարտել եւ ընդունուել են չեխական գոլէճ, իրար հետ չեխերէն են խօսում: Հայերէն հարցը տալիս ենք, չեխերէն պատասխանում են:

Հ.- Ե՞րբ սկսաւ «Օրեր»ու հրատարակութիւնը:

Պ.- 1999-ի Սեպտեմբեր-Հոկտեմբեր ամիսներին լոյս տեսաւ առաջին համարը: Արդէն 40 համար երեւի: Միացեալ համարներ են եղել շատ, որովհետեւ չէի հասցնում. միայնակ էի:



Ձախէն՝ Ռեդիմակը, Բարսեղ Վրդ. Փիլավճեան, Յակոբ Ասատրեան եւ Հայկ Մարտիրոսեան:

Հ.- Բացի խմբագրական աշխատանքէն, թերթը շարելու, էջադրելու եւ խոհանոցային բոլոր աշխատանքներու բեռը եւս յուսամ ձեր վրայ չէ մնացած:

Պ.- Հիմանականը իմ վրայ է: Երբեմն-երբեմն համարը պատ-
րաստելու աւարտին կ'ինս՝ Աննա Կարապետեանը, օգնում է, որպէսզի
սրբագրի: Առաջին էջի գրաֆիկական ձեւաւորումը գրեթէ միշտ
կատարել է Ռաֆֆի Չէչէնեանը, որը եզրպատահայ է եւ բնակում է
Չեխիայի հարաւում, Օսթրավա քաղաքի մօտ, եւ մեր միւս հայրե-
նակիցը՝ Արսէն Քոչարեանը, որն աւարտեց այստեղի համալսարանը,
հիմա զուտ գրաֆիկական գործումն է:

Ամբողջ խմբագրական աշխատանքը, էջադրութիւնը, շարելը ես եմ
կատարում, նոյնիսկ՝ սկսած գանձումներից, փոստային աշխատանքից:

Հ.- Քանի՞ օրինակ լոյս կը տեսնէ:

Պ.- Հիմնականում տպագրում ենք 1000 օրինակ, բայց եղել են
համարներ, որոնք մինչեւ 2-3000 օրինակ են տպագրուել, նայած այդ
տարին ի՞նչ ծրագրեր են եղել: Յատկապէս եթէ ունեցել ենք պայմա-
նաւորուածութիւն չեխական աւիաուղիների ընկերութեան հետ:

Հ.- Սփիւռքի մէջ մնացած թերթեր կը հովանաւորուին ընդհանրապէս կուսակցութիւններու կամ բարեսիրական հաստատութեանց կողմէ: Անկախ թերթեր փոքր համայնքներու պարագային պահել դժուար է: Արդեօք դիմա՞ծ էք կազմակերպութեան մը, որպէսզի իր բարոյական հովանաւորութեան կողքին նիւթական յատկացումներ կատարէ ձեր թերթին:

Պ.- *Ճիշդն ասած, Չեխիայում չկան այդպիսի կազմակերպութիւններ: Չկան որ դիմէի: Մի քանի տարի շարունակ, այն ժամանակ դեռ Չեխիան անդամ չէր Եւրոմիութեան, Չեխիայի մշակութային նախարարութիւնը օգնեց մեր հրատարակչական ծախսերին: Բայց քանի որ մտան Եւրոմիութիւն, այդ ծրագիրը փակուեց եւ հետեւաբար ես պէտք է դիմէի հայկական կազմակերպութիւններին: Վերջին շրջանում դիմեցի Հ.Բ.Ը.Մ-ին, որ խոստացաւ քննարկել մեր դիմումը: Այսինքն ո՛չ մերժում եմ ստացել եւ ո՛չ էլ առայժմ դրական պատասխան: Այսպէս սպասողական վիճակի մէջ եմ:*

Իսկ միւս մեծ հաստատութիւնը, որ Եւրոպայում գոյութիւն ունի, Կիւլպէնկեան Հաստատութիւնն է, բայց նրանք ասացին որ ուղղակի հայ մամուլի համար նման նախատեսած գումարներ չունեն: Սակայն, հոս հրատարակեցինք չեխերէնով Կարին Հանսայի «Չեխ Ճանապարհորդը», որ 1923 թուականին լոյս էր տեսել «Արեւելքի Սարսափները» վերնագրով, որպէսզի այստեղ չեխական սենատում բաժանենք: ԿիւրաՀայ մեր բաժանորդներին մէկի անձնական հովանաւորութեամբ լոյս տեսաւ ու իմ յառաջաբանով ու չեխերէն լեզուով, որպէսզի հասարակութիւնը իմանայ թէ չեխը ի՞նչ է ասել հայ ժողովուրդի պատմութեան եւ ցեղասպանութեան մասին: Ինքը անձամբ քսանականներին այցելել է Սիրիայի եւ Լիբանանի որբանոցները, հանդիպել որբերի, տպաւորուել, եւայլն: Եւ ի միջի այլոց այստեղ 1921 թուին ստեղծել է առաջին չեխոսլովաքիական հիմնադրամը հայ որբերի օգնութեան համար:

Հիմա Կիւլպէնկեանի հետ այդ հարցն ենք քննում: Ինքը թարգմանական ծախսերը հոգայ եւ Երեւանի Յեղասպանութեան Թանգարանի հովանաւորութեամբ էլ դա տպուի:

Հ.- Բացի ընթերցողներէն, գնահատական ի՞նչ վերաբերմունք ունի արդեօք մեր մտաւորականութիւնը ձեր հրատարակած թերթին նկատմամբ: Խմբագիր մը, որ այսքա՛ն զոհողութիւն կ'ընէ, կը սպասէ գոնէ որ մտաւորականներ ցուցաբերեն բարոյական նեցուկ:

Պ.- Պէտք է ասել որ հակառակ Ֆինանսական առումով մեր դժուարութեան, բարոյական առումով ունեցել ենք աջակիցներ, նոյնիսկ Ամերիկայից՝ Երուանդ Ազատեանից, որի խօսքը բերեմ. «Յակոբ, չառ



Եվրոպական անկախ ամսագիր 4/44/2008

դժուար կը լինի այս մակարդակի, որակի ամսագիր պահել, քանի որ ընթերցող հասարակութիւնը ընդհանրապէս այդ որակին չէ հասած:»

Բայց միւս կողմից, իմ կարծիքը նա է որ մենք չենք կարող իջնել «ամէն մի բանուորի» մակարդակին: Մենք բոլորին պէտք է բարձրացնենք: Չեմ ասի որ մենք մի շատ մեծ մակարդակ ունենք, բայց այն միջին յարաբերականը որ ընդունուած է եւ որին ես սովորել եմ բովանդակ ժուռնալիստական կեանքի պրակտիկայում, գոնէ այդպիսին լինի: Այդ իմաստով թէ՛ Ֆրանսիայում, Գերմանիայում կամ թէ Յունաստանում կամ Կիպրոսում այն ընթերցողները, որոնք մտաւորական են կամ ինտելիկենտ խաւից են, լուրջ ընթերցող են, ի հարկէ այդ գնահատականը տալիս են:

Ինձ համար կարեւոր էր նաեւ որ արեւելահայերէնի գուգահեռ արեւմտահայ էջեր լինէին եւ մենք որոշ ժամանակ փորձեցինք նաեւ արեւմտահայերէնով կատարել մեր գործը, որովհետեւ Եւրոպայում կան մեծ թիւով Արեւմտեան Հայաստանից ու Միջին Արեւելքից գաղթած հայեր, մանաւանդ Գերմանիայում՝ պոլսահայեր: Եւ որդեգրեցի հետեւեալը. ա՛յն յօդուածները, որոնք կը ստանանք արեւմտահայերէնով, կը հրատարակենք այդ լեզուով ու մեսրոպեան ուղղագրութեամբ: Եւ հզպէս էլ շատ գրութիւններ հրատարակել ենք:

Հ.- Թերթի մը խմբագիրը մի՛շտ քաղաքական արեւելում մը կ'ունենայ, որքան ալ ջանայ անկախութիւն մը, հաւասարակշռութիւն մը պահել: Վստահ ենք թէ ունիք ձեր անձնական քաղաքական համոզումները: Ի՞նչ տեսակի արեւելում նշմարելի է «Օրեր»ու սիւնակներուն եւ խմբագրականներուն մէջ:

Պ.- Թերթն ունի աւելի շատ կենտրոնամէտ դիրքորոշում պիտի ասեմ: Ո՛չ աջ, ո՛չ ձախ: Հաւասարակշիռ: Եթէ մի կարծիք տալիս ենք, ապա փորձում ենք նաեւ դիմացի կարծիքը տալ, նոյնիսկ եթէ անպայման համաձայն չենք անձնապէս:

Մենք յօդուածներ ունենք, որոնց հեղինակները խիստ կերպով քննադատում են Հայաստանի իշխանութիւնները կամ սփիւռքեան որեւէ բան, բայց դա դեռ չի նշանակում որ դա մեզ համար ամբողջութեամբ համապատասխան է մեր կարծիքին: Մենք աշխատում ենք ուղղակի թէ՛ Հայաստանի, թէ՛ սփիւռքի կարծիքները, ե՛ւ դաշնակցականների, թէ՛ ռամկավարների, թէ՛ հնչակեանների տեսակէտները տալ:

Ի հարկէ ես իմ անձնական համակրանքներն ու հակակրանքներն ունեմ: Բայց ես չեմ ուզում որ իմ անձնական համակրանքներն ու հակակրանքները փաթաթեմ ընթերցողի վզին, ինչպէս հիմա շատ յաճախ անում են Հայաստանում: Ես կարող եմ աւելի դիւանագիտօրէն ներկայացնել, միջնորդաւորուած, որպէսզի նոյնիսկ չհասկացուի որ իմ անձնական կարծիքն է:

Հիմա սփիւռքում ապրելով ես ինչ-որ տեղ նոր եմ հասկանում թէ Հայաստան ապրելով մենք ինչո՞ւ էինք մեղադրում սփիւռքահայերը՝ ձեզ, իրենց հայաստանասիրութեան մէջ: Որովհետեւ երբ դու սփիւռքում ես ապրում, դու լրիւ ուրիշ աչքերով ես արդէն Հայաստանին նայում: Որպէս հայաստանցի, ուսում առած, աշխատած, տեղաւորուած անհատականութիւն՝ ես ինքս սփիւռքում գգացի որ Հայաստանը ինձ համար նորովի բացայայտուի է: Այն խաւի հետ, որի հետ շատ քիչ եմ շփուել Հայաստանում, այստեղ ստիպուած եմ շփուել: Դու այստեղ արդէն քեզ համար բացայայտում ես քո ժողովրդի բոլոր ալիքները: Ու այդ ալիքներին ծանօթանալուց յետոյ արդէն որոշում ես կայացնում թէ ո՞րն է գլխաւորը քեզ համար, Հայաստանի համար ի՞նչն է գլխաւորը, էդ ղեկավարի այնտեղ լինե՞լն է, թէ՞ գլոբալ Հայաստանի ուղղութիւնն է քեզ համար կարեւոր:

Հ.- Որովհետեւ հայրենասիրութիւնը տարբեր պիտակում մը կը սկսի ունենալ:

Պ.- Այո... այո՛, մինչեւ այն օրը երբ կինս էջմիածնից իւղաներկ առաւ եւ այստեղ բերեց ու տան պատից կախեց: Մենք էլ սփիւռքահայերի նման չարժուել սկսեցինք...:

Հ.- Սփիւռքեան մեր աւանդական օճախներէն կը ստանա՞ք մեր մամուլը:

Պ.- Եւրոպայում գրեթէ բոլոր լոյս տեսնող հայատառ մամուլը

ստանում եմ: Միջին Արեւելքից չեմ ստանում, Ամերիկայից ստանում էի Օչինի «Օպզըրվըր»ը, դադարեց նա: Պօղոսեանի մահով դադարեց «Րիփորթըր»ը եւ դժբախտաբար Պոստոնի ռամկավարների «Միրըր»ը չեմ ստանում: Սակայն Տոքթ. Յարութիւն Արզումանեանն ուղարկում է «Ապագայ»ն Մոնթրէալից:

Հ.- Կ'ուզեմ իմանալ թէ ինչո՞ւ «Օրեր» մկրտեցիք թերթին անունը:

Պ.- Այս հարցը Սիլվա Կապուտիկեանն էլ էր տուել: Շատ հետաքրքիր: Օրերը քանի որ այդ ժամանակ ե'ւ ծանր էին, ե'ւ տխուր, բայց նաեւ յուսալից: Այդ ժամանակ ես շատ էի տարուած Արթուր Մեսճեանի երաժշտութեամբ եւ ինքը մի հատ բացառիկ երգ ունէր՝ «Օրերը»... Այդ երգը էնպէս էր բնութագրում տուեալ պահին մեր ժողովրդի եւ մեր ցանկացածի ներքին հոգեբանութիւնը, անցած ճանապարհը, մանաւանդ ովքեր որ ապրում էին Հայաստանում այդ մթնոլթեան տարիներին, որ նրանից մեկնելով դրեցի «Օրեր»:

Հ.- Վերադառնա՞նք հիմնական հարցումիս. ո՞ր ստացաք հայ լրագրութեան փորձառութիւնը եւ անոր նւիրումելու վերջնական որոշումը ո՞ր առիթ: Կեանքի ո՞ր հանգրուանին:

Պ.- Ճիշդն ասած, դեռ դպրոցում սովորելու ժամանակ զգում էի որ ռեժիսոր կը դառնամ, բայց քանի որ ծնողներս պատրաստ չէին ինձ տեսնելու թատերական ասպարէզում, ընդունուեցի բանասիրական: Ու խորացայ ժուռնալիստական բաժնի մէջ եւ տեղափոխուեցի Մոսկուայի համալսարանի ժուռնալիստական ֆակուլտետը եւ այն աւարտեցի գերազանցութեամբ:

Էնտեղից 90 թուականին վերադարձայ Հայաստան ու առաջին թերթը, որտեղ պիտի աշխատէի, եղաւ «Ազգ» թերթը, քանի որ, ընդ որում, յիշում եմ որ թերթը դեռ չկար բայց երեք ամիս շարունակ հանդիպում էինք, որ թերթը լոյս տեսնէր: Ինչպէս պարոն Յակոբ Աւետիքեանի համար, էնպէս էլ առաջին հանգրուանի մօտաւորապէս ասեմ թերթի հետ կապ ունեցող ցանկացած մարդու համար երբեք չեն մոռացուի այդ օրերը, որ երեխայի ծնունդի պէս «Ազգ»ը լոյս տեսաւ: Ի՛նչ ուրախութեամբ, ի՛նչ հրճուանքով մենք մտանք հայաստանեան մամուլի շուկայ եւ կարողացանք շատ կարճ ժամանակամիջոցի մէջ նոր խօսք, նոր աւիւն, նոր էներգիա, արեւմտեան նոր արժէքներ բերել Հայաստան: Եւ դրա արդիւնքները այսօր էլ... Ի հարկէ, ցաւօք սրտի, ցաւօք պիտի ասեմ, որ քաղաքական ճնշումների, քաղաքական իրավիճակի փոփոխութիւնները բերեցին նաեւ մամուլի աղճատման եւ

Հիմա ես պիտի ասեմ որ մի գուցե մամուլը ինչ-որ չափով նաեւ յետընթաց է ապրել, 95-96 թուականների բաղդատմամբ: Մի պահ գա-գաթնակէտին էր հասել մամուլի լարուածութիւնը եւ ազդեցութիւնը: Բայց յետոյ յայտնի դէպքերը եկան եւ ճնշումները եկան եւ մի տեսակ լրագրողները հեռացան:

Ես «Ազգ»ի գլուգահեռ, ի հարկէ, թղթակից եմ եղել AIM-ի, Nouvelle de l'Armenie-ի, եւ թղթակիցն եմ եղել «Ազատութիւն» ռատիոկայանի ռուսական ծառայութեան:

Հ.- Քանի «Ազգ»ի մասին է խօսակցութիւնը, ինչպէ՞ս կը գնահատէք անոր լրագրական մակարդակը:

Պ.- Մեր երկրի մէջ տեղի ունեցող փոփոխութիւնների, հալածանք-ների, ահաբեկումների գլուգահեռ, նոյն ձեւով էլ փոխուել է «Ազգ»ի մակարդակը, որովհետեւ էն ինչի միջով «Ազգ»ը անցաւ, ինձ թւում է, նոյնիսկ դաշնակցական թերթերը դրան չդիմացան ... ու փակուեցին: Մինչեւ Հիմա չեմ յիշում մի դէպք որ հայաստանեան որեւէ թերթ կարողանայ իր նեղութեան պահին իր շուրջը համախմբել ե՛ւ իշխանական եւ ընդդիմադիր ճակատի բոլոր լրագրողներին: Դա բացառիկ երեւոյթ է:

Մի մթնոլորտ կար լրագրական ընտանիքում, որ անկախ նրանից թէ մենք ո՞ր թերթում ենք աշխատում, մենք իրար հետ պահպանում էինք էթիկան եւ լրագրական ընկերութիւնը:

Հիմա, ի հարկէ, «Ազգ»ի լրագրական կազմը շատ է փոփոխուել եւ տարիների ընթացքին անընդհատ փոփոխութիւններ են եղել եւ դա բնական պրոցես է եւ ուզում եմ ասել որ ամէն ժամանակաընթացքում ովքեր որ աշխատել են «Ազգ»ում, այդ ժամանակաընթացքի շունչն են իրենք իրօք: Լաւ թէ վատ ձեւով: Միայն խմբագիրը՝ Աւետիքեանը, նոյնը մնաց, բայց պէտք է անպայման նշել որ ի հարկէ պարոն Աւետիքեանի դերը շատ մեծ էր: Շատ-շատերիս համար իրեն հետ աշխատանքը, իրօք, լրագրական դպրոց էր, նաեւ մարդկային դպրոց, որովհետեւ մենք սովորում էինք ոչ միայն գրել, լուսաբանել, մեզ նաեւ տրւում էին կեանքի դասեր, նաեւ տրւում էին ընկերութեան, ընտանիքի դասեր:

Պարոն Աւետիքեանը ասում է ձեր շրջանը այլեւս չի կրկնուելու, չի գայ...: Ի հարկէ, մի գուցէ դա բնական է: Ի հարկէ նաեւ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը կորցրեց իր դիրքը, որովհետեւ ով որ եկաւ իշխանութեան գլուխ, ամէն ձեւով հալածեց կուսակցութիւնը:

Հ.- Ըսի՞ք թե՛ ընտանեկան պատճառներով փոխադրուած էք այս երկիրը. վերադառնալու հեռանկար, ծրագիր ունի՞ք, եթե՛ ընտանեկան պայմանները տարբեր ձեւ ստանան:

Պ.- Մի՛շտ այստեղ ապրում եմք ժամանակաւոր հոգեբանութեամբ եւ մի՛շտ էլ մտածել եմք որ Հայաստան գնալու ենք: Բնակարան կամ ալլապէս ոչ մի բան չենք վաճառել: Ամէն ինչ մնացել է եւ ամէն տարի պարտագիր գնում եմք Հայաստան: Հայաստանը մեզ համար լիցքաւորման մշտական աղբիւր է: Գումարած վրան՝ հիմա երեխաներ ունենք եւ էստեղ անգլիական կրթութիւն են ստանում, եւ չգիտենք թէ ապագան ի՞նչ է բերում կնոջս համար որպէս գործ:

Հ.- Որքա՞ն յամառօրէն պիտի ուզէք շարունակել «Օրեր»ը:

Պ.- Դէ առայժմ յամառութիւնը բաւական ազդում է, բայց չգիտեմ որքա՞ն: Բայց լաւատես եմ, առանձնապէս չեմ ընկճւում, լաց լինում, բայց նաեւ աւելի գործնական ուզում եմ հիմա մօտենալ: «Օրեր»ի տպագրութեան հարցը էսպէս այլեւս չեմ կարող երկար շարունակել, մանաւանդ որ հիմա աւելի դժուարանում է այս աշխատանքը, ինչ-որ տեղ խանգարում է նաեւ ինթերնեթի գործածութիւնը, ինչ-որ տեղ նաեւ հայկական հեռուստատեսութեան սփռումը: Լաւ իմաստով մարդիկ լրատուութիւն ստանալու տարբեր խողովակներ, աղբիւրներ ունեն: Ամսաթերթը կարող է ժամանակավրէպ լինել:

Հ.- Այս երկրին քաղաքական միջավայրը այնպէս է, որ մարդիկ հայկական հարցերով կամ ցեղասպանութեամբ չեն ուզեր հետաքրքրուիլ: Ծուկայական հոգեբանութիւն մը սկսած է տարածուիլ հոս ժողովրդային եւ նոյնիսկ մտաւորական շրջանակներէ ներս, որոշ յայտնի ուժերու ազդեցութեամբ: Կը խորհի՞ք որ մենք որպէս ազգային փոքրամասնութիւն գոնէ օր մը պիտի կարենանք մեր իրաւունքները այս երկրին մէջ ծանօթացնել եւ համակիրներու լայն շրջանակ մը կազմել:

Պ.- Շատ բարդ հարց է, քանի որ էստեղ հայկական համայնք չի եղել եւ փաստօրէն վերջին 15 տարիներէ ընթացքում ձեւաւորւում է այս համայնքը, սակայն տարբեր փորձեր եղել են մինչեւ հիմա, բայց ի հարկէ մի կորիզ կայ, որ որոշակի միջոցառումներ կազմակերպել է, սենատում գիտաժողով կայացրել է ցեղասպանութեանը նուիրուած: Տարբեր տարիներէ, տարբեր միջոցառումներ ենք կազմակերպել զուտ չեխական միջավայրի համար: Բայց նրանց մէջ, ի հարկէ, դժուար է միանգամից մտնել, քանի որ պետական կամ որեւէ մակարդակով շատ մեծահարուստ որեւէ անձ չունենք էստեղ, որ կարողանայ օգնել եւ մեծ

ակցիաներ անել: Լայն մասսաներին, ի հարկէ, դժուար է ծանօթացնել, բայց, օրինակ, մի դէպք ասեմ: Էստեղ կայ հայկական թխուածք արտադրող, Ուլթրավա քաղաքում: Երեւանցի հայ է եւ էսօր համարում է ո՛չ միայն չեխերի, այլեւ Կենտրոնական Եւրոպայի ամենից շատ սպառող թխուածք արտադրողներից մէկը, եւ ինքը ամէնուրէնք իր հարցազրոյցների ընթացքում մի՛շտ խօսում է հայութեան մասին:

Չեխերը շատ պահպանողական են եւ դժուար է իրենց մօտ կարծրացած պատկերները փոխել, յատկապէս, ասենք, հայկական ցեղասպանութեան հարցով:

Հ.- Արա Աբրահամեանը գուցէ պիտի ուզէր նման ծրագրի մը օգտակար ըլլալ:

Պ.- Իրեն էլ դիմել ենք եւ ոչ մի պատասխան չենք ստացել, ընդ որում, մի անգամ ինք պահանջել էր մանրամասն պիւտճէ, եւայլն: Դա էլ ենք ուղարկել: Վերջերս Անդրանիկ Միհրանեանն էր այստեղ, իրեն ասացի եւ խոստացաւ հետաքրքրուել...:



ՀԱՅԿ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Երբեմնի Չեխոսլովաքիոյ միակ հայը

Հ.- Այս գաղութին վերաբերող հարցերով, ւաւելի քան քսանամեակ մը առաջ ունեցած էի հանդիպում, սիրելի Հայկ, ձեր հետ: Այդ օրերուն դուք միա՛կ հայն էիք բովանդակ Փրակայի մէջ: Կրկնելու սիրոյն, եւ գոհացում տալու համար մեր նորօրեայ ընթերցողներուն, կրնա՞ք ըսել թէ ի՞նչ պայմաններու ստիպողութեան տակ դուք հաստատուեր էք Եւրոպայի սրտին՝ Փրակայի մէջ:



Պ.- Այստեղ առաջ գրեթէ հայ չկար, միայն պատերազմէն առաջ մի քանի հոգի եկած էին Հայաստանէն ուսանելու համար: Բայց մեր ընտանիքը 1880-ական թուականներէն հոս է: Հօրս մեծ հայրը հոս եկած է Գալերկի կոմսին հետ, որ դեսպան եղած էր Աթէնք եւ Պոլիս, ու հոս գալէն քանի մը տարի առաջ քանի մը տարի մնացած են Ռոնչպերկ քաղաքը, ուր ինք ղդեակ մը ունէր: Նորէն իբրեւ դեսպան գացած էր Ճափոն 1890-ականներուն եւ իր հետ տարած էր հօրս մեծ հայրը:

Այնտեղ, հետաքրքրական էր, մեծ մայրս արդէն չէր ապրեր եւ իբրեւ երկրորդ կին ճափոնուհի մը առած էր: Նոյնպէս կոմսը, որ դեսպան նշանակուած էր Աւստրո-Հունգարական կայսրութեան, ճափոնուհիի հետ ամուսնացած էր: Անոնք առաջին ճափոնուհիները կ'ըլլան, որոնք օտարականի հետ կ'ամուսնանան: Այդ օրերուն, օտարականներ ճափոն չէին կրնար երթալ:

Իրենք այնտեղ կը մնան մօտաւորապէս 4-5 տարի եւ յետոյ կը վերադառնան Չեխիա, որ Աւստրո-Հունգարական կայսրութեան կը պատկանէր: Կը հաստատուին Ռոնչպերկ քաղաքը, ուր մեծ հայրս կը դառնայ կալուածներու տեսուչ: Ըսեմ նաեւ թէ կոմսին հետ ան նաեւ Պոլենոս Այրէս գտնուած է: Անոնք բաւական օտար երկիրներ պտտած են:

Հօրս մեծ հայրը կը սիրէր արուեստը, ունէր հաւաքածոներ: Մինչեւ հիմա պահած եմ ճափոնէն իրեն հետ բերած իրերը: Ունինք նաեւ չինական, նոյնիսկ՝ Շանկ հարստութենէն մնացած արուեստի գործեր: Թուրքիայէն բերած է օսմանեան ու հայկական գորգեր եւ այդ հաւաքածոն ցուցադրուած է Փրակայի Մեշնու կալերիի հաւաքածոյին հետ, Միմէ Պրասլաւ ղդեակը: Այս օրերուն Պրոնոյի Շպեպէք ղդեակը կը գտնուի այդ հաւաքածոն:

Հ.- Իսկ ձեր հայրը ո՞ր ծնած է, հո՞ւ:

Պ.- Ո՛չ, հայրս հոս չէ ծնած: Մայրը 1908-ին կամ 1910-ին զինք Չեխիա ուղարկած է, իր մեծ հօրը մօտ մնալու եւ ուսանելու համար: Հօրս հայրը չէր ապրեր այն ատեն: Մայրը զինք մեծցուցեր է: Մեծ հայրս կանուխ մեռած էր:

Հայրս Չեխիա գալով այդ ղդեակին մէջ մեծցած է, Ռոնչպերկ, յետոյ երբ միջնակարգ դպրոցը գերմաներէն լեզուով կ'աւարտէ, կու գայ Փրակա, որպէսզի ուսանի:

Հայկական Եղեռնին գացած է Պոլիս եւ տեսած է որ իր ընտանիքին բոլոր անդամները ջարդուած են:

Դուրեան Պատրիարքը հօրս խորհուրդ տուած է որ խեթերէն (հիթի-թերէն) սեպագիր նշանները ուսանի: Ան հոս աւարտած է համալսարանը եւ նաեւ օգնած է որ համալսարանէն ներս հայկական դասընթացքներ սկսին: Ինքը առաջինը եղած է որ հայերէն ուսուցանած է: Բայց հարկաւ ինք ալ հայերէնը հոստեղ սորված է, որովհետեւ հայկական դպրոց գրեթէ չէր գացած:

Հ.- Հետաքրքրական է, շարունակենք...:

Պ.- Ուրեմն հայրս՝ Տոթթ. Նշան Մարտիրոսեան, այստեղ Հռոզնիին հետ գործակցած է: Հռոզնին բաւական մեծ հեղինակութիւն ունէր ու դասախօսն էր հօրս: Ինքն էր որ բեւեռագիրները լուծած էր եւ խեթերէն լեզուն գտած էր, որ հնդեւրոպական լեզու է: Ինք ռեքթորն էր համալսարանին եւ օգնած էր որ հայրս համալսարանին մէջ հայկական բաժին մը բանար: Դժբախտաբար, հայ ուսանողներ չունէր, բայց կային քանի մը չեխ ուսանողներ: Առաւելաբար համեմատական լեզուաբանական հարցերով կը զբաղէին:

Հռոզնին ուղարկած էր հայրս Լուվր, որպէսզի բեւեռագիրները հոն ուսումնասիրէ եւ կարգի դնէ: Համայնագիտարանի հայկական բաժնի յօդուածները հայրս գրած է: Ըսեմ նաեւ թէ հայրս Հռոզնիին հետ պեղումներ ըրած է Թուրքիոյ զանազան շրջաններուն մէջ:

Հայրս 1935-ին գացած է Եգիպտոս, որովհետեւ հին դարերուն հիթիթներն ու եգիպտացիները կռուած են յաճախ ու այդ կապերը ուսումնասիրելու համար գացած էր: Եգիպտոսի մէջ հեռուէն հեռու հայրս ունեցած է ազգական մը, որ մահացած էր. աղջկան ծանօթացած էր ու Չեխիա բերելով ամուսնացած էր հետը:

Հ.- Հին դարերուն հայեր ապրա՞ծ են Չեխիոյ մէջ:

Պ.- Հետաքրքրական է որ այստեղ հայութիւն չէ եղած, որովհետեւ հոս բաւական դժուար մնալու արտօնութիւն կու տային օտարներուն: Բայց պրպտած ենք զանազան քրոնիկներու մէջ եւ գտած ենք որ կայսրը՝ Փարոլոս Դ., իտալիայէն հայ բժիշկ մը բերած է, ինչպէս նաեւ՝ արհեստաւորներ, որոնց մէջ գորգագործներ: Կայսրը ուզած էր որ տեղւոյն ժողովուրդը գորգագործութիւն սորվի: Բայց դժբախտաբար չէ յաջողած եւ այդ հայերը մեկնած են ուրիշ երկիրներ:

Հ.- Մարտիրոսեանները Հայաստանի ո՞ր շրջաններէն են:

Պ.- Մեծ հօրս հայրը ծնած է Սեբաստիոյ Խուռնաւու գիւղին մէջ:

Հ.- Հակառակ հայ համայնքի չգոյութեան, ինչպէ՞ս եղած է որ դուք այսքա՛ն մաքուր հայերէն կը խօսիք, կը գրէք ու կը կարդաք:

Պ.- Իմին հայերէնս հօրմէս սորված եմ եւ հարկաւ կը ջանամ որ աղջիկս՝ Քրիստինան ալ շարունակէ հայերէն սորվիլ: Դժբախտաբար, այս վերջին տարիներուն շատ առիթներ չեղան որպէսզի ան չփութի հայերու հետ: Բայց պիտի ջանամ որ ան պահէ իր մայրենի լեզուն:

Հ.- Գիտեմ թէ ընտանեկան բարեկամն էք եղած երջանկայիշատակ

Վազգէն Վեհափառին: Ան յաճախ հոս այցելած է: Տարբեր առիթներով ուրիշ հայեր ալ այցելած են ձեր տունը, որ հաւաքավայրն է եղած դուրսէն եկող այդ հայերուն, ինչպէս հիմա մեր պարագային եկած ենք վայելելու ձեր ջերմ հիւրասիրութիւնը: Կրնա՞ք քանի մը դրուագներ կամ յիշատակներ տալ այդ այցելութիւններէն:

Պ.- Ուրեմն պէտք է ըսեմ որ Վազգէն Վեհափառ առաջին անգամ եկած է Փրակա 1961 թուականին եւ բախտը ունեցանք որ ան մեր տունը այցելէ: Այդ այցելութենէն յետոյ, քանի մը անգամներ եկած է Փրակա եւ Գարլովի Վարի՝ հանգստանալու: Նաեւ իր հետ եկած են Լոնտոնէն պարոն Սարգիս Քիւրքճեան, Ամերիկայէն պարոն Ալեք Մանուկեան: Այսպէս, հո՛ս ունեցած ենք հանդիպումներ նման անձնաւորութիւններու հետ:

Վեհափառը նաեւ Փրակայէն գնած է Ս. Էջմիածնի համար յախճապակիներ եւ քրիստալէ ջահեր Մոզէրէն, որ բաւական յայտնի քրիսթալի վաճառատուն է, ինչպէս նաեւ 120 հոգինոց պնակեղէնի սէթ մը, բոլոր տեսակի բաժակներով եւ վեհափառին էմպլըմով:

Հոս եղած են նաեւ երգահան Արամ Խաչատրեանը հիւր ունենալով Ռուբէն Սիմոնովը, որ յայտնի բեմադրիչն էր Վախտանգի ծանօթ թատրոնին: Եկած է Երեւանի «Կոմիտաս»ի առաջին քառեակը, յայտնի նկարիչներ, արուեստի աշխատողներ: Կու գար յաճախ Մարիետա Շահինեանը Մոսկուայէն, շատ զարգացած տիկին մըն էր:

Յաճախ ես ալ Հայաստան այցելած եմ Վեհափառին հրաւերով եւ հանդիպած եմ մեր մեծ դէմքերուն հետ, ինչպէս՝ Մարտիրոս Սարեանին, որուն հոսկէ դեղեր ուղարկած եմ: Սրտի հարց ունէր: Կը հաւաքուէինք վարպետին տունը ու նարտի կը խաղայինք քանդակագործ Արա Սարգսեանի եւ Ճարտարապետներու Միութեան նախագահ Վարազդատ Յարութիւնեանի ու ճարտարապետ Իսրայէլեանի հետ:

Հ.- Վերջին տարիներուն Փրակայի հայութիւնը անհամեմատօրէն շատցաւ, Խորհրդային Միութեան փլուզման ու Հայաստանի անկախացումին պատճառով: Կրնա՞ք այդ հայութեան մասին կարգ մը տեղեկութիւններ տալ:

Պ.- Երբ Խորհրդային Միութիւնը տապալեցաւ, կարելի է ըսել, Հայաստանի համար բաւական դժուար օրեր էին, որովհետեւ տնտեսութիւնը, կառոյցները եւ ամէն ինչ քայքայուեցան եւ շատ մը հայեր ստիպուեցան երկիրը ձգել եւ ուրիշ երկիրներ երթալ, որպէսզի առօրեայ ապրուստը հոգան: Հոս եկած է մօտաւորապէս հազար հոգի, Երեւանէն ու Հայաստանի զանազան շրջաններէն: Անոնք կ'ապրին ոչ միայն Փրակայի մէջ, այլ ուրիշ քաղաքներ եւս: Լսած եմ որ կան

Պրնոնոյի մէջ եւս: Շատերը չունին հոս մնալու հրաման, այնպէս որ կարելի չէ տալ իսկական թիւ մը: Կան այստեղ յաջող հայ գեղանկարիչներ:

Հ.- Սիրելի Հայկ, իսկ ձեր աշխատանքը ո՞ր մարզին մէջ է:

Պ.- Ես ալ լեզուաբանութեան հետեւած եմ, բայց յետոյ ֆիլմի ֆաքուլթեթը աւարտելով որպէս դրամատուրգ կ'աշխատէի չեխական ֆիլմերու վրայ:



ԲԱՐՍԵՂ ՎՐԴ. ՓԻՆԱՎՃԵԱՆ **Հոգեւոր հովիւ Զեխիոյ հայութեան**

Հ.- Մեր ընթերցողները գիտեն թէ գոնէ մինչեւ վերջին տարիները Փրակայի մէջ հայ չէ ապրած բացի մէկ կամ երկու ընտանիքէ: Անցեալին թէեւ եղած էին աւելի մեծ թիով հայեր, սակայն անոնք ձուլուած են: Անոնց չեմ ուզեր ակնարկել, սակայն կ'ուզեմ լսել վերջերս հոս տեղաւորուած հայերու թիւին, անոնց պայմաններուն եւ կացութեան մասին, եւ ունենալ սրտբաց զրոյց մը ձեր հետ, մանաւանդ որ դուք ալ հայրենիքէն եկած էք ու Մայր Աթոռի միաբան էք:

Պ.- Նախ բարի գալուստ ձեզի ձեր Փրակա այցելութեան առթիւ:

Ինչ կը վերաբերի Զեխիայի հայութեան, ինչպէս ասացիք արդէն, որպէս համայնք պատմական անցեալ մը չունի: Այո, ժամանակ առ ժամանակ եղած է որ եկել են հայեր, ապրել են ընտանիքներով, բայց պատերազմը եւ քաղաքական կացութիւնը խանգարել է եւ նրանք արտագաղթել են:

80-ականներին սկսած տնտեսական ճնշումը Հայաստանում շատ հայերի ստիպեց որ տեղափոխուեն այս երկիրը: Հիմնական պիտի ասեմ թէ ինչի համար սրանք Զեխիան ընտրեցին: Շատերը ուզում էին եւրոպական աւելի զարգացած երկրներ երթալ, բայց չկարողացան. չկարողացան անցնել սահմանը եւ ստիպուած մնացին այստեղ: Մնալով մէկ-երկու տարի, տեսան որ ճամբայ չունեն ո՛չ ետ, ո՛չ առաջ երթալու, ստիպուած հիմնաւորուել սկսեցին Զեխիայում:

Ինչ վերաբերւում է թուին, շատ տարբեր են հայութեան թուի



մասին տուեալները: Իրական չեխահայը, որ բնիկ այստեղացի է եւ այստեղ ծնունել է, պարոն Հայկ Մարտիրոսեանն է: մենք ուրիշ չեխահայ չունենք, այսինքն ես չգիտեմ յամենայնդէպս: Մնացած 99 տոկոսը պիտի ասեմ վստահաբար որ հայաստանցի հայեր են: Ամէ՛նն էլ: Ըստ որոշ տուեալների, հայութեան թիւը տարուբերում է 5-ից 10 հազարի միջեւ, սակայն այդ թուերը ճշդուած չեն: Մինչեւ համայնքը չկազմաւորուի, մինչեւ ներքին մարդահամար չանենք, կարող չենք ասել ուղիղ թիւը: Բայց, կարող եմ ասել որ 5-ից 7 հազարի միջեւ է տատանում հայութեան թիւը:

Պէտք է ասեմ որ երբեւիցէ հոգեւոր հովիւ չեն ունեցել: Առաջին հովիւը Չեխիայի 2004 թուականից ես եմ եղել: Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Գարեգին Բ-ը ինձ նշանակեց: Հովուութիւնը կապուած է Մեսրոպ Արք. Գրիգորեանին, որ Կենտրոնական Եւրոպայի Հայրապետական Պատուիրակն է: Մինչեւ Չեխիա գալը՝ Հունգարիա էի: Այստեղ գալով ու տեսնելով աշխատանքի մեծ դաշտը, սկսեցի այստեղի համայնքի ձեւաւորման աշխատանքներին լծուել: Շատ դժուար էր մանաւանդ հայաստանցիների հետ աշխատելը: Ես ինքս հայաստանցի լինելով, գիտեմ որքան դժուար է: Սոցիալիստական հասարակարգի պայմաններում ապրած լինելով, չեն իմանում թէ ի՞նչ է համայնք ասուածը: Եկեղեցուց շատ հեռացուած են: Այս մարդկանց համայնքային եկեղեցական կեանք բերելը շատ դժուար էր...:

Դրա համար սկսած եմ աշխատանքներ տանել երկու ուղղութեամբ. նախ դպրոցների հիմնում, գոնէ կիրականօրեայ: Ուրեմն ասեմ որ Փրակայի մէջ արդէն կար կիրականօրեայ դպրոց, որը մինչեւ օրս գործում է: Այս տարի Հոկտեմբեր 6-ին մէկ կիրականօրեայ դպրոց բացեցինք մեր նախաձեռնութեամբ Պըռնօ քաղաքում:

Յառաջիկային նաեւ նախատեսում ենք միօրեայ դպրոց բացել Օստրավա քաղաքում: Հայաշատ քաղաքներում, որքան որ հնարաւոր է: Այն քաղաքներում, որտեղ կարելի է հաւաքագրել 25-ից 30 աշակերտ: Ու արդէն ահա՛ ունենք կիրականօրեայ դպրոցներ:

Երկրորդ՝ եկեղեցական երգչախմբերին ոյժ տալ Փրակայի եւ Պըռնոյի մէջ: Ունենք ձեռնադրուած սարկաւազ: Եկեղեցական կեանքը ապահոված ենք Չեխիայի մէջ:

Հ.-- Նոր թեմ կամ ծխական շրջան սկսելու համար կարեւոր է նաեւ նիւթական միջոցներու որոնումը: Գիտեմ գոնէ Սկանտինաւեան երկիրներու պարագան, ուր պետութիւնը կ'օգնէ փոքրամասնութիւններուն: Ձեր պարագային, ինչպէ՞ս կ'ապահովէք պիտոնէի հաւասարակշռութիւնը:

Պ.- Պիտի անկեղծ լինեմ այս հարցով. այո՛, կան շատ երկրներ, պետություններ, որոնք օգտակար են լինում ազգային փոքրամասնություններին ֆինանսապէս, որպէսզի նրանք կարենան պահել իրենց ազգային մշակոյթը, կրօնը եւ լեզուն: Սակայն, Չեխիայի մէջ հայերս ազգային փոքրամասնություն չենք կազմում: Չենք մտնում այդ ցուցակի մէջ: Չենք ֆինանսաւորւում ո՛չ պետութեան կողմից, ո՛չ Մայր Աթոռի կողմից, ո՛չ մի տեղից: Մենք շատ մեծ նիւթական դժուարություններ ունենք: Պիտի ասեմ որ ո՛չ թէ մարդիկ չեն ցանկանում օգնել, այլ, ընդհակառակն, ցանկութիւնը մեծ է, հնարաւորութիւններն են քիչ, որովհետեւ նոր եկել են Հայաստանից եւ սկսել են աշխատանքի անցնել: Ունեն իրենց աշխատանքը, բայց ունեն բնակարանի խնդիր, փաստաթղթի խնդիր...: Մինչեւ չկարգաւորուեն այս հարցերը, չեն կարող բարեգործութեան անցնել: Դրա համար սկիզբը շատ դժուար է:

Չունենք եկեղեցի, մենք վարձակալ ենք. ուր որ լինի եկեղեցիներ ենք վարձակալում, որպէսզի այնտեղ պատարագ անենք:

Նոյնիսկ երիտասարդական միություն ունենք, որ հարիւրից աւելի անդամ ունի: Նորաստեղծ Համազգային Հայ Եկեղեցասէր Երիտասարդական Կազմակերպութիւնը Եւրոպայի մէջ բազմիցս միջոցառումներ է կատարել եւ նախատեսում ենք նաեւ ունենալ Չեխիայի մէջ, ուր ներկայ պիտի գտնուեն ամբողջ Եւրոպայի եւ Եգիպտոսի ներկայացուցիչները: Մայր Աթոռի հովանաւորութեան տակ է որ պիտի ունենանք այս բոլորը: Պիտի փորձենք երիտասարդներ բերել հայկական կեանքից ու Հայաստանեայց Եկեղեցուց ներս: Շատ դժուար գործ է եւ պիտի ասեմ որ, այո՛, ֆինանսական դժուարություններ ունենք:

Եւ ասեմ որ ես հոգեւորական եմ եւ նոյնիսկ ամսական չունեմ: Չունենք հաւաքավայր այդ երիտասարդները քով-քովի բերող: Ստիպուած սրճարանների մէջ ենք հաւաքւում:

Բայց յոյսով եմ որ հայու հոգին այնքան մեծ է եւ հայութիւնը այնքան զօրաւոր, որ մի օր պիտի ունենանք այդ ամէնը: Այստեղ ապրող թէ դրսի՝ սփիւռքի հայ բարերարների օգնութեամբ անպայման պիտի ունենանք նպաստաւոր պայմաններ:

Հ.- Հայաստանէն եկողները վստահաբար մասնագիտացած հայեր են իրենց գիւղերում մէջ, որովհետեւ սովետի ատեն իւրաքանչիւր հայ մասնագիտութիւն մը ձեռք բերած էր: Նաեւ ըլլալու են ձեր մէջ արուեստագէտներ, բոլոր բնագաւառներէ: Բարձրագոյն կրթութիւն ստացած հայորդիներ արդեօք կրցա՞ծ են դիրքերու հասնիլ, թէ՞ արդէն իրենց մասնագիտութիւնը մէկ կողմ դրած տարբեր աշխատանքներով կը պարապին:

Պ.- Ճիշդ է, բաւականին մասնագէտներ կան, բայց նրանցից ոչ մէկը չի աշխատում: Չեխիան իր կարգին նախկին սոցիալիստական երկիր է, նոր է կապիտալիստական սիստեմին անցել եւ դեռ հասնելիք ճամբայ ունի...: Այսինքն՝ այն մարդը, որ կ'ուզէ դրամ շահիլ, իր մասնագիտութեամբ պիտի չկարողանայ դրամ շահիլ եւ ստիպուած է բիզնէսի մէջ մտնել: Կրթութիւն ստացածները մեծ մասը բիզնէսի մէջ են, ո'չ իրենց մասնագիտութեամբ: Բայց նոր սերունդը, երիտասարդները, 18-25 տարեկանները այստեղ են դպրոց գնացել եւ այսօր արդէն չեխական համալսարանների մէջ են մտել եւ բարձրագոյն ուսում ստացել: Վստահաբար նրանք վաղը որպէս լաւ մասնագէտներ յաջողութիւններ պիտի արձանագրեն:

Մեր համայնքին միջին տարիքը 35 է:

Ասեմ նաեւ որ կան հայեր, թուով քիչ, որոնք իրենց սովետական մասնագիտութեամբ կարողացել են որոշակի աշխատանքի ու կեցութեան արտօնութեան հասնել:

Հ.- Միօրեայ այդ երկու հայ դպրոցները ունի՞նք հայ ուսուցիչներ: Վստահ եմ թէ հոս կրթական մշակներ ալ եկած ըլլալու են Հայաստանէն: Այդ ուսուցիչները գոնէ ազգապահպանման, լեզուի պահպանման գործին կրնան լծուիլ:

Պ.- Անպայման: Պըռնոյի դպրոցը, որ անմիջական իմ հսկողութեան տակ է գործում, արդէն յստակ ծրագիր ունի: Մեր նպատակը հայ երիտասարդին միայն հայերէն գրել-կարդալ սովորեցնել չէ, այլ՝ պատանիին իրական հայեցի դաստիարակութիւն տալն է, որ ճանաչի թէ ի՞նչ են Հայաստանն ու մեր եկեղեցին: Ի՞նչ է հայ լինելը ընդհանրապէս: Հայը գլխարկ չէ, որի վրայ գրուած լինի հայ: Հայը իր ազգային ու քրիստոնէական մշակոյթով, գիտական պոտենցիալով շատ բաղադրիչներ ունի եւ դրանք են ձեւաւորում հայ մարդը: Սա է որ պիտի տանք:

Երիտասարդների հետ շաբաթական երկու-երեք հանդիպումների ընթացքին ունենք դասընթացքներ եւ փորձում ենք սովորեցնել իրական հայկականութիւնը, որովհետեւ նրանք սովետական դպրոց անցած ծնողքի զաւակներ են. ծնողներն իսկ չեն ստացել ազգային դաստիարակութիւն ու հիմա մենք իրենց որոշ դասեր ենք տալիս:

Խօսքը քիչ առաջ գնաց արուեստագէտների մասին: Պիտի նաեւ նրանց անդրադառնամ, ասելով որ այսօր Չեխիայի մէջ մենք ունենք մօտ քսանից ասելի հայ գծագրիչներ: Նկարիչներ ունենք եւ բաւակա-նին յաջողուած նկարիչներ: Հայաստանի մէջ բաւականի անուռ ունէին եւ հիմա՝ Չեխիայում: Տամ մի քանի անուններ՝ Էտուար Տետիքանեան,

Տիգրան Աբրահամեան, Նար Աւետիսեան, Հրայր Խարիպեան ... մականունները շատերի չեմ յիշում ... բայց անունները տալով Սարգիս, Մուրադ, Տիգրան, Գագիկ՝ բաւականին ունենք: Երեք-չորս հայ նկարիչներ ունեն իրենց անձնական պատկերասրահները, մասնակցում են մրցաշարքերի:

Յանկուլթիւնը ունեն մեր շարժումներին մասնակցելու, սակայն կայծը թոյլ է, նա բոց չի դառնում տակաւին: Այնպիսի առօրեայի մէջ են մտել, որ չեն կարող ելնել այդ առօրեայից:

Հ.- Ընդհանրապէս նման կազմաւորուող նոր համայնքներու մէջ ո՛չ միայն Հայաստանէն, այլեւ Միջին Արեւելքի երբեմնի հայաշումն զաղութներէն եկող հայերու համար հայախօսութիւնը տեղի կու տայ: Ինչպէ՞ս կը գնահատե՞ք հոս այդ հարցը: Ընտանիքներու մէջ հայերէն կը խօսի՞ն:

Պ.- Այո՛, միանշանակ կը նկատուի ատիկա, որ յայտնի է: Խնդիրը ինչո՞ւմն է. արդէն առօրեան հայ ընտանիքի տարբեր է, այսինքն՝ Հայաստանի նման չէ: Կարծեմ նրանք հայերէն խօսում են, բայց մոռանում են իրենց զաւակների հետ հայերէն խօսել: Մարդիկ առաւօտեան ժամը 6-ին ելնում աշխատանքի են գնում ու երեկոյեան ժամը 5-6-ին են վերադառնում: Այսպէս երկար են աշխատում: Եւ տղաքը ամբողջ օրը անցկացնում են չեխական միջավայրի մէջ: Խօսել չեխերէն, չեխական մշակոյթ, չեխ ընկերներ եւ միայն երեկոյեան տանը հանդիպում են իրար, մէկ-երկու ժամ, արդէն ծնողքը յոգնած, տղաներն էլ դասերով պարապելիս: Ուղղակի լեզուական չփում չկայ: Քիչ-քիչ լեզուն տեղի կը տայ: Նշմարում եմ արդէն մեր հանդիպումների ժամանակ որ պատիկները իրար հետ չեխերէն են խօսում: Մի՛շտ փորձում ենք միջամտել, ասելով հայերէն խօսեցէք: Բայց ինչքա՞ն կարող ես միջամտել: Ու ճիշդ սրանից մեկնելով է որ մեր դպրոցական ու երիտասարդական միութեան ծրագրերը ունենք:

Այս Յունուարին չորս միջոցառում կազմակերպեցի՝ Ս. Սարգիսի տօնը, Ապրիլ 24-ի Եղեռնի տարեդարձը, Վարդավառ: Ո՛չ միայն կրօնական, այլեւ՝ ազգային տօներ եմ ջանում կազմակերպել եւ իւրաքանչիւրին 100-ից աւելի երիտասարդներ եկան:

Հ.- Ձեր կատարածը ամբողջութեամբ կը տեսնեմ որ անձնական նախաձեռնութիւն է եւ մեծապէս գնահատելի: Վստահ եմ որ ձեր շուրջը ձեզի նման մտածող ազգայիներ կան, եւ կրնան ձեզի օգտակար ըլլալ:

Պ.- Ժիշդ ու տեղին նշում է: Առանց այդ մարդկանց վստահաբար պիտի չկարողանայի այս աշխատանքը տանել առանձինն: Արդէն երբ

եկայ, ունէի բնակարանի ապահովման, կեցութեան խնդիրը: Առաջին օգնութիւնը ստացայ գործարար պարոն Գաբիկ Աբգարեանից եւ ես մինչեւ այսօր ապրում եմ իր հիւրանոցում: Արմէն Գրիգորեանը օգնել է ֆինանսապէս, Յակոբ Ասատրեանը իր բարոյական լայն աջակցութիւնն է բերում, Տիգրան Աբրահամեանը՝ մի նկարիչ, մի սքանչելի անձնաւորութիւն, տարիներից ի վեր այստեղ է ապրում: Այս բոլորը առանց խնդրի օգտակար են լինում: Պըռնօ քաղաքում շատ լաւ յայտնի խումբ կայ, որի միջոցով ենք այս բոլորը անում:

Հ.- Ամէն Կիրակի օր Ս. Պատարագ կը մատուցանէ՞ք:

Պ.- Ո՛չ, քանի որ երեք երկրների հովուութիւնը կայ, տարբեր քաղաքների մէջ դասեր ունենւմ: Ուրեմն ամիսը մէկական անգամ Փրակայի, Պուտափէշթի, Պըռնոյի եւ Օսթրավայի մէջ, ուր արդէն բանակցութեանց մէջ ենք, որպէսզի ամիսը գոնէ մէկ անգամ պատարագ լինի այնտեղ եւս:

Հ.- Լսած եմ որ հոս Փրակայի մէջ եկեղեցական թեմ ստեղծելու որոշ դժուարութիւն կայ: Նիւթականէն անկախ, պէտք է որպէս եկեղեցական համայնք ճանցցուիք արդեօք:

Պ.- Թեմ կազմաւորելու համար նախապայմաններ պէտք է դրուեն եւ Վեհափառի հրամանը պէտք է լինի: Սակայն դեռ համայնքը կազմաւորուած չէ:

Առաջինը սա է, որ նախ պէտք է արձանագրուի պետութեան մօտը որպէս պաշտօնական եկեղեցական համայնք: Երկու անգամ դիմեցինք, փաստաթղթերը յանձնեցինք, պարզուեց որ որոշ լրացուցիչ տուեալների պէտք ունեն:

Երկրորդը՝ նիւթական վիճակն է: Ուրեմն եթէ թեմ պիտի լինի, պէտք է առաջնորդարան ունենայ, եկեղեցի ունենայ, առաջնորդ ու հոգեւորականներ ունենայ...: Այս բոլորը ֆինանսական ներդրումների կարիքը ունեն: Ըստ իս, ո՛չ թէ թեմ, այլ միայն եկեղեցական որպէս համայնք տասը տարի կը պահանջի, որ կառոյցի մէջ մտնի:

Հ.- Ի՞նչ էր պատճառը որ Վեհափառ Հայրապետը ձեզ նշանակեց Փրակայի որպէս հովիւ:

Պ.- Պատճառների մասին Վեհափառին հարց չեմ տուել: Եթէ իմ անձնական մօտեցումիս նայեմ, պիտի ասեմ որ մինչեւ Եւրոպա գալս հովիւն էի Հայաստանի մէջ Ստեփանաւան եւ Տաշիր քաղաքների եւ այնտեղ արդէն բաւականին աշխատանքներ տարել էի: Եկեղեցական

նորոգութիւններէից սկսած ... ու հինգ տարուան մէջ վեց կիրականօրեայ դպրոց բացեցի, համալսարանի մէջ դասախօսութիւններ էի տալիս: Գուգարաց թեմի մէջ առաջին կիրականօրեայ վարժարանը բացուեց իմ այնտեղ նշանակուելուց երեք ամիս անց: Ստեփանաւանի մէջ, առաջին անգամ դասացոյցի մէջ Հայ Եկեղեցու պատմութեան առարկան մտցուեց դեռ 1998-ին:

Հ.- Ե՞րբ կուսակրօն քահանայ ձեռնադրուեցաք:

Պ.- Ես ձեռնադրուեցի 1996-ի Նոյեմբեր 24-ին եւ հոգեւոր ծնողս Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսն էր, որ այդ ատեն Այրա-րատեան թեմի առաջնորդական փոխանորդն էր:

Հ.- Դժուարին առաքելութեան մը մէջ ըլլալով, երբեմն կ'ունենա՞ք ընկրկում կամ մտածում գոնէ Հայաստան վերադառնալու մասին:

Պ.- Անկեղծ պիտի ասեմ. ես չա՛տ եմ սիրում իմ հայրենիքը. եթէ հնարաւորութիւն ունենայի՝ ամէն երկու ամիսը մէկ Հայաստան կը գնայի: Կ'ուզէի Հայաստանի մէջ ծառայել, բայց ուխտը այնպիսի բան է որ, անկախ ամէն ինչից, ունենք գիտակցութիւնը, որ ծառայելու ենք բովանդակ հայութեան: Ամբողջ աշխարհի հայութիւնը մէկ ընտանիք պէտք է լինի: Ու այս ընտանիքին մի մասը որ այստեղ է, պիտի փորձեմ որ Հայաստանից ետ չմնայ:

Ես իմ երիտասարդներին այնպէս պիտի դաստիարակեմ, որ բար-դոյթ չունենան երբ Հայաստան գնան ու օտար զգան: Հայաստան գնա-լով օտարութեան մէջ չզգան հայրենիքում:

Հ.- Ձեխերէն լեզուին կրցա՞ք տիրապետել:

Պ.- Այո՛, բաւականին:

Հ.- Ձեխիան բաւականին զօրաւոր կաթողիկ երկիր է: Կաթողիկ եկեղեցւոյ ճետ յարաբերութիւններ մշակա՞ծ էք:

Պ.- Յարաբերութիւններ կան, սակայն պիտի ասեմ որ մեր կապերը աւելի յաջողուած են ուղղափառ եկեղեցու հետ: Շատ ջերմ յարա-բերութիւն ունենք եւ յաճախ հանդիպում ենք մետրոպոլիտի՝ Ուլաջի հետ: Նա փորձեց քանի անգամ օգտակար լինել մեր եկեղեցական համայնքի աշխատանքներին: Արեւելեան եկեղեցիների մասնագէտ է: Մեզ լա՛ւ է ճանաչում: Իսկ կաթողիկ եկեղեցու հետ բազմիցս փորձել ենք կապ հաստատել: Պըռնոյի մէջ սիմվոլիկ նիւթականով կաթողիկ եկեղեցի ենք վարձում:

Հ.- Ամէն համայնք ունի նաեւ քաղաքական կառոյց: Որքան գիտեմ, Ձեխիոյ կառավարութիւնը այնքան ալ բարենպաստ չէ՝ մանաւանդ երբ հարցը Հայկական Յեղասպանութեան կը վերաբերի: Քաղաքական մտածողութեամբ ազգայիններ կամ երիտասարդներ կա՞ն հոս մեր հարցը արծարծել ուզող, թէ՞ տակաւին կանուխ է նման աշխատանքի լծուելու համար:

Պ.- Պիտի ասեմ որ կարող է լինել, սակայն եւ բարեբախտութիւն է որ կուսակցութիւններ չկան մեր մօտ: Եւ մեր նման տակաւին չձեւաւորուած համայնքի մէջ կուսակցութեան գոյութիւնն իսկ տարօրինակ է թուում: Այսօր չունենք ազգային քաղաքական կազմակերպութիւն, որովհետեւ միատարր հայաստանցիներ են. կուսակցութիւններ ունենալը աւելի արեւմտահայերին բնորոշ երեւոյթ է:

Հ.- Համայնավարութեան օրերուն Միջին Արեւելքի հայակեղծողներէն Ձեխիա եկած ուսանողներ կային եւ հաւանաբար անոնցմէ ոմանք հոս հաստատուեցան: Եթէ կան նմաններ, արդեօք անոնց հետ յարաբերութիւն կը մշակէ՞ք:

Պ.- Գիտեմ մի քանի տղաք, որ Լիբանանից, Սիրիայից եւ Եգիպտոսից են եկել: Իրենց հետ փորձում եմ կապ հաստատել, բայց լեզուական խնդիրը կայ: Աւելի շուտ եկած են, իրենք իրենց գործը ունեն եւ այդ հայերի հետ չփումը շատ չէ: Փորձում եմ նրանց բերել հայ կեանքից ներս ու կարծեմ պիտի յաջողուեմ:

Ասեմ որ Փրակայի մէջ Տիգրան Աբրահամեանը 2005 թուականին իր նախաձեռնութեամբ կազմակերպեց «Արմինիւն Գլապ»ի միջոցով Հայոց Յեղասպանութեան նուիրուած գիտաժողով: Աշխարհից հրաւիրուեցին ցեղասպանագէտներ՝ Վահագն Տատրեանը Միացեալ Նահանգներից, Հիլտա Չափոյեանը Հայ Դատից, Աշխէնն ու Մալֆրէտը Գերմանիայից եւ ուրիշներ, որոնք Չեխիայի խորհրդարանում ունեցան գիտաժողով, տարբեր լեզուներով ու բաւականին մեծ ունկնդիրներով:

Յաւօք շատ մեծ արձագանգ չունեցաւ: Երկրի իշխանութիւնների կողմից արձագանգ չունեցաւ:

Հ.- Համայնքը կը հրատարակէ «Օրեր» ամսաթերթը: Ինչո՞վ օգտակար կ'ըլլայ այս թերթը հայապահպանման գօտեպնդման աշխատանքներուն:

Պ.- Արդէն պիտի ասեմ որ խմբագիր Յակոբ Ասատրեանի ներդրումը մեծ է այս ուղղութեամբ: Միակ չեխահայ թերթն է եւ հայերէն լեզուով է հրատարակուում: Դժբախտաբար, մեր հայաստանցիները շատ ընթերցասէր չեն: Սովետի ատեն էլ հարիւր հազարաւոր գրքեր էին լոյս տեսնում եւ պարզապէս ... գրադարանները զարդարում:

Քչերն էին կարդում, ցաւօք սրտի: Բայց կայ մի այլ զանգուած, որը կարդում է:

«Օրեր»ը համաեւրոպական թերթ է:

Հ.- Վեհափառ Հայրը այցելա՞ծ է Չեխիա:

Պ.- Ամառը, երբ Հայաստան էի, Վեհափառը ասաց որ ուզում է հանգստի գալ Գարլովի Վարի եւ խնդրեց որ համայնքը չիմանայ: Վեհափառը եկաւ ու ապա ուզեց մի օր մեր հետ լինել ու համայնքին ծանօթանալ: Երկու ժամում կարողացայ կազմակերպել եւ 20-30 հոգանոց խմբով Վեհափառին հետ հանդիպեցինք: Զերմ հանդիպում էր: Սակայն այդ ոչ-պաշտօնական այցելութիւն եմ նկատում:

Փրակա, Նոյեմբեր 2007

«ՆՈՐ ԿԵԱՆՔ», 16 Հոկտեմբեր 2008

«ԶԱՐԹՕՆՔ», 17 Հոկտեմբեր 2008

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պուենոս Այրեսը Իր Հայությունը	13
Երուսաղեմը Իր Հայությունը	33
Դամասկոսը Իր Հայությունը	53
Հալեպը Իր Հայությունը	73
Ամմանը Իր Հայությունը	95
Փարիզը Իր Հայությունը	107
Ապիճանը Իր Հայությունը	139
Պէյրութը Իր Հայությունը	145
Սան Փալոն Իր Հայությունը	173
Ապու Տհապին Իր Հայությունը	191
Պրիքսելը Եւ Անվերսը Իրենց Հայությունը	207
Սթոքհոլմը Եւ Ուփսալան Իրենց Հայությունը	221
Աթէնքը Իր Հայությունը	239
Նիկոսիան Իր Հայությունը	265
Ալմաթին Իր Հայությունը	291
Պոլիսը Իր Հայությունը	309
Հանդիպումներ Մեր Անմահներուն Հետ	
Պոլսոյ Գերեզմաններուն Մէջ	390
Լիոնը Իր Հայությունը	403
Վիեննան Իր Հայությունը	433
Չեխիան Իր Հայությունը	461

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ **«ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ» ՇԱՐՔԻՆ ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՐԻՆ ՄԱՍԻՆ**

Մերօրեայ ազգային ու եկեղեցական դէմքերու տեսակէտները ցոլացնող այս գիրքերը նաեւ գրաւոր վկայութիւններ են ենթականերու՝ ազգին ու եկեղեցւոյ նկատմամբ ունեցած կեցուածքներուն:

Գարեգին Արք. Պէքշեան
Քէօլն, Գերմանիա

Մեր ազգի, մասնաւորաբար սփիւռքահայութեան դէպի քսանմէկերորդ դար ընթացող բարդ եւ փորձանաւոր ճամբուն մէջ նուիրեալ եւ գործօն անհատներու տեսիլքը եւ մտածողութիւնը ուսանելի փորձառութիւններու արժէքաւոր հարստութիւն մըն է, որ շատ մը պարագաներու հակամէտ է կորսուելու: Կը գնահատեմ հետեւողական աշխատանքդ, որ մէկ այլ դրսեւորումն է ազգային թէ մշակութային գործունէութեան քու ամբողջական նուիրումիդ:

Պերմ Սեդրակեան
Նիւ Եորք

Անվերապահօրէն կը յայտարարեմ, որ հայ գրուցավարական գրականութիւնը եթէ օր մը իր «ամենայն հայոց»ը ընտրելու արշաւի մը ձեռնարկէ, վստահ կրնաք ըլլալ որ այդ մեծ տիտղոսը ամենայն արժանաւորութեամբ ձեր անունին պիտի կապուի:

Եզնիկ Բալայեան
Սան Ֆրանսիսքօ

Ուշիմ ընթերցողը պիտի նշմարէ նաեւ՝ հեղինակին անաչառ հայ մը ըլլալու հանգամանքէն անդին, պատկանած գաղափարական դպրոցին ամուր կառչիլն եւ ունեցած կեցուածքը իր սկզբունքներուն:

Յակոբ Ադամեան
Լաթաքիա

Մէկ շունչով կարդացի գիրքը եւ ըսեմ որ հետաքրքրական ու եզակի գործ

մըն է հրամցուածը: Ասոր վրայ կարելի է նաեւ աւելցնել տեսախօսութեան ընտրուած անձնատրութիւններու ծանօթութիւնը, անոնց պատասխաններու շղարշին ետեւէն նայած:

Արամ-Սմբատ Խաչոյեան
Նիւ Պրիթըն

Գնահատելի աշխատանք մը իրերայաջորդ հատորներով գաղութները իրար կամրջող. մարդը իր իսկութեանը մէջ կը տեսնես:

Աղան Արք. Պալիօզեան
Սիտնի, Աւստրալիա

«Հանդիպումներ - Գ» ժամանակագրական վիթխարի հատորաշարքը իր մնայուն տեղն է գտել Հայոց Մարդասիրական Ծեմարանի գրադարանում եւ արժանացել մեր սաների ուշադրութեանը:

Օշական Վրդ. Կիւկիւեան
Կալկաթա, Հնդկաստան

Անհամբեր ու խոր յափշտակութեամբ վայելեցի հանդիպումներդ, անցեալի շարք մը վերջիշումները թարմացնելով: Լիբանանի եւ Հայաստանի փոռերէն ելած տաք հացի համը ունէին: Հարցազրոյցներու ոճդ եւ միտք բանին արտակարգօրէն հարուստ եւ այլազան են, անուղղակիօրէն միշտ ուսուցանելով ընթերցողը, համեմուած՝ ինքնուրոյն նորութիւններով: Արդեօ՞ք գրական նոր ուղի մը ցանցեցիր:

Լեւոն Ժամկոչեան
Սիւվըր Սփրինկ, Մերիլենտ

Ի՞նչ հրաշալի հաւաքածոյ մը նուիրած ես ազգին:

Դոկտ. Յովսէփ Թորոսեան
Սաութֆիլտ, Միչիկըն

Այս աշխատութիւններով դուն կրցած ես յաւերժացնել հայ իրականութեան մէջ կարեւոր ծառայութիւններ մատուցած նոյնքան կարեւոր դէմքեր: Ծատ օգտակար եւ պատմական գործ մըն է որ իրագործած ես: Հոն կան շատ մը արժեքատու դէմքեր որոնց հետ լայն ծանօթութիւն եւ գործակցութիւն ունեցած եմ եւ ես անձնապէս հաճոյքով կարդացի այդ բոլորը: Վարձքդ կատար:

Թորգոմ Փօսթանեան
Կլէմտէյլ

Անխոնջ եւ հետեւողական գործչի նպատակասլաց ծրագրի արդիւնք է «Հանդիպումներ» շարքի ծնունդը: Դուք ձեր յանդուգն աշխատանքով հասարակութեան եւ պատմութեանն էք ներկայացրել մեր ժամանակների հայ մտաւորականութեան ու հասարակական, քաղաքական գործիչների մի բոլը՝ յայտնաբերելով նրանց խոհերն ու մտայնացումները: Երեւի ուրիշ մի այլ տեղ հնարաւոր չլինի այսքան անմիջական ու հարազատ կերպով ծանօթացնել, ներկայացնել գրքում տեղ գտած մտաւորականներին:

Կարօ Յակոբեան

Ուիսալա, Ծուէտ

Իրաչատուկ երկարաշունչ աշխատասիրութիւններու շարք է ձեր այս գերգնահատելի աշխատանքը: Ան ոչ միայն այսօրուան համար է, ա՛յլ իր խորքով ու էութեամբ ազգային պատմութիւն է:

Յովհաննէս Հաննէսեան

Կլէնտէյլ

«Հանդիպումներ»դ մօտէն կամ հեռուէն ճանչցած անձերս լուսարձակի տակ բերող կարեւոր դերակատարութիւն մը ունին եւ զիս յաւելեալ ծանօթութիւններով կը հարստացնեն՝ երբեմն նոյնիսկ մտերմութեան այնպիսի՝ ծալքեր բանալով, որ միայն քու ուղղած հարցումներուդ կը պարտինք: Իսկ անծանօթ դէմքերու պարագային, տրուած մանրամասնութիւնները նոր կերպարներ կը կերտեն մեր հասարակական կեանքէն ներս գործած անձերը խօսեցնելու թեքնիքիդ ընդմէջէն:

Նարեկ Եսս. Ալեէմէզեան

Անթիլիասի Մայրավանք

Ծատերու կարգին ես ալ կը զարմանամ որ Յ. Վարդիլատեան ինչպէ՞ս ժամանակ կը գտնէ ակօս բացող այս հանդիպումները կատարելու եւ գրի առնելու:

Գրիգոր Ծէնեան

Կլէնտէյլ («Նոր Կեանք», Կլէնտէյլ)

Մեր դարաշրջանի ականաւոր դէմքերու հետ ունեցած հանդիպումներդ ամփոփեալ հրամցնելով սքանչելի գործ մը կատարած ես: Ըստ իս՝ բազմա-հատոր սոյն աշխատանքդ համազօր է ներկայ շրջանի «Ազգապատում»ին:

Պերճ Արազ

Նիւ Ճըրզի

Իւրաքանչիւր հարցազրոյցէ առաջ ձեր տուած բացատրականը, կամ անհատին ներկայացումը, շատ նպատակայարմար է եւ տեսակ մը հողը կը պատրաստէ կատարուելիք հարցազրոյցին: Հրապարակագրական ձեր վաստակով եւ փորձառութեամբ վարպետը դարձած էք հարցազրոյցներու գրական ճիւղին:

Խաժակ Արք. Պարսամեան
Նիւ Եորք

«Հանդիպումներ»դ կը թուի նոր մէկ սեռը ըլլալ մեր օրերու հասարակական կեանքին, նուիրուած հայրենակորուստ գրականութեան: Արեւելքի տղան էիր, այնքան երջանիկ յոգեւորվ եւ գալիքի տեսիլքով խանդավառ...: Ժիրայր Ծ. Վրդ. Թաշճեան
Փարիզ

Դարձեալ նկատառելի երեւոյթը այս ու նախորդ հատորներուն՝ խօսակիցին լեզուին հարազատ պահպանութիւնն է, լեզուամտածողութեան չի դպիր հարցազրոյցը վարողը՝ գրոյցը դարձնելով ազատ ու կրկնակիօրէն սահուն: Վարդիվառեանի համոզումն է որ խմբագրումի նուագագոյն միջամտութեամբ, իւրաքանչիւր գրոյց աւելի իրական կը հնչէ քան այլապէս: Ձեւ մըն է որ յաջողած է հաճելի երանգաւորում մը տալ ամբողջ գրքին:

Վաչէ Սեմերճեան
Կլէմտէյլ («Նոր Օր», Ալթատինա)

Հրաշալի աշխատանք կատարած ես մէկտեղելով մեր սփիւռքեան կեանքի կարեւորագոյն նիւթերը եւ դէմքերը:

Դոկտ. Հրաչ Զիլինկիրեան
Լոնտոն

Գնահատական վկայութիւնները գրուած հանրայայտ մտաւորական անձնաւորութեանց կողմէ, յատկանշական են դրսեւորելով հարցազրոյցներու բազմակողմանի արժանիքները, եւ առաւելապէս այն իրողութիւնը որ ՌԱԿի շրջապատում եղել է եւ կայ այսօր ալ տաղանդաւոր հիանալի մտաւորականութիւն մը, տոգորուած անկեղծ հայրենասիրութեամբ եւ նուիրումով եւ որու արժեւորումը մնացած է թերի, մասնաւորապէս ՀՅԴ հատուածի մօտ, փոխադարձ անհաղորդակցութեան հետեւանքով, տեղի տալով մօտ 70 տարուայ սփիւռքահայ կեանքի հատուածականութեան եւ անմիաբանութեան:

Հենրիկ Բուդաղեան
Նիւ Եորք

Երախտագիտական զգացումներով կը շնորհատրենք ձեզ, որ այսպիսի գանձ մը շնորհած էք Հայ Ազգին:

Սիփան Ա. Քհնյ. Մխսեան
Պրրպէնք, Գալիֆ.

Հերոսներուն մեծ մասը, եթէ ոչ բոլորը, իրաքանչիւրը իր դիրքին եւ կարողականութեան սահմաններուն մէջ, մեր ազգային կեանքի ուղեգիծի մշակողներն են եւ կերտողները, գոնէ վերջին 50-60 տարիներու վրայ երկարող ժամանակաշրջանի մը, հետեւաբար՝ անոնք անպայման պիտի ծառայեն մեր ազգային կեանքը պրպտող հետազօտողներու աշխատանքներուն, որպէս վաւերագրութիւն ու կենդանի վկայութիւն: Իրաքանչիւր դէմքի ներածականիդ մէջ վարդիվառեանական անկեղծութիւնդ ներկայ է:

Տոքթ. Գրիգոր Ատանալեան
Հալէպ

«Հանդիպումներ»ու բազմաթիւ էջերը նոր լոյս կը սփռեն հայ ժողովուրդի վերջին 50 տարիներու կրօնա-պատմական-քաղաքական անցուդարձերուն վրայ:

Վարուժան Խ. Գրանեան
Նորթ Հիլզ, Գալիֆ.

Երրորդ հատորդ գրաւիչ եւ շահեկան է: Սկսայ կարդալ արաքի մը պէս... ետեւէն՝ Սիլվային հետ զրոյցէդ:

Գրիգոր Քէօսէեան
Ուոթըրթաուն

Յուշերը գրքին տալը շատ կարեւոր է մեր մշակոյթի պատմութիւնը ճշդակիօրէն պահպանելու համար:

Լուսին Ժամկոչեան
Նիւ Եորք

Իրաքանչիւր անձնաւորութեան մասին, մէկ էջի վրայ, Վարդիվառեան կը ներկայացնէ բաւականին լաւ բանաձեւուած տեղեկագրութիւն մը, որ նախանաշակ մը կու տայ կատարուելիք զրոյցի բովանդակութեան մասին: Արդարեւ, հեշտ չէ այդ մէկ էջէն ներս մանրամասնօրէն տալ տուեալ ենթակային դիմագիծը, եւ սակայն ի պատիւ հեղինակին, ինք յաջողած է քանի մը պարբերութեանց մէջ ամփոփել իր մտքերն ու տպաւորութիւնները: Այսպէս, գիտելիքներու, ծանօթութիւններու, համոզումներու, տրամադրութիւններու,

մանաւանդ տեղեկութիւններու ամբողջ շտեմարան մը կը կազմեն այդ «մէկ էջերը», որոնք յաճախ կ'արծարծեն նաեւ վիճելի հարցեր, կուսակցական, ընկերային, եկեղեցական, մշակութային: Հոն կը գտնուին իր անձնական, սեփական դատումներն ու կարծիքները, տուեալ անձերու ունեցած գործունէութեանց եւ ենթարկուած ճակատագիրներու մասին:

Տոքթ. Յարութիւն Սաղրեան
Կլէմտէյլ («Մասիս», Փասատինա)

Մէկ գիրքը չվերջացած անհամբեր յաջորդ հատորին կը սպասեմ, որովհետեւ միակ հարցազրոյցներն են որ որոշ պատկեր մը կու տան հայ մտաւորականներու կեանքի եւ ժամանակի մասին: Դժբախտութիւնը հայ մտաւորականներու անոր մէջ կը տեսնեմ որ մեծագոյն մասը հայրենիքէն դուրս կը գտնուի:

Հայկ Մարտիրոսեան
Փրակա

Լաւ օրերու մէջ չենք ապրիր ու հպարտանալիք գրեթէ ոչինչ կայ: Ուրախ եմ որ գիրքովդ մասամբ լեցուցիր այդ պարապը: Հանդիպումներուդ մէջ հանդիպեցայ հին ծանօթներուն եւ ծանօթացայ նորերուն: Խնդրեմ շարունակէ գրել:

Նուպար Յակոբեան
Նորթրին, Գալիֆորնիա

Մեծ հաճոյքով կը կարդամ ձեր հարցազրոյցները:
Եղիշէ Արք. Կիզիրեան
Նիւթաուն Աքուէր, Փենսիլվանիա

Անոնց մէկտեղումովը ոչ միայն մեր սերունդին ձեռքին մէջ կը դնեք երեսնամեակի մը ազգային պատմութեան մէկ երեսակը, այլեւ՝ յատկապէս եկող սերունդներու պատմութեամբ հետաքրքրուողներուն հայթայթած կ'ըլլաք այս յատուկ ժամանակաշրջանը ներկայացնող աղբիւր-գրքերը:

Գրիգոր Փիտէճեան
Եանքըրզ, Նիւ Եորք

Յակոբ Վարդիվառեան դիրին հարցավար մը չէ: Ան կը չարշրկէ իր «զոհները»՝ անոնցմէ իրեն պէտք եղածը կորզելու նպատակով: Ան այնպէ՛ս կ'ուղղէ հարցումները եւ այնպիսի՝ հարցումներ կ'ուղղէ, որպէսզի տրուելիք պատասխաններէն մերկապարանոց պարզուին ենթակային խառնուածքի

Ռիմնական գիծերը: Խօսակիցներէն ոմանք կը հասկնան Վարդիվառեանի այս մտադրութիւնը եւ կը զգուշանան, ուրիշներ՝ ոտքով-ձեռքով կ'իյնան թակարդը՝ ի մեծ բաւարարութիւն հարցաւարին եւ... ընթերցողներուն: Մատենաշարի նախորդ ժողովածուին նման, «Հանդիպումներ»ու Գ. ժողովածուն կ'ընթերցուի պարզապէս յափշտակութեամբ ու ինքնամոռացութեամբ: Անհամբերութեամբ կը սպասենք մատենաշարի միւս հատորներուն լոյս ընծայումին, որով ա'լ աւելի կը հարստանայ մեր գիտելիքը հայոց նորագոյն պատմութեան մասին՝ որպէս անհրաժեշտ նախապայմանը մեր ապագայի ճիշդ ծրագրաւորումին եւ գործադրութեան:

Գէորգ Եազընեան
Երեւան («Ազգ», Երեւան)

Սիրով կը շնորհաւորեմ այս ծաւալուն աշխատանքը, որն անկասկած պատմագիտական նշանակութիւն ունի Սփիւքի հայ մշակոյթի անդաստանում:

Դոկտ. Սրբուհի Հայրապետեան
Լոս Անճելըս

Ինչպէս կ'ըսեն, այն կարդացի «մէկ շունչով»...: Ընթերցումներուս ընթացքին ինծի կը թուար թէ ինչ որ տեղ, ինչ որ ժամանակ հանդիպած եմ անոնց իւրաքանչիւրին հետ: Այնչափ բովանդակալից՝ գեղագիտական թեթեւ շունչով գրուած գիրք մըն է, որ կը կարդացուի մեծ հաճոյքով ու սիրով:

Տաթեւ Վրդ. Մուրատեան
Ամսթերտամ, Հոլանտա

Դիւրին չկարծէք, որ ոտնագնդակի պէս աշխարհի բոլոր ցամաքամասերը ոտքի կոխան ըրած, Վարդիվառեանը փնտռէր գտնէր հայութեան ծառայող դէմքեր, անոնց մէջ եկեղեցականներ, տնօրէններ, ու պետական գործիչներ, կուսակցականն ու անկուսակցականը ու մեզի ներկայացնէր իրաւ բնութագրութեամբ: Ներկայացնել այնպէս, որպէս թէ մենք զրոյցի նստած ըլլայինք անոնց հետ ու անձնապէս ծանօթացած ըլլայինք: Հանքահան մըն է Յակոբ Վարդիվառեանը ու նիւթը հայ մարդը, որ ոսկիի նման ուր ալ ըլլայ կը փայլի:

Տոքթ. Թորոս Թորանեան
Հալէպ («Զարթօնք», Պէյրութ)

Մենք շարունակաբար հետեւած ենք ձեր ազգային ու հայրենասիրական բեղուն գործունէութիւններուն: Շնորհիւ ձեր տոկուն գաղափարախօսական նկարագրին՝ դուք արդարօրէն կը վայելէք ձեր լայն շրջանակին յարգանքն

ու սերը, շրջանակ մը, որ իմ արտիս մէջ կարենոր տեղ կը գրաւէ: Ձեր քաղաքական-գաղափարախօսական պատկանելիութիւնը որպէս ամրակոռ խարխիս ձեր գործունէութիւններուն՝ ակներեւ է հատորին իւրաքանչիւր հարցազրոյցին մէջ:

Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեան
Կլէնտէյլ

Քիչ են անոնք, որոնք գիտակցօրէն մեր առօրեան կը ներկայացնեն այսօրուան եւ վաղուան ընթերցողին (եթէ տակաւին մնացած ըլլայ հայերէն ընթերցող այն սերունդը) ու այնքան կարիքը պիտի զգացուի վաղը, հայա-պահպանման անշափելի պայքարին մէջ:

Բարսէղ Գարթալեան
Կլէնտէյլ

Ինչ որ զիս զարմացուց քու հանդիպումի արժանացուցած՝ նախ Մինաս Թէօլէօլեանն է՝ ջատագովը ժամանակավրէպ Ազգային Սահմանադրութեան: Անոր փոքի ցաւը սա էր որ մեր թեմին առաջնորդ Տիրան Եպս. Ներսիսեան Մինասը մերժած էր ընդունիլ որպէս յարմար թեկնածու քահանայութեան եւ այդ պարագան հարկադրած էր Մինասին այլ միջոցներու դիմել, ԱՄՆ ներգաղթել կարենալու համար:

Արտէն Ա. Քհնյ. Աշնեան
Եանքըրզ, Նիւ Եորք

Հետաքրքրական տեսակցութիւններով հարուստ տպագրութիւն մըն է: Կը շնորհաւորեմ տարած սքանչելի աշխատանքդ:

Արփի Արալանեան
Գրէքքիլ, Նիւ Ճըրզի

Անկեղծօրէն ըսեմ որ այսպիսի հետաքրքրական եւ սքանչելի «մատեան» մը չէի տեսած: Առաւել հզօր երեւոյթ էր ինծի որ կը ներկայացնէիք Հայ Մարդը իր իսկական արժէքներով եւ գործունէութեամբ, կենցաղով եւ կեանքով:

Լենա Մանուկեան
Փասատինա

Ժամանակակից շրջանի հայոց պատմութիւնն է արձանագրած հոն՝ իր մութ ու լուսաւոր երեսներով, գրուած հեզասառ ոճով եւ հետաքրքրական կերպով: Հարկ է ընդգծել որ «Հանդիպումներ»ը արդիւնք են անմնացորդ

զոհողութեան (ամէն տեսակի) եւ լայն ծանօթութեան հարցադրուող դէմքերուն եւ առնչուող դէպքերուն: Պէտք չէ անտեսել նաեւ գրեթէ անթերի տպագրութիւնը:

Մինաս Տէր Սարգիսեան
Մէզոն-Աֆֆորտ, Ֆրանսա

Անոր ստեղծագործութիւնը սերտօրէն կապուած է իր իրաշատուկ «հիւմոր»ով հարուստ նկարագրին ու հայավայել լանդուզն անհատականութեան: Անոր իրաքանչիւր հարցազրոյցին ընդմէջէն կ'անդրադառնանք, որ ան արժանաբար տուրք տալով իր գաղափարական սկզբունքներուն եւ բարեկամական կապերուն, հարազատ զրոյցի մը ընդմէջէն կը կատարէ այնպիսի յայտնաբերումներ, որոնք անջնջելիօրէն դրոշմուած կը մնան ընթերցողին մօտ:

Պայծիկ Գալայնեան
Պէյրութ («Զարթօնք», Պէյրութ)

Ի՞նչ տեսակ հարցումներ Յակոբը ուղղած է զրուցակիցին, ուշադրութիւն ըրէ՞ք. հիացալ... ինչպէ՞ս կրցած է այդ հարցումները ուղղել: Այդ հարցումները պարզ են, բայց միայն պա՞րզ են, ո՛չ, միայն պարզ չե՛ն: Երբեմն խրթին ալ են: Խրթին են եւ երբեմն ալ դժուար հասկնալի... հարցումները նեղը կը դնեն խնդրոյ առարկայ անձը: Այնպիսի՜ կերպով նեղը կը դնէ հարցը, որ անձը գիտնական ալ, փիլիսոփայ ալ ըլլայ, դիւանագէտ ալ ըլլայ, ինքզինք մասամբ կը կորսնցնէ... եւ Յակոբին ուզածն ալ այն է, որ զրուցակիցը ինքզինք կորսնցնէ, որովհետեւ անձը ինքզինք կորսնցուցած ատենն է որ ինքզինք կը գտնէ: Ու Յակոբին ուզածն ալ ա՛յն է, որ մարդը ինքզինքը գտնէ, որովհետեւ ինք կ'ուզէ որ ինքզինք գտնող մարդուն հետ կարենայ զրուցել...:

Դոկտ. Նուպար Պերպէրեան, Պոսթոն
(Մոնթրէալի մէջ կազմակերպուած
շնորհանդէսէն մէջբերում)

"Hantiboumner-3" came just in time for reading it during my August vacation.
Dikran Katsikian
Athens

Your books contain so much raw material, that to do justice to them they will require many more dissertations to bring to light the multiple-sided subjects. I had always wanted to express my appreciation for your works which, I know, are the

result of perseverance extended over many years and many sleepless nights. Today, at least, I take this opportunity to do so. Your books present the history of recent times depicted through the opinions of people of different walks. Only few produce, and for that reason more is expected of them.

Harout Diratzouian
Englewood Cliffs, NJ

Many of the prominent people you have interviewed are dear friends of mine. I will certainly read those and thoroughly enjoy them. I have seen some of them either in *Zartunk* or in *Nor Or*.

Dr. Tavit O. Najarian
Rumson, NJ

Meetings-3, a most impressive and highly informative collection of interviews.

Prof. Vahe Berberian
Clarion, Penn.

I congratulate your herculian input in our contemporary history. Many of the personalities you have interviewed have acquired immortality in their fields and many other interviews that you included in your publications contain valuable information for future historians.

Garbis Kazanjian
Wayne, NJ

ՀԵՂԻՆԱԿԻՆ ԲԱՍՏԷՐ՝

HAGOP VARTIVARIAN
314 LYDECKER STREET
ENGLEWOOD, NJ 07631
U.S.A.
E-mail: hvartivarian@aol.com

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ - 1

ԱԶԱՏՏԵԱՆ ԵՐՈՒԱՆԴԻ, ԱԶՆԱԽՈՐԵԱՆ ԳՈՀԱՐ, ԱՍԱՏՈՒՐԵԱՆ ՅԱԿՈԲ, ԲԱԲԱԶԵԱՆ ԺԻՐԱՅՐ, ԲԱԼԱՅԵԱՆ ԶՕՐԻ, ԳՐԻԳՈՐԵԱՆ ՄԵՍՐՈՊ ԵՊՍ., ԴԱԼԼԱՔԵԱՆ ԿԱՐԼԵՆ, ԵՌՈՒՄԷՖԵԱՆ ՅՈՎՍԷՓ, ԹԻԹԻԶԵԱՆ ՓԱՆՈՍ, ԹՈՎՄԱՍԵԱՆ ԲԱՐՈՒՆԱԿ, ԹՈՐԱՆԵԱՆ ԹՈՐՈՍ, ԹՈՐՈՍԵԱՆ ԼԵՒՈՆ, ԺԱՄԿՈԶԵԱՆ ԼԵՒՈՆ, ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ ՇԱՀԷՆ, ՀԱՅԿԵՆՑ ՄԻՍԱՔ, ՂԱԶԱՐԵԱՆ ՍՈՆԱ, ՄԱՆՈՒԿԵԱՆ ԹՈՐԳՈՄ ԱՐՔ., ՄԱՐԳԱՐԵԱՆ ՀՐԱՆԴ , ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ՀԱՅԿ, ՄԻՆԱՍԵԱՆ ՍԱՐԳԻՍ, ՄՍԸՐԼԵԱՆ ԶԱԽԷՆ, ՆԱԴՐԵԱՆ ՍՈՒՐԷՆ, ՆԱԶԱՐԵԱՆ ԿԱՐՊԻՍ, ՆՈՐԻԿԵԱՆ ԳՐԻԳՈՐ, ՈՒԶՈՒՆԵԱՆ ՀԱՅԿԱՇԷՆ, ՉԱՔՄԱՔԺԵԱՆ ԱՐԹՕ, ՉՈՐՊԱԺԵԱՆ ԲԻԻԶԱՆԴ, ՊԱՊԱՅԵԱՆ ԵՐՈՒԱՆԴԻ, ՊԱՍՄԱԺԵԱՆ ԿԱՐԻԿ, ՊԷՐՊԷՐԵԱՆ ՆՈՒՊԱՐ, ՊՕՂՈՍԵԱՆ ՐԻԶԸՐՏ, ՍԱԹԱՄԵԱՆ ԳՐԻԳՈՐ, ՍԵԴՐԱԿԵԱՆ ՀՐԱԶԵԱՅ, ՍԵԻԱԿ ՇԱՄԻՐԱՄ, ՎԱՀԵԱՆՎԱՀԷ, ՎԱՐՈՒԺԱՆ ՎԵՐՈՆԻՔ, ՏՈՒՐԵԱՆ ՕՀԱՆ, ՓԱՐԹԱՄԵԱՆ ՄԱՐՕ, ՓՈԼԱՏԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ, ՖԱԶԼԵԱՆ ՊԵՐՃ

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ - 2

ԱԲԳԱՐԵԱՆ ՍԵՊՈՒՀ, ԱՀԱՐՈՆԵԱՆ ԳԵՐՍԱՄ, ԱՂՊԱՇԵԱՆ ՊԱՐՈՅՐ, ԱԺԵՄԵԱՆ ԳԷՈՐԳ, ԱՆԴՐԷԱՍԵԱՆ ՅԱԿՈԲ, ԱՍԱՏՈՒՐԵԱՆ ԵՐՈՒԱՆԴՈՒՀԻ, ԱՐԱՐՔՅԵԱՆ ԲԱԲԳԷՆ, ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ, ԱՐՄԼԱՆԵԱՆ ԳԱՐԼՈՍ, ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ՇՆՈՐՀՔ ԱՐՔ., ԳԱՍԱՐԺԵԱՆ ՅԱԿՈԲ, ԳՐԻԳՈՐԵԱՆ ԶԱԽԷՆ, ԵԱՓՈՒԺԵԱՆ ԱԻԵՏԻՍ, ԶԱՀՐԱՏ, ԹԵՐԶԵԱՆ ՌՈՒԲԷՆ, ԹՈՓԺԵԱՆ ԱՐԱ, ԺԵՐԱՆԵԱՆ ՌԻՇԱՐ, ԼՈԳԵԱՆ ՅԱԿՈԲ, ԽԱՆԶԱԴԵԱՆ ՍԵՐՕ, ԽԱԶԻԿԵԱՆ ԵԴՈՒՐԱԴ, ԽՐԼՈԲԵԱՆ ԳԷՈՐԳ, ԾԱՌՈՒԿԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ, ԿԻՐԱԿՈՍԵԱՆ ՓՈԼ, ՀԱՄԱԶԱՍՊԵԱՆ ՎԱՐԴԳԷՍ, ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ ԿԱՐՕ, ՄԱՆՈՒԷԼԵԱՆ ՍՈՒՐԷՆ, ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ՊԱՐԳԵԻ ԵՊՍ., ՆԱԶԱՐԵԱՆ ՆՈՒՊԱՐ, ՆԵՐՍՈՅԵԱՆ ՏԻՐԱՆ ԱՐՔ., ՆՈՐԻԿԵԱՆ ԲԵՆԻԱՄԻՆ, ՇԵԼԵՖԵԱՆ ՄԿՐՏԻԶ, ՉԱԽՈՅԵԱՆ ԷԼԼԱԴԱ, ՊԵՏՐՈՍԵԱՆ ՎԱՐԴԳԷՍ, ՊԷՐՊԷՐԵԱՆ, ՀԱՄԲԱՐԶՈՒՄ, ՊՈԶԱՊԱԼԵԱՆ ԼՈՒԻԶԱ, ՍԵՄԵՐԺԵԱՆ ՊԵՏՐՈՍ, ՍԵՏԼԸՐ ՌՈՒԲԷՆ, ՍԻՄՈՆԵԱՆ ԿԱՐԷՆ, ՍԻՄՈՆԵԱՆ ՍԻՄՈՆ, ՎԱԶԳԷՆ Ա.

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ - 3

ԱԲՐԱՀԱՄԵԱՆ ԳԱԳԻԿ, ԱԹԹԱՐԵԱՆ ԱԼԵՔՍԱՆ, ԱԼԻԵԻ ԱՖԻՖ, ԱՏԱՆԱԼԵԱՆ ՏՈՔԹ. ԳՐԻԳՈՐ, ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ ԱԼԵՔՍԱՆՏՐ, ԱՆՈՒՇԵԱՆ ԲԱԲԳԷՆ Ծ. ՎՐԴ., ԱՔԶԱՄ ԹԱՆԷՐ, ԳԱՐԵԳԻՆ Ա., ԳԱՐԵԳԻՆ Բ., ԳԵՂԱՄԵԱՆ ԱՐՏԱՇԷՍ, ԳՐԻԳՈՐԵԱՆ ՄԵՍՐՈՊ ԱՐՔ., ԳՐԻԳՈՐԵԱՆ ՎԱՆ, ԴԱՇՏԵՆՑ ՏԱԻՐՈՍ, ԴԵՄԻՐԺԵԱՆ ՍՏԵՓԱՆ Կ., ԹԷՕԼԷՕԼԵԱՆ ՄԻՆԱՍ, ԹՈՒՄԱՆԵԱՆ ԲԱՐՍԵՂ, ԽԱԶԱՏՐԵԱՆ ՎԻԳԷՆ, ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ ՍԻԼՎԱ, ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՏՈՔԹ. ԿԱՐՕ, ԿԻՐԵՂԵԱՆ ՏԻՐԱՆ ԱՐՔ., ՄԱԳՍՈՒՏԵԱՆ ԲԱԲԳԷՆ Ա. ՔՀՆ., ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ՖԵԼԻՔՍ, ՄԱՆՈՒԿԵԱՆ ԱՐՏԱԿ ԱՐՔ., ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ՌԱԴԻԿ, ՄԻՐԶԱԽԱՆԵԱՆ ՌՈՒԲԷՆ, ՄՈՍՏԻԶԵԱՆ ՕՇԻՆ, ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԱՐՏԵՄ, ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԳԱԳԻԿ, ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ ԴԱԽԻԹ, ՆԱՀԱՊԵՏԵԱՆ ՆԱՀԱՊԵՏ, ՆԵՐՍԻՍԵԱՆ ԵԶՐԱՍ ԵՊՍ., ՊԱՐՄԱՄԵԱՆ ԽԱԺԱԿ ԱՐՔ., ՊԵՏՐՈՍԵԱՆ ՔՈՅՐ ԱԼՖՈՆՍԱ, ՊՈՏՐՈՒՄԵԱՆ ՕՀԱՆ, ՍԵԴՐԱԿԵԱՆ ՄԵԹՐ ՊԵՐՃ, ՎԱԼՄԱՐ, ՏԷՐ ՍՏԵՓԱՆԵԱՆ ՍԻԼՎԱ Լ., ՏՈՐԵԱՆ ՆՈՒՊԱՐ, ՓԱՔԱԼԵԱՆ ՍԱՐԳԻՍ, ՔԵՀԷԵԱՆ ՔՈՅՐ ՍԵՍԻԼ